

Դավիթ Խաչատուրյան

Դատախազության և նախաքննության ու հետաքննության
մարմինների ինքնուրույնության, հաշվետվողականության և
արդյունավետության ապահովումը Հայաստանի
Հանրապետությունում

(գիտագործնական վերլուծություն)

Հետազոտությունն իրականացվել է

Բաց հասարակության ինստիտուտ
օժանդակության հիմնադրամի
Հայկական Մասնաճյուղի ֆինանսավորմամբ

ԵՐԵՎԱՆ

2020

Բովանդակություն

Ներածություն. հետազոտության անհրաժեշտությունը, առարկան և ծավալը, նպատակը, աղբյուրները և մեթոդաբանությունը 6

 Հետազոտության անհրաժեշտությունը, առարկան և ծավալը 6

 Հետազոտության անհրաժեշտությունը 6

 Հետազոտության առարկան և ծավալը 6

 Հետազոտության նպատակը..... 7

 Հետազոտության աղբյուրները 8

 Հետազոտության մեթոդաբանությունը..... 9

ԳԼՈՒԽ 1. ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԴՈՒՐՄ..... 13

 1.1. Դատախազության սահմանադրական կարգավիճակը և լիազորությունները 13

 1.2. Դատախազության՝ որպես հանրության ներկայացուցչի լեգիտիմության միասնականությունը քրեական արդարադատության ոլորտում և դրանից դուրս 14

 1.3. Դատախազության՝ որպես հանրության ներկայացուցչի լեգիտիմությունը և դրա իրացման սահմանները քրեական արդարադատության ոլորտում..... 16

 1.4. Դատախազության՝ որպես հանրության ներկայացուցչի լեգիտիմությունը և դրա իրացման սահմանները քրեական արդարադատության ոլորտից դուրս 19

 1.5. Դատախազության տեղը իշխանությունների համակարգում. դատական, թե՛ գործադիր..... 22

 1.6. Առաջարկներ՝ 1-ին գլխում քննարկված հարցերի վերաբերյալ..... 26

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ..... 28

 2.1. Դատախազության լիազորությունները քրեական հետապնդում հարուցելիս և մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս..... 28

 2.1.1. Քրեական հետապնդման հարուցումը դատախազի կողմից 28

 2.1.2. Դատախազական հսկողությունը քրեական գործի հարուցման փուլում, հանցագործության մասին հաղորդումների գրանցում և օբյեկտիվ վիճակագրություն 44

 2.2. Դատախազության և քննչական ու հետաքննության մարմինների ինստիտուցիոնալ փոխահարաբերությունները և գործառնական ազդեցությունը մինչդատական վարույթը սկսվելուց հետո 62

 2.2.1. Դատախազի և մինչդատական վարույթում գործող մարմինների հետ հարաբերությունների մոդելների դիտարկում..... 62

 2.2.2. Դատախազի և մինչդատական վարույթում գործող մարմինների փոխահարաբերությունների ընտրված մոդելի իրացումը մինչդատական վարույթի կարևորագույն հարցերի կապակցությամբ 66

2.3. Դատախազության լիազորությունները դատարանում մեղադրանքը պաշտպանելու և դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները բողոքարկելու ընթացքում	104
2.3.1. Մեղադրանքի նախնական դատական ստուգումը	105
2.3.2. Հսկող դատախազի կողմից մեղադրանքի պաշտպանությունն իրականացնելու ընդհանուր կանոնը	106
2.3.3. Հանրային մեղադրողի գործառույթները ապացուցման պարտականության, դատական ճանաչողության և մրցակցության սկզբունքի (դատարանի լիազորվածության) համադրման լույսի ներքո	108
2.3.4. Մեղադրանքը փոփոխելը կամ լրացնելը, մեղադրանքից հրաժարվելու հետևանքները	114
2.3.5. Դատախազի դերակատարումը պատժի նշանակման հարցում	119
2.3.6. Դատական ակտերի բողոքարկումը քրեական գործերով	124
2.4. Դատախազության լիազորությունները պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս	125
2.4.1. Ընդհանուր դիտարկում այս ոլորտում դատախազական հսկողության լեգիտիմության և դրա սահմանների վերաբերյալ	126
2.4.2. Պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության ոլորտում առկա խնդիրները	128
2.5. Դատախազության լիազորությունները պետական և հանրային շահերի պաշտպանության ոլորտում	142
2.6. Առաջարկներ՝ 2-րդ գլխում քննարկված հարցերի վերաբերյալ	166
ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՅԻՆԱԼ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	168
3.1. Ընդհանուր դիտարկում	168
3.2. ՀՀ Գլխավոր դատախազի ընտրությունը/նշանակումը, գործառույթները և լիազորությունների դադարեցումը	169
3.2.1. ՀՀ Գլխավոր դատախազի ընտրությունը/նշանակումը	169
3.2.2. ՀՀ Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցումը	173
3.2.3. ՀՀ Գլխավոր դատախազի լիազորությունները	180
3.3. ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալները	183
3.3.1. ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալների համակարգման ոլորտները և նրանց միջև աշխատանքի բաժանումը	183
3.3.2. ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալին ներկայացվող պահանջները և նրա նշանակման կարգը	186
3.4. Դատախազության կառուցվածքային միավորների ձևավորման ներքին ժողովրդավարությունը, դատախազության կոլեգիան, որակավորման և էթիկայի հանձնաժողովները	191

3.4.1. Դատախազության ներկայացուցչական մարմինների ձևավորման և ներքին ժողովրդավարության ապահովման անհրաժեշտությունը.....	191
3.4.2. Դատախազության կոլեգիան	193
3.4.3. Դատախազության Էթիկայի և Որակավորման հանձնաժողովները.....	196
3.4.4. ՀՀ Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները Օրենքով նախատեսելու ու այդ գործառույթը ՀՀ Գլխավոր դատախազից վերցնելու անհրաժեշտությունը, Երևան քաղաքի դատախազության լուծարման կարիքը.....	200
3.5. Դատախազների նշանակումը և առաջխաղացումը.....	203
3.5.1. Դատախազի պաշտոնում նշանակվելու համար ներկայացվող պահանջները 203	
3.5.2. Դատախազի պաշտոնում նշանակվելու ընթացակարգը.....	210
3.5.3. Դատախազի փոխադրումը այլ պաշտոնի և դատախազների միջև պարտականությունների վերաբաշխումը որպես դատախազների նշանակմանն առնչվող հարցեր.....	219
3.5.4. Դատախազների առաջխաղացումը. արժեքահեն չափորոշիչների գնահատման պրակտիկան (merit-based evaluation practices), գնահատման օբյեկտիվությունն ու քաղաքական բնույթի և այլ ոչ իրավաչափ արգելքների անթույլատրելիությունը.....	223
3.5.5. Դատախազների մասնագիտական պիտանելիության պարբերական ստուգումը.....	227
3.6. Դատախազի կարգավիճակը և դրա տարրերը.....	231
3.6.1. Դատախազի կարգավիճակի և դրա տարրերի օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը	231
3.6.2. Դատախազների անկախությունը.....	234
3.6.3. Դատախազների կարգավիճակի միասնականությունը	236
3.6.4. Դատախազի քաղաքական և այլ չեզոքությունը.....	237
3.6.5. Դատախազների գործառնական անձեռնմխելիությունը.....	247
3.7. Դատախազների կարգապահական պատասխանատվությունը և լիազորությունների դադարեցումը	247
3.7.1. Դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, այդ թվում՝ պաշտոնից ազատելու հիմքերը, կարգապահական տույժերի տեսակները 248	
3.7.2. Դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունները դադարեցնելու կարգը	251
3.8. Դատախազների վարքագծի պահանջները.....	259
3.8.1. Դատախազների արտադատարանական և դատարանական վարքագիծը տարանջատելու և վերջինս դատավարական նորմերով կարգավորելու անհրաժեշտությունը	259

3.8.2. Դատախազների վարքագծի կանոնները և «դրանցից բխող պահանջները».....	260
3.9. Դատախազության և դատախազների անկախության, արդյունավետության, բարեվարքության և հաշվետվողականության ապահովման արտաքին մեխանիզմները	266
3.9.1. Դատախազության համակարգային կամ ինստիտուցիոնալ գնահատման սկզբունքները և հիմնական չափորոշիչների բովանդակությունը.....	266
3.9.2. Դատախազության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության սահմանները	269
3.9.3. Դատախազության հանրային թափանցիկության մեխանիզմները.....	271
3.9.4. Դատախազների բարեվարքության ապահովման արտաքին միջոցները.....	277
3.10. Դատախազության և դատախազների նյութական, ֆինանսական և սոցիալական ապահովվածության երաշխիքները.....	280
3.10.1. Դատախազության նյութական և ֆինանսական ապահովվածությունը.....	280
3.10.2. Դատախազների վարձատրությունը, սոցիալական և այլ երաշխիքները.....	282
3.11. Առաջարկներ՝ 3-րդ գլխում քննարկված հարցերի վերաբերյալ	284
ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ....	285
4.1. Ընդհանուր դիտարկում	285
4.2. Քննչական և հետաքննության մարմինների միավորումը և հավասարաչափ արդյունավետ հակակշիռների ստեղծման անհրաժեշտությունը.....	286
4.3. Քննչական ենթակայությունը, դրա որոշման օրենքով նախատեսված չափանիշները և Գլխավոր դատախազի ու քրեական գործով հսկող դատախազի հայեցողությունը ...	291
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	296
1. Հիմնական հետևությունները.....	296
2. Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկներ.....	296
2.1. Օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկներ	296
2.2. Իրավակիրառ պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկներ.....	296

Ներածություն. հետազոտության անհրաժեշտությունը, առարկան և ծավալը, նպատակը, աղբյուրները և մեթոդաբանությունը

Հետազոտության անհրաժեշտությունը, առարկան և ծավալը

Հետազոտության անհրաժեշտությունը

Ձեր ուշադրությանը ներկայացվող ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ նաև «ՀՀ») մեկնարկած դատաիրավական բարեփոխումների որակապես նոր փուլով: Դրանց ընթացքում անխուսափելիորեն պետք է վերագնահատվեն այնպիսի կարևոր կառույցների ինստիտուցիոնալ կարգավիճակը և գործառույթները, ինչպիսիք են դատախազությունը և նախաքննության ու հետաքննության մարմինները: ՀՀ անկախացումից ի վեր դատախազության իրավական համակարգում լիազորությունները՝ թե՛ իբրև հանցագործություններից համընդհանուր սուժող հանդիսացող հասարակության իրավական ներկայացուցիչ, թե՛ որպես պետական ու հանրային շահերը արդյունավետորեն և միասնական սկզբունքներով պաշտպանողի, անհարկի նվազեցվել են՝ հակասելով ոչ միայն ՀՀ հասարակական հարաբերությունների կարգավորման կարիքներին, այլև այս ոլորտում առկա միջազգային չափորոշիչներին և լավագույն փորձին:

Արդյունքում՝ դատախազության սահմանադրական գործառույթների իրացման արդյունավետությունը զգալիորեն նվազել է թե՛ քրեական արդարադատության ոլորտում (մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողություն, դատարանում մեղադրանքի պաշտպանություն, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ հսկողություն), և թե՛ քաղաքացիական և վարչական դատավարություններում: Այս հետազոտությունը բխում է դատախազության՝ որպես միաժամանակ դատական իշխանության կրողի և անխուսափելիորեն գործադիր իշխանության հատկանիշներ ունեցող կառույցի ինստիտուցիոնալ հիմքերը վերագնահատելու և դրա հիման վրա օրենսդրությունն ու իրավակիրառ պրակտիկան բարելավելուն ուղղված կոնկրետ առաջարկներ ներկայացնելու անհրաժեշտությունից: Անխուսափելիորեն, սա իր մեջ ներառելու է նաև նախաքննության, հետաքննության և պետական այլ մարմինների հետ իրավահարաբերությունների վերագնահատումը՝ ինստիտուցիոնալ և դատավարական տեսանկյունից:

Հետազոտության առարկան և ծավալը

Հետազոտության առարկան ՀՀ դատախազության և նախաքննության ու հետաքննության մարմինների կազմակերպումն ու գործունեությունն է, որոնք ուսումնասիրվում են կարգավորող օրենսդրության, ձևավորված իրավակիրառ պրակտիկայի իրավահամեմատական ու պատմահամեմատական մեթոդների օգտագործմամբ՝ նշված մարմինների ինքնուրույնության (գործառնական անկախության), արդյունավետության և բարեվարքության երաշխավորման տեսակետից՝ առկա համակարգային և ինստիտուցիոնալ հիմնախնդիրները ախտորոշելու և դրանց լուծման ուղղությամբ համապատասխան առաջարկներ մշակելու և ներկայացնելու նպատակով: Մասնավորապես, դիտարկվելու են՝

- գործող օրենսդրությունը, ռազմավարական ոլորտային փաստաթղթերը, դրանց նախագծերը, մասնավորապես՝ ՀՀ դատաիրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև «ՔԴՕ») նախագիծը (այսուհետ՝ նաև «ՔԴՕ նախագիծ») կամ «Նախագիծ») և ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև «ՔՕ») նախագիծը և հետազոտության այլ

աղբյուրները (տես՝ ներքևում)՝ ախտորոշված համակարգային խնդիրների լուծման համար համարժեք գործողություններ/դրույթներ սահմանելու հեռանկարով.

- իրավակիրառ պրակտիկան, գործառնական փոխհարաբերությունները դատախազության և նախաքննության, հետաքննության մարմինների միջև.
- միջազգային վերաբերելի չափորոշիչները և օտարերկրյա լավագույն փորձը՝ նախորդ երկու կետերում նշված հարցերի շուրջ ձևավորված օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից:

Հետազոտության ծավալի մեջ ընդգրկված չեն կոնկրետ հանցատեսակներով դատախազության գործունեության ոլորտները, օրինակ՝ պայքարը կոռուպցիայի, կազմակերպված հանցավորության այլ դրսևորումների՝ փողերի լվացման, մարդկանց թրաֆիկինգի, ընտրակեղծիքների դեմ և այլն: Այդ թեմաներին առնչվող վերաբերելի հարցերը, սակայն, շոշափվում են քրեական արդարադատության և պետական շահերի պաշտպանության ուղղությամբ դատախազության գործառնություններում, ինչպես նաև քրեական արդարադատության ոլորտից դուրս լիազորված այլ պետական մարմինների հետ իրավահարաբերություններում առկա խնդիրները լուսաբանելու նպատակով: Հետազոտության մեջ առանձին չեն քննարկվում նաև դատախազության նկատմամբ օրենսդիր, գործադիր, դատական և հանրային վերահսկողության հարցերը, փոխարենը՝ դրանք լուսաբանվում են կապված դատախազության կազմակերպման և գործունեության ընթացքում ծագող կոնկրետ հարաբերությունների կարգավորման համատեքստում:

Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակն է վերհանել նորմատիվ, այն է՝ Սահմանադրության և այլ օրենքների և ենթօրենսդրական ակտերի մեջ և առկա օրենսդրական նախագծերում, քաղաքականության փաստաթղթերում (ոլորտային ռազմավարություններ և գործողությունների ծրագրեր) և իրավական պրակտիկայում առկա թերությունները և մշակել համապատասխան սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների առաջարկներ, ինչպես նաև իրավակիրառ բնույթի ուղղորդող երաշխավորություններ/ուղեցույցներ, ի թիվս այլի, հետևյալ հարցերով՝

- Դատախազության միասնական լեգիտիմության ու կարգավիճակի, ինչպես նաև քրեական արդարադատության ոլորտում և դրանից դուրս ունեցած լիազորվածության ըմբռնում.
- Նախորդ կետով պայմանավորված՝ դատախազության և նախաքննության, հետաքննության մարմինների և այլ ոլորտային մարմինների հետ փոխհարաբերությունների հստակեցում.
- Դատախազների ընտրություն, նշանակում, վերապատրաստում, առաջխաղացում, կարգապահական պատասխանատվություն և լիազորությունների դադարեցում.
- Դատախազների և նախաքննության, հետաքննության մարմինների աշխատակիցների անկախության, քաղաքական և այլ չեզոքության, դատավարական ինքնուրույնության և հաշվետվողականության երաշխիքների ապահովում.
- Դատախազների և նախաքննության, հետաքննության մարմինների աշխատակիցների բարեվարքության երաշխիքների ապահովում և դրա պարբերական ստուգման մեխանիզմների ու գնահատման չափորոշիչների սահմանում.

- Դատախազության և նախաքննության, հետաքննության մարմինների ղեկավարների նշանակման մեխանիզմների, ինքնուրույնության և հանրային հաշվետվողականության հավասարակշռման մեխանիզմների ապահովում:

Բոլոր խնդիրներն ուսումնասիրվել ու առաջարկներն արվել են ելնելով օրենսդրական և իրավակիրառ պրատիկայում դատախազական ու նախաքննական, հետաքննական գործունեության արդյունավետությունը, անկախությունը և հաշվետվողականությունը և ժողովրդավարական հասարակությունում ունեցած կարևոր դերակատարումը երաշխավորելու նպատակից: Այդ առաջարկներում, բովանդակային անհրաժեշտությունից բացի, հաշվի է առնվել նաև նշված մարմինների, հատկապես՝ դատախազության գործունեության մեջ մի կողմից հայեցողությունը և մյուս կողմից իրավական որոշակիության սկզբունքի իրացումը ապահովելու կարիքը՝ կոռուպցիոն ռիսկերի առաջացումը կամ անխուսափելի ռիսկերի նյութականացումը բացառող երաշխիքներ ամրագրելու նպատակով:

Հետազոտության աղբյուրները

Հետազոտության աղբյուրներն են, ի թիվս այլի՝

- ՀՀ Սահմանադրությունը.
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (նաև՝ դրա Նախագիծը).
- ՀՀ օրենքը «Դատախազության մասին».
- ՀՀ օրենքը «Հատուկ քննչական ծառայության մասին».
- ՀՀ օրենքը «Քննչական կոմիտեի մասին».
- ՀՀ օրենքը «Ազգային անվտանգության ծառայության մասին».
- ՀՀ օրենքը «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին».
- ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին».
- ՀՀ կառավարության որոշումները՝
 - o «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020–2022թթ. Գործողությունների ծրագիրը հաստատելու մասին».
 - o «ՀՀ ոստիկանության զարգացման 2020-2023 թթ. ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին».
 - o «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին».
 - o «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին»:
- Միջազգային, առաջին հերթին Եվրոպայի Խորհրդի (այսուհետ՝ նաև «ԵԽ») շրջանակներում գործող մարմինների ընդունած ակտեր՝
 - o Եվրոպական դատախազների Խորհրդատվական Խորհրդի (այսուհետ՝ նաև «ԵԴԽ») Կարծիքները.
 - o Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ «ՄԵԵԴ») վճիռներն ու որոշումները.
 - o ԵԽ Նախարարների կոմիտեի (այսուհետ՝ նաև «ՆԿ») Հանձնարարականները.
 - o «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» (Վենետիկի) հանձնաժողովի (այսուհետ՝ նաև «ՎՀ») եզրակացությունները և կարծիքները.

- ԵՆ խորհրդատվական կարծիքները ՀՀ ՔԴՕ ու ՔՕ նախագծերի վերաբերյալ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության ելակետային, այսինքն՝ մնացած բոլոր կիրառված մոտեցումները կանխորոշած մեթոդը եղել է հանրային լեզվաբանության (իրավագրության)¹, այսինքն՝ գոյության իրավունքի ապահովման մեթոդը: Մասնավորապես, հետևելով եվրոպական քաղաքակրթության հիմքում ընկած Պյութագորեսյան այն գաղափարին, որ «մարդն է չափը բոլոր իրերի՝ առ այն, որ դրանք գոյություն ունեն և առ այն, որ գոյություն չունեն», փորձ է արվել նախևառաջ դատախազության գործառույթները բոլոր ոլորտներում և այդ գործառույթներից բխող կարգավիճակը գնահատել այդ գործառույթներին կյանք, այն է՝ իրավագրություն հաղորդող հավաքական հանրության և մարդու իրավունքների պահանջումների հասցեատերոջ անհրաժեշտության տեսանկյունից: Խոսքը վերաբերում է ենթադրյալ կամ ապացուցված հանցագործությունից համընդհանուր տուժող հասարակության շահերը քրեական դատավարությունում, ինչպես նաև՝ նույն հասարակության շահերը քաղաքացիական և վարչական դատավարություններում պաշտպանելու կարիքը: Ըստ այդմ, բոլոր այն գործառույթները, որոնք ուղղված են այդ կարիքի բավարարմանը, պետք է ուժեղացվեն, և հակառակը՝ ինստիտուցիոնալ և անձնական կարգավիճակի տարրերը՝ անկախություն, ապաքաղաքականություն և այլն, դիտարկվում են հենց նշված լեզվաբանությունն ունեցող գործառույթների առավել արդյունավետ իրացման տեսանկյունից:

Հետազոտությունն իրականացվել է իրավահամեմատական, պատմահամեմատական, համակարգային դիտարկման մեթոդների հիման վրա: Ընդհանուր մոտեցումն է եղել այն ըմբռնումը, որ դատաիրավական իրականության ցանկացած երևույթի, տվյալ դեպքում՝ դատախազության էություն արտացոլվում է բացառապես նույն իրականության մեջ իր կենսագործունեությունն իրականացնող այլ երևույթների, տվյալ դեպքում՝ նախաքննության, հետաքննության և դատախազության հետ ինստիտուցիոնալ և գործառնական փոխգործակցության մեջ մտնող այլ մարմինների և կառույցների հետ հարաբերություններում, այսինքն՝ դիտարկելով «փոխգործությունը որպես էություն»: Այդ փաստի բերումով, անհնար է դատախազության կազմակերպման և գործունեության խորքային գնահատումն իրականացնել և բարելավմանն ուղղված առաջարկներ մշակել առանց փոխգործակցող մյուս մարմինների կազմակերպումը և գործունեությունը, վերաբերելի մասով, համակարգային վերլուծության ենթարկելու:

Մյուս կարևոր մեթոդը եղել է գիտական և գործնական դիտարկման մոտեցումների օպտիմալ հավասարակշռումը, այսինքն՝ որպես ելակետ ընդունվել է այն սկզբունքը, որ մի կողմից՝ անհնար է համակարգային վերլուծություն իրականացնել առանց խորքային գիտական, մեր դեպքում՝ իրավափիլիսոփայական, տեսական հետազոտություն իրականացնելու, իսկ մյուս կողմից՝ այն ըմբռնումը, որ նշված տեսական հետազոտման խորությունն ու ծավալները պետք է պայմանավորված լինեն դրանց գործնական արդյունքների՝ թույլատրելիությամբ, վերաբերելիությամբ և կիրառելիությամբ՝ ՀՀ-դատաիրավական բարեփոխումների կարիքների բավարարման տեսանկյունից: Այդ իսկ պատճառով, կարծում ենք, հնարավոր է եղել խուսափել թե՛ ոչ համաչափ տեսական վերացարկումներից և թե՛ անհարկի տեխնիկական հարցեր լուսաբանելուց: Միաժամանակ,

¹ Մենք առաջարկում ենք «լեզվաբանություն» բառի հենց այս՝ «իրավագրություն» թարգմանությունը, քանի որ իրականում լեզվաբանությունը նշանակում է «գոյության իրավունք»: Դատախազության, ինչպես և բոլոր պետական մարմինների լեզվաբանությունը բխում է որպես մարդու իրավունքների և մարդկանց ընդհանրության՝ հասարակության որոշակի իրավունքների պաշտպանության *հասցեատեր գոյություն ունենալու* գաղափարից:

սակայն, անխուսափելիորեն տեսական հետազոտությունն հանգեցրել է գործնական այնպիսի առաջարկների, որոնց կիրառելիության աստիճանը կամ երկարաժամկետությունը և ծավալները սկզբունքորեն տարբեր են: Այդ դեպքերում, տեսական վերլուծությանը հաջորդել է միջնաժամկետ և երկարաժամկետ իրացվելիություն ունեցող գործնական առաջարկների առանձին-առանձին ներկայացումը:

Եվ վերջապես, զուտ քննարկվող թեմաների և խնդիրների տեքստային ներկայացման առումով, ընթերցողի հարմարավետության համար, հետազոտվող հարցերը լուսաբանվել են հետևյալ կառուցվածքով՝

- Հիմնական խնդիրներ և թերություններ, վերաբերելի տեքստերի առկայության դեպքում՝ միջազգային չափորոշիչներ և չափանիշներ և/կամ օտարերկրյա առաջավոր փորձ.
- Օրենսդրական և իրավակիրառ բնույթի առաջարկներ:

Այսինքն՝ յուրաքանչյուր հարց քննարկելիս, հետագա շարադրանքում արտացոլվելու է առկա փաստակազմը՝ օրենսդրական և իրավակիրառ խնդիրների, դրանց լուծման ուղղությամբ պետության ձեռնարկած քայլերի տեսքով, ապա՝ այդ փաստակազմի համադրումը ՀՀ կարիքների, ունեցած միջազգային պարտավորությունների (միջազգային չափորոշիչների) և օտարերկրյա հաջողված փորձի հետ: Նշված էմպիրիկ հիմքը՝ փաստակազմը ներկայացվելու է ամբողջությամբ, այսինքն՝ այն վերաբերելի օրենսդրական և պրակտիկ պրոբլեմները, որոնք կարող են լուծվել ոչ միայն կարճաժամկետ կամ միջնաժամկետ կտրվածքով, այլ նաև երկարաժամկետ կտրվածքով: Առաջարկվող լուծումների միջակայքը, ինչպես, նշվեց, շատ լայն է, օրինակ որոշ դեպքերում՝ ներառելով ընդհուպ մինչև այնպիսի պարադիգմային բարեփոխումներ, որոնք կարող են վկայել ՀՀ-ում ընդունված «խառը» մրցակցությունից անցում դեպի «մաքուր» մրցակցություն, քրեական վարույթի մինչդատական փուլում որպես իրավաբան գործող միայն մեկ անձի՝ դատախազի առկայություն, և այլն:

Ասվածը ավելի լավ պատկերացնելու համար բերենք մեկ օրինակ: Որպես խնդիր արձանագրված է, որ դատախազը իրականում չունի նախաքննության օրինականության նկատմամբ *արդյունավետ* հսկողության լծակներ (օրինակ՝ դատախազն ընդհանրապես չի տեսնում այն վկաներին, որոնց հարցաքննել է քննիչը և որոնց նա հարցաքննելու է հետո դատարանում): Այս փաստն իր հերթին առաջացնում է մեկ այլ խնդիր, ինչպիսին է՝ նախաքննության և դրա միջոցով՝ նաև հետաքննության ու օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության ապահովման տեսակետից դատախազական հսկողության անարդյունավետությունը: Այս խնդրի լուծման համար ՔԴՕ նախագծով առաջարկվող միջոցներից մեկը քննիչին կամ հետաքննիչին (քանի որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը առաջարկվում է դարձնել հետաքննություն) որպես վկա հարցաքննելն է՝ անձի կոնվենցիոն, այն է՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ «ՄԻԵԿ») 6-րդ հոդվածի 3 (դ) կետով նախատեսված մեղադրյալի իր դեմ ցուցմունք տված վկաներին («վկան» և հետևաբար՝ «ցուցմունքը» դրանց ՄԻԵԿ կողմից տրված «ինքնավար» իմաստով) առերես հարցաքննության իրավունքի իրացման համար: Սա ինքնին կարևոր լծակ է դատախազի ձեռքին, որպեսզի քննիչին կամ/և օպերատիվ աշխատակցին դատախազը կարողանա բացատրել, որ գործի բացահայտումը, օրինակ՝ չի կարող լինել ամեն գնով և որ դա նրանց միակ խնդիրը չէ, այլ նրանց խնդիրն է նաև մարդու իրավունքների պահպանումը՝ առնվազն ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը և կատարված դատավարական գործողությունների իրավաչափությունը ապահովելու համար, և որ, եթե նրանք իրեն «չեն հավատում», ապա

դրանում կհամոզվեն պաշտպանի ու դատարանի կողմից դատարանում հարցաքննվելիս (Նախագիծը հատուկ նորմեր է պարունակում այս մասին, իրացնելով այն *հասցեատիրական լեզվտիրություն* մեթոդը, որի համաձայն պետական մարմինների, տվյալ դեպքում՝ դատախազի, քննիչի և հետաքննիչի հարաբերությունները կարգավորվում են մարդու իրավունքների իրացումն ապահովելու կարիքը բավարարելու նպատակով)²:

Այսպիսով, մեթոդաբանության տեսակետից, մենք ունեցանք խնդիր՝ մինչդասական վարություն դատախազական հսկողության անարդյունավետություն, որը վերաբերելի է Նախագծով առաջարկվող լուծման համար, այն է՝ ապացույց ձեռք բերած անձանց հարցաքննությունը (նախևառաջ՝ հակընդդեմ, այսինքն՝ պաշտպանական կողմի կողմից հարցաքննությունը) դատարանում: Փաստորեն, իրավամբ, Նախագիծն առաջարկում է, որ քննիչը՝ մեջբերված, մեր կարծիքով, որպես բացառություն ձևակերպված, սակայն գործնականում՝ որպես կանոն կիրառվող դեպքերում, իսկ հետաքննիչը բոլոր դեպքերում՝ դատարանում լինելու են՝ ոչ ավել ոչ պակաս՝ դատախազի վկա, ինչպես, օրինակ՝ մեղադրյալի համար ոչ բարենպաստ ցանկացած այլ վկա: Որպես վկա դատարանում հարցաքննվելու այս անխուսափելի իրականությունը նույն անխուսափելիությամբ որակապես փոխում է դատախազի և քննիչի ու հետաքննիչի իրավահարաբերությունների բնույթը մինչդասական վարույթի ընթացքում:

Սակայն, արդյո՞ք վերը նշված լուծումը, ունակ է լուծելու անարդյունավետ հսկողության առկա էմպիրիկ խնդիրն ընդհանրապես և արդյո՞ք այդ լուծման առկայությունը ՀՀ դատախազության բարեփոխումների սույն հետազոտության տեսակետից, մինչդասական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության անարդյունավետությունը կարող է դարձնել այլևս ոչ վերաբերելի փաստ կամ խնդիր: Պատասխանն է՝ ոչ, քանի որ այդ խնդիրը, Նախագծով առաջարկվող կարգավորումների ընդունման պարագայում էլ, թեկուզ զգալիորեն մեղմացվելու է, սակայն չի *լուծվելու* սկզբունքորեն և լիովին, քանի դեռ դատարանը ունի մեղադրական թեքում, ընդ որում՝ ոչ թե դատավորի անձնական նախապաշարվածության, ապօրինի վերաբերմունքի, այլ հակառակը՝ շատ օրինական, ինստիտուցիոնալ թեքման իմաստով, երբ դատարանը իր նախաձեռնությամբ հրավիրում է նոր վկաների, նշանակում է փորձաքննություն և այլն: Այսինքն, երբ դատարանը տեսնում է իր կողմից նման ակտիվ գործողությունների կարիքը, ինչը նշանակում է, որ դատախազը չի բավարարել այդ կարիքը քննվող գործով, և դատարանի մոտ կասկածներ կան անձի մեղավորության կամ արարքի որակման հետ կապված, որոնք ըստ անմեղության կանխավարկածի, պետք է միշտ լուծվեն հոգուտ մեղադրյալի և որոնք դատարանի մոտ փարատելու պարտականությունը՝ ապացուցման պարտականությունը մեղադրող դատախազի վրա դրված լինելու ուժով, ամբաստանյալը պետք է արդարացվի կամ

² Տես՝ մասնավորապես, Նախագծի հետևյալ երեք փոխկապակցված դրույթները՝ 1) «Հոդված 22. Պատշաճ ապացուցումը. ... 7. Մեղադրյալի դատապարտումը չի կարող միայն կամ առավելապես հիմնվել այնպիսի անձի ցուցմունքի վրա, որի հակընդդեմ հարցման հնարավորություն տվյալ մեղադրյալը կամ նրա պաշտպանը կամ ներկայացուցիչը չեն ունեցել»; 2) «Հոդված 57. Վկան. ... 3. Որպես վկա չի կարող հարցաքննվել կամ առարկաներ, փաստաթղթեր կամ այլ նյութեր ներկայացնել՝ ... 5) քննիչը՝ այն վարույթով, որում նա իրականացրել է իր դատավարական լիազորությունները, բացառությամբ սույն օրենսգրքի 331-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի.» և 3) «Հոդված 331. Իրեղեն ապացույցի, ապացուցողական և այլ վարույթային գործողության արձանագրության և արտավարության փաստաթղթի հետազոտումը. ... 4. Այն դեպքում, երբ իրեղեն ապացույցի, ապացուցողական կամ այլ վարույթային գործողության արձանագրության կամ արտավարության փաստաթղթի հետազոտման արդյունքում կողմը վիճարկում է դրա թույլատրելիությունը կամ դատարանի մոտ հիմնավոր կասկածներ են առաջանում համապատասխան ապացույցի հավաստիության վերաբերյալ, ապա դատարանի որոշմամբ այդ ապացույցը ձեռք բերած կամ կազմած անձը կարող է հարցաքննության հրավիրվել և հարցաքննվել՝ վկայի համար սահմանված կանոններով»:

դատապարտվի նվազ ծանր, առաջադրվածում ներառված մեղադրանքով: Օրինակ՝ դատավորը քննում է քրեական գործ՝ շահադիտական դրդումներով կատարված սպանության վերաբերյալ գործով՝ 104 հոդվածի 2-րդ մաս, և պարզվում է, որ ենթադրյալ անձից՝ կազմակերպչից գումար ստանալու մասին ցուցմունք է տվել հենց միայն կատարողը՝ մեղադրյալը: Պատկերացնենք, այդ ցուցմունքն անօրինական է, քանի որ տրվել է պաշտպանի բացակայությամբ՝ վերջինիս պարտադիր մասնակցության պայմաններում կամ օգտագործման համար անթույլատրելի է դարձել այլ պատճառներով, օր.՝ հարցաքննության ընթացքում անձը, ինչը հիմնավորվել է հետագայում, եղել է հարբած վիճակում և ի վիճակի չի եղել համարժեքորեն վերարտադրել իրականությունը: Դատավորը, ըստ Նախագծի, դեռևս դատավարական հնարավորություն է ունենալու որոշել, որ պետք է հարցաքննվեն այս անձի հարևանները, ստուգվեն նրա կողմից կատարված ծախսերը, օր.՝ սպանությունից հետո մեղադրյալի ֆինանսական դրության կտրուկ դրական փոփոխության հիմքերը պարզելու համար: Կամ հնարավոր է, որ նույն հարևանները արդեն հարցաքննված լինեն, բայց քննիչը այդ հարցերը տված չլինի):

Բերված օրինակում, այսպիսով, դատախազական հսկողության թուլության և դրանից բխող նախաքննական մարմնի՝ մարդու իրավունքների առթիվ անհոգության պրոբլեմի առավել հեռանկարային լուծումը կլինի այն, որ դատարանը դադարի «յուլա տանել» թույլ գործերը, դադարի սեփական նախաձեռնությամբ ձեռք բերել ապացույցներ մեղադրող կողմի համար՝ ապացույցներ, որոնք ձեռք չի բերել քննիչը, կամ՝ դադարի մեծացնել այդ ապացույցների արժանահավատությունը իր համար, ինչը ազդակ կլինի թե՛ քննիչի համար, որպեսզի վերջինիս համար այսուհետ ավելի «լսելի» լինեն դատախազի ցուցումները, թե՛ հենց դատախազի համար, որն այսուհետ իմանալու է, որ մեղադրանքի բացերը դատարանը չի լրացնելու իր և քննիչի փոխարեն: Սա, իր հերթին, մեկ այլ պարադիգմային տեղաշարժ է ենթադրում դատախազի ու քննիչի հարաբերություններում՝ վերջինիս հետզհետե դարձնելով ոչ թե՛ ապացույցների սեփական գնահատմամբ դատավարական որոշումներ կայացնող, այլ այդ ապացույցները՝ դարձյալ դատախազական հսկողության ներքո ու դատախազի կողմից այդ դատավարական որոշումների հիմք տրամադրելու նպատակով, պարզապես հավաքող դատավարության սուբյեկտ:

Այսպիսով, ըստ Հետազոտության մեթոդաբանության, նույն վերաբերելի էմպիրիկ փաստակազմի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական թույլ հսկողության նշված խնդիրների իրական և **կայուն/երկարաժամկետ լուծումը** կլինի դատարանին՝ արգելել խախտել մրցակցության սկզբունքը՝ դրա «մաքուր» ընկալման իմաստով, այն է՝ արգելել սեփական նախաձեռնությամբ, այսպես կոչված «օբյեկտիվ ճշմարտությունը» բացահայտելու նպատակով՝ 1) վկաներին, նրա ասածը ավելի լավ հասկանալուն ուղղված, այսինքն՝ ոչ «փաստահավաք» հարցերից բացի, այլ հարցեր տալը, 2) նոր վկաներ հրավիրելը, 3) փորձաքննությունն նշանակելը և փորձագետին «փաստահավաք» հարցեր տալը: Ըստ մեթոդաբանության, այսպիսով, այս առաջարկներն արվելու են որպես *համակարգային* լուծումներ, կրկնենք՝ նույն խնդրի՝ «մինչդատական վարույթի նկատմամբ հսկողության ոչ բավարար արդյունավետություն» կոչվող խնդրի հետ կապված:

Այսպիսով, Հետազոտության մյուս կարևոր մեթոդը համակարգային վերլուծության մեթոդն է: Ներկայացված օրինակում, նույն խնդրի հեռանկարային երկարաժամկետ լուծման ուղղությամբ առաջարկվող և համակարգային լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված մյուս գործողությունը լինելու է ապացույցների թույլատրելիության բովանդակային ստուգումը դատարանի կողմից մինչև դատաքննությունը՝ իրական նախնական դատալսումների (preliminary hearings) միջոցով, որն ինչպես ԱՄՆ-ում են կոչում, լինելով փաստի և իրավունքի հարցերով առանձին վարույթ, ստիպելու է, որպեսզի

քննիչը և հետաքննիչը ապացույցի թույլատրելիության և/կամ դատավարական, այդ թվում հարկադրանքի միջոցի (օրինակ՝ ձերբակալման) իրավաչափության ստուգման համար հարցաքննվեն պաշտպանի և/կամ մեղադրալի կողմից՝ մինչև գործը ընդհանրապես դատարան ուղարկելը՝ ըստ էության քննելու համար: Ընդ որում, առավել քան հնարավոր է, որ այս դատալսումները անցկացվեն մի դատավորի կողմից, որը տվյալ գործը չի քննելու ըստ էության, իսկ գործն ըստ էության քննող դատավորը այն ստանալու է առանց անթույլատրելի ճանաչված ապացույցների, իսկ դրանց բովանդակության հիշատակումը որևէ անձին՝ նախնառաջ դատախազի կողմից (օրինակ՝ այն, մեղադրյալը խոստովանել էր մեղքը, բայց խոստովանական ցուցմունքը ճանաչվել է անթույլատրելի) արգելվի օրենքով՝ ընդհուպ մինչև պաշտոնագրկման կամ նույն դատախազին դրա համար քրեական հետապնդման ենթարկելու սանկցիայի կամ առնվազն էթիկայի կանոնների խախտման համար կարգապահական տույժի սպառնալիքի տակ: Մինչդեռ, նախնական դատալսումների ընթացքում ապացույցների թույլատրելիության բովանդակային ստուգումն արգելվելով, Նախագիծը (հոդված 320, մաս 2), ըստ էության, այս ինստիտուտը՝ իրականում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտից վերածել է դատական նիստի նախապատրաստական մասի: Առաջարկվող այս մեկ այլ պարադիգմային լուծումը, փաստորեն կբացառի, որ քննիչի ձեռք բերած անթույլատրելի ապացույցը ընդհանրապես հասնի դատարան, ինչը արդեն իսկ երաշխիք է դատախազ-քննիչ-հետաքննիչ հարաբերությունների որակապես նոր և վերը հիշատակված կարգավորումների համար:

Եվ վերջում նշենք, որ Հետազոտությունը, պայմանավորված լինելով Հայաստանում դատաիրավական բարեփոխումների անհրաժեշտությամբ, կենտրոնանում է միայն բարելավում պահանջող կարգավորումների վրա, և միտված չէ նյութը դոկտրինալ սպառնիչ ձևով ներկայացնելուն: Այդ իսկ պատճառով մի շարք խնդիրներ, օրինակ՝ դատախազության հարաբերությունները քրեական արդարադատության ոլորտից դուրս լիազորված այլ մարմինների, օրինակ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Կենտրոնական Բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի, Հաշվեքննիչ պալատի հետ հարաբերությունները չեն քննարկվում առանձին ենթակետերում:

ԳԼՈՒԽ 1. ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ

1.1. Դատախազության սահմանադրական կարգավիճակը և լիազորությունները

ՀՀ Սահմանադրության (2015թ. Փոփոխություններով) առանձին՝ 8-րդ գլխի («Դատախազությունը և քննչական մարմինները») 176-րդ հոդվածի համաձայն՝

- «1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:
2. Դատախազությունն օրենքով սահմանված ղեկավարում և կարգով՝
 - 1) հարուցում է քրեական հետապնդում:
 - 2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ:
 - 3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը:
 - 4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները:
 - 5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

3. Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:

5. Դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով»:

Նույն լիազորությունները դատախազությանը վերապահված էին նաև 1995թ. խմբագրությամբ, այսինքն՝ Սահմանադրության սկզբնական տեքստում, ինչպես նաև՝ 2005թ. փոփոխություններով Սահմանադրության 103-րդ հոդվածով՝ երկու տարբերությամբ.

- պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավունքը, ըստ 1995թ. և 2005թ. փոփոխություններով Սահմանադրության, կարող էր իրականացվել *«օրենքով նախատեսված դեպքերում և կարգով»*, իսկ 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համաձայն՝ *«օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով»*, ինչի բացասական լինելու մասին կխոսվի քրեական ոլորտից դուրս դատախազության գործունեությանը վերաբերող գլխում:
- ի տարբերություն նախորդ խմբագրությունների, 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է, որ դատախազությունը «հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ»՝ ի տարբերություն նախկին խմբագրությունների՝ «հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ» դրույթի՝ այսպիսով. փաստացի ընդլայնելով դատախազական հսկողության սահմանները քրեական վարույթի քրեական գործի հարուցմանը նախորդող փուլի ծավալով, ինչի դրական լինելու մասին կխոսվի դատախազության և նախաքննության ու հետաքննության մարմինների հետ փոխհարաբերություններին վերաբերող կետում³:

1.2. Դատախազության՝ որպես հանրության ներկայացուցչի լեգիտիմության միասնականությունը քրեական արդարադատության ոլորտում և դրանից դուրս

Թե քրեական, և թե արտաքրեական կամ ոչ-քրեական արդարադատության ոլորտում դատախազության իրավագոյությունը բխում է հանրության անունից հանդես գալու և հանուն հանրային շահերի գործելու պարտականությունից: Դատախազությունը բոլոր ոլորտներում առաքելություն ունի պաշտպանելու հանրային շահերը և իրավունք՝ հանդես գալու դրանց անունից: Անգամ այն դեպքերում, երբ դատախազը շարունակում է քրեական հետապնդումը իր իրավունքների պաշտպանությունից հրաժարվող խոցելի խմբին պատկանող անձի իրավունքները պաշտպանելու համար, նա ոչ թե պաշտպանում է այդ կոնկրետ անձի կամ անգամ՝ կոնկրետ խոցելի խմբի իրավունքները, այլ հանրության շահը՝ առ այն, որ իր բոլոր անդամների իրավունքները հավասարապես պաշտպանված են անգամ անհավասար ու խոցելի պայմաններում հայտնվելու դեպքում: Հենց դատախազությունն է, որ հանրության աչքերում լրացնում է այդ անհավասարությունը, և ամենամեծ հանրային

³ Այս առումով, անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնել ՀՀ Դատախազության մասին օրենքի 35-րդ հոդվածը (Դատախազական հսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ), որը դեռևս 16.04.20 դրությամբ, սահմանում էր, որ «Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթաց իրականացնելիս դատախազը հսկողություն է իրականացնում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում»:

շահը հենց նրանում է, որ իրավունքների պաշտպանության հնարավորությունների հավասարությունն ապահովված է անկախ անհատի խոցելիության աստիճանից:

«Հանրային դատախազները⁴» հանրային պաշտոնյաներ են, ովքեր հասարակության անունից և հանրային շահերից ելնելով, ապահովում են օրենքի կիրառումը այն դեպքերում, երբ օրենքի խախտումը քրեորեն պատժելի է, հաշվի առնելով ինչպես անհատի իրավունքները, այնպես էլ քրեական արդարադատության համակարգի անհրաժեշտ արդյունավետությունը⁵:

Մեջբերված Հանձնարարականի նույն 1-ին կետի առթիվ՝ Բացատրական հուշագրում նշված է, հետևյալը՝

«Գործելով ոչ թե որևէ այլ (քաղաքական կամ տնտեսական) մարմնի և ոչ էլ սեփական, այլ հասարակության անունից, դատախազները, իրենց պարտականությունները կատարելիս, պետք առաջնորդվեն հանրային շահով: Նրանք պետք է պահպանեն էական երկու պահանջները, որոնք վերաբերում են՝ մի կողմից, անհատի իրավունքների հետ, իսկ մյուս կողմից՝ քրեական արդարադատության համակարգի անհրաժեշտ արդյունավետության հետ, որը դատախազը, որոշակի առումով, պետք է երաշխավորի»⁶:

Այսպիսով՝ դատախազության լեգիտիմությունը՝ հանրային շահերին հետամուտ լինելու պարտականության կրողի գոյության իրավունքը միասնական է, պարզապես՝ տարբեր են այդ կեցության իրացման դրսևորումները և առանձնահատկությունները քրեական և արտաքրեական արդարադատության ոլորտներում: Ամենակարևոր նմանությունը, սակայն, դա այն է, որ դատախազությունը իրավասություններ է հաղորդում հասարակությանը, հանդես գալիս նրա իրավաբան ներկայացուցիչը: Իհարկե, և սրա մասին կխոսվի առանձին, դատախազության հիմնական առաքելությունը հենց քրեական արդարադատության ոլորտն է, որտեղ նա հանդես է գալիս հանցագործության համընդհանուր տուժող հասարակության անունից, սակայն դատախազությունը չի կորցնում այդ առաքելությունը և պարտավոր է ստանձնել այն՝ օրենքով սահմանված և այլ պայմաններին բավարարող այն բոլոր դեպքերում, երբ առկա է հանրային շահ՝ որպես այդպիսին համընդհանուր հասարակությանը պատկանող, կամ երբ տուժող անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքերում այդ անօգնական կամ վնաս պատճառողից կախվածության մեջ գտնվող մարդու իրավունքները պաշտպանելը արդեն իսկ հանրային շահ է իրենից ներկայացնում⁷:

Այն, որ դատախազությունը թե քրեական, և թե արտաքրեական արդարադատության ոլորտում ելնում է միևնույն՝ հանրային շահերի պաշտպանության հասցեատիրության լեգիտիմությունից, ընդունվում է նաև ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից, որը, ի թիվս

⁴ Այս եզրույթը (“Public prosecutors”) օգտագործվում է գրեթե բոլոր միջազգային փաստաթղթերում, սակայն բովանդակության տեսակետից որևէ ծավալային տարբերություն չունի հայերեն «դատախազ» եզրույթի համեմատ, ուստի տարբերակումներից խուսափելու համար, հետագա շարադրանքում օգտագործվելու է հենց այդ հայերեն համարժեքը:

⁵ Տե՛ս՝ THE ROLE OF PUBLIC PROSECUTION IN THE CRIMINAL JUSTICE SYSTEM Recommendation Rec(2000)19, adopted by the Committee of Ministers of the Council of Europe on 6 October 2000 and Explanatory Memorandum, ԵԽ Նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին անդամ պետություններին ուղղված Rec(2000)19 Հանձնարարականը», ընդ. 2000թ. հոկտեմբերի 6-ին, այսուհետ՝ «ԵԽ ՆԿ (2000)19 Հանձնարարական» և վերջինիս Բացատրական հուշագիրը, կետ 1:

⁶ Տե՛ս՝ ԵԽ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագիրը, կետ 1:

⁷ Նշենք, որ վերջին ձևակերպումը իրավաչափորեն նախատեսված է նաև ՀՀ ՔԴՕ նախագծի 16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում՝ հնարավորություն տալով դատախազությանը հանրային քրեական հետապնդում իրականացնել նաև մասնավոր, այսինքն՝ միայն տուժողի կողմից քրեական հետապնդման ենթակա հանցագործություններով՝ անկախ տուժողի կողմից քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ «եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը»: Նույնը նաև նախատեսված է «ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքների» համար:

արտաքրեական ոլորտում դատախազության դերակատարումը ամրագրող հիմնարար սկզբունքների, նշում է հետևյալը՝

«Նախարարների կոմիտեի Քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին անդամ պետություններին ուղղված Rec(2000)19 Հանձնարարականը պետք է կիրառվի, *mutatis mutandis* (որքանով վերաբերելի է), այն դատախազների նկատմամբ, ովքեր պատասխանատու են և լիազորություններ ունեն քրեական արդարադատության ոլորտից դուրս, որքանով դա վերաբերելի է՝ իրենց գործառույթների կատարման նպատակով իրենց տրամադրվող երաշխիքներին, գործադիրի, օրենսդիրի և դատական համակարգի հետ հարաբերություններին և անհատների հանդեպ ունեցած իրենց պարտականություններին ու պատասխանատվությանը»⁸:

Եվ հենց այդ է պատճառը, որ նույն Հանձնարարականը իր «Բ. Դատախազների առաքելությունը» կետում նշում է, որ «Եթե ազգային իրավական համակարգը դատախազներին պատասխանատվությամբ և լիազորություններով է օժտում քրեական արդարադատության համակարգից դուրս, նրանց առաքելությունը պետք է լինի ընդհանուր կամ հանրային շահը ներկայացնելը, մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները պաշտպանելը, և իրավունքի գերակայությունն ապահովելը»⁹:

«Դատախազները պետք է գործեն հասարակության անունից և ելնելով հանրային շահերից և պաշտպանեն մարդու իրավունքները, ինչպես դրանք ամրագրված են, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում»¹⁰:

«Դատավորի և դատախազի անկախությունը անբաժանելի է իրավունքի գերակայությունից: Դատավորները, ինչպես և դատախազները գործում են ի ընդհանուր շահի, հանուն հասարակության և նրա քաղաքացիների, ովքեր ուզում են, որպեսզի իրենց իրավունքներն ու ազատությունները երաշխավորված լինեն բոլոր առումներով»¹¹:

1.3. Դատախազության՝ որպես հանրության ներկայացուցչի լեգիտիմությունը և դրա իրացման սահմանները քրեական արդարադատության ոլորտում

Դատախազության իրավագոյությունը և դրանից բխող նրա գործառույթները, ու ըստ այդմ էլ՝ դատախազության ինստիտուցիոնալ կարգավիճակն ու դատախազների կարգավիճակը քրեական արդարադատության ոլորտում պայմանավորված է ընդամենը մեկ հանգամանքով՝ ենթադրյալ կամ ապացուցված հանցագործության համընդհանուր տուժող հասարակության իրավական ներկայացուցչությունը իրականացնելու անհրաժեշտությամբ¹²: Հանցագործությունը, իր սահմանմամբ, դա հանրորեն վտանգավոր

⁸ Recommendation CM/Rec(2012)11 of the Committee of Ministers to member States on the role of public prosecutors outside the criminal justice system (Adopted by the Committee of Ministers on 19 September 2012 at the 1151st meeting of the Ministers' Deputies), այսուհետ՝ ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարական, կետ 5:

⁹ ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարական, կետ 2:

¹⁰ Opinion No.9 (2014) of the Consultative Council of European Prosecutors to the Committee of Ministers of the Council of Europe on European norms and principles concerning prosecutors, <https://rm.coe.int/168074738b>, ԵԴԽՆ «Եվրոպական նորմերն ու սկզբունքները դատախազների վերաբերյալ» Կարծիք 2-9, այսուհետ՝ «ԵԴԽՆ Կարծիք 2-9», կետ II:

¹¹ Strasbourg, 8 December 2009 OPINION No.12 (2009) OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES (CCJE) AND OPINION No.4 (2009) OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) TO THE ATTENTION OF THE COMMITTEE OF MINISTERS OF THE COUNCIL OF EUROPE ON THE RELATIONS BETWEEN JUDGES AND PROSECUTORS IN A DEMOCRATIC SOCIETY: BORDEAUX DECLARATION on “JUDGES AND PROSECUTORS IN A DEMOCRATIC SOCIETY” and its EXPLANATORY MEMORANDUM <https://rm.coe.int/1680747391>, «Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների փոխհարաբերությունների մասին Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի ուշադրությանը ներկայացվող» Եվրոպական դատավորների Խորհրդատվական խորհրդի Կարծիք 2-4 և ԵԴԽՆ Կարծիք 2-12, որոնցով 2009թ. դեկտեմբերի 8-ին ընդունվել է «Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների մասին» Բորդոյի Հռչակագիրը և դրա Բացատրական հուշագիրը, կետ 34:

¹² Гегель, Философия права, М. 1990, с. 258.

արարքն է, որը արգելված է քրեական օրենսգրքով¹³: Դատախազության գործունեության միջոցով, հասարակությունը քրեական արդարադատության ոլորտում ձեռք է բերում իր *իրողությունը*:

Հենց այս հավաքական հասարակության շահերը ներկայացնելն է, որ քրեական պատիժը, իսկ միայն արդարացի պատիժն է հասարակությանը հաշտեցնում հանցագործի հետ¹⁴, չի դառնում անձնական վրեժխնդրության գործիք¹⁵, այդ թվում՝ տուժողի կողմից, երբեմն՝ հանրային շահերին հակառակ պետությունն օգտագործելու համար:

Ինչպես իրավացիորեն նշում է Վենետիկի Հանձնաժողովը՝

«Նախնառաջ, բոլոր պետությունները պետք է քրեական հետապնդումը դիտարկեն որպես պետության հիմնական գործառնություններից մեկը: Հանցագործությունը ոտնձգություն է հասարակության՝ իբրև ամբողջի վրա, չնայած շատ դեպքերում նույն արարքը է նաև մասնավոր ոտնձգություն է կոնկրետ տուժողի նկատմամբ: Եթե ոտնձգությունը միայն մասնավոր բնույթի է, այն հանցագործություն չէ»¹⁶:

Ըստ էության, հենց արդարացիությունն է ընկած դատախազության կողմից ամբողջ քրեական վարույթի ընթացքում իրականացվող գործունեության հիմքում՝ քրեական գործի հարուցմանը նախորդող փուլից սկսած՝ մինչև պատժի կիրառման օրինականության նկատմամբ հսկողությունը, քանի որ հասարակության վերը նշված պահանջը չի կարող բավարարվել, եթե պատիժը նշանակվում է մի անձի նկատմամբ, ում մեղքը ապացուցված չէ արդարացիությունը երաշխավորող՝ նույն հասարակության կողմից, այն է՝ հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ կամ ԱԺ ընդունած օրենքով սահմանված դատավարական ձևի շրջանակներում: Իսկ նշանակված պատժի դեպքում հասարակության *արդարադատական պահանջումներն* է այն, որ պատժի՝ որպես հանցագործի հետ հաշտեցման արդարացիորեն նշանակված միջոցի պայմանները չլինեն ոչ ավել և ոչ էլ պակաս դատարանի կողմից սահմանված զրկանքներից՝ մի կողմից նշված հաշտեցմանն հասնելը ապահովելու, իսկ մյուս կողմից՝ երաշխավորելու համար, որպեսզի այդ զրկանքները չանցնեն դատարանի կողմից նշանակված զրկանքների սահմանը, ինչպես և պահանջվում է, մասնավորապես՝ Եվրոպական բանտային կանոններով (հոդված 2)¹⁷:

Անձի մեղքի ապացուցման դատավարական ձևն իր մեջ միասնականորեն ներառում է քրեական դատավարության հավասարազոր երկու խնդիրների՝ ճշմարտության

¹³ ՀՀ քրեական օրենսգրքի, Հոդված 18 (Հանցագործության հասկացությունը), մաս 1-ին. «Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով»:

¹⁴ Гегель, *Философия права*, М. 1990, с. 258.

¹⁵ Հանցագործության պատժումը վրեժի տեսքով հանդես է գալիս սոսկ որպես իրավունքն իր մեջ, այլ ոչ թե իրավական ակտի ձևով, այսինքն՝ որպես ոչ իրավական՝ իր գոյությամբ: Տուժող կողմի փոխարեն հանդես է գալիս տուժող համընդհանուրը, որն ի դեմս դատարանի օժտված է իր հատուկ իրականությամբ և իր վրա է վերցնում հանցագործին հետապնդելը և հանցագործությունը պատժելը, ինչն հենց այդպիսով դադարում է սոսկ սուբյեկտիվ և պատահական հատուցում, վրեժ լինելուց և փոխակերպվում է իրավունքի՝ ինքն իր հետ հաշտվելուն, պատժի¹⁵:

¹⁶ **REPORT ON EUROPEAN STANDARDS AS REGARDS THE INDEPENDENCE OF THE JUDICIAL SYSTEM: PART II – THE PROSECUTION SERVICE**, Strasbourg, 3 January 2011, Study N° 494 / 2008, CDL-AD(2010)040 Or. Engl., EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW (VENICE COMMISSION), Վենետիկի Հանձնաժողովի «Դատական համակարգի անկախությանը վերաբերող եվրոպական չափորոշիչների մասին Ձեկույց. Մաս 2-րդ – Դատախազությունը», ընդ. 2011թ. հունվարի 3-ին, այսուհետ՝ «ՎՀ-ի Ձեկույց դատախազության անկախության չափորոշիչների մասին», կետ 11:

¹⁷ *European Prison Rules* – Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի Հանձնարարական REC (2006)2-ով հաստատված Եվրոպական բանտային կանոններ, 2-րդ հոդվածի համաձայն՝ «ազատությունից զրկված անձինք պահպանում են այն բոլոր իրավունքները, որոնցից նրանք չեն զրկվել օրենքով սահմանված կարգով կայացված դատավճռով կամ կալանավորման մասին որոշմամբ»:

բացահայտման և մարդու իրավունքների պաշտպանվածության ապահովման երաշխիքները, որոնց բացառապես միաժամանակ գործադրումն է, որ վարույթը դարձնում է արդարացի, իսկ դրա արդյունքը՝ կանխավարկածում որպես ճշմարիտ (ինչպես, օրինակ՝ տրամաչափված փորձագիտական սարքի կողմից գեներացված տվյալները): Այդ իսկ պատճառով, դատախազությունը հսկողություն է իրականացնում և մինչդասական վարույթի օրինականության նկատմամբ, և անձի նկատմամբ կիրառվող պատժի դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ՝ ապահովելով միաժամանակ և քրեական վարույթի արդյունավետությունը և այդ ընթացքում մարդու իրավունքների սահմանափակումների օրինականությունը, այսինքն՝ դատավարական ձևի պահպանումը, ինչպես նաև՝ այն որ անձը, դատապարտվելու դեպքում կրի միայն այն զրկանքները, որոնք նշանակվել են արդարացիորեն ընթացած քրեական վարույթի արդյունքում:

Դատախազության ժամանակակից եվրոպական քաղաքակրթական դերը նկատմամբ՝ Վենետիկի Հանձնաժողովի, ՄԻԵԴ-ի, ԵԽ այլ մարմինների կողմից, ընդ որում՝ թե քրեական արդարադատության ոլորտում, թե դրանից դուրս դատախազության գործառույթների վերաբերյալ բազմաթիվ մեկնաբանություններում արտացոլված լինելով, իր գնոսիոլոգիական և մեթոդաբանական հիմքում լիովին խարսխված է իրավունքի փիլիսոփայության վրա՝ դրա մեր կողմից վերը նշված մեկնումներում: Մասնավորապես, հանգուցային է ՎՀ-ի վերը նշված այն ամրագրումը, որ՝

«Եթե ոտնձգությունը միայն մասնավոր բնույթի է, այն հանցագործություն չէ»:

Այսպիսով, քրեական դատավարությունում դատախազության՝ որպես ենթադրյալ կամ իրական տուժող հասարակության ներկայացուցչի լիազորությունները պայմանավորված են նրա հենց այդ լեգիտիմությամբ՝ արդարացիության երաշխիքների պահպանմամբ վերհանել ենթադրյալ մեղավորներին, պաշտպանել նրանց մեղադրանքի թեզը՝ գործը դատարանում ըստ էության քննելու ժամանակ և բողոքարկման ատյաններում, իսկ անձին մեղավոր ճանաչելու ու պատժի նշանակման դեպքում՝ դրա կիրառման օրինականության նկատմամբ: Նշված գործառույթներից կենտրոնականը՝ մեղադրանքի թեզի պաշտպանությունը գործի ըստ էության քննությունն իրականացնող դատարանում, դատախազությունն իրականացնում է անձամբ, իսկ դրան հաջորդող փուլերում՝ արդարացիության ապահովումը սահմանափակվում է այլ մարմինների, մասնավորապես՝ մինչդասական վարույթի մարմինների և պոստպենիտենցիար մարմինների կողմից անմիջապես իրականացվող գործունեությունը հսկելու միջոցով:

Քրեական արդարադատության ոլորտում դատախազության գործառույթներին նվիրված հետագա շարադրանքը նվիրված է լինելու դատախազության իրավագոյության հենց այս ընկալման վրա, ընդ որում՝ **ներկայացվելու է դատախազի կողմից անմիջականորեն քննչական գործողությունների կատարման անհրաժեշտությունը մինչդասական վարույթում՝ որպես հետագա գործունեության արդյունավետության երաշխիք:** Եթե մինչդասական վարույթին հաջորդող փուլերում դատախազի կողմից անմիջական որոշումները կայացնելու ու գործողություններ կատարելու բացառումը, այսինքն՝ միմիայն որպես կողմ հանդես գալու մոտեցումը բխում է իշխանությունների տարանջատվածության սկզբունքից ու այն երաշխավորելու դարձյալ հանրային շահից, ապա ոչ մի պարտադրող հանրային շահ չկա, որպեսզի նույնը պասիվությունը դատախազն ունենա նաև մինչդասական վարույթում: Հենց այս լեգիտիմության հիման վրա հետագա շարադրանքում, մինչդասական վարույթում քննիչների և հետաքննության մարմինների հետ կոնկրետ հարցերի կապակցությամբ ծագող հարաբերությունների առթիվ առաջարկություններ են արվելու դատախազի կողմից՝ 1) ապացույցներ ձեռք բերելու, 2)

մեղադրանքի կողմի վկաների հետ մինչև դատարան գործն ուղարկելը շփվելու, 3) դատավարական հիմնական որոշումները (նախնառաջ՝ քրեական հետապնդման հարուցման ու դատարեցման վերաբերյալ) կայացնելու, և 4) առանձին դեպքերում անձամբ քննություն իրականացնելու վերաբերյալ:

1.4. Դատախազության՝ որպես հանրության ներկայացուցչի լեգիտիմությունը և դրա իրացման սահմանները քրեական արդարադատության ոլորտից դուրս

2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն, ինչպես նշվեց, նախորդող՝ 1995 և 2005թթ. սահմանադրական տեքստերի, արտաքրեական ոլորտում դատախազությանը վերապահված գործառույթների իրականաման նախապայմանների մեջ նշում է (176-րդ հոդված) միաժամանակ «բացառիկ դեպքերում» և «օրենքով սահմանված» լինելը: Նախնառաջ, սա ինքնին անթույլատրելի է արդեն օրենսդրական տեխնիկայի տեսակետից, քանի որ բոլոր դեպքերը, ինչքան էլ բացառիկ լինեն, պետք է լինեն օրենքով սահմանված, այսինքն՝ «բացառիկության» պայմանը որևէ բան չի ավելացնում «օրենքով սահմանված» լինելու պայմանին:

Այնուհետև, նույն օրենսդրական տեխնիկայի առումով, սխալ է հոդվածի կոնկրետ դրույթը, մասնավորապես՝ 176-րդ հոդվածի 2-րդ մասը սկսել «Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով» բառակապակցությամբ, իսկ այնուհետև՝ թվարկել բացառապես քրեական արդարադատության ոլորտում առկա լիազորությունները, իսկ քաղաքացիական ոլորտի լիազորությունները նախատեսել մեկ այլ՝ նույն հոդվածի 3-րդ մասում՝ կարծես թե դա դատախազության լիազորությունների մեջ չի մտնում:

Վերջապես, նշված դրույթը պետք է վերանայվի նաև բովանդակային տեսակետից՝

«Դատախազության մարմինների դերն ու լիազորությունների ծավալը, ներառյալ՝ մարդու իրավունքների և հանրային շահի պաշտպանությունը, սահմանված են անդամ պետությունների ներպետական օրենսդրությամբ: Ոչ քրեական գործառույթների առկայությունը կամ բացակայությունը և ծավալը խորապես արմատավորված են ազգերի մշակութային ժառանգության, իրավական ավանդույթի և սահմանադրական պատմության մեջ»¹⁸:

Այսինքն, ոչ քրեական ոլորտում լիազորությունների առկայությունը՝ որևէ ծավալով, ինքնին խնդրահարույց չէ եվրոպական չափորոշիչների տեսանկյունից: Կարևորն այն է, որ սահմանված լինեն այն երաշխիքները, որոնք դատախազության թույլ չեն տա խախտելու իշխանությունների տարանջատվածության սկզբունքը և կապահովեն դատախազական բոլոր ակտերի (որոշում, գործողություն, անգործություն) անկախ դատարաններում վիճարկելու արդյունավետ հնարավորությունը¹⁹:

ԵՄ «Նախարարների կողմիտ Քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազության դերի մասին անդամ պետություններին ուղղված (2012)11 Հանձնարարականը» (ընդ. 2012թ. սեպտեմբերի 19-ին, այսուհետ նաև՝ «ԵՄ ՆԿ (2012)11 Հանձնարարական») իր կետ 3-ում (կետ (գ). Ընդհանուր սկզբունքները) արտաքրեական արդարադատության ոլորտում դատախազական միջամտության նշված պայմաններին ավելացնում է նաև այն, որ նման միջամտության հիմքերը «պետք է բոլոր դեպքերում

¹⁸ Opinion No 3(2008) of the Consultative Council of European Prosecutors on “THE ROLE OF PROSECUTION SERVICES OUTSIDE THE CRIMINAL LAW FIELD” adopted by the CCPE at its 3rd plenary meeting (Strasbourg, 15-17 October 2008), կետ 4:

¹⁹ Կամայականության դեմ այս երաշխիքները՝ որպես այս ոլորտում դատախազական այս ոլորտում միջամտության, այն է՝ գործողություն կատարելու, գործողություն կատարելուց հրաժարվելու, որոշում կայացնելու պարտադիր պայմաններ, քննարկվում են 2-րդ գլխի 2.5 կետում: մանրամասն ներկայացված են Հետազատության 2.5 կետում:

ամրագրված լինեն օրենքով և լինեն հստակ ձևակերպված՝ որևէ տարընթերցումից խուսափելու նպատակով», իսկ կետ 4-ը նշում, որ, «ինչպես և քրեական արդարադատության ոլորտում, արտաքրեական արդարադատության ոլորտից դուրս նույնպես դատախազները իրենց պարտականություններն ու լիազորությունները պետք է իրացնեն օրինականության, օբյեկտիվության, արդարացիության և անկողմնակալության սկզբունքներին ամբողջովին համահունչ ձևով»²⁰:

«Եվրոպայի Խորհրդի դատախազները իրենց առաջին իսկ դիտարկումներում տեղյակ են եղել «որ քրեական ոլորտից դուրս դատախազության միջամտությունը կարող է արդարացված լինել միայն վերջինիս առջև դրված՝ **«հասարակության անունից և հանուն հանրային շահի գործելու»** ընդհանուր խնդրով ինչպես դա ամրագրված է **R (2000) 19 Հանձնարարականում**, և որ այդ գործառույթները չեն կարող հարցականի տակ դնել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքը, կամ՝ այն փաստը, որ միայն իրավասու դատարաններին և միայն նրանց է վերապահված վեճերին, դրանց երկու կողմերին լսելուց հետո, վերջնական լուծում տալը»²¹:

Հենց նշվածը հաշվի առնելով՝

«Եվրոպայի Գլխավոր դատախազների Համագումարը (Սանկտ Պետերբուրգ, 2008թ.) ընդգծեց մեր հասարակություններում խոցելի խմբերի, հատկապես՝ երեխաների և երիտասարդների, վկաների, տուժողների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, ինչպես նաև ընդհանրապես բնակչության սոցիալական և քաղաքացիական իրավունքների պաշտպանության աճող անհրաժեշտությունը: Այն կարծիք հայտնեց այն մասին, որ դատախազները կարող են հանգուցային դերակատարում ունենալ այս առումով, և որ ընթացիկ, մասնավորապես՝ բնության պահպանության, սպառողների իրավունքների կամ հանրային առողջության պաշտպանության խնդիրների լուծման ուղղությամբ պետության աճող ներգրավվածությունը կարող է տանել դատախազական մարմինների դերակատարման ծավալների ընդլայնմանը»²²:

Ավելացնենք նաև, որ օրենսդրորեն բացակայում է *«պետական շահեր»* հասկացության սահմանումը, ինչը պարզապես անհրաժեշտ է բացահայտել *«Դատախազության մասին»* օրենքում (այսուհետ նաև՝ *«Օրենք»*)՝ հաշվի առնելով դրանց պաշտպանության հայցով դիմելու սահմանադրական գործառույթի առկայությունը: Եվ վերջապես, դատախազության նշված լեգիտիմությունը՝ հանրության անունից պաշտպանելու նաև հենց հանրության շահերը՝ նաև հենց պետական մյուս մարմինների ոտնձգություններից, արդեն իսկ, ըստ սահմանման, չի կարող պարփակվել զուտ *«պետական»* շահերի պաշտպանությամբ: Այսինքն՝ Սահմանադրության մեջ, բացի խոցելի անձանց իրավունքները պաշտպանելու գործառույթից, ոչ քրեական իրավահարաբերությունների ոլորտում *պետք է ավելացնել նաև «հանրային» շահերը*: Դատախազության դերակատարումը ներկայումս նվազեցված է պետական շահի, մինչդեռ *դատախազության լեգիտիմությունից է բխում առանձին դեպքերում նաև խոցելի ոչ միայն զուտ հանրության, այլև անձի իրավունքները պաշտպանելը պետական մարմիններից՝ պաշտպանելով այդ անձանց իրավունքները հենց որպես հանրային շահ*:

Այսպիսով, ինչպես քրեական արդարադատության ոլորտում, այստեղ էլ՝ **դատազախությունն ունի նույն հանրությանը իրավական իրողություն հաղորդելու առաքելությունը**՝ հատկապես, երբ խոսքը գնում է հանրային այն շահերի մասին, որոնք այլ կերպ չեն պաշտպանվելու կամ այն անձանց շահերի մասին, ովքեր խոցելի վիճակի բերումով, ի գորու չեն արդյունավետորեն իրականացնել իրենց իրավունքների պաշտպանությունը: Մինչդեռ, ՀՀ գործող Սահմանադրությամբ դատախազության լիազորությունները այս ոլորտում անհարկի սահմանափակվել են: Իհարկե, ԽՍՀՄ

²⁰ Recommendation CM/Rec(2012)11 of the Committee of Ministers to member States on the role of public prosecutors outside the criminal justice system (Adopted by the Committee of Ministers on 19 September 2012 at the 1151st meeting of the Ministers' Deputies):

²¹ Նույն տեղում, կետ 10:

²² Նույն տեղում, կետ 10; տես՝ Saint Petersburg Conference, see CPE (2008) 3.

Ժամանակաշրջանի նախկին ընդհանուր հսկողության պարադիգմի վերականգնումը սխալ կլինի, քանի որ պայմանականորեն առաջացել էր, այսինքն՝ *գոյության իրավունքը ստացել էր* որպես գործիք՝ անհատների, հանրության, հասարակական և պետական միավորների նկատմամբ ամբողջատիրական վերահսկողության հաստատման համար, սակայն, փորձը ցույց տվեց, որ *վայրի կապիտալիզմի գաղափարից էլնելով*, և ինչու՝ ոչ՝ պետական ռեսուրսները անվերահսկելիորեն վատնելու ու հանրային շահերը հատկապես՝ կապի²³, տրանսպորտի, ռազմավարական այլ ոլորտներում անպատճելիորեն ոտնահարելու նպատակով, Հայաստանը մղվեց մեկ այլ ծայրահեղության՝ երբ հանրային նշանակություն ունեցող թեկուզ մասնավոր շահերի իրացումը դադարեց ինքնին լինել պետական շահ, կարծես թե խոսքը գնում է ոչ թե նույն հասկացությունների մասին, այլ ինչ-որ ՀԿ-ի ունեցած շահերի մասին:

Փոխարենը, ստեղծվեցին այլ ինստիտուտներ՝ Մարդու իրավունքների պաշտպանը, ստուգող մարմինները, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, աշխատանքի տեսչություն (որն հետագայում, կարելի է ասել, արդյունավետորեն վերացվեց) այլ մարմիններ, որոնք, սակայն, չեն ապահովում առնվազն այն չափանիշների ու չափորոշիչների կիրառման միասնականությունը, որն ապահովում էր դատախազությունը օրինականության միասնական ռեժիմի ապահովման նկատմամբ ընդհանուր հսկողության իր գործառույթով: Հետևաբար, արտաքրեական արդարադատության ոլորտում դատախազությանն առնչվող բարեփոխումները պետք է, ներքառեն առնվազն դատախազական արդյունավետ միջամտությունը այն բոլոր դեպքերում, երբ հանրային շահը, ներառյալ՝ խոցելի խմբերին պատկանող անձանց իրավաչափ շահերը պաշտպանված չեն, համապատասխանաբար՝ լիազոր պետական մարմինների (օրինակ՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները), նշված անհատների կամ վերջիններիս շահերի պաշտպանության առաքելություն ունեցող կառույցների (օրինակ՝ արհմիությունների) կողմից կամ եթե այդ կառույցները բացակայում են (օրինակ՝ հանրային շահի հայցով (*action popularis*) առանձին խոցելի կամ խոցվող խմբերի իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունք չունեցող, սակայն այդ խմբերը ներկայացնող կազմակերպություններ), (տես՝ Հետազոտության 2-րդ գլխի 2.5 կետը)։

Լիազոր մարմինները, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ի՞նչ խոսք, պետք է հնարավորություն ունենան հայցով դիմել դատարան, եթե պետական շահերը ոտնահարվել են: Սակայն, հաշվի առնելով նշված մարմինների բազմազանությունը, անհրաժեշտ է նաև, որպեսզի դատախազությունը, որպես միասնական կառույց, որն օժտված է ադդ շահերը պաշտպանելու լիազորությամբ, կարողանա նաև ապահովել այդ շահերի պաշտպանության դատավարական, տվյալ դեպքում՝ քաղաքացիադատավարական եղանակների գործադրման միասնականությունը: Այդ միասնականությունը պետք է արտահատի պետության միասնական դիրքորոշումը՝ պետական շահերի պաշտպանության անհրաժեշտության գնահատման չափորոշիչների և չափանիշների, այդ շահերի պաշտպանության ուղղությամբ գործադրվող պետական ներգործության միջոցների ընտրության առթիվ, որոնք չեն կարող կախվածության մեջ դրվել իրավասու նշված մարմինների հայեցողությունից, զանազանվող պատկերացումներից կամ ընդհանրապես՝ ցանկությունից:

²³ Որպես օրինակ, բերենք այն իրավիճակը, որն առաջացավ Հայաստանում 2020թ.՝ կապի ծառայություններ մատուցող երկու խոշոր ընկերությունների միաձուլման ոլորտում: ԱՄՆ-ում, օրինակ, նման գործարքների կայացումը անհնար է առանց Արդարադատության նախարարության/դեպարտամենտի (նշենք, որ նախարարը նաև երկրի Գլխավոր դատախազն է) նախնական համաձայնության՝ հաշվի առնելով այն հետևանքները, որ կարող է ունենալ ռազմավարական ոլորտում միաձուլումը:

1.5. Դատախազության տեղը իշխանությունների համակարգում. դատական, թե՛ գործադիր

Դատախազության անվիճելի առանձնահատկությունն է այն, որ՝ մի կողմից, քրեական դատավարությունում, դատախազն ընդունում է որոշումներ, որոնցով անձը ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ, օրինակ՝ հանցակազմի բացակայության հիմքով մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Անկախ նրանից, թե արդյոք ՀՀ գործող ՔԴՕ-ի 66-րդ հոդվածով անձին տրվող այս կարգավիճակը կպահպանվի Նախագծի վերջնական տարբերակի ընդունման պարագայում, թե ոչ²⁴, կարծում ենք, որ դատախազի՝ որպես դատական իշխանության սուբյեկտի՝ մագիստրատի կարգավիճակը և դրանից բխող քաղաքական չեզոքության և անկախության երաշխիքները, անհերքելի են՝ ելնելով այն որոշումների բնույթից, որոնք նրա կողմից կայացվում են: Մյուս կողմից, սակայն, կարևոր է հաշվի առնել նաև գործադիր իշխանության տարրերը, ինչպիսիք են՝ դատախազության միասնական կառույց լինելը, երբ վերադաս դատախազը վերացնում է ստորադաս դատախազի որոշումները և այլն: Միջազգային չափորոշիչների համաձայն, դատախազի բոլոր որոշումները բողոքարկելի են դատական կարգով, ինչը երաշխիք է, որպեսզի դատախազության գործառնությունների իրացման արդյունքները՝ որպես դատական իշխանության՝ գործողի բնորոշ հատկանիշներ կրողի, լինի վերահսկելի և ստուգելի դատարանների կողմից:

Օրենսդրական ռազմավարական զարգացումները, մեր կարծիքով, հետզհետե պետք է տանեն դեպի դատախազության կազմակերպման ու գործունեության մեջ դատական իշխանությանը բնորոշ հատկանիշների ուժեղացում, և հակառակը գործադիրին բնորոշ հատկանիշների նվազեցում և չեզոքացում: Առաջինի օրինակ, կարող են լինել՝ դատական համակարգի և դատավորների կարգավիճակի անալոգիայով անկախության ամրագրումը, անփոփոխելիությունը (այսինքն՝ երաշխավորված պաշտոնավարումը «լավ վարքագծի ընթացքում» (during good behaviour), այլ ոչ թե վերադասին ու քաղաքական իշխանությանը հաճո լինելու ընթացքում, պաշտպանությունը աշխատանքից կամայական ազատելուց, անկախության նյութական ու սոցիալական երաշխիքները), իսկ երկրորդի օրինակ՝ վերադաս դատախազի կողմից ստորադաս դատախազի որոշումները վերացնելու և գործը մի դատախազից մյուսին հանձնելու օբյեկտիվ հիմքերի սահմանումը, վերադասի այդ որոշմանը պատճառաբանվածության պահանջը ամրագրելը և այլն: Հետազոտության մեջ տեղ գտած առաջարկների մեծ մասը հետապնդում է այս ռազմավարական նպատակը:

Բացի այդ, սա լիովին համահունչ կլինի այն միտումներին, որոնք ներկայումս արձանագրվում են Եվրոպական մայրցամաքում, քանի որ դրանք արտացոլում են դատախազության վերը նշված լեգիտիմությունը և այն դերը, որը ունի դատախազությունը քրեական արդարադատության համակարգում, հատկապես՝ դատարանների հետ հարաբերություններում:

«Չնայած դատավորներն են, այլ ոչ թե դատախազները, որոշումները կայացնում կոնկրետ գործերով՝ կապված ազատությունների հետ՝ ընդհանրապես, ու պաշտպանական կողմից իրավունքների հետ՝ մասնավորապես, հենց դատախազներն են, և ոչ թե դատավորները, ովքեր հիմնական պատասխանատուներն են քրեական արդարադատության համակարգի ընդհանուր արդյունավետության համար՝ կապված ընդհանուր շահի գաղափարի հետ»²⁵:

²⁴ Նախագիծը, մեր կարծիքով, անհարկի հրաժարվել է այս գաղափարն ընդունելուց, սակայն փաստացի ընդունում է մինչդատական վարություն արդարացված մեղադրյալի գոյության փաստը, մինչդեռ սա կարևոր էր մինչդատական վարություն անձի իրավունքների երաշխավորման և վերականգնման տեսակետից:

²⁵ Տես՝ ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագիրը, կետ 1:

Բացի այս, անվիճելի են նաև կարգավիճակի նմանության, եթե ոչ՝ միասնականության (մագիստրատների հայեցակարգի դեպքում) տարբերը, որոնց դարձյալ բխում են հանրային շահը ներկայացնելու, հետապնդելու առաքելությունից ու դրանով պայմանավորված դատախազությանը ներկայացվող օբյեկտիվության և անկողմնակալության այն նույն պահանջներից, որոնք ներկայացվում են դատավորներին:

«Դատախազների, ինչպես և դատավորների, խնդիրն է հանդիսանում կիրառել օրենքը կամ հետևել, որ այն կիրառվում է: Դատավորները դա անում է հետադարձ կերպով, ի պատասխան իրենց քննությանը ներկայացված գործերի, մինչդեռ դատախազն օրենքի կիրառումը «ապահովում է» պրոակտիվ կերպով: Դատավորները նստում են նիստը նախագահողի տեղում և կայացնում որոշումներ, իսկ դատախազների աշխատանքը գոնությունն է և գործողությունն է՝ գործերը դատարան բերելու համար»²⁶:

ԵՂԽՆ Կարծիք Հ-9-ում հստակ նշված է, որ՝

«Դատախազության մարմինների անկախությունն ու ինքնուրույնությունը անքակտելի կապողակ է դատական իշխանության անկախության համար: Հետևաբար, դատախազական մարմինների անկախության և արդյունավետ ինքնուրույնության խթանման ընդհանուր միտումը պետք է քաջալերվի»²⁷:

Չուտ գործադիրի մոդելը մենք ընդհանրապես այստեղ չենք քննարկում՝ Հայաստանում դրա պատմական, իրավամշակութային, ինստիտուցիոնալ, դատավարական և այլ նախադրյալների ի սպառ բացակայության պատճառով: Մյուս կողմից, ի տարբերություն Սահմանադրության սկզբնական տեքստի (որտեղ դատախազությունը նշված էր «Դատական իշխանություն գլխում»), գործող 2015թ. փոփոխություններով Սահմանադրությունը որդեգրել է այն մոդելը, որով ընդհանրապես ժխտվում է դատախազության՝ դատական իշխանությանը բնորոշ *ինստիտուցիոնալ* հատկությունների առկայությունը: Սա այսպես կոչված «հատուկ մարմնի» մոդելն է՝ ոչ դատական, ոչ գործադիր, որն իրականում ոչ լեգիտիմ մոդել է և *հանդիսանում է խնդրի խորը, իրավունքի փիլիսոփայության, այսինքն՝ իրավունքի գիտության դիրքերից քննարկումից խուսափելու փորձ*: Այս մոդելը գուրկ է լեգիտիմությունից, քանի որ, ըստ էության, դուրս է գալիս իշխանությունների բաժանման, կամ որն ավելի ճիշտ է՝ պետական իշխանության երեք ճյուղերի *տարանջատվածության* սկզբունքին, այսինքն՝ այն սկզբունքին, որ չկա որևէ պետական իշխանություն, որը չի արտահայտվում որպես գործադիր, օրենսդիր կամ դատական իշխանություն՝ սրանից բխող բոլոր հետևանքներով: Իրավունքի փիլիսոփայությունը կամ գիտությունը ուղղակիորեն բացահայտել է, որ «Սահմանադրությունը իշխանական ֆունկցիաների տարանջատվածությունն է»²⁸, այսինքն՝ որ չի կարող լինել պետական որևէ իշխանություն, որը չի իրացվում նշված իշխանությունների դուրս է: Հակառակ մոտեցումը դատախազության դուրս է բերում պետական օրգանիզմի կենսագործունեության համակարգից, որի ներսում նյութափոխանակության միակ ձևը դա զպումների ու հակակշիռների փոխգործությունն է, որպես օրգանաստեղծ էություն:

Նախորդ խմբագրություններով Սահմանադրությունը պարզապես, դատական իշխանությանը բնորոշ գործառնական հատկանիշները (հանրային շահի պաշտպանություն, անձի համար արդարացման դատավճռին հետ հավասար հետևանքներ առաջացնող որոշումները ընդունելու կարողություն) իրավամբ, գործադիրին բնորոշ զուտ

²⁶ Տե՛ս՝ THE ROLE OF PUBLIC PROSECUTION IN THE CRIMINAL JUSTICE SYSTEM Recommendation Rec(2000)19, adopted by the Committee of Ministers of the Council of Europe on 6 October 2000 and Explanatory Memorandum, ԵՄ Նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին անդամ պետություններին ուղղված Rec(2000)19 Հանձնարարականը», ընդ. 2000թ. հոկտեմբերի 6-ին, այսուհետ՝ «ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարական» և վերջինիս Բացատրական հուշագիրը, կետ 1:

²⁷ ԵՂԽՆ Կարծիք Հ-9, կետ IV:

²⁸ Гегель, Энциклопедия философских наук, том 3, М. 1977, с. 351.

ինստիտուցիոնալ և նվազ կարևոր հատկանիշներին որպես գերակա դիտարկելով, և նաև նաև այն պատճառով, որ ցանկացել էր ամրագրել որպես ուղենիշ հենց վերը հիշատակած համաեվրոպայական ընդհանուր միտումը՝ դատական իշխանությանը բնորոշ տարրերի առավելագույն երաշխավորման ուղղությամբ, դատախազությունը սահմանել էր որպես Դատական իշխանություն կրող: 2015թ. փոփոխություններով Սահմանադրության մեջ թույլ տրվեց *մեխանիստիկական մոտեցում՝ անհարկի անտեսելով դատական իշխանությանը բնորոշ տարրերը և իրավունքի ու իրավական համակարգի զարգացման հեռանկարներն ու անհրաժեշտությունը:*

Դատախազության իրական տեղը գտնելը շատ լուրջ գործնական հետևանքներ կարող է ունենալ: Խնդիրը պետք է լուծվի և՛ դատական, և՛ գործադիր մոտեցման, այլ ոչ թե՛ ոչ դատական, և ոչ էլ գործադիր մոտեցման համատեքստում: Միայն առաջին, և մեր կարծիքով, լեգիտիմ մոտեցման շրջանակներում է, որ հնարավոր է լինում ճիշտ հավասարակշռություն գտնել՝ *առանց իշխանության նոր, բնությանը անհայտ ճյուղ ստեղծելու:* Այդ հավասարակշռությունը՝ դա դատական և գործադիր իշխանությունների էական հատկանիշների համադրումն է: Իսկ այդ համադրման հիմքում այն թե, որոնք են այն էական, անքակտելի հատկանիշները, որոնք դատախազությանը՝ որպես ժողովրդավարական հասարակությունում գործող՝ մարդու իրավունքները պաշտպանող, ընդհանուր հանրային շահն հետապնդող ինստիտուտին, տալիս են գործնական իրացման առավելագույն երաշխիքներ , և մյուս կողմից՝ ապահովում գործադիրին բնորոշ անհրաժեշտ ուղղահայացը և միասնական պրակտիկան:

Այսպիսով, անհրաժեշտ է վերանայել հատուկ մարմինների հայեցակարգը ընդհանրապես՝ որպես խորապես հակազիտական: Այս առումով, մենք համապատասխան գլխում առանձին կքննարկենք քննչական, հետաքննչական մարմինների տեղը պետական իշխանությունների համակարգում: Առկա գործառնական հատկանիշների բերումով, դրանք, կարծես թե նույնպես պետք է ամրագրվեին Դատախազության հետ նույն՝ Դատական իշխանության բաժնում: Սակայն, գործող Սահմանադրությունը, առանց Դատախազությանը իշխանության սահմանադրական դասակարգում տալու, նույն տրամաբանությամբ, պարզապես որպես նոմինալ լուծում, քննչական մարմինները նույնպես զետեղել է նույն տեղում: Մեր կարծիքով, ու սրա հիմքերը կբերվեն ստորև, քննչական և մյուս մինչդատական մարմինները պետք է ամբողջությամբ տեղավորվեն գործադիր իշխանության տիրույթում՝ հաշվի առնելով թե համաեվրոպայական միտումները և թե մինչդատական վարույթում որպես իրավաբան գործող մեկ սուբյեկտի՝ դատախազի մոդելը, ում համար այդ մարմինների աշխատակիցները հանդես են գալիս վկայի դերում, հետևաբար՝ չեն կարող գտնվել դատական իշխանություն ունեցողի կարգավիճակում:

Դատախազության մասով վերը նշվածը կարևոր է նաև այն, հիմնականում՝ անկախության երաշխիքների հավասարեցման տեսակետից, որոնցից միջազգային փաստաթղթերի համաձայն, պետք է օգտվեն դատախազներն ու դատավորները: Առնվազն դատախազների մասով, սա ընդունված փաստ է այդ թվում նաև Վենետիկի Հանձնաժողովի կողմից, որն ուղղակիորեն դատախազությունը դիտարկում է որպես դատական համակարգի մաս²⁹: Իսկ եթե, նշված հակազիտական մոտեցման համաձայն, այսպես կոչված հատուկ մարմինները չեն հանդիսանում հայտնի երեք իշխանություններ կրողներ, ապա (չնայած դա անհնար է, քանի որ **պետությունը այլ կերպ չի կարող դրսևորվել, քան իշխանության տեսքով, իսկ դրանք սպառիչ երեքն են, որոնց տարանջատվածությունն էլ, ըստ իրավունքի փիլիսոփայության, հենց հանդիսանում է Սահմանադրություն**), ապա

²⁹ Տե՛ս՝ ՎՀ, «Զեկույց դատախազության անկախության չափորոշիչների մասին»:

պետք է ավելի հետևողական լինել և հրաժարվել այդ մարմինների սահմանադրական ամրագրումից:

Նշվածի ուժով, պետք է բոլոր, այսպես կոչված մյուս «հատուկ» մարմիններին վերաբերող կարգավորումները առաձին գլուխներով նախատեսել համապատասխան բաժնի, մասնավորապես՝ «Գործադիր իշխանություն» բաժնի տակ՝ ԿՐՀ, Հաշվեքննիչ պալատ, «Ոստիկանական ծառայություններ» (որտեղ կլինի գաղտնի և բացահայտ քննչական գործողություններ կատարող ապարատը) և այլն:

Այսպիսով, դատախազությունը այն դեպքերում, երբ կայացնում է վերջնական որոշումներ, մասնավորապես՝ անձին արդարացվածի կարգավիճակ տվող կամ նրա համար արդարացման դատավճռի հետ համեմատ միևնույն հետևանքներն առաջացնող որոշումներ, հանդես է գալիս որպես դատական իշխանություն: Մյուս գործառնություններն իրականացնելիս, երբ դատախազը հանդես է գալիս միջնորդություններով կամ դատախազական ներգործության այլ միջոցներով, այն գործում է որպես կողմ, հետևաբար՝ ավելի մոտ է ոչ թե դատական, այլ գործադիր իշխանությանը: Սրանից ելնելով, օրինակ՝ դատախազական արդարադատության ակտերը չպետք է վերանայելի լինեն վերադաս դատախազի կողմից, ինչի մասին առանձին խոսվում է 2-րդ գլխի 2.9 կետում:

Վերջապես, դատախազության որպես կառույցի կազմակերպման էությունը լիովին բնորոշ է գործադիրին: Նշվածի բերումով, դատախազության կազմակերպումը պետք է արտացոլի նաև դատախազության կողմից դատական իշխանությանը բնորոշ գործառնությունների իրականացման փաստը: Դատախազների անկախության ապահովման կազմակերպարարական երաշխաբներին նվիրված է սույն հետազոտության 3-րդ գլուխը, որտեղ լուսաբանվում են նաև դատախազների քաղաքական, քաղաքացիական և աշխատանքային իրավունքները (դատախազության աշխատողների արհմիություն կազմելու, կադրային դատախազների անփոփոխելիության իրավունքը և այլն):

Հաշվի առնելով դատախազության կարգավիճակը, հատկապես՝ հանրության անունից հանդես գալու լեգիտիմության փաստը, կարծում ենք, որ Սահմանադրությամբ պետք է ամրագրվի նաև դատախազության ու դատախազների անկախության և միայն օրենքին ենթարկվելու պահանջը³⁰:

ԵԴԽԽ Կարծիք Հ-9-ը իր Բացատրական հուշագրի «3.1. Դատախազների անկախությունը» կետին նվիրված պարզաբանումներում նշում է, որ՝

«Դատախազների անկախությունը, որը էական է իրավունքի գերակայության համար, պետք է երաշխավորված լինի օրենքով՝ հնարավորինս բարձրագույն մակարդակում, դատավորների համար նախատեսվածին նմանատիպ եղանակով: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը անհրաժեշտ է համարել ընդգծել, որ «ժողովրդավարական հասարակությունում ինչպես դատարանները, այնպես էլ քննչական մարմինները պետք է գերծ լինեն քաղաքական ճնշումից»³¹:

Սրանից հետևում է, որ դատախազները պետք է ինքնուրույն լինեն իրենց որոշումները կայացնելիս և, չնայած այլ կառույցների հետ համագործակցելուն, իրենց համապատասխան պարտականությունները պետք է կատարեն գործադիր իշխանության

³⁰ Report on the independence and impartiality of the prosecution services in the Council of Europe member States (2019 edition) referred to the issue of independence of prosecutors in the context of “general safeguards such as guarantees ensuring functional independence of prosecutors from their hierarchy and judicial control of the acts of the prosecution service”¹⁸, տես, *ի թիվս այլի*, նաև՝ ¹⁸ See ECtHR Kolevi v. Bulgaria, no. 1108/02, 05/02/2010, para 142.

³¹ Guja v. Moldova (Grand Chamber), no. 14277/04, § 86.

կամ խորհրդարանի արտաքին ճնշումներից կամ միջամտությունից՝ հաշվի առնելով իշխանությունների տարանջատվածության ու հաշվետվողականության սկզբունքները^{32,33}:

Վերջին դատողություններն, ի լրումն Վենետիկի Հանձնաժողովի կողմից դատախազությունը եվրոպական համաեվրոպական մակարդակով կազմված վերը հիշատակված զեկույցում դատական իշխանության կազմում դիտարկելու փաստին, ուղղակիորեն ապացույցն են նրա, որ դատախազությունը չի կարող գտնվել գործադիր իշխանության կազմում, իսկ այն, որ դատախազության՝ գործադիրի ու օրենսդրի հետ հարաբերությունները պետք է հաշվի առնեն իշխանությունների տարանջատման սկզբունքը, նույնպես տեղ չի թողնում դատախազությունը հենց դատական իշխանության ներքո դիտարկելու առթիվ որևիցե կասկածների համար:

1.6. Առաջարկներ՝ 1-ին գլխում քննարկված հարցերի վերաբերյալ

1. ՀՀ դատախազությանը և քննչական մարմիններին վերաբերող կարգավորումները տալ «Դատական իշխանությունը» Բաժնում նախատեսել՝

«ԲԱԺԻՆ ... Դատական իշխանությունը ...

Գլուխ Դատարանները ...

Գլուխ Դատախազությունը և քննչական մարմինները... »:

2. Հոդված (գործող Սահմանադրության 176 հոդված) ... ՀՀ դատախազությունը

2-րդ մասը՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

1) հարուցում է քրեական հետապնդում.

2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

5) հսկողություն է իրականացնում դատավճիռների կատարման և հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ³⁴.

6) հանրային, այդ թվում՝ պետական, ինչպես նաև խոցելի խմբերին պատկանող անձանց մասնավոր շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան»:

3. 3-րդ մասը՝ հանել:

³² Kolevi v. Bulgaria, no. 1108/02, 05/02/2010, §§ 148-149; Vasilescu v. Romania, no. 53/1997/837/1043, 22/05/1998, §§ 40-41; Pantea v. Romania, no. 33343/96, 03/09/2003, § 238; Moulin v. France, no. 37104/06, 23/02/2011, § 57.

³³ ԵՂԻՄՆ Կարծիք 2-9, կետ 33-34:

³⁴ 5-րդ կետում, այսպիսով, առաջարկում են «հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ» փոխարինել «հսկողություն է իրականացնում դատավճիռների կատարման և հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ» դրույթով, քանի որ դատախազի՝ այս փուլում իրականացվող գործառնությունների լեգիտիմությունը բխում է դատարանի վերջնական ակտերը կատարելու անհրաժեշտությունից, իսկ «օրինականություն» եզրույթն էլ իր սկզբնական բովանդակությունը գտնում է դատարանի վերջնական ակտում՝ սահմանվելիք պատժի ռեժիմի տեսքով: Այս մասին մանրամասն տես՝ Հետազոտության 2.4 կետում:

4. 3. 4-րդ մասում՝ «Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:» նախադասությունից հետո ավելացնել՝ **«Հայաստանի Հանրապետությունում դատախազներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին»:**
5. Հոդված 176-ը՝ մնացած մասով, թողնել անփոփոխ:
6. Քննչական մարմինները, այլ՝ «Ոստիկանական ծառայություններ» անվանումով, նախատեսել գործադիր իշխանությանը նվիրված բաժնում:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Դատախազության լիազորությունները քրեական հետապնդում հարուցելիս և մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս

2.1.1. Քրեական հետապնդման հարուցումը դատախազի կողմից

2.1.1.1. Հանրային և մասնավոր քրեական հետապնդում, խոցելի խմբերի պաշտպանություն

Դատախազության՝ որպես համընդհանուր տուժողի ներկայացուցիչ ունեցած լեգիտիմությունից բխող դերակատարման ընկալումը անխուսափելիորեն պետք է արտացոլվի նաև քրեական դատավարության շրջանակներում դիսպոզիտիվության սկզբունքի իրացման ծավալների վրա: **Մասնավորապես, բոլոր դեպքերում, անհրաժեշտ է նվազագույնի հասցնել մասնավոր մեղադրանքի հոդվածների թիվը, իսկ հետագայում՝ ընդհանրապես հրաժարվել մասնավոր մեղադրանքի կամ քրեական հետապնդման ինստիտուտից,** քանի որ, ինչպես Վենետիկի հանձնաժողովն է, իրավունքի փրկիտփայության վրա հենվելով, նշում՝ «եթե ոտնձգությունը միայն մասնավոր բնույթի է, այն հանցագործություն չէ»³⁵:

Մինչև այդ ինստիտուտի վերացումը՝ որպես հեռահար նպատակ, անհրաժեշտ է ներկայումս առկա կամ ժամանակի ընթացքում քչացող հոդվածներով նախատեսվող հանցագործությունների առթիվ իրականացվող վարույթի նկատմամբ՝ հենց վերջինիս հարուցման փուլից, ուժեղացնել դատախազական հսկողությունը՝ նախ, արարքը հնարավոր նվազ ծանր մեղադրանքով որակելու և այդպիսով՝ մասնավոր մեղադրանքի գործ դիտարկելու նկատմամբ, և ապա, ենթադրյալ տուժողի կողմից բողոք չներկայացնելու կամ ներկայացված բողոքը հետ վերցնելու շարժառիթները ստուգելու նկատմամբ: Այսինքն՝ անհրաժեշտ է դատախազական հսկողության գործուն օրենսդրական միջոցները նախատեսել դատախազների կողմից մասնավոր մեղադրանքի գործերով վարույթների իրականացման համար անհրաժեշտ քրեաիրավական և քրեադատավարական պայմանների առկայությունը արդյունավետորեն ստուգելու համար:

Սա առավել քան անհրաժեշտ է՝ ընտանեկան բռնության զոհ կանանց³⁶, անչափահասների խոցելի խմբերի անձանց մասնակցությամբ վարույթներում, ինչը արդեն իսկ որոշ արտահայտություններ ունի ՀՀ օրենսդրության մեջ³⁷ և քննչական պրակտիկայում³⁸ (երկուսում էլ՝ ընտանեկան բռնության զոհերի մասով), սակայն՝ ոչ միշտ դատական պրակտիկայում, մասնավորապես՝ անչափահասների նկատմամբ կատարվող միջին ծանրության հանցագործությունների կտրվածքով³⁹:

³⁵ Տես՝ ՎՀ, «Զեկույց դատախազության անկախության չափորոշիչների մասին», կետ 11:

³⁶ Տես՝ ՄԻԵԴ *Օփուզն ընդդեմ Թուրքիայի* (Opuz v Turkey) գործով (Դիմում Հ-33401/02) 2009թ հունիսի 9-ի վճիռը, կետ 137-148 և հաջորդիվ:

³⁷ Տես՝ ՔԴՕ հոդված 183 (Տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերը), մաս 4-րդ:

³⁸ Տես՝ **Մասնավոր մեղադրանքի կարգով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին. Հավելված՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի «24» 12 2014թ. հրամանի. ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԿԱՐԳՈՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԿԱՍ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐՇԵԼՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, այսուհետ նաև՝ «ՔԿ 2014թ. ուղեցույց»:**

³⁹ Տես, ի թիվս այլի, ԳԴ Հաղորդում, էջ 62-63:

Պետք է ասել, սակայն, որ դեռևս ՀՀ Վճռաբեկ դատարանը դեռևս 2008թ. դեկտեմբերի 26-ի իր նախադեպային որոշմամբ, սահմանել էր հետևյալը՝

«... Անձը, ում իրավունքները խախտվել են իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը, ապա նման իրավիճակում, քրեական գործ առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում, քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով՝ անկախ դիմողի բողոքի առկայությունից: Նման դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է քրեական գործ հարուցել և քրեական հետապնդում իրականացնել տուժողի կամքից անկախ»⁴⁰:

ՀՀ-ում ընտանեկան բռնության գործերով մասնավոր մեղադրանքի հարուցման նկատմամբ դատախազական հսկողության գործընթացը էլ ավելի ուժողացավ *Օփուզ ընդդեմ Թուրքիայի* գործով ՄԻԵԴ կայացրած վճռից, որին նախորդել էր նույն գործով ՄԻԵԴ կողմից (նույն վճռի 81-րդ կետում) մեջբերված ԵՄ Նախարարների կոմիտեի 2002թ. ապրիլի 30-ի Հ-(2002)5 Հանձնարարականը, որտեղ նշված էր՝

«Անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որպեսզի բռնության բոլոր զոհերը հնարավորություն ունենան վարույթ հարուցելու, **դրույթներ նախատեսեն՝ ապահովելու, որպեսզի քրեական վարույթը հնարավոր լինի հարուցել դատախազի կողմից, դատախազներին քաջալերել բռնությունը դիտել որպես ծանրացնող կամ վճռորոշ գործոն՝ հանրային մեղադրանքի գործով հետապնդում իրականացնելու հարցը լուծելիս**, ապահովեն, եթե անհրաժեշտ է, որպեսզի տուժողները բավարար կերպով պաշտպանված լինեն սպառնալիքներից և վրեժի հնարավոր գործողություններից, ինչպես նաև՝ հատուկ միջոցներ ձեռնարկեն երաշխավորելու համար երեխաների իրավունքների պաշտպանությունը ընթացակարգերի ընթացքում»⁴¹:

Այս մոտեցումը, որի հիմքում Կոնվենցիայի ծանր խատուների զոհերի խոցելիության դեպքում զոհակենտրոն քրեական քրեական հետապնդման գաղափարն էր՝ որպես այդ տուժողների հանդեպ պետության պոզիտիվ պարտավորությունների իրացում, իր գազաթնակետին հասավ *Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով* ՄԻԵԴ վճռում, որում տեղ գտան նորմատիվ առումով իրականում որակապես նոր դիրքորոշումներ, մասնավորապես՝ կապված տուժողի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը ընտանեկան բռնության հանցագործությունները բացահայտելու պետության պոզիտիվ պարտականությանը ստորադասելու հետ, և որտեղ Դատարանը պարզապես նշեց հետևյալը՝

«Այնուամենայնիվ, Դատարանն ավստասնքով նշում է, սույն գործով քննությունը ամբողջությամբ կախված է եղել դիմումատուի և նրա մոր կողմից իրենց բողոքները պնդելու հանգամանքից այդ պահին գործող ներպետական օրենսդրության... պահանջների հիման վրա, որոնց համաձայն քրեական հետապնդման մարմինները չէին կարող շարունակել քննությունը, քանի որ խնդրո առարկա հանցավոր արարքները չեն հանգեցրել հիվանդության կամ աշխատունակության կորստի տաս օրից ավելի ժամանակով...: Դատարանը նկատում է, որ նշված դրույթների կիրառման և բոլոր ներպետական մարմինները կողմից Հ.Օ-ի դեմ քրեական հետապնդումը չշարունակելու հետևանքով դիմումատուի մայրը գրկվել է իր կյանքի և անվտանգության պաշտպանության իրավունքից: Այլ խոսքերով, այդ պահին գործող օրենսդրական կարգավորումը... չէին բավարարում պետության պոզիտիվ պարտավորությունների անբաժանելի մաս կազմող այն պահանջին, որ պետք է ստեղծվի և արդյունավետորեն կիրառվի մի այնպիսի համակարգ, որով կպատժվեն ընտանեկան բռնության բոլոր դրսևորումները և բավարար երաշխիքներ կտրամադրվեն դրանցից տուժող անձանց: Դատարանն, այսպիսով, գտնում է, որ հաշվի առնելով Հ.Օ-ի կողմից նախկինում կատարված հանցագործությունների ծանրությունը, քրեական հետապնդման մարմինները **պետք է հնարավորություն ունենային շարունակելու վարույթը՝ ելնելով հանրային շահից և անկախ տուժողների կողմից իրենց բողոքները հետ վերցնելու հանգամանքից**»⁴²:

Փաստորեն, ՄԻԵԴ-ը նշեց, որ անգամ եթե օրենսդրությունը պարունակում է սահմանափակումներ, դատախազները պետք է հնարավորություն ունենան շարունակելու

⁴⁰ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի ՎԲ-73/08 որոշման 13 կետ, 2008թ. դեկտեմբերի 26):

⁴¹ *Օփուզն ընդդեմ Թուրքիայի*, կետ 81:

⁴² *Օփուզն ընդդեմ Թուրքիայի*, կետ 145:

վարույթը հանրային շահից ելնելով: Վերջապես, ՄԻԵԴ-ը իր դիրքորոշումն արտահայտեց օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության մասին

«Դատարանը կրկնում է 2-րդ հոդվածի ներքո բերված գանգատի առնչությամբ իր արտահայտած դիրքորոշումը, այն է, որ օրենսդրական դաշտը դատախազական մարմիններին պետք է լիազորած լինե՞ր շարունակելու գործով նախաքննությունը՝ չնայած դիմումատուի կողմից իր բողոքները հետ վերցնելու փաստին՝ նրա հիման վրա, որ Հ.Օ-ի կողմից կիրառված բռնությունը բավականաչափ ծանր էր քրեական հետապնդում իրականացնելու համար, և որ գոյություն ունե՞ր մշտական սպառնալիք դիմումատուի ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ (տես՝ վերևում, կետ 137-148-րդ)»⁴³:

Այս զարգացումներից հետո ու, իհարկե, հաշվի առնելով քննչական ու դատախազական պրակտիկան, ՀՀ Քննչական կոմիտեի (այսուհետ՝ նաև «ՔԿ») ղեկավարի հրամանով հաստատվեց «Մասնավոր մեղադրանքի կարգով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու միասնականության վերաբերյալ» Ուղեցույցը⁴⁴: Այս փաստաթղթում, ՔԿ-ն, արձանագրելով (կետ 4) ՀՀ ՔԴՕ այն պահանջը, որ «4. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի)», միաժամանակ ուղղակի հղում անելով *Օփուզի գործին* ու ՀՀ Վճռաբեկ դատարանի հիշատակած որոշմանը, սահմանեց հետևյալը՝

«10. Մասնավոր կարգով հետապնդվող ընտանեկան բռնության գործերով, դիմողի (տուժողի) կողմից իր դիմումը (բողոքը) հետ վերցնելու դեպքում քրեական գործը հարուցվում է կամ քրեական վարույթը շարունակվում է հանրային կարգով, եթե մեծ է դիմողի նկատմամբ կրկին անգամ հանցագործություն կատարելու վտանգը: Ընտանեկան բռնության գործերով, դիմողի բողոքի բացակայության պայմաններում, հարուցված քրեական գործով պատշաճ քննության շրջանակներում քննիչը պարզում է հանցանքի ծանրությունը, տուժողին պատճառված վնասի բնույթը (ֆիզիկական, թե՛ հոգեբանական վնաս), անձի կողմից գե՛նք գործադրելը, հարձակումից հետո սպառնալիքների առկայությունը, տանը բնակվող երեխաների վրա ունեցած ազդեցությունը (այդ թվում՝ հոգեբանական), անձի կողմից կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը, տուժողի կամ մեկ այլ անձի առողջության կամ անվտանգության համար շարունակական վտանգի հավանականությունը, մեղադրյալի հետ տուժողի փոխհարաբերությունների ներկայիս վիճակը, տուժողի կամ քննիչի հակառակ քրեական հետապնդումը շարունակվելու ներգործությունն այդ փոխհարաբերությունների վրա և այլն (Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով որոշման 168-րդ կետը, 2009թ.-ի հունիսի 9)»:

Պետք է ասել, որ հանցագործության զոհի խոցելիության հիմքով մասնավոր մեղադրանքի վարույթով հետապնդումը շարունակելու մասին, մասնավորապես՝ անչաչափահասներին առնչվող գործերում, կարևոր որոշում է կայացրել ՀՀ Մահմանադրական դատարանը՝ իր 2016թ. դեկտեմբերի 20-ի ՄԴՈ 1333 որոշման մեջ մեկնաբանելով «երեխայի լավագույն շահ» հասկացությունը⁴⁵:

«ՀՀ սահմանադրական դատարանը, նշված որոշմամբ առաջ է քաշել մասնավոր մեղադրանքի գործերով անչափահաս տուժողի շահերի պաշտպանության հիմնական երկու չափանիշներ՝ **Անչափահաս տուժողի լավելու իրավունք և Երեխայի լավագույն շահ**: Անչափահասի նկատմամբ կատարված՝ մասնավոր հետապնդման ենթակա հանցագործության վերաբերյալ վարույթը հանրային կամ մասնավոր կարգով իրականացնելու հարցը լուծելիս գլխավոր չափանիշը երեխայի լավագույն շահն է: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշի՝ կոնկրետ դեպքում անչափահասի նկատմամբ կատարված հանցագործության վերաբերյալ վարույթը մասնավոր է, թե՛ հանրային կարգով իրականացնելը, այն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, թե՛ չենթարկելն է բխում երեխայի լավագույն շահից: Թեև երեխայի տարիքը կենտրոնական տեղ է զբաղեցնում այդ հանգամանքը գնահատելիս, ավելին՝ ՀՀ Մահմանադրական դատարանն ուղղակիորեն է շեշտում հենց տասնչորս տարին

⁴³ Օփուզն ընդդեմ Թուրքիայի, կետ 168:

⁴⁴ Տես՝ <http://www.prosecutor.am/am/mn/7127/>

⁴⁵ Տես՝ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1333.pdf>

չլրացած անձանց տարիքի անհամապատասխանությունը կասկածյալի, մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ հարցի բարդությանը, սակայն այն չի կարող միակ չափանիշը լինել երեխայի լավագույն շահը որոշելու հարցում»⁴⁶:

ՀՀ ՄԴ այս որոշումից մեկ տարի անց՝ 2017թ. դեկտեմբերի 13-ին, ՀՀ ՔԴՕ 183-րդ հոդվածը լրացվեց⁴⁷ նոր՝ 4-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ.

«4. Անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց՝ դատախազն իրավասու է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններով հարուցելու քրեական գործ ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում»:

Պետք է ասել, սակայն, որ այս նորմը, իր 3 տարվա կիրառման ընթացքում ի հայտ է բերել որոշ բացեր, որոնք իրավացիորեն արձանագրվել են ՀՀ գլխավոր դատախազի ՀՀ Ազգային Ժողովին ներկայացված իր վերջին՝ 2019թ. գործունեությանը վերաբերող Հաղորդման մեջ (այսուհետ՝ նաև «ԳԴ Հաղորդում»), նշելով, որ՝

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի տառացի մեկնաբանությունից ակնհայտ է, որ վարույթը հանրային կարգով իրականացնելու դատախազի բացառիկ լիազորությունը կարող է իրացվել միայն քրեական գործի հարուցման փուլում, իսկ հարուցված քրեական գործով նույն հոդվածում սահմանված պայմաններն ի հայտ գալու դեպքում այդ հնարավորությունը իրացվել չի կարող: Օրենսդիրը չի սահմանում հարուցված մասնավոր մեղադրանքի վարույթը հանրային դարձնելու որևէ դատավարական ձև: Խնդիրն առաջ է գալիս այն դեպքում, երբ մասնավոր հետապնդման դեպքով տվյալներ առկա չեն անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով իր իրավաչափ շահերը պաշտպանելու՝ հանցագործությունից տուժած անձի անկարողության մասին, վերջինս բողոք է ներկայացնում հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, և քրեական գործը հարուցվում է սովորական մասնավոր հետապնդման կարգով: Հետագա վարույթի ընթացքում տուժողը հաշտվում է հանցանք կատարած անձի հետ, բայց միաժամանակ, ի հայտ են գալիս վարույթը հանրային կարգով շարունակելու հիմքեր»⁴⁸:

Քանզի «խնդրի վերջնական լուծումը կարող է ապահովվել համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում», Դատախազությունն առաջարկում է «որպես իրավակիրառական լուծում, հիմք ընդունելով ընտանիքում բռնության դեպքերով վարույթի հիմքում դրված հայեցակարգը, այդպիսի դեպքերում քրեական հետապնդումը շարունակվում է դատախազի ցուցումի վրա»⁴⁹:

Օրենսդրական այս լուծումներին մեծապես, սակայն, ոչ լիարժեք կերպով (ինչի մասին կխոսվի այս կետի վերջում) անդրադառնում է նաև ՀՀ ՔԴՕ Նախագիծը: Վերջինս, անխուս, արտահայտում է գոհակենտրոն մոտեցումը՝ մասնավոր և հանրային մեղադրանքի տարանջատումը կատարելիս, սակայն՝ ոչ ցանկալի հետևողականությամբ: Նախ, դրական է, որ ի տարբերություն գործող ՔԴՕ-ի, որը նշում է, որ «4. Քրեական հետապնդում կարող է իրականացվել միայն հարուցված քրեական գործով» (հոդված 33, մաս 4-րդ), Նախագիծը սահմանում է (հոդված 16, մաս 1-ին), որ մասնավոր հետապնդման հոդվածներով «նախատեսված հանցանք կատարած անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն հանցագործությունից տուժած անձի բողոքի հիման վրա»:

⁴⁶ ՀՀ Գլխավոր դատախազի կողմից ԱԺ-ին ներկայացված «Հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության 2019թ. գործունեության մասին», 2020թ., էջ 62-63, տես՝ <http://www.prosecutor.am/myfiles/files/reports/haxordum-AJ-2019.pdf>

⁴⁷ See <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=118689>

⁴⁸ ԳԴ Հաղորդում, էջ 50:

⁴⁹ Նույն տեղում:

Գործող ՔԴՕ-ի նշված դրույթը, նույն ՔԴՕ-ի 183-րդ հոդվածի 1-ին մասի մեկ այլ դրույթի հետ համադրության մեջ վերցրած, ըստ որի «նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա», ապրիորի կանխում է գործով նախաքննության իրականացումը, որի արդյունքներով էլ միայն հնարավոր է իրականում տալ արարքի համարժեք որակումը, այսինքն՝ արարքը որպես մասնավոր մեղադրանքի հանցանք է որակվում արդեն իսկ մինչև քրեական գործի հարուցումը՝ այդ փուլում առկա քրեադատավարական ճանաչողական շատ քիչ հնարավորություններով: Նախագծով առաջարկվող այս փոփոխությունը, համադրվելով գործի հարուցման փուլից հրաժարվելու Նախագծով առաջարկվող նոր կարգավորման հետ և հատկապես՝ դատախազությանը 2015թ. փոփոխություններով Մահմանադրության 176-րդ հոդվածով վերապահված ամբողջ մինչդատական վարույթի, այսինքն՝ նաև մինչև քրեական գործի հարուցումը ընթացող վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթ, միանգամայն ողջունելի է գործերը՝ առանց արարքի մեխանիկական, ապրիորի որակման որպես մասնավոր մեղադրանքի գործեր դիտելը բացառելու տեսակետից:

Միաժամանակ, նույն Նախագծի 173-րդ հոդվածի 3-րդ մասում, ըստ էության, նույն ապրիորի, նախնական գնահատման հիման վրա վարույթ չնախաձեռնելու հնարավորությունը դեռևս պահպանվում է: Մասնավորապես, նշված նորմով սահմանվում է, որ՝

«3. Եթե հաղորդումով փաստվող գործողությանը կամ անգործությանը կարող է տրվել միայն ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, ապա քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ տվյալ հաղորդումը ներկայացրել է ենթադրյալ հանցանքից տուժած անձը կամ նրա ներկայացուցիչը, և միաժամանակ նրան հայտնի չէ ենթադրյալ հանցանքը կատարած անձը»:

Այս դրույթը գործանական առումով խնդրահարույց է այն տեսակետից, որ հանրային քրեական հետապնդում հարուցող մարմիններին, իսկ Նախագծով առաջարկվող մոդելում դա միայն դատախազն է (հոդված 6, կետ 41-րդ), թույլ չի տրվում նախաձեռնել վարույթ (կամ՝ գործող ՔԴՕ տերմիններով՝ հարուցել քրեական գործ ու պարզել վերաբերելի հանցանքի հանրային կամ մասնավոր կարգով հետապնդելի լինելը) զուտ նախնական իրավական գնահատականի հիման վրա, որի հիմքում էլ տուժողի կամ նրա ներկայացուցչի տրամադրված տեղեկատվությունն է: Մա, մեղմ ասած, չի նպաստում վարույթի այս փուլում դատախազական գործունեության օբյեկտիվությանը և արդյունավետությանը, քանի որ ըստ էության, հանցագործության մասին հաղորդում ներկայացնելիս, տուժողը հնարավոր է, որ չնշի կոնկրետ որևէ հանգամանք, որն իր համար կարևոր չէ, սակայն կարող է նշանակություն ունենալ դատախազի կողմից արարքի առնվազն նախնական իրավական գնահատական տալու, այսինքն՝ արարքը որակելու ու համապատասխան դրա՝ քննություն իրականացնելու համար: Փաստորեն, դատախազի սահմանադրական լիազորությունը կախվածության մեջ է դրվում տուժողի կողմից իրավաբանորեն նշանակալի բոլոր փաստերը համարժեք ներկայացնելու կարողություններին, ինչը, մեր կարծիքով, սխալ է:

Միաժամանակ, Նախագիծը (Հոդված 11. Քրեական հետապնդում իրականացնելու ձևերը) հղում է անում նոր Քրեական օրենսգրքի նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասին: Գործող ՔԴՕ 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մասնավոր քրեական հետապնդման հանցակազմերի ցանկի համեմատ՝ ՔՕ նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասը ադդ հանսակազմերի թիվն ննդլաննում է՝ 22-ից դրանք հասցնելով 37-ի:

Մասնավորապես, ՔՕ Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասում (Քրեական պատասխանատվությունը հանցագործությունից տուժած անձի բողոքի հիման վրա)

առաջարկվում է սահմանել, որ անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն տուժողի բողոքի հիման վրա՝ առողջությունը վտանգող տարբեր հանցագործությունների, կյանքի և առողջության սպառնալիքի, ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության և սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների դեմ ողողված հանցագործությունների դեպքում: Այս առումով, պետք է ասել, որ դեռևս 1998թ. Ընդունված ՀՀ ՔԴՕ-ի սկզբնական տեքստում (183-րդ հոդված) նախատեսված էր մասնավոր բողոքի ընդամենը 5 հանցակազմ (տես՝ ներքևում, առաջարկություններին վերաբերող կետում), ինչն ավելի արդարացված էր հանցագործության բուն սահմանումը հաշվի առնելով:

Այս առնչությամբ Նախագծի վերաբերյալ ԵԽ փորձագիտական կարծիքում նշվում է, որ՝

«Տուժողի բողոքի պատշաճությունը նշված իրավախախտումների իմաստով մշտապես պատասխանատվության նախապայման լինելու հանգամանքը պետք է վերանայվի», «չափահաս անձի կողմից բողոքը ետ վերցնելը կարող է հանդիսանալ ճնշման, վախի և հուզական շփոթմունքի արդյունք: Նման դեպքերում բողոքը ետ վերցնելն ընդունելու պատրաստակամությունը կարող է նպաստել համապատասխան քրեական օրենքի խախտումները հանդուրժելուն և չպետք է տեղի ունենա ինքնաբերաբար» (պարբերություն 31) և հետևաբար «անհրաժեշտ է իրավապահ մարմիններին հնարավորություն ընձեռել ուսումնասիրել չափահաս անձի կողմից բողոքը ետ վերցնելը, համոզվելու համար, որ բողոքը ետ տալու համաձայնությունը չի հակասում Եվրոպական կոնվենցիային»⁵⁰:

Խնդրահարույց է նաև ՔԴՕ Նախագծում (հոդված 11, մաս 4-րդ) կոնկրետ հանցագործությունների մասին նշելը («ընտանեկան բռնության գործերով»)՝ միաժամանակ այլ հանցագործություններով զուտ դատավարական լուծումներ տալով: Մասնավորապես, այդ նորմում սահմանվում է՝

«4. Անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազն իրավասու է քրեական հետապնդում իրականացնել հանրային կարգով՝

1) ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով.

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը»:

Մա չի նպաստում բոլոր գործերով դատավարական միասնական ռեժիմի կամ ձևի կիրառմանը, և մեր կարծիքով (տես նաև՝ այս կետի վերջում արվող առաջարկությունները) չի նպաստում հենց հիշատակցված «անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու» չափանիշների կիրառման միասնականությանը: **Տուժողի խոցելիության գնահատման հետ շատ սերտորեն կապված է «վտանգված վիճակի մեջ գտնվող վկայի» կարգավիճակ տալու հարցը: Մեր կարծիքով, երկու դեպքում էլ՝ թե մասնավոր մեղադրանքի գործով հանրային քրեական հետապնդում իրականացնելու մասին դատական որոշմանը, թե վտանգված վկայի նկատմամբ պաշտպանության միջոցներ կիրառելու⁵¹ մասին որոշմանը պետք է նախորդեն դատախազի եզրակացությունները, համապատասխանաբար՝ Տուժողի խոցելի վիճակում**

⁵⁰ Տես՝ ԵԽ Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության Գլխավոր տնօրինության Կարծիքը Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի վերաբերյալ պատրաստված Ջերեմի Մաքքրայդի և Լորենա Բախմայեր Ուիթնեյի մեկնաբանությունների հիման վրա, հունվար 2017, <http://rm.coe.int/doc/09000016806ef474>, այսուհետ նաև՝ «ԵԽ Կարծիք ՔԴՕ նախագծի վերաբերյալ»:

⁵¹ ՔԴՕ Նախագծի 74-րդ հոդվածի (Հատուկ պաշտպանության միջոցները) 2-րդ մասի համաձայն նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված թվով 9 հատուկ պաշտպանության միջոցներից յուրաքանչյուրը (պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը և այլն) «պետք է համաչափ լինի պաշտպանվող անձին սպառնացող վտանգի բնույթին և հնարավոր հետևանքներին: Անհրաժեշտության դեպքում նույն անձի նկատմամբ կարող են կիրառվել հատուկ պաշտպանության մեկից ավելի միջոցներ»:

գտնվելու և Տուժող վկայի վտանգված լինելու մասին: Մա մեծապես կնպաստի այդ կարգավիճակների փաստման հիման վրա դատախազի հետագա որոշումների, համապատասխանաբար՝ հանրային քրեական հետապնդում իրականացնելու մասին և պաշտպանության միջոցներ կիրառելու մասին որոշումների պատճառաբանվածությունը:

Այս որոշումներից թե առաջինի, և թե երկրորդի կայացման համար շատ կարևոր է լինելու նաև տուժողի խոցելիության/վտանգվածության չափանիշների օրենսդրական սահմանումը՝ ՔԴՕ-ում, ինչպես նաև՝ դատախազների համար **համապատասխան ուղեցույցներում այն չափորոշիչների սահմանումը, որոնցով գնահատվելու է այդ չափանիշներին համապատասխան տուժողի խոցելիության կամ վտանգված լինելու փաստի առկայությունը կամ բացակայությունը:**

Տուժողների խոցելիության չափանիշների առումով արդեն իսկ ՀՀ Դատախազության կողմից նշվել են ՀՀ գլխավոր դատախազի ԱԺ-ին ներկայացված իր վերջին՝ 2019թ. գործունեությանը վերաբերող հաղորդման մեջ, որտեղ ուշադրություն է դարձվում, ի թիվս այլի, հատկապես տուժող անչափահասների իրավունքներին ու ձևավորված դատական պրակտիկայում այս առումով առկա բացերին: Մասնավորապես, նշվում է, որ «Նախնական քննության փուլի խնդրահարույց հարցերից մեկը անչափահասների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ վարույթը հանրային կարգով իրականացնելու իրավակիրառ պրակտիկան է: Այս առումով դատախազության որդեգրած ու դատական պրակտիկայում ընդունելի մոտեցումները, ինչպես ցույց տվեց պրակտիկան, չհամընկան և 14 տարին չլրացած անձանց նկատմամբ կատարված՝ հատկապես ՃԵԿ խախտումների վերաբերյալ տասնյակ քրեական գործեր, դատարանների որոշմամբ կարճվել են այն հիմնավորմամբ, որ դրանցով տուժողի կամ նրա օրինական ներկայացուցչի բողոքը բացակայում է⁵²:

Հենվելով վերը հիշատակված ՄԴՈ-1333 որոշման մեջ տեղ գտած դիրքորոշումների և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրման վրա, ՀՀ ԳԴ-ն իրավացիորեն առաջարկել է պրակտիկայում ներդնել տուժողների խոցելիության հստակ չափանիշներ, որոնք ապագայում, մեր կարծիքով, պետք է դառնան նաև օրենսդրական չափանիշներ և դրանցից բխող՝ վերը նշված Ուղեցույցներում ամրագրված գնահատման չափորոշիչներ: Մասնավորապես, առաջարկվել է՝

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել տարիքային անօգնականության գաղափարը, դրա տարիքային սահմանները՝ նախատեսելով այդ դեպքերում անչափահասների նկատմամբ կատարված մասնավոր հետապնդման ենթակա հանցագործությունների դեպքերով անկախ նրանց կողմից բողոք ներկայացնելուց դատախազի կողմից վարույթը հանրային մեղադրանքի կարգով սկսելու և շարունակելու իրավասություն: Մասնավոր մեղադրանքից հանրային մեղադրանքի անցման հարցը լուծելիս որպես չափանիշ պետք է սահմանել «երեխայի լավագույն շահը»՝ սահմանելով դրա չափորոշիչները, որպես այդպիսիք դիտարկելով, ի թիվ այլնի՝

- երեխայի տարիքը,
- երեխայի կամքը, դրա բովանդակության և այն արտահայտելու եղանակի առանձնահատկությունները, գիտակցված լինելու աստիճանը, ծնողի կամ շրջապատի կողմից երեխայի կամքի վրա ազդելու հնարավորությունը,
- երեխայի օրինական ներկայացուցչի, ծնողի դիրքորոշումը,
- երեխայի նկատմամբ կատարված հանցանքի բնույթը, հանրային վտանգավորության աստիճանը, դրա հետևանքները՝ հանցագործությամբ պատճառված կոնկրետ վնասը, դրա չեզոքացման, այսինքն՝ վնասի ամբողջական վերականգնման հնարավորությունը, դրա համար անհրաժեշտ միջոցները,
- հանցագործությամբ պատճառված վնասի հնարավոր հետագա, երկրորդային կամ անմիջապես հետևանքների հնարավորությունը (օրինակ՝ առողջությանը պատճառված վնասի դեպքում՝ հետագայում հնարավոր բարդությունների առաջացման հնարավորությունը, անչափահասի կողմից այդ բարդությունների

⁵² ԳԴ Հաղորդում, էջ 62-63:

առաջացման հնարավորության գիտակցումը),

- հանցանք կատարած անձի վարքագիծը, վերջինիս կողմից պատճառված վնասի հատուցմանն ուղղված միջոցներ ձեռնարկելը,

- հանցանք կատարած անձի և անչափահաս տուժողի միջև գոյություն ունեցող կապը (ազգակցական, ընկերական), նրանց միջև հարաբերությունները հանցագործությունից առաջ և դրանից հետո,

- անկախ տուժողի կամքից հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հնարավոր ազդեցությունը նրանց հարաբերությունների վրա և այլն:

Համակցության մեջ գնահատման ենթակա նշված հանգամանքները ճշգրիտ պարզելու լրջագույն երաշխիք կարող է լինել նաև անչափահասի հարցաքննությունը, հոգեբանի մասնակցությամբ կատարելու պարտադիր պահանջ սահմանելը»⁵³:

Կատարված հանցագործությունների բնույթը գնահատելիս կարևոր է հաշվի առնել նաև **դրանց շարունակական և կրկնվող բնույթը**, մասնավորապես՝ 1) քրեական հետապնդման ժամկետները հաշվել խոցելի խմբի տուժողի նկատմամբ կատարված վերջին ոսնձգության ակտից, այսինքն՝ նրա հանդեպ կատարվածը դիտարկելով որպես մեկ հանցագործություն, և դրանից բխող՝ 2) ոչ արդարացնող հիմքերով նախկին ոսնձգությունների դեպքերի վերաբերյալ մասնավոր մեղադրանքի (այն է՝ տուժողի բողոքով հարուցվող գործերի) կարճումը դիտարկել հանցավորի վերջին կատարած արարքի կապակցությամբ հանրային մեղադրանք հարուցելու հարցը լուծելիս: Այս մոտեցումները «կարմիր թելով» անցնում են վերը հիշատակված *Օփուզի գործով*, իսկ վերջին կետին առնչվող խնդիրները վաղուց են առկա պրակտիկայում և նշվել են նաև ԳԴ Հաղորդման մեջ՝

«Օբյեկտիվ անհրաժեշտությունն առաջրել է քրեադատավարական օրենքում առկա, ըստ էության, այն բացը, որով անձը, նախկինում կատարած դիտավորյալ արարքների համար քրեական հետապնդման չենթարկվելով կամ քրեական պատժի չարժանանալով, պարբերաբար կարող է կատարել մասնավոր հետապնդման բնույթի դիտավորյալ արարքներ և ամեն անգամ ազատվել քրեական պատասխանատվությունից՝ դիմողի կողմից բողոք չունենալու կամ կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի հետ հաշտվելու հիմքով»⁵⁴:

Վերջում, պետք է նշել, որ եթե տուժողի խոցելիության կամ վտանգված վիճակի վկա տուժողի (endangered witness) առթիվ կայացվող որոշումներն առանձնացվում են դրանց հիման վրա կայացվող որոշումներից (համապատասխանաբար՝ մասնավոր մեղադրանքի գործով հանրային քրեական հետապնդում իրականացնելու մասին և տուժողին պաշտպանության միջոցները տրամադրելու կամ Վկաների պաշտպանության ծրագրում ներառելու մասին), ապա անխուսափելիորեն, այդ խոցելիության ու վտանգվածության առթիվ որոշումներին պետք է նախորդի գնահատման դատավարական առանձին ընթացակարգ: Մասնավորապես, ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի «Վկաների պաշտպանությունը արդարադատության համակարգում» Զեկույցի 49-րդ Երաշխավորությունը («49. Կանոնավոր գնահատումներ իրականացնել [Վկաների պաշտպանության ծրագրին. - ԴԽ] մասնակցող անձի վտանգվածության վերաբերյալ») նշում է՝

«Պետք է առկա լինի գնահատման ընթացակարգ այն վտանգի, որը սպառնում է վկային, ինչպես նաև՝ վկայի հոգեբանական և սոցիալական գնահատման պարզելու համար վկայի՝ Օրագրին մասնակցելու ունակությունը: Այս գնահատումները կարող է անհրաժեշտ լինել անցկացնել շարունակական կամ պարբերական հիմունքներով: Սա պետք է Օրագրում կոռուպցիայից խուսափելու համար, այն թույլ է տալիս վերհանել վկայի համար առկա նոր վտանգներն ու սպառնալիքները, ինչպես նաև՝ այն հնարավոր խնդիրները, որ վկայի կողմից ստեղծվում են տրավմայի կամ Օրագրին հարմարվելու դժվարությունների պատճառով»⁵⁵:

⁵³ ԳԴ Հաղորդում 63-64:

⁵⁴ ԳԴ Հաղորդում, էջ 174-175:

⁵⁵ LEGAL ADVISORY SECTION FINAL REPORT INFORMAL EXPERT WORKING GROUP ON WITNESS PROTECTION IN THE JUSTICE SYSTEM, United Nations Office on Drugs and Crime, Vienna, 22-24 September 2005, էջ 29

Սկզբունքորեն, նույն ընթացակարգը պետք է լինի նաև խոցելիության հիմքով կայացվող որոշումների համար: Տուժողների խոցելիության ու վկաների վտանգվածության հարցերի առթիվ այս մտտեցման սկզբունքայնությունը դրսևորվում է ոչ միայն երկու դեպքում էլ դատախազի կողմից եզրակացություն-որոշում/գործողություն ընթացակարգերն առանձնացնելով, եզրակացությունից բխող կոնկրետ որոշման/գործողության համար առանձին պատճառաբանություն տրամադրելու անհրաժեշտությամբ, այլ նաև հենց այն փաստով, որ տուժողի իրավական կարգավիճակը՝ **իր շահերի վերջնական ապահովումը, երաշխավորող, այն է՝ դատական ընթացակարգերում իրականում բացասվում է նրա մեղադրանքի կողմի վկայի կարգավիճակով:**

Դատախազական վերը նշված լեգիտիմությամբ պայմանավորված վկաների, հատկապես՝ խոցելի վկաների հետ աշխատանքի մշտական բնոյթը պահանջում է միաժամանակ և մասնագիտացում, և որոշակի կարգավիճակ: Կարծում ենք, այս առումով, ուսանելի է, մասնավորապես ԱՄՆ-ի օրինակով Վրաստանի Հանրապետությունում ձևավորված փորձը, որտեղ, մասնավորապես Դատախազության ներսում 2015թ. ստեղծված Քրեական վարույթների ընթացքում կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության վարչության կազմում գործում են 10 քննիչ, 4 դատախազ և 4 տուժողների ու վկաների համակարգողներ⁵⁶: Պարտադիր չէ ու ցանկալի էլ չէ, որ վերջիններս նույնպես ունենան դատախազի կարգավիճակ, սակայն դատախազության աշխատակցի աշխատակցի կարգավիճակը կարևոր է խոցելի անձանց պաշտպանության հարցերի համակարգման համար: Շատ ուսանելի է նաև ԱՄՆ Նյու Յորք քաղաքի օրինակը, որտեղ Ընտանեկան բռնության գոհերի աջակցման կենտրոնը տեղակայված է հենց դատախազության շենքում⁵⁷:

Հետևություններ և որոշ առաջարկներ

Այսպիսով, օրենսդրական հետագա զարգացումները տրամաբանորեն պետք է գնան հետևյալ ուղղությամբ՝

1. Ապագայում մասնավոր քրեական հետապնդման ինստիտուտի վերացում՝ ելնելով հանցագործության՝ որպես հանրության համար վտանգավոր արարք լինելու բուն սահմանումից և այն փաստից, որ «եթե ոսնձգությունը միայն մասնավոր բնույթի է, այն հանցագործություն չէ»:

2. Մասնավոր քրեական հետապնդման ինստիտուտը պահպանելու դեպքում, պետք է՝

- նվազագույնի հասցնել մասնավոր քրեական հետապնդման հանցակազմերը՝ վերադառնալով 1998թ. ՔԴՕ մոդելին և դուրս բերելով դիտավորությամբ կատարվող հանցագործությունները՝ անգամ եթե արարքը կատարվում է հետևանքների նկատմամբ մեղքի անզգուշության, առավել ևս՝ անուղղակի դիտավորության ձևով, և հաշվի առնել նաև հետևանքների ծանրությունը, մասնավորապես՝ անդառնալիությունը: Այս տեսակետից, որպես դրական օրինակ, բերենք 109-րդ հոդվածի 1-ին մասը (անզգուշությամբ մեկ անձին մահ պատճառելը) և 110-րդ հոդվածը (Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը) գործող ՔԴՕ սկզբնական տեքստից ժամանակի

⁵⁶ International Center for Transitional Justice, *Assessing the Prospects for Transitional Justice in Georgia*, Howard Varney, February 2017 էջ 13, տես՝ 103 Government of Georgia, “Department to Investigate Offenses Committed in the Course of Legal Proceedings Is Being Created in the Office of the Chief Prosecutor of Georgia,” January 30, 2015, http://pog.gov.ge/eng/news?info_id=627.

⁵⁷

ընթացքում դուրս բերելը: Մյուս կարևոր քայլը կլինի սեփականության դեմ ուղղված հանցագործությունները բացառապես որպես հանրային քրեական հետապնդման հանցակազմեր նախատեսելը: Մրանով, իրոք, ՔՕ միջոցով կապահովվի ՔԴՕ Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված այն սկզբունքային մտեցումը, որի համաձայն՝ «Քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կամ մասնավոր կարգով՝ հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից ելնելով»:

- հրաժարվել կոնկրետ հանցագործությունները որպես դատախազի կողմից մասնավոր քրեական հետապնդման հանցագործություններով քրեական հետապնդում իրականացնելու հիմք նախատեսելուց (ՔԴՕ հոդված 11, մաս 2-րդ՝ հղումով դեպի ՔՕ 16-րդ հոդված, մաս 1-ին, որտեղ որպես առանձին հիմք նշված են «ընտանեկան բռնության գործերը»), այլ՝ որպես հիմք ընդունել դատավարական կատեգորիաները՝ տուժողի խոցելիության առթիվ հիմնավոր կասկածը: Այս առաջարկի հիմքում ընկած է այն գաղափարը, որ կոնկրետ հանցակազմեր նախատեսելու դեպքում, խոցելի վիճակում գտնվող տուժողի իրավունքների պաշտպանությունը կախվածության մեջ է դրվում արարքի որակումից, ինչը ինքնին օբյեկտիվ չափորոշիչ չէ, ավելին՝ վերանայելի է հետագա փուլերում: Օրինակ, հնարավոր է, որ արարքը սխալմամբ որակված լինի որպես ընտանեկան բռնություն (որն ի դեպ, որպես հանցակազմ նախատեսված չէ և կարող է կամայականությունների առիթ տալ այս չափանիշը դատավարական հարաբերություններում օգտագործելիս), սակայն լինի խոցելի տուժողի նկատմամբ կիրառված ուժեղ ցավ պատճառող ֆիզիկական կամ սիստեմատիկ հոգեբանական բռնություն, որը զուտ «ընտանեկան» եզրույթի սահմանման պատճառով (օրինակ՝ համատեղ տնտեսություն վարելու փաստի ոչ միանշանակ լինելը), կարող է չհամարվել ընտանեկան բռնություն ու այդպիսով՝ դուրս մնալ տուժողի կողմից բողոքը հետ վերցնելու կամիվին լինելը պարզելու նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներից: Մյուս կարևոր փաստարկը կոնկրետ հանցակազմեր նշելու դեմ, դա այն է, որ չի ապահովվում միասնականությունը տուժողի խոցելիության փաստը գնահատելու առումով՝ կարծես, թե ընտանիքում և դրսում տուժողի խոցելի վիճակի գնահատման տարբեր չափանիշներ են կիրառվում, ինչը կհակասի նաև ՄԻԵԴ նախադեպային մոտեցումներին, մասնավորապես՝ ՄԻԵԿ 3-րդ հոդվածի հետ կապված, որի մեկնաբանություններում, մասնավորապես՝ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը այդպիսին է անկախ դրա դրսևորումն հանդիսացող արարքի ներպետական քրեաիրավական որակումից և առաջացնում է պետության ունեցած՝ ՄԻԵԴ կողմից *Օփուզի գործով* նշված միևնույն պոզիտիվ պարտականությունները, այդ թվում՝ դատախազության համար:

- սահմանափակել պետության կողմից կայացվող այլ դատավարական որոշումների վրա տուժողի ազդելու հնարավորությունը, ինչը պայմանականորեն արտահայտվում է «*տուժողի վետո*» հասկացությամբ: Այս առաջարկի հիմքում ընկած է այն գաղափարը, որ տուժողին վետոի իրավունքով օժտելը, բացի այն, որ հակասում է հանցագործության հասկացությանը, քրեական վարույթի հանրային բնույթին ու տուժողի կողմից պետությունը որպես մասնավոր վրեժխնդրության գործիք ծառայեցնելու անթույլատրելիության վերը հիշատակված իրավափիլիսոփայական սկզբունքներին, զոհականացնում է հենց տուժողին, նրան տանում դեպի կրկնակի վիկտիմացում: Այսպես, տուժողը, որը ենթարկվել է բռնության, դիմում է պետական մարմիններին՝ իրենց պաշտպանելու համար, նախևառաջ՝ բռնարարին պատժելու միջոցով: Սակայն տուժողի կողմից հետագա քննության վրա վետո դնելու իրավունքը հենց թիրախավորում է տուժողին, նրան դարձնում հետագա հեռանկարային սպառնալիքների զոհ, քանի որ

տուժողից կախված է չափազանց շատ բան: Այնուհետև վիճակն էլ ավելի է բարդանում, երբ պետական մարմինները չեն ցուցաբերում պատշաճ ջանասիրություն, ըստ էության չեն արձագանքում այն ռիսկին, որին գնում է տուժողը. չէ՞ որ բողոք ներկայացնելով, նա ավելի մեծ թշնամանք է առաջացնում իր նկատմամբ: **Այսպիսով խոցելի վիճակում գտնվող անձին իրավագործը ավելի է թիրախավորում զոհին: Օրենքում պետք է որպես սկզբունք սահմանվի, որ խոցելի վիճակում գտնվող անձանց կամահայտնությունը առոչինչ է: Այս առումով, պետք է Միասնական Ուղեցույց մշակվի դատախազների, քննիչների ու դատավորների համար՝ անձի խոցելի վիճակը գնահատելու չափորոշիչներ տրամադրելով:** Այսինքն՝ տուժողի իրավունքների սահմանափակումը դառնում է նրան պաշտպանելու դատավարական միջոց: Որպես խոցելի տուժողի իրավունքների սահմանափակման այս առումով ուսանելի օրինակներ է պարունակում Վրաստանի օրենսդրությունը, որը նախատեսում է (ՎՀ ՔԴՕ, հոդված 193, մաս 4-րդ), որ ցանկացած պահի դատախազը կարող է դադարեցնել մասնավոր քրեական հետապնդումը և շարունակել այն որպես հանրային քրեական հետապնդում:

- Օրենսդրորեն սահմանել այն չափանիշները, որոնց բերումով անձը կարող է համարվել խոցելի վիճակում գտնվող՝ ֆինանսական կախվածություն, տարիքային տարբերություն մեղադրյալի հետ համեմատ, 18 տարին լրացած չլինելը, խնամքին երեխաներ ունենալը, վերաբերելի դեպքերում տուժողի մերձավոր ազգականների մոտ նշված հատկանիշների առկայություն: Հենց այս չափանիշներն են լինելու նախորդ կետում առաջարկվող ուղեցույցի հիմնական առարկան՝ տուժողի խոցելիությունը օբյեկտիվորեն փաստելու համար:

- ՔԴՕ-Նախագծից հանել 173-րդ հոդվածի 3-րդ մասի այն դրույթը, որի համաձայն՝ եթե հաղորդումով փաստվող գործողությանը կամ անգործությանը կարող է տրվել միայն մասնավոր քրեական հետապնդման ենթակա արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, ապա դատախազի՝ քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ տվյալ հաղորդումը ներկայացրել է ենթադրյալ հանցանքից տուժած անձը կամ նրա ներկայացուցիչը, և միաժամանակ նրան հայտնի չէ ենթադրյալ հանցանքը կատարած անձը: **Այս դրույթի վերացումը հնարավորություն կտա դատախազին նախաձեռնել վարույթ՝ տուժողի հաղորդմամբ ներկայացված փաստերում՝ հանրային քրեական հետապնդման արարքի հատկանիշների առկայությունը սեփական դատավարական միջոցներով ստուգելու համար:**

Առանձին անձանց անձեռնմխելիությունները՝ որպես դատախազի կողմից քրեական հետապնդմանը խոչընդոտող հանգամանք

Քանի որ **առանձին կատեգորիաների անձանց դեմ քրեական հետապնդումը** հարուցվում է որոշակի առանձնահատկություններով, ապա այստեղ հարկ է կանգ առնել այս ոլորտում առկա խոչընդոտների վրա ևս: Այդ առանձնահատկություններն արտահայտվում են հատուկ սուբյեկտի ձևով, այսինքն քրեական հետապնդումը

1. հարուցվում են միայն ԳԴ կողմից, և/կամ

2. հարուցմանը նախորդում է այլ՝ քրեադատավարական հարաբերությունների սուբյեկտ չհանդիսացող մարմիններին (ԱԾ, ԲԴԽ, ԿԸՀ և այլն) դիմելը՝ **առանձին կատեգորիաների անձանց անձեռնմխելիության պատճառով:**

Քանի որ անձեռնմխելիությունների հետ կապված այս Հետազոտության մեջ չենք կարող շատ մանրամասն վերլուծություններ նշել, անդրադառնանք միայն հարցի իրավափիլիսոփայական հիմունքներին և միջազգային չափորոշիչներին: Անձեռնմխելիությունների առկայությունը հակասում է իրավունքի այն փիլիսոփայությանը, որը դրված է եվրոպական քրեադատավարական ժամանակակից իրավունքի հիմքում: «Քաղաքացիական հասարակության անդամը ունի իրավունք՝ դատարան փնտրելու և պարտականություն՝ կանգնելու դատարանի առջև և միայն դատարանի միջոցով ստանալու իր կողմից վիճարկվող իրավունքը»:⁵⁸ Տվյալ հարցում որոշակի բացերի առկայությունն ընդունվում է նաև Եվրախորհրդի կողմից, որը նշում է.

«Հաշվի առնելով, որ քրեական արդարադատության համակարգի նպատակները ավանդաբար ձևակերպվել են այն նորմերի տեսանկյունից, որոնք առաջին հերթին վերաբերում են պետության և իրավախախտի միջև հարաբերություններին.

Հաշվի առնելով, որ դրա հետևանքով նման համակարգի գործող մեխանիզմը կարող է վատթարացնել և ոչ թե թեթևացնել տուժողի խնդիրները.

... անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել տուժողի պահանջունքներին՝ քրեական դատավարության բոլոր փուլերում»⁵⁹:

Չնայած, որ սրանք շատ կարևոր նորմեր են՝ քրեական դատավարության կողմերի իրավահավասարության ապահովման տեսանկյունից, այնուամենայնիվ, դրանց իրականացումը չի կարող հիմնովին լուծում տալ հարցին: Իրավունքն ընդհանրապես, հետևաբար՝ և քրեական դատավարությունը մասնավորապես, հանդիսանում են մարդկանց ազատության (իրավասուբյեկտության) համընդհանուր և անհրաժեշտ ձևը⁶⁰: Հենց սրա շնորհիվ է, որ դատավարական ձևը կրում է միասնական բնույթ, որի բացակայության դեպքում այն կզրկվեր իր նշանակությունից՝ և սոցիալական արժեքից, որոնք «կայանում են նրանում, որ այն ապահովում է օրինականության ռեժիմը դատավարությունում, պայմաններ է ստեղծում գործով հավաստի եզրահանգումների համար, պարունակում է գործին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիքներ ...»⁶¹:

Այսինքն, տուժողի իրավունքները պետք է պաշտպանվեն հենց սկզբից՝ նրան ճանաչելով որպես արդար դատաքննության իրավունքի սուբյեկտ, իսկ դատարանն էլ՝ որպես նրա այդ իրավունքի՝ օրենքի հիման վրա ստեղծված, լիազորված, մատչելի և անկախ հասցեատեր: Բոլորովին էլ բավարար չէ, այսպիսով, որպեսզի սահմանվեն տուժողի իրավունքների, պաշտպանության քրեադատավարական թեկուզ և մեղադրյալի հետ հավասար երաշխիքներ: Մեթոդոլոգիական և պրակտիկ առումով այդ լիակատար հավասարությանը անհնար է հասնել, եթե դրանք կոչված է ապահովելու մի մարմին, որն իր կեցության իրավունքը վերցնում է միայն մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքը ապահովելու անհրաժեշտությունից: Պետք է ընդունել, այսպիսով, որ տուժողի արդար դատաքննության իրավունքը նույնքան բնական է, որքան և մեղադրյալինը:

Վերջապես, անձեռնմխելիություններից հրաժարվելու մասին ՀՀ-ին երաշխավորություններ են ԵԽ ՆԿ-ն և Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գործող միջազգային մարմինները: Մասնավորապես, ԵԽ ՆԿ (2000)19 Հանձնարարականը նախատեսում է (կետ 16), որ՝

⁵⁸ Гегель, Философия права, М. 1990, с. 258

⁵⁹ “Резолюции и рекомендации Комитета министров Совета Европы об облегчении доступа к эффективному и справедливому правосудию”, Доступ к правосудию, русская версия, Страсбург, 1997, с. 19

⁶⁰ В.С.Нерсесянц, Философия права, М. 1997, с. 34

⁶¹ Уголовный процесс, под общ. ред. П.А.Лупинской, М. 1995, с. 36

«Դատախազները պետք է, յուրաքանչյուր գործով, ի վիճակի լինեն անխոչընդոտ («without obstruction») քրեական հետապնդում իրականացնել հանրային պաշտոնյաների նկատմամբ՝ նրանց կատարած հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիայի, լիազորությունների ոչ իրավաչափ կիրառման, մարդու իրավունքների խախտումների և միջազգային իրավունքով արգելված այլ հանցագործությունների համար»:

Մեջբերված կետի առթիվ նույն Հանձնարարարանի Բացատրական հուշագրում նշվում է, որ՝

«Չնայած այս երաշխավորությունը կիրառելի է բոլոր դեպքերում, այն հատկապես վերաբերում է այն համակարգերին, որոնցում դատախազը ենթակա է կառավարությանը՝ մի իրավիճակ, որը նրան չպետք է զերծ պահի հանրային պաշտոնյաներին, կամ՝ ավելի լայն՝ ընտրովի ներկայացուցիչներին կամ քաղաքական գործիչներին քրեորեն հետապնդելուց, ովքեր կատարում են հանցավոր արարքներ, մասնավորապես՝ կոռուպցիոն դրսևորումներով հանցագործություններ: **«Մոչընդոտի» տակ ի նկատի է ունեցվում ցանկացած արգելք, որը դրված է քրեական հետապնդման ճանապարհին»** (ընդգծումը մերն է. – Դ.Խ.):

Բացի այդ, Հանուն տնտեսական համագործակցության և զարգացման Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների Հակակոռուպցիոն ցանցի Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ Հակակոռուպցիոն գործողությունների Ստամբուլյան Ծրագրի մշտադիտարկման 3-րդ շրջանի զեկույցը (ընդ. ՀԿՑ կողմից Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) 2014թ. հոկտեմբերի 8-10-ը Փարիզում անցկացված նիստում) ընդունել է նոր՝ 6-րդ Երաշխավորությունը, որով պետություններին ուղղակի կոչ է արել՝

«Ապահովել, որպեսզի անձեռնմխելիության ընթացակարգերը չխոչընդոտեն կոռուպցիոն հանցագործությունների հաջող քննությունն ու դրանցով քրեական հետապնդման իրականացումը»: Մինչ այս նոր՝ 6-րդ երաշխավորությունն անելը, Զեկույցը նախկին 2.6.2՝ նույնաբովանդակ երաշխավորության առնչությամբ նշել էր, «Հայաստանը այդ երաշխավորությունը չի կատարել»⁶²:

Նույն կառույցի առավել թարմ՝ 4-րդ շրջանի վերաբերյալ Մշտադիտարկման զեկույցը նույն խնդրի առթիվ նշել է, սակայն, որ 2015թ. Փոփոխություններով Սահմանադրությամբ անձեռնմխելիության շրջանակները կրճատվել են, և ապա, ի թիվս այլի, այն փաստի հիման վրա, որ «2014-2017թթ. Ընթացքում ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում քրրված գործերով 5 դատավոր զրկվել են անձեռնմխելիությունից և անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությունների մերժման որևէ դեպք չի եղել», եզրակացրել, որ Հայաստանը Երաշխավորության այդ մասը կատարել է⁶³:

Գտնում ենք, սակայն, որ երաշխավորությունը կատարված չէ, քանի որ «խոչընդոտ» եզրույթի ունիվերսալ ձևակերպման և ԵԽ ՆԿ մեկնաբանության ներքո (**«Մոչընդոտի» տակ ի նկատի է ունեցվում ցանկացած արգելք, որը դրված է քրեական հետապնդման ճանապարհին»**) նկատի են ունեցվում ոչ միայն իրավակիրառ, այլ նաև օրենսդրական բնույթի խոչընդոտները:

Այսինքն, պետք է փոփոխություններ մտցնել ՀՀ Սահմանադրության և որոշակի խմբերի անձանց համար անձեռնմխելիություն նախատեսող դրույթներում և հրաժարվել բոլոր անձանց, այդ թվում՝ ԱԺ պատգամավորների ու դատավորների կարգավիճակային անձեռնմխելիությունից: Եթե անձեռնմխելիությունը հանդիսանում է որևէ պաշտոնյայի կարգավիճակից բխող՝ նրա անկախությունը երաշխավորող գործիք, ապա այն կարող է երաշխավորել անձի անձեռնմխելիությունը միայն այն վարքագծային դրսևորումների կամ ակտիվության համար, որոնցում այդ կարգավիճակն արտահայտվում է: ԱԺ

⁶² Նույն տեղում:

⁶³ ANTI-CORRUPTION NETWORK FOR EASTERN EUROPE AND CENTRAL ASIA, Anti-Corruption Reforms in ARMENIA, Fourth Round of Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, adopted at the ACN meeting on 4 July 2018 at the OECD in Paris, էջ 129, տես՝ <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf>

պատգամավորների դեպքում դա կարող է լինել ԱԺ-ում հնչած ելույթը և դրա բովանդակությունը, դատավորների դեպքում՝ որոշումը կայացնելիս արված օրենքի մեկնաբանությունները և այլն:

2.1.1.2. Դատախազի՝ քրեական հետապնդում չհարուցելու կամ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու հայեցողությունը. ՀՀ ՔԴՕ 37-րդ հոդված

Հայեցողական քրեական հետապնդումը կարևոր գործիք է քրեական արդարադատության «անիվները պտտող» դատախազության⁶⁴ համար: Այն կապված է նաև համաձայնեցման ու համագործակցության՝ ՔԴՕ Նախագծով առաջարկվող վարույթների հետ հետևյալ հատկանիշներով՝

- անհրաժեշտ է անձի կողմից իր մեղքի ընդունումը, որը ՀՀ ՔԴՕ 37-րդ հոդվածի դեպքում դրսևորվում է արդեն իսկ հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելով (37-րդ հոդվածի 3-րդ մաս), իսկ համաձայնեցման ու համագործակցության վարույթների դեպքում, համապատասխանաբար՝ մեղքի մասին հայտարարություն անելով (համաձայնեցման վարույթում, տես՝ Նախագիծ, Գլուխ 55) և ի լրումն դրա՝ այլ անձին մերկացնելու գործում աջակցելով (համագործակցության դեպքում տես՝ Նախագիծ, Գլուխ 56).
- ՔԴՕ 37-րդ հոդվածը կիրառելի է միայն ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցանք անձի նկատմամբ (ՀՀ քրեական օրենսգիրք, այսուհետ՝ ՀՀ ՔՕ, 72-74 հոդվածներ), իսկ համաձայնեցման վարույթը դարձյալ առաջարկվում է կիրառել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության մեջ մեղադրվող մեղադրյալի միջնորդության հիման վրա (Նախագիծ, հոդված 458), սակայն համագործակցության վարույթը կարող է կիրառվել՝ նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության օժանդակության համար մեղադրվող անձի նկատմամբ (Նախագիծ, հոդված 458):

Նշված ընդհանրությունների հետ մեկտեղ, սակայն, գոյություն ունի երկու շատ կարևոր տարբերություն՝

- ՔԴՕ 37-րդ հոդվածի կիրառման դեպքում դատախազը որոշումը կայացնող մարմին է, թեկուզ՝ այդ որոշումը ենթակա է բողոքարկման, մինչդեռ նշված երկու վարույթներում նա միայն կողմերից մեկն է, քանի որ հարցը լուծվում է դատարանի կողմից դատալսումների ընթացքում, ինչը նշանակում է, որ **շատ ավելի մեծ երաշխիքներ են պետք 37-րդ հոդվածը կիրառող դատախազի կամայական որոշման դեմ, քանի որ այդ որոշմամբ հաստատված համարվող հանգամանքները չեն ստուգվում դատալսումներով:**
- Տուժողի դիրքորոշումը նշանակություն ունի 37-րդ հոդվածի կիրառման դեպքում միայն դրա կիրառման՝ գործող ՔՕ-ով նախատեսված հիմքերից մեկի՝ հանցանք կատարած անձի հետ տուժողի հաշտվելու և միաժամանակ նրան պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու դեպքում (հոդված 73): Մինչդեռ 72-րդ հոդվածի կիրառման ժամանակ (գործուն գոջալը՝ եթե հանցանք կատարած անձը «հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը») վնասի հատուցումը կամ այլ կերպ հարթումը՝ անկախ տուժողի դիրքորոշումից արդեն իսկ իրավունք է տալիս

⁶⁴ ...

դատախազին չհարուցելու հետապնդում կամ դադարեցնելու հարուցված հետապնդումը, **ինչը դարձյալ կամայականությունից երաշխիքներ է պահանջում նույն տուժողի համար, իսկ ՔՕ 74 հոդվածի կիրառման դեպքում** (իրադրության փոփոխումը՝ եթե պարզվում է, որ հանցանք կատարած անձը իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց») ընդհանրապես չկան կամայականությունից թե տուժողին, և թե հանրությանը պաշտպանելու բավարար երաշխիքներ:

Վերջին հիմքը և ձևակերպումը հակասում են նաև իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ ոչ համընդհանուր տուժող հանրությունը և ոչ էլ հանցագործության անմիջական տուժողը չեն հասկանում օրենքից, թե որ դեպքերում է, որ անձը կամ իր կատարած արարքը դատախազի կողմից կհամարվի նույն հանրության համար իրենց վտանգավորությունը կորցրած, և, հետևաբար, իրադրությունն էլ՝ փոփոխված: **Անհրաժեշտ է այդ չափորոշիչները նախատեսել հենց ՔԴՕ-ում՝ որպես վարույթը կարգավորող իրավունքի աղբյուր, քանի որ հայեցողական քրեական հետապնդման հիմքերի կիրառելիության պայմաններն ու հիմքերը, այսինքն՝ այդ հիմքերի կիրառման օրինականության պայմանները, ըստ էության՝ դատավարական ձևը, պետք է սպառնա նշվեն ՔԴՕ-ով:**

ԵՄ «Նախարարների կոմիտեի Քրեական արդարադատության պարզեցման մասին անդամ պետություններին ուղղված R(87)18 Հանձնարարականը»⁶⁵ սահմանելով, որ «հայեցողական հետապնդման սկզբունքը պետք է ներդրվի կամ դրա կիրառումն՝ ավելի ընդլայնվի՝ բոլոր դեպքերում, երբ անդամ պետությունների պատմական զարգացումն ու սահմանադրությունը դա թույլ են տալիս: Հակառակ դեպքում, այն պետք է նախատեսվի» (կետ 1), միաժամանակ որոշակի պայմաններ է նախատեսում, որոնք կարող են երաշխիք հանդիսանալ իրավական որոշակիության և կամայականությունների կանխարգելման սկզբունքների իրացման համար, մասնավորապես՝

- «հետապնդումից հրաժարվելու մասին որոշումը, այս [հայեցողական քրեական հետապնդման. – ԴԽ.] սկզբունքի ներքո կայացվում է միայն այն դեպքում, երբ հետապնդող մարմինը ունի մեղավորության համարժեք ապացույցներ» (կետ 3).

- «այս սկզբունքը պետք է կիրառվի որոշակի ընդհանուր հիմքի վրա, ինչպես, օրինակ՝ հանրային շահը» (կետ 4).

- «իրավասու մարմինը, իր լիազորություններն իրացնելիս, ներպետական օրենսդրությանը համահունչ կերպով, պետք է առաջնորդվի, մասնավորապես, բոլոր քաղաքացիների օրենքի առջև հավասարության և քրեական արդարադատության անհատականացման սկզբունքով, հատկապես հետևյալով՝

հանցանքի ծանրությունը, բնույթը, հանգամանքներն ու հետևանքները.

- ենթադրյալ հանցավորի անձը.

- դատարանի կողմից հավանաբար նշանակվելիք պատիժը.⁶⁶

- ենթադրյալ հանցավորի համար դատապարտվելու դեպքում առաջացող հետևանքները.

- տուժողի դիրքորոշումը» (կետ 5):

Բացի այդ, «տուժողը պետք է իրավունք ստանա դիմելու հանցագործությամբ իրեն

⁶⁵ COUNCIL OF EUROPE COMMITTEE OF MINISTERS RECOMMENDATION No. R (87) 18 OF THE COMMITTEE OF MINISTERS TO MEMBER STATES CONCERNING THE SIMPLIFICATION OF CRIMINAL JUSTICE (Adopted by the Committee of Ministers on 17 September 1987 at the 410th meeting of the Ministers' Deputies)

⁶⁶ Այս դրույթը անչափ կարևոր է հայեցողական քրեական հետապնդման առթիվ որոշումների արդարացիության ապահովման համար և ցույց է տալիս նաև պատժի նշանակման ուղեցույցներ ընդունելու անհրաժեշտությունը (ԱՄՆ-ի օրինակով “Sentencing Guidelines”)՝ ոչ միայն պատժողական դատական պրակտիկայի, այլ նաև՝ փաստորեն, դատախազական պրակտիկայի կանխատեսելիությունն ապահովելու նպատակով:

պատճառված վնասը քաղաքացիական կամ քրեական դատարանում վերականգնելու համար» (կետ 11):

Հայեցողական քրեական հետապնդման շրջանակներում որոշումներ կայացնելու դատախազական հայեցողության սահմանափակումների հետ կապված որոշ երաշխիքներ են առաջարկվում նաև ԵԴԽԿ կողմից **2008թ. հոկտեմբերի 16-ին ընդունված «Քրեական հետապնդման այլընտրանքների մասին» Հ-2 Կարծիքում**⁶⁷, չնայած որ Հայաստանում առայժմ բացակայում են դատախազի կողմից հետապնդում չհարուցելու կամ հարուցված հետապնդումը դադարեցնելու դեպքում, նույն դատախազի որոշմամբ կիրառվող այլ՝ քրեական հետապնդմանը այլընտրանքային միջոցները, օրինակ՝ թմրամիջոցներից կախվածությունից բուժման ուղարկելը⁶⁸ և այլն, որի համար, մեր կարծիքով, բացակայում է ինստիտուցիոնալ անհրաժեշտությունը: Բացի տուժողի իրավունքների, օրենքի առաջ բողորի հավասարության, և մի շարք այլ, արդեն նշված երաշխիքներից, ԵԴԽԿ Կարծիք Հ-2-ում նշվում են՝

- իրավակիրառների համար ուղեցույցների առկայության պահանջը (կետ 45, (e) ենթակետ), և
- դատախազական որոշումների պատճառաբանվածության պահանջը (կետ 45, (f) ենթակետ):

Պատճառաբանվածության պահանջը հստակ ամրագրված է նաև ԵԴԽԿ 2016թ. «Դատախազների աշխատանքի, այդ թվում՝ ահաբեկչության և ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարում որակի և արդյունավետության մասին» Հ-11 Կարծիքում (այսուհետ՝ նաև «ԵԴԽԿ Կարծիք Հ-11», կետ 52)⁶⁹

«Հստակ պատճառաբանությունը և վերլուծությունը դատախազների աշխատանքի հիմնարար պահանջներն են: Նրանք պետք է ամբողջությամբ հաշվի առնեն բոլոր վերաբերելի ապացույցները և ուսումնասիրեն քննությամբ ի հայտ բերված և կողմերի ներկայացրած բոլոր փաստական և այլ հարցերը: Դատախազների բոլոր որոշումները և գործողությունները պետք է արտացոլեն այդ վերաբերելի ապացույցները, լինեն օրենքին և խնդրո առարկայի վերաբերյալ գոյություն ունեցող ընդհանուր ուղեցույցներին համապատասխան»:

Այս դիրքորոշումը պետք է ստանա նորմատիվ ամրագրում, ինչը կարևոր կլինի դատախազական գործառնության բոլոր տեսակների (որոշումը, գործողության կատարում ու գործողության կատարումից հրաժարում) կարգավորման համար որպես ընդհանուր սկզբունք: Հատկապես այն կարևոր է հայեցողական քրեական հետապնդման լիազորությունն իրացնելիս, այսինքն՝ հենց ՀՀ ՔԴՕ 37-րդ հոդվածի կիրառման համար՝ որպես երաշխիք *անհրաժեշտ հայեցողությունը կամայականության չվերացվելու դեմ*, և նաև երաշխիք՝ դատախազի որոշումների դատական բողոքարկման իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Այս առումով, հետաքրքիր է նաև Անգլիայի փորձը, որտեղ նման հայեցողական որոշումներ կայացնելիս պետք է հաշվի առնվեն նաև «**հանցագործության տարիքը**»,

⁶⁷ CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) Opinion N°2 (2008) of the Consultative Council of European Prosecutors on “Alternatives to prosecution” adopted by the CCPE at its 3rd Plenary Meeting (Strasbourg, 15 – 17 October 2008)

⁶⁸ Ուսանելի է նաև ԱՄՆ փորձը՝ Այլընտրանքային հետապնդման ծրագիրը (Alternative Prosecution Program), օրինակ՝ տես՝ ԻՄԵՅԼԻՑ

⁶⁹ CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) Opinion No. 11 (2016) of the Consultative Council of European Prosecutors on the quality and efficiency of the work of prosecutors, including when fighting terrorism and serious and organised crime, adopted by the CCPE at its 11th plenary meeting (Strasbourg, 17-18 November 2016), <https://rm.coe.int/16807474b9>

ինչպես նաև դրա կատարման **շարժառիթները**⁷⁰: Այս վերջին երկուսը արդեն իսկ անուղղակիորեն մտնում են ՀՀ ՔՂՕ 37-րդ հոդվածով՝ ՀՀ ՔՕ 72-74 հոդվածներով նախատեսված հանցագործության բնույթը և հանցանքն ու հանցավորին բնորոշող հանրային վտանգավորության հատկանիշների մեջ, սակայն դրանց նախատեսումը օրենքում, կարծում ենք, էլ ավելի կնպաստի իրավական որոշակիության ամրապնդմանը դատախազի կողմից այս որոշումները կայացնելիս:

Այսպիսով, դատախազական հայեցողության սահմանները՝ տուժողների և հանրության իրավունքների և շահերի պաշտպանության վերը նշված երաշխիքները պետք է ներառել ՀՀ ՔՂՕ-ում ու որպես դատախազական գործունեության ընդհանուր սկզբունք՝ նաև ՀՀ Դատախազության մասին օրենքում: Բացի այդ, տեսնում ենք, որ դատարանների կողմից նշանակվելիք հնարավոր պատիժների կանխատեսելիությունը ուղղիղ պետք է ազդի դատախազների կողմից քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին կայացվող որոշումների կանխատեսելիության վրա: Հետևաբար, անհրաժեշտ է նաև ընդունել «Պատժի նշանակման ուղեցույցներ» դատական իշխանության համար (ԱՄՆ-ի օրինակով)⁷¹: **Առաջարկում ենք նաև, ելնելով ԵԴԽՆ Լ-2 կարծիքից, մշակել հրապարակային ուղեցույցներ, որոնք կարևոր կլինեն նաև փաստաբանների համար և սա մեծապես կնպաստի իրավական որոշակիության սկզբունքի ամրապնդմանը ՔՂՕ 37-րդ հոդվածով նախատեսված դատախազի լիազորությունների իրականացման ընթացքում**⁷²:

Քանի որ ՔՂՕ նախագծով քրեական հետապնդումը հարուցում և դադարեցնում է միայն դատախազը, ապա նույն կարգավորումներն էլ առկա են այս դեպքում: Մասնավորապես, Նախագծի 197-րդ հոդվածի (Հայեցողական քրեական հետապնդումը) 1-ին մասը, բլանկետային հղում անելով մեկ այլ նորմի՝ նշում է, որ «1. Հսկող դատախազն իրավասու է չհարուցել քրեական հետապնդում կամ դադարեցնել քրեական հետապնդումը, եթե առկա են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասով... նախատեսված բոլոր պայմանները», իսկ 2-րդ մասում նշում է, ի տարբերություն գործող ՔՂՕ-ի, որ «...2. 1-ին մասով նախատեսված դեպքում քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը հսկողը դատախազը կայացնում է սեփական նախաձեռնությամբ կամ քննիչի միջնորդությամբ»:

Վերը նշված մեր առաջարկները կիրառելի են նաև ՔՂՕ Նախագծով ներկայացվող կարգավորումների նկատմամբ:

2.1.2. Դատախազական հսկողությունը քրեական գործի հարուցման փուլում, հանցագործության մասին հաղորդումների գրանցում և օրյեկտիվ վիճակագրություն

⁷⁰ Տես՝ ԻՄԵՅԼԻՑ

⁷¹ Քրեական պատիժների կանխատեսելիության ու կայունության/հետևողականության, ու դրանք ապահովելու գործում դատախազության ունեցած դերի մասին առանձին խոսվում է հանրային մեղադրողի կողմից պատժի առթիվ կարծիք հայտնելու լիազորությանը և դատավճիռների բողոքարկմանը վերաբերող կետում, մասնավորապես՝ ԵԽ «Նախարարների կողմից Պատիժների նշանակման կայունության մասին անդամ պետությունների ուղղված R(92)17 Հանձնարարականի» (COUNCIL OF EUROPE COMMITTEE OF MINISTERS RECOMMENDATION No. R (92) 17 OF THE COMMITTEE OF MINISTERS TO MEMBER STATES CONCERNING CONSISTENCY IN SENTENCING (Adopted by the Committee of Ministers on 19 October 1992 at the 482nd meeting of the Ministers' Deputies)) լուսի ներքո:

⁷² Նման ուղեցույցի մի ուսանելի օրինակ ունի Ֆրանսիան, տես՝ ԻՄԵՅԼԻՑ

2.1.2.1. Ընդհանուր դիտարկում

Քանի որ իրավապահ մարմինների աշխատանքի օրինականության և արդյունավետության գնահատումն անհնար է իրականացնել առանց օբյեկտիվ կամ ներկայացուցչական (ռեպրեզենտատիվ), այլ խոսքերով ասած՝ իրական վիճակագրական տվյալների, այս ոլորտում դատախազության լիազորությունների երաշխիքները ունեն հանգուցային նշանակություն: Սա վերաբերում է թե վիճակագրության մեջ ընդգրկվող տվյալների բովանդակությանը, թե տվյալների «տեսանելիության» ապահովման և վերլուծության մեթոդներին, ինչն ուղղակիորեն առնչվում է քրեական գործի հարուցման կամ նոր ՔԴՕ Նախագծի տերմինաբանությամբ՝ քրեական վարույթի նախաձեռնման փուլում մինչդատական վարույթի մարմինների գործունեության օրինականության ապահովմանը:

Այս փուլի հետ կապված հիմնական խնդիրներն են՝

- հանցագործության մասին հաղորդումների գրանցումը մերժելով կամ ընդհանրապես չգրանցելը, որով դատավարական խախտումից բացի, առաջանում է վիճակագրական տվյալների ամփոփման ոչ բավարար աստիճանի ներկայացուցչականություն.
- վիճակագրական առանձին տվյալներ անհարկի չներառելու հանգամանքով.
- վիճակագրական տվյալները զուտ դատախազության կողմից տրվող, հետևաբար՝ դատարանների կողմից վերանայման ենթակա արարքի որակումներով պայմանավորելը:

Այսպիսով, վիճակագրական տվյալների ոչ բավարար աստիճանի ներկայացվածությունը ի հայտ է բերում օրենսդրական և իրավակիրառ բնույթի մի շարք խնդիրներ, որոնք մանրամասն ներկայացնում ենք ստորև:

2.1.2.2. Հանցագործության մասին ոչ բոլոր հաղորդումների տեսանելիությունը վիճակագրական պատկերում՝ հանցագործության մասին հաղորդումների տրման և դրանց վիճակագրական «տեսանելիության» պահերի միջև մարդկային գործոնի, այսինքն՝ սուբյեկտիվ գնահատման առկայությամբ պայմանավորված

Ոչ բոլոր հաղորդումների տեսանելի լինելը պայմանավորված է, նախևառաջ, հաղորդումների (անկախ ձևից՝ զանգով, նամակով, թե այլ) **գրանցման ինքնաշխատ էլեկտրոնային համակարգի բացակայությամբ**, ինչով թույլ էր տրվում մարդկային գործոնի ոչ իրավաչափ ներգրավումը, այն է՝ հաղորդման ուսումնասիրումը («ստուգումը») և ապա նոր՝ գրանցումը: Քանի որ հանցագործության մասին հաղորդումների գրանցումը հիմնականում կատարվում է ոստիկանության կողմից, դատախազական հսկողության՝ այս դատավարական փուլում առկա խնդիրներն առավել ցայտուն արտացոլվում են հենց ոստիկանության կողմից հանցագործությունների գրանցման, հաշվառման և դրանց ընթացք տալու, ինչպես նաև ընդհանրապես դատախազության կողմից իրկանացվող՝ ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության և հետաքննության նկատմամբ հսկողության հետ կապված: Եվ քանի որ դատախազության և նշված գործունեությունն իրականացնող մարմինների փոխհարաբերությունները քննարկվում են առաջին անգամ այս ենթակետում, ապա այստեղ նաև նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նաև որոշ ընդհանուր բնույթի դատողություններ և առաջարկներ ևս:

Քննարկվող հարցի առթիվ առավել հետաքրքրական են ՀՀ Ոստիկանության մասին օրենքի վերաբերելի դրույթները՝ դատախազական հսկողության մասով, դատական վերահսկողության մասին այդ օրենքում որևէ դրույթի բացակայությունը, ինչպես նաև,

իհարկե, ՀՀ Կառավարության 23.11.2017թ. հ-1495-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը հաստատելու մասին»⁷³:

Որպես ելակետային դիտարկում, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում վերջին երկու տասնամյակներում իրավապահ մարմինների կողմից կատարված մարդու իրավունքների զանգվածային խախտումները ուղեկցվել են դատախազական հսկողության և դատական վերահսկողության հետևողական թուլացմամբ (ինչում ընթերցողը կհամոզվի ստորև ներկայացվող օրենսդրական զարգացումներին ծանոթանալով), ինչպես նաև հետաքննություն իրականացնող մարմինների կարևորագույն գործառնությունների կարգավորումը օրենքի մակարդակից սկզբում Կառավարության, ապա նաև՝ շատ դեպքերում՝ ոստիկանության պետի իրավաստեղծ գործունեության մակարդակին իջեցնելով:

Ոստիկանության մասին օրենքի⁷⁴ 42-րդ հոդվածի (Ոստիկանության գործունեության վերահսկողությունը) համաձայն՝

«Ոստիկանության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է վարչապետը:
(պարբերությունն ուժը կորցրել է 16.12.16 ՀՕ-12-Ն)

Ոստիկանությունում ներգերատեսչական հսկողությունն իրականացվում է ոստիկանության պետի սահմանած կարգով:

Ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

Պետական այլ մարմիններն ու կազմակերպություններն իրավասու չեն միջամտելու ոստիկանության օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական գործունեությանը, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությանը:

(42-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, փոփ. 16.12.16 ՀՕ-12-Ն, փոփ., խմբ. 23.03.18 ՀՕ-272-Ն):

Նույն Օրենքի 42-րդ հոդվածի սկզբնական տարբերակում առկա էր հետևյալ նորմը՝

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված դեպքերում ոստիկանության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը»: 2016թ. դեկտեմբերի 16-ին կատարված փոփոխություններով այդ պարբերությունը ճանաչվեց ուժը կորցրած: Օրենքի Հոդված 42.1-ի համաձայն (Ոստիկանության գործունեության հսկողությունը)՝ «Ոստիկանության կողմից կատարվող հետաքննության օրինականության նկատմամբ հսկողությունն իրականացնում են դատախազության մարմինները՝ օրենքով սահմանված կարգով (42-րդ հոդվածը խմբ. 01. 06. 06 ՀՕ -123-Ն, փոփ. 16. 12. 16 ՀՕ -12-Ն):»:

Այս կարևորագույն հոդվածի հետ կապված պետք է նշել, որ դրա տեքստի պատմությունը լիովին արտահայտում է ոստիկանության և ընդհանրապես հետաքննության մարմինների նկատմամբ արտաքին վերահսկողությունը թուլացնելու և գնալով օրենքով ավելի քիչ իրավահարաբերություններ սահմանելու, և ավելի շատ հարաբերություններ ենթաօրենսդրական ակտերով կարգավորելու ճանապարհը: Ակնհայտ է այդ մարմինների ղեկավարների, մասնավորապես՝ Ոստիկանապետի կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերով ավելի շատ ու ավելի կարևոր իրավահարաբերություններ կարգավորելու ընդհանուր տենդենցը:

Այսպես, նշված Օրենքի 2001թ. խմբագրությամբ նույն հոդվածն իր 1-ին մասում ամրագրում էր հետևյալը.

⁷³ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=117761>, այսուհետ՝ «Հ-1495-Ն Կարգ»:

⁷⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143362>

«**Ոստիկանության գործունեության** նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է վերադասության կարգով և ներքին գործերի պետական կառավարման լիազորած մարմնի կողմից, իսկ գործունեության օրինականության նկատմամբ հսկողությունը՝ դատախազության մարմինների կողմից՝ օրենքով սահմանված կարգով»:

Օրենքի 42-րդ հոդվածի սկզբնական և հետագա խմբագրությունների համեմատական վերլուծությամբ, փաստորեն, արձանագրում ենք, որ՝

- Սկզբնական տարբերակում Ոստիկանության **ամբողջ գործունեությունը** վերահսկվում էր **օրենքով սահմանված կարգով**, մինչդեռ այժմ օրենքով սահմանված կարգով իրականացվում է միայն՝ վերահսկողություն Ոստիկանության **օպերատիվ-հետախուզական գործունեության (ՕՀԳ) նկատմամբ**, և դատախազական հսկողություն Ոստիկանության կողմից կատարվող **հետաքննության օրինականության նկատմամբ**, իսկ ներգերատեսչական հսկողությունը Ոստիկանությունում իրականացվում է **ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարի սահմանած կարգով**:

Արդյունքում, վերահսկողության գործընթացի՝ օրենքով կարգավորվող դաշտը զգալիորեն նվազեցվել է և մի մեծ մաս հանձնվել է նույն վերահսկվող կառույցի ղեկավարի կարգավորմանը:

- Սկզբնական տարբերակում դատախազությունը հսկողություն է իրականացնում Ոստիկանության **գործունեության օրինականության նկատմամբ**, մինչդեռ գործող տարբերակում դատախազական հսկողության ոլորտը սահմանափակվում է միայն հետաքննության օրինականության նկատմամբ հսկողությամբ:

Արդյունքում, դատախազական հսկողության ոլորտից դուրս է մնում ոստիկանության գործունեությունը **մինչ քրեական գործ հարուցելը ընկած փուլում**, որն առավել խոցելին է մարդու իրավունքների խախտման տեսակետից, և որը բառացի հակասում է 2015թ. փոփոխություններով Սահմանադրության 176-րդ հոդվածի տեքստին:

Եվրոպայի Խորհրդի Ոստիկանական էթիկայի կանոնագրի⁷⁵ (ընդ. 2001թ., այսուհետ՝ ԵԽ Էթիկայի կանոնագիրը) 60-րդ կետում սահմանված է, որ **«ոստիկանության նկատմամբ պետական հսկողությունը պետք է բաժանված լինի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև»**, իսկ 9-րդ կետը սահմանում է, որ **ոստիկանները պետք է վերադաս քրեական նախաքննական մարմիններին (նկատի է ունեցվում դատախազությունը և քննիչ դատավորը) պետք է տեղյակ պահեն նրանց ցուցումների կատարման ընթացքի մասին, իսկ քրեական գործով շարժի մասին պետք է զեկուցվի կանոնավոր կերպով**: Կարծում ենք, որ առնվազն հանցագործությունների մասին հաղորդումների մասին՝ մինչև դրանց քննարկումն ու գրանցումը, սկզբունքորեն պետք է զեկուցվի դատախազին: Իսկ եթե գրանցումը, ինչպես մենք ենք առաջարկում, և ինչպիսին՝ իրավական զարգացած երկրների փորձն է, կատարվի ինքնաշխատ եղանակով՝ հաղորդման բովանդակությունից և այն քննարկելու արդյունքներից անկախ, ապա այդ գրանցման փաստաթղթի հասանելիությունը նույնպես պետք է ապահովվի դատախազի համար՝ ոստիկանության գործունեության օրինականության նկատմամբ հսկողության արդյունավետությունն ապահովելու համար: Վերջապես, **ԵԽ Էթիկայի կանոնագրում սահմանված է (կետ 13), որ «քաղաքացիական հասարակության շրջանում ոստիկանության**

⁷⁵ COUNCIL OF EUROPE COMMITTEE OF MINISTERS **Recommendation** Rec(2001)10 **of the Committee of Ministers to member states** on the European Code of Police Ethics (adopted by the Committee of Ministers on 19 September 2001 at the 765th meeting of the Ministers' Deputies), <https://rm.coe.int/16805e297e>

պարտականություններն իրականացնելիս, ոստիկանությունը պետք է գտնվի քաղաքացիական իշխանությունների պատասխանատվության ներքո»:

ՀՀ ՔԴՕ 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Հետաքննության մարմնի աշխատակցի...» սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և էթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

Նույն ՔԴՕ 26-րդ հոդվածի համաձայն, քրեական գործի վարույթը, որի նկատմամբ դատախազական հսկողություն և դատական վերահսկողություն են իրականացնում, համապատասխանաբար, դատախազը և դատարանը, ներառում է՝ «քրեական գործի հարուցման նախապատրաստումը, հարուցումը...»: Նույն օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն էլ՝ «հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության»:

Թե դատախազական հսկողությունը, և թե դատական վերահսկողությունը քրեական գործ հարուցելու փուլի ընթացքում, չեն կարող արդյունավետ համարվել, էթե հետաքննության մարմինն ինքն է որոշում, թե որ հաղորդումներն են գրանցվում՝ դա անելով ոչ ինքնաշխատ և դատախազական հասանելիություն չունեցող միջոցով:

Բացի այդ, Օրենքի ոչ սկզբնական, և ոչ էլ փոփոխված տարբերակում խոսք չկա դատական վերահսկողության մասին, **ինչը նույնպես թուլացնում է դատախազական հսկողությունը:** Եթե Օրենքի սկզբնական տարբերակում, սա այնքան էլ վտանգավոր չէր, քանի որ նշվում էր, որ ոստիկանության գործունեությունը՝ անկախ տեսակից, վերահսկվում է օրենքով սահմանված կարգով (որի մեջ է մտնում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ), ապա նոր տարբերակում, սա իրոք վտանգավոր է, քանի որ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելը թողնվել է միայն ՕՀԳ մասով, իսկ հետաքննության օրինականության հսկողության մասով էլ նշվում է միայն դատախազությունը:

Նշված իրավիճակը ամբողջությամբ հակասում է **քաղաքացիական իշխանությունների պատասխանատվության ներքո ոստիկանության մարմինների գտնվելու միջազգային հանրահայտ սկզբունքին:** Պետք է ասել, որ «**ոստիկանություն**» եզրույթը միջազգային և առանձին երկրների օրենսդրական պրակտիկայում (օր.՝ ԱՄՆ-ում) ենթադրում է ոչ թե կոնկրետ կառույց, այլ «**ոստիկանման**» (policing) ծառայությունների մատուցումն իրականացնող տարբեր մարմինների աշխատակիցների հավաքական անվանումը:

Նույն Հ-1495-Ն Կարգի 3-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանվում են հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների մասին հաղորդումների, համապատասխանաբար, գրանցման և հաշվառման հասկացությունները՝ ամրագրելով, որ **հաղորդումների գրանցումն է** «ոստիկանության կենտրոնական ապարատի իրավասու ստորաբաժանման կամ տարածքային մարմնի իրավասու ծառայողի կողմից հաղորդումների բովանդակության համառոտագրումը հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների մասին հաղորդումների գրանցամատյանում», իսկ **հաղորդումների հաշվառումն է** «յուրաքանչյուր ընդունված հաղորդման հերթական համարով համարակալում, դրա հետագա ընթացքի

վերլուծություն և սույն կարգով նախատեսված դեպքերում՝ նյութերի մատյանային և համակարգչային հաշվառումը»:

Նույն Կարգի 9-րդ կետի համաձայն՝ «Փոստային, հեռագրական, ֆաքսիմիլային կամ կապի այլ միջոցներով ուստիկանության իրավասու ստորաբաժանումով կամ տարածքային մարմնում ստացված հաղորդումները գրանցվում են ուստիկանության իրավասու ստորաբաժանման կամ տարածքային մարմնի քարտուղարությունում (այսուհետ՝ քարտուղարություն), որից հետո անհապաղ ներկայացվում են ուստիկանության իրավասու ստորաբաժանման կամ տարածքային մարմնի պետին, իսկ նրա բացակայության դեպքում՝ ուստիկանության իրավասու ստորաբաժանման իրավասու այլ պաշտոնատար անձին կամ տարածքային մարմնի ղեկավար պաշտոնատար անձանցից նշանակված օրվա պատասխանատու հերթապահին (այսուհետ՝ պատասխանատու): Ուստիկանության իրավասու ստորաբաժանման պետը (իրավասու այլ պաշտոնատար անձը) կամ տարածքային մարմնի պետը (պատասխանատուն) պարտավոր է հաղորդումն անհապաղ ուղարկել գրանցման»:

Հարկ է նկատել, որ որևէ երաշխիք չկա և դատախազական հսկողությունից դուրս է մնում ստուգելը, թե արդյոք ստացված հաղորդումները իրականում գրանցվում են և հետո՝ ներկայացվում նշված անձանց, թե՛ հակառակը: Այս խնդրի միակ լուծումը մեր կողմից առաջարկվող ինքնաշխատ համակարգի ներդրումն է, որտեղ տվյալների ստացումը և գրանցումը տեխնիկապես կկատարվեն միանվագ գործողության միջոցով և անհապաղ ու միաժամանակ հասանելի է կլինեն թե ուստիկանության նշված պատասխանատուներին, և թե՛ դատախազությանը: Բացի այդ, հաղորդում ներկայացրած անձը, այն ներկայացնելուց անմիջապես հետո, պետք է ստանա իր հաղորդման գրանցման եզակի համարով հաղորդման գրանցման հավաստումը՝ հետևելիությունն ապահովելու համար (առավել պարզության համար նշենք, որ սա համեմատելի է, օրինակ՝ մուտքի արտոնագիր ստանալու համար առցանց դիմում ներկայացնելիս ու հարցազրույցի համար գրանցվելիս տրվող այսպես կոչված *bar code* կամ շտրիխ համարին): Սա կարևոր փոփոխություն է ենթադրում ընդհանրապես դատախազ-մինչդատական վարույթի այլ մարմիններ, ընդհանուր անվանենք դրանք ուստիկանական կամ անվտանգային մարմիններ, և այդ փոփոխությունը պետք է արտահայտվի Կարգի փոխարեն նույն վերնագրով նոր Օրենքի տեքստում:

Կարգի 34-րդ կետի համաձայն՝ «Հանցագործության նոր դեպքի մասին գրությունը գրանցելուց հետո, 24-ժամվա ընթացքում, քննիչին գրավոր տրամադրվում է գրանցված գրության համարը»: Այդ համարը, ինչպես նշվեց, կարիք չի ունենա տրամադրվելու, այլ անմիջապես հաղորդումը ստանալուց հետո, նախքան գրանցումը, արդեն իսկ հասանելի է լինելու հաղորդում տված անձին, քննիչին և դատախազին: Նմանատիպ բնույթի թերություններն, առավել ցայտուն դրսևորումներով, առկա են Կարգի մի շարք մասնավորապես՝ 16, 24, 27, 28, 32, 34, 35, 50, 51 և 53-րդ կետերում, որի պատճառով այստեղ կանդրադառնանք ոչ բոլորին:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածով չնախատեսված աղբյուրներից ստացված և հանցագործության հատկանիշներ պարունակող հաղորդումները գրանցվում են դրանք ստացած ուստիկանության ծառայողի զեկուցագրի հիման վրա»: Հաշվի առնելով երկրում ընթացող բարեփոխումները՝ ազդարարման ինստիտուտի հետ կապված, գտնում ենք, որ անանուն հաղորդումները նույնպես պետք է գրանցվեն նույն հիմունքներով, ինչը ենթադրում է նաև Կարգի 27-րդ կետի փոփոխություն, քանի որ այդ կետով այժմ նախատեսում է, որ «Հանցագործությունների, վարչական իրավախախտումների և

պատահարների մասին անանուն հաղորդումները, որոնց ստուգումը պահանջում է պատահարի կամ իրավախախտման վայրի մեկնում, ենթակա են գրանցման գրանցամատյանում», ինչը, ի թիվս այլի շատ սուբյեկտիվ չափանիշի գործադրում է նման կարևոր հարցով:

Այս վերջին հարցի առթիվ նոր ՔԴՕ նախագծի վերաբերյալ ԵՄ Կարծիքում, 173-րդ հոդվածի (Հոդված 173. Քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունը) վերաբերյալ նշվում է՝

«170. Չնայած վերնագրին՝ այս դրույթը կարգավորում է թե՛ այն դեպքերը, երբ պետք է նախաձեռնվի քրեական հետաքննություն, և թե՛ այն դեպքերը, երբ այն չպետք է նախաձեռնվի: Մասնավորապես՝ 6-րդ պարբերությամբ արգելվում է քննել հանցանքի մասին այն տեղեկությունը, որը ստացվել է անհայտ կամ չբացահայտված աղբյուրից: Մինչդեռ մեծամասամբ երկրներում նախնական քննություն կարող է իրականացվել անանուն աղբյուրից տեղեկություններ ստանալու դեպքում, որոնք, անհայտ լինելով հանդերձ, դրսևորում են որոշակի արժանահավատություն: 6-րդ պարբերությամբ նախատեսված սահմանափակման շրջանակը հասկանալի չէ, քանի որ այն նաև նախատեսում է չբացահայտված աղբյուրից հանցագործության վերաբերյալ ստացված հաղորդման ստուգումը դատախազի կամ քննիչի նախաձեռնությամբ՝ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

171. Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել այդ սահմանափակման շրջանակը»⁷⁶:

Այս դիտողությանն արձագանքելով, ՔԴՕ Նախագծի (21.05.2020թ. խմբագրությամբ) 173-րդ հոդվածի 6-րդ մասն արդեն նախատեսում է, որ «Քրեական վարույթ չի կարող նախաձեռնվել, եթե հանցանքի մասին տեղեկությունը ստացվել է սույն հոդվածով չնախատեսված, այդ թվում՝ անհայտ կամ չբացահայտված աղբյուրից: Այդպիսի տեղեկությունը դատախազի կամ քննիչի նախաձեռնությամբ ստուգվում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե այն պարունակում է այնպիսի փաստեր, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել»:

Կարծում ենք, սակայն, որ ընտրված չափորոշիչը՝ ողջամտորեն ստուգելի լինելը, լիովին չի արտացոլում ԵՄ ՔԴՕ կարծիքում արտահայտված մտահոգությունը, քանի որ այնտեղ խոսքը գնում էր որոշակի արժանահավատություն ունեցող տեղեկությունների հիման վրա ոչ թե ստուգում, այլ նախնական քննություն անցկացնելու մասին: Բացի այս, 173-րդ հոդվածի 6-րդ մասի տեքստից պարզ չէ, թե եթե ողջամտորեն ստուգելի փաստերի ստուգմամբ պարզվում է քրեական վարույթ նախաձեռնելու հիմքը, ապա արդյոք ինչն է համարվելու որպես այն նախաձեռնելու դատավարական առիթը՝ աղբյուրը:

Ամեն դեպքում, Հ-1495-Ն Կարգի դրույթները, առնվազն անանուն հաղորդումների մասով, միանշանակ հակասելու են նոր ՔԴՕ կարգավորումներին, հետևաբար, անհրաժեշտ է լինելու դրանց ներդաշնակեցումը: **Նույնը վերաբերում է նաև Կարգի 28-րդ կետին, որի համաձայն՝ «Եթե անանուն հաղորդումների ստուգումը չի պահանջում պատահարի կամ իրավախախտման վայրի մեկնում, ապա դրանք չեն գրանցվում և ոստիկանության ծառայողի զեկուցագրի հիման վրա, ոստիկանության իրավասու ստորաբաժանման պետի (իրավասու այլ պաշտոնատար անձի) կամ տարածքային մարմնի պետի (պատասխանատուի) ցուցումով (մակագրությամբ) թողնվում են անհետևանք»:** **Նման ձևակերպումը խախտում է թափանցիկության սկզբունքը, քանի որ հաղորդման անհետևանք թողնելը և այն չգրանցելը չեն կարող որևէ կերպ պայմանավորել միմյանց:**

⁷⁶ <http://rm.coe.int/doc/09000016806ef474>, կետ 170-171: Կարծիքում այս առթիվ հղում է արվում հետևյալ աղբյուրներին՝ *Ջրիինգն ընդդեմ Նիդերլանդների*, գանգատ թիվ 30810/03, 2007թ. մարտի 1, *Վուլպիսը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի*, գանգատ թիվ 33468/03, 2012թ. հունվարի 10 և *Թեոդորս ընդդեմ Ռումինիայի*, գանգատ թիվ 46878/06, 2013թ. հունիսի 4:

Բացի այդ, շատ սուբյեկտիվ է չգրանցելու հիմքը՝ պատահարի կամ դեպքի վայր մեկնելու անհրաժեշտության բացակայությունը: Խնդիրը էլ ավելի է սկզբունքորեն բարդանում, քանի որ ըստ էության, չգրանցված հաղորդման առթիվ կատարվում են պաշտոնեական գործողություններ, այն է՝ ոստիկանության իրավասու ստորաբաժանման պետի (իրավասու այլ պաշտոնատար անձի) կամ տարածքային մարմնի պետի (պատասխանատուի) ցուցումով (մակագրությամբ) թողնվում են անհետևանք: Արդյո՞ք այդ ցուցումը գրավոր է, թե ոչ: Կամ արդյո՞ք ի կարելի է ապրիորի որոշել պատահարի կամ դեպքի վայր մեկնելու անհրաժեշտության բացակայությունը՝ առանց դա անելու: **Պետք է գրանցել նաև անանուն հաղորդումները, և ազդարարման ՀՀ-ում նոր ներդրվող համակարգը հենց միտված է դրան:**

Կարգի 24-րդ կետի համաձայն՝ «Գրանցամատյանի օրվա ընթացքում կատարված գրառումների էջի, ինչպես նաև ստացված հաղորդումների պատճենները դատախազի պահանջով 24 ժամվա ընթացքում ուղարկվում են դատախազություն»: Նախ, նմանատիպ կարգավորումները պետք է նախատեսված լինեն բացառապես ՀՀ ՔՂՕ-ում, քանի որ հանդիսանում են քրեական գործի հարուցմանը նախորդող գործառույթների իրացում՝ թե դատախազի, և թե նրա հսկողության տակ, ըստ նույն ՔՂՕ-ի, արդեն իսկ այս փուլից գործող հետաքննության մարմինների համար: Բացի այդ, շատ կարևոր է, որ նշվում է ոչ թե գրանցված, այլ ստացված հաղորդումների մասին: Վերջապես, ինչպես նշվեց վերևում, դատախազին պետք է հասանելի լինի էլեկտրոնային գրանցման ինքնաշխատ համակարգը: Այսինքն՝ պետք է բացառվի հաղորդում տվողի և դատախազի միջև ոստիկանության կողմից հաղորդման փաստը արտացոլելու առթիվ որևէ «մարդկային», սուբյեկտիվ գործոնի հնարավորություն: Առաջարկվող ինքնաշխատ (ավտոմատ) միասնական գրանցման և միաժամանակ դատախազի համար տրված բոլոր հաղորդումների տեսանելիության ապահովման եղանակը երաշխավորելու է նաև դատախազական հսկողության օպերատիվությունը և դատախազին ներկայացվող փաստաթղթերի լիակատար աուտենտիկությունը:

Կարգի 32-րդ կետի համաձայն՝ «Հեռախոսային կապի միջոցով ոստիկանության իրավասու ստորաբաժանումներ, Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն և ոստիկանության տարածքային մարմինների հերթապահ մասեր և հերթապահ ծառայություններ ուղղված բոլոր զանգերը, ինչպես նաև ելքային զանգերը ձայնագրվում են, եթե համապատասխան ստորաբաժանումը, հերթապահ մասը կամ հերթապահ ծառայությունն ապահովված են հեռախոսային խոսակցությունները ձայնագրող տեխնիկական միջոցներով: **Ձայնագրությունները պահպանվում են երեք ամիս և ենթակա են ոչնչացման ինքնաշխատ կարգով:** Այս կարգավորումների հետ դժվար է համաձայնել, քանի որ նշված կյուրերը կարող են ապացույց լինել շարունակական բռնության համար: Բացի այդ, երեք ամիս ժամկետը շատ կարճ է: Նաև անհրաժեշտ է վերանայել ձայնագրելու նախապայմանը (տեխնիկական հագեցվածությունը), քանի որ այն չի համապատասխանում օրենսդրական տեխնիկայի կանոններին, այսինքն՝ նորմատիվ դրույթի իրագործման տեխնիկական միջոցների բացակայությունը չի կարող ինքնին այդ դրույթից վերապահում անելու նորմատիվ հիմք հանդիսանալ:

Վերջապես, Կարգի 51-րդ կետի համաձայն՝ «Հաղորդումը հերթապահ մասում կամ իրավասու ստորաբաժանումում գրանցման է ներկայացնում օպերատիվ խմբի ղեկավարը՝ դեպքի վայրից վերադառնալուց հետո անմիջապես»: Դարձյալ ստացվում է, որ գրանցումը, դեռ ավելին՝ գրանցման համար ներկայացումը կատարվում է ստուգումից հետո: Ընդհանուր մեր առաջարկն այն է, որ գրանցման վերաբերյալ դրույթները «ստուգման» գլխում չպետք է շարադրվեն:

Վերջապես, Ոստիկանության մասին օրենքի հոդված 43-ի համաձայն, ոստիկանության աշխատակիցների (ծառայողների) անօրինական գործողությունները կարող են բողոքարկվել վերադատության կարգով կամ դատական կարգով: Ակնհայտորեն բաց է թողնված դատախազին ներկայացվող բողոքը, որը նախատեսված է ՀՀ ՔԴՕ 290-րդ հոդվածով: Բացի այդ, **ավելորդ է «անօրինական» բառը**, քանի որ այն հակասում է ոստիկանության ծառայողի «բարեխիղճ վարքագծի», իսկ քրեական դատավարությունում՝ անմեղության կանխավարկածին:

ՀՀ Ոստիկանության կողմից հանցագործության դեպքերը չգրանցելու երևույթի մասին շատ հանգիստանալից կերպով խոսվում է ՀՀ գլխավոր դատախազի ԱԾ-ին ներկայացված իր վերջին՝ 2019թ. գործունեությանը վերաբերող հաղորդման մեջ՝ արձանագրելով այն միտումը, որ, հանցավորության ցուցանիշների աճի վրա «Էական ազդեցություն են ունեցել հանցագործությունների հաշվառման գործընթացի իրավական բարեփոխումները: Գաղտնիք չէ, որ նախկինում առկա էր ոստիկանության կողմից «վիճակագրությունը բարելավելու» մղումով դեպքեր թաքցնելու արատավոր պրակտիկան, ինչի համար պատասխանատվության են ենթարկվել ոստիկանության բազմաթիվ աշխատակիցներ»⁷⁷:

Վերջերս, անգամ նման պրակտիկայի պայմաններում գրանցվել էր մի արտառոց դեպք, երբ ոստիկանները չէին գրանցել հաղորդումը գողության մասին, այն է՝ ահազանգի կապակցությամբ բնակարան էին այցելել ՀՀ ոստիկանության երեք աշխատակիցներ, որոնք, բնակչի կողմից նույնիսկ հնարավոր գուղություն կատարող անձի ինքնության վերաբերյալ կասկածներ հայտնելու պարագայում, հաղորդում չեն ընդունել, այլ բանավոր խոսքով հայտնել են, որ կգրադվեն այդ հարցով, իսկ հաջորդ օրը քաղաքացուն վստահեցրել են, որ վերջինիս կողմից մատնանշված անձին բերման են ենթարկել ոստիկանության բաժին, սակայն նա չի ընդունել գողություն կատարելու հանգամանքը, նրան բաց են թողել: Այս քաղաքացուն հրավիրել են ոստիկանության բաժին և հորդորել դիմում ներկայացնել, թե իբրև բջջային հեռախոսը կորցրել է ու չնշել գողության մասին: Վերջինս ամուսնու հետ ներկայացել է ոստիկանության բաժին, որտեղ ոստիկանության աշխատակիցների հորդորով և թելադրանքով դիմում է ներկայացրել, թե իբրև 2019թ. մայիսի 16-ին կորցրել է իրեն պատկանող բջջային հեռախոսը՝ չնշելով նաև գողացված մյուս բջջային հեռախոսի ու պլանշետի մասին: Այս դեպքի հետ կապված, 2020թ. հունիսի 20-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ՀՔԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը միջնորագիր է ներկայացվել ՀՀ ոստիկանության պետի տեղակալին: Դեպքի առթիվ ՀՀ ՀՔԾ-ում 2019թ. հուլիսի 4-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, ... մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքները կատարելու համար: Առաջադրված մեղադրանքում վերջիններս իրենց լիովին մեղավոր են ճանաչել և տվել խոստովանական ցուցմունքներ, աջակցել հանցագործությունը լիովին բացահայտելուն, զղջացել կատարածի համար⁷⁸:

Ամփոփելով, անհրաժեշտ է հիշել, որ ոստիկանությունը և ոստիկանում իրականացնող մյուս մարմինները, որպես հանրությանը անվտանգային բնույթի ծառայություններ՝ մատուցող մարմին, չպետք է ինքը որոշի իր ծանրաբեռնվածության ծավալը: Այսինքն՝ հանրությունը, նախևառաջ՝ դատախազության միջոցով, պետք է հսկողություն իրականացնի քաղաքացիների կողմից նրան հաղորդված կամ հայտնի դարձած ամբողջ նյութի նկատմամբ՝ նախքան ոստիկանության կողմից որոշում կայացնելն այն մասին, թե

⁷⁷ ԳԴ Հաղորդում, էջ 5:

⁷⁸ Տե՛ս՝ <https://newarmenia.am/category/law/>

արդյոք տվյալ նյութը հանդիսանում է հետագա ոստիկանման առարկա, թե ոչ: Սա ենթադրում է, որ վերը նշված հաղորդումների սկզբնական գրանցումը չպետք է վերապահել ոստիկանում իրականացնող կառույցներին: Պետք է լինի միասնական, դատախազության համար հասանելի, հանրության համար՝ ներկայացված հաղորդումներով, ստացված շտրիխ կոդի միջոցով, հաղորդման շարժը, այսինքն՝ դրանց հիման վրա պետության կատարված գործողությունների ընթացքը՝ տեսանելի մի շտեմարան, որում՝ անկախ բովանդակությունից ինքնաշխատ կերպով, որպես «մետատվյալ» պետք է գրանցվեն բոլոր հաղորդումները:

Օրինակ՝ ԱՄՆ-ում հանրության կողմից ոստիկանությանը արված ցանկացած կանչ կամ ոստիկանության կողմից այլ կերպ ստացված ցանկացած հաղորդում հաշվառվում-ձայնագրվում-արձանագրվում է՝ մինչև ոստիկանության կողմից ընդհանրապես տեղեկանալը, թե ինչպիսի բովանդակություն ունի նշված կանչը կամ հաղորդումը: Այդ մետատվյալները՝ ով է զանգել, ինչ հասցեից, քանի բռնակցություն, և այլն, չեն կարող երբևիցե ջնջվել: Անգամ այն աշխատանքը, որի արդյունքում որոշվում է, որ կանչի-հաղորդման բուն բովանդակությունը չի հանդիսանում ոստիկանման առարկա, նույնպես արձանագրվում է: Ոստիկանության կողմից իրականացվող գործողությունների ընթացքում անհրաժեշտ է, որպեսզի նրանց տեսածի և կատարածի հետ մեկտեղ, նույն ԱՄՆ-ի օրինակով, համաժամանակյա կերպով կատարվի տեսաձայնագրառում: Այս ձայնագրության տվյալները նույնպես պետք է պաշտպանված լինեն և հասանելի՝ այն նույն ձևով, ինչ որ ոստիկանությանը հասցեագրված հաղորդումները: **Նշված համակարգը պետք է լինի միասնական բոլոր հետաքննության, քննչական մարմինների և դատախազության համար և ստեղծվի Կառավարության որոշմամբ:**

2.1.2.3. Վիճակագրական տվյալների ներկայացումը որոշակի անհարկի նեղ չափանիշներին համապատասխան

ՀՀ դատախազության կողմից հրապարակվող և ԱԺ-ին ներկայացվող վիճակագրությունը կարևոր փաստաթուղթ է դատախազության նկատմամբ արտաքին հանրային և խորհրդարանական վերահսկողության համար: Դրանում արտահայտված ցուցանիշներով է արտաքին վերահսկողության ինստիտուտները պատկերացում կազմում դատախազության գործունեության արդյունավետության և ռացիոնալության, անկախության և դրանց երաշխիքների գործունեության, և այս մարմնի առջև դրված խնդիրների իրագործման ոլորտում առկա օրենսդրական ու իրավակիրառ բացերի մասին: Այդ իսկ պատճառով, վիճակագրությունը պետք է լինի ներկայացուցչական՝ ոչ փոփոխելի իր ելակետային տվյալներում, ինչպես նաև որակական առումով՝ ամփոփ ու ամբողջական: Հակառակ դեպքում, այն և դրա հիման վրա կազմվող պրակտիկայի ամփոփումը՝ հաղորդման տեսքով, թույլ չի տա վերհանել օրինաչափությունները, այլ կվերածվի թվերի ու դատողությունների ընդհանուր պատկերն աղճատող շարադրանքի:

ՀՀ դատախազության կողմից վարվող վիճակագրության ներկայացուցչականության (representativeness) տեսանկյունից առկա հիմնական մեթոդական թերություններն են ընդգրկվող տվյալների ոչ ամբողջականությունը և վերանայելիությունը՝ ոչ վերջնական լինելը: Արդյունքում, վիճակագրական պատկերը չի արտահայտում դատախազության գործունեության բոլոր գործառույթները քրեական արդարադատության ոլորտում և դրանից դուրս և չի արտացոլում դատարանների ուժի մեջ մտած որոշումներով վիճակագրության համար ելակետային հանդիսացած տվյալների վերանայումը արարքների վերաորակման՝ անկախ դրանց ծանրության աստիճանը փոփոխվելու

հանգամանքից, վարույթների՝ հանցադեպի բացակայության և այլ հիմքերով կարճման և այլ պատճառներով:

Վիճակագրական տվյալների ոչ ամբողջական լինելը, առաջին հերթին, պայմանավորված է հանցավորության կառուցվածքի ստատիկ և դինամիկ պատկերի մասին տվյալների ոչ ներկայացուցչական լինելու հանգամանքով՝ դեպքերի օբյեկտիվ լատենտայնության ու սուբյեկտիվ գործունեությունը՝ քողարկումից սկսած մինչև դատավարական ճանաչողության գործիքների թերությունները: Վերջիններիս անդրադարձել է հենց ՀՀ գլխավոր դատախազը ԱԺ-ին ներկայացված իր վերջին՝ 2019թ. գործունեությանը վերաբերող հաղորդման շրջանակներում՝ նշելով, մասնավորապես, հետևյալը՝

«2018թ. դատախազության աշխատանքների ամփոփման շրջանակներում արձանագրվել էր, որ կատարված ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների զգալի մասը դուրս էր մնում հանցավորության վիճակի վերաբերյալ վիճակագրությունից, այսինքն՝ ընդհանրապես չէր արտացոլվում դրանում: Հարցն այն էր, որ մասնավոր հետապնդման ենթակա հանցագործությունները, որոնք ոչ մեծ և միջին ծանրության էին, որպես հանցագործության դեպք չէին հաշվառվել և չէին հաշվառվում դրանց վերաբերյալ քրեական գործի հարուցումը դիմողի բողոքի բացակայության հիմքով մերժվելու դեպքում: Այլ կերպ ասած՝ այս հանցագործությունների հաշվառումը անհասկանելիորեն պայմանավորվում էր այն կատարած անձի ի հայտ գալով, ինչն, ակնհայտորեն, անընդունելի էր: Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2019թ. Հայաստանի Հանրապետության դատախազության նախաձեռնությամբ տեղի ունեցած քննարկման արդյունքներով, ... որոշվել է 2019թ. առաջին եռամսյակից սկսած վերը նշված հանցագործությունների դեպքերը ևս հաշվառել հանցագործությունների վիճակագրական հաշվետվությունների ընդհանուր թվաքանակում...»⁷⁹:

Նշվածը, ինչ խոսք, միանգամայն դրական զարգացում է, քանի որ երկրում կատարվող հանցագործությունների պատկերը, այսինքն՝ կրիմինոլոգիական վիճակը, որը պետք է արտահայտի հանցավորության կառուցվածքը և դինամիկան տվյալ աշխարհագրական տարածքում՝ տվյալ ժամանակաշրջանի կտրվածքով, չի կարող կախված լինել դատավարության սուբյեկտների՝ իրենց իրավունքները պաշտպանելու կամ վերականգնելու ցանկության առկայությունից կամ բացակայությունից, կամ առկայության դեպքում՝ այդ ցանկությունն իրականացնելու ուղղությամբ ընտրված մարտավարությունից:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ ՀՀ դատախազության գործունեության հաղորդման մեջ ավելի ուշադրություն պետք է դարձվի ոչ միայն հանցավորության վերաբերյալ տվյալներին, քանի որ դա կարող է ապահովվել պարզապես հետաքննության և նախաքննության մարմինների միասնական վիճակագրությամբ, այլ նաև՝ բուն դատախազական գործունեությանը՝ թե որպես մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության վերաբերյալ առավել մանրամասն վիճակագրական արտացոլմամբ, թե դատախազության կողմից դատական իշխանություն իրականացնելու տեսակետից (խոսքը վերաբերում է հենց դատախազների կողմից անձին ՔԴՕ 66-րդ հոդվածով նույն ՔԴՕ 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հիմքով արդարացնելուն): Դատախազության հաղորդման մեջ այս տվյալներն արտացոլված են ընդհանուր կերպով՝ առանց անհրաժեշտ կոնկրետացման, թե՛ արդարացման որ հիմքով է կայացվել որոշումը:

Նշվածը չափազանց կարևոր է հատկապես հանցակազմի և հանցադեպի բացակայության հիմքով կայացված դատախազական որոշումների, ինչպես նաև դրանց վերաբերյալ հետագայում կայացված դատական ակտերի տեսակետից, ինչը թույլ կտա վերհանել նաև դատախազական և դատական մեկնաբանություններում առանձին-

⁷⁹ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ԱԺ-ին ներկայացված «Հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության 2019թ. գործունեության մասին», 2020թ., էջ 3:

առանձին առկա խնդիրները, ինչպես նաև՝ միասնական մեկնաբանության հասնելու ուղիները (օրենսդրական լուծումներ և իրավակիրառ բնույթի ուղեցույցներ): Իսկ ապացույցների ոչ բավարար լինելու հիմքով կայացվող դատախազի արդարացման որոշումները ու դրանց հետագայում վերացնող դատական ակտերը, ինչպես նաև՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ երկարացնելու միջնորդությունները մերժելու դատարանների որոշումները թույլ կտան ընդհանուր պատկերացում կազմել քրեական վարույթի տարբեր փուլերում ապացուցողական պահանջվող շեմերի կամ չափորոշիչների ընկալման վերաբերյալ:

Այս շեմերն ու չափորոշիչները, որոնց անհրաժեշտությունն ու արդյունավետ միասնական ընկալումը պետք է երևա վիճակագրությունից, այնուհետև պետք է ստանան Դատախազության և իրավապահների համար մշակվող և ընդունվող Ուղեցույցների տեսք՝ նաև առանձին հանցատեսակների կամ առանձին անձանց գործերով խտրական վերաբերմունքը բացառելու համար:

Այսպես, քննադատելի է այն կայուն հաստատված պրակտիկան, որի պայմաններում որոշ հանցագործությունների կամ որոշ կատեգորիաների անձանց հետ կապված հաղորդումներով (խոշտանգում, ընտրական կեղծիքների հետ կապված հանցագործություններ, ընտանեկան բռնություն)՝ (1) ընթացք տալու շեմը արհեստականորեն ավելի բարձր է, քան «սովորական» իրավախախտումների դեպքում, (2) ուսումնասիրվում ու ապա քննվում է «սուտ մատնության» վարկածը (որը չի քննվում, օրինակ՝ կոնկրետ անձի կողմից «սովորական» հանցագործություն կատարելու մասին հաղորդման դեպքում, և ինքնին հակասում է քրեադատավարական օրենքին՝ այն առումով, որ քրեական գործը կարող է քննվել դրա հիմքերի և առիթների առկայությամբ, իսկ սուտ մատնության հաղորդում տրված չէ, իսկ մյուս կողմից, չկա դրա որևէ այլ «լեզվատիրության» աղբյուրը, քանի որ հաղորդում ներկայացնողը արդեն իսկ զգուշացվում է սուտ մատնության համար սահմանված քրեական պատասխանատվության մասին):

Այս տեսանկյունից կարևոր են նաև դատախազական հսկողության հարցերը, որն իրականում դատական վերահսկողության միջանկյալ օղակ է, քանի որ դատախազի որոշումները հետագայում ենթակա են դատական բողոքարկման, իսկ ՀՀ ՔԴՕ 290-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի (ՀՀ ՄԴ) հայտնի որոշումից հետո պաշտոնատար անձի անգործությունը կարող է անմիջապես բողոքարկվել դատարան: Այս հարցերը արդեն ունեն ոչ թե օրենսդրական, այլ իրավակիրառ պրակտիկայի բարելավման կարիք: **Նման ուղեցույցների հրապարակումը, օրինակ, հանրությանը թույլ կտա հեշտությամբ տեսնել տարբերակվող մոտեցումները և նկատել, որ օրինակ՝ իշխանության ներկայացուցչի դեմ կատարված ենթադրյալ հանցագործության դեպքով մեկ ահազանգը արդեն բավարար է հետապնդում հարուցելու համար, իսկ նրա կողմից ենթադրաբար կատարված հանցանքի դեպքում՝ սուժողը ստիպված պետք է լինի ներկայացնել մի ամբողջական ապացուցողական բազա:** Եվ վիճակագրությունը, որը պետք է հիմք լինի այդ ուղեցույցների մշակման ու լրամշակման համար, նաև պետք է համադրելի տեղեկություններ տրամադրի հանրությանը՝ իրավակիրառ պրակտիկայում տարբերակվող վերաբերմունքի դեպքերի համեմատություններն անելու հնարավորություն տալու իմաստով (օրինակ՝ հանցագործության մասին հաղորդումների ընդհանուր ծավալում քանիսն են ընտանեկան բռնության, խոշտանգման, կոռուպցիայի վերաբերյալ գործերով հանգեցրել քրեական հետապնդում հարուցելու, կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու/երկարացնելու միջնորդություններին, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դատարանի որոշումներին, ու ինչպիսին է նույն որոշումների վիճակագրությունը, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով՝

Իշխանության ներկայացուցչի դեմ բռնություն գործադրելը, արված հաղորդումների մասով):

Իհարկե, կլինեն շատ դեպքեր, երբ որոշակի, սակայն՝ ոչ լիարժեք ներկայացուցչականություն կարող է ապահովվել պարզապես նշելով, ինչպես ներկայումս է արվում, արդարացման և ոչ արդարացման հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու, վարույթը կարճելու և այլ որոշումների մասին: Նշվածը կարևոր է նաև երկրում արդարացումների ընդհանուր, այսինքն՝ նաև դատարանների վիճակագրությունը հաշվի առնող միասնական պատկեր ունենալու համար, քանի որ Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն իրավամբ է քննադատվում արդարացման դատավճիռների ցածր տոկոսայնության մասին՝ մեղադրական թեքման պատճառով, այլ երբեմն՝ նաև անհարկի՝ առանց հաշվի առնելու անձամբ դատախազի կողմից կամ դատախազական հսկողության ներքո գործող քննիչների կողմից նույն արդարացման հիմքերով քրեական հետապնդման դադարեցման դեպքերի վիճակագրությունը:

Մյուս խնդիրը, որն առկա է տվյալների արտացոլման տեսակետից, դա նույն տվյալների վերանայելի լինելն է: Խոսքը վերաբերում է, թե կոնկրետ գործերով հետազայում մեղադրանքի վերառականությունից կամ արդարացումներից, կարճումներից, այլ նաև կոնկրետ հանցակազմերին ՀՀ վերջնական դատական ակտերով, հատկապես Վճռաբեկ դատարանի որոշումներով տրված նոր մեկնաբանություններին, որոնք մեծ ծավալային ազդեցություն են թողնում հանցագործության կոնկրետ տեսակների վրա ընդհանրապես: Կամ հնարավոր է, որ նույն ՎԴ մեկնաբանությունները չափազանց լայն մեկնաբանվեն դատարանների կողմից, ինչպես խուլիգանության հանցակազմի դեպքում է, որի մասին նշված է ՀՀ գլխավոր դատախազի 2019թ. գործունեության հաղորդման մեջ՝ ընդգծելով, որ ՎԴ-ի՝

«Հայտնի իրավական դիրքորոշումներն իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանվում էին ակնհայտորեն լայն, անձնական փոխհարաբերությունների և կենցաղային վեճի շրջանակները ընկալվում էին չափազանց ընդարձակ՝ երբեմն ներառելով անձի ինքնահաստատման, այլոց հանդեպ առավելություններն ընդգծելու, հասարակությանը հակադրվելու ձգտումներով ակնհայտորեն պայմանավորված դեպքերը: Արդյունքում, դեպքի սկզբնական նկարագրությամբ խուլիգանության հատկանիշներ պարունակող արարքները հանցագործության դեպքի վերաբերյալ ամփոփագրերում վերնագրվում էին որպես ծեծ կամ մարմնական վնասվածքի պատճառում, և վարույթն իրականացնող մարմնի կողմից դիտվում էին որպես այդպիսիք՝ ոչ խուլիգանական դրդմամբ կատարված լինելու կանխավարկածով»⁸⁰:

Ելնելով վիճակագրության կտրուկ փոփոխություններից, կարծում ենք, որ նույն՝ նյութական իրավունքի իրավակիրառ մեկնաբանության կտրուկ փոփոխություն է նաև խարդախության հանցակազմի հետ կապված, քանի որ «2019 թվականի ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում ավարտված 783 խարդախության վերաբերյալ գործերից 356 քրեական գործ կարճվել է արդարացնող հիմքերով, որը կազմում է ավարտված քրեական գործերի 45.5%»⁸¹: Նույն պատճառով կարող է «տեղի ունենալ» նաև կոնկրետ հանցատեսակի, օրինակ՝ նույն խարդախության դեպքերի աճ, որի մասին նույնպես նշված է Հաղորդման մեջ⁸²:

Վիճակագրական տվյալների դատարանների կողմից վերանայելիության հանդեպ նման խոցելիությունը, կարծում ենք, չի նպաստում ներկայացուցչական ամբողջական պատկեր ունենալուն: Այս առումով, կարելի է դիտարկել միայն ուժի մեջ մտած դատավարական ակտերով հաստատված որակումները և այլն: Հատկապես, դա անհրաժեշտ է այն դեպքերի համար, երբ տեղի է ունենում արդարացում հանցադեպի բացակայության հիմքով կամ

⁸⁰ Նույն տեղում, էջ 17:

⁸¹ Նույն տեղում, էջ 26:

⁸² Նույն տեղում, էջ 25-26:

արարքի հետագա վերաորակումը փոխում է դրա ծանրության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված խումբը: Պետք է նշել, որ հենց դատախազություն է իր տարեկան հաղորդման մեջ ընդունում այն փաստը, որ վիճակագրության ներկայացուցչականությունը խոցելի է դատավարական միջոցներով դրանց հիմքում ընկած ելակետային տվյալների հաստատված չլինելու պատճառով՝ իր հերթին, նշելով մինչդաստակյան վարույթի մարմինների վիճակագրության վերանայելիությունը դատախազության կողմից ու ընդգծելով հետևյալը՝

«Մինչդաստակյան քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության լիազորության իրացման ընթացքում դեռևս 2018 թվականին պարզվել էր, որ ՀՀ ոստիկանությունում հանցագործության դեպքերը որպես բացահայտված համարելու համար բավարար էր հանցագործության դեպքի մասին օպերատիվ հաղորդագրության ամփոփագրում հանցանք կատարած անձի անհատական տվյալների վերաբերյալ նշումը, թեև տվյալ դեպքի կապակցությամբ հարուցված քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված անձ չի եղել: Փաստորեն, դեպքը համարվել է բացահայտված՝ դրա բացահայտված լինելը դատավարական առումով փաստված չլինելու պարագայում: Արդյունքում բացահայտման վերաբերյալ վիճակագրությունը չի արտացոլել բացահայտման իրական ցուցանիշներ»⁸³:

Նույն կերպ, սակայն, **հենց դատախազության վիճակագրությունն է խոցելի քրեադատավարական հետագա փուլերում ելակետային տվյալների վերանայման տեսակետից**, քանի որ նույն ձևով «տվյալ դեպքի կապակցությամբ հարուցված քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված անձի» առկայությունը, որը Դատախազության կարծիքով արդեն իսկ ապահովում է տվյալ գործի բացահայտված լինելու տվյալի ներկայացուցչականությունը, նույնպես չի նշանակում հանցակազմի տարրերի վերջնական հաստատում: **Մեր առաջարկն, այսպիսով, կայանում է նրանում, որ դատախազության վիճակագրական հաղորդումը ներկայացնի նաև նախորդ տարում ներկայացված ելակետային տվյալների՝ դատական վերանայմամբ հաստատված վերջնական պատկերը:** Եվ ինչպես «խնդիրը կարգավորելու նպատակով դատախազության կողմից առաջարկվել է հանցագործության դեպքերը բացառապես անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու դեպքում հաշվառել որպես բացահայտված»⁸⁴, նույն տրամաբանական հետևողականությամբ էլ պետք է այդ արդեն դատախազության կողմից «բացահայտված» համարված դեպքերը առնվազն ևս մեկ անգամ պետք է ներկայացվեն այդ տվյալները փոփոխող օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում:

Բացի այդ, դատախազությունը պետք է լինի այն մարմինը, որը վարում է միասնական վիճակագրություն բոլոր իրավապահ մարմինների գործունեության վերաբերյալ, որի ներկայացրած տվյալները պետք է ունենան աուտենտիկության, միասնականության, լրիվության ամենաբարձր մակարդակը՝ այլ իրավապահ մարմինների կողմից վարվող վիճակագրության համեմատ և ունենան նվազագույն խոցելիությունը՝ ելակետային տվյալների հետագա վերանայման ռիսկերի նկատմամբ:

Ամփոփելով, նշենք, դատախազության կողմից ներկայացվող կրիմինոլոգիական պատկերը պետք է՝

- երբեք կախված չլինի դատավարության սուբյեկտների վարքագծից.
- հնարավորինս արտահայտի դատախազների՝ որպես դատական իշխանություն կրողների կողմից անձի նկատմամբ իրացվող գործառնությունները.
- չլինի խոցելի դատավարական լեզվի վերանայման հանդեպ.
- լինի միասնական բոլոր իրավապահ մարմինների համար:

⁸³ Նույն տեղում, էջ 7:

⁸⁴ Նույն տեղում:

«ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը»⁸⁵ որպես ռազմավարական նպատակ նախատեսվում է «Էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակի ստեղծում և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացումը», որի ռազմավարական ուղղությունների թվում է կենտրոնացված էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը, ի թիվս այլի, հետևյալ նպատակներով՝

«ա) միավորել արդարադատության մարմիններում գործող բոլոր էլեկտրոնային համակարգերը և տվյալների շտեմարանները.

... գ) ստեղծել իրավապահ (հետաքննության և նախաքննության մարմիններ, դատախազություն), դատական և իրավակիրառ մարմինների (Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, Քրեակատարողական ծառայություն, Պրորազգիայի ծառայություն) միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ.

դ) ներդրել պաշտոնական առցանց նամակագրության համակարգ, համակարգի միջոցով ապահովելով էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը գործի բոլոր մասնակիցների միջև, ինչպես նաև՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հնարավորություն ստեղծել առցանց կապ հաստատել, դիմում, բողոք և այլ փաստաթղթեր ներկայացնել պետական մարմիններին, բացի այդ, ընձեռել գործի ընթացքին առցանց հետևելու հնարավորություն.

ե) ապահովել համակարգի միջոցով վիճակագրական տվյալների հավաքագրումը վարույթի ողջ ընթացքում.

զ) ապահովել թվային արխիվների ստեղծումը»:

Կարծում ենք, նշված ծրագրային նպատակներին պետք է ավելացնել նաև հաղորդումների ստացման ու գրանցման և (գ) կետում նշված մարմինների տեղեկատվության այնպիսի համակարգի ստեղծում, որի հասանելիությունը կապահովվի այդ համակարգում տվյալների հաղորդման բուն փաստով և դրա հետ միաժամանակ և կարիք չի առաջացնի նշված մարմինների միջև նույն հասանելի տվյալները միմյանց փոխանցելու համար: Բացի այդ, նշված ինքնաշխատ համակարգը, ինչպես նաև այդ հարթակն ընդհանրապես պետք է նույն ինքնաշխատ կերպով նաև գեներացնեն վիճակագրական տվյալները, ինչով կապահովվի վիճակագրության առավելագույն ներկայացուցչականությունը:

Ներկայացուցչական տվյալներ գեներացնող նման էլեկտրոնային գործիքի ներդրումը համահունչ կլինի նաև էլեկտրոնային արդարադատության գործիքների կիրառմամբ դատախազության արդյունավետությունը բարձրացնելու և այդ միջոցով նաև հաշվետվողականությունը բարձրացնելու միջազգային չափորոշիչներին: Մասնավորապես, Հանուն արդարադատության Եվրոպական հանձնաժողովի՝ Կիրբերարդարադատության հասնելուն ուղղված եղանակների վերաբերյալ Ուղեցույցների իրականացումն ապահովող Գործիքակազմը (ընդ. 2019թ. հունիսի 14-ին) նախատեսում է՝

«Հաշվետվողականությունը կարող է խթանվել ՏՏ այնպիսի լուծումների միջոցով, որոնց միջոցով կհավաքագրվեն տեղեկությունները դատարանների գործունեության մասին և կխթանվի վիճակագրության գեներացումը ներքին և արտաքին նպատակների համար: ... Տեղեկատվության փոխանակումը օգտակար է գործին մասնակցող մասնագետների համար: ... Այն փաստաթղթերն ու ֆայլերը, որոնք էլեկտրոնային եղանակով փոխանցվում են իրավաբանների կամ կողմերի միջև կամ հենց դատական մարմինների միջև (օրինակ՝ դատախազությունից՝ դատարան) չպետք է ներկայացվեն գուտ սահմանված ձևաչափին համապատասխան: Նաև օգտակար է, երբ կոնկրետ ֆայլի մետատվյալները (ինչպես, օրինակ՝ մասնակցող կողմերի կամ մարմինների անունը/անվանումը և հասցեները) նույնպես հասցեատիրոջը փոխանցվեն

⁸⁵ Տես՝ էջ 10-12:

Էլեկտրոնային եղանակով: Այնուհետև, համակարգը պետք է հնարավոր դարձնի հետագայում մետատվյալներում, անգամ՝ մասնակիորեն, փոփոխությունների մտցնելուց խուսափելը»⁸⁶:

Այդ մետատվյալների անփոփոխելիությունը գործնական երաշխիք է թե մինչդասական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության ու դատական վերահսկողության, և թե դատախազության նկատմամբ արտաքին վերահսկողության մեխանիզմների արդյունավետության համար, որոնք ներկայացված են Հետազոտության 3.9. կետում:

Հետևություններ և առաջարկություններ

1. Ոստիկանության մասին օրենքում՝
 - 1.1. Սահմանել, որ ՀՀ ոստիկանության գործունեության նկատմամբ դատական վերահսկողությունն ու դատախազական հսկողությունը իրականացվում են բացառապես ՀՀ ՔԴՕ նախատեսված հիմքերով և կարգով;
 - 1.2. Սահմանել, որ Ոստիկանության ղեկավարի իրավաստեղծ, այդ թվում՝ ոստիկանության գործունեության ոլորտը կարգավորող նորմատիվ ակտերը կարող են ընդունվել այդ մասին ՀՀ համապատասխան օրենքներում և դրանցից բխող ՀՀ Կառավարության որոշումներում հատկապես սահմանված դեպքերում:
 - 1.3. Օրենքի 42-րդ հոդվածը լրացնել հետևյալ նորմով՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված դեպքերում ոստիկանության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը»:
 - 1.4. Ներառել Կառավարության 1495-Ն որոշման մեջ նշված բոլոր դրույթները՝ բացառությամբ քրեադատավարական բնույթ կրող նորմերի, որպիսիք՝ հանդիսանալով քրեական վարույթին առանձին փուլերը՝ նյութերի նախապատրաստումն ու քրեական գործի հարուցումը կարգավորող նորմեր, պետք է ընդգրկվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում.
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել համապատասխան նորմերը՝ լրացնելով կամ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը կամ դրա նախագիծը.
3. Ստեղծել ՀՀ Կառավարության որոշմամբ էլեկտրոնային գրանցման ինքնաշխատ համակարգ, որում հանցագործությունների մասին հաղորդումները կգրանցվեն ինքնաշխատ կերպով, առանց ստուգման, կլինեն ոչ փոփոխելի և միաժամանակ հասանելի կլինեն նաև դատախազի համար.
4. Նախատեսել, որ նշված համակարգը միասնական է բոլոր քննության և հետաքննության և դատախազության մարմինների համար, իսկ դատախազությունը վարում է միասնական վիճակագրություն.
5. ՀՀ Դատախազության մասին օրենքում կատարել փոփոխություններ՝ դատախազությանը հռչակելով որպես քրեական արդարադատության ոլորտում միասնական վիճակագրությունն ամփոփոխ լրագոր մարմին.
6. ՀՀ Դատախազության մասին օրենքում սահմանել վիճակագրական տվյալների ներկայացուցչականությունն ու նվազագույն վերանայելիությունն ապահովող մեթոդներ՝ բացառելով սուբյեկտիվ գնահատականների վրա հիմնված վիճակագրական տվյալները և ավելացնելով նոր տողեր՝ դատախազական հսկողության արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից: Մասնավորապես,

⁸⁶ Strasbourg, 14 June 2019 EUROPEAN COMMISSION FOR THE EFFICIENCY OF JUSTICE (CEPEJ) Toolkit for supporting the implementation of the Guidelines on how to drive change towards Cyberjustice, adopted at the 32th plenary meeting of the CEPEJ 13 and 14 June 2019, 2.1 (g), (e):

դատախազության վիճակագրական հաղորդումը ներկայացնի նաև նախորդ տարում ներկայացված էլակետային տվյալների՝ դատական վերանայմամբ հաստատված վերջնական պատկերը:

7. Ոստիկանության մասին Օրենքի 42-րդ հոդվածում սահմանել, որ ՀՀ ոստիկանության գործունեության նկատմամբ դատական վերահսկողությունն ու դատախազական հսկողությունը իրականացվում են բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (ՔԴՕ) նախատեսված հիմքերով և կարգով:
8. Ոստիկանության մասին Օրենքի 43-րդ հոդվածում՝ սահմանել, որ Ոստիկանության աշխատակիցների գործողությունները կարող են բողոքարկվել վերադատության կարգով, դատախազին և դատական կարգով:
9. ՀՀ Կառավարության 23.11.2017թ. հ-1495-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգում»՝

9.1. Կարգի 24-րդ կետի համաձայն՝

1. «Գրանցամատյանի օրվա ընթացքում կատարված գրառումների էջի, ինչպես նաև ստացված հաղորդումների պատճենները դատախազի պահանջով 24 ժամվա ընթացքում ուղարկվում են դատախազություն»: **Շատ կարևոր է, որ նշվում է ոչ թե գրանցված, այլ ստացված հաղորդումների մասին: Բացի այդ, ինչպես նշվեց վերևում, դատախազին պետք է հասանելի լինի էլեկտրոնային գրանցման ինքնաշխատ համակարգը: Այսինքն՝ պետք է բացառվի հաղորդում տվողի և դատախազի միջև ոստիկանության կողմից հաղորդման փաստը արտացոլելու առթիվ որևէ «մարդկային» որոշման հնարավորություն:**

Նման կարգավորումները պետք է նախատեսված լինեն բացառապես ՀՀ ՔԴՕ-ով:

9.2. Կարգի 27-րդ կետի համաձայն՝

«Հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների մասին անանուն հաղորդումները, որոնց ստուգումը պահանջում է պատահարի կամ իրավախախտման վայրի մեկնում, ենթակա են գրանցման գրանցամատյանում»: **Նշվածը շատ սուբյեկտիվ չափանիշ է, քանի որ չեն սահմանվում այն կոնկրետ (օբյեկտիվ) չափանիշները, որոնք գնահատելով կարող է որոշում կայացվել պատահարի կամ իրավախախտման վայրի մեկնելու, հետևաբար՝ գրանցամատյանում անանուն հաղորդումը գրանցելու անհրաժեշտության մասին: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, հաղորդումները ենթակա են գրանցման՝ նախքան դրանցով որևէ քննարկում անցկացնելը կամ գործողություն կատարելը:**

Ներդնել օբյեկտիվ չափանիշներ և չափորոշիչներ՝ պատահարի կամ իրավախախտման վայր մեկնելու անհրաժեշտությունը գնահատելու համար:

9.3. Կարգի 29-րդ կետի համաձայն՝

«Անանուն գրավոր հաղորդումները քարտուղարությունում գրանցվելուց հետո, իսկ բանավոր հաղորդումները հաղորդում ընդունող ոստիկանության ծառայողի զեկուցագրով հանձնվում են օպերատիվ-հետախուզական ստորաբաժանում՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված կարգով ստուգելու համար, եթե հաղորդմամբ պարունակվող տեղեկությունները հիմնավոր են, ողջամտորեն ստուգման հնարավորություն են տալիս, վերաբերում են կոնկրետ անձի կամ կոնկրետ հանցագործության դեպքի»:

Թվարկված գործողությունների կատարման պայմաններից, այն է՝ 1) հաղորդմամբ պարունակվող տեղեկությունները հիմնավոր են, 2) ողջամտորեն ստուգման հնարավորություն են տալիս, 3) վերաբերում են կոնկրետ անձի կամ 4) կոնկրետ հանցագործության դեպքի, օբյեկտիվ են միայն վերջին երկուսը, քանի որ **չեն սահմանվում այն կոնկրետ (օբյեկտիվ) չափանիշները, որոնք գնահատելով կարող է հաստատվել հաղորդմամբ պարունակվող տեղեկությունների հիմնավոր լինելը կամ ողջամտորեն ստուգման հնարավորություն տալը:**

Ներդնել օբյեկտիվ չափանիշներ և չափորոշիչներ՝ անանուն գրավոր հաղորդումները և բանավոր հաղորդումները հաղորդում ընդունող ոստիկանության ծառայողի կողմից «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգելու նպատակով օպերատիվ-հետախուզական ստորաբաժանում հանձնելու մասին զեկուցագիրը կազմելու համար:

9.4. Կարգի 32-րդ կետի համաձայն՝

«Հեռախոսային կապի միջոցով ոստիկանության իրավասու ստորաբաժանումներ, Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն և ոստիկանության տարածքային մարմինների հերթապահ մասեր և հերթապահ ծառայություններ ուղղված բոլոր զանգերը, ինչպես նաև էլքային զանգերը ձայնագրվում են, **եթե համապատասխան ստորաբաժանումը, հերթապահ մասը կամ հերթապահ ծառայությունն ապահովված են հեռախոսային խոսակցությունները ձայնագրող տեխնիկական միջոցներով: **Ձայնագրությունները պահպանվում են երեք ամիս և ենթակա են ոչնչացման ինքնաշխատ կարգով:****»:

Այս կարգավորումների հետ շատ դժվար է համաձայնել, քանի որ նշված նյութերը կարող են ապացույց լինել շարունակաբար տեղի ունեցող իրավախախտ գործունեության, օրինակ՝ սիստեմատիկ բռնության համար: Երեք ամիս ժամկետը շատ կարճ է: Բացի այդ, պետք է վերանայել ձայնագրելու պայմանը (տեխնիկական հագեցվածությունը), քանի որ այն չի համապատասխանում օրենսդրական տեխնիկայի կանոններին, այսինքն՝ նորմատիվ դրույթի իրագործման տեխնիկական միջոցների բացակայությունը չի կարող ինքնին այդ դրույթից վերապահում անելու նորմատիվ հիմք հանդիսանալ կամ այլ կերպ ասած օրենքի դիսպոզիցիայի (նկարագրության) մաս:

Սահմանել, որ ձայնագրությունները պահպանվում են առնվազն 3 տարի, իսկ հեռախոսագանգի փաստի ռեկվիզիտները գրանցումվում և ը պահպանվում են անժամկետ՝ համակարգչային եղանակով:

Վերացնել տեխնիկական հագեցվածության պայմանը՝ որպես մուտքային և էլքային զանգերի ձայնագրման նախապայման:

9.5. Կարգի 28-րդ կետի համաձայն՝

«Եթե անանուն հաղորդումների ստուգումը չի պահանջում պատահարի կամ իրավախախտման վայրի մեկնում, ապա դրանք չեն գրանցվում և ոստիկանության ծառայողի զեկուցագրի հիման վրա, ոստիկանության իրավասու ստորաբաժանման պետի (իրավասու այլ պաշտոնատար անձի) կամ տարածքային մարմնի պետի (պատասխանատուի) ցուցումով (մակագրությամբ) թողնվում են անհետևանք»:

Թափանցիկության սկզբունքը, որը խախտվում է այստեղ, դա այն է, որ հաղորդման անհետևանք թողնելը և այն չգրանցելը չեն կարող որևէ կերպ պայմանավորել միմյանց: Պետք է գրանցել նաև անանուն հաղորդումները, և ազդարարման ՀՀ-ում նոր ներդրվող համակարգը հենց միտված է դրան:

9.6. Կարգի 34-րդ կետի համաձայն՝

«Հանցագործության նոր դեպքի մասին գրությունը գրանցելուց հետո, 24-ժամվա ընթացքում, քննիչին գրավոր տրամադրվում է գրանցված գրության համարը»:

Այդ համարը պետք է տրամադրվի նաև շահագրգիռ անձին՝ աուտենտիկության համապատասխան երաշխիքով, օր՝ բար կողով՝ օտարերկրյա վիզա ստանալու համար դիմում լրացնելու ընթացակարգի անալոգիայով:

9.7. Որպես առավել հեռանկարային լուծում ընդունել Օրենք՝ նույն հարաբերությունները կարգավորելու համար՝ դրանում ներառելով Հանցագործությունների մասին հաղորդումների ինքնաշխատ գրանցման էլեկտրոնային համակարգի ստեղծումը և վերը բերված մյուս առաջարկները: Առաջարկում ենք, որպես այդ օրենքն ունենա հետևյալ վերտառությունը՝

«Հայաստանի Հանրապետության օրենքը հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգի մասին», որի հիման վրա ի կատարումն որի ՀՀ Կառավարությունն արդեն առանձին մարմինների համար կընդունի համապատասխան կարգեր:

2.2. Դատախազության և քննչական ու հետաքննության մարմինների ինստիտուցիոնալ փոխահարաբերությունները և գործառնական ազդեցությունը մինչդատական վարույթը սկսվելուց հետո

2.2.1. Դատախազի և մինչդատական վարույթում գործող մարմինների հետ հարաբերությունների մոդելների դիտարկում

Քրեական վարույթի մինչդատական փուլում, ինչպես նաև դատական քննության փուլում դատախազի ունեցած գործառնական կարգավիճակը մեծապես պայմանավորված է քննիչի ունեցած դատավարական կարգավիճակով: Այս առումով քրեական արդարադատության ինստիտուցիոնալ լիազորվածության հիմնական հարցը հետևյալն է ո՞վ է քննիչը: Այդ հարցի լուծումը կարող է տրվել հետևյալ երեք մոդելներից մեկով՝

1. *Մաքուր ինկվիզիցիոն, քննիչակենտրոն մոդել*՝ որն իր առավել հետևողական արտացոլումն է ստացել խորհրդային քրեական դատավարության մեջ. քննիչը՝ որպես մինչդատական վարույթի դատավոր, որը որպես մինչդատական վարույթում նշանակությամբ 2-րդ, իսկ ժամանակագրական առումով 1-ին իրավաբանը⁸⁷, ընդունում է

⁸⁷ Այս եզրույթի տակ նկատի է ունեցվում քրեական նյութական և դատավարական օրենքը կիրառելու իրավասություն ունեցող անձը, ում համար՝ նման լիազորվածության բերումով պարտադիր է իրավաբանի կրթություն ունենալը: Այսինքն, ոչ-իրավաբան ասելով, ի նկատի է ունեցվում, որ իրավաբանական կրթությունը այս պաշտոնների համար պարտադիր չէ: Նրանք, իհարկե, կարող են լինել իրավաբաններ, սակայն ԱՄՆ-ի

հիմնական դատավարական որոշումները՝ մեղադրանքի առաջադրում, մեղադրանքի ծավալի փոփոխություն և քրեական հետապնդման դադարեցում/քրեական գործի վարույթի կարճում: Այս մոդելին բնորոշ է այն, որ քննիչը իրավունք ունի դատախազի որոշումը բողոքարկել նրա վերադաս դատախազին՝ կատարելով դատախազի որոշումը/ցուցումները, իսկ առանձին, ստորև քննարկվող որոշումների առթիվ տրված ցուցումները՝ նաև առանց դրանք կատարելու:

Այս մոդելին նաև բնորոշ է, որ քննիչը իրավունք ունի անձի սահմանադրական իրավունքների սահմանափակման (խուզարկություն, հեռախոսային խոսակցությունների վերահսկման թույլտվություն, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և այլնի) համար թույլտվություն ստանալու միջնորդությամբ անձամբ դիմելու դատարան: Նաև քննիչը հանձնարարություններ է տալիս օպերատիվ-հետախուզական ու հետաքննության մարմիններին: Այս մոդելի **կարևորագույն բնութագրիչ գիծն այն է, որ, քննիչը, ինչպես նաև վարույթ իրականացրած ցանկացած անձ, ՀՀ քրդատօր-ի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն, չեն կարող կանչվել որպես վկա, իսկ նրանց կողմից կազմված խուզարկության և այլ քննչական, այն է՝ ապացույցների ձեռք բերմանն ուղղված գործողությունների արձանագրությունները ինքնուրույն և ինքնաթույլատրելիորեն (self-authenticably) ապացույց են, ապացույցի տեսակ են՝ դեռևս մինչև դրանք դատարանում քննության առնվելը: Իրականում, գործում է, և սա ընդհանուր խորհրդային իրավագիտության մոտեցումն է՝ ցարական Ռուսաստանից, մինչ այդ էլ Ֆրանսիայից եկող ու աղավաղված, ըստ որի նախաքննության մարմինների գործունեության արդյունքները, տվյալ դեպքում՝ ապացույցները և դատավարական, այդ թվում՝ դատավարական հարկադրանքի գործողությունների (օր. նույն ձեռքբերման) արձանագրությունները, մեղադրական եզրակացությունը և այլ, **ունեն հիմնավորվածության որոշակի կանխավարկած, որը կարող է հերքվել դատարանում: Ինչ խոսք, սա ուղղակիորեն հակասում է անմեղության կանխավարկածին, որը ենթադրում է հակառակը և հանդիսանում է խորհրդային դատավարության՝ որպես ճանաչողության պրոցեսի, ինտելեկտուալ անազնվության աստիճանի հասնող ընթացակարգային թերությունը** (procedural flow on the level of intellectual dishonesty):**

2. *Մաքուր մրցակցային դատարանակենտրոն մոդել.* քննիչը՝ որպես մինչդատական վարույթի միակ իրավաբանի՝ դատախազի խուզարկու (сыщик), ով ապահովում է մեղադրանքի փաստական բազան՝ ապացույցների ձեռք բերում և այլն, իսկ դատախազը կատարում է օրենքի կիրառման/դատավարական պահանջների պահպանման հետ կապված բոլոր գործառնությունները՝ մեղադրանքի առաջադրում և վերը նշված այլ հարցերի լուծումը: Այս մոդելի համար, ուր քննիչի լինի իրավաբան պարտադիր չէ, բնորոշ է այն, որ քննիչը, բացի գործը քննելուց նաև միշտ պատրաստվում է իր կատարած գործողությունների համար որպես մեղադրանքի կողմի վկա ապագայում հանդես գալ դատարանում՝ նախնական դատալսումների ու դատական քննության ընթացքում, որտեղ հանրային մեղադրող դատախազը, որը նույն անձն է, ով մասնակցել է «նախաքննությանը», քննիչին ենթարկում է ուղիղ հարցաքննության (direct examination), իսկ պաշտպանական կողմը՝ հակընդդեմ կամ այլ կերպ ասած՝ խաչաձև հարցաքննության (cross examination): Նույնը վերաբերում է նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն և հետաքննություն իրականացրած անձանց՝ իհարկե՝ ոչ վերջիններիս ֆունկցիաների ու ինստիտուտների այն արհեստական տարանջատմամբ, որ գործում է առաջին մոդելում:

օրինակով, կարող են ունենալ նաև տնտեսագետի որակավորում, այլ մասնագիտություններ, որոնք կօգնեն կամ կպահանջվեն մասնագիտական որակավորում պահանջող քննությունների դեպքում, օր.՝ հաշվապահ-քննիչներ ֆինանսական հանցագործությունների համար և այլն:

Մոդելին բնորոշ է նաև այն, որ մեղադրյալի պաշտպանի կողմից արված համագործակցության առաջարկը քննարկվում և ընդունվում է բացառապես դատախազի կողմից:

Այս մոդելի կարևորագույն բնութագրիչ այն է, որ քննչական ու դատավարական գործողությունների և ընդհանրապես դատարանից, ավելի ճիշտ դատաքննությունից (trial), կամ այլ կերպ ասած՝ ապացույցների դատական հետազոտումից դուրս արված գործողությունների ցանկացած արդյունք՝ վկայի հարցաքննության, բնակարանի խուզարկության կամ որևէ այլ գործողության արձանագրություն, համարվում է «ասեկոսե» (hearsay) և չի կարող որպես ապացույց դիտվել, քանի դեռ այն կազմած անձը՝ քննիչը կամ օպերատիվ աշխատակիցը կամ հետաքննիչը դրա առթիվ չհարցաքննվի որպես վկա դատաքննության ժամանակ: Այլ խոսքերով, այս մոդելում չկան գրավոր ապացույցներ, և ապացույց է միայն այն, ինչը ոչ թե պարզապես հետազոտվել է, այլ ձեռք է բերվել դատարանում՝ լսվելով բանանավոր հանդես եկող վկայի շուրթերից:

Այս մոդելում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը և այլ սահմանադրական իրավունքներ սահմանափակմանն ուղղված միջնորդությունները դատարանին ներկայացնելու իրավունք ունի բացառապես դատախազը: Որոշ դեպքերում, դատախազն ինքն է թույլատրում իրավունքների որոշակի սահմանափակում՝ քննիչի միջնորդությամբ, օրինակ՝ ԱՄՆ-ում դատախազը կարող է դիմել բջջային օպերատորին պարտադիր կատարման ենթակա հրահանգով (subpoena)՝ խնդրելով իրեն ներկայացնել անձի հեռախոսագանգերի ելքային և մուտքային զանգերի հեռախոսահամարները կամ էլեկտրոնային մտից կամ էլից նամակների հասցեները: Սակայն, նշված զանգերի բովանդակությունը լսելու, վերահսկելու համար, բնականաբար, դատախազը դիմում է դատարանին՝ համապատասխան միջնորդությամբ: Նույն միջնորդությամբ՝ էլեկտրոնային փոստարկղի խուզարկության միջնորդությամբ, դատախազը դիմում է էլեկտրոնային նամակների բովանդակությունը ձեռք բերելու համար:

3. *Խառը մոդել, որն ընտրվել է ՔՂՕ Նախագծով*, որը զգուշորեն փորձում է գնալ դեպի 2-րդ՝ առավել արդյունավետ մոդելը: Մասնավորապես, այս հիբրիդային, Նախագծով առաջարկվող մոդելում՝

- երկու իրավաբանի առկայությունը մինչդատական վարույթում պահպանվում է.
- վերը նշված հիմնական դատավարական որոշումները կազմվում են քննիչի, բայց հաստատվում դատախազի կողմից.

- քննիչը կարող է հարցանվել որպես վկա ապացույցի թույլատրելիության և դատավարական այլ գործողության իրավաչափության առթիվ՝ դատարանի նախաձեռնությամբ կամ դատարանի որոշմամբ՝ կողմերի միջնորդության հիման վրա (հոդված 57, մաս 3, կետ 5 և հոդված 331, մաս 4): Հիբրիդայնությունն այստեղ կայանում է նրանում, որ կարծես թե գործող ՔՂՕ 86-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով հաստատված՝ վարույթ իրականացնող անձանց հարցաքննելու արգելքի կանոնը չի փոխվում՝ քննիչը միայն որոշակի դեպքերում է հրավիրվելու որպես վկա⁸⁸, սակայն, ուշադիր դիտարկման դեպքում, պարզվում է, որ շատ չնչին կարող է լինել այն դեպքերի թիվը, երբ պաշտպանը քննիչին ցանկություն ունենա հարցաքննել որևէ այլ նպատակով, քան ապացույցի թույլատրելիության կամ դատավարական այլ գործողության իրավաչափության

⁸⁸ Երբ իրեղեն ապացույցի, ապացուցողական կամ այլ վարության գործողության արձանագրության կամ արտավարության փաստաթղթի հետազոտման արդյունքում կողմը վիճարկում է դրա թույլատրելիությունը կամ դատարանի մոտ հիմնավոր կասկածներ են առաջանում համապատասխան ապացույցի հավաստիության վերաբերյալ (Նախագիծ, հոդված 331, մաս 4):

վիճարկումն է (օրինակ՝ որ չի եղել հիմնավոր կասկած վերահսկիչ գնման կամ ձեռքբերման համար և այլն): Ինչ վերաբերում է հետաքննիչին, ապա նրա հարցաքննությունը արդեն իսկ նախատեսվում է որպես ընդհանուր կանոն՝ 2-րդ մոդելի նման: Փաստորեն, կարող ենք ասել, որ Նախագիծը գործնականում գնում է 2-րդ ամերիկյան մոդելով, մինչդեռ արտաքննապես պահպանվում է որոշակի «հարգանքը» իրավաբան հանդիսացող քննիչի նկատմամբ:

- համագործակցության առաջարկի ընդունումը արվում է դատախազի կողմից, սակայն քննիչը իր կարծիքն է հայտնում:

Այս հարցերը մանրամասն քննարկվելու են համապատասխան պարագրաֆներում: Սակայն այստեղ շատ կարևոր է նշել, որ ինստիտուցիոնալ բոլոր ընդհարումները դատախազության և քննչական/հետաքննության մարմինների միջև միշտ եղել են գործով նրանց կողմից տրվող իրավական գնահատականների և դրանց ու դրանց հիմքում ընկած նյութերի/ապացույցների ինքնա-աուտենտիկության/ճշգրտության կանխավարկածի և այն մեկ այլ իրավաբան մասնագետի կողմից արդյունավետորեն վիճարկելու և վերանայելու անթույլատրելիության առթիվ:

Մոտավորապես, քննիչն ասել է՝ ինչո՞վ է ավել դատախազը, որ վիճարկի իմ գնահատականը: Նույնը՝ դատախազ-դատավոր հարաբերություններում: Սա է միշտ եղել պատճառը, որ դատախազները միշտ դժգոհել են արդարացման դատավճիռներից, կալանավորումը մերժելու որոշումներից ու նաև նրա պատճառը, որ քննիչները իրավունք են ստացել ու բողոքարկել են դատախազի ցուցումները: Օրինակ, քննիչը կարող է պնդել, որ եթե անձը արդարացվել է, ուրեմն պետք է դատել իրեն, չէ՞ որ՝ «ես եմ մեղադրանք առաջադրել», նույնը՝ դատախազը. չէ՞ որ նա է հաստատել մեղադրական եզրակացությունը ու դատի տվել, փաստորեն, անմեղ անձին և այլն:

Եվ այստեղ տեսնում ենք կարևոր մի նորամուծություն, որը նախատեսված է Նախագծով ու որը, բնորոշ լինելով հենց 2-րդ մոդելին, մեղմելու է մասնագիտական այդ ցատումները: Այդ նորամուծությունը քննիչի ու դատախազի, ապա՝ դատարանի կողմից կայացվող որոշումների համար անհրաժեշտ ապացուցողական շեմերի տարբերակումն է հավանականությունների գերակշռումից սկսած (preponderance of evidence), երբ քննիչը մեղադրական եզրակացությունը կազմում և ուղարկում է դատախազին, եթե «մինչդատական վարույթում հավաքված բոլոր ապացույցները գնահատելով՝ քննիչը հանգում է հետևության, որ մեղադրյալին վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը մեծապես հավանական է» (Նախագիծ հոդված 199, մաս 1-ին) , մինչդեռ գործող օրենսգրքում մինչդատական վորույթի շրջանակներում միշտ օգտագործվում է՝ եթե «բավարար ապացույցներ»): Դատավճռի համար ՔԴՕ-ով նախատեսված է ամենաբարձր «ողջամիտ կասկածից վեր» շեմը (beyond a reasonable doubt), որը հենց նշանակում է, որ օրենսդիրն այլևս չի ենթադրում, որ քննչական գործողությունների արդյունքները կասկած չեն հարուցում. պարզապես քննիչը սուբյեկտիվորեն համոզված է անձի մեղավորության կամ այլ փաստի մեջ (որպես կասկածյալ ներգրավելու, մեղադրանք առաջադրելու և այլ անհրաժեշտության մեջ), սակայն այդ համոզմունքի անկեղծությունը բավարար չէ ապացուցողական շեմի բավարարված լինելու փաստը գնահատող ողջամիտ դիտորդին համոզելու համար: Դա անելու համար անհրաժեշտ է դատական պրոցես⁸⁹:

⁸⁹ «Արդեն ընդունվել է, որ քննչական մարմնի անգամ բարեխիղճ (bona fide) կամ անկեղծ (“genuine”) կասկածը պարտադիր չէ, որ օբյեկտիվ դիտորդին բավարարի, որ այդ կասկածը ողջամիտ է (տես՝ *Յոքսը, Քեմպբելլը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1990թ. օգոստոսի 30-ի վճիռը, Շարք Ա, Հ-182, կետ 35-րդ:*

Բացի այդ, Նախագծով առաջարկվում է, որ օպերատիվ-հետախուզական գործողությունները կարող են կատարվել բացարձակապես քննիչի ցուցումով, ինչը արդեն իսկ նշանակում է՝ դատախազի անմիջական հսկողության ներքո: Ընդ որում, այս գործողությունները համարվելու են հետաքննություն, որի իրականացնողները, ինչպես նշեցինք, մշտապես հարցաքննվելու են վկայի կարգավիճակով դատարանում:

Այս ընդարձակ դիտարկումը բերվեց միայն մեկ նպատակով՝ հասկանալու դատարանների դատախազության, նախաքննության, հետաքննություն և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների փոխհարաբերությունների էությունը կազմող ու երբեմն ինստիտուցիոնալ հակասություններ առաջացնող իրական պատճառները՝ մեկը մյուսի մասնագիտական գործունեության մասին այլ կարծիք հայտնելու իրավունք ունենալը, մեր դեպքում, դատավորը՝ դատախազի, դատախազը՝ քննիչի, քննիչը՝ հետաքննիչի: Եվ կախված նրանից, թե ինչպիսին է լինելու Նախագծի վերջնական ընդունված տեքստը հենց այս հարցով, այն է՝ որքանով է քրեական դատավարությունում ընդունվելու մինչդատական մարմինների որոշումների հիմնավորվածության ենթադրությունը/կանխավարկածը, ընթանալու են նաև իրական ինստիտուցիոնալ բարեփոխումները:

2.2.2. Դատախազի և մինչդատական վարույթում գործող մարմինների փոխհարաբերությունների ընտրված մոդելի իրացումը մինչդատական վարույթի կարևորագույն հարցերի կապակցությամբ⁹⁰

2.2.2.1. Ընդհանուր դիտարկում

Նախորդ կետում նշված դատախազ-քննիչ հարաբերությունների գործառնական և ինստիտուցիոնալ մոդելներից մեկի հստակ ընտրությունը անհրաժեշտ է թե՛ մեթոդաբանական առումով, և թե՛ այդ հարաբերությունների ներքին հակասություններից զերծ կարգավորում ապահովելու ու ըստ այդմ էլ՝ դատախազական ու քննչական գործունեության արդյունավետությունը երաշխավորելու նպատակով: Նշվածի ուժով, ի սկզբանե դուրս է մնում երրորդ՝ խառը մոդելը, որը, չնայած երկրորդ մոդելի փաստացի տարրեր պարունակելով, չի գնում դրա ինստիտուցիոնալ արտացոլմանը: Հետևաբար, ըստ էության, խնդիրը նրանում է, թե՛ արդյոք Հայաստանը պետք է պահպանի առաջին՝ խորհրդային արհեստական և անմեղության կանխավարկածի երաշխիքներին ինտելեկտուալ/ճանաչողական ու դատավարական առումով հակասող, մրցակցությունը ձևական դարձնող մոդելը, թե՛ ձգտի երկրորդ՝ քրեական արդարադատության ոլորտում մարդու սահմանադրական իրավունքների իրական երաշխիքներ տրամադրող և կողմերի հավասարությունն ապահովող իրապես դատարանակենտրոն մոդելին:

Պատասխանի ակներևության պատճառով, այս կետում, հետևաբար, քննարկվելու են ՀՀ ՔԴՕ Նախագծի՝ որպես երրորդ մոդելին ձգտող քրեական դատավարության այնպիսի

Fox, Campbell and Hartley v. the United Kingdom, judgment of 30 August 1990, Series A no. 182, § 35», տես՝ *Ստեպուլեական ընդդեմ Մոլդովայի*, դիմում շ-8207/06, 6 նոյեմբերի 2007, կետ 76:

⁹⁰ Բնարկե, նախընտրած մոդելն իրացվում է նաև դատական վարույթում, ի դեմս, նախևառաջ քննիչին/հետաքննիչին որպես մեղադրանքի կողմի վկա հարցաքննելիս, սակայն, այդ մասին անդրադարձ կլինի դատախազի՝ որպես հանրային մեղադրողի լիազորությունների քննարկմանը նվիրված կետում: Այստեղ պետք է պարզապես հիշել, որ նշված մոդելի բուն գոյությունն ու իրացումը մինչդատական վարույթում ամբողջությամբ պայմանավորված են նույն մոդելի՝ դատական վարույթում իրացվելու արդյունավետությամբ կամ հեռանկարով:

հիմնահարցեր, որոնց առաջարկվող լուծումը թույլ կտա ապահովել միասնական և հետևողական կարգավորումներ՝ հանգեցնելով նաև դատախազություն-քննչական մարմիններ հարաբերությունների սկզբունքորեն նոր լուծումների: Քանի որ Նախագծով արդեն իսկ քայլեր են արվել դատախազի գործառույթների դատարանակենտրոն մոտեցմամբ պայմանավորված կարգավորումների ուղղությամբ, մեր հետագա շարադրանքում կհենվենք հենց Նախագծի դրույթների վրա՝ ստեղծվող մոդելի՝ առավել սկզբունքային հարցերի առնչությամբ ավելի ամբողջական իրացումն ապահովելու համար: Այդ կարևոր հարցերն են այն բոլոր սկզբունքային հարցերը, որոնք պահանջում են իրավաբանական գիտելիքներ՝ քրեական նյութական ու դատավարական իրավունքի նորմերը կիրառելու համար՝

- քրեական մեղադրանքի առաջադրումը/քրեական հետապնդման հարուցումը և դադարեցումը, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելը և վերսկսելը, նախաքննության ընթացքում և մեղադրական եզրակացությունը մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու հարցերի լուծումը դատախազի կողմից.
- անձի սահմանադրական իրավունքների սահմանափակման միջնորդությամբ դատարանի դիմելու դատախազի բացառիկ իրավունքը.
- համաձայնեցման և համագործակցության վարույթներում որոշումների կայացման դատախազի բացառիկ իրավունքը.
- դատախազի կողմից քննիչին նախնական (այդ թվում՝ ապացույցների թույլատրելիության բովանդակային ստուգմամբ) դատալուսումների ընթացքում հարցաքննելը որպես մեղադրանքի կողմի վկա.
- դատախազի կողմից մեղադրանքի կողմի վկաներին դատալուսումներից առաջ հանդիպելու հնարավորությունը.
- դատախազի հանձնարարությունների և դատախազին տրվող հանձնարարությունների օրինականությունը:

Այս բոլոր սկզբունքային հարցերի մեկ մոդելի ներսում, այսինքն՝ հետևողական լուծման դեպքում միայն կարելի է հանգել քննիչ-հետաքննիչ-օպերատիվ ծառայություններ-գործառնական հարաբերություններն արդյունավետորեն ապահովող նոր *ինստիտուցիոնալ* լուծումների՝ քննչական, հետաքննչական, անվտանգության մարմինների վերակազմակերպման տեսքով (ինչին նվիրված է Հետազոտության հաջորդ՝ 3-րդ գլուխը): Ի սկզբանե ասենք, որ մենք **առաջարկում ենք «ոստիկանման» ծառայություններ իրականացնող ապակենտրոնացված մոդելը, որտեղ կլինի համադրումը՝ միասնական համապետական մեկ կառույցի (ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոյի անալոգիայով, որի ղեկավարին ընտրելու է խորհրդարանը) և տեղական/տարածքային ընտրովի մարմինների կողմից ձևավորվող ու դրանց հաշվետու վարչա-տարածքային մարմինների ոստիկանությունների տեսքով:** Ինչ վերաբերում է հետախուզական ստորաբաժանումներ ունեցող մարմիններին, ապա դրանք պահպանվելու են զուտ այդ նպատակներով (ՊԵԿ հետախուզական վարչությունը և այլն) և հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում քրեական հետապնդման հարուցման և անձի իրավունքների սահմանափակման խնդրանքով կամ այդ նպատակով (սահմանադրական իրավունքների սահմանափակման անհրաժեշտության պարագայում) դատարան դիմելու խնդրանքով դիմելու են դատախազին:

2.2.2.2. Քրեական մեղադրանքի առաջադրումը/քրեական հետապնդման հարուցումը և դադարեցումը, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելը և վերսկսելը, նախաքննության ընթացքում և մեղադրական եզրակացությունը մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու հարցերի լուծումը դատախազի կողմից

ՔԴՕ Նախագծի 189-րդ հոդվածի (Հանրային քրեական հետապնդում հարուցելը) 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը հարուցվում է հսկող դատախազի որոշմամբ՝ նրա կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի հիման վրա: Նշված փաստերի առկայության դեպքում քննիչն իրավասու է հսկող դատախազին ներկայացնել անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին միջնորդություն՝ դրան կցելով վարույթի նյութերը և մատնանշելով այդ փաստերը հաստատող ապացույցները:

Նախ, ինչպես տեսնում ենք, չի ամրագրվում քննիչի՝ նման միջնորդություն ներկայացնելու պարտականությունը, ինչպես նաև՝ ըստ այդմ, չի նշվում, թե նշված փաստերի առկայությունն առաջ գալու պահից սկսած երբ է խազում քննիչի նշված իրավասությունը: Այնուհետև, նույն հոդվածը նշում է (մաս 3), որ՝

«միջնորդությունը և այն հիմնավորող նյութերը ստանալուց հետո 12 ժամվա ընթացքում հսկող դատախազը որոշում է կայացնում անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին, իսկ քրեական հետապնդում հարուցելու հիմքի բացակայության դեպքում՝ իր որոշմամբ մերժում է քննիչի միջնորդությունը», իսկ 6-րդ մասում՝ սահմանում, որ «դատախազն իրավունք չունի քննիչին հանձնարարել ներկայացնելու անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշակի բովանդակությամբ միջնորդություն կամ կազմելու այդպիսի որոշման նախագիծ»:

Այս վերջին նորմը, ինչպես և ամբողջությամբ մեկ մոդելին հավատարիմ չմնալու հետևանք հանդիսացող այլ նորմեր, գործնականում կիրառելի չի լինելու կամ կրելու է ձևական բնույթ: Մասնավորապես, եթե դատախազը իրավունք ունի բավարարելու կամ մերժելու քննիչի միջնորդությունը, ապա պարզ է, որ դա արվում է հենց միջնորդության որոշակի բովանդակության հետ չհամաձայնելու դեպքում: Այլ խոսքերով ասած, որոշակի բովանդակությամբ միջնորդության մերժումը ինքնին հանձնարական է որոշակի բովանդակությամբ միջնորդություն ներկայացնելու համար: Այսինքն՝ քննիչը միշտ էլ ներկայացնելու է միայն «հեռանկարային» միջնորդություններ: Նույն տրամաբանությամբ դատախազին՝ որոշման նախագիծ կազմել հանձնարարելու արգելքը նույնպես չի կիրառվի, քանի որ եթե այդ դատախազի դիրքորոշումը կարող է արտահայտվել քննիչի միջնորդությունն ընդհանրապես մերժելու ձևով, ապա նշված երկու արգելքները որոշակի բովանդակությամբ միջնորդություն կամ նախագիծ կազմելու հանձնարարության արգելքը դատախազի համար նվազ կարևոր, ներառնված իրավունքներ կամ փաստացի հնարավորություններ են: Նախագիծն, ըստ էության, չի հրաժարվում 2 իրավաբան ունենալու մոդելից, քննիչին տրամադրում է սեփական դիրքորոշումները դատավարականացնելու երաշխիքներ, սակայն իրականում, քանի որ չկա դատախազի կողմից միջնորդությունը մերժելու քանակական կամ որևէ այլ բովանդակային կամ որակական սահմանափակում, այդ երաշխիքները չեն գործելու: Եթե քննիչը ցանկանում է, որ իր միջնորդությունը բավարարվի, ապա միշտ ներկայացնելու է, եթե ոչ՝ առաջին փորձից, դատախազի դիրքորոշումը բավարար չափով ու որոշակի բովանդակությամբ արտահայտող միջնորդություն:

Հետևաբար, մեր առաջարկն է՝ հրաժարվել այս նորմից՝ իրականում ամրագրելով այն, ինչ բնության ուժով, այսինքն՝ քննիչի կողմից իր միջնորդության հեռանկարների համարժեք գնահատմամբ պայմանավորված, տեղի է ունենալու իրականում, այն է՝ որ դատախազի ու քննիչի միջև այս, ինչպես նաև մի շարք այլ, ստորև քննարկվող հարցերով ձևավորվելու են ոչ թե դատավարական, այլ աշխատանքային հարաբերություններ:

Այնուհետև, ըստ ՔԴՕ Նախագծի 190 հոդվածի (Մեղադրանք ներկայացնելը), քննիչը, ստանալով իր միջնորդությունը բավարարող, դատախազի կողմից կայացված քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը, ներկայացնում է մեղադրանք (մաս 1-ին), իսկ «ձերբակալման ներքո չգտնվող անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման հետ համաձայն չլինելու դեպքում քննիչն իրավասու է առանց մեղադրանք ներկայացնելու առարկություն ներկայացնել վերադաս դատախազին...: Առարկությունը մերժվելու դեպքում մեղադրանքը ներկայացվում է մերժման մասին որոշումը ստանալուց հետո 18 ժամվա ընթացքում» (մաս 2-րդ):

Անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման հետ համաձայն չլինելու դեպքում քննիչի առարկություն ունենալու ու, ըստ էության, առանց դատախազի որոշումը կատարելու, այն է՝ առանց մեղադրանք առաջադրելու, այդ առարկությունը վերադաս դատախազին ներկայացնելու հնարավորությունը մի փոքր անհասկանալի է՝ հաշվի առնելով Նախագծի 6-րդ հոդվածի 41-րդ կետը, որի համաձայն քրեական հետապնդման հարուցում է հանդիսանում՝ «դատախազի կողմից անձի ենթադրյալ հանցավոր արարքը նկարագրող և դրա իրավական գնատականը պարունակող որոշում կայացնելը ...»: Այսինքն, եթե ընդունում ենք այն փաստը, որ դատախազը հետապնդում հարուցելու մասին որոշումը կայացրել է քննիչի միջնորդության վրա և այն կազմելու կամ փոփոխությունների ենթարկելու հնարավորություն չի ունեցել, ապա ինչու՞ քննիչը պետք է առարկի այդ որոշման դեմ՝ մեղադրանքը, այսինքն՝ նույն «ենթադրյալ հանցանքը կատարելու մասին վարկածը, որն ունի փաստական և իրավական հիմնավորում» անձին ներկայացնելուց առաջ: Եթե սա քննիչի կողմից բողոքարկման ձևն է իր համոզմունքի հակառակ միջնորդությունը հսկող դատախազին ներկայացնելու դեմ, ապա **կարծում ենք, որ ավելի հետևողական կլինեք, եթե հանվեք դատախազի կողմից միջնորդությունը կոնկրետ բովանդակությամբ ներկայացնելու քննիչին հանձնարարություն տալու կամ միջնորդության նախագիծ կազմելու հանձնարարության արգելքը կամ էլ քննիչը առարկեք վերադաս դատախազին հարուցման միջնորդությունը հսկող դատախազի կողմից մերժելու դեմ:**

Ամբողջ խնդիրը նրանում է, որ քննիչի կողմից դատախազին հետապնդում հարուցելու համար միջնորդությամբ դիմելը՝ դատախազի կողմից մերժումների անսահմանափակ հնարավորությամբ ու քննիչի կողմից այդ մերժումները բողոքարկելու հնարավորության բացակայությամբ հանդերձ՝ ոչ իրավաբան քննիչի կամ 2-րդ ոչ մողելին, իսկ քննիչի կողմից իր իսկ միջնորդությամբ կայացված քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման հիման վրա մեղադրանք ներկայացնելուց հրաժարվելն ու այդ որոշման դեմ առարկելը՝ 1-ին՝ քննիչ-դատավորի մողելին բնորոշ կարգավորում է: **Մենք առաջարկում ենք հրաժարվել գնալ լիարժեքորեն գնալ քննիչի 2-րդ մողելով և վերացնել դատախազի կողմից միջնորդության առթիվ տրվող հանձնարարությունների արգելքները ու քննիչի կողմից ընդհանրապես մեղադրանք ներկայացնելու գաղափարից: Իսկ դատախազի կողմից հետապնդում հարուցելու մասին որոշումը կարող է բողոքարկել կողմը:**

ՔԴՕ Նախագծի վերաբերյալ ԵԽ կարծիքում խնդրո առարկայի առթիվ նշվում է՝

«188. Հոդված 189. Հանրային քրեական հետապնդում հարուցելը 188.6-րդ պարբերության վերապահումը, որ դատախազն «իրավունք չունի քննիչին հանձնարարել ներկայացնելու անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշակի բովանդակությամբ միջնորդություն», որոշ երաշխիքներ է ապահովում քննիչի անկախության համար՝ որոշելու, թե արդյոք մեղադրել որոշակի հետաքննվող անձի, թե՛ ոչ: Սակայն այս հոդվածի բովանդակության մեջ անտեսվում է 38.1(5)-րդ հոդվածով նախատեսված՝ դատախազի իրավասությունը, ինչպես նաև 190-րդ հոդվածում ներառված հարցերի ասպեկտը՝ մեղադրել որևէ անձի սեփական նախաձեռնությամբ: Այս իրավասությանը որևէ հղում կատարելու բացթողումը սույն դրույթում կարող է շփոթությունների և թյուրըմբռումների տեղիք տալ:

189. Ուստի սույն դրույթը պետք է վերանայվի՝ նման հնարավորությանն անդրադառնալու նպատակով»:

«190. Հոդված 190. Մեղադրանք ներկայացնելը 190.2-րդ պարբերությամբ քննիչի համար նախատեսվում է դատախազի կողմից մեղադրանքի ներկայացման հետ համաձայն չլինելու հնարավորություն՝ վերադաս դատախազին առարկություն ներկայացնելու միջոցով: Այս առարկության որոշման որևէ ժամկետ նշված չէ, և անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյոք կան ընդհանուր կանոններ, որոնք կարգավորում են այս բացը: Բացի այդ, հասկանալի չէ, թե այդ դեպքում որն է լինելու անձի նկատմամբ մեղադրանք հարուցելուն առարկող քննիչի դերը»⁹¹:

Մեղադրանքի փոփոխումը և լրացնելը տեղի է ունենում ՔԴՕ նույն 189-րդ և 190-րդ հոդվածների կարգով, այսինքն՝ այդ հոդվածների պահանջների պահպանմամբ կայացվում է «քրեական հետապնդում հարուցելու մասին նոր որոշում և անձին ներկայացվում է նոր մեղադրանք» (հոդված 191):

Նախագծի 193-195 հոդվածների համաձայն, քրեական հետապնդման ժամկետի կասեցումը և դադարեցումը նույնպես տեղի է ունենում դատախազի որոշմամբ, ընդ որում՝ ժամկետները կասեցվում են հսկող դատախազի կողմից որոշումը կայացնելու պահից (հոդված 193, մաս 1-ին), դատախազը այս առթիվ որոշումը կայացնում է քննիչի միջնորդության հիման վրա (հոդված 194, մաս 2-րդ), իսկ կասեցման հիմքը վերանայլու դեպքում քննիչը դատախազին միջնորդություն է ներկայացնում քրեական հետապնդման ժամկետը վերսկսելու մասին (հոդված 195, մաս 1-ին):

Նախագծի 196-րդ հոդվածի (Հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու կարգը) 1-ին մասի համաձայն, «քրեական հետապնդումը բացառող հանգամանքներից որևէ մեկի առկայության դեպքում քննիչը միջնորդություն է ներկայացնում քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին, որի հիման վրա հսկող դատախազը որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին», բացի այդ «Քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին որոշումը հսկող դատախազը կարող է կայացնել նաև իր նախաձեռնությամբ՝ քննիչից ստացված վարույթի նյութերի հիման վրա» (մաս 3-րդ):

Նախագծի 205-րդ հոդվածի (Մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերով հսկող դատախազի որոշումը) 1-ին մասի համաձայն, մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը քննիչից ստանալուց հետո ... հսկող դատախազը կարող է որոշում ընդունել՝ այն հաստատելու մասին (կետ 1-ին) կամ վերակազմելու մասին, եթե քրեական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզում է, որ անհրաժեշտ է մեղադրանքից հանել առանձին փաստեր կամ ի շահ մեղադրյալի փոխել նրան վերագրվող արարքի իրավական գնահատականը՝ առանց սկզբնական փաստերն էապես փոխելու (կետ 2-րդ), կամ վարույթի նյութերը նախաքննության մարմնին վերադարձնելու մասին, եթե վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզում է, որ անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը, կարճել վարույթը, կասեցնել քրեական հետապնդման ժամկետը կամ կազմել նոր մեղադրական եզրակացություն (կետ 3-րդ): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, «Եթե վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզում է, որ անհրաժեշտ է մեղադրյալին ներկայացված մեղադրանքը լրացնել կամ փոփոխել սկզբնականից էապես տարբերվող փաստերով, ապա հսկող դատախազը նախաքննությունը շարունակելու համար վարույթի նյութերը վերադարձնում է նախաքննության մարմնին:

Փաստորեն, վերը նկարագրված բոլոր կարևորագույն հարցերի առթիվ որոշումների կայացումը տրված է դատախազին, սակայն՝ քննիչի միջնորդության հիման վրա: Թեև

⁹¹ ԵՆ Կարծիք ՔԴՕ նախագծի վերաբերյալ, էջ 40:

Դատախազը կարող է միայն բավարարել կամ մերժել միջնորդությունը, նա չի կարող դուրս գալ դրա սահմաններից, այսինքն՝ փոփոխելու լիազորություն չունի: Մինևույն ժամանակ, մերժումների որևէ չափանիշով սահմանափակված չլինելը, միանշանակ հանգեցնելու է, ինչպես նշվեց, հեռանկարային միջնորդությունների ներկայացման, այսինքն՝ նախապես դատախազի դիրքորոշումը հայցելու միջոցով, ինչի շնորհիվ էլ դատախազի ու քննիչի միջև ստեղծվելու են զուտ աշխատանքային, թիմային հարաբերություններ, որոնք բնորոշ չեն ոչ խառը ոչ էլ ինկվիզիցիոն մոդելի քննիչ-դատախազ հարաբերություններին, այլ միանշանակ՝ 2-րդ մոդելի հարաբերություններ են: **Հետևաբար, առաջարկում ենք ավելի հետևողականորեն ամրագրել դա և դատախազին իրավունք տալ դուրս գալ քննիչի միջնորդության սահմաններից, այսինքն՝ կայացնել սեփական որոշումը: Բոլոր նշված հարցերով միջնորդությունը, մեր նշած դատախազի կողմից մերժման լիազորության անսահմանափակ լինելու պատճառով, կրում է ձևական բնույթ և օրենսդրական կարգավորումները այդ միջնորդություններին պետք է վերաբերեն որպես դատախազի որոշման նախագծի՝ ապագայում, գուցե չկարգավորելով դատախազի կողմից այս հարցերով իր սեփական որոշումները կազմելու տեխնիկական մանրամասները:**

Նույն հետևողական մետեցումը պետք է դրսևորվի նաև մեղադրական եզրակացությունը չհաստատելու դեպքում որոշումներ կայացնելիս: Օրինակ, եթե նշվում է, որ դատախազը որոշում է կայացնում վարույթի նյութերը նախաքննության մարմնին վերադարձնելու մասին, եթե վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզում է, որ անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը, կարճել վարույթը, կասեցնել քրեական հետապնդման ժամկետը կամ կազմել նոր մեղադրական եզրակացություն (կետ 3-րդ), ապա առնվազն այն որոշումները (օրինակ՝ կասեցման մասին), որոնք կայացվելու են իր կողմից, թեկուզ քննիչի միջնորդությամբ, պետք է կայացվեն հենց մինչև վերադարձվելը՝ որպես մեղադրական եզրակացությունը չհաստատելու մասին որոշման առկա հիմք: Հակառակ դեպքում կստացվի, որ դատախազը իր դիրքորոշումն է հայտնում, օրինակ՝ նույն կասեցման մասին, այդ դիրքորոշման պատճառով գործը վերադարձնում է քննիչին, որից հետո քննիչը պետք է դարձյալ միջնորդություն ներկայացնի դատախազին՝ կասեցման որոշում կայացնելու մասին, որի անհրաժեշտությունը դատախազի կողմից նշվել էր ամենասկզբից:

Առաջարկվող կարգավորումները, եթե մի խոսքով ձևակերպենք, ապահովում են դատախազի կողմից նշված հարցերով սեփական որոշումներ կայացնելու հնարավորությունը: Ինչպես այս, այնպես էլ մյուս հարցերով քննիչի միջնորդությունների առթիվ ցանկացած որոշում կայացնելու դատախազի հնարավորությունը, անխուսափելիորեն անդրադառնալու է այդ միջնորդությունների բովանդակությանը, հետևաբար՝ նաև այն գիտելիքներին ու հատություններին, որոնք պահանջվելու են նման միջնորդություն կազմող քննիչից: Արդյունքում, նշված որոշումներով՝ քրեական հետապնդման հարուցում, մեղադրանքի ներկայացում, վարույթի ժամկետի կասեցում և քրեական հետապնդման դադարեցման մասին որոշումների համար անհրաժեշտ բոլոր իրավաբանական գնահատականները կազմվելու են մինչդատական վարույթի միակ իրավաբանի՝ դատախազի կողմից:

2.2.2.3. Անձի սահմանադրական իրավունքների սահմանափակման միջնորդությամբ դատարան դիմելու դատախազի բացառիկ իրավունքը և դատախազի կողմից կիրառվող իրավունքի սահմանափակումները

Դատարանի թույլտվությամբ կիրառվող խափանման միջոցները

ՔԴՕ Նախագծի 285-րդ հոդվածի 1-ին համաձայն, «Խափանման միջոց կիրառելու, ինչպես նաև կալանքի կամ տնային կալանքի ժամկետը երկարացնելու վարույթը հարուցվում է քննիչի միջնորդության հիման վրա», իսկ 287-րդ հոդվածի համաձայն, «խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությամբ անցկացվում են դատալսումներ՝ կողմերի հավասարության և մրցակցության հիման վրա, քննիչի և մեղադրյալի պարտադիր մասնակցությամբ» (մաս 1-ին), և այդ դատալսումներին «մասնակցության իրավունք ունեն հսկող դատախազը, ինչպես նաև մեղադրյալի պաշտպանը և օրինական ներկայացուցիչը» (մաս 3-րդ):

Ինչպես տեսնում ենք, դատարանի կողմից թույլատրվող խափանման միջոցները ընտրելու թույլտվության միջնորդություն հարուցվում է քննիչի, այլ ոչ թե դատախազի կողմից, այսինքն՝ հարցը կարգավորված է քննիչի 1-ին մոդելի շրջանակներում: Մեր կարծիքով, սակայն, եթե քրեական հետապնդման հարուցումը, որի հիման վրա ներկայացվում է մեղադրանքը, կատարվում է դատախազի կողմից՝ ստեղծելով անձի սահմանադրական իրավունքերի սահմանափակման, այն է՝ խափանման միջոցների, այդ թվում՝ կալանավորման ու տնային կալանքի կիրառման **հնարավորություն**, իր ներգործության աստիճանով ավելի պակաս միջամտող է, քան նույն այդ **հնարավորության իրացումը**՝ կալանավորման կամ տնային կալանքի միջնորդության քննարկման արդյունքում կայացվող դատարանի որոշումը: Հետևաբար, անհրաժեշտ է, որպեսզի անձի իրավունքների, տվյալ դեպքում անձի ազատության և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման **ռեալ հնարավորություն առաջացնելու**, այն է՝ **դատարանին միջնորդություն ներկայացնելը կատարվի դատախազի կողմից: Բացի այդ, սա սկզբունքորեն ավելի հետևողական մոտեցում կլինի ամրագրելով այս երկու հարցերում դատախազի դերակատարության միևնույն աստիճանը:** Արդյունքում, այս հարցի կարգավորումն ավելի կհամապատասխանի 2-րդ մոդելին, որին իրականում Նախագիծը ձգտում է: Իսկ այդ ձգտման **ամենակարևոր** ցուցանիշը, ինչպես նշեցինք, դա քննիչի՝ որպես դատախազի վկա հանդես գալու կարգավորումն է: Հետևաբար, որևէ փուլում, **այս մոդելի շրջանակներում, չի կարող լինել ապագա վկայի և դատալսումների կողմի սուբյեկտների միավորումը:**

ՔԴՕ Նախագծի 38-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը, սակայն, որոշ առումով, մեղմում է այս վիճակը՝ սահմանելով, որ դատախազը՝

«16) սույն օրենսգրքով սահմանված դեպքերում իրավասու է հետ վերցնել քննիչի՝ դատարան ներկայացրած միջնորդությունը կամ մասնակցել դատական երաշխիքների վարույթին»:

Այսպիսով, դատախազի այս հարցում իրավագործումը կարևոր է **քննիչի հետ ունեցած փոխհարաբերությունների տիրույթում:** Միաժամանակ, Նախագծի առանձին կարգավորումներ, որոնք անփոփոխ են գործող ՔԴՕ-ի համեմատ, փոփոխության կարիք ունեն՝ դատախազի իրավունքները նվազեցնելու ուղղությամբ՝ **դատարանի հետ ունեցած փոխհարաբերությունների տիրույթում:** Խոսքը վերաբերում է այն կալանավորումը և տնային կալանքը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում դատախազի կողմից այն փոխելու լիազորությանը: Այսպես, Նախագծի 117-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, հետևյալը

«Մինչդատական վարույթում դատարանի կիրառած խափանման միջոցը կարող է փոխել կամ վերացնել հսկող դատախազը, իսկ հսկող դատախազի համաձայնությամբ կիրառված խափանման միջոցը՝ քննիչը՝ հսկող դատախազի համաձայնությամբ»:

Այս մոտեցումը քննադատելի է մի քանի առումներով: Նախ, միջազգային հանրահայտ չափորոշիչների համաձայն, դատական ակտերը կարող են վերանայվել միայն **դատական**

վերանայման ընթացակարգերում: Դատարանի տված թույլտվությունը, որպես դատարանի որոշում, ենթակա է միայն կատարման, այլ ոչ թե փոփոխման կամ վերացման, ինչն ընդունված է իրարից քրեական արդարադատության համակարգերով սկզբունքորեն տարբերվող ԱՄՆ-ում և ՌԴ-ում, ինչը նշանակում է, որ **դատախազը իրավունք չունի փոխել դատարանի կողմից նշանակված խափանման միջոցը: ԱՄՆ դատական պրակտիկայում դա կհամարվի անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ՝ վերջինիս որոշումները չկատարելու ձևով:** Վերացման կամ փոփոխման համար անհրաժեշտ է միջնորդություն ներկայացնել դատարանին, հակառակ դեպքում՝ դատախազի կողմից կալանավորումը վերացնելը հանդիսանում է այն կիրառելու մասին դատարանի **որոշման վերացում ու չկատարում:**

Հաշվի առնելով, սակայն, որ կալանավորումը կամ տնային կալանքը ընտրելու/երկարացնելու մասին որոշումը իր կայացման ժամանակ դատախազի կողմից համարվել է օրինական և հիմնավորված, սակայն **դադարել է այդ որոշման հետակա կատարման անհրաժեշտությունը**, ապա դատարանի նշանակած խափանման միջոցի **դատական վերանայումը** ավելի ճիշտ կլինի ոչ թե դատախազի կողմից այն վերադաս դատարանին բողոքարկելու, այլ՝ նրա կողմից նույն դատարանին միջնորդություն ներկայացնելու միջոցով, որտեղ նշված կլինեն կալանավորման կամ տնային կալանքի **գործողությունը** դադարեցնելու հիմքերը, այն է՝ **անձին կալանքի տակ պահելու հիմքերի ժամկետից շուտ վերանայլ:**

Սա, պետք է ասել նաև, ինքնին հետադարձ կերպով կնպաստի անհիմն միջնորդությունների կանխմանը, ինչպես նաև՝ միջնորդվող կալանավորման/կալանքի ժամկետի ավելի պատճառաբանված հիմնավորմանը: **Դատական իշխանության անկախության ու դերի կարևորության տեսակետից, ողջամիտ դիտորդի մոտ կարող է կասկած առաջանալ դատարանի հեղինակության վերաբերյալ, եթե դատարանի օրինական ուժ ունեցող որոշումը կիրառվելու փոխարեն, փոխվի դատախազի որոշմամբ:** Այս կասկածը ողջամտորեն էլ ավելի է խորանում, երբ կալանքի հիմքերի օբյեկտիվորեն փոխված չլինելու պայմաններում, դատախազը վերացնում է կալանքը՝ ըստ էության անտեսելով այն հիմքերը, որոնցով նա դատարանին միջնորդում էր կալանք ընտրելու **համար:** Պրակտիկայում եղել են դեպքեր, երբ օրինակ 2 ամիս ժամկետով կալանքի մասին դատարանի որոշումից ընդամենը օրեր անց, առանց որևէ ակնհայտ փոփոխությունների, դատախազը անձին ազատել է կալանքից: Ողջամիտ դիտորդը իրավունք ունի իմանալու, թե ինչը փոխվեց. մեղադրյալը տվեց խոստովանական ցուցմունք, համագործակցեց՝ այլ կերպ (այսինքն՝ դատարանն օգտագործվեց նախաքննության նպատակների համար), թե օրինակ՝ եղել են այլ կոռուպցիոն դրսևորումներ: **Այս բոլոր հարցերին պատասխանը պետք է տա դատարանի նոր պատճառաբանված որոշումը, որն այն պետք է կայացնի դատախազի՝ նույնքան պատճառաբանված՝ կալանքը վերացնելու կամ փոփոխելու թույլտվություն տալու մասին միջնորդությունը:**

Կալանավորումը ժամկետից շուտ դադարեցնելը միայն դատարանի նոր որոշմամբ տեղի ունենալու պահանջը չպետք է կիրառվի, սակայն, այն դեպքերում, երբ առկա են կալանքից ազատելու այն հիմքերը, որոնք նախատեսված են ՔԴՕ Նախագծի 120-րդ հոդվածով (բացառությամբ, իհարկե, 1-ին մասին 1-ին կետով նախատեսված հիմքի՝ «վերացել է անձին կալանքի տակ պահելու հիմքը կամ անհրաժեշտությունը», ինչպես նաև նույն մասի 7-րդ կետով նախատեսված հիմքի (մեղադրյալի կողմից կամ ի շահ նրա ներկայացվել են մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող՝ դատարանի սահմանած այլընտրանքային երաշխիքները), որոնք ինչպես ասացինք, որպես փաստական հանգամանքներ դեռ պետք է հաստատվեն, այսինքն՝ հիմնավորվեն դատախազի կողմից

դատարանին ներկայացվող՝ անձին կալանքից ազատելու/կալանքը վերացնելու որոշում կայացնելու միջնորդության մեջ): Մյուս կողմից, կալանքի վերացման մյուս հիմքերը (120-րդ հոդվածի 1-ին մասի 2-6 կետեր) դատարանի կողմից կալանքը վերացնելու, այսպես կոչված, **փաստի ուժով** առաջացող հիմքեր են: Դրանք են՝

- «2) մեղադրյալի նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը.
- 3) մեղադրյալն արդարացվել է.
- 4) դատարանը մեղադրյալի նկատմամբ նշանակել է ազատությունից գրկելու հետ չկապված պատիժ.
- 5) լրացել է դատարանի կողմից սահմանված կալանքի ժամկետը և չի ստացվել այն երկարացնելու մասին դատարանի որոշումը.
- 6) լրացել է անձին կալանքի տակ պահելու սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը»:

Ամեն դեպքում, կալանքից ազատելու հիմքերի տարբերակումը՝ փաստարկելի (arguable claim) հիմքերի և փաստի ուժով (ipso facto) առկա, այսինքն՝ ոչ փաստարկելի հիմքերի, շատ կարևոր է մի կողմից՝ կալանավորման նշված *արտաքին* փաստերի ուժով *դադարելը*, և մյուս կողմից՝ կալանավորման հիմքերի առկայության կամ պահպանվելու մասին *հետևությունների* հիման վրա *դադարեցնելը* տարբերակելու համար:

Նշվածի ուժով, ավելորդ է դառնում նաև Նախագծի 41-րդ հոդվածի (Քննիչի լիազորությունները) 6-րդ կետով նախատեսված լիազորությունը՝

«6) հսկող դատախազի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ ազատ է արձակում կալանավորված մեղադրյալին»:

Մյուս կողմից, կալանավորման պայմանի և հիմքերի հարցերում վերջին տարիների դատական պրակտիկայում դատական նորմաստեղծ ակտիվիզմը գնացել է մեթոդաբանական առումով սխալ ուղղությամբ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի կայուն հաստատված նախադեպային իրավունքի համաձայն՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու/երկարացնելու թույլտվության քննարկումից վերածվել է արդարադատական գործառույթի՝ մեղադրանքի հիմնավորվածությունը ստուգելու միջոցով: Պատճառն այն է, որ նշված ստուգման ընթացքում քննարկվում է հիմնավոր կասկածը, որը պետք է ապացուցողական չափորոշիչ ծառայի կալանքի նիստում ապացուցման առարկան (առնչակցությունը) հիմնավորելու համար, վեր է անվել բուն ապացուցման առարկայի, ինչի արդյունքում էլ դատարանները քննում են ոչ միայն կալանքի հիմքերը (ոչ իրավաչափ դատավարական վարքագծի հնարավոր դրսևորումները), այլ՝ մեղադրանքն ըստ էության: Քանի որ կալանավորումը որպես խափանման միջոց, ըստ էության, այդպիսով դառնում է մեղադրանքի հիմնավորվածության և օրինականության մինչդատական ստուգման ձև, այս հարցին կանդրադառնանք նաև սույն Հետազոտության 2.3.1 կետում՝ «Մեղադրանքի նախնական դատական ստուգումը»: Այս հարցերի ճիշտ կարգավորումը խիստ վերաբերելի է դատախազի գործառույթներին՝ թե՛ մինչդատական վարույթում խափանման միջոցների ընտրությունը հիմնավորելիս, և թե՛ հիմնական դատալուծումների ընթացքում մեղադրանքը պաշտպանելիս:

Դատախազը չպետք է որևէ մտահոգություն ունենա, որ դատարանը կալանքը քննարկելու միջոցով կարող է թուլացնել մեղադրանքը: Իսկ ՎԴ դրական վերաբերմունքը դրան արդեն իսկ պարզ է նրանից, որ ՎԴ-ն, հիմնավոր կասկածի հիմք տվող տեղեկություններին և փաստերին, ավելացնում է, ի տարբերություն, ՄԻԵԴ-ի, նաև «ապացույցներ» բառը:

Եվ այսպես, ՀՀ ՎԴ կողմից հաստատված կայուն նախադեպային դիրքորոշումներն են՝

«20. անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավոր կասկած առ այն, որ նա իրավախախտում է կատարել, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքում կասկածը պետք է լինի ողջամիտ...»:

21. կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին»⁹²:

«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ **եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է**: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, **ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին**»⁹³:

Խնդրո առարկայի վերաբերյալ ՄԻԵԴ դիրքորոշումները, որոնք, ի դեպ, վկայակոչված են նույն *Վահրամ Գևորգյանի գործով* որոշման մեջ հետևյալն են՝

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանության համաձայն՝ ողջամիտ կասկածի չափանիշը հիմնվում է փաստերի կամ տեղեկությունների առկայության վրա, որոնք **հնարավորություն կտային անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լիներ հանցանքը**: Մակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը ... հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում (տես՝ *Գ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի (K.-F. v. GERMANY) գործով 1997թ. նոյեմբերի 27-ի վճիռը, կետ 57*)»⁹⁴:

Մեջբերված նախադեպային դիրքորոշումները ՀՀ ՎԴ շատ մեծ դատական ակտիվիզմի դրսևորումներ են: Առաջին և երկրորդ պարբերությունների հետ կապված այստեղ կարևոր է նշել հետևյալը: Վճռաբեկ դատարանը անհարկի նույնացրել է ապացուցման առարկան և ապացուցման չափորոշիչը, ինչի արդյունքում **մինչդատական վարույթում, այսինքն՝ այն փուլում, որտեղ դատարանն իրավասու է իրականացնել ոչ թե արդարադատություն (քրեական վեճի լուծում), այլ դատական իշխանության իրացման մյուս ձևը՝ դատական վերահսկողություն, ինչը ուղղակիորեն ազդում է դատախազի՝ թե որպես մինչդատական վարույթի սուբյեկտի, թե որպես հանրային մեղադրողի դատավարական ճանաչողության և արդյունքների հիմնավորվածությունը դատարանում ապացուցելու ողջամիտ հեռանկարի վրա**: Եվ այստեղ նպատակահարմար ենք գտնում ներկայացնել գործնական և տեսական բնույթի հետևյալ մտահոգությունները՝

- Նախևառաջ, կալանքի միջնորդությունը հիմնավորող անձից, այդ թվում՝ դեռևս՝ **նաև** դատախազից ակնկալվում է, կալանքի անհրաժեշտության ապացուցելու պարտականությունն իրականացնելիս, ներկայացնել նաև **ապացույցներ**: Մա շատ լուրջ պահանջ է մեղադրանքի կողմի համար, քանի որ կալանքի միջնորդությանը ներկայացվում է **ոչ թե պարզապես լեզիտիմ կարծիքի** մակարդակի պահանջ, այլ նաև **զիտելիքի, որի բնորոշ հատկանիշներն են համընդհանրությունն ու անհրաժեշտությունը**: Ապացույցները չեն կարող այս փուլում վկայակոչվել մի քանի պատճառով՝ 1) չի լուծված դրանց վերաբերելիության և թույլատրելիության հարցը,

⁹² Տես, ի թիվս ՎԴ բազմաթիվ այլ որոշումների՝ ՀՀ ՎԴ 24.02.2011թ. որոշումը Վահրամ Գևորգյանի գործով:

⁹³ Նույն տեղում, կետ 21:

⁹⁴ Նույն տեղում, կետ 22:

2) ապացույցներով հաստատվող փաստի հաստատման հիմքում բացի ապացույցներից դրվում են նաև այլ «փաստեր և տեղեկություններ», և 3) ապացույցը որպես իրականության անձնական կամ ֆիզիկական արտացոլում/հետք, ունի օբյեկտիվության (այսինքն՝ հետագոտվող իրականությունն արտացոլելու համարժեքության) շատ ավելի մեծ կանխավարկած, քան այլ «փաստերն և տեղեկությունները» և չպետք է ակնկալվի նման համարժեքություն չպահանջող մինչդատական վարույթում:

- Այնուհետև, պետք է հստակ տարանջատել թե մինչդատական, և թե դատական վարույթներում պահանջվող ապացուցման շեմերը կամ չափորոշիչները այդ վարույթներում ապացուցման առարկաներից: **Հիմնավոր կասկածը ապացուցման առարկա չէ, այլ ապացուցվածության չափորոշիչ՝ ճիշտ այնպես, ինչպես դատաքննության ընթացքում ապացուցման առարկան ամբաստանյալի մեղավորությունն է, այլ ոչ թե դրա վերաբերյալ ողջամիտ կասկածներից զերծ ներքին համոզմունքի գոյությունը:** Ապացուցման առարկան կալանքի վարույթում անձի առնչակցությունն է, իսկ դատաքննության ժամանակ՝ անձի մեղավորությունը, որոնք հաստատվում են, համապատասխանաբար՝ «հիմնավոր կասկած» և «ողջամիտ կասկածից վեր» չափորոշիչներով:
- Կարծում ենք, որոշակի թյուրըմբռնման պատճառ է եղել նաև կալանքի համար դատական պրակտիկառում կիրառված ապացուցման չափորոշիչի սխալ թարգմանությունը, երբ «probable cause» եզրույթը, որն իրականում նշանակում է ողջամիտ դիտորդի կողմից այս կերպ կարծելու «հիմնավոր պատճառ» կամ առնչակցության հավանականությունն ընդունելու հիմք, պարզապես ընկալվել է որպես հանցագործություն կատարելու մեջ հիմնավոր կասկած՝ «reasonable suspicion», որը մեզանում նույնպես կիրառվում է, օրինակ՝ անմիջականորեն ծագած կասկածի հիման վրա անձին ձերբակալելիս: Նշված «probable cause» չափորոշիչն, ընդ որում, կիրառվում է ոչ միայն կալանքի ընտրության, այլև բնակարանի խուզարկության, հաղորդակցությունների վերահսկման թույլտվությունների հիմնավորման ժամանակ, այն է՝ փաստերի և տեղեկությունների ամբողջություն, որոնք թույլ են տալիս ողջամիտ դիտորդին կամ որ նույն է՝ թույլ են տալիս կողմնակի դիտորդին **ողջամտորեն** կարծելու, որ հավանական է անձի բնակարանում, հաղորդակցության մեջ հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ ապացույցների գոյությունը:
- Ավելին, նույն ապացուցողական չափորոշիչը կամ շեմը կիրառվում է հենց կալանքի անհրաժեշտության ապացուցման ժամանակ՝ երբ հիմնավորվում են այսպես կոչված «կալանավորման հիմքերը»՝ փախուստ, նոր կամ պարզապես՝ հանցագործության կատարում և այլն: Դարձյալ ապացուցման պարտականություն կրող կողմը պետք է ներկայացնի փաստեր և տեղեկություններ, որոնք կողմնակի դիտորդին թույլ կտան ողջամտորեն կարծելու, որ կալանավորումը չընտրելու դեպքում մեղադրյալի կողմից դատավարական ոչ-պատշաճ վարքագիծ դրսևորելու մասին դատախազի ունեցած մտահոգությունների նյութականացումը հնարավոր է: Եվ քանի այս սա նույն չափանիշն է, ինչ որ անձի առնչակցությունն ապացուցելու ժամանակ, ապացուցման հիմքում դրվում են իրականության արտացոլման համարժեքության նույն՝ կարծիքի մակարդակ թույլատրող «փաստերը և տեղեկությունները», և ոչ երբեք՝ ապացույցները: Կալանավորման հիմքերը չեն կարող հիմնավորվել ապացույցներով՝ նաև այն պատճառով, ապացույցները դա իրականության արտացոլումն են, իսկ մեղադրյալի ոչ պատշաճ դատավարական վարքագիծը ընդամենը իրականության անցանկալի զարգացման տարբերակ: Սա

ընդունում է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը⁹⁵, մենք ընդամենն ասում ենք, որ հիմնավոր կասկածը ապացուցման առարկա չէ, այլ առնչակցության ապացուցման չափորոշիչ կամ շեմ, որը գործում է կալանքի հիմքերի առկայությունը, բնակարանի խուզարկության հիմքերի առկայությունը հիմնավորելիս, ենթադրում է իրականության ճանաչման կամ արտացոլման համարժեքության նույն մակարդակի արդյունքներ՝ *կարծիք*, հետևաբար՝ և այդ կարծիքի առկայության լեգիտիմությունը փաստող նույն մակարդակի գործիքներ փաստեր և տեղեկություններ, ոչ երբեք՝ ապացույցներ:

Այսպիսով, հիմնավոր կասկածը ապացուցելը նույնքան անհնար է և չի կարող լինել կալանքի նիստում դատախազի կողմից հիմնավորման առարկա, որքան չի կարող ապացուցման առարկան լինել հիմնական դատալսումների վարույթում՝ անձի մեղավորության մասին ողջամիտ կասկածների բացակայությունը: Խափանման միջոց ընտրելիս, ապացուցվում է անձի առնչակցությունը, որը ապացուցված է համարվում հիմնավոր կասկածի կամ ավելի ճիշտ հավանական պատճառի շեմի հիման վրա, իսկ հիմնական դատալսումներում ապացուցվում է ոչ թե անձի մեղավորության առթիվ ողջամիտ կասկածների բացակայությունը, այլ՝ դրա հիման վրա՝ անձի մեղավորությունը, ի դեմս հակառակի վերաբերյալ ողջամիտ կասկածների բացակայության:

Ապացուցման շեմերը ոչ թե ապացուցվելիք առարկան են, այլ ճանաչողության պահանջվող արդյունքների առարկայացման միջոցը՝ որպես դատավարական ճանաչողության սուբյեկտի մոտ անհրաժեշտ այն համոզմունքի առկայությունը, որը կարող է ստանալ պահանջվող դատական որոշման ձևը, այսինքն՝ կարող է դատավարականացվել, մի դեպքում կալանավորումը թույլ տալու, մյուս դեպքում անձին դատապարտելու մասին որոշմամբ:

Մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը կամ ՔԴՕ տերմինաբանությամբ՝ **դատական երաշխիքների վարույթում դատական իշխանությունն իրականացվում է ոչ թե արդարադատություն, այլ դատական վերահսկողության իրականացման ձևով:** Դատարանի՝ մեղադրանքի օրինականության և հիմնավորվածության ստուգման իրավունքի առկայությունը ենթադրում է բոլորովին այլ դատավարական փուլ: ԱՄՆ-ում այդ փուլն, օրինակ, դատի տալու նպատակով մեղադրական եզրակացությունը երդվյալների մեծ ժյուրիի կողմից հաստատելն է: Մրա մասին էլ առանձին կլոսովի Հետազոտության 2.3.1՝ «Մեղադրանքի նախնական դատական ստուգումը» կետում:

Կարծում ենք, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունները կնպաստեն քննիչ-դատախազ, դատախազ-դատարան արդյունավետ հավասարակշռության հաստատմանը:

Իրավունքների այլ սահմանափակումներ

Այս կետում կանդրադառնանք Նախագծի կարգավորումներին՝ հաշվի առնելով, որ առավել մեծ կարևորություն են ներկայացնում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության

⁹⁵ «... կալանավորման կիրառման հիմքերն ունեն **կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ:** Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը», (ՀՀ ՎԴ 30.08.2007թ. որոշումը **Մրամ Ճուղորչանի գործով, կետ 4):**

արդյունավետության խնդիրները, որոնք նաև քննարկվում են ապացույցների թույլատրելիությանը նվիրված նախնական դատալուսմաններին վերաբերող կետում (դատախազի համար օպերատիվ որոշ տվյալների հասանելիությունը՝ որպես երաշխիք դատական հսկողության): Ըստ Նախագծի (Հոդված 291. Ապացուցողական գործողությունների կատարման դատական երաշխիքների շրջանակը), դատարանը քննում է սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որևէ քննչական գործողություն կատարելու վերաբերյալ միջնորդությունը (կետ 1), գաղտնի քննչական գործողություն (փաստացի՝ դատարանի թույլտվությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական գործողություններ) կատարելու վերաբերյալ միջնորդությունը (կետ 2), և գաղտնի քննչական գործողության ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը (կետ 3): Նախագծի 209-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բացառապես դատարանի որոշման հիման վրա են կատարվում՝ բնակարանում խուզարկությունը և առգրավումը, դեպքի վայր չհանդիսացող բնակարանում զննումը և դեպքի վայր հանդիսացող բնակարանում հետազոտ զննումը, թվային խուզարկությունը, նամակագրության և հաղորդակցության այլ ձևերի առգրավումը, բժշկական, նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերի և առարկաների առգրավումը: Նախագծի 241-րդ հոդվածի համաձայն, գաղտնի քննչական գործողություններն են՝ ներքին դիտումը, արտաքին դիտումը, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդումների վերահսկումը, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը, ֆինանսական գործարքների վերահսկումը, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը⁹⁶:

Նախագծի 292-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «ապացուցողական գործողություն կատարելու, ինչպես նաև գաղտնի քննչական գործողության ժամկետը երկարացնելու վարույթը հարուցվում է **քննիչի միջնորդության հիման վրա**»: Իսկ ըստ Նախագծի 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «միջնորդության քննությունն իրականացվում է դռնփակ դատական նիստում՝ միջնորդությունը ներկայացրած անձի պարտադիր մասնակցությամբ: **Դատական նիստին կարող է մասնակցել հսկող դատախազը, իսկ գաղտնի քննչական գործողություն կատարելու կամ դրա ժամկետը երկարացնելու միջնորդության դեպքում՝ նաև համապատասխան հետաքննության մարմնի պետը կամ հետաքննիչը**, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն, «միջնորդության քննության արդյունքում դատարանի կայացրած որոշումը պատշաճ ձևով տրվում է միջնորդությունը ներկայացրած քննիչին՝ ոչ ուշ, քան որոշման եզրափակիչ մասը հրապարակելուց հետո 3 ժամվա ընթացքում»:

⁹⁶ «2019-2022թթ. ՀՀ հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի» 43-րդ կետով նախատեսվում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածի և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծումը, նպատակ ունենալով «Իրականացնել է համապատասխան ուսումնասիրություն», ներկայացնել առաջարկ առկա օրենսդրական անհամապատասխանությունների և դրանց վերացման առկա հնարավորությունների վերաբերյալ և ՕՀԳ մասին օրենքի 30-րդ հոդվածի և իրավակիրառ պրակտիկայի միջև հակասության վերացումը: ՔԴՕ Նախագիծը իր 251-րդ հոդվածում (Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը) այս հարցով, որը նաև ՕՀԳ մասին օրենքի 30-րդ հոդվածի կարգավորման առարկան է, հստակ կարգավորումներ է առաջարկում, մասնավորապես՝ որ «2. ... «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները սույն օրենսգրքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 200-րդ, 201-րդ, 311-րդ, 311.1-րդ, 311.2-րդ, 312-րդ, 312.1-րդ, 312.2-րդ, 313-րդ հոդվածներով սահմանված իմաստով» և որ այս «3. ... գաղտնի քննչական գործողության արդյունքները հավաստվում են բացառապես տեսաձայնագրման միջոցով»: Այնուամենայնիվ, ճիշտ կլիներ, որ այս հանցագործության նմանական ՕՀՄ-ն չսահմանափակվեր միայն կաշառքով, այլ ընդհանրապես կոչվեր՝ «հանցագործության նմանակում»՝ նախատեսելով **թակարդման և պրովոկացիայի դեմ ՄԻԵԴ-ով (տես, ի թիվս այլ աղբյուրների՝ Էդվարդս ու Լյուսիան ընդդեմ ՄԹ**, (Իմումներ ՀՀ-39647/98 և 40461/98), *Edwards and Lewis v. UK, 2004թ. հոկտեմբերի 27, կետ 46*, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-67226>) տրամադրվող երաշխիքները, որոնց քննարկումը այս Հետազոտության շրջանակներից դուրս է:

Փաստորեն, ապացուցողական գործողությունների, այն է՝ ՔԴՕ Նախագծի տերմինաբանությամբ՝ քննչական և գաղտնի քննչական գործողությունների թույլտվություն տալու վարույթները հարուցվում են բոլոր դեպքերում **քննիչի միջնորդությամբ**: Մա, այսինքն՝ ՕՀԳ իրականացնող միարմինների կողմից միջնորդությամբ դատարան դիմելու փոխարեն, այժմ այդ միջնորդությունը ներկայացնելը քննիչին վերապահելը այս առումով նաև **դրական քայլ է**: Այն ուղիղ բխում է այն նոր կարգավորումներից, որ հետաքննությունը իրականացվելու է բացառապես նախաքննության շրջանակներում⁹⁷:

Դատախազը, սակայն, ցանկության դեպքում, դատախազը կարող է **մասնակցել** միջնորդության դատական քննությանը: «Մասնակցել» եզրույթը իրավաբանական դոկտրինում և լեզվատրամաբանական վերլուծությամբ նշանակում է կոնկրետ վարույթի շրջանաներում **արդյունավետորեն** իրացնել սուբյեկտի իրավունքներն ու պարտականությունները⁹⁸, տվյալ դեպքում՝ դատախազի լիազորությունները: Այս առումով, դատախազական պրակտիկայում առաջացել են խնդիրներ, որոնք թույլ չեն տալիս «մասնակցող» դատախազին արդյունավետ իրացնել իր «մասնակցության» իրավունքը, այսինքն՝ ունեցած լիազորությունները՝ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում ընդհանրապես և անձի իրավունքների սահմանափակման օրինականության նկատմամբ դատական վերահսկողության այս վարույթում մասնավորապես: Այդ խնդիրների մասին նշվել է ՀՀ ԳԴ ԱԺ 2020 Հաղորդման մեջ՝

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազը հսկողություն է իրականացնում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Դատախազի կողմից հսկողության ենթակա չեն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման և իրականացման եղանակները: Նշված լիազորություններն իրականացնելիս դատախազի պահանջով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ղեկավարները պարտավոր են նրան ներկայացնել այդ միջոցառումների անցկացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն: ... Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային աշխատակիցների և այդ մարմինների հետ գաղտնի համագործակցող անձանց վերաբերյալ տեղեկությունները դատախազին ներկայացվում են միայն այդ անձանց համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ առաջ է գալիս նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը»⁹⁹:

«[Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ (ՕՀՄ) իրականացնելու] միջնորդությունը քննարկում է դատավորը միանձնյա: ... Դատավորի պահանջով նրան են ներկայացվում նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող այլ նյութեր՝ **բացառությամբ այն դեպքերի, երբ կա պետական կամ ծառայողական գաղտնիքի խախտման վտանգ կամ, երբ դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք**,

⁹⁷ Տես՝ Նախագիծ, հոդված 6, կետ 6՝ «հետաքննություն՝ հետաքննության մարմնի կողմից նախաքննության ընթացքում իրականացվող և դրան օժանդակող գործունեություն, որը ներառում է գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը» և կետ 21՝ «հետաքննության մարմին՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պետական մարմնի համակարգում գործող և օպերատիվ-հետախուզական գործառնություններ իրականացնող ստորաբաժանման ղեկավար (հետաքննության մարմնի պետ) և աշխատակիցներ (հետաքննիչներ), ովքեր նախաքննության շրջանակներում իրավասու են կատարելու գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ»:

⁹⁸ «Քրեադատավարական գործունեության սուբյեկտները դրանք քրեական դատավարության մասնակիցներն են՝ պետական մարմիններ, պաշտոնատար անձինք, հասարակական կազմակերպություններ, քաղաքացիներ, որոնք քրեադատավարական օրենքով իրենց ընձեռնված իրավունքների օգտագործմամբ և իրենց վրա դրված պարտականությունների կատարման միջոցով իրականացնում են քրեադատավարական որոշակի ֆունկցիաներ», տես՝ М.С. Строгович, Курс советского уголовного процесса, т. 1, М. 1968, с. 203.

⁹⁹ ԳԴ Հաղորդում, էջ 71:

համապատասխան տեղեկությունների ստացման աղբյուրները և դրանց ստացման եղանակները: Օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու հիմքերի բավարար լինելն ստուգելու նպատակով դատավորը կարող է համապատասխան պաշտոնատար անձից պահանջել բացատրություններ և լրացուցիչ նյութեր:

Օպերատիվ նշված տեղեկատվության բացարձակ անհասանելիությունը թե՛ դատախազի, և թե՛ դատավորի համար չի նպաստում, համապատասխանաբար՝ դատախազական հսկողության ու դատական վերահսկողության արդյունավետությանը և մարդու իրավունքների պաշտպանությանը հետևյալ ընթացակարգերում/հարցերում՝

1. Դատախազի կողմից ՕՀՄ-ների կամ ըստ Նախագծի՝ գաղտնի քննչական գործողությունների առթիվ դատարանի որոշումների բողոքարկումը, որի լիազորությունը վերապահված դատախազին (գործող ՔԴՕ 289-րդ հոդված՝ 297 և 288-րդ հոդվածներին հղումով, և Նախագծի 300-րդ հոդվածի 1-ին մաս՝ 299-րդ հոդվածի 2-րդ մասին հղումով): Պետք է նշել, որ Նախագծով դատախազի կողմից այս հարցերով բողոք ներկայացնելու լիազորություն ուղիղ նախատեսված չէ ոչ ՔԴՕ 38-րդ հոդվածում, որն ամրագրում է դատախազի մինչդատական վարույթի լիազորությունները և ոչ էլ դատական երաշխիքների վարույթում, այսինքն՝ նաև 39-րդ հոդվածով, որն ամրագրում է դատախազի դատական վարույթի լիազորությունները. «Սույն օրենսգրքի 299-րդ հոդվածով նախատեսված մինչդատական ակտերի դեմ բողոքներ կարող է ներկայացնել վարույթի մասնավոր մասնակիցը, ինչպես նաև ցանկացած այլ անձ, եթե հիմնավորում է իր իրավաչափ շահերի նկատմամբ այդ ակտի անհամաչափ ներգործությունը» (հոդված 300, մաս 1-ին), «Դատական բողոքարկման ենթակա են նաև մինչդատական այն ակտերը, որոնց վիճարկումը դատաքննության ընթացքում անհնար է լինելու կամ բողոքարկողին ակնհայտորեն զրկելու է իր իրավաչափ շահերն արդյունավետ պաշտպանելու իրական հնարավորությունից» (299, մաս 2-րդ) և «Դատախազն իրավունք ունի ... սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով բողոքարկել դատական ակտերը» (հոդված 300, մաս 1-ին, կետ 9):

2. ՕՀԳ մարմինների որոշումների և գործողությունների դատական բողոքարկումը, որը ՀՀ ՔԴՕ 290-րդ հոդվածի համաձայն, կատարվում է՝ «եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը բավարարելուց հետո¹⁰⁰: Ինչպես իրավացիորեն այս մասին նշվում ԳԴ Հաղորդման մեջ՝

«Նշված իրավակարգավորումներից հետևում է, որ մի կողմից դատախազին վերապահված են օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու մասին դատական ակտերի բողոքարկման, բերված բողոքների քննությանը մասնակցելու, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների կամ գործողությունների դեմ բերված բողոքները քննարկելու լիազորություն, սակայն նշված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ստացման /իրազեկվածություն դատարան ներկայացված միջնորդությունների և դրանց քննարկման արդյունքում կայացված դատական ակտերի վերաբերյալ/, քննարկման, հայտնաբերված խախտումների արձանագրման, դրանք թույլ տված անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումն ապահովելու, խախտումները վերացնելու հստակ կառուցակարգեր, բողոքների քննության արդյունքում ընդունվող որոշումների շրջանակ նախատեսված չէ:¹⁰¹

¹⁰⁰ ՀՀ վճռաբեկ դատարանը 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԱԴ/0008/11/10 որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) օրենքով նախատեսված դեպքերում դատարանը լիազորված է քննել և լուծել քննիչի որոշումների և գործողությունների դեմ բողոքները, սակայն դատական պաշտպանության իրավունքի ծագման համար անհրաժեշտ է, որպեսզի բավարարվի օրենքով սահմանված «...եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը: Ընդ որում, նշված որոշումների և գործողությունների դեմ բողոքները կարող են ներկայացվել դատարան, եթե տեղեկություն է ստացվել դատախազի կողմից բողոքը մերժելու մասին, կամ եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել», տես՝ ԳԴ Հաղորդում, էջ 72-73:

¹⁰¹ ԳԴ Հաղորդում, էջ 66-70:

ԳԴ Հաղորդման մեջ վկայակոչած՝ սկզբում դատախազին բողոք ներկայացնելու իրավակարգավորումների մասով, պահպանվում են նաև Նախագծով՝

«Սույն օրենսգրքի 299-րդ հոդվածով նախատեսված մինչդատական ակտերի դեմ բողոքները կարող են ներկայացվել դատարան միայն իրավասու դատախազին բողոքարկելու և նրա կողմից բողոքը չբավարարելու դեպքում՝ բացառությամբ, երբ վիճարկվում է ձեռքարկվումը կամ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի վարությամբ ակտը» (հոդված 300, մաս 2-րդ):

ԵՄ ՔԴՕ արդեն վկայակոչված կարծիքում Նախագծի այս դրույթի մասին սկզբում արտահայտվել էր հետևյալ մեկնաբանությունը, որ՝

«270. Պահանջը, որ մինչդատական ակտերի դեմ բողոքները կարող են ներկայացվել դատարան միայն իրավասու դատախազին բողոքարկելու դեպքում, արտացոլում է այն վերահսկող դերը, որ վերջինն ունի մինչդատական քննության իրականացման ոլորտում: Սակայն քանի որ նման բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար 38(11)-րդ հոդվածով որևէ ժամկետ չի նախատեսվում¹⁰², ներկա դրույթից պարզ չէ, թե արդյոք այս հարցը կարող է քննվել դատարանում միայն դրանից հետո, թե՛ ոչ:

271. Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյոք դատարան ներկայացվող բողոքը պետք է սպասի մինչև դատախազի կողմից որոշում կայացնելը, իսկ եթե այո, ապա այդ որոշման համար պետք է սահմանվի երեք օրվա ժամկետի խիստ սահմանափակում»:

Այդ մեկնաբանությանն համահունչ, Նախագծի ներկայիս տեքստը, պարունակում է հետևյալ կարգավորումները՝

«3. Սույն օրենսգրքի 299-րդ հոդվածով նախատեսված մինչդատական ակտերը դատարան կարող են բողոքարկվել տասնհինգօրյա ժամկետում: Այդ ժամկետի սկիզբն է՝

1) իրավասու դատախազին ուղղված բողոքի մերժման որոշումը կամ բավարարումից տարբերվող պատասխանը ստանալու օրը.

2) բողոք ներկայացնելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետը լրանալու օրը, եթե բողոքի վերաբերյալ պատասխան չի ստացվել» (հոդված 300, մաս 3-րդ):

3. Ապացույցների թույլատրելիության գնահատումը դատախազի կողմից, ինչպես նաև ապացույցներն անթույլատրելի ճանաչելու դատարանի կողմից որոշումների կայացումը: Նախնառաջ, դատախազը պարտավոր է դատարանին չներկայացնել այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել անօրինական եղանակով, այսինքն՝ եթե դրանք նա համարում է ապօրինի ստացված: Այս առումով, վերը նշված օպերատիվ բնույթի տեղեկություններին ծանոթանալը դատախազին անհրաժեշտ է դրանց արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը գնահատելու համար: Մասնավորապես, **դատախազը պետք է իրավունք ունենա ծանոթանալու այն փաստական տվյալներին, որոնցով հիմնավորվում է ՕՀԳ անցկացնելու անհրաժեշտությունը՝ անկախ նրանից, թե դրանց կատարման թույլտվությունը տրվում է դատարանի կողմից, թե ոչ, օրինակ՝ հիմնավոր կասկածը կամ պատճառը՝ որևէ ՕՀԳ անցկացնելու համար:** Այս առումով, քննիչի իրավագործման դրույթները՝ ՕՀԳ մարմինների հետ հարաբերություններում, շատ ողջունելի են:

Նույնը պետք է ասել նաև դատարանի թույլտվության կատարվող ՕՀՄ-րի մասին: Ընդ որում, դատական ստուգումը այս դեպքերում ունի ինչպես նախնական բնույթ, այլ նաև՝ հետադարձ՝ երբ կողմը վիճարկում է այն ապացույցի թույլատրելիությունը, որը ձեռք է բերվել ՕՀՄ շնորհիվ: Ընդ որում, դա վերաբերում է նաև այն ՕՀՄ-ներին, որոնց կատարումը նախնական դատական թույլտվություն չի պահանջում, այսինքն՝ ՔԴՕ նոր

¹⁰² «Մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը՝ ... 11) որոշում է կայացնում հետաքննության մարմնի պետի, հետաքննիչի, քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի վարությամբ ակտերի դեմ վարույթի մասնավոր մասնակիցների կամ այլ անձանց բերած բողոքների կապակցությամբ» (Հոդված 38, մաս 1-ին, կետ 11)

տերմինաբանությամբ՝ գաղտնի քննչական գործողությունն չէ: Օրինակ, թմրամիջոցի վերահսկիչ գնումը, որը ՕՀԳ մասին օրենքի համաձայն, չի պահանջում դատարանի թույլտվություն, թույլ է տալիս ստանալ իրեղեն ապացույց թմրամիջոցը, կատարել արտաքին դիտում և դրա արդյունքները ֆիքսել որպես առանձին ապացույց, թմրամիջոցը հանձնել փորձաքննության և ստանալ որպես ապացույց մեկ փորձագիտական եզրակացությունը: Ընդունենք, այդ ամենից հետո գործը արդեն դատարանում քննվելու ընթացքում, մեղադրյալը պնդում է, որ ապացույցն անթույլատրելի է, քանի որ նա թմրամիջոցը ոստիկանության հսկողության ներքո վաճառել է Ա-ին՝ վերջինիս կողմից պրովոկացիայի ենթարկվելու հետևանքով: Դատարանը, փաստորեն, պետք է ստուգի, թե արդյոք հիմնավոր է եղել տվյալ անձի կողմից թմրամիջոցներ վաճառելու մասին այն տեղեկությունները, որոնք ՕՀԳ մարմնի պնդմամբ, հիմք են հանդիսացել վերահսկիչ գնում ՕՀՄ-ն կատարելու համար:

Բնականաբար, առաջանում են փաստի և իրավունքի նուրբ հարցեր՝ մինչև ՕՀՄ իրականացնելու մասին որոշումը կայացնելը հանցագործություն կատարելու մեղադրյալի ունեցած նախահակվածության, ոստիկանության կողմից հանցագործության կատարումը պարզապես դիտարկելու, այլ ոչ թե դրդելու առթիվ, որոնք պահանջում են լուրջ իրավաբանական փաստարկում: Առավել ևս, այդ փաստարկումը չի կարող անի այն դատախազը, որն արդեն դատարանում պարզապես տեսնում է, որ այդ գնումը կատարվել է օպերատիվ տվյալների հիման վրա: Նախագիծն արդեն իսկ մեկ կարևոր քայլ կատարել է այս ուղղությամբ՝ ի դեմս 57 հոդվածով սահմանված վկայի հասկացության՝ ամրագրելով, փաստացի որպես կանոն, հետաքննիչը որպես վկա հարցաքննվելու է դատարանում այն բոլոր դեպքերում, երբ կասկած է առաջանալու ապացույցի թույլատրելիության վերաբերյալ: Պարզ է, որ այդ հետաքննիչին հակընդդեմ հարցաքննելու իրավունքը չի կարող արդյունավետ համարվել, եթե նա պարզապես նշի ՕՀԳ-ն իրականացվել է օպերատիվ տվյալի հիման վրա: Իմիջիայոց, նույնն էլ կարող է լինել այլ գործողությունների, օրինակ՝ ձեռքակալման հիմքում ընկած հիմնավոր կասկածը ստուգելիս, երբ դատարանը ստուգելու է ձեռքակալման իրավաչափությունը: Այս բոլոր դեպքերում, ըստ ՀՀ գործող օրենսդրության, թե դատախազը, և թե դատարանը գրկված են ՕՀԳ անցկացնելու որոշման իրավաչափության ստուգման հնարավորությունից և ստիպված պետք է հավատան օպերատիվ տվյալների՝ նախ գոյությանը, ապա և՛ արժանահավատությանը, քանի որ դրանց հավատում է ՕՀԳ մարմինը:

ՀՀ օրենսդրությանը լրիվ հակառակ դիրքորոշում ունի այս հարցով ՄԻԵԴ-ը, որը արտահայտվել է *Լագուտինն ու մյուսներն ընդդեմ Ռուսաստանի գործով* 2014թ. ապրիլի 24-ի վճիռը¹⁰³, որտեղ ՄԻԵԴ-ը անդրադարձավ ազգային դատարանի կողմից գործն ըստ էության քննելիս ՕՀԳ հիմքում ընկած հիմնավոր կասկածի առկայությունը պարզելու պարտականությունը՝ այն դեպքում, երբ տվյալ ՕՀԳ-ն, մասնավորապես՝ վերահսկվող գնումը, ինչպես և Հայաստանի դեպքում, դատական նախնական թույլտվություն չէր պահանջում: Այս գործը հանդիսանում էր 5 առանձին դիմումատուի կողմից ՄԻԵԴ ներկայացված միանման դիմումների միավորման արդյունք: Բոլոր դիմումատուների կարծիքով, իրենց նկատմամբ տեղի էր ունեցել թակարդում և նրանք թմրամիջոցները գնել էին ոստիկանների աջակցությամբ կամ դրդմամբ, իսկ նրանցից երկուսը պնդում էին, որ թմրամիջոց ձեռք բերելու գումարը իրենց տրամադրել էին ոստիկանները (պետությունը): Բոլոր գործերով դիմումատուները, որոնցից գրեթե բոլորը թմրամուլներ են, մեղավոր էին

¹⁰³ «Лагутин и другие против России» (Lagutin and Others v. Russia, жалобы NN 6228/09, 19123/09, 19678/07, 52340/08 и 7451/09)

ճանաչվել թմրամիջոցներ իրացնելու մեջ՝ բացառապես կամ գլխավորապես հղում կատարելով այնպիսի ապացույցների վրա, որոնք ստացվել էին վերահսկիչ գնումների արդյունքում, որոնց անցկացման հիմքն են հանդիսացել «օպերատիվ տվյալները», որոնք չեն ներկայացվել պաշտպանական կողմին, չեն պահանջվել դատարանի կողմից և որոնց կոնկրետ բովանդակությունը մնացել էր անհայտ: Բոլոր հինգ դիմումատուների նկատմամբ **Եվրոպական դատարանը արձանագրեց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ սադրանք թույլ տրվելու հիմքով՝ դրա պրոցեսուալ ասպեկտով:**

«Այս գործով իշխանությունները վկայակոչում էին ՕՀԳ իրականացման հիմքում դրված «օպերատիվ տվյալները», որոնք ստացվել էին չբացահայտված աղբյուրներից: Ոչ ՌԴ պետական մարմիններից՝ ՄԻԵԴ-ին հարցերին ուղարկված պատասխանները, ոչ դիմումատուների քրեական գործերը չէին պարունակում տեղեկություններ, որոնք Դատարանին թույլ կտային դատողություն անելու այն մասին, թե արդյոք այդպիսի տվյալներ գոյություն ունեցել են, թե ոչ, ինչպիսին էին դրանց բովանդակությունն ու նշանակությունը վերահսկիչ գնումներ անցկացնելու հիմնավորվածության տեսանկյունից»¹⁰⁴:

Այդ պատճառով, Դատարանը չկարողացավ գնահատել, թե արդյոք հիմքեր եղել էին գաղտնի միջոցառումներն անցկացնելու համար և արդյոք դիմումատուների վրա ճնշում չի գործադրվել՝ նրանց հանցագործություն կատարելուն հակելու ուղղությամբ: Փաստորեն, ՄԻԵԴ-ը չքննարկեց կոնկրետ գործերով պնդվող սադրանքի բովանդակային կողմը, այսինքն՝ այն, թե արդյոք դիմումատուները ունեցել են հանցավոր նախահակվածություն և եթե այո, ապա որքանով է ոստիկանի միջամտությունը նպաստել դրա իրացմանը (տես՝ վճռի 101-րդ կետը):

Եթե չկան ակնհայտ ապացույցներ այն մասին, որ սադրանք տեղի չի ունեցել, իր նկատմամբ կատարված սադրանքի մասին անձի հայտարարությունը քննելու, համապատասխան հանգամանքները պարզելու և սադրանքի հատկանիշների գոյությունը հաստատելու պարտականությունը ընկնում է ազգային դատարանի վրա: Սա սադրանքի դատավարական ասպեկտն է:

Քննարկվեց սադրանքի միայն դատավարական կողմը, որի հետ կապված ՄԻԵԴ դիրքորոշումները շատ կարևոր են ՔԴՕ Նախագծի և նաև գործող ՔԴՕ կիրառման համար: Ամենակարևոր դիրքորոշումը՝ դատախազության դերի տեսակետից, հետևյալն է՝

«Դատարանը կրկնում է, որ թակարդման մասին հայտարարությունը քննելու համար, գործն ըստ էության քննող դատարանին է տրված անհրաժեշտ քայլեր ձեռնարկելը՝ ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ՝ միաժամանակ հիշելով, որ **մեղադրող կողմի վրա է ընկած ապացուցման պարտականությունը՝ ցույց տալու, որ դրոյում տեղի չի ունեցել: Սա ներառում է որոշել, թե ինչպիսի նյութեր պետք է դառնան քրեական գործի մասը՝ թակարդման մասին հայտարարությունը քննելու համար**» (կետ 120):

Կաճում ենք, արդեն իսկ այս դիրքորոշմամբ, լուծվում են օպերատիվ տվյալների դատախազի համար հասանելիության բոլոր խնդիրները՝ եթե ՄԻԵԴ-ը նշում է, որ դատախազն է, որ պետք է որոշի, թե ինչ ծավալի նյութ պետք է ներառվի գործում՝ իր ապացուցման պարտականությունը կատարելու տեսակետից: **Եթե ՕՀԳ մարմինը չի ցանկանում տալ այդ տեղեկատվությունը, հետևաբար՝ դատախազը չի կարող ապացուցել մեղադրանքը, իսկ եթե դատախազը չի կարող ներկայացնել այդ տվյալները, ապա դատարանը չի կարող կայացնել մեղադրական դատավճիռ: Հետևաբար, պետք է կամ ապացույցը ընդհանրապես չմտներ վարույթ կամ էլ դատախազը պետք է հրաժարվի մեղադրանքից:** Նշվածն ուղղակիորեն բխում է թակարդման պրոցեսուալ ասպեկտից, այն է դրա մասին հայտարարությունների պատշաճ քննության ընթացքում դատախազական և դատարանի լիազորվածության մասին ՄԻԵԴ այն դիրքորոշումներից, որոնց կիրառական արժեքը շատ ավելի հեռու է տարածվում վերահսկվող գնումներից և ՕՀԳ արդյունանքերի

¹⁰⁴ Lagutin and Others v. Russia, par 109.

օգտագործումից՝ հասնելով ՕՀԳ իրականացնող մարմին-դատախազություն-դատարան ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների էությանը փոփոխությանը: Այս դիրքորոշումները, որոնք զետեղված են վճռի 110-125 կետերում, դրանց կարևորության պատճառով փորձենք ներկայացնել առանց մեջբերելու՝

- Սադրանքի մասին հայտարարությունները չէին կարող ստուգվել առանց այն ամբողջ վերաբերելի տեղեկատվությունը պահանջելու, որը ենթադրաբար վերաբերում էր նաև նախքան գաղտնի գործողությունները գոյություն ունեցած և դիմումատուների կողմից հանցանքների գործումը վկայած «օպերատիվ տվյալներին», ինչպես նաև՝ առանց Թմրամիջոցների վերահսկման դաշնային ծառայության աշխատակիցների հարցաքննության՝ նման տեղեկատվության ստացման հանգամանքների մասին:
- Վերահսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված նյութերը որպես ապացույց օգտագործելու թույլատրելիությունը՝ այդ թվում, հնարավոր սադրանքի առկայության պատճառով, պահանջում է գաղտնի քննչական գործողություններ անցկացնելու հիմքերի առկայության, դրանց ընթացքում իրավապահ մարմինների աշխատակիցների ունեցած դերի և դիմումատուների նկատմամբ գործադրված ցանկացած ճնշման բնույթի հանգամանքների հաստատում մրցակցային դատավարության ընթացքում:
- **Այս պարտականությունն արդյունավետորեն կատարելու համար ազգային դատարանը պետք է ինքը որոշի, թե ինչպիսի նյութեր պետք է կցված լինեն գործին:**
- Բոլոր դիմումատուների գործերով, հետաքննության մարմնի աշխատակիցները հենվել էին գաղտնի տեղեկությունների վրա, որոնք ստացվել էին չբացահայտված աղբյուրներից և որոնք վկայում էին դիմումատուների՝ թմրամիջոցների իրացմանն առնչվելու մասին: **Սա ենթադրում էր դատարանների կողմից մինչև դիմումատուների հետ առաջին շփումը նման տեղեկատվության գոյության փաստի ստուգում, դրա բովանդակության գնահատում և որոշման կայացում, թե արդյոք այդ տեղեկատվությունը կարող է տրամադրվել պաշտպանական կողմին, թե ոչ:**
- Մակայն դատարանները որևէ փորձ չեն ձեռնարկել հետաքննիչների հայտարարությունները ստուգելու ուղղությամբ և համաձայնել են վերջիններիս կողմից ոչնչով չփաստված այն պնդումների հետ, որ նախքան վերահսկիչ գնումը գոյություն էին ունեցել դիմումատուներին կասկածելու հիմքեր: Դատարանները մերժել են դիմումատուների փաստարկները՝ ի խախտումն ՄԻԵԴ նախադեպային իրավունքի:

Դատարանի վերջնական հետևությունն էր՝

Այս գործերով սադրանքի առկայության հարցը անբաժանելի է հանցագործություն կատարելու մեջ անձի մեղավոր լինելու հարցից, և մեղադրյալների համապատասխան փաստարկները քննելուց հրաժարվելը անդառնալիորեն արատավորում է դատարանի կողմից ըստ գործի էության արված հետևությունները:

Եթե ամփոփենք և հետևենք օպերատիվ նյութերը չպահանջելու և անարդարացի դատաքննության իրավունքի խախտման կապին, կստանանք հետևյալը՝

- **Եթե կա սադրանքի մասին վստահելի հայտարարություն (իսկ վստահելիության չափանիշը սադրանքի բացակայության ակնհայտ լինելն է), ապա հնարավոր չէ այն քննել՝ առանց իմանալու, թե՛**
- **ինչի հիման վրա է ծագել իրավապահների կասկածը տվյալ անձի վերաբերյալ,**
- **ինչն անելու համար դատարանին անհրաժեշտ են օպերատիվ տվյալները:**

Եթե, ըստ մեր առաջարկվող մոդելի, միայն դատախազը ներկայացնի սահմանադրական իրավունքների սահմանափակման, այդ թվում՝ դատարանի թույլտվություն պահանջող ՕՀՄ-ների միջնորդությունը, կամ եթե անգամ պարզապես, ըստ ՔԴՕ Նախագծի, *մասնակցի* քննիչի ներկայացրած միջնորդության դատական քննությանը, ապա նա պետք է ունենա առնվազն հիմնավոր կասկածը հավաստող տեղեկություններ՝ դատարանին ներկայացնելու համար, քանի որ ՄԻԵԴ-ի պահանջն է, որ ապացույցների թույլատրելիության հարցը քննարկելիս՝ ընդ որում՝ անգամ նախնական դատական թույլտվություն չպահանջող ՕՀՄ-ների արդյունքում ձեռք բերված ապացույցների պարագայում, դատարանը պարտավոր է քննել ՕՀՄ կատարելու հիմք հանդիսացած հիմնավոր կասկածը փաստող տեղեկությունները, իսկ դատախազն էլ կրում է ապացույցի թույլատրելիության ապացուցման պարտականությունը ու պետք է որոշի, թե ինչպիսի տվյալներ են իրեն անհրաժեշտ իր այդ պարտականությունը կատարելու համար:

Վերջապես, ԵԴԽԽ «Քրեական քննությունների ընթացքում դատախազների դերի մասին» Կարծիք Հ-10-ի 27-րդ կետը սահմանում է՝

«...Դատախազները պետք է հնարավորություն ունենան ազատորեն ծանոթանալու քրեական քննությանը վերաբերող՝ քննություն իրականացնող անձանց համար հասանելի ցանկացած նյութերի՝ քննության նկատմամբ հսկողության արդյունավետ և ժամանակին իրականացումն ապահովելու նպատակով, եթե անհրաժեշտ է՝ կարևոր ապացույցների կորուստը, կանխելու համար, տուժողների անվտանգությունն և նրանց համար գործի նյութերի (օրենքով սահմանված լինելու դեպքում) հասանելիությունը ապահովելու համար կամ քրեական հետապնդման ենթակա անձանց արդարադատությունից խուսափելը կանխելու համար¹⁰⁵»:

Մաքուր մոդելին վերջնականապես անցնելով, կլուծվեն նաև ՔԴՕ 290 հոդվածի կարգով ՕՀՄ իրականացնող մարմինների դեմ բերված բողոքները դատախազի կողմից քննվելու արդյունավետության՝ ԳԴ Հաղորդման մեջ վերը նշված խնդիրները, նաև իրական հսկողություն կապահովվի գաղտնի քննչական գործողությունների, ներկայիս՝ դատարանի թույլտվություն պահանջող ՕՀՄ-րի միջոցով ձեռք բերվող ապացույցների թույլատրելիությունը, նաև՝ դատական հաստատում չպահանջող ՕՀՄ-րի արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը՝ դրանք օրենքի խախտմամբ ստացված ապացույցներն անթույլատրելի ճանաչելու ձևով, ու դատախազի արդյունավետ *մասնակցությանը* այս վերջին գործընթացին ևս:

Իրավունքի սահմանափակման՝ դատախազի կողմից տրվող թույլտվությունները

ՔԴՕ Նախագծում, թե՛ մեթոդական ճշգրտության, և թե՛ գործնական արդյունավետության տեսակետից կարևոր առաջընթաց է արձանագրվել անձի սահմանադրական իրավունքներին, մասնավորապես՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտելու աստիճանի միջև. այն միջամտությունը, որը ենթադրում է պետության ծանոթանալը անձի հաղորդակցությունների բովանդակության հետ պահանջում է բացառապես դատական թույլտվություն, իսկ հաղորդակցման փաստը՝ իր ռեկվիզիտային, մետա- տվյալներով՝ սանկցավորվում է դատախազի կողմից: Սա ԱՄՆ մոդելին բնորոշ կարգավորում է, որտեղ հաղորդակցության

¹⁰⁵ CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) OPINION NO.10 (2015) OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS TO THE COMMITTEE OF MINISTERS OF THE COUNCIL OF EUROPE ON THE ROLE OF PROSECUTORS IN CRIMINAL INVESTIGATIONS, <https://rm.coe.int/1680747720>

բովանդակությունը վերահսկելու թույլտվության միջնորդությունը տրվում է խուզարկության համար սահմանված երաշխիքների ռեժիմում: Փաստորեն, ՔԴՕ Նախագծում, մեր կարծիքով՝ իրավամբ, ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի 3-րդ մասի այն դրույթը, որ «Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ...» մեկնաբանվել է բառացի իմաստով, այսինքն՝ որ դատարանի որոշմամբ պետք է սահմանափակվի ոչ թե նաև հաղորդակցությունների առկայության փաստը կամ «հաղորդակցումը», այլ՝ հաղորդակցման, շփման բովանդակությունը, այսինքն՝ «հաղորդակցությունը»:

Մասնավորապես, ՔԴՕ Նախագծի 232-րդ հոդվածի (Տեղեկատվության պահանջը) 3-րդ մասի համաձայն՝

«Դատախազի կողմից հաստատված քննիչի որոշմամբ կարող են պահանջվել նաև՝

1) ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի միջոցով հաղորդակցվողների հեռախոսահամարները, հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները.

2) հեռախոսային հաղորդակցությունը սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և նրանց տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալները.

3) համացանցին միանալու և համացանցից դուրս գալու վայրը, ժամանակը և տևողությունը, համացանցն օգտագործողի կամ բաժանորդի անհատականացման տվյալները, հեռախոսահամարը, որով նա միանում է ընդհանուր օգտագործման հեռախոսացանցին, համացանցային հասցեն, ներառյալ ինտերնետ պրոտոկոլի (IP) հասցեն, համացանցային հեռախոսազանգը ստացողի անհատականացման տվյալները»:

2.2.2.4. Համաձայնեցման և համագործակցության վարույթներում որոշումների կայացման դատախազի բացառիկ իրավունքը

Առավել ցայտուն դատախազի և մինչդատական վարույթում ոչ իրավաբան քննիչի հետ հարաբերությունները, ինչպես նաև քրեական արդարադատության ոլորտում դատախազության՝ որպես վերջինիս անիվները պտտողի իրական իշխանությունը իր առավելագույն դրսևորումն է ստանում համաձայնեցման և համագործակցության վարույթներում, որոնք առաջարկվում են Նախագծով ու որոնք մենք առաջարկում ենք անվանել «մեղքի ընդունման վարույթներ»: Այս վարույթներին է նվիրված հատվածներ կան նաև Դատախարակական բարեփոխումների 2019-2023թթ. Ռազմավարության մեջ, որտեղ նշվում է դրանցով ռեսուրսներ խնայելու նպատակը և այլ հիմնավորումներ: Հետևաբար, այս Հետազոտության մեջ այս վարույթներին անդրադառնալը կարևոր է նաև նշված Ռազմավարության արդյունավետ գիտահեն իրականացման տեսանկյունից:

Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 37-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր պետություն պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի, որպեսզի խրախուսի այն անձանց, ովքեր մասնակցում են կամ մասնակցել են որևէ իրավախախտման, որն այդպիսին է ճանաչվում սույն Կոնվենցիայի համապատասխան, քննության և ապացուցման նպատակով իրավասու մարմիններին օգտակար տեղեկատվություն ներկայացնելու առումով և իրավասու մարմիններին փաստացի, որոշակի օգնություն տրամադրելու առումով, որը կարող է նպաստել հանցագործություններից ստացված եկամուտներից հանցագործին զրկելուն և այդպիսի եկամուտները վերադարձնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելուն: Նույն հոդվածի 3-րդ մասը ուղղակիորեն ամրագրում է.

«Յուրաքանչյուր պետություն պետք է քննարկի այն մասին հարցը, որ նախատեսի, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, այն անձի քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տրամադրելու հնարավորությունը, որն արդյունավետորեն համագործակցում է որևէ

իրավախախտման կապակցությամբ քննությանը կամ քրեական հետապնդմանը, որն այդպիսին է ճանաչվել սույն կոնվենցիայի համապատասխան»:

Իրականում, մեղքի ընդունման վարույթներով պետք է ավարտվի մինչդաստական վարույթների մեծ մասը¹⁰⁶: Այսինքն, պետության ռեսուրսները պետք է ուղղվեն ապացույցների ձեռք բերմանը՝ հիմնականում գաղտնի քննչական գործողություններ կատարելուն ուղղված, երբ քրեական հետապնդում հարուցելու պահի դրությամբ հանցագործությունը արդեն լինում է բացահայտված: Իրականում, դատարանակենտրոն մոդելի և դրան ձգտող ՀՀ քրեական դատավարության հիմնական տարբերությունն այն է, որ ըստ էության, առաջինի դեպքում քննությունը՝ ապացույցների ձեռքբերման առումով, ավարտվում է, իսկ երկրորդի դեպքում՝ միայն սկսվում քրեական հետապնդում հարուցելուց հետո: Պետությունը պետք է ավելացնի իր բացահայտ կամ քողարկված գործող ներկայացուցիչների կողմից ապացույցներ ձեռք բերելու օպերատիվ կարողությունները, որի շնորհիվ քրեական հետապնդման համար հիմք ծառայող ապացուցողական բազան այնքան մեծ կլինի, որ դեպքերի գերակշիռ մասով տեղի ունենա մեղքի ընդունում, իսկ ազատված ռեսուրսները՝ ուղղվեն իրապես մրցակցային պայմաններին բավարարող դատաքննությունների անցկացմանը:

ԵՄ «Նախարարների կողմիտեի Քրեական արդարադատության պարզեցման մասին անդամ պետություններին ուղղված R(87)18 Հանձնարարականը սահմանում է հետևյալը՝

«7. Այն դեպքերում, երբ դա թույլ են տալիս սահմանադրական և իրավական ավանդույթները, մեղքի ընդունման հայտարարությունների ("guilty pleas") ընթացակարգեր պետք է ներդրվեն, որոնցում ենթադրյալ հանցավորից պահանջվում է դատարանի առջև ներկայանալ վարույթի սկզբնական փուլում՝ դատարանին հրապարակավ հայտարարելու, թե արդյոք նա ընդունում է, թե հերքում իրեն ներկայացված մեղադրանքները, կամ՝ նմանատիպ այլ ընթացակարգեր: Այս դեպքերում, գործը քննող դատարանը պետք է ի վիճակի լինի որոշելու առանց ընդհանրապես կամ մասնակի քննություն անցկացնելու, անմիջապես անցնել հանցավորի անձի, պատժի նշանակման և, համապատասխան դեպքերում՝ փոխհատուցման հարցերի քննարկմանը:

- 8. i. Մեղքի ընդունման ընթացակարգը պետք է անցկացվի բաց դատական քննության ընթացքում.
- ii. Հանցավորի կողմից իրեն առաջադրված մեղադրանքում մեղավորության հարցի առթիվ պետք է տրվի դրական պատասխան.
- iii. Մինչև մեղքի ընդունման վարույթի շրջանակներում հանցավորի նկատմամբ պատժի նշանակմանն անցնելը, դատավորը պետք է հնարավորություն ունենա լսելու կողմերից յուրաքանչյուրին¹⁰⁷:

ՔԴՕ Նախագծով առաջարկվում է մեղքի ընդունման փաստի վրա իրականացվող երկու առանձին վարույթ՝ համաձայնեցման վարույթը և համագործակցության վարույթը: Դրանց հետ կապված դատախազի գործառույթների արդյունավետ իրականացմանն ուղղված անհրաժեշտ փոփոխությունները ներկայացնում ենք ստորև:

Համաձայնեցման վարույթ

Նախագծի 39-րդ հոդվածի (Դատախազի լիազորությունները դատական վարույթի ընթացում), ինչպես նաև 458-460-րդ հոդվածների համադրված վերլուծությունից բխում է, որ

¹⁰⁶ ԱՄՆ-ում՝ մեր տերմինաբանությամբ «տնօրինական», այսինքն՝ դատի տալու նիստի ժամանակ, որտեղ դատավորն մեղադրյալին հարցնում է մեղադրանքի առթիվ ունեցած դիրքորոշումը՝ ընդունում էմեղադրանքը, թե ոչ, այս փուլից հետո դատական ըստ էության քննության է նշանակվում գործերի միայն 10-30 տոկոսը (կախված տարածքային ընդդատությունից)՝ տես՝ Уильям Бернам, «Правовая система США», М. 2007, с. 459; տես նաև՝ Jonathan Marks, All About Cooperation, (Ջոնաթան Մարքս, «Ամեն ինչ համագործակցության մասին») <http://www.jonmarks.com/ny-cooperation-federal-system.html>

¹⁰⁷ ԵՄ «Նախարարների կողմիտեի Քրեական արդարադատության պարզեցման մասին անդամ պետություններին ուղղված R(87)18 Հանձնարարականը», կետ 7, այսուհետ՝ «ԵՄ ՆԿ (87)18 Հանձնարարական»:

1) դատարանը համաձայնեցման վարույթ կիրառում է հանրային մեղադրանքով նախնական դատալսումների ընթացքում՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության մեջ մեղադրվող մեղադրյալի միջնորդության հիման վրա (հոդված 458, մաս 1-ին)։

2) Համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել, այդ թվում՝ եթե՝ դրա դեմ առարկում է հանրային մեղադրողը (հոդված 458, մաս 2-րդ, կետ 3)։

3) Համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել, այդ թվում՝ եթե առերևույթ հիմնավորվում է, որ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ և դրա հետ միաժամանակ համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ առարկում է տուժողը։

4) համաձայնեցման վարույթ կիրառելու մասին մեղադրյալի միջնորդությունը ուղղված է դատարանին, այն քննվում է նախնական դատալսումների ընթացքում, և դատարանի կողմից միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը կողմերի բանակցությունների համար սահմանում է առավելագույնը երկշաբաթյա ժամկետ (հոդված 459, մաս 2-րդ)։

5) դատախազը պարտավոր է դիրքորոշում հայտնել համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդության վերաբերյալ, որպիսի լիազորությունը նրան պատկանում է որպես հանրային մեղադրողի (հոդված 39, մաս 2-րդ, կետ 1), այսինքն՝ այդ դիրքորոշումը Նախագծով չի ակնկալվում մինչդատական վարույթի ընթացքում։

6) համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը բավարարելուց հետո հանրային մեղադրողը համաձայնության գալու նպատակով բանակցություններ է սկսում մեղադրյալի և նրա պաշտպանի հետ (հոդված 460, մաս 2-րդ),

7) բանակցությունների արդյունքում, որոնց անցկացմանը դատախազը պարտավոր է ներգրավել դրա իր մասնակցության համաձայնությունը տված տուժողին (սա՝ այն դեպքերում, երբ տուժողը չի առարկել համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ, բայց վնասը հատուցված չէ), համաձայնության գալու դեպքում կողմերը (որոնք չորսն են՝ հանրային մեղադրողը, մեղադրյալը, պաշտպանը և տուժողը) կազմում են և ստորագրում համաձայնության մասին արձանագրություն (հոդված 460, մաս 3-րդ և 4-րդ)։

Համագործակցության վարույթ

Նախագծի 38-րդ հոդվածի (Հսկող դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում), ինչպես նաև 465-471-րդ հոդվածների համադրված վերլուծությունից բխում է, որ

1) Համագործակցության վարույթը կարող է նախաձեռնվել միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության մեջ, ինչպես նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության օժանդակության համար մեղադրվող անձի կողմից մինչդատական համաձայնագիր կնքելու մասին գրավոր միջնորդություն (այսուհետ՝ համագործակցության միջնորդություն) ներկայացնելու դեպքում (հոդված 465, մաս 2-րդ), ընդ որում՝ համագործակցության միջնորդությունը պետք է վերաբերի տվյալ անձին ներկայացված մեղադրանքին առնչվող հանցագործությանը, որը քննվում է նույն կամ մեկ այլ վարույթով (հոդված 465, մաս 3-րդ)։

2) Համագործակցության միջնորդությունը հասցեագրվում է հսկող դատախազին և ստորագրվում է մեղադրյալի ու նրա պաշտպանի կողմից, կարող է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից մինչև

նախաքննության ավարտի մասին հայտարարելը և պետք է նշի, թե ինչում է արտահայտվելու մեղադրյալի համագործակցության բնույթը, ինչպես նաև այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել հանցագործության բացահայտումը կամ այն կատարած անձի պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելուն աջակցելու նպատակով (հոդված 466, մաս 1-3-րդ)։

3) Համագործակցության միջնորդությունը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից հսկող դատախազին **հանձնվում է քննիչի միջոցով**, ով միջնորդությունը ստանալուց հետո երեք օրվա ընթացքում այն հանձնում է հսկող դատախազին՝ կցելով դրա բավարարման կամ մերժման վերաբերյալ իր գրավոր կարծիքը (հոդված 466, մաս 4 և 5-րդ)։

4) Համագործակցության միջնորդությունը և դրա վերաբերյալ քննիչի կարծիքը ստանալուց հետո երեք օրվա ընթացքում հսկող դատախազը որոշում է կայացնում համագործակցության միջնորդությունը կամ բավարարելու կամ՝ մերժելու մասին, եթե այն չի համապատասխանում սույն օրենսգրքի 465-466-րդ հոդվածներում սահմանված պայմաններին, կամ եթե հսկող դատախազը տվյալ համագործակցությունը համարում է ոչ անհրաժեշտ (հոդված 467)։

5) Համագործակցության միջնորդությունը բավարարելու դեպքում հսկող դատախազը քննիչի, մեղադրյալի և նրա պաշտպանի մասնակցությամբ, կազմում է համագործակցության համաձայնագիր (հոդված 468, մաս 1-ին)։

6) Եթե մեղադրյալին մեղսագրվող արարքով տուժողին պատճառված վնասը հատուցված չէ, ապա համաձայնագրում նշվում է նաև այդ վնասը լրիվ հարթելու մեղադրյալի պարտականությունը, իսկ համաձայնագիրը ստորագրում են հսկող դատախազը, մեղադրյալը և պաշտպանը (հոդված 468, մաս 3-րդ և 5-րդ)։

7) Նախաքննությունն ավարտից հետո քննիչը վարույթի նյութերը հանձնում է հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու և մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդություն կազմելու համար (հոդված 469, մաս 5-րդ)։

8) Հսկող դատախազը, ուսումնասիրելով քննիչից ստացած վարույթի նյութերը, ինչպես նաև մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունների պատշաճ կատարումը հաստատող ապացույցները, հաստատում է մեղադրական եզրակացությունը և միջնորդություն է ներկայացնում դատարանի մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին, կամ որոշմամբ մերժում է այդպիսի միջնորդությամբ վարույթի նյութերը դատարանին հանձնելը, եթե մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունների չեն կատարվել կամ կատարվել են ոչ պատշաճ (հոդված 471, մաս 1-ին)։

Վերոգրյալ կարգավորումների առթիվ մեր նկատառումներն ու առաջարկները հետևյալն են

1. Դատախազի կողմից համաձայնեցման վարույթի կիրառման առթիվ դիրքորոշում հայտնելը հանրային մեղադրողի գործառույթներից դարձնել մինչդատական վարույթում հսկող դատախազի գործառույթ՝ Նախագծի 38-րդ հոդվածով սահմանված մինչդատական վարույթի հսկող դատախազի լիազորությունների մեջ ավելացնելով **համաձայնեցման համաձայնագիր ստորագրելու լիազորությունը**։ Հակառակ դեպքում, ստացվում է, որ համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդության մասին դատախազը իմանում է արդեն իսկ դատարանում, ինչը նշանակում է ռեսուրսների վատնում և անհարկի մեղադրյալին հնարավորություն է տալիս իր կամահայտնության արտահայտումը

հետաձգել մինչև դատական վարույթ: Մեր առաջարկած տարբերակում, մինչդատական վարույթի հսկող դատախազի ոչ թե կարտահայտի դիրքորոշում, այլ ինքը կկազմի և կկնքի համաձայնեցման արձանագրությունը կամ համաձայնությունը, այսինքն՝ վերոհիշյալ բանակցությունները տեղի կունենան մինչդատական վարույթում: Բանակցությունները դատարանի կողմից նշանակվելու շնորհիվ որևէ բան ավելացվում, քանի որ ամեն դեպքում դատարանն իրավասու է չհաստատել այն, սակայն մինչդատական վարույթի դատախազին և գործով կողմերին մինչդատական վարույթում համաձայնության գալու հնարավորությունը խնայում է ռեսուրսներ, մեծացնում համաձայնության հեռանկարները: Այս առաջարկն հիմնավոր է մանավանդ այն պատճառով, որ հանրային մեղադրողի կողմից առարկության դեպքում, ամեն դեպքում այս վարույթը չի կարող կիրառվել, հետևաբար, ավելի ճիշտ չէ՝ նրան թույլ տալ իր դիրքորոշումը հայտնել ավելի վաղ՝ մինչդատական վարույթում մեղադրյալի նույն հնարավորությունը տալու միջոցով:

Բացի այդ, քանի որ ըստ ՔԴՕ 472-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 3-րդ կետի, դատարանը է համագործակցության վարույթ կիրառում է՝ դատախազի կողմից նման միջնորդության հիման վրա, եթե «մեղադրյալի համագործակցությունը չի հանգել հանցանքի կատարմանը բացառապես իր մասնակցության մասին տվյալներ հայտնելուն»: Սրանից ուղղակիորեն բխում է, որ մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը քննարկել է իրեն մեղադրյալի և նրա պաշտպանի կողմից ներկայացված (հոդված 466, մաս 1-ին)՝ համագործակցության մասին միջնորդությունը և հետևություն արել, որ այդ միջնորդությունը բավարարելու և իր կողմից էլ հետագայում դատարանին համագործակցության վարույթ կիրառելու միջնորդություն դեպքում այն պետք է բավարարվի: Այսինքն՝ դատախազը իրեն ներկայացված պաշտպանական կողմի միջնորդությունը քննելիս, կարող է պարզել իր ապագա՝ դատարանին ներկայացվելիք միջնորդության մերժվելու հեռանկարը հենց այն հիմքով, որ «մեղադրյալի համագործակցությունը հանգել է հանցանքի կատարմանը բացառապես իր մասնակցության մասին տվյալներ հայտնելուն»: Սրանից եզրակացնում ենք, որ հսկող դատախազը կարող է մերժել իրեն ներկայացված համագործակցության միջնորդությունը՝ գտնելով, որ անձը պարզապես խոստովանում է միայն իր մեղքը և հայտնում միայն հանցանքին իր մասնակցության մասին տվյալներ: Այս դեպքում, հարց է առաջանում, թե ինչու, համագործակցության վարույթ կիրառելու անհեռանկարային միջնորդություն դատարանին ներկայացնելուց հրաժարվելով, դատախազը պետք է սպասի, որ գործը ուղարկվի դատարանի, դատարանը որոշի բանակցություններ նշանակել ու ինքը պաշտպանի ու մեղադրյալի ու տուժողի հետ զա համաձայնության ու դրա մասին արձանագրությունը ներկայացվի դատարանին: Սկզբունքորեն անհասկանալի է, թե ինչու մեղադրյալի կողմից հանցանքի առթիվ իր մասնակցության տվյալները դատախազին համագործակցության միջնորդության մեջ ներկայացվելու դեպքում, դատախազը մերժելով այդ միջնորդությունը չի կարող առաջարկել կիրառել դրա փոխարեն համաձայնեցման վարույթ ու բանակցությունների արդյունքում կազմել դատարանին ներկայացվող համաձայնեցման արձանագրությունը կամ համաձայնագիրը:

2. Ինչպես տեսնում ենք, դատախազը իրավունք չունի առաջարկել պաշտպանական կողմին ներկայացնելու իր հետ համագործակցելու առաջարկ: Սա անհարկի նվազեցնում է համաձայնեցման ու համագործակցության վարույթների մասին պաշտպանության և մեղադրանքի կողմերի միջև համաձայնությունների կնքման դեպքերը, ինչն ավելորդ է՝ հաշվի առնելով բազմաթիվ երաշխիքները՝ պաշտպանի ներգրավվածություն, մեղադրյալի կողմից այն կամովին և հետևանքները լրիվ գիտակցելով կնքելը, դատական ստուգումը և այլն: Վրաստանի Հանրապետության ՔԴՕ 679.1 հոդվածի (Դատավարական

համաձայնության էությունը) համաձայն, դատավարական համաձայնություն կնքում կարող է առաջարկվել թե մեղադրյալի, և թե դատախազի կողմից:

3. Մեղքի ընդունման երկու վարույթներում, մեղադրյալի կողմից թե համաձայնեցման, և թե համագործակցության վարույթին՝ իհարկե, կամովին, պաշտպանի հետ խորհրդակցելով և գիտակցաբար տրված համաձայնությունը ստանալու տեսակետից, զուտ դատավարական լուծումներն այստեղ բավարար չեն: Համագործակցության համար անհրաժեշտ է սպառնացող **քրեական սանցկցիաների մեծացումը, և բացի այդ, որն ավելի կարևոր է, ու ինչը իրականում դատախազների ամենօրյա կիրառման գործիքն է ԱՄՆ-ում՝ դա **դավադրության հանցակազմերի առկայությունն է՝** դարձյալ լուրջ սանցկցիաներով, որոնք թույլ են տալիս հեշտությամբ մեղսագրել ընդհանուր կամ միասնական դիտավորությունը՝ ապագա համագործակցողի ու հանրային ավելի մեծ վտանգավորություն ներկայացնող թիրախի միջև¹⁰⁸: Վերջապես, **անհրաժեշտ է սկզբունքորեն վերանայել արդարադատության դեմ ուղղված ուղղված հանցագործությունների համար սահմանված սանցկցիաները**, քանի որ ներկայումս դրանք սահմանված են ապրիորի՝ առանց այն հանցագործության ծանրությունը հաշվի առնելու, որի վերաբերյալ վարույթի առնչությամբ կատարվում են: Լուծումը՝ այս վկայակոչող սանցկցիաներ նախատեսելն է սուտ ցուցմունք տալու, վկաների վրա ճնշում գործադրելու և արդարադատության դեմ ուղղված այլ հանցագործությունների համար՝ **նախատեսելով, որ դրանց համար պատասխանատվությունը վրա է հասնում ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի այն հոդվածի, որի վերաբերյալ գործով կատարվում են նշված հանցավոր արարքները, նախատեսելով նաև, որ պատիժը սահմանվում է այդ հոդվածների նվազագույնից մինչև առավելագույնի 2/3-ը:****

4. Անհրաժեշտ է երկու վարույթներում էլ էլ ավելի մեծացնել դատարանի կողմից մեղքի ընդունման հայտարարություններում առկա փաստական հիմքի ստուգման (verification of the factual basis of the plea) դատավարական հնարավորությունները/պարտականությունները՝ որպես երաշխիք նաև հիմնավորված վերջնական դատական ակտեր կայացնելու համար: Մասնավորապես, **ՔԴՕ-ում պետք է ամրագրվեն այն հարցերը, որոնք դատարանը պետք է ուղղի մեղադրյալին՝ այդ ստուգումն անցկացնելիս, պարզելու համար թե արդյոք**

- նա խորհրդակցել է պաշտպանի հետ իր կամքն արտահայտելուց առաջ և արդյոք այդ խորհրդակցության ընթացքում պաշտպանի հետ քննարկել է իր կամահայտնության հետևանքները:
- իրեն տրվել են այնպիսի խոստումներ, որոնք նշված չեն համաձայնության արձանագրության կամ համագործակցության համաձայնագրի մեջ

¹⁰⁸ ՀՀ-ում դավադրության հանցակազմի ներդրման առաջին փորձը կատարվեց 2012թ.՝ երբ քրեականացվեց անձի կողմից «իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը (տես՝ **Քրեական օրենսհիքք, 311 հոդված, մաս 1-ին՝ Կաշառք ստանալը, և հոդված 311.1՝ Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը**): Այս մոտեցումն ընդունումը այլ հանցակազմերով կարող է լրջորեն մեծացնել հատկապես կազմակերպված հանցավոր գործունեության դեմ պայքարի արդյունավետությունը: Օրինակ, դատախազական հսկողության ներքո գործող ՕՀԳ իրականացնող մարմնի աշխատակիցը, տվյալներ ունենալով ահաբեկչության նպատակով թիրախի կողմից որևէ շենքի հատակագիծը ձեռք բերելուն ուղղված գործողությունների մասին, նրա հետ, **առանց թակարդման**, պայմանավորվում է պայթուցիկ տրամադրելու մասին: Կամ՝ թիրախը պայմանավորվում է զանգվածային ոչնչացման զենքի համար միջուկային նյութեր մատակարարելու մասին, երբ բնական է, որ պետությունը չի կարող թույլ տալ հանցավոր մտադրության հետագա իրացումը:

- նա պնդում է իր մեղքը այն պատճառով, որ կատարել է մեղսագրված արարքը, թե կան այլ պատճառներ:

Նշված հարցերի պատասխանները ստանալուց հետո պետք է կատարվի մեղադրյալի հարցաքննություն, մասնավորապես՝ մեղադրյալին առաջարկում է իր բառերով ներկայացնել իրեն մեղսագրված արարքը կատարելու գործողությունները:

Դրանից հետո դատարանը պետք է հարցնի դատախազին պետք է տա դարձյալ ՔԴՕ-ով սահմանված հետևյալ հարցերը՝

- արդյո՞ք համաձայնեցման կամ համագործակցության վարույթ չիրականացվելու պարագայում մեղադրանքի կողմը ի վիճակի էր լինելու ապացուցել մեղադրյալի մեղքը՝ **ողջամիտ կասկածից վեր չափորոշիչով**, և
- որո՞նք են այն, մեղադրյալի ու նրա պաշտպանի կողմից չվիճարկվող, փաստական հանգամանքները, որոնք կդրվեին մեղադրյալի մեղավորությունն ապացուցելու հիմքում՝ դատական վարույթն ընդհանուր կարգով իրականացնելիս:

5. Կարծում ենք, քննարկվող վարույթների՝ որպես դատախազության գործունեության ու ընդհանրապես **արդարադատության արդյունավետության ապահովման նպատակով, անհրաժեշտ է** հնարավորինս ընդլայնել համագործակցության վարույթի շրջանակները: Առանձնապես ծանր հանցագործությունները բացահայտելու և հանցավոր բուրգերը կազմաքանդելու համար, անհրաժեշտ է, որպեսզի համագործակցությունը թույլատրելի լինի նաև՝

- առանձնապես ծանր հանցագործություն կատարողի հետ՝ մյուս, հանրորեն ավելի վտանգավոր համակատարողին և բուն հանցանքը բացահայտելուն հանգեցնող համագործակցության դեպքում, և

- պատիժը արդեն իսկ կրող անձանց հետ: Այսինքն, պետությունը պետք է ստեղծի հնարավորություն, որպեսզի իր համար կարևոր տեղեկատվության տիրապետող անձը, այդ թվում՝ դատապարտյալը, շահագրգռված լինի այն իրեն հաղորդելու մեջ: Սրա ձևը կարող է լինել դատավճռի պատժի մասով կամ ապագայում՝ հենց դատավճիռը (քանի որ ՔԴՕ Նախագծով դատավճիռը կայացվում է միայն պատժի մասով՝ մեղքի առթիվ կայացված մեղադրական վերդիկտի հիման վրա) վերանայելու ինստիտուտի ներդրումը նոր հանգամանքի ուժով, այն է՝ երբ դատապարտյալը ցուցմունք կտա այլ գործով: Իհարկե, պետք է պահպանվեն տվյալ անձի անվտանգության երաշխիքները և նա օգտվի վկաների պաշտպանության ռեժիմից, որը համագործակցության ընթացքում կարող է գերակայել նաև պատիժը կրելու ռեժիմի նկատմամբ: **Սա նաև շեշտակի հարված կհասցնի քրեական ենթամշակույթին՝ թուլացնելով դրա ազդեցությունը հատկապես քրեակատարողական հիմնարկներում:** Վերջ ի վերջո, ծանր հանցագործները չպետք է սկսեն հանգիստ քնել իրենց դեմ հնարավոր վկաներին ՔԿՀ-ներ ուղարկելուց հետո:

6. Համագործակցության վարույթում դատախազի ունեցած դերի հետ շատ կապված է նրա համագործունեությունը իրազեկիչների (informants) և համագործակցող վկաների, այդ թվում՝ ավելի մեծ վտանգավորություն ներկայացնող թիրախի դեմ վկայություն տվող մեղադրյալների (cooperating witnesses) հետ: Սա կարևոր է այն իմաստով, որ համագործակցության շրջանակների ընդլայնման, այսինքն՝ ընթացքի մեջ գտնվող վարույթներով չսահմանափակվելու, այլ նաև՝ դեռ չսկսված ու արդեն ավարտված վարույթներում համագործակցելու կամ համագործակցության առաջարկներ ստանալու դեպքում, տեղեկատվության հավանական աղբյուրները դեռևս չեն ունենում որևէ

կարգավիճակ կամ ունեն դատապարտյալի կարգավիճակ¹⁰⁹: Եվ հետևաբար, դատախազների աշխատանքը այս դեռևս չհամագործակցող ապագա իրազեկիչների հետ չափազանց կարևոր են դառնում հետագա համագործակցության վարույթների տեսակետից, քանի որ նշված անձինք այդ տեղեկությունները ներկայացնելու են բացառապես համագործակցության վարույթի շրջանակներում որոշում կայացնող դատախազին, այլ ոչ թե՝ քննիչին կամ մեկ այլ մարմնին, ում հետ համագործակցության հեռանկարը միանշանակ չէ:

2.2.2.5. Դատախազի կողմից քննիչին նախնական (այդ թվում՝ ապացույցների թույլատրելիության բովանդակային ստուգմամբ) դատալսումների ընթացքում հարցաքննելը որպես մեղադրանքի կողմի վկա

Քանի որ այս թեմայի շուրջ բավականին նշվել է, մասնավորապես՝ այն, որ քննիչը, նոր մոդելի շրջանակներում ոչ միայն կատարելու է նախաքննություն, այլ նաև պատրաստվելու է իր կատարած գործողությունների ու որոշումների իրավաչափության առթիվ որպես վկա հարցաքննվելուն, ապա դատախազական հսկողությունն էլ ուղղված է լինելու նաև մեղադրանքի կողմից այս վկայի ապագա ցուցմունքների արժանահավատության ու դրանց հիմքում ընկած ապացույցների թույլատրելիության ապահովմանը:

Մեր կողմից առաջարկվող մինչդատական վարույթը մեկ իրավաբանի, այն է՝ դատախազի կողմից իրականացվելու մոդելից միանշանակ բխում են դատախազի կողմից օգտագործվելու համար ձեռք բերվող ապացույցների օրինականության ու դրանց ուղղությամբ կատարվող գործողությունների իրավաչափության ստուգման ինստիտուցիոնալ, տվյալ դեպքում՝ ենթափուլային լուծումները: Այսինքն՝ անհրաժեշտ է ներդնել այնպիսի մի ենթափուլ մինչդատական վարույթի փուլում, որը ուղղված կլինի նշված ստուգման ապահովմանը: Պարզ է, որ նման ստուգումը, այսինքն՝ ապացույցները դատարանում օգտագործելու թույլատրելիության հարցի լուծումը պետք է կատարվի ոչ միայն դատախազի, այլև հենց դատարանի կողմից:

Ի սկզբանե պետք է նշել, որ մինչդատական վարույթում նախնական դատալսումներ գործող ՔԴՕ-ով նախատեսված չեն: Միաժամանակ, ՔԴՕ Նախագծով նախնական դատալսումներ նախատեսված են, սակայն միանգամից նշվում է, որ դրանց ընթացքում ապացույցների թույլատրելիության բովանդակային ստուգում չի կատարվում¹¹⁰: Սրանով **նախնական դատալսումները մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտից վերածվում են դատաքննության նախապատրաստական մասի**, ինչը, միանշանակ, չի կարող գործուն երաշխիքներ ապահովել անթույլատրելի ապացույցներով և ոչ իրավաչափ դատավարական գործողություններով հաստատված փաստերով գործն ըստ էության քննող ու լուծող դատավորի ներքին համոզմունքի ձևավորումը կանխելու համար: Անգամ դատաքննության

¹⁰⁹ Վերջինը՝ այն դեպքերում, երբ, ինչպես մենք են առաջարկում, որպես պատիժը կամ նոր ՔԴՕ տերմինաբանությամբ դատավճիռը, այսինքն՝ պատժի մասով ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը վերանայելու նոր հանգամանք, դիտվի դատապարտյալի համագործակցությունը այլ հանցագործություններ ու դրանք կատարողներին բացահայտելու ուղղությամբ: Այս դեպքում միջնորդությունը պետք է ուղարկվի ԳԴ-ին կամ ԳԴ տեղակալին՝ պատժի վերանայման նպատակով բողոք ներկայացնելու համար:

¹¹⁰ **ՔԴՕ Նախագիծ, հոդված 320 (Ապացույցների թույլատրելիության հարցի քննարկումը), մաս 2-րդ.** «Ապացույցի թույլատրելիության հարցը քննարկելիս դրա բովանդակային հետազոտում չի իրականացվում: Եթե ապացույցի թույլատրելիության որոշումը պահանջում է տվյալ կամ մեկ այլ ապացույցի բովանդակային հետազոտում, ապա ապացույցն անթույլատրելի ճանաչելու հարցի լուծումը հետաձգվում է և հիմնական դատալսումների ընթացքում իրականացվում է սույն օրենսգրքի 335-րդ հոդվածով սահմանված կարգով»:

ընթացքում, եթե դատավորը այդ ապացույցները ճանաչի անթույլատրելի և հանի ապացուցողական նյութից, դրանցով հաստատվող բովանդակությունը, բնության օրենքների ուժով, **հնչած զանգի ձայնը չեղարկելու անհնարինության ուժով**, մինևույն է ազդելու է առնվազն թույլատրելի ճանաչված ապացույցների գնահատման վրա: Մյուս կողմից, **դատավարական ճանաչողության պրոցեսի այս ինտելեկտուալ անազնվության (intellectual dishonesty) մեկ այլ դրսևորում է այն**, որ նախաքննությամբ ձեռք բերված ապացույցները ինքնաատուտենտիկ կերպով են մտնում գործն ըստ էության դատարանի ճանաչողության օբյեկտների տիրույթը, որից հետո նոր կատարվում է դրանց թույլատրելիության ստուգումը և օգտագործման թույլատրելիության հարցի լուծումը, ինչը հիմնականում կատարվում է հենց դատավճռով:

Այսինքն՝ դատաքննության ամբողջ ընթացքում քննվում են ապացույցներ, կողմերը, դատարանը վկաներին դրանց առթիվ տալիս են հարցեր, ճառերում կողմերը հենվում են դրանց վրա, այսինքն՝ **որպես ապացույց օգտագործվում են լիովին, ու վերջում դեռ պետք է որոշվի, թե արդյոք թույլատրելի էին այդ ապացույցները, թե ոչ, այսինքն՝ թույլատրելի էին այդ ապացույցների օգտագործման՝ կողմերի ու դատարանի կողմից յատարված բոլոր վերը նշված գործողությունները**¹¹¹: Սրա միակ լուծումը մինչդատական վարույթում նախնական դատալսումների անցկացումն է՝ ապացույցների թույլատրելիության և դատավարական գործողությունների իրավաչափության բովանդակային ստուգման նպատակով:

ԱՄՆ-ում այս դատալսումները կոչվում են փաստի և իրավունքի խառը լսումներ, որոնց ընթացքում էլ, բնականաբար, ապացույց ձեռք բերած քննիչը, հետաքննիչը հարցաքննվում են որպես վկաներ, ինչից հետո էլ դատարանը, ապացույցի թույլատրելիության հարցը լուծում է ավելի ցածր ապացուցողական շեմով, քան մեղքի հարցը: Օրինակ, եթե այս դատալսումների ընթացքում, ոստիկանի հարցաքննությունից պարզվում է, որ անձնական խուզարկության համար նա չի ունեցել անձին մոտենալու և/կամ այնուհետև՝ նրան անձնական խուզարկության ենթարկելու հիմնավոր կասկածը, ապա այդ նույն խուզարկությամբ ձեռք բերված իրեղեն ապացույցը, օրինակ՝ թմրամիջոցը, դատարանը ճանաչում է անթույլատրելի՝ առանց ապացույց ձեռք բերած անձի համար՝ անձնական պատասխանատվության հիմքի՝ մեղքի առկայության ավելի բարձր ապացուցողական շեմ պահանջող հարցին անդրադառնալու: Նույնը պետք է ասել խոշտանգման մասին հայտարարությունների արժանահավատ լինելը դատավորի կողմից գնահատվելու մասին, որի արդյունքներով, օրինակ, խոստովանական ցուցմունքը ճանաչվում է անթույլատրելի՝ առանց այն ձեռք բերած ոստիկանի կողմից խոշտանգում կատարելու և/կամ այն ենթադրաբար կատարած անձի մեղքի հարցին անդրադառնալու: **Իհարկե, անթույլատրելի ճանապարհով ստացված ապացույցների կամ թույլատրելի ճանապարհով ստացված, բայց օգտագործումն անթույլատրելի**¹¹² **ապացույցների օգտագործումը կանխելու երաշխիքներ կան նաև դատական վարույթում, սակայն դա չի կարող հիմք հանդիսանալ անթույլատրելի ապացույցների օգտագործումը թույլ տալու համար:**

Միջազգային չափորոշիչներով, դատախազը ոչ միայն իրավունք չունի օգտագործել անթույլատրելի ապացույցները մեղադրանքը հիմնավորելու համար, այլև պարտավոր է կանխել դրանց օգտագործումը դատարանի կողմից, ինչի երաշխիք է հենց նման

¹¹¹ Տես՝ Նախագիծ, հոդված 328, մաս 5-րդ. «Բոլոր ապացույցները հետազոտելուց հետո դատարանը կողմերին հարցնում է, թե արդյոք նրանք միջնորդում են անթույլատրելի ճանաչել որևէ հետազոտված ապացույց»:

¹¹² Այս դեպքում, օրինակ, խոսքը վերաբերում է թույլատրելի մերկացնող ցուցմունքի օգտագործման անթույլատրելիությունը, եթե ընդհանուր ապացույցների զանգվածում այն կարող է վճռորոշ դեր ունենալ մեղադրյալի դատապարտման համար ու այդ ցուցմունքը տվող վկան հետագա փուլերում չի առերեսվել մեղադրյալի հետ:

օգտագործումը կանխելուն նվիրված դատական ստուգման մրցակցային բնույթը: ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարականը (կետ 28) ուղիղ նշում է, որ «դատախազները չպետք է կասկածյալների դեմ ապացույցներ ներկայացնեն, եթե տեղյակ են այն մասին կամ ողջամիտ հիմքեր ունեն կարծելու, որ ապացույցը ձեռք է բերվել օրենքին հակասող միջոցներով: Որևէ կասկած ունենալու դեպքում, դատախազները պետք է դատարանին խնդրեն որոշում կայացնել ապացույցների թույլատրելիության առթիվ»: Սրանից ուղղակիորեն հետևում է, որ դատախազների նշված պարտականությունը՝ համապատասխան միջնորդություն ներկայացնելու, ու հետևաբար՝ դատարանի պարտականությունը՝ այն քննելու ու լուծելու, ծագում է դատախազի կողմից ապացույցի թույլատրելիության կասկածը ծագելու պահից, և այդ պարտականությունները՝ թե՛ դատախազի, և թե՛ դատարանի կատարմամբ, չեն կարող թողնվել չկատարված մինչև դատաքննության վերջը, ինչպես փաստացի ամրագրված է գործող ՔԴՕ-ում ու առաջարկվում է ՔԴՕ Նախագծով:

Ապացույցների թույլատրելիության հարցը գործի ըստ էության քննությանը նախորդող փուլում լուծելը հատկապես կարևոր է անձի հիմնարար իրավունքների, ու հատկապես՝ **խոշտանգումների արգելքի ապահովման համար**: «Դատախազները նաև պարտավոր են երաշխավորել, որ քրեական գործի քննության ընթացքում ստացված ապացույցները ձեռք բերվեն պատշաճ կերպով եւ որ այդ ընթացքում կասկածյալի հիմնարար իրավունքները չտնտեսվեն: Երբ դատախազների տրամադրության տակ կասկածյալների դեմ այնպիսի ապացույցներ են, որոնք, դատախազների գիտությամբ կամ ողջամիտ դատողությամբ, ձեռք են բերվել մարդու իրավունքների կոպիտ խախտում հանդիսացող անօրինական մեթոդներով, հատկապես՝ ներառելով խոշտանգումներ կամ դաժան անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ կամ այլ չարաշահումներ մարդու իրավունքների նկատմամբ, նրանք պետք է հրաժարվեն նման ապացույցներն օգտագործել որևէ այլ անձի դեմ, քան նրանց, ովքեր նման մեթոդներ են կիրառել, կամ՝ համապատասխան կերպով տեղեկացնեն դատարանին, որպեսզի անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռնարկվեն դատական պատասխանատվության ենթարկելու այդ մեթոդներն օգտագործած անձանց¹¹³: **Այսինքն՝ քննչական և հատկապես գաղտնի քննչական գործողության արդյունքում ձեռք բերված ապացույցի թույլատրելիության նախնական դատական բովանդակային ստուգումը բխում է հենց նաև դատախազի շահերից:**

Քանի որ անթույլատրելի ապացույցների օգտագործումից հրաժարվելը դատախազի պարտականությունն է, վերջինս պարտավոր է ապահովել նաև, որպեսզի **անթույլատրելի ապացույցները չհայտնվեն դատավորի մոտ, դրանց բովանդակությունը չլինի դատավորի համար հասանելի, քանի որ ցանկացած տեղեկատվություն, հնչած զանգի օրենքով, չի կարող արդեն դուրս գալ դատավորի ուղեղից, չագդել նրա համոզմունքի վրա, մասնավորապես թույլատրելի ապացույցների գնահատման վրա**: ԱՄՆ-ում դատախազի այդ պարտականության համար ստեղծված է ինստիտուցիոնալ փուլային երաշխիք՝ **նախնական դատալսումներն են, որոնց անհրաժեշտության մասին, որպես անձի կոնվենցիոն իրավունքների պաշտպանության երաշխիք, նշել է նաև ՄԻԵԴ-ը Հիլկի Գինեշն**

¹¹³ ՄԱԿ-ի ուղենիշներ Դատախազների դերի մասին, ուղենիշ 16, տես՝ **Քոնոր Ֆոլի, Պայքար Խոշտանգումների դեմ Ձեռնարկ դատախազների եւ դատավորների համար, ... , էջ 51; տես նաև՝** ՄԱԿ-ի Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա, հոդված 15՝ «Յուրաքանչյուր ապացույց, որ ձեռք է բերվել խոշտանգման կամ այլ դաժան վերաբերմունքի միջոցով, որպես ապացույց կարող է միայն օգտագործվել այդ խոշտանգումներն իրականացնողների դեմ»

ընդդեմ Թուրքիայի գործով 2003թ. հունիսի 19-ին կայացված իր վճռում (կետ 91) արձանագրելով հետևյալը՝

«Չնայած իր [ՄԻԵԴ] խնդիրը չէ վերացական ձևով ուսումնասիրել քրեական իրավունքում ապացույցների թույլատրելիության հարցը, Դատարանը ցավալի է համարում որ սույն գործով Ազգային անվտանգության դատարանը այս հարցը չի լուծել նախքան գործն ըստ էության քննելու: Նման նախնական քննությունը միանշանակ ազգային դատարաններին հնարավորություն կտար քրեական հետապնդման համար ապացույցներ ձեռք բերելու նպատակով կիրառված ցանկացած ապօրինի միջոց դատապարտելու համար»¹¹⁴:

«Որոշ դեպքերում դատավորները կարող են առանձին լսում նշանակել («դատաքննություն՝ դատաքննության ներսում») նման հայտարարություններով՝ նախքան հիմնական դատական նիստում կոնկրետ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելը»¹¹⁵:

Նախնական բովանդակային դատալսումները գործուն երաշխիք կլինեն հենց Նախագծով (հոդված 331, մաս 5) նախատեսված հետևյալ կարևորագույն նորմի իրացման համար՝

«Այն դեպքում, երբ առկա է սույն հոդվածի 4-րդ մասում նշված ապացույցների ձեռքբերման կամ ամրագրման ընթացակարգի առերևույթ խախտում, տվյալ ապացույցը չի կարող օգտագործվել առանց այն ձեռք բերած կամ կազմած անձի հարցաքննության»:

Այդ նորմը, սակայն, պետք է կիրառվի ավելի վաղ՝ մինչդատական վարույթի նախնական դատաքննության փուլում՝ ապացույցների թույլատրելիության բովանդակային դատական ստուգման ենթափուլում՝ որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ուղղություն: Հակառակ դեպքում, այդ ապացույցները օգտագործվելու են հնչած զանգի վեչը նշված օրինաչափության ուժով:

Քանի որ դատախազի և իր վարության վկաների քննիչի/հետաքննիչի միջև նույն ինստիտուցիոնալ փոխհարաբերությունները արտացոլվում են ցանկացած, այսինքն՝ նաև հիմնական դատալսումների համար, և նույն հարցերը հանրային մեղադրող դատախազի գործառույթների առնչությամբ այլևս չեն քննարկվելու, որպես այս կետի ամփոփում նշենք, որ իհարկե, ապացույցի թույլատրելիության և դատավարական գործողության իրավաչափությունը վիճարկելու երաշխիքները կողմին հասանելի են նաև հիմնական դատալսումների ընթացքում, ինչն ուղղակիորեն ձևակերպված է Նախագծի 57 և 331 հոդվածներում, սակայն ինքնին դա չի կարող զրկել պաշտպանական կողմին նույնը նաև մինչդատական վարույթում անելուց:

Ապացույցների բովանդակային ստուգման նպատակով մինչդատական վարույթում նախնական դատալսումների ժամանակ քննիչի/հետաքննիչի հարցաքննելը, այսինքն՝ հարցաքննելը նույն անձանց ու նույն հիմքերով, որոնք սահմանված են հիմնական դատալսումների ընթացքում, **հզոր ինստիտուցիոնալ երաշխիք է, որպեսզի անթույլատրելի ապացույցից կամ ոչ իրավաչափ գործողության արդյունքում ստացված տեղեկատվությունը (այդ թվում՝ թունավոր ծառի պտուղները) չհայտնվի գործն ըստ էության քննող դատավորի աչքերի ու ականջների մոտ**¹¹⁶ և անխուսափելիորեն չազդի նրա համոզմունքի, հետևաբար՝ և որոշման վրա:

¹¹⁴ CASE OF HULKİ GÜNEŞ v. TURKEY (Application no. 28490/95), 19 June 2003, par 91, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61169>

¹¹⁵ Конон Фоли, «Борьба с пытками: руководство для судей и прокуроров», Центр по защите прав человека, Эссекский университет, 2003, с. 59.

¹¹⁶ Տես՝ ՄԻԵԴ դատավոր Բոստյան Զուպանչիչի *Լյուկան ընդդեմ Իտալիայի գործով* Մասնակի համընկնող կարծիքը. «Ես պնդում եմ, այնուամենայնիվ, որ քրեական վարույթը, որի ընթացքում թույլ են տրվել մարդու իրավունքների ծանր խախտումներ, *a priori* (ինքնին, արդեն իսկ, անկախ փորձից. – խմբ. ծանոթ.) չի կարող բերել բովանդակային առումով ընդունելի դատապարտման: Այլ բան պնդելը նշանակում է անդամագրվել այն դատական ինկվիզիցիոն դիրքորոշմանը, որ նպատակն արդարացնում է միջոցները: Եթե սրա ապացույց

2.2.2.6. Դատախազի կողմից մեղադրանքի կողմի վկաներին դատալսումներից առաջ հանդիպելու հնարավորությունը

Դատախազի կողմից քննիչին և հետաքննիչին հարցաքննելու Նախագծով արդեն իսկ հիմնական դատալսումների փուլում նախատեսված լիազորության հետ սերտորեն կապված է մեղադրանքի կողմի վկաների հետ դատախազի հանդիպելու հնարավորությունը: Բնական է, որ նույն սերտ կապի անհրաժեշտությունը կա նաև մինչդատական փուլում, մասնավորապես նախնական դատալսումների ապացույցների բովանդակային ստուգման մեր կողմից առաջարկվող ենթափուլում նույն անձանց հարցաքննելու լիազորության հետ: Բացի այն, որ մեղադրանքի կողմի վկաների հարցաքննությունը կարևոր է նրանց տրվելիք ցուցմունքները ամփոփելու համար, այն՝ հատկապես՝ քննիչի և հետաքննիչի ու նաև տուժողի պարագայում, կատարվելու է գործնականում՝ եթե ուղղիղ արգելք սահմանված չէ¹¹⁷:

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի «Վկաների պաշտպանությունը արդարադատության համակարգում» Զեկույցի 19-րդ Երաշխավորությունը, ինչը դատավարական տեսակետից մեծ նշանակություն չունի («19. Թույլ տալ դատախազին շփվելու խոցելի վկաների հետ դատաքննությունից առաջ. - ԴԽ») նշում է՝

«Այն պետություններում, որտեղ դա ներկայումս արգելված է, օրենքները պետք է փոփոխության ենթարկվեն՝ լիազորելու դատախազին հանդիպել վկային դատաքննությունից առաջ, հատկապես՝ խոցելի վկայի հետ գործ ունենալիս: Վկաներին «մարզելու» վերաբերյալ (այսինքն՝ դատաքննությունից առաջ նրա վրա ոչ պատշաճ ազդեցություն գործելու) առթիվ ցանկացած մտահոգություն կարելի է փարատել նման հարցաքննությանը օբյեկտիվ երրորդ կողմի ներկայությունը ապահովելու միջոցով:

Որոշ իրավական համակարգեր թույլ չեն տալիս դատաքննությունից առաջ վկայի և դատախազի միջև որևէ շփում: Նման շփումը կարող է, սակայն, նշանակալի վստահություն հաղորդել խոցելի վկային, քանի որ վկան կարող է ավելի հեշտությամբ հարմարվել դատարանում հանդես գալու անհարմարություններին: Երրորդ օբյեկտիվ կողմը որպես դիտորդ (սա կարող է լինել դատարանի կողմից նշանակված փորձագետը՝ երաշխավորելու համար, որպեսզի վկաներին չտրվեն ցուցումներ դատաքննության ընթացքում հարցաքննվելու ժամանակ կոնկրետ ցուցումներ տալու նպատակով»¹¹⁸:

անհրաժեշտ լինի բերել միջազգային իրավունքից, մենք կարող ենք դիմել Միավորված Ազգերի Խոշտանգումների դեմ Կոնվենցիային (ԽԴԿ, “the CAT”): ԽԴԿ-ն միանշանակ կերպով պնդում է, որ ցանկացած ապացույց, որն ուղղակի կամ անուղղակի եղանակով ձեռք է բերվել խոշտանգման շնորհիվ, պետք է կանխել քրեական գործը լուծող անձանց (դատավորի կամ երդվյալների) աչքերի առաջ և ականջների մոտ հայտնվելուց: ԽԴԿ-ն պահանջում է չթույլատրել այդպիսի ապացույցները՝ չնայած նրան, որ խոշտանգման միջոցով ձեռք բերված խոստովանական կամ այլ ցուցմունքները կարող են նպաստել ճշմարտության բացահայտման գործառնության իրականացմանը» (27 փետրվարի, 2001թ., դիմում Հ 33354/96, կետ I, Luca v Italy):

¹¹⁷ Սա դատախազի պրոցեսուալ ակտիվացման եղանակներից մեկն է, մյուս երկուսն են՝ դատախազի կողմից կատարելուն անձամբ մասնակցելն է առանձին քննչական գործողությունների կատարմանը այն մինչդատական վարույթում, որի օրինականությունը նա հսկում է (որն արդեն իսկ ընդունվել է Նախագծում, տես՝ 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ «Մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը՝ ... իրավասու է սույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ մասնակցել ձեռքբերված անձի և մեղադրյալի հարցաքննությանը»), և դատախազի կողմից անձամբ քննություն իրականացնելը՝ քննիչի կարգավիճակով (որը գործում է ԱՄՆ-ում, երբ դատախազը որպես քննիչ քննում է, օրինակ՝ ոստիկանների կողմից ենթադրաբար կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերը, բայց որի ինստրիտուցիոնալ հսկայական անհամատեղելիությունը ՀՀ դատախազություն-նախաքննություն դատավարական մոդելի ներկայիս պարագայում գրեթե անհաղթահարելի է ու դուրս է սույն Հետազոտության առարկայի շրջանակներից):

¹¹⁸ Legal Advisory Section FINAL REPORT Informal Expert Working Group on Witness Protection in the Justice System, United Nations Office on Drugs and Crime, Vienna, 22-24 September 2005, էջ 19: Որպես խոցելի վկաների հետ աշխատանքի կազմակերպման դատախազների համար ուղեցույց տես՝ «Justice Journey court preparation guide,

Բացի այդ, ինչպես նշեցինք, Նախագծով սահմանվում է (38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը), որ՝ «Մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը՝ ... իրավասու է սույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ մասնակցել ձերբակալված անձի և մեղադրյալի հարցաքննությանը»: Այսինքն, ըստ էության, դատախազը հանդիպում է ընթացքում հակառակ կողմի ներկայացուցիչների հետ, իսկ՝ ցուցմունք տալու ցանկության դեպքում՝ նաև մեղադրյալի, այսինքն՝ պաշտպանության կողմի վկաների հետ¹¹⁹: Վերջին դեպքում, մեղադրյալն իրականացնում է իր պաշտպանության իրավունքը, մասնավորապես՝ ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3(դ) կետով նախատեսված՝ իր գործով վկաների, այդ թվում՝ հենց իր (քանի որ ՄԻԵԿ իմաստով «վկան» ինքնավոր հասկացություն է և ներառում է վկայություն տվող բոլոր անձանց՝ անկախ դատավարական կարգավիճակից¹²⁰) հարցաքննվելու իրավունքը: Հետևաբար, նույն դատախազի կողմից մեղադրյալին հակառակ, այն է՝ մեղադրող կողմի վկաների, հատկապես՝ գործով տուժողների հետ հանդիպելը նույնպես պետք է չէ բացառել:

Նաև քննիչին կամ հետաքննություն իրականացրած անձին ուղիղ (այսինքն՝ դատախազի կողմից) և հակընդդեմ (խաչաձև, այսինքն՝ պաշտպանական կողմի կողմից), ինչպես նաև՝ դատարանի կողմից հարցաքննելը դատաքննության ընթացքում հանդիսանում են նախաքննության օրինականության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության և դատական վերահսկողության (ընդ որում՝ և նախնական, և հետադարձ վերահսկողության) արդյունավետության երաշխիք: Մինչդատական վարույթում նախնական դատալուսման ընթացքում արտահայտվում են դատախազի և մինչդատական վարույթ իրականացրած հարաբերությունների առանձնահատկությունները, որոնք էլ ավելի են ընդգծվում հիմնական դատալուսման, այսինքն՝ գործն ըստ էության դատարանում քննելու ժամանակ: Փաստորեն, նախնական պարզվում է քննիչների և հետաքննություն իրականացրած անձանց իրական կարգավիճակը մինչդատական վարույթում՝ որպես այդ վարույթը հսկող դատախազի

Supporting victims and witnesses of crime through the court process», էջ 9, 10 և հաջորդիվ: Ընդհուպ մինչև նշվում է (էջ 13), որ վկայի հետ կարող են խոսել միայն դատավորը, դատախազը և պաշտպանը, ինչը, մեր կարծիքով, շատ կարևոր է, օրինակ՝ դատարանի շենքում հարցաքննվելուն սպասելիս, https://www.victimsservices.justice.nsw.gov.au/Documents/fs36_workers-guide.pdf

¹¹⁹ Տես՝ Նախագիծ, հոդված 328, մաս 5-րդ. «Մեղադրյալը կարող է հարցաքննվել այն դեպքում, երբ կողմերից մեկը նման միջնորդություն է ներկայացրել, և մեղադրյալը նախնական դատալուսման ընթացքում հաստատել է ցուցմունք տալու իր մտադրությունը: Ապացույցների հետազոտման ընթացքում ցանկացած պահի մեղադրյալն իրավունք ունի հայտարարել ցուցմունք տալու ցանկության մասին»: Տես նաև՝ Հոդված 326, մաս 2-րդ. Հարցաքննվողն իր ցանկությամբ կարող է տալ հետևյալ բովանդակությամբ ճշմարտացիության երդում. «Ես՝ Անուն Ազգանուն, ցուցմունք տալիս երդվում եմ ասել միայն ճշմարտությունը, ողջ ճշմարտությունը և չասել ոչինչ, բացի ճշմարտությունից», Հոդված 221, մաս 3-րդ՝ Հարցաքննությունը սկսելուց առաջ քննիչը մեղադրյալին պարզաբանում է պաշտպանի մասնակցությամբ հարցաքննվելու նրա իրավունքը և մեղադրյալին տրամադրում սույն օրենսգրքով սահմանված նրա իրավունքների և պարտականությունների ցանկը, եթե այն մինչ այդ մեղադրյալին չէր տրամադրվել: Այդ փաստը հաստատվում է մեղադրյալի ստորագրությամբ: Քննիչը մեղադրյալին բացատրում է նաև լռելու նրա իրավունքը, պարզաբանում, որ այդ իրավունքից օգտվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա, ինչպես նաև հայտնում է, որ նրա ցուցմունքը քրեական վարույթի ընթացքում կարող է օգտագործվել որպես ապացույց: Եթե մեղադրյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում, ապա քննիչը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունք տալու պարտականության և նախագոշացնում սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Այդ փաստը հավաստվում է մեղադրյալի ստորագրությամբ: **Այսինքն՝ մեղադրյալը, հարցաքննվելու ցանկություն հայտնելու դեպքում, դատալուսման ժամանակ հարցանվում է վկայի կարգավիճակով, իսկ քննիչի կողմից հարցաքննվելիս՝ վկայի կարգավիճակի որոշակի տարբերով հանդերձ:**

¹²⁰ Տես, բազմաթիվ այլ աղբյուրների թվում՝ վերը հիշատակված *Լյուկայի գործով* ՄԻԵԴ վճիռը, որտեղ, մասնավորապես, նշվում է (կետ 41)՝ «Այս առումով, այն փաստը, որ ցուցմունքները, ինչպես սույն գործով է եղել, տրվել են համամեղադրյալի, այլ ոչ թե վկայի կողմից, նշանակություն չունի: Այս կապակցությամբ Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայի համակարգում «վկա» հասկացությունը ունի «ինքնավար» իմաստ»:

ապագա վկաների: Հենց դատական որոշումներն են, որ մեկնաբանում են օրենքով նախատեսված հիմնավոր կասկածի, ապացուցողական այլ չափորոշիչների պահանջները, որոնք էլ դատախազը պետք է ապահոված լինի մինչդատական վարույթում: Բնականաբար, դատախազի որպես դատարանում մեղադրողի աշխատանքը մեծապես կախված է լինելու այս՝ **իր կողմի վկաների հետ կատարած նախապատրաստական աշխատանքի արդյունքներով:**

Ինչպես արդեն նշվեց, վկաների հետ հանդիպումը պետք է չպետք է հետապնդի նրանց կոնկրետ բովանդակության ցուցմունքներ տալու նպատակ: Այն երկրներում, որտեղ դա թույլատրված է, օրինակ՝ ԱՄՆ-ում, դատախազի կողմից վկաներին դատաքննության նախապատրաստելը (witness preparation) մեր տերմինաբանությամբ «հսկող դատախազի» ամենօրյա պրակտիկան է, որի անցկացման համար պահանջվում են դատախազները նաև հատուկ դասընթացներ են անցնում՝ ապահովելու վկաների կողմից արժանահավատ վարքագիծը: Մասնավորապես, ընդունված են տակտիկական բնույթի հետևյալ սկզբունքներ¹²¹, այն է՝ մեղադրող կողմի կամ մեղադրող կողմի համար բարենպաստ վկան (*“friendly witness”*)՝ ում հանրային մեղադրողը ենթարկելու է ուղիղ հարցաքննության և հետևաբար, իրավունք չունի նրան ուղղորդող հարցել տալու), պետք է, որ ձեր համար բարենպաստ վկան պետք է՝

- Չհակասի ինքն իրեն.
- Ցուցադրի անձնական շահարգրվածության բացակայությունը, իսկ տուժողի դեպքում՝ ձգտի հայտնել փաստերը, այլ ոչ թե իր մեկնաբանությունները կամ ատելությունը տուժողի նկատմամբ.
- Ունենա արժանահավատ, պրոֆեսիոնալ, բանիմաց տեսք, լավ վարվեցողություն՝ ինչպես վկայի ամբիոնին մոտենալիս, դրա մոտ գտնվելիս և այն լքելիս.
- Լինի վստահ. նախազգուշացվելուց հետո, նախազահողի՝ վկայի կարգավիճակին և մասնավորապես՝ պարտականությունների վկայի համար հասկանալի լինելու հարցին վստահ և բարձր ասել «ԱՅՈ».
- Որքան հնարավոր է քիչ շեղող պարագաներ վկայի հագուկապում (քանի որ դա բարենպաստ վկա է, և մեղադրողը ցանկանում է, որ դատարանի ամբողջ ուշադրությունը բևեռվի նրա ասածի վրա):
- Բոլոր հարցերին պատասխանի հստակ, առանց գլխով թափահարելու.
- Երբեք չասի՝ «Ես այդ մասին ցուցմունք եմ տվել նախաքննության ընթացքում».
- Խոսելիս, հետևի ժեստերին, օրինակ՝ բերանի մոտ ձեռքը տարած խոսելը լավ տպավորություն չի թողնում.
- Դատարանին հարց ուղղելիս՝ սկզբից դիմի՝ հարգելի դատարան, և սպասի արձագանքին, այնուհետև՝ խոսի միայն թույլտվություն ստանալուց հետո.
- Ցուրաքանչյուր հարց լսի շատ ուշադիր, մինչև պատասխանելը համոզվի, որ ճիշտ է հասկացել հարցը.

¹²¹ Այս սկզբունքները մենք մշակել ենք ԱՄՆ պրակտիկան և առանձին ուղեցույցների հիման վրա՝ մեր կողմից ԵՊՀ-ում դատավանդվող «Իրավաբանի մասնագիտական հմտություններ» առարկայի շրջանակներում՝ հաշվի առնելով ՀՀ դատարաններում և ՀՀ քրեական գործերով դատական նիստերի 2008-2009թթ. մեկ տարուց ավելի իրականացված մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև այս սկզբունքների կիրառելիությունը, որն ավելի է աճելու ՔԴՕ Նախագծի ընդունման պարագայում, ի թիվս այլի, նաև՝ դատարանում կատարվող վկաների ուղիղ և խաչաձև հարցաքննությունների տարանջատման շնորհիվ: Տես, ի թիվս բազմաթիվ այլ աղբյուրների՝ Prosecutor Trial Preparation - Direct Examination Questions for the Victim A WARNATH GROUP PRACTICE GUIDE, <https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2019/02/Warnath-Group-Prosecutor-Trial-Preparation-Direct-Exam-Practice-Guide.pdf>; Pre-Trial Witness Interviews - Guidance for Prosecutors, <https://www.cps.gov.uk/legal-guidance/pre-trial-witness-interviews-guidance-prosecutors>

- Եթե պաշտպանը/մեղադրյալը, առարկում է մեղադրողի՝ վկային ուղղված հարցի դեմ՝ դադար տա և սպասի մինչև դատարանը թույլ կտա պատասխանել.
- Հիշի, որ դատարանի համար կարևոր են ոչ թե իր կարծիքները, այլ իր ներկայացրած փաստերը, և որ իր կարծիքները կարևոր են զուտ իր ներկայացրած փաստերի ընկալման արժանահավատությունը գնահատելու տեսակետից (օրինակ՝ իմ կարծիքով, մոտ 10 մետրի, վրա նկատեցի մեղադրյալին).
- Չտրվի պրովոկացիաների, հատկապես՝ եթե դրանք ուղղված են իր անձնական նախապաշարվածությունը դրսևորելուն կամ այլ կերպ օբյեկտիվությունը կասկածի տակ դնելուն ուղղված: Իրականում, Հայաստանի Հանրապետության դատարաններում, դատարանը սկզբից վկային հարցնում է, թե արդյոք նրա և ամբաստանյալի միջև կա թշնամանք կամ բարեկամություն, սովորաբար այդ հարցին տրվող բացասական պատասխանի հավաստիությունը էլ չի քննարկվում: Սակայն պետք է հիշել, որ դատարանը վկայի ցուցմունքները գնահատում է նախևառաջ այս հանգամանքի լույսի ներքո.
- Պատասխանի հանգիստ.
- Փաստական սխալ թույլ տալու դեպքում՝ չձգտի «սվաղել», անմիջապես ընդունի իր սխալը և շտկի այն կամ ընդունի, որ չի կարող տալ ճշգրիտ տեղեկություն: Ավելի լավ է սխալվել, քան ստել.
- Անգիր չանի, թե ինչ է ասելու, չօգտագործի ձևակերպումներ, որոնք ակնհայտորեն դուրս են իր առօրեական բառապաշարից, օրինակ՝ օգտագործում է այնպիսի բառեր, որոնց նշանակությունը ինքն ակնհայտորեն չգիտի: Կամ վկան, փաստեր ներկայացնելու փոխարեն, դրանք ներկայացնում է արդեն իսկ քրեաիրավական որակման տեսքով. իշխանության ներկայացուցիչները երբեմն իրենց ցուցմունքում ցիտում են քրեական օրենսգրքի հատուկ մասերի դիսպոզիցիան, հատկապես՝ իշխանության ներկայացուցչի դեմ բռնության (ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդված) և վերաբերյալ գործերով:
- Դադար տա այն դեպքերում, երբ հակառակ կողմը տալիս է մի հարց, որը իր կարծիքով, կարող է առարկություն առաջացնել դատախազի մոտ, որպեսզի վերջինս կարողանա օգտվել այդ հնարավորությունից:
- Դատախազի հարցերին պատասխանելիս նայի դատավորի ուղղությամբ, այլ ոչ թե անընդհատ՝ մեղադրողի աչքերին, հակառակ դեպքում տպավորություն կստեղծվի, որ վկան թույլտվություն է ստանում մեղադրողից ճշմարտությունը ասելու համար, կամ առնվազն՝ որ այդ հարցը կարող է վնասել մեղադրանքին:
- Եվ **ամենակարևորը հիշի, որ միշտ պետք է ասել ճշմարտությունը**, խուսափել ճշմարտության անգամ ամենափոքր գունազարդումներից: Ճշմարտությունից ցանկացած շեղում՝ անգամ այնպիսի հարցում, որի աննշան լինելու վկան համոզված է, ունակ է գրոյի հավասարեցնել թե՛ նրա անձնական, և թե՛ նրա ցուցմունքի բովանդակային արժանահավատությունը:

2.2.2.7. Դատախազի հանձնարարությունների և դատախազին տրվող տրվող հանձնարարությունների օրինականության ապահովումը

Անկախ նրանից, թե որ մոդելն է որդեգրվում ՔԴՕ-ով, դատախազի կողմից քննիչին ու նաև ըստ այդմ՝ քննիչի կողմից մյուս մարմիններին տրվող հանձնարարությունները պետք է համապատասխանեն իրավական որոշակիության չափանիշներին՝ լինեն պարզ և հասկանալի, ինչպես նաև օրինական: Հակառակ դեպքում նման հանձնարարությունների և ցուցումների պարտադիրությունը, դրանք տվողների կամայականության դեմ երաշխիքներ չապահովելով, խախտում է նաև հանձնարարությունների/ցուցումների

հասցեատերերի ինքնուրույնության սկզբունքը (տես՝ Նախագծի 35-րդ հոդվածը. Վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը) և կանխում վերջիններիս կողմից սեփական պարտականությունները օրենքի պահանջին համապատասխան կատարելու հեռանկարը: Ի սկզբանե պետք է ասել նաև, որ ցուցումների պարտադիրության հետ մեկտեղ սահմանվող սկզբունքները պետք է լիովին գործեն նաև դատախազ-վերադաս դատախազ հարաբերություններում (ներառյալ բոլոր այլ դեպքերը, երբ ստորադաս դատախազը ոչ միայն հսկող դատախազն է):

ԵԴԽԽ Կարծիք Հ-11-ը 53-րդ կետում նշում է՝

«Բոլոր հանձնարարությունները կամ ցուցումները, ինչպես նաև դատախազական բոլոր ակտերը պետք է լինեն պարզորոշ կերպով հասկանալի դրանց հասցեատերերի համար: Գրավոր լինելու դեպքում, այդ հանձնարարականները և ցուցումները պետք է ձևակերպված լինեն շատ պարզ լեզվով: Բացի այդ, դատախազները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն գրավոր հանձնարարականների և ցուցումների ձևաչափին՝ դրանք որպես այդպիսիք հեշտությամբ իդենտիֆիկացնելու համար»:

Պետք է ասել, որ ՔԴՕ Նախագիծն այս առումով օգտագործում է «հանձնարարություն» եզրույթը (Հոդված 6, կետ 49-րդ), որի հետ կապված արդեն իսկ կարևոր երաշխիքներ է տալիս դրա հետևյալ սահմանումը ամրագրելով՝

«Հանձնարարություն՝ վերադաս դատախազի կողմից հսկող դատախազին, հսկող դատախազի կողմից քննիչին, քննչական մարմնի ղեկավարին, քննչական մարմնի ղեկավարի կողմից քննիչին կամ քննիչի կողմից հետաքննության մարմնին՝ իրենց իրավասության սահմաններում տրվող գրավոր հրահանգ՝ պարզելու որոշակի հանգամանքներ, կատարելու որոշակի գործողություններ, կայացնելու որոշումներ կամ ձեռնպահ մնալու որևէ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց»:

Այստեղ օրինականության և հանձնարարությունների հասցեատերերի դատավարական ինքնուրույնության համար շատ կարևոր երաշխիքներ են հանձնարարության՝ 1) այն տվողի իրավասության սահմաններում տրված լինելու և 2) գրավոր լինելու պահանջները: Կարծում ենք, այս դրույթները կարելի էր ավելի զարգացնել՝ նախատեսելով որոշում կայացնելու պահանջը, ըստ այդմ էլ՝ նախատեսելով դրա պատճառաբանված լինելու պահանջը: Նման լրացումների դեպքում, մի կողմից՝ կանխվելու են հանձնարարություն տվողի կամայական հրահանգները, իսկ մյուս կողմից՝ ապահովվելու է դրանք բողոքարկելու արդյունավետությունը (քանի որ ընդհանրապես պատճառաբանման պահանջը ինքնին բողոքարկման իրավունքի կարևորագույն երաշխիք է):

ՔԴՕ Նախագծի վերաբերյալ արդեն իսկ վկայակոչված Կարծիքը, անդրադառնալով հսկող դատախազի և վերադաս դատախազի կողմից տրվող հանձնարարություններին, 63-64-րդ կետերում այս առթիվ նույնպես նշել է, որ

«63. Դատախազի համար անպատշաճ չէ հանձնարարություններ տալ իր ենթականերին կամ քննիչներին: Սակայն ենթակա դատախազների և քննիչների անկախության երաշխավորումը, որը ճանաչվում է 35-րդ հոդվածով, կշահի, եթե այդ **հանձնարարությունները հիմնավորված լինեն** և ներկայացվեն գրավոր:

64. Ուստի խիստ ցանկալի կլիներ, որ այս դրույթները վերանայվեին՝ պահանջելու, որ հանձնարարությունները **լինեն հիմնավորված** և ներկայացվեն գրավոր, եթե ենթակա դատախազը կամ քննիչը նման հայց են ներկայացնում՝

ԵԴԽԽ «Քրեական քննությունների ընթացքում դատախազների դերի մասին» Կարծիք Հ-10-ի 27-րդ կետը սահմանում է՝

«Այն անդամ պետություններում, որտեղ դատախազները հսկողություն են իրականացնում քննության նկատմամբ, նրանք պետք է բավարար չափով լայն դատավարական լիազորություններ ունենան՝ ապահովելու համար, որպեսզի քրեական

հետաքննություններն իրականացվեն արդյունավետ կերպով և օրենքին լրիվ համապատասխան¹²²»:

Արդեն դատախազին իր վերադաս դատախազի կողմից տրվող հանձնարարությունների հետ կապված, միջազգային չափորոշիչները շեշտը դնում են նաև հանձնարարությունների հասցեատերերի անկախության ու դատավարական ինքնուրույնության, այն է՝ սեփական համոզմունքով որոշումներ կայացնելու լիազորվածության վրա: Այս առումով, չափազանց կարևոր են Վենետիկի հանձնաժողովի կողմից արդեն իսկ վկայակոչված **«Դատախազության անկախության չափորոշիչների մասին»** Ջեկույցի 57-60-րդ կետերում արտահատված հետևյալ դիրքորոշումները՝

«57. Դատախազության աստիճանակարգված համակարգում հանձնարարությունները կարող են տրվել կոնկրետ գործի մակարդակով՝ ապահովելով որոշակի երաշխիքների պահանջները 2000(19) Հանձնարարականի 10-րդ կետը նշում է, որ՝ «Բոլոր դատախազները պետք է իրավունք ունենան պահանջելու, որպեսզի իրենց տրվող բոլոր հանձնարարությունները լինեն գրավոր: Եթե դատախազը կարծում է, որ հանձնարարությունը ապօրինի է կամ հակասության մեջ իր սեփական խղճի հետ, ապա համարժեք ներքին ընթացակարգ պետք է գոյություն ունենա այդ գործով դատախազին մեկ այլ դատախազով փոխարինելու»:

Այնուհետև Վենետիկի Հանձնաժողովը քննադատում է մեջբերված Հանձնարարականի այդ մոտեցումը, նշելով, որ դրանով հնարավորություն է ստեղծվում, որպեսզի վերադաս դատախազը ազատվի այն դատախազից, ով «համարձակվել է վիճարկել իր հանձնարարության օրինականությունը» (կետ 58)¹²³, և ըստ այդմ առաջարկում է, որպեսզի նման դեպքերում կիրառվեն վերադաս դատախազի հանձնարարության օրինականության ստուգման այլ՝ ներքին և արտաքին մեխանիզմներ (կետ 59)՝

«Հանձնաժողովը գտնում է, որ այս երաշխիքները համարժեք չեն և պետք է լրամշակվեն: Հանձնարարության՝ ապօրինի լինելու պնդումը չափազանց լուրջ է և չպետք է հանգեցնի պարզապես առարկություն ներկայացրած դատախազին գործով մասնակցությունից հեռացնելուն: **Ցանկացած հանձնարարություն, որով մերժվում է ստորադաս դատախազի տեսակետը, պետք է լինի պատճառաբանված, իսկ եթե պնդում արվի, որ հանձնարարությունն ապօրինի է, ապա հանձնարարության օրինականության հարցի լուծումը պետք է տրվի դատարանի կամ անկախ մարմնի, օրինակ՝ Դատախազական խորհրդի կողմից:**»

Այսպիսով, պետք է արձանագրել, որ վերադաս դատախազի կողմից տրված հանձնարարությունների հետ ստորադաս դատախազի՝ նշված հիմքերով, համաձայն չլինելու դեպքում, եթե առարկությունը ներկայացվում է վերադաս դատախազի կողմից նրա վերադասին, ապա այդ վերջին վերադասի կողմից ստորադաս դատախազի առարկությունը մերժելու դեպքում ստորադաս դատախազը պետք է իրավունք ունենա աստիճանակարգությունից դուրս գտնվող մեկ այլ՝ անկախ մարմնին՝ հանձնարարության էթիկայի վարքագծին հակասելու մասին պնդման դեպքում՝ Դատախազների ընդհանուր

¹²² CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) OPINION NO.10 (2015) OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS TO THE COMMITTEE OF MINISTERS OF THE COUNCIL OF EUROPE ON THE ROLE OF PROSECUTORS IN CRIMINAL INVESTIGATIONS, <https://rm.coe.int/1680747720>

¹²³ Հետաքրքիր է, որ ստորադաս դատախազի համար նույն զգուշավոր, պասիվ անհամաձայնության երաշխիք է որդեգրել նաև հենց ԵԴԽԽ-ն՝ «Դատախազների անկախության, հաշվետվողականության և էթիկայի մասին» Հ-13 Կարծիքում, 42-րդ կետում նշելով պարզապես, որ՝ «Եթե դատախազը իր ղեկավարությունից անհատապես ստանում է այնպիսի հանձնարարություններ, որոնք իր կարծիքով ապօրինի են կամ չեն բխում էթիկայի մասնագիտական կանոնադրից, նա չի կարող պարտադրվել կատարելու դրանք և պետք է հնարավորություն ունենա իր հիմնավորումները ներկայացնել իր ղեկավարությանը», տես՝ **CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) Opinion No. 13(2018) of the CCPE: «Independence, accountability and ethics of prosecutors».**

ժողովին կամ Որակավորման հանձնաժողովին (վերջինիս ընտրության այն մեխանիզմներով, որոնք մեքն առաջարկում ենք ստորև համապատասխան կետում) կամ դատարան դիմելու:

Նույն դիրքորոշումը ՎՀ-ն ունի նաև դատախազներին մեկ աշխատանքից մեկ այլ աշխատանքի տեղափոխելը՝ վերադասների կողմից որպես ստորադաս դատախազի նկատմամբ ճնշում գործադրելու միջոցի վերաբերյալ՝ նշելով (կետ 60), որ «նման տեղափոխումների սպառնալիքները կարող են որպես գործիք ծառայել դատախազի վրա ճնշում կիրառելու համար, կամ «ըմբոստ դատախազը» կարող է հեռացվել զգայուն գործից»: **Կրկին, պետք է առկա լինի անկախ մարմնին, ինչպես, օրինակ՝ Դատախազական խորհրդին բողոք ներկայացնելու հնարավորություն» (բոլոր ընդգծումները՝ ՎՀ-ի. - ԴԽ):**

Վենետիկի հանձնաժողովի կողմից քննադատված 2000(19) Հանձնարարականի 10-րդ կետը, Բացատրական հուշագրի համապատասխան հատվածում, այնուամենայնիվ, պարունակում է մեկ շատ կարևոր դիտարկում այն մասին, որ «մարդկային առումով և նաև քաղաքացիական ազատությունների առումով՝ վտանգավոր է, դատախազության բոլոր աշխատակիցներից պահանջել կատարել այն հանձնարարությունները, որոնք իրենց կարծիքով, ապօրինի են, կամ որոնց հետ կապված ունեն համոզմունքային անհամաձայնություն»:

Վերը նշված միջազգային չափորոշիչների համաձայն պետք է վերանայվեն նաև Նախագծի՝ խնդրո առարկա հարցերի կարգավորումները: Մասնավորապես ՔԴՕ Նախագծի (Հոդված 36. Վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները) համաձայն՝

«2. Իր իրավասության սահմաններում վերադաս դատախազի տված հանձնարարությունը պարտադիր է հսկող դատախազի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հսկող դատախազը գտնում է, որ նման հանձնարարությունն անօրինական է կամ անհիմն: Այդ դեպքում հսկող դատախազը, առանց վերադաս դատախազի հանձնարարությունը կատարելու, առարկություն է ներկայացնում հանձնարարություն տված դատախազի վերադասին:

4. Իր իրավասության սահմաններում հսկող դատախազի տված հանձնարարությունը պարտադիր է քննչական մարմնի ղեկավարի, քննիչի և հետաքննության մարմնի պետի համար, սակայն վերջիններս իրավասու են իրենց հասցեագրված հանձնարարության վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացնել վերադաս դատախազին: Քննչական մարմնի ղեկավարն իրավասու է վերադաս դատախազին գրավոր առարկություն ներկայացնել նաև իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին հասցեագրված հանձնարարության կապակցությամբ:

8. Իր իրավասության սահմաններում քննիչի տված հանձնարարությունը պարտադիր է հետաքննության մարմնի համար, սակայն հետաքննության մարմնի պետն իրավասու է դրա վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացնել հսկող դատախազին կամ քննչական մարմնի ղեկավարին՝ չկասեցնելով հանձնարարության կատարումը»:

Այս բոլոր դրույթներում պետք է ավելացնել հանձնարարությունների պատճառաբանված լինելու, ինչպես նաև առարկությունների պատճառաբանված լինելու պահանջը¹²⁴:

Այնուհետև, ՔԴՕ Նախագծի (Հոդված 37. Վերադաս դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում) համաձայն՝

«Մինչդատական վարույթի ընթացքում վերադաս դատախազը՝

... 4) իր որոշմամբ հսկող դատախազին հեռացնում է վարույթից և նախաքննության ու հետաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը հանձնարարում այլ դատախազի կամ այն

¹²⁴ ՔԴՕ Նախագծի համաձայն (Հոդված 6, կետ 60), առարկությունները, ինչպես և հանձնարարությունները պետք է լինեն գրավոր: Հետևաբար, պատճառաբանվածության պահանջը պետք է տարածվի դրանց վրա ևս:

իրականացնում է անձամբ՝ օգտվելով սույն օրենսգրքով մինչդասական վարույթում հսկող դատախազի լիազորություններից.

5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իր որոշմամբ փոխում է հսկող դատախազին.

...10) վերացնում է հսկող դատախազի անօրինական կամ անհիմն որոշումները և հանձնարարությունները.

... 11) եռօրյա ժամկետում որոշում է կայացնում հսկող դատախազի հանձնարարությունների կամ վարույթային ակտերի վերաբերյալ հետաքննության մարմնի, քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի առարկությունների կապակցությամբ, ինչպես նաև վերադաս դատախազի հանձնարարությունների կամ վարույթային ակտերի վերաբերյալ հսկող դատախազի առարկությունների կապակցությամբ»:

Այս բոլոր դրույթներում պետք է ավելացնել հանձնարարությունների պատճառաբանված լինելու, ինչպես նաև առարկությունների պատճառաբանված լինելու պահանջը: Բացի այդ, պետք է նախատեսվեն ստորադաս դատախազի կողմից վերադաս դատախազի վերադասի վերջնական որոշման արտաքին բողոքարկման հնարավորությունները՝ էթիկայի մասով՝ Որակավորման հանձնաժողով, իսկ այլ համոմունքային անհամաձայնությունների դեպքում՝ նաև դատարան դիմելու հնարավորությունը: Այնուհետև պետք է նախատեսել, որ նշված հիմքերով հանձնարարության հետ անհամաձայնության դեպքում, դատախազը իրավունք ունի չկատարելու այդ հանձնարարությունները:

Վերջապես, գոյություն ունի մեկ այլ կարևոր խնդիր ևս, այն է՝ որ Գլխավոր դատախազի հանձնարարությունները որևէ կերպ չեն կարող վիճարկվել որևէ ստորադաս դատախազի կողմից, այդ թվում՝ անմիջական ստորադաս դատախազների, այն է՝ Գլխավոր դատախազի տեղակալների կողմից: Այս մասին իր դիտողություններն է արել Հանուն տնտեսական համագործակցության և զարգացման Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների Հակակոռուպցիոն ցանցի Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ Հակակոռուպցիոն գործողությունների Ստամբուլյան Ծրագրի մշտադիտարկման 4-րդ շրջանի վերաբերյալ Մշտադիտարկման զեկույցը՝ նշելով, որ «[Դատախազության մասին] օրենքը ստորադաս դատախազին հնարավորություն է տալիս առարկելու վերադաս դատախազի հանձնարարությունների և ցուցումների դեմ՝ դրանք անօրինական կամ անհիմն համարելու դեպքում: Այնուամենայնիվ, այս կանոնը, ինչ-որ պատճառներով, չի կիրառվում այն հանձնարարությունների և ցուցումների նկատմամբ, որոնք տրվել են Գլխավոր դատախազի կողմից»¹²⁵, ինչի հետ կապված էլ ձևակերպվում է հետևյալ Երաշխավորությունը՝ «Դատախազներին իրավունք վերապահել Դատախազության ներսում գործող մարմնին առարկություններ ներկայացնել Գլխավոր դատախազի կողմից տրված հանձնարարությունների և ցուցումների վերաբերյալ դրանք անօրինական կամ անհիմն համարելու դեպքում»¹²⁶:

Այս դրույթը պետք է ներառել թե՛ ՔԴՕ-ում, և թե՛ «Դատախազության մասին» օրենքում:

2.3. Դատախազության լիազորությունները դատարանում մեղադրանքը պաշտպանելու և դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները բողոքարկելու ընթացքում

¹²⁵ ANTI-CORRUPTION NETWORK FOR EASTERN EUROPE AND CENTRAL ASIA, Anti-Corruption Reforms in ARMENIA, Fourth Round of Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, adopted at the ACN meeting on 4 July 2018 at the OECD in Paris, էջ 82, տե՛ս՝ <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf>

¹²⁶ Նույն տեղում, էջ 91:

2.3.1. Մեղադրանքի նախնական դատական ստուգումը

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ մեղադրական եզրակացությունը դատարան է հասնում, այսինքն՝ հստակ դատախազը ձեռք է բերում հանրային մեղադրողի կարգավիճակ՝ առանց վերահսկողական որևէ արտաքին մեխանիզմի: Մեր առաջարկվող դատավարական մոդելում, որի առավել ցայտուն օրինակն է ԱՄՆ-ը, այս գործընթացը գտնվում է 23 քաղաքացուց բաղկացած Մեծ ժյուրիի վերահսկողության ներքո, որի հաստատմանն է դատախազը ներկայացնում «indictment»-ը՝ մեղադրական եզրակացության հաստատման և միաժամանակ դատի տալու մասին որոշում կայացնելու թույլտվություն տալու միջնորդությունը: Այս փուլում մեղադրանքի հիմնավորվածությունն ու օրինականությունը ստուգվում են ցածր ապացուցողական չափորոշիչով: Հայաստանում նման ինստիտուտ չկա, սակայն, ինչպես վերը նշեցինք, Վճռաբեկ դատարանի դատական ակտիվիզմի միջոցով, կայուն հաստատված պրակտիկա է դարձել, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու թույլտվություն տալու մասին միջնորդությունը քննելիս, «հիմնավոր կասկածի» օբյեկտիվ տարրը ստուգելու ընթացքում, անգամ կարելի է ասել՝ ոչ քողարկված ձևով իրականացնում է նաև մեղադրանքի օրինականության ստուգումը:

ՔԴՕ Նախագծի 315-րդ հոդվածը, որը նվիրված է նախնական դատալուսման փուլում քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու հարցի քննարկմանը, առաջարկում է (մաս 1-ին)՝ «Սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի¹²⁷ 1-ին մասի 3-14-րդ կետերով նախատեսված որևէ հանգամանքի առկայության դեպքում, երբ դա հնարավոր է առանց ապացույցների հետազոտման, դատարանը որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու մասին»:

Մեր կարծիքով, ավելի ճիշտ է ՀՀ գործող ՔԴՕ 294 հոդվածի (Որոշում՝ քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին) 1-ին մասի կարգավորումը, որի համաձայն՝ «Սույն օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, երբ դա հնարավոր է առանց դատաքննության, դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին»:

Այս երկու կարգավորումների տարբերությունը կայանում է նրանում, որ գործող ՔԴՕ-ն, դատաքննություն չպահանջող այլ դեպքերում ևս (օրինակ՝ անձը մեկ-երկու անգամ հայիոյել է փողոցում, բայց մեղադրական եզրակացությունը հաստատվել է խուլիգանության համար, որի դեպքում մեղադրանքը ակնհայտորեն որևէ դատական հեռանկար չունի) շահեկանորեն հնարավորություն է տալիս դատարանին դատական քննության նախապատրաստական նիստում կարճել գործը:

Իհարկե, ՎԴ վերը նշված դիրքորոշումները, որոնցով նույն բանն արվում է մեղադրանքի օրինականությունը և ըստ էության, ակնհայտ ոչ հեռանկարային, ոչ դատաքննելի լինելը որպես «հիմնավոր կասկածի» օբյեկտիվ տարր գնահատելիս, ուղղված են հենց այդ նպատակին, սակայն չեն լուծում հարցը սկզբունքորեն, քանի որ այլ խափանման միջոցների ընտրված լինելու կամ ընդհանրապես խափանման միջոց ընտրված չլինելու դեպքում չեն բացառում այդ ակնհայտ անհիմն մեղադրանքները դատարանում քննվելու հնարավորությունը: Այսինքն՝ դատական վերահսկողությունը մեղադրանքի նկատմամբ չի կարող սահմանափակվել միայն կալանավորման անհրաժեշտությունը գնահատելու ծավալով:

¹²⁷ Հոդված 12՝ Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները:

Հետևաբար, անհրաժեշտ է պահպանել գործող ՔԴ կարգավորումները՝ պարզապես Նախագծի 3115-րդ հոդվածում «բացելով», այսինքն՝ նկարագրելով այն դեպքերը, երբ գործի կարճումը և քրեական հետապնդման դադարեցումը «հնարավոր է առանց դատաքննության» և դրանց թվում, բացի Նախագծով առաջարկվող՝ քրեական հետապնդումը բացառող հիմքերից, նշել նաև «մեղադրանքի ակնհայտ սխալ լինելը»: Իսկ կամայականության դեմ երաշխիքներ են կլինեն պատճառաբանված որոշում կայացնելու՝ Նախագծով առաջադրվող պահանջը և բողոքարկման հնարավորությունը:

Ինչպես նշեցինք, վերևում, Նախնական դատալսումների՝ որպես դատական քննության նախապատրաստական ենթափուլի վարույթից պետք է դուրս բերվի նաև ապացույցների թույլատրելիության հարցի լուծումը, որի շրջանակներում, ըստ Նախագծի դրանց բովանդակային թույլատրելիության հարց չի քննարկվում: Ապացույցների թույլատրելիության հարցի լուծումը պետք է ամրագրվի որպես դատական երաշխիքների վարույթի ձև՝ նախնական դատալսումների տեսքով, այսինքն՝ այդ վարույթը՝ դառնա ոչ թե դատական քննության նախապատրաստական մաս, այլ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության մաս:

2.3.2. Հսկող դատախազի կողմից մեղադրանքի պաշտպանությունն իրականացնելու ընդհանուր կանոնը

Դատախազության մասին օրենքի 26-րդ հոդվածի (Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում) 1-ին մասի համաձայն՝

«Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում, որպես կանոն, իրականացնում է տվյալ քրեական գործով հսկողություն իրականացրած դատախազը, բացառությամբ երբ նրան օրենքով նախատեսված դեպքերում փոխարինում է վերադաս դատախազը կամ վերադաս դատախազի հանձնարարությամբ՝ այլ դատախազ»:

Այս նորմերի հետ կապված ունենք որոշակի տեսական և գործնական բնույթի մտահոգություններ: Նախևառաջ, եթե որևէ դրույթ ձևակերպվում է որպես *ընդհանուր կանոն*, ապա դրանից արվող շեղումները պետք է պետք է՝

- նախատեսված լինեն օրենքով՝ հենց որպես ընդհանուր կանոնից բացառություններ՝ կանոնից շեղվելու հիմքերի/դեպքերի **սպառնիչ** շարադրման տեսքով, այսինքն՝ նշվեն այն դեպքերը, երբ վերադաս դատախազը կարող է մեղադրանքի պաշտպանությունը հանձնարարվել ոչ այն դատախազին, ով հսկողություն է իրականացրել նույն գործով, ավելի կոնկրետ՝ ով հաստատել է մեղադրական եզրակացությունը: Հիմքերի/դեպքերի սպառնիչ լինելու պահանջը կարևոր է իրավական որոշակիության տեսակետից, քանի որ հակառակ դեպքում հիմքերի շարադրանքը վերածվում է որոշում կայացնողի, տվյալ դեպքում՝ վերադաս դատախազի իշխանական կամահայտնության հնարավոր պատճառներից որոշները նշելուն: Այդ հիմքերից կարող է լինել, օրինակ՝ հսկող դատախազի մասնակցության օբյեկտիվ անհնարինությունը (որը չի ստեղծվում նույն վերադաս դատախազի կողմից, օրինակ՝ հսկող դատախազին մեկ այլ գործով նույն ժամանակահատվածում մեղադրանքի պաշտպանությունն իրականացնելու հանձնարարության պատճառով).
- թույլ տրվեն միայն այդ շեղումները հիմնավորող պատճառաբանված որոշմամբ, այսինքն՝ թե ինչու է վերադաս դատախազը օրենքում նշված հիմքերը/դեպքերը համարում տվյալ դեպքում կիրառելի.

- իրենց պատճառաբանված կիրառման ընթացքում ենթակա լինեն միայն սահմանափակ մեկնաբանման, այսինքն՝ եթե ընդհանուր կանոնը՝ հսկող դատախազի կողմից նաև մեղադրանք պաշտպանելը կիրառվում է որպես ընդհանուր կանոն և չի պահանջում պատճառաբանություն, իսկ դրանից շեղումներ թույլ տալու հիմքերի առկայության առթիվ բոլոր կասկածները պետք է մեկնաբանվեն հոգուտ ընդհանուր կանոնի կիրառման:

Նշված դրույթները, վերադաս դատախազի քննարկվող լիազորության տեսակետից կբացառեն նրա կողմից այս հարցում կամայական դիրքորոշում դրսևորելու հնարավորությունը: Սակայն, բացի այդ, դրանք կարևոր են նաև գործնական տեսանկյունից, հետևյալ առումներով՝

- արդեն իսկ նշվեց, թո՛ղ որքան շատ գործառույթներ է իրականացնում կամ պետք է իրականացնի հսկող դատախազը՝ դատարանում մեղադրանքի արդյունավետ պաշտպանության իրականացումն ապահովելու հեռանկարով՝ մինչդաստական վարույթում հավաքված և իր միաժամանակ իր կողմից դատարանում օգտագործվելիք ապացույցներին թույլատրելիությունից սկսած մինչև խոցելի խմբերին պատկանող վկաների հետ դատական վարույթներից առաջ հանդիպելը և որպես բարենպաստ վկա նրանց առաջիկա դատալսումներին նախապատրաստելը.
- նույն հսկող դատախազը, իր հսկողության տակ պահած լինելով ամբողջ մինչդաստական վարույթի օրինականությունը, ի վիճակի է ապահովել նաև այդ վարույթն իրականացրած անձանց՝ քննիչին և հետաքննիչին (ՔԴՕ հոդված 331, հոդված 57 և այլն) դատարանում իր կողմից հարցաքննելու, ինչպես նաև՝ նույն անձանց՝ պաշտպանի ու մեղադրյալի կողմից հակընդդեմ հարցաքննելու իրավունքի արդյունավետությունը:

Վերը շարադրվածը բերում է այն համոզման, որ վերադասի նշված լիազորությունը և հսկող դատախազի դիալեկտիկական բացասումը մեղադրական դատախազով, իրենից ներկայացնում են զուտ քրեադատավարական լիազորություններ և պետք է կարգավորվեն բացառապես Քրեական դատավարության օրենսգրքով, այլ ոչ թե՛ այն օրենքով, որը նվիրված է քրեական վարույթում գործող դերակատարներից մեկի՝ դատախազության ինստիտուցիոնալ կարգավորմանը, այսինքն՝ ոչ թե Դատախազության մասին օրենքով: Այս կարգավորումը լիովին կբխի հենց քրեադատավարական իրավունքի՝ որպես վարույթի մասնակիցների իրավասուբյեկտության արտահայտման համընդհանուր դատավարական ձևի սահմանումից՝ ապահովելով ոչ միայն մեղադրող դատախազի լիազորությունների, այլ պաշտպանական կողմի իրավունքների միաժամանակյա արդյունավետ իրացումը ու իրական դատարականեկնտրոն մրցակցային դատավարության երաշխավորումը:

Դատախազության մասին օրենքի նույն 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Վերադաս դատախազն իրավունք ունի մեղադրանքը պաշտպանող դատախազի դատավարական լիազորությունների իրականացմանը ներգրավելու նաև այլ դատախազների: Եթե տվյալ քրեական գործով հսկողությունն իրականացրել է գլխավոր դատախազը, ապա մեղադրանքի պաշտպանությունը դատարանում իրականացնում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ այլ դատախազ»:

Մեր կողմից վերը նշված տեսական ու գործնական բնույթի բոլոր մտահոգություններն ու դրանք դատավարական նշված կարգավորումների միջոցով փարատելուն ուղղված բոլոր առաջարկները հավասարապես վերաբերելի են նաև այս երկու դեպքերին՝ վերադաս դատախազի կողմից, այս անգամ՝ բացի հսկող դատախազից՝ նաև այլ դատախազների ներգրավմանը, և տվյալ գործով հսկողություն իրականացրած Գլխավոր դատախազի կողմից մեղադրանքը չպաշտպանելու մասին որոշմանը: Այսինքն, Գլխավոր դատախազը, որն իրականացրել է դատախազական հսկողությունը մինչդաստական վարույթի

օրինականության նկատմամբ, նախքան նույն գործով մեղադրանքի պաշտպանությունը այլ դատախազի հանձնարարելը, պետք է պատճառաբանված որոշում կայացնի հիմնավորելով իր կողմից մեղադրանքը պաշտպանելու օբյեկտիվ անհնարինությունը:

2.3.3. Հանրային մեղադրողի գործառույթները ապացուցման պարտականության, դատական ճանաչողության և մրցակցության սկզբունքի (դատարանի լիազորվածության) համադրման լույսի ներքո

Քանի որ դատարանում հանրային մեղադրող դատախազը հանդիսանում է կողմերից մեկը, նրա լիազորությունների քննարկումը թերի կլինի՝ առանց այս փուլում դատարանի լիազորվածության առնվազն ընդհանուր սկզբունքները լուսաբանելու: Այս առումով, չափազանց կարևոր է նախնառաջ համառոտ դիտարկել, թե՛

- ինչ հասկանալ «մեղադրանք» հասկացության տակ՝ քրեական հետապնդման ֆունկցիայի իրականացում, թե՛ մեղադրանքի՝ դատարանում ենթակա պաշտպանության թեզ
- ինչպես են տարանջատվում մեղադրող դատախազի կողմից ապացուցման պարտականության և դատարանի կողմից գործը լուծող իր վերջնական որոշման հիմքում դրվելիք ճշմարտության բացահայտման գործառույթները, ու վերջապես՝
- արդյոք դատարանի կողմից բացահայտվող «ճշմարտությունը» կայանում է դատախազի կողմից ապացուցվող առարկայի տարրերի (հանցադեպի, մեղադրյալի մեղավորության և այլն), թե՛ դատախազի կողմից այդ տարրերն ապացուցված կամ չապացուցված լինելու իրողության մեջ, այսինքն՝ արդյոք դատարանի որոշման հիմքում ընկած է դատական, թե՛ այսպես կոչված «օբյեկտիվ» ճշմարտությունը:

Այս հարցերը շատ կարևոր են այն տեսակետից, որ փաստացի, դատարանի վրա օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու պարտականություն ղնելով և այդպիսով իրար խառնելով՝ դատարանում մեղադրանքի ապացուցման պարտականության և ճշմարտության բացահայտման գործառույթները, մեղադրանքի կողմում են հայտնվում դատավարության երկու սուբյեկտները՝ դատախազը և դատարանը: Այս թեզը փորձենք համառոտ հիմնավորել արդարացման դատավճիռների իմացաբանական (գնոսիոլոգիական) հիմքերը դիտարկելով՝ որպես դատական ճանաչողության առարկայի բացահայտման մեթոդ¹²⁸:

Եթե կայացվում է արդարացման դատավճիռ, որի հիմքում ընկած է թույլատրելի ու վերաբերելի ապացույցների համակցության ոչ բավարար լինելը ամբաստանյալի մեղքը հաստատված ճանաչելու համար, այսինքն՝ դատարանի կողմից արդարացման դատավճիռի հիմքում դրվող ճշմարտությունը դա մեղադրանքի չապացուցվածության փաստն է, ապա պարզ է, որ դատական ճանաչողության առարկան հենց մեղադրանքի ապացուցված կամ չապացուցված լինելու փաստն է, քանի որ ճանաչողությունը ընդհանրապես իրականացվում է միասնական մեթոդներով՝ անկախ հետազայում ձեռք բերվո արդյունքից: Այլ խոսքերով, չկա առանձին մեղադրական դատավճիռն հանգեցնող ճանաչողություն՝ իր մեթոդներով ու առարկյով հանդերձ, և առանձին՝ արդարացման դատավճիռն հանգեցնող ճանաչողություն:

¹²⁸ Այս մասին առավել մանրամասն, տես՝ Д.М.Хачатурян, «Гносеологические основы оправдательного приговора как метод определения предмета судебного познания», «Պետություն և իրավունք», Հ-2(72), Երևան, 2016, էջ 187-203

Հետևաբար, դատարանի կողմից որոնվող և դատավճռով փաստվող ճշմարտությունը կայանում է ոչ թե նրանում, թե արդյոք անձը կատարել է հանցանքը, մեղավոր է այն կատարելու մեջ և այլն, այլ թե արդյոք հանրային մեղադրողը ապացուցել է այդ ամենը ողջամիտ կասկածից վեր չափորոշիչով: Ընթերցողը պետք է այստեղ հատուկ ուշադրություն դարձնի այս փաստի վրա, քանի որ դրանից բխում է, որ եթե հանրային մեղադրող դատախազն իրականացրել է իր ապացուցման պարտականությունը և դատարանի մոտ մնացել են ողջամիտ կասկածներ մեղադրանքի ապացուցվածության մասին, ապա դատարանն իրավունք չունի սեփական միջոցներով կամ սեփական նախաձեռնությամբ՝ գործով «օբյեկտիվ» ճշմարտությունը բացահայտելու համար, ձեռք բերել նոր ապացույցներ (հրավիրել նոր վկաներ, նշանակել փորձաքննություն): Սա ուղղակիորեն բխում է ապացուցման չափորոշիչից և ընդհանրապես անմեղության կանխավարկածից¹²⁹, որի համաձայն չփարատված բոլոր կասկածները պետք է մեկնաբանվեն հոգուտ մեղադրյալի: Այսինքն՝ դատարանի ճանաչողական ակտիվությունը միշտ ի վնաս է մեղադրյալին:

Անգամ եթե հակափաստարկ հնչի այն մասին, որ հնարավոր է, որ վկայից ստացված նոր ցուցմունքը կամ փորձագիտական նոր եզրակացությունը հնարավոր է, որ բարենպաստ լինեն ամբաստանյալի համար, միևնույն է, դա սպեկուլյատիվ բնույթ է կրում, քանի որ մեղադրանքի ապացուցման պարտականությունն ընկած է մեղադրողի վրա և դրա իրացման արդյունքում մնացած կասկածներից օգտվելը ամբաստանյալի արդեն իսկ առկա իրավունք է՝ մեղադրողի կողմից ապացուցման առարկայի որևէ տարրի ապացուցումը ավարտելու պահից: Հետևաբար, դատարանը չի կարող, ամբաստանյալի այդ, արդեն իսկ առկա իրավունքն իրացնելու փոխարեն, ընդհանրապես իրականության ճանաչման քողի տակ, սեփական նախաձեռնությամբ ձեռք բերել նոր ապացույցներ, քանի որ դրանք ուղղված են հենց հենց այն փաստերի վերհանմանը/հաստատմանը, որոնք կազմում էին ապացուցման առարկան: Հենց սա էլ բերում է այն հետևության, որ ապացուցման պարտականության ու դատական ճանաչողության գործառնությունների նույնականացման պարագայում¹³⁰ դատարանն անխուսափելիորեն հայտնվում է մեղադրանքի կողմում:

Այսպիսով, մեղադրող դատախազը կրում է մեղադրանքի թեզը ապացուցելու պարտականություն, այն է՝ որ կատարվել է քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործությունը, այն կատարել է ամբաստանյալը, ամբաստանյալը մեղավոր է այդ

¹²⁹ Քանի որ անմեղության կանխավարկածի անքակտելի տարրն են հանդիսանում իրականության ճանաչման ու փաստման այն չափորոշիչներն ու չափանիշները, որոնց կիրառման արդյունքում նույն անմեղության կանխավարկածը դիալեկտիկորեն բացասվում է մեղադրական դատավճռի օրինականության և հիմնավորվածության կանխավարկածով:

¹³⁰ Սա խիստ բնորոշ էր խորհրդային դատավարագիտությանը և դատավարության այսպես կոչված «խառը մրցակցության» դոկտրինի հետևորդներին: Տե՛ս բազմաթիվ այլ աղբյուրների թվում, М.С.Строгович, “Курс советского уголовного процесса”, т. 1, М. 1968, с. 295: «найти объективную, материальную истину значит... установить ... виновность ..., или же убедиться в обратном, т.е. в том... привлеченное лицо не виновно» և «процесс доказывания в уголовном судопроизводстве и процесс познания истины тождественны»: **Չափազանց հետաքրքրական է, սակայն, որ նույն պրոֆ. Ստրոգովիչը, որն իրավամբ համարվում է ոչ միայն խորհրդային դատավարագիտության հիմնասյուներից մեկը, մեր կարծիքով՝ դատական ճշմարտության բուրժուական դոկտրինի հետևորդ լինելու մեջ մեղադրանքներից խուսափելու համար, օգտագործելով է ոչ թե «[привлеченное лицо] невинно», այլ «не виновно», այսինքն ոչ թե «անմեղ», այլ «մեղավոր չէ» արտահայտությունը, չի անցնում այնտեղևտև արդարացման դատավճռի իմացաբանական հիմքի վերհանմանը, քանի որ, աներկբայորեն, «անմեղ» բառը օբյեկտիվ իրականության իրողություն է, իսկ «մեղավոր չէ» եզրույթը՝ անձի մեղավորության ոչ ապացուցված լինելու փաստի: Պրոֆ. Ստրոգովիչի այս տարանջատումը, այն է՝ որ դատարանը պետք է համոզվի, որ կամ որ անձը մեղավոր է կամ որ մեղավոր չէ (այլ ոչ թե մեղավոր է, թե անմեղ) հենց մաքուր մրցակցային դատավարությամբ, այն է՝ դատական և ոչ թե օբյեկտիվ ճշմարտություն դավանող երկրներին՝ ԱՄՆ, Անգլիա և այլն, բնորոշ տարանջատում է՝ «guilty or not guilty», այլ ոչ թե՝ «quilty or innocent»:**

արարքը կատարելու մեջ և նրա մեղավորությունը դրսևորվել է մեղքի այս կամ այն ձևով և այլն, այսինքն՝ դատախազի կողմից ճանաչվող ու ապացույցներով ճանաչվող ու փաստվող իրականությունը այն կոնկրետ դեպքերն ու գործողություններն են, որոնք վկայում են նշված, դատախազի կողմից դատարանում ապացուցման ենթակա փաստերի մասին: Դատարանը նույնպես կատարում է դատավարական ճանաչողություն, նույնպես պետք է հասնի ճշմարտության (քանի որ նրա որոշումը պետք է լինի ճշմարիտ), սակայն նրա կողմից ճանաչվող ու ապացույցներով ճանաչվող ու փաստվող իրականությունը ոչ թե այն է, թե արդյոք տեղի է ունեցել հանցագործություն, թե արդյոք այն կատարել է ամբաստանյալը և այլն, այլ թե արդյոք մեղադրող դատախազը ապացուցել է իրեն այն, որ տեղի է ունեցել հանցագործություն և այլն: Եվ քանի որ դատարանի կողմից կայացվող դատավճիռը՝ անկախ տեսակից պետք է լինի ճշմարիտ, այսինքն՝ իրականությանը համապատասխանող, իսկ իրականության ճանաչումը միասնական է՝ անկախ դրա արդյունքում մեղադրական թե արդարացման դատավճիռ կայացնելու փաստից, իսկ արդարացման դատավճիռի՝ ապացույցների անբավարարության հիմքով կայացման դեպքում, մենք չենք կարող ասել, որ օբյեկտիվ իրականությունը բացահայտվել է (օրինակ՝ որ մեղադրյալը իրականում չի կատարել հանցանքը), հետևաբար, **դատական պրոցեսում քննվում և դրա արդյունքում փաստվում է ոչ թե այն, թե արդյոք անձը կատարել է հանցագործություն, այլ թե արդյոք մեղադրանքի կողմը ապացուցել է դա:**

Վերոգրյալ տեսական դատողությունները ունեն, ինչպես ասացինք, կարևորագույն գործնական նշանակություն և արդյունքներ, որոնք պետք է արտացոլվեն իրական դատարանակենտրոն դատավարության ձգտող քրեական դատավարական օրենսդրության մեջ, ենթադրելով, մասնավորապես, հետևյալը՝

- գրկել դատարանին սեփական նախաձեռնությամբ նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունից.
- գրկել դատարանին սեփական նախաձեռնությամբ մեղադրանքը լրացնելու այլ հնարավորություններից ևս, նախևառաջ՝ արդեն իսկ մեղադրանքի կողմից ներկայացված ապացույցների արժանահավատությունը բարձրացնելու և/կամ լրիվությունը ապահովելու սեփական նախաձեռնությամբ կատարվող գործողությունների իրավունքից, օրինակ՝ տալ մեղադրանքի կողմի վկաներին մեղադրանքը ամրապնդող հարցեր, եթե դատախազը չի տալիս այդ հարցերը.
- գրկել դատարանին խորհրդակցական սենյակից վերադառնալուց հետո կամ մինչ այդ՝ դատաքննությունն ավարտելուց հետո ապացույցների հետազոտումը սեփական նախաձեռնությամբ վերսկսելու լիազորությունից:

Այս առաջարկները կոնկրետ փոփոխություններ են ենթադրում ՔԴՕ Նախագծի հետևյալ կարգավորումներում (տես՝ ընդգծված հատվածները, որոնք անհրաժեշտ է հանել).

Հոդված 326. Հարցաքննության ընդհանուր կարգը

«... 3. Հարցաքննության կանչված անձին առաջինը հարցեր է տալիս այն կողմը, որի միջնորդությամբ հրավիրվել է անձը (ուղիղ հարցաքննություն): Ուղիղ հարցաքննությունից հետո անձին կարող է հարցեր տալ հակառակ կողմը (խաչաձև հարցաքննություն): **Նախագահողն իրավունք ունի անձին հարցեր տալ ուղիղ և խաչաձև հարցաքննություններն ավարտվելուց հետո:** Դատարանի նախաձեռնությամբ կանչված անձին առաջինը հարցեր է տալիս նախագահողը, ապա մեղադրանքի և պաշտպանության կողմերը:

... 4. Ուղիղ հարցաքննության ընթացքում ուղղորդող հարցեր տալն արգելվում է: Կողմն իրավունք ունի առարկել ուղղորդող հարցի դեմ: Նախագահողը կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ իրավասու է հանել ուղղորդող կամ վարույթին չվերաբերող հարցերը:

... 7. Ներկայացված բոլոր ապացույցները հետազոտելուց հետո դատարանում ցուցմունք տված անձը կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է կրկին հարցաքննվել:

... Հոդված 331. Իրեղեն ապացույցի, ապացուցողական և այլ վարության գործողության արձանագրության և արտավարության փաստաթղթի հետազոտումը

... 3. Կողմի միջնորդության հիման վրա դատարանի պահանջով ստացված առարկաները և փաստաթղթերը հետազոտվում են սույն հոդվածի 1-2-րդ մասերով նախատեսված կարգով: **Դատարանի նախաձեռնությամբ ստացված առարկաները սկզբից դիտարկում է նախագահողը, այնուհետև մեղադրանքի և պաշտպանության կողմերը, իսկ դատարանի նախաձեռնությամբ ստացված փաստաթուղթը հրապարակում է նախագահողը՝ վերաբերելի մասով:**

4. Այն դեպքում, երբ իրեղեն ապացույցի, ապացուցողական կամ այլ վարության գործողության արձանագրության կամ արտավարության փաստաթղթի հետազոտման արդյունքում կողմը վիճարկում է դրա թույլատրելիությունը կամ դատարանի մոտ հիմնավոր կասկածներ են առաջանում համապատասխան **ապացույցի հավաստիության վերաբերյալ**, ապա դատարանի որոշմամբ այդ ապացույցը ձեռք բերած կամ կազմած անձը կարող է հարցաքննության հրավիրվել և հարցաքննվել՝ վկայի համար սահմանված կանոններով:

... Հոդված 333. Այլ ապացուցողական գործողություններ կատարելը

1. Դատարանը կողմի միջնորդությամբ կամ **սեփական նախաձեռնությամբ** իրավասու է նշանակել փորձաքննություն՝ սույն օրենսգրքի 252-258-րդ հոդվածներում¹³¹ սահմանված վերաբերելի կանոնների պահպանմամբ:

... 3. **Դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելիս նախագահողը մեղադրանքի և պաշտպանության կողմերին առաջարկում է ներկայացնել փորձագետին տրվելիք հարցերը, ինչպես նաև կարծիք հայտնել հնարավոր փորձագիտական կազմակերպության կամ փորձագետի, փորձաքննության համար ներկայացվելիք առարկաների կամ փաստաթղթերի մասին:**

4. Դատարանը կողմի միջնորդությամբ կամ **սեփական նախաձեռնությամբ** իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար անձանցից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից, այլ կազմակերպություններից պահանջել վարույթի արդարացի իրականացման համար անհրաժեշտ առարկաներ, փաստաթղթեր կամ տեղեկատվություն: Դատարանի պահանջով ստացված առարկաները և փաստաթղթերը հետազոտվում են սույն օրենսգրքի 331-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Դատարանը, կողմի միջնորդությամբ կամ **սեփական նախաձեռնությամբ**, իրավասու է կատարել տեղանքի, շինության, տրանսպորտային միջոցի գնում, քննում, փորձարարություն, ճանաչում, արտաշիրմում, եթե մինչդեռ տեղանքի վարույթում նշված ապացուցողական գործողությունները չեն կատարվել կամ դատարանը գտնում է, որ դրանց կատարման վերաբերյալ մինչդեռ տեղանքի վարույթում կազմված արձանագրությունները հետազոտելը բավարար չէ վարույթի արդարացիության համար:

... Հոդված 334. Հետազոտման ենթակա ապացույցների ծավալը լրացնելը

1. Ներկայացված բոլոր ապացույցները հետազոտելուց հետո դատարանը կողմերին հարցնում է, թե արդյոք նրանք միջնորդում են լրացնել հետազոտման ենթակա ապացույցների ծավալը:

... 4. Այն դեպքում, երբ հետազոտման ենթակա ապացույցների ծավալը լրացնելու միջնորդություն չի հարուցվում կամ այն որոշմամբ մերժվում է, դատարանն իրավասու է իր **նախաձեռնությամբ քննարկման առարկա դարձնել հետազոտման ենթակա ապացույցների ծավալը լրացնելու հարցը:** Դատարանը միջոցներ է ձեռնարկում հետազոտման ենթակա ապացույցների ծավալը լրացնելու համար, եթե գտնում է, որ դա չանելը կասկածի տակ կղնի վարույթի արդարացիությունը:

... Հոդված 343. Հիմնական դատալսումները վերսկսելը

1. Եթե սույն օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերում նշված հարցերը քննարկելիս դատարանը գտնում է, որ դրանց լուծման համար անհրաժեշտ է հետազոտել ապացույցներ, ապա որոշում է կայացնում ապացույցների հետազոտումը վերսկսելու մասին: Ապացույցների վերսկսված հետազոտումն ավարտելուց հետո դատարանը նորից ունկնդրում է կողմերի եզրափակիչ ելույթները և մեղադրայի եզրափակիչ հայտարարությունը, որից հետո վերստին հեռանում է առանձին սենյակ՝ վերդիկտ կայացնելու:

2. Եթե առանձին սենյակում, սույն օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասում նշված հարցը քննարկելիս դատարանը գտնում է, որ դրա արդարացի լուծման համար անհրաժեշտ է կողմերի քննարկման առարկա դարձնել օրենքի կիրառման կամ մեկնաբանման որևէ հարց, ապա որոշում է կայացնում եզրափակիչ

¹³¹ Գլուխ 32. Փորձաքննությունը:

Ելույթները վերսկսելու մասին: Կողմերին հարցեր ուղղելուց և դրանց վերաբերյալ նրանց կարծիքները լսելուց հետո դատարանը վերստին հեռանում է առանձին սենյակ՝ վերդիկտ կայացնելու:

3. Եթե առանձին սենյակում, սույն օրենսգրքի 342-րդ հոդվածի 5-րդ մասում նշված հարցը քննարկելիս դատարանի մոտ առաջանում է հիմնավոր կասկած այն մասին, որ մեղադրյալն արարքը կատարելու պահին եղել է անմեղսունակության վիճակում, կամ հանցանքը կատարելուց հետո ի հայտ է եկել հոգեկան խանգարում, որը նրան զրկել է իր գործողությունները գիտակցելու կամ դրանք ղեկավարելու հնարավորությունից, ապա որոշում է կայացնում եզրափակիչ ելույթները վերսկսելու մասին: Կողմերին հարցեր ուղղելուց և դրանց վերաբերյալ նրանց կարծիքները լսելուց հետո դատարանը վերստին հեռանում է առանձին սենյակ՝ վերդիկտ կայացնելու, կամ որոշում է կայացնում քրեական վարույթը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի փոխակերպելու մասին:

ՔԴՕ Նախագծի 343-րդ հոդվածի 1-ին մասում վկայակոչված 342-րդ հոդվածի («Վերդիկտ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարցերը»), 1-ին մասում սահմանում է այդ «վերդիկտ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա», այսինքն՝ մեղադրողի կողմից ապացուցման ենթակա նույն հարցերը, այն է՝

- 1) ապացուցված են արդյոք մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքները (արարքը).
- 2) ապացուցված է արդյոք այդ արարքի քրեական հակաիրավականությունը.
- 3) ապացուցված է արդյոք մեղադրյալի կողմից այդ արարքը կատարելը.
- 4) ապացուցված է արդյոք մեղադրյալի մեղքը տվյալ արարքը կատարելու մեջ:

Իսկ նույն 342-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է, որ՝

«Այն դեպքում, երբ նախաքննության կամ դատաքննության ժամանակ առաջացել է մեղադրյալի մեղսունակության կամ վարույթի իրականացման ժամանակ նրա կողմից իր գործողությունները գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակության հարցը, որի կապակցությամբ առկա է դատահոգեբուժական փորձաքննության եզրակացություն, դատարանը վերդիկտ կայացնելիս առանձին անդրադառնում է մեղադրյալի մեղսունակության հարցին»:

Փաստացի, դատարանը առանձին սենյակից վերադառնալով, երբ կողմերն ակնկալում են նրա կողմից վերդիկտի կայացումը, սեթփական նախաձեռնությամբ, որոշում է վերսկսել ապացույցների հետազոտումը: Մեր առաջարկն է, որպեսզի ՔԴՕ Նախագծի 343-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվող այս իրավունքը, նվազագույնը՝ դատարանին տրված լինի միայն պաշտպանական կողմի միջնորդության դեպքում, կամ ընդհանրապես՝ հանվի:

ՔԴՕ Նախագծի 343-րդ հոդվածի 2-րդ մասում վկայակոչված 342-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է հետևյալը՝

«Սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր հարցերին հաստատական պատասխան տալու դեպքում դատարանը կայացնում է մեղադրական վերդիկտ, որում սահմանում է նաև, թե ապացուցված արարքի նկատմամբ քրեական օրենսգրքի որ հոդվածը, հոդվածի մասը կամ կետն է ենթակա կիրառման»:

Մեր առաջարկն է, որ 343-րդ հոդվածի 2-րդ մասով դատարանին տրվող այս իրավունքը հանվի, քանի որ կողմերն իրենց իրավունքների ապահովման հնարավորություն են ունեցել նախքան դատարանի՝ վերդիկտ կայացնելու նպատակով առանձին սենյակ հեռանալը, իսկ դատավորը, իրավունքի առթիվ կասկածներ ունենալու դեպքում, պետք է դրանք մեկնաբանի հոգուտ ամբաստանյալի: Այս մտահոգություններն ու լուծման ուղիները վերաբերելի են նաև 343-րդ հոդվածի 3-րդ մասով դատարանին տրվող իրավունքին:

Նշված նորամուծությունները շատ կարևոր հետադարձ ազդեցություն կունենան հանրային մեղադրող դատախազի կողմից, հետևաբար՝ նաև հետ գնալով՝ մինչդաստական վարույթը հսկող դատախազի կողմից իր աշխատանքը կազմակերպելու վրա՝ սկսած դատարանում ապացուցվելիք թեզի հիմքում ընկած իրավական դիրքորոշումը ձևավորելու տեխնիկայից ու դրա համար գործադրվող հմտություններից՝ այն հեռանկարով, որ միայն իր կողմից դատարանին ներկայացված ապացույցներով է հիմնավորվելու այդ

դիրքորոշումը, և վերջացրած նրանով, որ դատարանը սեփական նախաձեռնությամբ՝ նոր ապացույցների կամ նոր հարցերի միջոցով, չի լրացնելու մեղադրանքի կողմի դիրքորոշումն հիմնավորող ապացուցողական բազան:

Եվ քանի որ մրցակցությունը ենթադրում է դատավորի ուղեղի/համոզմունքի վրա կողմերի ազդելու հավասար հնարավորությունների ընձեռում¹³², անհրաժեշտ է նաև ինստիտուցիոնալ առումով պաշտպանական կողմին և մեղադրանքի կողմին նույն հարթության վրա դնել նաև ժամանակագրական առումով սեփական թեզը և դրա հիմնավորումները դատարանին ներկայացնելու առումով: Մասնավորապես, քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելով, դատախազը մեծ առավելություն է ստանում դատավորի նորքին համոզմունքը ձևավորելու տեսակետից, քանի որ դրան ամբողջությամբ ծանոթանալուց հետո, պաշտպանական կողմի տեսակետին ծանոթանում է շատ ավելի ուշ՝ ապացույցների հետազոտման ժամանակ: Քանի որ ցանկացած տեղեկատվություն՝ մեղադրանքը և դրա ապացույցները, ստացված լինելով հասցեատիրոջ՝ դատարանի կողմից, սկսում է «եփվել» նրա ուղեղում, անխուսափելիորեն որոշակի համոզմունք ձևավորելով, պաշտպանական կողմի հետագա ներգրավումը այդ գործընթացին իրականում ոչ թե դատավորի համոզմունքի վրա ազդելու, այլ արդեն իսկ ձևավորված համոզմունքը հաղթահարելու գործընթացը, ինչն անարդարացի է «զենքերի հավասարության» սկզբունքի տեսակետից:

Ընդհանրապես, քրեական դատավարությունն ավելի գիտահեն դարձնելու համար, պետք է այդ գործունեության իրավական կարգավորումը բխեցնել նաև հոգեբանության օրենքներին դրանք համապատասխանելու անհրաժեշտությունից: Չէ՞ որ «ոչ մի իրավական պահանջ ի վիճակի չէ չեղարկելու յոգեբանության օրենքները և «անհնարը դարձնել հնարավոր»¹³³: Հետևաբար, անհրաժեշտ է դատավարությունը, որպես ճանաչողական գործընթաց, հնարավորինս ապահովագրել ճանաչողական նախապաշարմունքից (cognitive bias)՝ հնարավորություն տալով երկու կողմերին, այսինքն՝ թեզը և հակաթեզը ներկայացնող սուբյեկտներին համաժամանակյա ռեժիմով մասնակցել սինթեզին՝ դատարանի որոշմանը:

Մա նշանակում է, որ դատախազի կողմից ներկայացվող դիրքորոշումը և ապացույցները դատարանին պետք է ներկայացվեն այն ռեժիմով, որը թույլ է տալիս դրանց անմիջական վիճարկումը պաշտպանի կողմից: Մեր առաջարկն է, այսպիսով, ՔԴՕ-ում ամրագրել, որ մեղադրական եզրակացությունը հսկող դատախազի կողմից հաստատվելուց հետո, այն՝ քրեական գործի հետ միասին, մնում է դատախազի մոտ: Պաշտպանական կողմն այդ պահի դրությամբ արդեն իսկ ծանոթացել է քրեական գործի նյութերին, սակայն ի տարբերություն դատախազի, չի կարող իր դիրքորոշումը և դրա հիմքում ընկած փաստարկները ներկայացնել դատարանին ու կանխել վերջինիս մոտ մեղադրանքի կողմի՝ մեղադրական եզրակացության մեջ առկա դիրքորոշման ու դրա հիմքերի ազդեցության տակ համոզմունքի ձևավորման արդեն իսկ սկսվող գործընթացը: Մյուս կողմից, քանի որ դատի տալու կամ նոր տերմինաբանությամբ՝ նախնական դատալսումների՝ դատական քննության նախապատրաստական փուլում, դատարանը պետք է կատարի նաև մեղադրանքի օրինականության որոշակի ստուգում, ապա դատախազը պետք է ուղարկի

¹³² Կողմերի համար պետք է հավասարապես մատչելի լինենգործին վերաբերող տվյալներն ու այլ փաստաթղթերը, առնվազն՝ նրանք, որոնք կարող են դեր ունենալ դատարանի կարծիքի ձևավորման ընթացքում, տես, ի թիվս այլ աղբյուրների՝ ՄԻԵԴ, Ernst and Others v. Belgium, 15 July 2003, paras 60-61.

¹³³ В. П. Нажимов, «Психологические основы учения об уголовно-процессуальных функциях», «Правоведение», 1983 г., # 5, с. 55, տես նաև՝ «Независимость судей в Республике Армения: судоустройственные и уголовно-процессуальные гарантии», Ереван, 2001, с. 199

դատարան հենց այդ ծավալով անհրաժեշտ իր դիրքորոշումներն ու ապացույցները, այլ ոչ թե քրեական գործն ամբողջությամբ: Դա կարող է լինել մի փաստաթուղթ՝ կից հիմքերով, որտեղ փատվում է դատական քննության նախապատրաստական նիստում քննարկվող հարցերի՝ մեղադրանքի կողմի համար բարենպաստ լուծման անհրաժեշտությունը:

2.3.4. Մեղադրանքը փոփոխելը կամ լրացնելը, մեղադրանքից հրաժարվելու հետևանքները

Մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու ուղղությամբ դատախազի լիազորությունների, ինչպես նաև դատարանի լիազորվածության աահմանների հարցի լուծումը ամբաստանյալ մեղադրյալի պաշտպանության իրավունքի, նրա անմեղության կանխավարկածի ու վերջինիցս բխող դատախազի վրա դրված ապացուցման պարտականության սկզբունքների իրացման վրա առավել ազդող կարգավորումներից մեկն է: Մեր կարծիքով, այս ինստիտուտի կիրառումը, պետք է **գուզորդված լինի ամբաստանյալի պաշտպանության իրավունքի իրացման ու նրա վիճակի չվատթարացման երաշխիքներով**, որպիսիք որոշ չափով ամրագրված են ՀՀ գործող ՔԴՕ-ում (տես ստորև, հոդված 309, մաս 2-րդ), որը ենթադրում է այնպիսի հասկացության ամրագրում ՔԴՕ-ում, ինչպիսին «նվազ ծանր ներառված հանցագործությունն է», ինչպես նաև «կրկին անգամ դատվելու վտանգի տակ հայտնվելու» (double jeopardy) արգելքի նոր իմաստավորումը¹³⁴:

Թե միջազգային ստանդարտների և թե օտարերկրյա փորձի տեսակետից¹³⁵ ինքնին անթույլատրելի չէ մեղադրողի կողմից մեղադրանքի փոփոխումը և լրացումը: Թե գործող ՔԴՕ-ն (**Հոդված 309. Դատական քննության սահմանները**) և **թե ՔԴՕ Նախագիծը (Հոդված 276. Դատաքննության սահմանները) ամրագրում են այն նորմը, որ գործի դատական քննությունը կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում**, որով նրան մեղադրանք է առաջադրվել: Երկու փաստաթղթերն էլ նախատեսում են, սակայն, որ նոր փաստերի դատարանում ի հայտ գալու դեպքում մեղադրանքը կարող է դատախազի կողմից փոփոխվել՝ մինչև դատարանի կողմից վճռահատության համար խորհրդակցական/առանձին սենյակ հեռանալը (**ՔԴՕ, Հոդված 309.1 Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները**, և **«Հոդված 309.2. Դատական քննության ընթացքում այլ անձի նկատմամբ մեղադրանք առաջադրելը**¹³⁶

¹³⁴ Այս տեսակետից, կարևոր է նախ, արձանագրել, նշված ինստիտուտի իրական բովանդակությունը՝ ոչ թե կրկին անգամ նույն արարքի համար դատվելու, այլ նման վտանգի տակ երկրորդ անգամ հայտնվելու արգելքը, և ապա պարզել, թե երբ է առաջանում առաջին վտանգը: ԱՄՆ քրեական դատավարությունում այդ պահը, երդվյալների կողմից գործի դատական քննության դեպքում՝ տվյալ գործով երդվյալների դատարանի կազմավորման ավարտն է, իսկ պրոֆեսիոնալ դատավորի դեպքում՝ մեղադրող դատախազի կողմից բացման խոսքի սկիզբը (տես՝ Уильям Бернам, «Правовая система США», М. 2007, с. 517-518):

¹³⁵ «Ընդհանուր առմամբ, դատախազները կարող են փոփոխել մեղադրանքը այն մեղադրանքի, որը կարծում են, որ կարող են ապացուցել, մինչև այն պահը, երբ առաջանում է առաջին վտանգը (այսինքն՝ դատաքննությունը սկսելը): Որոշ հազվադեպ իրավիճակներում, դատախազներին կարող է անգամ թույլ տրվել փոփոխել ամբաստանյալի մեղադրանքը անգամ դատաքննությունը սկսվելուց հետո: Որպես օրինակ կարող է ծառայել սպանության փորձի վերաբերյալ գործը, երբ դիակը հայտնաբերվում է դատաքննության ընթացքում: Այս տեսակ գործերով դատախազը կարող է փաստարկել մեղադրանքը ավելի ծանր՝ սպանության մեղադրանքով փոփոխելու համար: Սրանք հազվադեպ իրավիճակներ են, սակայն, և քանի որ դատավորն է, ով պետք է թույլ տա փոփոխելու մեղադրանքը դատաքննությունը սկսվելուց հետո, պետք է առկա լինի դա անելու որևէ բացառիկ պատճառ», Уильям Бернам, «Правовая система США», М. 2007, с. 521

¹³⁶ «Եթե նոր հարուցված քրեական գործի արդյունքները կարող են հանգեցնել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի փոփոխման կամ լրացման, ապա մեղադրողի միջնորդության հիման վրա դատարանը հետաձգում է գործի դատական քննությունը»:

և Նախագիծ, Հոդված 276. Դատաքննության սահմանները, մաս 3-րդ, և Հոդված 277. Ներկայացված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու կարգը): Միաժամանակ, մեղադրանքի փոփոխությունը թույլատրելի է, եթե առկա են մեղադրյալի պաշտպանության իրավունքի երաշխիքներ, այսինքն՝ ապահովվում է մեղադրյալի իրավունքը ծանոթանալու մեղադրանքի փաստական հիմքերին և վիճարկելու ինչպես դրանք, այնպես էլ դրանց հիմքում մոդիֆիկացված արարքի որակումը: Գործող ՔԴՕ-ն 309-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրում է այն պայմանը, որ «Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը», իսկ Նախագծի 277-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են, որ՝

«3. Հանրային մեղադրողի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը հետաձգում է դատալսումները՝ ողջամիտ ժամկետ տրամադրելով մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու համար:

4. Մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու դեպքում հանրային մեղադրողը կազմում է նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշում, որը փոխարինում է մեղադրական եզրակացությանը և պետք է համապատասխանի մեղադրական եզրակացության բովանդակությանը ներկայացվող պահանջներին: Նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշումը տրվում է դատարանին և դատական վարույթի մասնակիցներին: Դատարանը նոր մեղադրանքին ծանոթանալու համար ողջամիտ ժամկետ է տրամադրում մեղադրյալին և նրա պաշտպանին, տուժողին, գույքային պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին»:

Խնդիրները, մեր կարծիքով, առաջանում են այն դեպքերում, երբ նոր փաստերի ի հայտ չգալու պայմաններում, մեղադրողը, չցանկանալով մեղադրանքը փոփոխել նվազ ծանր մեղադրանքի, կամ առավել ևս՝ չցանկանալով հրաժարվել մեղադրանքից, **արարքի վերաորակման բեռը թողնում է դատարանի վրա: Արդյունքում նույն փաստերը մեղադրյալի նկատմամբ օգտագործվում են արարքի քրեաիրավական այնպիսի որակման շրջանակներում, որի՝ որպես սովյալ փաստերից բխելու հանգամանքը վիճարկելու մրցակցային հնարավորություն մեղադրյալը չի ունեցել:** ՔԴՕ Նախագիծը, այս տեսակետից, տրամադրում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի որոշակի երաշխիքներ, մասնավորապես, 276-րդ հոդվածի 4-րդ մասում նշելով, որ՝ «Դատարանն իրավասու է հաստատված կամ հերքված համարել միայն մեղադրյալին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները: Վերդիկտ կայանելիս դատարանը, դուրս չգալով մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների շրջանակից, կարող է փոխել մեղադրյալին վերագրվող արարքին տրված իրավական գնահատականը, **եթե տարբերվող իրավական գնահատականի հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում քննարկել է կողմերի հետ»,** սակայն վերջին երաշխիքը՝ կողմերից հետ նույն փաստերի հիման վրա նոր որակման անցնելը չի ապահովում պատշաճ երաշխիքներ չի տալիս, քանի որ՝

1. քննարկմամբ չի կարող ապահովվել դատաքննության անհրաժեշտ մրցակցային ռեժիմը չի կարող ապահովվել, և քննարկմանը մասնակցելը չի կարող լինել մեղադրանքի վիճարկում, ինչի արդյունքում էլ՝

2. մեղադրյալի պաշտպանության իրավունքը՝ չի ստանում կանխատեսելի օրենսդրական երաշխիքներ:

Այդ երաշխիքների անկյունաքարը կլինի «նվազ ծանր ներառված հանցագործության» հասկացությունը, այսինքն՝ այնպիսի հանցագործություն, որի կատարումը անխուսափելի է ավելի ծանր՝ վերաորակվող հանցագործությունը կատարելիս: Կամ այլ կերպ՝ դու չես կարող կատարել ավելի ծանր հանցագործությունը առանց ավելի թեթև հանցագործությունը կատարելու: Այս երաշխիքը կարևոր է այնքանով, որքանով այն դեպքերում, երբ նոր փաստեր ի հայտ չեն գալիս, մեղադրողը արարքի վերաորակում դատախազի կողմից չի կատարվում, դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ ու

վերադառնում է մեղադրական դատավճռով նվազ ծանր, բայց ամբողջությամբ չներառված հանցագործության մեղադրանքով, որից պաշտպանվելու հնարավորության առկայությունը չի կարող բխեցվել գուտ ավելի ծանր մեղադրանքից պաշտպանվելու հնարավորություն ունենալու փաստից:

Նվազ ծանր ներառված հանցագործության ավելի ծանր հանցագործության մեջ ամբողջությամբ «ներառված» լինելը գնահատվում է մի քանի թեստերի հիման վրա, որոնք կամ որոնցից մեր քրեադատավարական վարույթի առանձնահատկություններից ելնելով առավել վերաբերելի մեկը, կարծում ենք, պետք է ստանա նաև իր օրենսդրական ամրագրումը որպես դատարանի կողմից ասարաքը դատավճռում վերաորակելիս պաշտպանության կողմի իրավունքներն ապահովելու երաշխիք՝

1. Մեղադրանքի թեստը՝ օրինակ, եթե մեղադրանքը առաջադրված է սպանության համար, որտեղ նշվում է, որ սպանությունը՝ կյանքից դիտավորյալ գրկելը, տեղի է ունեցել դանակահարության արդյունքում, ապա դանակի գործադրմամբ առողջությանը վնաս հասցնելը, որն անզուգույնությամբ առաջացրել է տուժողի մահը, կլինի նվազ ծանր ներառված հանցագործություն, քանի որ մեղադրյալը, նույն դանակի գործադրմամբ, չէր կարող տուժողի մահվան առաջ գալը ցանկանալով, չպատճառեր առողջական վնասը.

2. Ապացույցների թեստը, օրինակ՝ եթե նույն դանակը դրված է տարբեր կերպ որակվող արարքների ապացուցման հիմքում.

3. Հանցակազմի տարրերի թեստը, որն առվել շատ է կիրառվում ԱՄՆ-ում: Այս թեստը կիրառելիս, դատարանները պետք է հիշեն, որ՝ 1) հանցագործությունը կազմում են օրենքով սահմանված դրա բոլոր տարրերը՝ ամբողջության մեջ վերցրած, 2) այդ ամբողջությունը դատարանի կողմից հաստատվելու համար գործում է ապացուցման ամենաբարձր՝ ողջամիտ կասկածից վեր չափորոշիչը, 3) այդ չափորոշիչով ապացուցման պարտականությունը դրված է հանրային մեղադրողի վրա, և 4) այդ չափորոշիչով ապացուցման պարտականությունը իրացնելիս հանրային մեղադրողը պետք է ապացուցի հանցագործության յուրաքանչյուր տարրի առկայությունը՝ առանձին: Մա նշանակում է, որ «ավելի ծանր հանցագործությունը դա նույն թեթև հանցագործությունն է՝ մեկ կամ երկու հատկանիշ գումարած¹³⁷: Այս տեսակետից, անզամ չնայած արարքը կատարվել է նույն դանակով կամ մահաբեր այլ գործիքով, մահ առաջագրած ծանր մարմնական վնասվածք պատճառելը չի կարող ներառվել սպանության մեջ, քանի որ վերջինիս հանցակազմի տարրերի մեջ չի մտնում մահաբեր գործիքի կամ սառը զենքի գործադրումը: Կամ մեկ այլ օրինակով՝ ՀՀ ՔՕ 268-րդ հոդվածով նախատեսված արարքը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառությունն, մասնավորապես՝ պահելը առանց իրացնելու նպատակի, ՀՀ ՔՕ 266-րդ հոդվածով նախատեսված արարքի՝ իրացման նպատակով թմրամիջոց պահելու հանցագործության մեջ ներառված հանցագործություն է: Այսինքն՝ ավելանում է ընդամենը մեկ նոր հատկանիշ՝ իրացման նպատակը, և անձը չի կարող իրացման նպատակով պահի թմրամիջոց՝ առանց այն պահելու (անկախ պահելու նպատակից)¹³⁸:

Գտնում ենք, որ նմանատիպ չափորոշիչների օրենսդրական ձևակերպումը, կամ՝ ընդհանուր ձևակերպումներ տալով՝ դատական նախադեպային դիրքորոշումների մշակումը շատ կարևոր կլինի դատարանի կողմից մեղադրանքի վերաորակման գործընթացում մեղադրյալի իրավունքների իրական պաշտպանվածության համար և

¹³⁷ Micah Schwartzbach, Attorney, <https://www.nolo.com/legal-encyclopedia/what-lesser-included-offense.html>, տես նաև, նույն աղբյուրում վկայակոչված՝ Michael H. Hoffheimer, “The Rise and Fall of Lesser Included Offenses,” 36 Rutgers L.J. 351 (2005).
¹³⁸ Նույն տեղում:

հետադարձ կերպով կազդի նաև մեղադրողների կողմից նույն փաստերի հիման վրա առավել համարժեք, թեկուզ նվաճ ծանր հանցագործության մեղադրանք ներկայացնելու ու պաշտպանելու վճռականության վրա: Հակառակ դեպքում, մեղադրողները ստիպված են լինելու տեսնել, որ դատարանը՝ առանց մեղադրողի համապատասխան միջնորդության գրկված լինելով արարքը՝ որպես նվազ ծանր չներառված վերաորակելու հնարավորությունից, պարզապես արդարացնելու է մեղադրյալին:

Այս տեսակետից շատ ուսանելի է ՄԻԵԴ դիրքորոշումը՝ փաստերի անփոփոխության դեպքում մեղադրանքի մյուս կողմի՝ արարքի իրավական գնահատման, կամ որ նույնն է՝ արարքի որակման առթիվ, որը Դատարանն արտահայտել էր *Պենն ընդդեմ Բուլղարիայի գործով* վճռի 42-րդ կետում՝

«Դատարանը չի ընդունում Կառավարության այն պնդումը, որ հանցանքի իրավական որակումը ոչ մեծ կարևորություն ունի այն դեպքում, երբ այլընտրանքային մեղադրանքը հիմնված է նույն փաստերի վրա: Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիան պահանջում է, որ մեղադրյալը մանրամասն տեղեկացվի ոչ միայն այն գործողությունների մասին, որոնց կատարման մեջ մեղադրվում է, այսինքն՝ մեղադրանքի հիմքում ընկած փաստերի, այլև դրանց տրված իրավական որակման մասին»¹³⁹:

Այսպիսով, ՔԴՕ Նախագծի 276-րդ հոդվածի 4-րդ մասի այն նորմը, որի համաձայն՝ «Վերդիկտ կայանելիս դատարանը, դուրս չգալով մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների շրջանակից, կարող է փոխել մեղադրյալին վերագրվող արարքին տրված իրավական գնահատականը, եթե տարբերվող իրավական գնահատականի հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում քննարկել է կողմերի հետ», ՄԻԵԴ նշված դիրքորոշման տեսակետից պաշտպանության իրավունքի ապահովման արդյունավետ և իրավական հնարավորություններ չի տալիս, քանի որ ըստ էության ՄԻԵԴ-ը՝ նշելով, որ «Կոնվենցիան պահանջում է, որ մեղադրյալը մանրամասն տեղեկացվի...», միանշանակ՝ նույն փաստերով արարքի՝ թեկուզ նվազ ծանրի հանցագործության վերաորակման ընթացակարգերի նկատմամբ կիրառում է ՄԻԵԿ 6-րդ հոդված 3-րդ մասի՝ մեղադրյալի պաշտպանության իրավունքը երաշխավորող (ա) և (բ) կետերը, այն է՝

«ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին.

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար»:

Վերը նշված առկա կամ առաջարկվող կարգավորումներով մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտման հնարավորությունը, որն ի դեպ, առկա է ինչպես առաջին ատյանի, այնպես վերաքննիչ դատարանի կողմից իրականացվող քննության ընթացքում, առավել ցայտուն երևում է դատական պրակտիկայում, որից ցանկանում ենք ներկայացնել մեկ գործ՝

ՀՀ ՔԿ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչի 31.01.2017թ որոշմամբ անձը քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (խուլիգանություն՝ մի խումբ անձանց կողմից զուգորդված բռնություն գործադրելով): Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որը № ԵԷԴ/0011/01/17 քրեական գործով 20.07.2018թ կայացրել է դատավճիռ, որով արձանագրել է (տես՝ 20.07.2018թ դատավճռի 23-25 էջերը), որ «դատաքննությամբ ձեռք բերված ապացույցների բավարար ամբողջությամբ ամբաստանյալներ Ա.Գ-ի, Հ.Հ-ի, Ա. և Ա. Հ-ների արարքներում բացակայում է խուլիգանության հանցակազմի թե օբյեկտիվ և թե սուբյեկտիվ կողմը», և վճռել՝

«Ճանաչել և հռչակել ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3 մասի 1-ին կետով մեղադրվող Ա.Գ-ի անմեղությունը և նրան արդարացնել»:

¹³⁹ Պենն ընդդեմ Բուլղարիայի, № 20494/04, կետ 42:

Գործով տուժողներն ու դատախազությունը բերել են վերաքննիչ բողոքներ՝ խնդրելով բեկանել արդարացման դատավճիռը, այն բեկանել և փոփոխել, ամբաստանյալներին մեղավոր ճանաչել խմբի կողմից կատարված խուլիգանության մեջ՝ միջնորդելով նշանակել համապատասխան պատիժ:

Վերաքննիչ դատարանը № ԵԷԴ/0011/01/17 քրեական գործով 27.05.2019թ որոշմամբ, անմիջականորեն վկայակոչելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-մասի, 385-րդ հոդվածի, 397-րդ հոդվածի 2-րդ մասի, 414.2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, գտել է (տես՝ 27.05.2019թ որոշման 48-50 էջերը և հաջորդիվ), որ՝

«դատարանն ամբաստանյալներ Ա.Գ-ի, Հ.Հ-ի, Ա.Հ-ի և Ա.Հ-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով արդարացման դատական ակտ կայացնելու հարցում հանգել է ոչ ճիշտ եզրակացության, առանց քննարկման առարկա դարձնելու վերջիններիս արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված այլ հանցակազմի առկայության կամ բացակայության հարցը: ... Ամբաստանյալներ Ա.Գ-ի, Հ.Հ-ի, Ա. և Ա.Հ-ների կողմից /առաջադրված մեղադրանքի շրջանակներում/ խուլիգանական գործողություններ կատարելու առնչությամբ առկա է չփարատված կասկած, որպիսի հանգամանքը հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան չի հաղթահարվել դատաքննության ընթացքում, սակայն հիմնավորվել է, որ նրանք ծեծել են տուժողին, նրա մարմնին ձեռքերով կամ ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցնելով, հետևաբար նրանց արարքները ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից պետք է վերադարձվեն ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, ինչը չի արվել: ... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. գործի քննության արդյունքում գտնելով, որ արարքն իրավաբանորեն ճիշտ որակված չէ, վերաքննիչ դատարանն իրավունք ունի փոխել հանցագործության որակումը քրեական օրենքի այն հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում ավելի թեթև հանցագործության համար»:

Մեղադրյալ Ա.Գ-ի պաշտպանի վճռաբեկ բողոքը վերադարձվելուց հետո, նրա՝ արդեն որպես Դիմումատուի ներկայացուցիչները (Արտակ Ձեյնալյան և Արա Ղազարյան) դիմել են ՀՀ ՄԴ՝ վկայակոչելով (տես՝ ՄԴ դիմումի 21-22 էջերը), *ի թիվս բազմաթիվ այլ աղբյուրների, ՄԻԵԴ Պեննի գործով վերը նշված* վերաբերելի դիրքորոշումները:

Փաստացի, այս գործով մեղադրյալները վերաքննիչ դատարանի կողմից դատապարտվել են մի արարքի համար, որը հնարավոր չէ որևէ կերպ, որևէ թեստի տակ, դիտարկել որպես նվազ ծանր ներառված հանցագործություն, ինչն էլ ազդել են նրանց կողմից իրենց պաշտպանության իրավունքն իրացնելու, մասնավորապես ծեծի հանցակազմի՝ օբյեկտից տարրերի առկայությունը ամբաստանյալներից յուրաքանչյուրի նկատմամբ վիճարկելու հնարավորության վրա: Մասնավորապես, քանի որ ՎԴ հայտնի նախադեպային դիրքորոշման համաձայն, ծեծը օբյեկտիվ կողմից բնութագրվում է մեկից ավելի հարված հասցնելով, չունի խմբի կողմից կատարվելու հատկանիշը, ապա պաշտպանության իրավունքի տեսակետից, 118-րդ հոդվածով նախատեսված այս հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայությունը յուրաքանչյուրի համար պետք է փաստվեր 1-ից ավելի հարված հասցնելու հանգամանքը, ու յուրաքանչյուրին պետք է հնարավորություն տրվեր վիճարկելու այդ հանգամանքը՝ 258-րդ հոդվածով գործը քննելիս:

Մեղադրանքից հրաժարվելը

ՔԴՕ Նախագիծն այս առումով պարունակում է կարգավորումներ, որոնք հաստատ են մրցակցության սկզբունքին ու դրա հիմքում ընկած մեղադրանք-պաշտպանություն-դատարանի որոշում հարաբերությունները դիալեկտիկական հարաբերակցության վրա հիմնված լինելու մեթոդին, այն է՝ թեզ-հակաթեզ-սինթեզ: Մասնավորապես, Նախագծի 277-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը նախատեսում են հետևյալը՝

«6. Եթե հիմնական դատալսումների ընթացքում բոլոր ապացույցների հետազոտումից հետո հանրային մեղադրողը գալիս է այն համոզման, որ մեղադրյալին ներկայացված մեղադրանքն ամբողջությամբ կամ որոշակի մասով չի ապացուցվել, ապա եզրափակիչ ելույթում միջնորդում է դատարանին համապատասխանաբար ամբողջությամբ կամ որոշակի մասով արդարացնել մեղադրյալին:

7. Հաշվի առնելով մեղադրյալին արդարացնելու վերաբերյալ հանրային մեղադրողի միջնորդության հիմքը, հիմնավորումները և ծավալը, ինչպես նաև լսելով դրա վերաբերյալ վարույթի մյուս մասնակիցների կարծիքը՝ դատարանն իրավասու է եզրափակիչ դատական ակտում բավարարել կամ մերժել միջնորդությունը»:

Մեթոդաբանական հակասությունն այստեղ նրանում է, որ եթե չկա թեզ, չկա մեղադրանք, ապա չի կարող լինել դրա ապացուցված կամ չապացուցված լինելու մասին դատարանի որոշում, և այս մեթոդը պարտադիր է քրեական վարույթի ցանկացած փուլի համար, նույն ձևով, ինչպես օրինակ՝ դատարանը չի կարող դատաքննություն իրականացնել, եթե գործը դատարանի չի ուղարկվել և դատախազը չի մասնակցում դատական նիստին: Հոդվածի մեջբերված 6-րդ մասում հստակ նշվում է, որ մեղադրողը ոչ թե մասամբ կամ լրիվ հրաժարվում է մեղադրանքից, այլ այդ մասին միջնորդում է դատարանին: **Հենց այստեղ է, որ ապացուցման ու ճանաչողության ֆունկցիաների և սուբյեկտների ոչ պատշաճ տարանջատվածությունը, որի մասին նշեցինք այս կետի նախորդ՝ 2.3.3 ենթակետում, հասցնում է նրան, որ դատարանը փաստացի հանդես է գալիս միաժամանակ և դատախազի, և դատավորի դերում, ինչն արդեն հստակ նախատեսված է հոդվածի 7-րդ մասում:**

Պետք է ասել, որ նախկին խմբագրությամբ Նախագիծը նախատեսում էր, մասնավորապես, Ֆինլանդիայի օրինակով, տուժողի իրավագործումն այն աստիճան, որ դատախազի կողմից վարույթից դուրս գալու պարագայում, տուժողը շարունակում էր մեղադրանքի պաշտպանությունը: Այսպես կոչված *սուբսիդիար մեղադրող* տուժողի կողմից դատախազի փոխարեն մեղադրանքի պաշտպանության դեպքում գործի քննությունը շարունակելը, որն ի դեպ նախատեսված էր ՔԴՕ Հայեցակարգում, մեթոդաբանորեն ավելի հետևողական էր, քանի դատարանին թույլ էր տալիս շարունակել գործի քննությունը՝ գործում մեղադրանք պաշտպանող սուբյեկտի առկայության պարագայում: **Կարծում ենք, մեղադրանքից հրաժարվելու դեպքում, քրեական հետապնդումը պետք է դադարի իրավունքի ուժով, և դատարանի՝ որպես տվյալ փուլում վարույթն իրականացնող մարմնի վրա պետք է դրվի՝ այդ դադարման փաստին իրավաբանական ուժ տալու իմպերատիվ պարտականություն՝ քրեական գործի վարույթը կարճելու ձևով:**

2.3.5. Դատախազի դերակատարումը պատժի նշանակման հարցում

Նախևառաջ, պետք է լուծել այն հարցը, թե արդյոք պատժաչափի և պատժատեսակի մասին միջնորդության պնդումը և հիմնավորումը մտնում է «մեղադրանքի պաշտպանություն» գործառույթի հասկացության մեջ: Մեր կարծիքով, դատախազը, ելնելով տուժող համընդհանուր հասարակության իրոճությունը դատարանում ապահովող դատավարության սուբյեկտ ու նաև այն ճշմարտությունից, որ միայն արդարացի պատիժն է հասարակությանը հաշտեցնում հանցագործի հետ, լեգիտիմորեն իր կարծիքը պետք է հայտնի դատարանին այն պատժի մասին, որը, չլինելով տուժողի կողմից վրեժխնդրություն, ունակ է հասարակությանը հաշտեցնել հանցագործի հետ: Հետևաբար, այստեղ առավել կարևոր են այն հարցերը, թե՛ 1) ինչպես է դատախազը հանգում անհրաժեշտ պատժի մասին իր կարծիքին, և 2) ինչպես է այն հիմնավորում դատարանում, ինչպիսի չափորոշիչներով: Անկախ նրանից, թե դատախազը ներկայացնում է եզրակացություն¹⁴⁰, թե կարծիք պատժի մասին, նա կրում է դրա ճշմարտացիությունը կամ արդարացիությունը ապացուցելու պարտականություն:

¹⁴⁰ Նախագիծ, Հոդված 39 (Դատախազի լիազորությունները դատական վարույթի ընթացքում), մաս 1-ին, կետ 7. «1. Դատախազն իրավունք ունի՝ ... 7) մեղադրական վերդիկտից հետո դիրքորոշում հայտնել նշանակման ենթակա պատժի վերաբերյալ.»:

Այս տեսակետից ՔԴՕ Նախագծով (Գլուխ 44. Լրացուցիչ դատալսումները և դատավճիռ կայացնելը) իրականացված կարևորագույն քայլը դա վերդիկտի՝ մեղքի մասով դատարանի վերջնական ակտի և դատավճռի՝ պատժի մասով վերջնական ակտի տարանջատումն է: Փաստացի, նախկինու, պատժի միջնորդումը դատախազի կողմից և այդ միջնորդության առթիվ դատարանի որոշումը միաժամանակ տեղի էին ունենում, համապատասխանաբար՝ դատախազի կողմից մեղքի ապացուցման դատավարական ձևերի, նախնառաջ դատական ճառի ու դրա հիմքում դրված փաստերի, և դատարանի կողմից մեղքի առթիվ կայացված դատական ակտում: Ըստ էության, դատախազի կողմից կոնկրետ պատիժ միջնորդելը և դատարանի կողմից կոնկրետ պատիժ նշանակելը չէին պատճառաբանվում՝ եթե հաշվի չառնենք օրենքում նշված պատժի նշանակման չափանիշների վկայակոչումը: Մյուս կողմից, խիստ ոչ կանխատեսելի ու ոչ թափանցիկ է ու նաև լի կոռուպցիոն ռիսկերով, թե դատախազի կողմից միջնորդվող և թե դատարանին կողմից՝ Քրեական օրենսգրքի հատուկ մասի սանկցիայի շրջանակներում նշանակվող պատժի որոշման չափանիշները՝ էլ դասած պատիժը պայմանական չկիրառելու կամ օրենքով սահմանված նվազագույն պատժից ցածր պատիժ նշանակելու (ՔՕ 70-րդ և 64-րդ հոդվածներ) առթիվ հստակ **չափորոշիչների, չափանիշների և ուղեցույցների բացակայությունը:**

Վերջապես, թե ապացուցման առարկան կազմող հանգամանքները՝ հանցադեպ, մեղադրյալի մեղքը և այլն, և թե նշանակվող պատիժը հիմնավորելու պարտականությունը ընկած է դատախազի վրա, սակայն միայն մեղքի մասով է, որ ապացուցման պարտականության չափորոշիչը *ողջամիտ կասկածից վեր չափորոշիչն է:* Սրա պատճառն այն է, որ մեղքը ապացուցելիս, ապացուցման պարտականության սուբյեկտը վկայակոչում է արդեն տեղի ունեցած իրողությունը, մինչդեռ պատժի դեպքում, բացի հասարակությանը դատապարտյալի հետ հաշտեցնելու ֆունկցիայից, պետք է ապահովվի նաև քրեական իրավունքի ընդհանուր և հատուկ պրեվենցիայի նպատակի իրագործումը: Այսինքն՝ արդարացի և համարժեք լինելու համար, պատիժը պետք է ունակ լինի զսպելու տվյալ և հասարակության մեջ այլ անձանց ևս նույն կամ նմանատիպ արարքներ կատարելուց, կամ այլ կերպ ասած՝ պատիժն ուղղված է **ապագայում**, պատիժը կրելուց հետո, քանզի՝ արդյունքում, մեղադրյալի կամ այլ անձանց կողմից որոշակի վարքագիշ դրսևորելու կամ որոշակի վարքագիծ դրսևորելու հետ, հետևաբար, պատժի համարժեքությունն ու արդարացիությունը կրում է մոտավոր, կանխատեսական բնույթ ու չի կարող ապացուցվել ողջամիտ կասկածից վեր չափորոշիչի հիման վրա: Նույնը՝ վերաբերում է դատարանի պատժի մասով կայացվող որոշմանը:¹⁴¹

¹⁴¹ Այս տեսակետից, հստակ նախադեպային դիրքորոշումներ է պարունակում ԱՄՆ դատական պրակտիկան: Մասնավորապես, «Պատիժ նշանակելիս, վճռորոշ գործոն են հանդիսանում մեղավոր ճանաչված անձի նախկին դատավճռությունները: Սակայն, պատժաչափի հարցը լուծելիս, դատավորն իրավունք ունի ուսումնասիրելու բոլոր հնարավոր ապացույցները, ներառյալ ասեկոսե համարվող (*hearsay – այսինքն՝ տվյալ դատաքննությանը հետագոտման չենթարկված ապացույցները. – Դ.Խ.*) և ոչ մասնագետների կարծիքները, և անգամ այն հանցագործությունների ապացույցները, որոնք կատարելու համար մեղադրանք չի ներկայացվել, կամ որոնց կատարման մեջ մեղադրանքով անձը արդարացվել է»: *United States v. Watts* (519 U.S. 148 (1997)) գործով ԱՄՆ Գերագույն դատարանը տվել է այդ դիրքորոշման հիմնավորումը՝ նշելով, որ նախորդ գործով արդարացված անձի դեմ այդ գործով առկա փաստերը նոր մեղադրանքով դատապարտելու դեպքում նույն անձի դեմ պատիժ նշանակելիս հաշվի առնելը չի խախտում նույն արարքի համար կրկին անգամ դատապարտվելու վտանգի տակ հայտնվելու արգելքը, քանի որ նախորդ արարքների հանցավոր լինելը նոր հանագործության համար դատապարտելու դեպքում պատիժ նշանակելիս որոշվում է ոչ թե ողջամիտ կասկածից վեր, այլ ապացույցների գերակշռման չափորոշիչի հիման վրա, տես՝ *Уильям Бернам, «Правовая система США», М. 2007, с. 461.*

Հետևաբար, առաջնային կարևորություն են ստանում այն չափանիշները, որոնք թույլ են տալիս ապահովել պատժի արդարացիության, համարժեքության առավելագույն աստիճան՝ նվազեցնելով առկա/հայտնի ռիսկերը և նաև բավարարելով հանցավորի պահանջունքները: Այս տեսակետից, արդեն իսկ ՀՀ Կառավարության կողմից իրականացվել են և տարբեր Ռազմավարություններով նախատեսվում են իրականացվել համապատասխան գործողությունները:

Դատախազների կողմից քրեական և դատավարական օրենքի կիրառման բոլոր գործառնությունները, այդ թվում՝ պատժի միջնորդման հետ կապված, պետք է լինեն թափանցիկ, կանխատեսելի, կոռուպցիոն ռիսկերից զերծ ու համապատասխան են իրավական որոշակիության սկզբունքին: Պատժի նշանակման հարցերով Դատախազությունը պետք է ընդունի հանրության համար հասանելի ուղեցույցներ, որոնցից հանրությունը հստակ պատկերացում կկազմի, թե, օրինակ, քաղաքական ընդդիմադիր հայացքներ ունեցող անձի նկատմամբ դատախազի կողմից դատարանում պահանջվող պատժաչափը արդյո՞ք միջնորդվում է, որպես կանոն, մյուս նմանատիպ դեպքերով ևս, թե պարզապես քաղաքական շարժառիթներով պետության կողմից դրսևորվող տարբերվող վերաբերմունք է, այսինքն՝ քաղաքական խտրականություն, որի դեպքում ԵՆԽՎ 1900 Բանաձևի տեսակետից, Հայաստանը կանգնում է քաղաքական բանտարկյալ ունենալու վտանգի առջև¹⁴²: Իհարկե, Դատախազության այս ուղեցույցը պետք է հաշվի առնի նաև Դատավորների՝ Պատժի նշանակման ուղեցույցը (Sentencing Guidelines), որի մասին արդեն իսկ խոսվել է սույն Հետազոտության 2.1.1.2 կետում: Եվ ինչպես Դատական, այնպես էլ Դատախազական ուղեցույցը, կրելով ոչ պարտադիր բնույթ, այնուամենայնիվ, տալիս են նվազագույն, ելակետային պատժաչափեր, որոնցից շեղումները պետք է հիմնավորվեն, համապատասխանաբար, դատախազների կողմից դատարանին պատիժ միջնորդելիս, և դատարանի կողմից՝ պատիժ նշանակելիս:

Դատախազի կողմից միջնորդվող, ու ըստ այդմ էլ՝ դատարանի կողմից սահմանվող պատժատեսակի ու պատժաչափի կանխատեսելիության համար շատ կարևոր է Պրոբացիայի պետական ծառայության գործառնությո՞րը, քանի որ վերջինս նաև գիտահեն տեղեկանք է տրամադրելու այլընտրանքային պատիժների կիրառման վերաբերյալ: Մինչպես նախորդ փուլում Պրոբացիայի պետական ծառայության կողմից՝ անձի ռիսկերի և պահանջունքների՝ Դատախազական բարեփոխումների 2019-2023թթ. Ռազմավարությամբ նախատեսված էլեկտրոնային գործիքի կիրառման արդյունքներով տրվող գնահատականը նույնպես շատ կարևոր է: Եթե պոստպենիտենցիար փուլում, այսինքն՝ դատավճռի կատարման փուլում, այդ գործիքը ծառայում է պրոբացիայի շահառուի հետ աշխատանքների անհատական պլանը կազմելու համար, ապա պատժի նշանակման փուլում այս եզրակացության հասանելիությունը և ուղղորդող բնույթը դատախազի, ինչպես նաև դատարանի համար՝ համաչափ, պատժի նպատակներին հասնելու ողջամիտ հեռանկարներ ապահովող և միաժամանակ կոռուպցիոն ռիսկերի նյութականացումը բացառող պատիժ միջնորդելու տեսակետից, շատ կարևոր է:

Վերաբերելի միջազգային չափորոշիչներով կարմիր թելով անցնում է պատժի կանխատեսելիության, այս փուլում դատախազական գործունեության ակտերի կայունության, կամայականության ու կոռուպցիայի դեմ երաշխիքներ ապահովելու, ընդ

¹⁴² Տես՝ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի կողմից 33-րդ նստաշրջանում 2012թ. հոկտեմբերի 3-ին ընդունված Z-1900 Բանաձևը, որի վերնագիրն է՝ «Քաղաքական բանտարկյալի սահմանումը» ամրագրում է, որ «Իր անձնական ազատությունից զրկված անձը պետք է համարվի «քաղաքական բանտարկյալ», եթե՝ ...գ). քաղաքական շարժառիթներից ելնելով, նրա արգելանքի ժամկետը կամ դրա պայմանները ակնհայտորեն համաչափ չեն այն արարքին, որի կատարման մեջ անձը մեղավոր է ճանաչվել կամ կասկածվում է»:

որում՝ թե օրենսդրության, և թե իրավակիրառ պրակտիկայի մակարդակով սկզբունքների կարևորումը: ԵԽ «Նախարարների կողմիտեի Պատիժների նշանակման կայունության մասին անդամ պետություններին ուղղված [R\(92\)17](#) Հանձնարարականի» Հավելվածը¹⁴³, իր (Ա. Պատժի նշանակման հիմքերը) կետում նշում է հետևյալը՝

«1. Օրենսդիրը կամ իրավասու այլ մարմինները պետք է, սահմանադրական սկզբունքների ու իրավական ավանդույթով դա թույլատրելի լինելու դեպքում, ձգտեն ներկայացնել պատժի նշանակման հիմքերը:

2. Անհրաժեշտության դեպքում, և հատկապես՝ երբ կարող է տեղի ունենալ տարբեր հիմքերի բախում, ցուցիչներ պետք է տրամադրվեն առ այն, թե պատժի նշանակման այդ հիմքերի կիրառման ժամանակ, ինչպես է հնարավոր լինելու նախընտրություն կատարել այդ հիմքերի միջև:

3. Որտեղ հնարավոր է՝ որոշ հանցատեսակների կամ հանցավորների որոշակի խմբերի հետ կապված, պետք է ներկայացվի վճռահատության հիմնական պատճառը:

... 7. Որևէ խտրականություն չպետք է կատարվի՝ հանցավորի կամ տուժողի ռասայական պատկանելության, մաշկի գույնի, գենդերային կամ ազգային պատկանելության, կրոնի, սոցիալական կարգավիճակի կամ քաղաքական համոզմունքի հիման վրա»:

Կարծում ենք, անգամ մինչև համապատասխան ուղեցույցներ ընդունելը, այս սկզբունքները պետք է ամրագրել Քրեական օրենսգրքում և Դատախազության մասին օրենքում և այլն: Հանձնարարականի Հավելվածի հաջորդ կետը (Բ. Պատժամիջոցի կառուցվածքը) նշում է, որ՝

«2. Հնարավոր պատիժների միջակայքը չպետք է այնքան լայն լինի, որպեսզի դատարանների համար քիչ օգտակար լինի արարքի հարաբերական վտանգավորությունը պարզելու համար...

... 4. ... b. սահմանադրական սկզբունքների ու իրավական ավանդույթի շրջանակներում կարող են, ի թիվս այլի, նախատեսվել մեկ կամ մի քանի կողմնորոշիչ կամ ելակետային ուղենիշներ տրամադրող հետևյալ աղբյուրները՝

- i. օրենսդրություն.
- ii. վերադաս դատարանների ուղենիշային որոշումները.
- iii. անկախ հանձնաժողովի ակտեր.
- iv. նախարարության շրջաբերական.

v. ուղեցույցներ դատախազության համար:

Կարծում ենք, Հայաստանի դեպքում կիրառելի են 1-ին, 2-րդ և 5-րդ աղբյուրները, որոնք չեն հակասում առկա սահմանադրական կարգավորումներին ու ձևավորված իրավական ավանդույթներին, այլ հակառակը՝ պատժի միջնորդման ու նշանակման ձևավորված պրակտիկաները դարձնում են ավելի կանխատեսելի և թափանցիկ հանրության համար:

Հանձնարարականի Հավելվածի հաջորդ կետը (Դ. Նախկին դատվածություններ) նախատեսում է, որ՝

«պետք է լինի կայուն քաղաքականություն՝ կապված կարճված վարույթների, օտարերկրյա դատավճիռների, համաներման, ներման և վաղեմության ժամկետների լրանալու հիմքով հետապնդումն արգելված հանցանքների վերաբերելիության կապակցությամբ»:

Այս կարգավորումները կարող են խորթ թվալ ՀՀ իրավաբաններին, սակայն իրականում արտահայտու են անձի և նրա կատարած հանցանքի վտանգավորության աստիճանը նշանակվող պատժում արտահայտելու գաղափարը՝ անկախ նախկինում նույն անձի դրսևորած հակաիրավական վարքագծի՝ օրինական ուժ ունեցող ակտերով հաստատվելու փաստից: Սա ուղիղ հետևանքն է, մի կողմից, նրա, որ պատժի նշանակումը չի հենվում

¹⁴³ RECOMMENDATION No. R (92) 17 OF THE COMMITTEE OF MINISTERS TO MEMBER STATES CONCERNING CONSISTENCY IN SENTENCING (Adopted by the Committee of Ministers on 19 October 1992 at the 482nd meeting of the Ministers' Deputies)

պատժի ողջամիտ կասկածից վերը շեմի վրա, և մյուս կողմից՝ գոհակենտրոն¹⁴⁴ այն մոտեցումից, որն առավել կոնկրետ այս հարցով դրսևորել է ՄԻԵԴ-ը՝ վերը հիշատակված *Օփուզի գործով (կես 111-րդ և այլ)*՝ նշելով, որ «բռնությունը, որին դիմումատուն և նրա մայրը ենթարկվել են երկար ժամանակի ընթացքում, պետք է դիտարկել ոչ թե որպես մասնավոր և առանձին էպիզոդներ, այլ այդ իսկ պատճառով՝ իբրև փոխկապակցված իրադարձությունների շղթա»՝ անդամ պետություններին հասկացնելով, որ այն դեպքերում, երբ օրինակ բռնության գոհը հաղորդում է տալիս հանցագործության մասին, ապա՝ հետ վերցնում, որից հետո գործը կարճվում է, ու ընդ որում՝ այդ շրջանը կարող է կրկնվել նորից՝ ու ի վերջո, տեղի է ունենում ողբերգություն, Եվրոպական Դատարանը, նախ այդ բոլոր դեպքերը դիտելու է որպես մեկ ամբողջություն, և նույնն անելու պոզիտիվ պարտավորություն են ունենալու դատախազության մարմինները՝ անձի վտանգավորության աստիճանը գնահատելիս հենվելով փաստերի վրա՝ անգամ եթե դրանցով նախկինում հետապնդումը դադարեցվել է¹⁴⁵:

Կարևոր է, որպեսզի դատախազը, հենվելով մեր նշած **Ուղեցույցի վրա**, երբ անդրադառնում է հանցավորի անձին, որպես պատժի մեղմությունը կամ ծանրությունը հիմնավորող հանգամանքի, պետք է նաև նշի այդ հանգամանքները, այլ ոչ թե՝ պարզապես հայտարարի՝ «հաշվի առնելով ամբաստանյալի անձը»: Այնուհետև, դատախազը պետք է նշի այդ փաստերի **վերաբերելիությունը**՝ դարձյալ պատժի դատախազական ուղեցույցով սահմանված հանգամանքների վերաբերելիության կամ նշանակության չափանիշներով: Օրինակ, եթե *Օփուզի գործին* ու նաև ԱՄՆ՝ դատարանների կողմից հաստատված դիրքորոշման համաձայն, պատիժ սահմանելիս, քանի որ կիրառվում է ապացուցողական ցածր շեմ ու վերաբերելի են ոչ միայն ողջամիտ կասկածից վեր չափանիշով հաստատված հանգամանքները, ապա ստացվում է, որ մեղադրյալին կարելի է ավելի խիստ պատիժ նշանակել, եթե նախկինում, օրինակ՝ 10 տարի առաջ, նա բերման է ենթարկվել նույն բնույթի արարքի համար: Կամայականություններից խուսափելու համար հենց անհրաժեշտ են այս **Ուղեցույցները**: Օրինակ, դրանցով կարող են սահմանվել **վերաբերելիության կոնկրետ հատկանիշներ, ասենք՝** որ միջին ծանրության համար դատվելու, կամ նման հանցագործության կասկածով բերվելու, ոչ արդարացնող հիմքերով կարճվելու դեպքում 5 տարի «մաքուր կենսագրության» դեպքում ժամկետն անցնելը չի կարող վկայակոչվել դատախազի կողմից նոր հանցագործության համար պատիժ միջնորդելիս՝ եթե, իհարկե, նույն արարքները, որպես շթղա արդեն իսկ չեն դիտարկվել որպես վերաբերելի հանգամանք՝ արարքը որակելիս (օր.՝ որպես տարիներով տևած սխտեմատիկ բռնություն տուժողի նկատմամբ):

Են ՆԿ [\(92\)17](#) Հանձնարարականի Հավելվածի հաջորդ կետը (Ե.Պատժի հիմնավորումներ տալը) նախատեսում է, որ՝

«... 2. «Հիմնավորումը» նշանակում է պատճառաբանություն, որով նշանակվող կոնկրետ պատիժը հարաբերակցվում է տվյալ հանցատեսակի համար սովորաբար նշանակվող միջակայքի ու պատժի նշանակման հռչակված հիմքերի/սկզբունքների հետ»

Քանի որ դատարանը պետք է ներկայացնի նման **«պատճառաբանություն»**, ապա նույնը պետք է անի նաև մեղադրողը, քանի որ կողմի միջնորդությունը միշտ իր ցանկալի որոշման նախագիծն է՝ տրվող դատարանին: **Կարծում ենք, որ այս առաջարկը, այն է՝ պատժի**

¹⁴⁴ Տուժողակենտրոն քրեական արդարադատության մոտեցման լուրջ հիմքեր է պարունակում նաև 2019-2023թթ. Դատախարակական բարեփոխումների ռազմավարությունը, տես՝ էջ 60:

¹⁴⁵ Տես՝ *Օփուզ, կես 145*. «Դատարանն, այսպիսով, գտնում է, որ **հաշվի առնելով 2.0-ի կողմից նախկինում կատարված հանցագործությունների ծանրությունը, քրեական հետապնդման մարմինները պետք է հնարավորություն ունենային շարունակելու վարույթը՝ ելնելով հանրային շահից և անկախ տուժողների կողմից իրենց բողոքները հետ վերցնելու հանգամանքից**»:

պատճառաբանությունը որոշ ելակետային միջակայքից հետո հարաբերակցելու ու շեղումը հիմնավորելու պահանջը, կարևոր է ոչ միայն մեթոդական, այլ նաև տեխնիկական առումով՝ Նախագծով առաջարկվող պատժի մասով հատուկ ակտը՝ դատավճիռը դատարանի կողմից կայացնելու ու մինչ այդ դատախազի կողմից համապատասխան իր կարծիքը միջնորդության տեսքով ներկայացնելու համար: Իսկ դա իր հերթին կարևոր նախապայման կլինի Պատժի նշանակման ուղեցույցներ ընդունելու համար, որոնց մշակման ու ու իրագործման ընթացքում չափազանց կարևոր է լինելու հենց դատախազների դերը:

Այս հարցի հետ կապված բավականին ուսանելի է Ֆինլանդիայի փորձը, որտեղ գործում են քրեական պատժի կանխատեսելիության և միասնականության սկզբունքները, այսինքն՝ այն, որ դատարանը պետք է ապահովի պատժի նշանակման միասնականությունը՝ սահմանելով արարքի վտանգավորությանը և վնասակարությանը, ինչպես նաև դրա կատարմանը հանցավորի մեղավորության աստիճանին համարժեք պատիժ¹⁴⁶: Անհրաժեշտ է, ՔԴՕ-ում՝ սահմանել հանրային դատախազի կողմից պատճառաբանված միջնորդություն ներկայացնելու ու դատավորի կողմից պատիժ նշանակելիս դատավճռի կայացման ընթացքում պատճառաբանված պատիժ սահմանելու պարտականությունը՝ հատուկ ամրագրելով՝ պատժի միասնականության ու կանխատեսելիության ապահովման սկզբունքների արտահայտման անհրաժեշտությունը թե՛ դատախազի միջնորդության, և թե՛ դատարանի դատավճռի մեջ:

Վերջապես, նույն [R\(92\)17](#) Հանձնարարականի Հավելվածի հաջորդ կետը (Ը. Դատախազի դերը) ընդգծում է, որ «պատժի նշանակման քաղաքականություններն ու դատախազների վերապատրաստումը պետք է ապահովեն, որպեսզի դատախազական պրակտիկան իր ներդրումն ունենա պատիժների նշանակման ընդհանուր կայունությունը երաշխավորելու գործում»: Վերջապես, և սա կապվում է վիճակագրության ներկայացուցչականության մասին վերը հնչեցված այլ նկատառումների հետ ևս՝ «Պետք է լինի պաշտոնապես ընդունված պատժողական վիճակագրություն: Վերջինս պետք է ամփոփվի ու ներկայացվի այնպես, որ բովանդակալից լինի դատավորների համար...» (Հավելված. Կետ Թ. Վիճակագրություն և հետազոտություններ):

2.3.6. Դատական ակտերի բողոքարկումը քրեական գործերով

Դատախազության մասին ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի (Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը) համաձայն՝

«1. Գործին մասնակցող դատախազը պարտավոր է բողոքարկել օրինական ուժի մեջ չմտած այն դատական ակտը, որը, իր կարծիքով, հիմնավոր չէ կամ ապօրինի է:

2. Դատարանների՝ քրեական գործերով օրինական ուժի մեջ չմտած դատական ակտը կարող է բողոքարկել դատական քննությանը մասնակցած մեղադրող դատախազը կամ վերադաս դատախազը:

3. Դատարանների՝ քաղաքացիական կամ վարչական գործով պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող է բողոքարկել դատական քննությանը մասնակցած դատախազը կամ վերադաս դատախազը:

4. Քրեական գործերով դատական ակտը քաղաքացիական հայցի մասով դատախազը կարող է բողոքարկել, եթե այն վերաբերում է պետական շահերին:

... 8. Վերադաս դատախազը վերաքննիչ կամ վճռաբեկ վարույթին մասնակցությունը կարող է հանձնարարել այլ դատախազի (դատախազների):

¹⁴⁶ Ֆինլանդիայի քրեական օրենսգիրք, Գլուխ 6, 1976, Chapter 6 of the Criminal Code, adopted 1976/466: Sten` The European Institute for Crime Prevention and Control, affiliated with the United Nations Criminal Justice Systems in Europe and North America, FINLAND, Matti Joutsen, Raimo Lahti and Pasi Pölönen, Helsinki, Finland 2001, p 34.

9. Դատախազի բերած բողոքը կարող է հետ վերցնել բողոք բերած դատախազը կամ վերադաս դատախազը»:

Նույն մտահոգությունները, ինչ որ նշվեցին վերևում՝ հսկող դատախազի կողմից նաև հանրային մեղադրանքը դատարանում պաշտպանելու առթիվ, վավեր են նաև այս հարցում, այսինքն, այստեղ նույնպես ուժի մեջ չմտած դատական ակտերի դեմ բողոք բերելու լիազորությունը պետք է որպես ընդհանուր կանոն վերապահվի մեղադրանքի պաշտպանությունն իրականացրած դատախազին, իսկ այդ կանոնից արվող շեղումները՝ նախատեսվեն որպես դբացառություններ, լինեն օրենքով նախատեսված, կատարվեն կանոնից շեղվելու հիմքերի պատճառաբանված մատնանշմամբ: Հակառակ դեպքում «ստացվում է այնպիսի իրավիճակ, որ վերադաս դատախազը, ով չի մասնակցել դատավարությանը, կարող է բողոքարկել դատական ակտը: Նման գործելաոճը... վտանգում է և կարող է վտանգել դատախազի անկախությանը»¹⁴⁷:

Նույնը պետք է ասել նաև 27-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով սահմանված նորմերին, որոնցով առաջին ատյանում մասնակցած դատախազի կողմից բերված բողոքը կարող է հետ վերցվել վերադաս դատախազի կողմից, ինչպես նաև վերջինիս կողմից կարող է դատական վերանայման ատյանում մասնակցության համար նշանակվել մեկ այլ դատախազ: Այս բողոք հարցերը պետք է կարգավորվեն հաշվի առնելով քրեական վարույթում դատախազի մասնակցության շարունակականությունը և այդ մասնակցության հիմքում ընկած ֆունկցիոնալ ճանաչողական միասնականությունը, որի հիմքում ընկած է դեռ անձի դեմ քրեական հետապնդում հարուցելիս գործով հեռանկարային իրավական դիրքորոշումը, որը ձևավորվում է մինչդատական վարույթում ու պաշտպանվում մինչև դատական վերջնական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը:

Նաև ապահովելով դատախազության՝ որպես դատական իշխանության սուբյեկտի լեգիտիմությունը, որի վարութային մասնակցության հիմքերը նախատեսված են օրենքով ու չեն կարող փոփոխվել վերադասների կամայական որոշումներով: Այս հարցերի պատշաճ կարգավորումը շատ կարևոր է դատախազի ինքնուրույնության համար ու հետադարձ կերպով ազդում է դատախազի՝ վարութային նախորդող փուլերում մասնակցության վճռականության ու վստահության վրա:

Կարծում ենք նաև, դատախազների ներքին, այսինքն՝ ներդատախազական անկախության ապահովման սկզբունքից ելնելով, անհրաժեշտ է որպես սկզբունք որդեգրել հետևյալը՝ վարչակառավարչական հարաբերությունները, համակարգային ներքին աստիճանակարգությունը չեն կարող ազդել դատավարական գործառույթների իրականացման վրա: Մասնավորապես, բողոք բերած դատախազը, ղեկավարվելով իր համոզմունքով, քրեական գործով ապացույցների ազատ գնահատմամբ, գործի օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի վերլուծության հիման վրա, բերում է բողոք, այսինքն՝ որպես մեղադրանքի կողմ բողոք բերելով, արդեն իսկ իրականացնում է իր մեղադրողի գործառույթը, որի գնահատողն այլևս վերադաս դատարանն է: **Նույն փոփոխություն անհրաժեշտ է անել նաև ՀՀ ՔԴՕ-ում:**

2.4. Դատախազության լիազորությունները պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս

¹⁴⁷ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, 2016, էջ 5:

2.4.1. Ընդհանուր դիտարկում այս ոլորտում դատախազական հսկողության լեգիտիմության և դրա սահմանների վերաբերյալ

Այս կետում են հիմնականում քննարկվելու են ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված լիազորության՝ «5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ» միայն պատիժների, և այն էլ՝ փակ հիմնարկներում իրականացվող պատժի և մարդու իրավունքների վրա առավել ներգործություն ունեցող հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության երաշխիքները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանվածության տեսանկյունից: Մա պայմանավորված է այս ոլորտում առավել շատ խնդիրների առկայությունից ու նաև՝ այդ խնդիրներն առաջացնող օրինաչափությունների առավել ցայտուն դրսևորման հանգամանքով:

Դատախազի գործունեությունը այս ոլորտում բխում է հանրային շահն արտահայտելու իր միասնական լեգիտիմությունից: Քանի որ միայն արդարացի պատժի միջոցով է վերականգնվում հանրությանը՝ որպես համընդհանուր տուժողին հասված վնասը, ապա դատախազը, նույն լեգիտիմությամբ պայմանավորված, պետք է նաև հսկողություն իրականացնի այն պատժի կատարման օրինականության նկատմամբ, որը նշանակվել է դատարանի կողմից որպես դատախազի՝ ի շահ հանրության իրականացված նախորդող ամբողջ գործունեության արդյունքների վերջնական արձանագրում: Այսինքն՝ սահմանադրական այս լիազորությունն իրականացնելիս, դատախազը պետք է հսկողություն իրականացնի նաև նրա նկատմամբ, թե արդյոք այն պատիժը, որը նշանակվել է դատարանի կողմից՝ դատախազի կողմից իր **նախորդող սահմանադրական լիազորության մեղադրանքի պաշտպանության շրջանակներում**, և որի **անհրաժեշտությունը նա ապացուցել է դատարանում**, իրագործվում է գործադիր իշխանության, մեր դեպքում՝ ԱՆ Քրեակատարողական ծառայության կողմից, թե ոչ:

Եվ այս վերահսկողությունը սովորաբար դիտարկվում է միայն հոգուտ դատապարտյալի, ինչը դատախազական այս լիազորության միայն մի կողմն է հետևել, որ պատժի պայմանները իրենց խստությամբ չեն անցնում դատարանի որոշմամբ սահմանված անհրաժեշտ գրկանքները: Մակայն, կա մյուս կողմը ևս՝ դատախազը պետք է հսկողություն իրականացնի՝ կանխելու համար նաև այն, որ պետության գործադիր իշխանությունը կատարի դատարանի որոշումը՝ պատժի մասով և դատապարտյալի համար չստեղծի այնպիսի պայմաններ, որոնք իրենց չեն կարող թույլ տալ ազատության մեջ գտնվող մարդիկ: ԵԴԽԽ «Դատախազների և բանտային ադմինիստրացիայի միջև փոխհարաբերությունների մասին» 2011թ. նոյեմբերի 25-ին ընդունված Հ-6 Կարծիքի համաձայն՝ «26. ԵԴԽԽ-ն վերհիշում է, որ դատախազները հանրային պաշտոնյաներ են, որոնք հասարակության անունից կամ հանրային շահերից ելնելով, ապահովում են օրենքի կիրառումը այն դեպքերում, երբ օրենքի խախտումը քրեորեն պատժելի է, հաշվի առնելով ինչպես անհատի իրավունքները, այնպես էլ քրեական արդարադատության համակարգի անհրաժեշտ արդյունավետությունը»¹⁴⁸: **Պետությունները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ այն հաշվով, որպեսզի դատախազներն իրենց պարտականությունները կարողանան իրականացնել ազատությունից զրկելու բոլոր վայրերում»**¹⁴⁹:

¹⁴⁸ Տես՝ ԵԽ ՆԿ (2000)19 Հանձնարարականի 1-ին կետը:

¹⁴⁹ CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) Opinion No. 6 of the CCPE on the relationship between prosecutors and the prison administration, adopted by the CCPE at its 6th plenary meeting, (Strasbourg, 24-25 November 2011), <https://rm.coe.int/16807481c7>

Հակառակ դեպքում դատախազության ամբողջ գործունեությունը՝ այդ անձի հանդեպ քրեական հետապնդման հարուցումից սկսած մինչև մեղադրական ճառը ու բողոք ներկայացնելը, դառնում է լրիվ անիմաստ: Սա նշանակում է, որ դատախազության՝ տվյալ փուլում իրականացվող հսկողության լեգիտիմությունը գալիս է հենց դատարանի պատժի մասով որոշումը ճշգրտորեն կիրառելու անհրաժեշտությունից, այսինքն՝ «հսկողություն է իրականացնում պատիժների կիրառման օրինականության նկատմամբ» դրույթի մեջ «օրինականություն» եզրույթը նախևառաջ, իր բովանդակությունը ստանում է դատարանի որոշման մեջ: ԵԽ ՆԿ (2000)19 Հանձնարարականը իր 3-րդ կետում ուղղակիորեն նշում է՝ «քրեական արդարադատության որոշ համակարգերում դատախազները նաև՝ հսկողություն են իրականացնում դատարանների որոշումների կատարման նկատմամբ»:

«Օրինականություն» եզրույթի բովանդակությունը նախևառաջ դատարանի՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ կողմից գուտ կատարվող որոշման տեքստից բխեցնելու սկզբունքը նշանակում է, որ **դատախազի՝ պատիժների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության գործառույթի ծավալը համընկնում է դատավճիռների կատարման օրինականության նկատմամբ հսկողության գործառույթի ծավալի հետ:** Եվ եթե դատախազը, իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում պարտավոր է, օրինակ, ստուգել, թե արդյոք անձը, ում նկատմամբ կիրառելի է բաց ռեժիմը, պահվում է փակ ռեժիմում և ըստ ստուգման արդյունքների՝ կիրառել դատախազական ներգործության միջոցներ, ապա դա նշանակում է, որ ռեժիմի ընտրությունը նույնպես մտնում է պատժի կիրառման մեջ, իսկ քանի որ պատիժը սահմանվում է միայն դատավճռով, ապա **միայն դատարանն է կարող է սահմանել առնվազն դատախազական հսկողության առարկա ռեժիմի ընտրությունը:**

Հակառակ դեպքում դատախազը պետք է ստուգի ոչ թե դատավճռի կատարման օրինականությունը, այլ այն թե ինչպես է կատարում ԱՆ քրեակատարողական հիմնարկը նույն ԱՆ կողմից տվյալ դատապարտյալի համար սահմանված ռեժիմը, ինչը չունի ինքնուրույն լեգիտիմություն դատախազական գործունեության համար: Այսինքն՝ պատիժների օրինականության նկատմամբ դատախազական հսկողության լեգիտիմությունը գալիս է միմիայն դատարանների կողմից նշանակված պատժի, այսինքն՝ դատավճիռների կատարման անհրաժեշտությունից, այլ ոչ թե նրանից՝ թե ինչ ռեժիմով է որոշել գործադիր մարմինը, որ պետք է պահել դատապարտյալին: **Հետևաբար, ՀՀ ԱՆ ՔԿԾ սահմանված պատժի կրման պայմանները պետք է բխեն արդեն իսկ դատարանի դատավճռով սահմանված ռեժիմից:** Ազատագրվում պատիժը անքակտելի է դրա ռեժիմից, և չի կարող դատարանը նշանակել պատժատեսակ՝ առանց առնվազն այդ պատժի այն հիմնական պայմանները սահմանելու, որոնք համակցաբար, կոչվում են «ռեժիմ»:

Դատախազը հսկողություն է իրականացնում նաև Բանտային կանոնների 2-րդ հոդվածով սահմանված այն նորմի պահպանման նկատմամբ, ըստ որի պատժի կամ խափանման միջոցով նախատեսված զրկանքները չեն կարող դուրս գալ դատավճռով սահմանված շրջանակներից, ինչից ուղղակիորեն բխում է, որ այդ զրկանքների համակցությունը, որը անվանում ենք ռեժիմ, նույնպես պետք է սահմանված լինի դատական ակտով:

Սահմանադրական լիազորությունների առավել հստակ ամրագրումն ապահովելու նպատակով, դատախազության նշված գործառույթը, այն է՝ ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը պետք է վերաձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝

«Հսկողություն է իրականացնում դատավճիռների կատարման և հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ»:

Իսկ պատժի կրման ռեժիմի որևէ հետագա փոփոխություն կարող է պայմանավորված լինել բացառապես դատապարտյալի կողմից՝ իր նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դրսևորված վարքագծով: **ԵՂՆԽ 2-6 Կարծիքի համաձայն**

«17. Բանտային պատժի կիրառումը հանգեցնում է անհատին նրա հիմնարար իրավունքներից մեկից՝ ազատության իրավունքից զրկելուն:

18. Այս հետևանքը հիմք է հանդիսանում, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն, այդ թվում՝ նման դերակատարում ունեցող դատախաի կողմից, որպեսզի՝

- պատիժն ի կատար ածվի անկողմնակալ և անկախ դատական մարմնի ուժի մեջ մտած մեղադրական ակտին հաջորդող օրենքով սահմանված ժամկետի շրջանակներում.

- պատժի բնույթը և/կամ տևողությունը պետք է սահմանվեն կայացված որոշմանը ճշգրիտ համապատասխան»:

Սա նշանակում է, որ դատարանը պետք է դատավճռով սահմանի նաև ռեժիմը, որպեսզի դատախազը կարողանա հսկի դատարանի որոշման ճշգրիտ կատարումը: Եվ ընդհանրապես՝ համապատասխան մարմինը պետք է կոչվի ոչ թե ընդհանրապես Քրեակատարողական ծառայություն, այլ Քրեական գործերով դատական ակտերի կատարման ծառայություն, քանի որ գերատեսչության ներկայիս անվանումը չի արտահայտում այն, թե ինչով է պայմանավորված դրա գոյությունը:

2.4.2. Պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության ոլորտում առկա խնդիրները

Այս ոլորտում առկա խնդիրները ծագում են դատախազական թերի լիազորվածության, իսկ լիազորվածության դեպքում էլ՝ դատախազական գործառույթների իրացման գործուն մեխանիզմների բացակայության պատճառով: Այս պատճառով պայմանավորված առկա խնդիրներից այս ենթակետում առանձնացրել ենք, մեր կարծիքով, առավել կարևորները՝ որպես դատախազական գործառույթների այս ոլորտում առկա ուղղություններ, որոնց մասին նշվել է թե քաղաքացիական հասարակության, թե հենց դատախազության կողմից, և որոնց վերաբերյալ կան հստակ միջազգային չափորոշիչներ: Լուսաբանված խնդիրների հետ կապված արվել են նաև կոնկրետ առաջարկներ, որոնց իրագործումն ի գործ է կանգնեցնել, վերջապես, դատախազության դերի նսեմացման այն ընդհանուր տենդենցը, որը 2007թ. ի վեր ահագնացել է դատախազության և գործադիր իշխանության մարմինների հետ հարաբերություններում:

2.4.2.1 «Հարկադրանքի միջոցներ» հասկացության բովանդակության ընդլայնման անհրաժեշտությունը

Դատախազության մասին օրենքի 28-րդ հոդվածի (Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողությունը) 1-3-րդ մասերի համաձայն՝

«1. Դատախազը հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

2. Սույն հոդվածի իմաստով՝ պատիժ են համարվում քրեական օրենքով սահմանված պատժի տեսակները:

3. Սույն հոդվածի իմաստով՝ հարկադրանքի այլ միջոց է համարվում Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դեպքերում ազատությունից զրկումը»:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի (Անձնական ազատությունը) 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

- 1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.
- 2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.
- 3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.

6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով»:

Խիստ անտրամաբանական է, թե ինչու է դատախազական հսկողության ոլորտի մեջ մտնող հարկադրանքի միջոցներ համարվում միայն այն միջոցները, որոնք կապվում են անձին ազատությունից զրկելու հետ: Որևէ հիմնավորում դրա համար գոյություն չունի: Ընդհակառակը՝ թե գործող ՔԴՕ-ն, և թե Նախագիծը հստակ ամրագրում են, որ դատավարական հարկադրանքի միջոցներ են հանդիսանում նաև անձին ազատությունից զրկելու հետ չկապված միջոցները¹⁵⁰, իսկ ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը չի նշում, որ դատախազությունը հսկողություն է իրականացնում միայն անձի ազատության զրկում ենթադրող դատավարական հարկադրանքի միջոցների նկատմամբ: Այսինքն՝ հենց այստեղ, ամենասկզբում, Դատախազության մասին օրենքով, *առանց սահմանադրական արմատի*, տեղի է ունեցել դատախազական հսկողության ոլորտի ծավալային սահմանափակում:

Անհասկանալի է նաև, թե ինչու է Դատախազության մասին օրենքը դատավարական հարկադրանք հասկացությունը բացահայտելու համար դիմում, այն էլ՝ բացառապես, Սահմանադրության՝ անձի անձնական ազատությունը երաշխավորող հոդվածի ու դրա սահմանափակման հիմքերի վրա՝ այն դեպքում, երբ Սահմանադրության այդ 27-րդ հոդվածը որևէ կերպ չի նշում, որ անձին ազատությունից զրկելու թույլատրվող հիմքերը նաև դատավարական հարկադրանքի հիմքերն են:

Նման ոչ իրավաչափ իրավաստեղծ գործունեությունը դատախազության սահմանադրական լիազորությունները ենթարկում է շեշտակի ծավալային,

¹⁵⁰ **Գործող ՔԴՕ**, Բաժին 5. «Դատավարական հարկադրանքի միջոցները»՝ Գլուխ 17. Ձերբակալումը, Գլուխ 18. Խափանման միջոցները՝ կալանքը, գրավը, ստորագրությունը չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, կազմակերպության երաշխավորությունը, [անչափահասին] հսկողության հանձնելը, հրամանատարության հսկողությանը հանձնելը. Գլուխ 19. Դատավարական հարկադրանքի այլ միջոցները՝ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը, բերման ենթարկելը:

ՔԴՕ Նախագիծ, Բաժին 4 «Հարկադրանքի միջոցները»՝ Գլուխ 13. Ձերբակալումը, Գլուխ 14. Խափանման միջոցները՝ կալանքը, տնային կալանքը, վարչական վերահսկողությունը, գրավը, պաշտոնավարման կասեցումը, բացակայելու արգելքը, երաշխավորությունը, դաստիարակչական հսկողությունը, զինվորական հսկողությունը, Գլուխ 15. Գույքի արգելադրումը, Գլուխ 16. Հոգեկան խանգարում ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները՝ վորձաքննություն կատարելու համար բժշկական հաստատությունում տեղավորելը, անվտանգության միջոցները, ընտանեկան հսկողությունը, բժշկական հսկողությունը, Գլուխ 17. Դատավարական սանկցիաները:

մասնավորապես՝ հսկողության առարկայի ծավալների կրճատման: Օրինակ՝ դատախազական հսկողությունից դուրս են մնում անձի ազատության սահմանափակման հետ կապ չունեցող խափանման միջոցները: Եթե հանկարծ հակափաստարկ հնչի այն մասին, որ ազատության սահմանափակման հետ չկապված դեպքերում դատախազական հսկողության առարկան լրացվում է մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության առարկայի ծավալով: Նման հակափաստարկը, սակայն, չի լինի հիմնավորված, քանի որ մինչդատական վարույթում դատախազը հսկում է մինչդատական վարույթի, այն է՝ նախաքննության և հետաքննության մարմինների գործունեությունը, մինչդեռ, օրինակ՝ մեղադրյալին հսկողության հանձնելու կամ անձնական երաշխավորությամբ խափանման միջոցի պայմանների կատարումը, համապատասխանաբար՝ հսկող ու երաշխավոր անձանց կողմից, լրիվ դուրս է մնում դատախազական հսկողությունից:

Այնուհետև, ծավալային անհամապատասխանություն կա Սահմանադրության 27-րդ հոդվածի և դատավարական հարկադրանի միջոցների միջև՝ նաև նպատակների իմաստով: Օրինակ, Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ անձը ազատությունից կարող է զրկվել՝ «6) ... հոգեկան խանգարում ունեցող... անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով: Այսինքն՝ այս կոնկրետ հարցում Դատախազության մասին օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ դատախազական հսկողության առարկա դատավարական հարկադրանքի նկատմամբ դատախազական հսկողությունը իրավաչափ է արդեն իսկ նշված հիվանդությունն հաստատված կերպով ունեցող անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով նրանց ազատությունից զրկելու դեպքում: Մինչդեռ, փաստացի անը ազատությունից զրկվում է նաև այն ժամանակ, երբ տեղափոխվում է համապատասխան հիմնարկ՝ փորձաքննություն կատարելու նպատակով և պահվում այնտեղ մինչև փորձաքննության արդյունքների ի հայտ գալը, հետևաբար՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի նշված դատախազական հսկողության նախապայմանի (**հոգեկան խանգարում ունեցող... անձանցից բխող վտանգը**) առաջ գալը:

ՀՀ Դատախազության մասին օրենքի առաջին, այսինքն 2007թ. տարբերակի 29-րդ հոդվածի (Պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողությունը) 1-3-րդ մասերում ամրագրում էր հետևյալը՝

«1. Դատախազը հսկողություն է իրականացնում պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

2. Սույն հոդվածի իմաստով պատիժ են համարվում քրեական օրենքով նախատեսված պատժատեսակները:

3. Սույն հոդվածի իմաստով հարկադրանքի այլ միջոց է համարվում Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով նախատեսված դեպքերում ազատությունից զրկումը, **ինչպես նաև հատուկ ծառայությունների կողմից ֆիզիկական ուժ, հրազեն կամ հատուկ միջոցների գործադրումը**»:

Իսկ 1997թ. Դատախազության մասին օրենքի նույն 29-րդ հոդվածն իր 1-ին մասում շատ ավելի հստակ էր ու ապահովում էր մարդու իրավունքների սահմանափակման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության շատ ավելի բարձր երաշխիքներ, նախատեսելով, մասնավորապես, հետևյալը՝

«Գլխավոր դատախազը եւ նրան ենթակա դատախազները հսկողություն են իրականացնում ձերբակալվածներին պահելու, նախնական կալանքի եւ ազատագրկման վայրերում, **ինչպես նաև ազատագրկման հետ կապ չունեցող պատիժների եւ դատարանի կողմից նշանակվող հարկադրանքի այլ միջոցների կիրառման ընթացքում օրենքների պահպանման նկատմամբ**»:

Հետագայում, հատուկ ծառայությունների ու ընդհանրապես՝ գործադիրի գործունեությունը որևէ արտաքին արդյունավետ հսկողությունից դուրս բերելու ընդհանուր տենդենցին համահունչ, դատախազական հսկողության առարկայի ծավալների անհարկի

սահմանափակում տեղի ունեցավ, և հատուկ ծառայությունների կողմից ֆիզիկական ուժ, հրազեն կամ հատուկ միջոցների գործադրումը հանվեց դատախազական հսկողության առարկայի սահմաններից:

Ասվածից բխում է, որ Դատախազության մասին օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասը պետք է կրի բլանկետային նորմի տեսք, այսինքն՝ սահմանափակվի հղումով, նշելով, որ հարկադրանքի միջոցները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև հատուկ ավելացվի, որ դրանց թվին են պատկանում նաև հատուկ ծառայությունների կողմից ֆիզիկական ուժ, հրազեն կամ հատուկ միջոցների գործադրումը:

2.4.2.2. «Պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման վայրեր» հասկացության բովանդակության ընդլայնման անհրաժեշտությունը

Դատախազության մասին օրենքի 28-րդ հոդվածի (Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողությունը) համաձայն՝

«1. Դատախազը հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

2. Սույն հոդվածի իմաստով՝ պատիժ են համարվում քրեական օրենքով սահմանված պատժի տեսակները:

... 4. Սույն հոդվածով սահմանված լիազորություններն իրականացնելիս դատախազն իրավունք ունի՝

1) ցանկացած ժամանակ անարգել այցելելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման վայրեր, ինչպես նաև դրանց կատարումն ապահովող իրավասու մարմիններ»:

ԵԴԽՆ «Հ-6 Կարծիքի համաձայն՝ «26. Պետությունները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ այն հաշվով, որպեսզի դատախազներն իրենց պարտականությունները կարողանան իրականացնել ազատությունից զրկելու բոլոր վայրերում»¹⁵¹:

Պետք է նշել, որ Դատախազության մասին 1997թ. օրենքը (հոդված 29, մաս 4-րդ, կետ 1-ին) ավելի բարենպաստ մարդու համար, քանի որ նախատեսում էր դատախազի իրավունքը՝

«1) ցանկացած ժամանակ անարգել այցելելու այն բոլոր վայրերը, որտեղ պահվում են ազատությունից զրկված անձինք.»:

Ներկայիս կարգավորմամբ, դատախազն իրավունք չի ունենում այցելելու այն տեղանքները, այդ թվում՝ տրանսպորտային մջոցները, արգելանքի տակ պահման համար չնախատեսված տեղաքները, որոնք, **օրենքի համաձայն, պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման վայրեր չեն հանդիսանում**: Մասնավորապես, 2016թ. Մասնա Ծոերի ապստամբության ժամանակ մեծ թվով ցուցարարներին բերման ենթարկելիս, վերջիններս, տարվում էին դպրոցների մարզադահլիճներ և այլն, որոնք, ըստ էության, համարվում էին ուսումնական, մարզամշակութային և այլ գործունեություն իրականացնող վայրեր:

Ինչպես ասվեց, ներկա ձևակերպումը խոչընդոտ է նաև, դեպի պատժի կատարման կամ կալանավորներին կամ ձերբակալվածներին պահելու վայր կամ այդ վայրից դեպի այլ վայր անձին փոխադրելու գործընթացի նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության համար: **Մասնավորապես, փոխադրամիջոց հանդիսացող ավտոմեքենան, կիրառման վայր չի հանդիսանում, սակայն՝ նախ, այնտեղ փաստացի, որոշակի ժամանակով, պահվում են անազատության մեջ գտնվող անձին, և ապա՝ նրանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի պայմանները որևէ կերպ չեն վերահսկվում**:

¹⁵¹ CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) Opinion No. 6 of the CCPE on the relationship between prosecutors and the prison administration, adopted by the CCPE at its 6th plenary meeting, (Strasbourg, 24-25 November 2011), <https://rm.coe.int/16807481c7>

Մա կարող է թվալ ոչ վերաբերելի, անգամ՝ տեխնիկական խնդիր, սակայն սկզբունքն այն է՝ որ պետական հսկողության ներքո անազատության մեջ գտնվող ցանկացած ոք պետք օգտվի այդ անազատության պայմանների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն, այդ թվում՝ դատախազական հսկողություն իրականացվելու իրավունքից: Իհարկե, շատ ավելի ակնհայտ է տարբերությունը մեծ տարածքներ ունեցող երկրների համար, որտեղ ավելի մասայական կարգով անձինք փոխադրվում են օրեր շարունակ, սակայն սկզբունքի էությունը դրանից չի փոխվում: 2018թ. Ապրիլյան հեղափոխության օրերին արձանագրվեցին դեպքեր, երբ պերմանենտ տեղափոխվող անձը, մասնավորապես՝ ՀՀ ապագա վարչապետը, ըստ էության զրկված էր ազատությունից, նրա նկատմամբ իրեն տեղափոխող փոխադրամիջոցը դարձել էր ազատագրկման ապահովման վայր, իսկ դատախազական հսկողության միջոցները չէին գործում:

Այսպիսով, անհրաժեշտ է պահպանել 1997թ. օրենքի ավոտնում մոտեցումը, նշելով, որ **«դատախազն իրավունք ունի ցանկացած ժամանակ անարգել այցելելու այն բոլոր վայրերը, որտեղ պահվում են ազատությունից զրկված անձինք՝ անկախ դրանց ազատագրված անձանց պահելու համար նախատեսված լինելու կամ չլինելու փաստից, պահման տևողությունից, ներառյալ արգելանքի տակ գտնվող անձանց փոխադրող միջոցները»**, ապա շարունակել՝ **«ինչպես նաև պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարումն ապահովող իրավասու մարմիններ»**:

2.4.2.3. Դատախազական հսկողությունը ազատագրված անձի բոլոր իրավունքների սահմանափակման օրինականության նկատմամբ

Դատախազության մասին օրենքի 28-րդ հոդվածի (**Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողությունը**) համաձայն՝

«4. Սույն հոդվածով սահմանված լիազորություններն իրականացնելիս դատախազն իրավունք ունի՝

... 3) ստուգելու քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի **հիմնական իրավունքներին**, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին...»:

«Հիմնական» բառը, որը եղել է նաև 1997թ. օրենքում, լրիվ ավելորդ է, քանի որ դատախազական այնպիսի կարևոր ինստիտուտի գործողությունը՝ այն էլ նման խոցելի խմբի նկատմամբ, կախվածության մեջ է դնում անձի իրավունքի հիմնական կամ ոչ հիմնական լինելու հետ: Պետք է այստեղ հիշել, առաջին՝ որ խոցելի վիճակում՝ անազատության մեջ գտնվող անձանց ոչ հիմնական իրավունքներն իրենց՝ հենց իրենց, այլ ոչ թե աբստրակտ օրենսդրի կամ դատախազի համար, ավելի մեծ նշանակություն ունեն, քան նույն իրավունքները ոչ խոցելի խմբերի համար, որոնք, օրինակ՝ ազատության մեջ գտնվելով կարող են ինքնուրույն և արդյունավետ կերպով պաշտպանել իրենց ոչ հիմնական իրավունքները:

ԵՂՆԻՆ Զ-6 Կարծիքի համաձայն՝ «27. Իրենց ազատությունից զրկված մարդիկ ապրում են ենթարկվածության ու խոցելիության հատուկ հարաբերությունների պայմաններում: Այս իրավիճակի բերումով, հատկապես կարևոր է, որպեսզի ազատագրկման վայրերը ապահովագրված լինեն քրեական օրենքի ու մարդու հիմնարար իրավունքներին ու ազատություններին առնչվող հիմնական նորմերի խախտումներից»: **Այսինքն, կարելի է ասել, որ իրավիճակի խոցելիության բերումով, ազատությունից զրկված անձանց բոլոր իրավունքների իրացումը ձեռք է բերում ավելի մեծ կարևորություն, այսինքն նրանց**

համար իրականում չկան հիմնական կամ ոչ հիմնական իրավունքներ, որոնց ցանկացած սահմանափակում պետք է գտնվի դատախազական հսկողության տակ: Այստեղ նույնպես ականատեսն ենք լինում այն բանի, երբ Դատախազության օրենքի մակարդակով սահմանափակվում է սահմանադրական նորմի (հոդված 176, մաս 2-րդ, կետ 5-րդ) գործողության առարկան, ու ըստ էության դատախազական հսկողության ծավալից դուրս են բերվում այսպես կոչված ոչ հիմնական իրավունքների սահմանափակումները, որպիսի տարանջատման մասին խոսք չկա Սահմանադրության հիշյալ նորմում, որը պարզապես ամրագրում է, որ «Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով ... 5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ»: Սահմանադրական նորմի ձևակերպումը « օրենքով սահմանված դեպքերում և կարգով» նշանակում է այն եղանակները և դեպքերը, որտեղ արդեն իսկ գործող սահմանադրական նորմը՝ իր առարկայական կիրառման շրջանակներով, որտեղ չկա «օրինականության» եզրույթի հետագա օրենսդրական տարանջատման հնարավորությունը, պետք է գործի: Այլ խոսքերով՝ Դատախազությունը, ըստ Սահմանադրության հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ընդհանրապես՝ օրինականության նկատմամբ, որի մաս արդեն իսկ կազմում են մարդու բոլոր իրավունքները:

Վերջապես, Եվրոպական բանտային կանոնների 2-րդ հոդվածի համաձայն, «իրենց ազատությունից զրկված անձինք պահպանում են իրենց բոլոր իրավունքները, որոնցից իրավաչափորեն զրկված չեն եղել նրանց նկատմամբ պատիժ նշանակելու կամ նրանց կալանքի տակ պահելու մասին որոշմամբ»:

Այս կանոններից ուղղակի հետևում է, որ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանն օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը, այն է՝ դատախազությունը, պետք է իսկի, թե արդյոք այդ պատիժների և միջոցների կիրառման պայմանները իրենց անհրաժեշտ խստության կամ զրկանքներ պատճառելու բնույթի և աստիճանի մեջ, անցնում են դատարանի նշանակած պատժի կամ խափանման միջոցի՝ օրենքով սահմանված արգելքների սահմանը, թե ոչ՝ անկախ նրանից, թե նման սահմանազանցմամբ անազատության մեջ պահվող անձանց որ՝ հիմնական, թե ոչ հիմնական իրավունքներն են խախտվում:

2.4.2.4. Դատախազական հսկողությունը ՔԿԾ մարմինների ոչ միայն իրավական ակտերի, այլ նաև գործողությունների ու անգործության օրինականության նկատմամբ

Դատախազության մասին օրենքի 28-րդ հոդվածի (Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողությունը) համաձայն՝

«4. ... 3) ... Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած մարմին կամ ակտը վերացնելու միջնորդագիր է ներկայացնում ակտն ընդունած մարմնի համապատասխան վերադաս մարմին կամ պաշտոնատար անձին, իսկ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը՝ նաև իրավասու պետական մարմնի ղեկավարին»:

Ինչպես իրավացիորեն նշվում է ԳԴ ԱԺ 2020թ. Հաղորդման մեջ, փաստորեն՝

«Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում հսկողություն իրականացնող դատախազը Օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով լիազորված է ստուգել միայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմների պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող իրավական ակտերի համապատասխանությունը

գործող օրենսդրությանը, մինչդեռ պրակտիկայում առաջանում է անհրաժեշտություն՝ ստուգել նաև վերը նշված անձանց այն գործողության կամ անգործության համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որի արդյունքում չի ընդունվում որևէ իրավական ակտ»¹⁵²:

Այս իրավիճակը վերը նշված ընդհանուր՝ դատախազության լիազորությունները գործադիրի և հատկապես արդարադատության նախարարության մարմինների նկատմամբ հսկողություն իրականացնելու ուղղությամբ հնարավորինս կրճատելու միտման հերթական վկայությունն է: Նման հետևողականությունը պարզապես դիտավորության աստիճանի է հասնում, այսինքն՝ ակնհայտ է դատախազության լիազորություններն այս ոլորտում լրիվ ձևական դարձնելու նպատակ, քանի որ ակնհայտ է, որ օրինականության խախտումները հիմնականում տեղի են ունենում հենց ադմինիստրացիայի կողմից գործողության կամ անգործության միջոցով, այլ ոչ թե հատուկ ապօրինի ակտ նորմատիվ ակտ ընդունելով: Իրավացիորեն, Դատախազությունն առաջարկում է՝ ...հսկողություն իրականացնելիս դատախազին իրավունք տալ ստուգել ՀՀ ԱՆ ՔԿԾ մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի գործողությունների կամ անգործության համապատասխանությունը գործող օրենսդրությանը»¹⁵³, որի հետ կապված համապատասխան օրենսդրական նախաձեռնությունն արդեն առկա է www.e-draft.am կայքում¹⁵⁴:

«Դատախազության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

2. 3-րդ կետի առաջին նախադասությունը՝ «համապատասխանությունը գործող օրենսդրությանը» բառերից առաջ լրացնել «, գործողության կամ անգործության» բառերով:

Դատախազության նման լիազորումը առաջնահերթ քայլ է նաև ՔԿՀ-րի վարչակազմերի գործողությունների ու անգործության դեմ բողոքների քննության արդյունավետ մեխանիզմ ստեղծելու տեսակետից: Մասնավորապես, կարևոր է հիշեցնել, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 19-րդ կետով նախատեսվում էր ստեղծել քրեակատարողական ծառայողների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից ընդունած ակտերի բողոքարկման մեխանիզմներ՝ ընդդատյա դատարանի, բողոքներին ներկայացվող պահանջների, բողոքարկման ժամկետների հստակ ամրագրմամբ: Սույն գործողության արդյունքը՝ լրացուցիչ երաշխիքների ստեղծումն էր ազատությունից զրկված անձանց կողմից բողոքարկման հստակ ընթացակարգերի սահմանման համար:

Սրա մասին «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման նպատակով 2018-2038 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2018-2038 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների ընթացքում նշվել է նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ քաղաքացիական հասարակության

¹⁵² Տես՝ ԳԴ ԱԺ Հաղորդում, էջ 158:

¹⁵³ Նույն տեղում, էջ 160:

¹⁵⁴ ԳԴ ԱԺ Հաղորդման մեջ (էջ 159-161), հիշատակված նախագծերի (մասնավորապես՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի) ընդունման հիմնավորումները տես՝ <https://www.e-draft.am/projects/2331/justification>

կազմակերպությունների կողմից՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի (ՀՔԱՎ) գրասենյակի կողմից¹⁵⁵:

Վերջապես, անհնար է պատկերացնել, վերջապես, որ դատական կարգով բողոքարկվում են վարչակազմերի գործողություններն, անգործությունը և նորմատիվ ակտերը, սակայն դատախազական հսկողությունը պատժի ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ, որն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ, պետք է սահմանափակվի միայն նորմատիվ ակտերի օրինականության ստուգմամբ:

2.4.2.5. Դատախազական ներգործության արդյունավետ միջոցների անհրաժեշտությունը խախտումներ հայտնաբերելու դեպքում

Դատախազության մասին օրենքի 28-րդ հոդվածի **(Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողությունը)** համաձայն՝

«4. Սույն հոդվածով սահմանված լիազորություններն իրականացնելիս դատախազն իրավունք ունի՝

...3) ստուգելու ... իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը... **Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս** դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն **իրավունք ունի կասեցնելու** այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած մարմին կամ ակտը վերացնելու միջնորդագիր է ներկայացնում ակտն ընդունած մարմնի համապատասխան վերադաս մարմին կամ պաշտոնատար անձին, իսկ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը՝ նաև իրավասու պետական մարմնի ղեկավարին.

4) հարցման ենթարկելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց.

5) անհապաղ ազատելու ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի պատժախցերում ապօրինի պահվող անձանց.

6) պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց իրավունքների և ազատությունների խախտման կասկածի կամ պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգի ու պայմանների խախտման դեպքում պաշտոնատար անձանցից պահանջելու բացատրություններ ձեռնարկված գործողությունների կամ անգործության մասին»:

Նշված իրավադրույթները մի շարք մտահոգությունների տեղիք են տալիս դրանցում իրավական որոշակիության սկզբունքի պահանջների ու դատախազական գործունեության ու ազատությունից զրկված մարդու իրավունքների պաշտպանության արդյունառկապված երաշխիքների տեսակետից: Մասնավորապես՝

1. Անհասկանալի է, թե ինչու, ըստ 28-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի, դատախազն իրավունք չունի, օրենսդրության հակասող իրավական ակտ հայտնաբերելու դեպքում, կասեցնել դրա գործողությունը, այլ կարող է դա անել միայն այն դեպքում, երբ հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների: Իսկ եթե հապաղումը նման հետևանքների հանգեցնել չի կարող, ապա դատախազն իրավունք չունի կասեցնել, իր կարծիքով անօրինական ակտի գործողությունը, այլ կարող է միայն միջնորդել վերանայել այն: Ծանր հետևանքների առաջ գալու հնարավորությունը խիստ սուբյեկտիվ չափորոշիչ է և չպետք է ազդի դատախազության քննարկվող սահմանադրական լիազորության իրականացման վրա.

2. «Ազատագրկման վայր» հասկացությանը ինքնավար, այսինքն՝ անձնակենտրոն աշխարհայացքից բխող փաստացի բովանդակությունից ելնելով (այսինքն՝ **վայր, որտեղ**

¹⁵⁵ <https://www.e-draft.am/projects/385/digest>

պահվում են ազատությունից զրկված անձինք՝ անկախ դրանց ազատագրված անձանց պահելու համար նախատեսված լինելու կամ չլինելու փաստից, պահման տևողությունից, ներառյալ՝ արգելանքի տակ գտնվող անձանց փոխադրող միջոցները», 28-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում պետք է նշել, որ դատախազն իրավունք ունի՝

«5) անհապաղ ազատելու ապօրինի անազատության մեջ պահվող անձանց բոլոր վայրերից՝ անկախ դրանց ազատագրված անձանց պահելու համար նախատեսված լինելու կամ չլինելու փաստից, պահման տևողությունից, ներառյալ՝ արգելանքի տակ գտնվող անձանց փոխադրող միջոցները, ինչպես նաև այդ վայրերի պատժախցերից»:

Որպես նախորդ կետում արված առաջարկի հիմնավորում ու նաև այս կետում նշված՝ ապօրինի պահվող անձին ազատ արձակելու դատախազի լիազորության լրացուցիչ երաշխիք անհրաժեշտ է նաև վերականգնել 2007թ. փետրվարի 22-ի Դատախազության մասին օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը, որով սահմանվում էր, որ դատախազն իրավունք ունի՝

«5) անհապաղ ազատելու ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի տուգանային եւ կարգապահական մեկուսարաններում ապօրինի պահվող անձանց, իսկ եթե անձը ազատությունից զրկվել է ազատությունից զրկելու վայրի վարչակազմի իրավական ակտի հիման վրա, ապա դատախազի կարգադրությամբ ակտը կայացրած անձը պարտավոր է անհապաղ վերացնել իր ակտը.»:

Այս դրույթը նաև համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ ըստ էության օբյեկտիվորեն օրենքում նկարագրվում է այն դեպքը, երբ վարչակազմի իրավական ակտի վերանայման «հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների»: Այսինքն, դատախազը պետք է իրավունք ունենա կարգադրելու վարչակազմի ղեկավարին վերացնելու իր կայացրած իրավական ակտը:

Բացի այդ, անազատությունից ազատելու լիազորությունը շատ ավելի մեծ լիազորություն է, քան անօրինական համարվող որոշումների գործողության կասեցումը: Տարօրինակ է, որ դատախազը փաստացի իրավունք ունի վերացնել ադմինիստրացիայի ամենակարևոր որոշումը՝ անձի ամենակարևոր ազատության իրավունքը ապօրինաբար սահմանափակելու վերաբերյալ, բայց նվազ կարևոր որոշումների դեպքում պարզապես հանդես է գալիս դրանք վերանայելու միջնորդությամբ:

Այն, որ արգելանքից ազատելու դատախազի լիազորությունը դիտվում է առավել լայն լիազորվածության ապացույց, ընդունվում է նաև ԵԴԽՄ Ն-6 Կարծիքի Հավելվածում՝ («Տարբեր իրավական համակարգերի և բանտային հարցերով դատախազության տարբեր լիազորությունների նկարագիր Հավելված՝ հարցաշարին տրամադրված պատասխանների վերլուծություն»¹⁵⁶), որտեղ նշվում է՝

«9. Պատասխանող պետությունների մեծ մասում, որտեղ դատախազությունը հսկողություն է իրականացնում ազատագրված ու արգելանքի տակ պահելու վայրերի նկատմամբ, մարդու իրավունքների խախտման փաստեր հայտնաբերելու դեպքում, դատախազներն իրավունք ունեն բացատրություններ պահանջել պաշտոնյաներից, կասեցնել վարչակազմի ապօրինի հրամանների կամ որոշումների գործողությունը և վերացնել ի խախտումն օրենքի պահվող անձանց նկատմամբ նշանակված պատժամիջոցները: Շատ երկրներում, որտեղ **դատախազությունն ունի լայն լիազորություններ, դատախազներ իրավունք ունեն անհապաղ ազատ արձակել** ցանկացած անձի, ով առանց իրավական հիմքի պահվել է պատիժը կատարող հիմնարկներում կամ ում նկատմամբ ձերբակալումը կամ նախնական կալանքը կիրառվել է օրենքի խախտմամբ»:

¹⁵⁶ CCPE Opinion No 6, APPENDIX Description of the different legal systems and various competences of public prosecution in prison matters (analysis of replies to the questionnaire).

Այսինքն, ապօրինի ազատությունից զրկված անձին ազատելը ինքնին ենթադրում է, որ դատախազը ունի նաև ավելի պակաս կարևոր լիազորություններ և՛ մասնավորապես վերացնելու կարգապահական տույժերը, պահանջելու բացատրություններ և այլն:

3. Դատախազության լիազորությունները խիստ սահմանափակ են քիչ են խախտումներ թույլ տված անձանց պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելու և խախտումների կրկնությունը կանխելու տեսանկյունից: ԵՒԽԽ Հ-6 Կարծիքը նշում է, որ՝

25. Կալանավորման շրջանակներում իրավական կարգավորումների խախտման յուրաքանչյուր դեպքում դատախազները, երբ ունեն նման դերակատարում, պետք է արձագանքեն՝ պահանջելով կիրառելի իրավադրույթների ճշգրիտ կատարումը՝ անկախ այն փաստից, որ դա կարող է բերել լրացուցիչ ծախսերի: Անհրաժեշտության դեպքում, դատախազները կարգապահական կամ քրեական վարույթ են հարուցում բանտի անձնակազմի պատասխանատուների նկատմամբ»:

Մինչդեռ մեզանում, դատախազները, մի կողմից՝ ունեն այդ դերակատարումը՝ «պահանջել կիրառելի իրավադրույթների ճշգրիտ կատարումը», սակայն չունեն մեղավորներին պատասխանատվության կանչելու կոնկրետ լծակներ, եթե, իհարկե խոսքը չի գնում հանցագործության ակնհայտ հատկանիշների հայտնաբերման մասին: Լծակների այս բացակայության մասին նշվել է ՀՀ ԳԴ 2020թ. Հաղորդման մեջ, որտեղ, իրավամբ ընդգծվել է հետևյալը՝

«1. Օրենսդրությամբ դատախազությունը չունի պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս խախտումներ հայտնաբերելու դեպքում խախտում թույլ տված անձի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ դիմել վերջինիս վերադասին: Հետևաբար՝ անհրաժեշտ է կատարել այդ խնդիրը կարգավորող փոփոխություն՝ **հնարավորություն տալով գլխավոր դատախազին կամ հսկողություն իրականացնող դատախազին պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս խախտումներ հայտնաբերելու դեպքում խախտում թույլ տված անձի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ դիմել վերջինիս վերադասին**»¹⁵⁷:

Ըստ այդմ Դատախազության կողմից մշակվել է առաջարկություն, որի հետ մենք լիովին համաձայն ենք¹⁵⁸, մասնավորապես, Դատախազության մասին օրենքի 28-րդ հոդվածը լրացնել նոր 7-րդ մասով՝

«7. Մույն հոդվածով սահմանված լիազորություններն իրականացնելիս խախտումներ հայտնաբերելու դեպքում գլխավոր դատախազը կամ հսկողություն իրականացնող դատախազը կարող են միջնորդություն ներկայացնել խախտում թույլ տված անձի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու մասին: Միջնորդությունն ուղարկվում է խախտում թույլ տված անձի վերադասին, որը պարտավոր է այն ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում սկսել ծառայողական քննություն և արդյունքների մասին տեղեկացնել համապատասխան միջնորդությամբ դիմած դատախազին»:

2. Պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման օրինականության նկատմամբ, նույնը և՛ քրեական մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս, դատախազը պետք է ունենա բավականաչափ լծակներ՝ առնվազն դիմելու, միջնորդելու համապատասխան պաշտոնատար անձանց ու պետական մարմիններին՝ ձեռնարկել միջոցները խախտումների պատճառները և նպաստող պայմանները վերացնելու համար: Հենց սրան է միտված դատախազական ներգործության միջոցներից՝ դատախազի միջնորդագիր կոչվող ակտը (տես՝ Դատախազության մասին օրենքը, հոդված 30, մաս 5-րդ): Նման միջնորդագրերը դատախազությունը ներկայացնում է այն դեպքերում, երբ լայն էպրիկի նյութի հիման վրա հայտնաբերում է որոշակի օրինաչափություններ, օրինակ՝ պարզելով, որ ավտոմայրուղու կոնկրետ հատվածի երթևեկության լուծումները կանխատեսելի չեն վարորդների կամ հետիոտնի համար, որի

¹⁵⁷ ԳԴ ԱԺ Հաղորդում, էջ 160-161:

¹⁵⁸ Տես հիմնավորումները՝ <https://www.e-draft.am/projects/2331/justification>

պատճառով տեղի են ունենում շատ վրաերթներ, կամ որ հանցագործության որոշ տեսակների կազմակերպիչներ կրում են ազատազրկման ձևով պատիժ, կամ որ արգելված իրերի անցկացման դեպքերը առավել հաճախ տեղի են ունենում կոնկրետ այս կամ այն հսկիչների հերթափոխի ժամանակ և այլն, դատախազը պատկան մարմինների ուշադրություն է հրավիրում՝ վիճակը գնահատելու և շտկելու համար:

Ըստ այդմ Դատախազության կողմից մշակվել է առաջարկություն, որի հետ մենք լիովին համաձայն ենք¹⁵⁹, մասնավորապես, Դատախազության մասին օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Հանցագործության պատճառների և նպաստող պայմանների, **պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում խախտումներ հայտնաբերելու**, ինչպես նաև պետական շահերի խախտումներ հայտնաբերելու դեպքերում՝ դրանց պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով դատախազը կարող է միջնորդագիր ներկայացնել դրանք վերացնելու իրավասություն ունեցող մարմին կամ պաշտոնատար անձին, որը պարտավոր է դրա քննարկման արդյունքների և ձեռնարկած միջոցառումների մասին մեկամսյա ժամկետում գրավոր հայտնել միջնորդագիրը ներկայացրած դատախազին»:

Բացի այդ, իրավական կարգավորման թե մեթոդի, և թե տեխնիկայի առումով, պետք է նույն 30-րդ հոդվածում ու ընդհանրապես դատախազի հետ հարաբերություններում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց պարտականություններ սահմանելիս, սահմանել նաև պատասխանատվության առթիվ թղթակցող, այն է՝ համապատասխան կամ համահունչ, նորմեր, օրինակ՝ նշելով, որ որոշակի, տվյալ դեպքում՝ մեկամսյա ժամկետում **դատախազական ակտին չպատասխանելը առաջացնում է պատասխանատվություն: Բացի այդ, նման դեպքերի մասին, կարծում ենք, Գլխավոր դատախազը պետք է ներկայացնի իր ԱԺ-ին տրամադրվող տարեկան հաղորդման մեջ, ինչպես նաև՝ բարձրաձայնի Կառավարության նիստում:**

2.4.2.6. Դատախազական հսկողությունը դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու և ներում շնորհելու գործընթացներում

Դատախազության մասին օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

«5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված լիազորությունները դատախազն իրականացնում է նաև պրոբացիայի ծառայության կողմից ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և հարկադրանքի այլ միջոցների (այլընտրանքային խափանման միջոցների, անվտանգության միջոցների, պատիժը պայմանականորեն չկիրառելու և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հետևանքով փորձաշրջան նշանակելու, պատժի կրումից ազատելու, պատժի կրումը հետաձգելու նկատմամբ վերահսկողության կատարման) կիրառման օրինականության նկատմամբ:

6. Դատախազն օրենքով սահմանված կարգով մասնակցում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների քննությանը դատարանում»:

Սույն ենթակետի վերնագրում նշված բոլոր գործընթացներում դատախազի մասնակցության արդյունավետության հիմնական խնդիրը վերաբերում է ընդհանրապես կայացվող որոշումների կանխատեսելիության, թափանցիկության, կայունության և հիմնավորվածության և **որևէ հիմքով խտրականության բացառման երաշխիքներին:** Կարևորագույն գործիք է այս առումով (բացի ծանր հիվանդության կամ արտակարգ

¹⁵⁹ Տես հիմնավորումները՝ <https://www.e-draft.am/projects/2331/justification>

հանգամանքների հիմքով ազատելու) վերևում՝ պատժի նշանակման փուլին վերաբերող ենթակետում արդեն իսկ վկայակոչված Անձի ռիսկերի և պահանջումների էլեկտրոնային գործիքը, որի ներդրումը նախատեսված է Դատախարարական բարեփոխումների 2019-2023թթ. Ռազմավարությամբ: Այս պոստպենիտենցիա, այսինքն՝ դատավճռի կատարման փուլում, այդ գործիքը ծառայում է ինչպես նշված որոշումների՝ թվարկված երաշխիքների ապահովմանը, այնպես էլ պրոբացիայի շահառուի հետ աշխատանքների անհատական պլանը կազմելու համար:

Այսինքն, անհրաժեշտ է, որպեսզի դատախազությունը նույնպես կատարի պրոբացիայի ապագա և ընթացիկ շահառուների սեփական գնահատումը: Հակառակ դեպքում, այն չի կարող արդյունավետորեն հսկել պրոբացիոն ծառայողների աշխատանքը: Ճիշտ է, պրոբացիայի շահառուի անձնական գործին ծանոթանալու իրավունք դատախազն ունի Դատախազության մասին օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն, սակայն կարևոր է, որպեսզի պրոբացիոն ծառայողների եզրակացություններում բերվող հիմնավորումները լինեն՝ միասնական և ըմբռնելի նաև դատախազների համար: Հակառակ դեպքում հսկող դատախազն ու պրոբացիոն ծառայողը նույն անձի ռիսկայնության, պահանջումների առթիվ կիրառելու են տարբեր չափորոշիչներ ու հանգելու են տարբեր դիրքորոշումների: Մասնավորապես, ԳԴ ԱԺ 2020թ. Հաղորդման մեջ նշվել է, որ՝

«Ստուգմամբ նաև պարզվել է, որ պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացվող դատապարտյալների վերաբերյալ պրոբացիայի ծառայության աշխատակիցների կազմած զեկույցները մի շարք դեպքերում չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված չափանիշներին և այդ զեկույցներով դատապարտյալներին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ձևավորված վերջնական եզրահանգումները հիմնավորված չեն: Մասնավորապես՝ պատժի կրման ընթացքում բացառապես բացասական վարքագիծ դրսևորած (գործող տույժ, պատժի կրման ընթացքում բազմաթիվ տույժեր, պատժի կրման կարգի չարամիտ խախտողներ և այլն) կամ նոր հանցագործություն կատարելու բարձր հավանականություն ունեցող դատապարտյալների վերաբերյալ պրոբացիայի ծառայության կողմից տրվել են դրական զեկույցներ, իսկ համեմատաբար դրական վարքագիծ դրսևորած կամ նոր հանցագործություն կատարելու ցածր հավանականություն ունեցող դատապարտյալների վերաբերյալ պրոբացիայի ծառայության կողմից տրվել են բացասական զեկույցներ: Ավելին՝ արձանագրվել են դեպքեր, երբ դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը պրոբացիայի ծառայության կողմից գնահատվել է բարձր, սակայն տրվել է դրական զեկույց: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ պրոբացիայի ծառայությունը, նույնանման հանգամանքների առկայության պարագայում, նույն դատապարտյալի նկատմամբ ներկայացրել է բացասական զեկույց, սակայն ամիսներ անց, նույն հանգամանքների առկայության պայմաններում, նշված դատապարտյալի վերաբերյալ անհասկանալիորեն կազմել է դրական զեկույց՝ առանց որևէ լրացուցիչ հիմնավորման: Արձանագրված խախտումների վերաբերյալ « արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության պետին ուղարկվել է մեկ միասնական հաղորդում¹⁶⁰»:

Նշված էլեկտրոնային գործիքի կիրառումը դատախազի կողմից նաև ավելի արդյունավետ ու գիտահեն կդարձնի նրա մասնակցությունը պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների քննությանը դատարանում: Կարևոր է նաև, որպեսզի դատախազական հսկողությունը արդյունավետ լինի նաև պրոբացիայի շահառուի վարքագծի նկատմամբ՝ գործուն սանկցիաների կիրառման սպառնալիքով: Մասնավորապես Ֆինլանդիայում, Պրոբացիայի և Հետագա խնամքի հարցերով Վարչակազմը, կարող է նախազգուշացնել հանցավորին, ով չի կատարում համայնքային կամ հանրային աշխատանքների պայմանները, և պարտավոր է դատախազին տեղյակ պահել, եթե պայմանների նշված խախտումները ծանր են:

¹⁶⁰ ԳԴ ԱԺ Հաղորդում, էջ 154

Դատախազն էլ, իր հերթին, կարող է դատարանին պահանջել ազատագրկման հետ չկապված պատիժը փոխարինել ազատագրկմամբ¹⁶¹:

Կարծում ենք, նման զարգացումների հեռանկարը՝ դատախազության կատարմամբ, էապես կնպաստի թե՛ դատախազության կողմից պրոբացիոն ծառայության նկատմամբ հսկողության արդյունավետությանը, թե՛ դատապարտյալի կողմից պրոբացիայի պայմանները կատարելուն: Իհարկե, դատախազական լիազորությունների ծավալի ընդլայնումը ենթադրում է նաև թափանցիկության աճ և նաև՝ համագործակցություն արտաքին վերահսկող մարմինների ու կազմակերպությունների հետ: Է դատախազության գործունեության թափանցիկության և քաղաքացիական հսկողության մեծացման անհրաժեշտություն: ԵԴԽԽ 2-6 Կարծիքում (կետ 35), որ՝

«35. Հետևյալ եզրակացություններն են արվել կապված այն պետությունների հետ, որտեղ դատախազները դերակատարում ունեն բանտերին վերաբերող հարցերում.

... ե) Իրենց պարտականություններն իրացնելիս, դատախազները պետք է հիմնեն և անհրաժեշտության դեպքում՝ զարգացնեն համագործակցությունն ու շփումները օմբուդսմանի գրասենյակների կամ նմանատիպ կազմակերպությունների, վերականգնման ու վերաինտեգրման հարցերով զբաղվող մարմինների, ինչպես նաև՝ քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների հետ»:

Իրենց ընդհանուր և միասնական լեզվափոխության պատճառով, դատախազները կարևոր դեր ունեն կատարելու դատապարտյալների վերականգնման ու վերաինտեգրման հարցերում, քանի որ, ինչպես հիշում ենք, դատապարտյալի արարքից տուժել էր դատախազության կողմից ներկայացվող համընդհանուր տուժող հասարակությունը, որն էլ դեռ պետք է հաշտվի հանցավորի հետ՝ դատարանի սահմանած արդարացի պատիժը նրա կողմից կրելու արդյունքում; Եվ հենց այդ հաշտեցման, վերադարձի պրոցեսում, դատախազությունը, նշված լեզվափոխությունից ելնելով, չի կարող անմասն լինել, չիմանալ, թե արդյոք այդ վերջնական հաշտեցումը եղել է, թե ոչ:

ԵԴԽԽ Կարծիք 2-9-ի Բացատրական հուշագրում՝ 5.4 կետի (Հարաբերությունները բանտային վարչակազմի հետ) ներքո նշվում է հետևյալը՝

«108. Դատախազը, իր իրավասության շրջանակներում, պատասխանատու է ազատագրկման օրինականությունը ստուգելու համար: Նա պետք է ապահովի կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների ամբողջական և արդյունավետ պաշտպանությունը, **բարելավի նրանց վիճակը և խթանի նրանց վերաինտեգրումը հասարակության մեջ**¹⁶²»:

Պատժի կրման հետ անհամատեղելի հիվանդությունների հիմքով ազատման գործընթացում դատախազի մասնակցության հետ կապված ընդամենը նշենք, որ, նախևառաջ, այդ հիվանդությունների ցանկը առանձին դեպքերում՝ մեղադրյալի շահերից ելնելով, պետք է համարել **ուղղորդող փաստաթուղթ**, որպեսզի անձի վիճակը համարվի անհամատեղելի նաև փորձագետի կողմից՝ դատապարտյալի/ներկայացուցչի միջնորդությամբ կամ դատարանի կողմից նշանակված փորձաքննության արդյունքում: Սա խիստ անհրաժեշտ է այն դեպքերում, երբ դատապարտյալի մոտ առկա է ցանկով նախատեսված, բայց որոշակի՝ պահանջվող աստիճանի չհասնող հիվանդություն: Այնուհետև, ելնելով, դատապարտյալների խոցելի խումբ լինելու փաստից, անհրաժեշտ է ավելի ընդլայնել համապատասխան դիմումով դատարանին դիմելու հնարավորությունները: Միջազգային առաջավոր, մասնավորապես՝ Ֆրանսիայի, Միացյալ

¹⁶¹ Stu՝ The European Institute for Crime Prevention and Control, affiliated with the United Nations Criminal Justice Systems in Europe and North America, FINLAND, Matti Joutsen, Raimo Lahti and Pasi Pölönen, Helsinki, Finland 2001, p 32.

¹⁶² Տես նաև՝ ԵԴԽԽ Կարծիք 2-6, կետ 16 և 36:

Թագավորության, Ռուսիայի փորձը, ցույց է տալիս, որ քննարկվող հիվանդություններն ունեցող անձի՝ անմիջապես դատարան դիմելու իրավունքը երաշխավորված է օրենքով: Եվ վերջապես, Ռուսիայի օրինակով, նման միջնորդություն ներկայացվելու իրավունքը պետք է տրված լինի նաև դատախազին:

Ինչ վերաբերում է դատապարտյալների ներման գործընթացում դատախազի մասնակցությանը, ապա ԵՂԽՆ Կարծիք Հ-6-ի 18-րդ կետը նշում է, որ Կ

«18. Որոշ դատախազություններում ... դատախազները իրենց կարծիքն են արտահայտում դատապարտյալի ներման նպատակահարմարության մասին: Մի շարք պետություններում դատախազների լիազորությունների մեջ է մտնում նաև համաներման և ներման մասին որոշումների կատարման օրինակաչության նկատմամբ հսկողության իրականացումը»:

Դատախազության նման լիազորությունը այս ոլորտում բխում է նրա ունեցած ընդհանուր լեգիտիմությունից: Փաստորեն, դատախազությունը, որը հարուցել է քրեական հետապնդում, այնուհետև՝ պաշտպանել մեղադրանքը դատարանում, ապացուցել անձի մեղավորությունը, հասել նրանց, որ նրա անմեղության կանխավարկածը բացասվի մեղադրական դատավճռի օրինակաչության և հիմնավորվածության կանխավարկածով, այնուհետև ապացուցել անձի նկատմամբ քրեական պատիժ, այդ թվում՝ ազատագրելով որոշակի ժամկետով նշանակելու անհրաժեշտությունը, այլ լեգիտիմությանը հետամուտ է լինում նաև ներում շնորհելու իրավունք ունեցող բարձրագույն պաշտոնատար անձի լիազորությունների իրացման հետ կապված:

Մինչդեռ «Ներման մասին» ՀՀ օրենքում¹⁶³ (ընդ. 2018թ. մարտի 7-ին) անգամ մեկ բառ չկա դատախազության մասին, իսկ 12-րդ հոդվածն ընդհանրապես չի նախատեսում, որ դատախազության ներկայացուցիչը կարող է լինել ներման հանձնաժողովի անդամ¹⁶⁴:

Որպես այս՝ 2.4. կետի ամփոփում, նշենք, որ մեր կարծիքով, անհրաժեշտ է դադարեցնել դատախազական հսկողությունը բովանդակազրկելու 2007թ. ի վեր ահագնացող միտումը, որի համար, մանավանդ՝ պատիժների և կատարման ոլորտի առնչությամբ, ընդհանրապես որևէ հիմնավորում չկար ու չէր կարող գոյություն ունենալ՝ ոչ միջազգային չափորոշիչների, և ոչ էլ օտարերկրյա լավագույն փորձի տեսակետից: Ընդհակառակը, այդ չափանիշներն ու փորձը վկայում են դատախազության կողմից պատիժների ու դատավարական հարկադրանքի կիրառման օրինակաչության նկատմամբ հսկողության արդյունավետության երաշխիքների ավելացման մասին:

Կազմակերպարավական առումով, խիստ անհրաժեշտ է, որպեսզի Քրեակատարողական ծառայության և Պրոբացիոն ծառայության աշխատանքը, եթե դրանք երկուսն էլ նախատեսվում է պահպանել ՀՀ Արդարադատության նախարարության կազմում, համակարգվի նախարարի տարբեր տեղակալների կողմից՝ Պրոբացիոն ծառայության ֆունկցիոնալ անկախության ապահովման նպատակներից ելնելով: Առավելագույն իդեալական տարբերակը կլինի Պրոբացիայի Ծառայությունը դատական ծառայություն դարձնելը¹⁶⁵:

Դատախազը պետք է իր աշխատասենյակն ունենա ցանկացած ՔԿՀ-ում, քանի որ իր գործունեության արդյունավետության վերը քննարկված երաշխիքների իրապես գործուն

¹⁶³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142612>

¹⁶⁴ Հոդված 12. Հանձնաժողովի կազմը և աշխատանքը

1. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, հայերենին տիրապետող, բարոյական բարձր հատկանիշներով օժտված Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

2. Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատում է Վարչապետը:

¹⁶⁵ Օրինակ, ԱՄՆ-ում պրոբացիան համարվում է «դատարանի ձեռքը»:

դառնալու պարագայում, նա ավելի շատ ժամանակ է անցկացնելու այնտեղ: Մա նաև ենթադրվում է օրենսդրության այն պահանջներով, որոնք սահմանում են մի կողմից՝ դատապարտյալի կամ կալանավորի դատախազին դիմելու իրավունքը¹⁶⁶ և դատախազի հանդիպակաց լիազորությունները¹⁶⁷: Նաև սա անհրաժեշտ է լինելու դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման, ներման և նման այլ հարցերով իր եզրակացությունները անմիջականորեն ստացված փաստական տեղեկատվությամբ հիմնավորելու համար: Վերջապես, համագործակցության շրջանակների մեր կողմից առաջարկվող ընդլայնման դեպքում, մասնավորապես՝ երբ դատապարտյալը կարող է դիմել դատախազին՝ խնդրանքով, որպեսզի վերջինս, համագործակցության դիմաց, պատիժը վերանայելու միջնորդությամբ դիմի Գլխավոր դատախազին՝ պատժի մասով դատավճիռը նոր հանգամանքի, այսինքն՝ դատապարտյալի համագործակցության փաստի հիման վերանայելու խնդրանքով, դատախազի ներկայությունը ՔԿՀ-ում կարևոր դեր կխաղա ընդհանրապես դատախազության ինստիտուտի հեղինակության, վստահելիության, լիազորվածության ու արդյունավետության ապահովման գործում:

2.5. Դատախազության լիազորությունները պետական և հանրային շահերի պաշտպանության ոլորտում

2.5.1. Ընդհանուր դիտարկում

Մույն Հետազոտության 1-ին գլխում արդեն նշել ենք, որ թե քրեական արդարադատության ոլորտում, և թե դրանից դուրս դատախազությունն ունի միևնույն՝ հանրության անունից և ի շահ հանրության հանդես գալու լեգիտիմությունը, այսինքն՝ դատախազության գոյության իրավունքը բխում է հանրության շահերը ներկայացնելու և հանրության անունից գործելու անհրաժեշտությունից: Այս միասնական լեգիտիմության շնորհիվ, դատախազության՝ քրեական արդարադատության ոլորտի համար սահմանված երաշխիքները, իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվության շրջանակը, չեն տարբերվում քրեական արդարադատության ոլորտից դուրս նախատեսված կարգավորումներից:

Ինչպես նշվեց վերևում՝ 1.2. կետում, 2012թ. սեպտեմբերի 19-ին ընդունված «Նախարարների կողմիտ Բրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազության դերի մասին անդամ պետություններին ուղղված (2012)11 Հանձնարարականի»¹⁶⁸ համաձայն, «Նախարարների կողմիտ Բրեական

¹⁶⁶ Տես, ի թիվս այլի՝ Քրեակատարողական օրենսգիրք, հոդված 12. Դատապարտյալի հիմնական իրավունքները, մաս 1-ին կետ 3-րդ՝ առ այն, որ «դատապարտյալն իրավունք ունի՝ ...3) իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու ... դատախազություն...»:

¹⁶⁷ Տես, ի թիվս այլի՝ Դատախազության մասին օրենքի 28-րդ հոդված, մաս 4-րդ, կետ 1-ին՝ առ այն, որ «դատախազն իրավունք ունի՝ 1) ցանկացած ժամանակ անարգել այցելելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման վայրեր, ինչպես նաև դրանց կատարումն ապահովող իրավասու մարմիններ» և ... «4) հարցման ենթարկելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց»:

¹⁶⁸ Այս Հանձնարարականի հիմքում, ի թիվս այլի, ընկած են ՄԻԵԴ բազմաթիվ նախադեպային դիրքորոշումները, մասնավորապես՝ Lobo Machado v. Portugal, judgment of 20 February 1996; Vermeulen v. Belgium, judgment of 20 February 1996; K.D.B. v. the Netherlands, judgment of 27 March 1998; Brumărescu v. Romania [GC], judgment of 28 October 1999; Yildirim v. Austria (dec.), decision of 19 October 1999; Kress v. France [GC], judgment of 7 June 2001; Blanco Callejas v. Spain (dec.), decision of 18 June 2002; Göç v. Turkey [GC], judgment of 11 July 2002; Asito v. Moldova, judgment of 8 November 2005; Martinie v. France [GC], judgment of 12 April 2006;

արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին անդամ պետություններին ուղղված Rec(2000)19 Հանձնարարականը» պետք է կիրառվի, *mutatis mutandis*, այն դատախազների նկատմամբ, ովքեր պատասխանատու են և լիազորություններ ունեն քրեական արդարադատության ոլորտից դուրս, որքանով դա վերաբերելի է իրենց գործառնությունների կատարման նպատակով իրենց տրամադրվող երաշխիքներին, գործադիրի, օրենսդիրի և դատական համակարգի հետ հարաբերություններին և անհատների հանդեպ ունեցած իրենց պարտականություններին ու պատասխանատվությանը»¹⁶⁹:

ԵՄ ՆԿ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագրի 24-րդ կետը հատուկ նշում է, որ թե (2000)19 վերաբերելի դրույթները, ընդհանուր առմամբ պահանջում են, որպեսզի պետությունները արդյունավետ միջոցներ ձեռնարկեն երաշխավորելու համար, որպեսզի դատախազները կարողանան իրեն պարտականություններն ու լիազորություններն իրականացնեն իրավական և կազմակերպական համարժեք պայմաններում և համարժեք ռեսուրսներ ունենալով: Մասնավորապես, քրեական արդարադատության ոլորտից դուրս գործող դատախազների համար երաշխիքներն ամրագրված են (2000)19 Հանձնարարականի՝

- 4-7, 9 և 10-րդ կետերում (նշանակում, առաջխաղացում, տեղափոխում, աշխատանքային պայմաններ՝ վարձատրություն, կարգապահական վարույթներ, արտահայտվելու, համոզմունքի, հավաքների և միավորումների ազատության իրավունքներ, վերապատրաստումներ, ներքին անկախություն՝ վերադասի ապօրինի հրամանները կատարելուց հրաժարվելու իրավունք և այդ հրամանների գրավոր լինելու պահանջը, տես՝ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագրի 24-րդ կետը).
- 11-14-րդ կետերում (օրենսդիր և գործադիր իշխանությունների գործունեությանը չմիջամտելու սկզբունքը, ինքնուրույնության երաշխիքները՝ ի դեմս դատախազի գործունեության մեջ անհարկի միջամտության արգելքի, աշխատանքի շուրջ հաշվետվողականության պահանջը, տես՝ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագրի 25-րդ կետը).
- 24-26 և 28-36-րդ կետերում (դատախազի կողմից իր պարտականությունները արդարացի, անկողմնակալ և օբյեկտիվ կերպով կատարելու և որևէ հիմքով խտրական վերաբերմունք դրսևորելուց զերծ մնալու, բոլորի հավասարությունն օրենքի առջև ապահովելու և մրցացության սկզբունքի իրացումը երաշխավորելու պահանջը, անթույլտրելի ապացույցների օգտագործումից զերծ մնալու պահանջը, մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին միջամտող դատախազական ակտերի կամ գործողությունների՝ դատական վեհակողության/վերանայման ենթակա լինելու սկզբունքը, վարքագծի պարտադիր կանոնադրքի առկայությունը, դատախազների որոշումները շահագրգիռ անձանց կողմից վիճարկելու իրավունքը, վկանների կյանքին, անվտանգությանը և մասնավոր կյանքին առնչվող շահերը հաշվի առնելու և տուժողներին վարույթի ընթացքի մասին տեղյակ պահելու, նրանց իրավունքները ներկայացնելու,

Stankiewicz v. Poland, judgment of 6 April 2008; Paulík v. Slovakia, judgment of 10 October 2006; Gregório de Andrade v. Portugal, judgment of 14 November 2006; Batsanina v. Russia, judgment of 26 May 2009; Korolev v. Russia (no. 2), judgment of 1 April 2010; Ewert v. Luxembourg, judgment of 22 July 2010; and Moldovan Costică and Others v. Romania (dec.), decision of 15 February 2011. See also the other judgments and decisions cited below in the commentary on the individual paragraphs of the recommendation, տես՝ ԵՄ ՆԿ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագրի 9-րդ կետը, <https://rm.coe.int/16807474ee>:

¹⁶⁹ ԵՄ ՆԿ (2012)11 Հանձնարարական, կետ 5:

տեսակետներն ու մտահոգություններն հաշվի առնելու պարտականությունը, երրորդ անձանցից ստացված տեղեկատվությունը գաղտնի պահելու և միայն արդարադատության կամ իրավունքի շահերից ելնելով բացահայտելու պարտականությունը, և վերջապես՝ դատախազների համար ընդհանուր բնույթի ուղեցույցներ մշակելու պահանջը և այնպիսի սկզբունքներ ու չափանիշներ սահմանելու պարտականությունը, որոնցով պետք է գնահատվեն դատախազների որոշումները կոնկրետ գործերով, և նման տեղեկատվության հրապարակայնության պահանջը, տես՝ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագրի 27-րդ կետը):

Այսպիսով, պետք է եզրակացնել, որ թե քրեական արդարադատության ոլորտում, և թե դրանից դուրս դատախազության դերակատարմանը հավասարապես վերաբերելի են թե կազմակերպարարական և թե գործառնական ու դատավարական երաշխիքները: Քանի որ դատախազության ինստիտուցիոնալ կազմակերպման երաշխիքները առանձին քննարկվում են 3-րդ գլխում, իսկ քրեադատավարական երաշխիքները արդեն իսկ քննարկվել են սույն՝ 2-րդ գլխի նախորդող բոլոր կետերում, հետևաբար, այս կետում քննարկման առարկա ենք դարձրել դատավարական այն կարգավորումները, որոնք միջազգային չափորոշիչներով պահանջվում են ոչ քրեական ոլորտում դատախազական միջամտության մեջ կամայական դրսևորումները կանխելու նպատակով: Խոսքը վերաբերում է հաջորդ կետում քննարկվող հետևյալ դրույթներին՝ պատճառաբանված դատախազական որոշումների պահանջը, դատախազի և դատավարության մյուս կողմի հավասարության սկզբունքը, հրապարակայնության սկզբունքը և այլն:

2.5.2. Քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազական հսկողության առանձնահատկությունները, առարկայական ծավալը և այլ մարմինների ու անձանց իրավունքներին դատախազության կամայական միջամտության դեմ առկա երաշխիքները

2.5.2.1. Քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազական հսկողության առանձնահատկություններն ու առարկայական ծավալը. պետական շահերի ու խոցելի խմբերի շահերի պաշտպանության հանրային շահը

Դատախազությանը քրեական ոլորտից դուրս լիազորություններ վերապահելը, այսպիսով, սկզբունքորեն սխալ չէ՝ պայմանով եթե ապահովվում են կամայականության դեմ երաշխիքները: (2012)11 Հանձնարարականի Բացատրական Հուշագիրը սահմանում է, որ՝

«Հանձնարարականը լուր է այն մասին, թե ինչպիսի խնդիրներ և լիազորություններ կարող են դրվել դատախազների վրա: Պետություններն են, որ իրենց հայեցողության սահմաններում պետք է որոշեն, թե ինչ առաքելություն են վերապահում իրենց դատախազներին քրեական արդարադատության ոլորտից դուրս»¹⁷⁰:

Այնուհետև, նույն կետում Հուշագիրը նշում է, թե ինչով պետք է սահմանափակված լինի անդամ պետությունների հայեցողությունը քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազությանը լիազորություններ վերապահելու հարցում: Այն մտնում են պետությունների հայեցողության մեջ՝

«Դատախազության մարմինների դերն ու լիազորությունների ծավալը, ներառյալ՝ մարդու իրավունքների և հանրային շահի պաշտպանությունը, սահմանված են անդամ պետությունների ներպետական օրենսդրությամբ: Ոչ քրեական գործառույթների առկայությունը կամ բացակայությունը և ծավալը խորապես

¹⁷⁰ Նույն տեղում, կետ 18:

արմատավորված են ազգերի մշակութային ժառանգության, իրավական ավանդույթի և սահմանադրական պատմության մեջ»¹⁷¹:

Ինչպես նշվեց վերևում՝ սույն Հետազոտության 1.4 կետում, 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը, արտաքրեական ոլորտում դատախազությանը վերապահված գործառնությունների իրականաման նախապայմանների մեջ նշում է (176-րդ հոդված) «բացառիկ դեպքերում» և «օրենքով սահմանված» լինելը: Նշվեց նաև, որ միջազգային չափորոշիչների համաձայն, քրեական ոլորտում լիազորությունների առկայությունը՝ որևէ ծավալով, ինքնին խնդրահարույց չէ եվրոպական չափորոշիչների տեսանկյունից, և որ «ոչ քրեական գործառնությունների առկայությունը կամ բացակայությունը և ծավալը խորապես արմատավորված են ազգերի մշակութային ժառանգության, իրավական ավանդույթի և սահմանադրական պատմության մեջ»¹⁷²: Հետևաբար, միջազգային չափորոշիչների գործողությունը արտահայտվում է **ոչ թե քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազական հսկողության առարկան սահմանափակելու, այլ այդ հսկողության իրականացման դատավարական այնպիսի երաշխիքներ տրամադրելու մեջ, որոնք չեն խախտի ոչ քրեական վարույթի, այն է՝ քաղաքացիական կամ վարչական դատավարության մրցակցության սկզբունքը և, ավելի գլոբալ՝ իշխանությունների տարանջատման սկզբունքը՝ ի դեմս լիազոր մարմինների փոխարեն գործառնություններ իրացնելու և նրանց իրավասության ոլորտը անհարկի միջամտելու**: Այս ենթակետում մենք կանդրադառնանք արտաքրեական ոլորտում դատախազության մասնակցության առանձնահատկություններին ու միջազգային չափորոշիչներով սահմանված ծավալներին ու կամայականության դեմ երաշխիքներին, իսկ մյուս՝ 2.5.3 ենթակետում կներկայացնենք ՀՀ գործող իրավական կարգավորումները և համապատասխան առաջարկներ կներկայացնենք՝ դրանք միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Այսպիսով քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազական հսկողության հիմնական առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն քրեական արդարադատության ոլորտի, **այստեղ դատախազությունը լիազոր մարմին չի հանդիսանում**: Այսինքն, որպես կանոն, այս ոլորտում հանրային շահի և հանրային նշանակության մասնավոր շահի¹⁷³ պաշտպանությունը պետք է իրացվի շահագրգիռ համապատասխան իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից: Այդպիսին է նաև եվրոպական իրավունքի զարգացման տենդենցը՝

«Ա. Դատախազության լիազորությունները քրեական իրավունքի ոլորտից դուրս

77. Վենետիկի հանձնաժողովը մշտապես, թեպետ ոչ բացարձակ ձևակերպումներով, կոչ է արել, որպեսզի դատախազությունը հիմնականում կենտրոնացած լինի քրեական իրավունքի բնագավառի վրա¹⁷⁴: Հազվադեպ չէ, որ դատախազությունն իրականացնում է այլ գործառնություններ ևս: Այնուամենայնիվ, այլ գործառնությունների իրացման դեպքում, դրանք չպետք է լինեն այնպիսի լիազորություններ, որոնք որևէ կերպ միջամտում են դատական համակարգին կամ իրենցով փոխարինում դատարանի որոշումները, **նրանք այդ գործառնությունները պետք է իրականացնեն ցանկացած դատավարության կողմի պես բողոքարկման իրավունքի իրացման և որոշումը վերանայելու նպատակով դատարան դիմելու միջոցով**: Պետք է ընդունել, որ անգամ մասնավոր

¹⁷¹ Opinion No 3(2008) of the Consultative Council of European Prosecutors on “THE ROLE OF PROSECUTION SERVICES OUTSIDE THE CRIMINAL LAW FIELD” adopted by the CCPE at its 3rd plenary meeting (Strasbourg, 15-17 October 2008), կետ 6:

¹⁷² Opinion No 3(2008) of the Consultative Council of European Prosecutors on “THE ROLE OF PROSECUTION SERVICES OUTSIDE THE CRIMINAL LAW FIELD” adopted by the CCPE at its 3rd plenary meeting (Strasbourg, 15-17 October 2008), կետ 4:

¹⁷³ Նկատի են ունեցվում խոցելի խմբերի անձանց անհատական շահերը և *հանրային շահերի հայցերով* (actio popularis) հետապնդվող շահերը:

¹⁷⁴ CDL-JD(2008)001, for an overview of the European practice on this issue see the report by Mr. András Varga for the CCPE (CCPE-Bu(2008)4rev).

դատական վեճերով կարող է առկա լինել այնպիսի հանրային շահ, որը կարիք ունի դատարանում պաշտպանվելու կամ ներկայացվելու և սկզբունքորեն առարկություն չկա առ այն, որպեսզի դա լինի դատախազական գործառույթ՝ պայմանով, որպեսզի վերջնական խոսքը պատկանի դատարանին»¹⁷⁵:

Նշվածից բխում է, որ դատախազական հսկողության իրականացման նախապայմանն է համապատասխան լիազոր մարմինների ու շահագրգիռ անձանց կողմից համապատասխան շահերի պաշտպանության ուղղությամբ քայլեր չձեռնարկելը: Վերջինս էլ կարող է պայմանավորված լինել քայլեր ձեռնարկելու համար անհրաժեշտ ցանկության կամ կարողության բացակայությամբ: Սրա հետ կապված առանձին պետք է քննարկել լիազոր մարմինների և խոցելի խմբերի անձանց հետ դատախազության հարաբերությունները, ինչպես նաև դատախազի դերակատարումը՝ ՀՀ-ում վաղուց առաջարկվող և դեռևս միայն բնապահպանական ոլորտում թույլատրվող հանրային շահերի հայցերը (actio popularis):

Այսինքն, եվրոպական չափորոշիչների համաձայն, ընդհանուր կանոն է հանդիսանում այն, որ արտաքրեական արդարադատության ոլորտում համապատասխան շահերը պաշտպանվում են լիազորված կամ/և այլ շահագրգիռ մարմինների և անձանց կողմից: Հետևաբար, մեթոդական առումով, այս հարցի կարգավորմանը նույնպես վերաբերելի են այն բոլոր չափանիշները և չափորոշիչները, որոնք գործում են ընդհանուր կանոնից արվող բացառությունների համար, այն է՝ այս ոլորտում դատախազական հսկողության իրականացման հիմքերի սպառիչ սահմանումը օրենքում, միջամտություն իրականացնելիս դրա հիմքերի պատճառաբանությունը և սահմանափակ մեկնաբանման պահանջը: Ինչ վերաբերում է գուտ իրավական պահանջներին, ապա ՄԻԵԴ-ը, ԵԽ ՆԿ-ն, Վենետիկի հանձնաժողովը և ԵԴԽԽ-ն հստակ սահմանում են այս ոլորտում դատախազության մասնակցության հիմնականում իրավական որոշակիության սկզբունքի դատավարական առանձին սկզբունքների իրացման երաշխիքներ, որոնք են ներկայացվում են հաջորդ ենթակետում:

ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարականի 2012թ. սեպտեմբերի 21-ին, այսինքն՝ բուն Հանձնարարականի ընդունումից 2 օր անց ընդունված Բացատրական հուշագիրը (կետ 7) նշում է տարբեր երկրներում քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազական հսկողության **առարկայական ծավալը**: Եթե ներկայացնենք ամփոփ ձևով այդ ծավալի մեջ են մտնում ամբողջ հանրությանը վերաբերող խնդիրները, իսկ մասնավոր խմբերի դեպքում՝ խոցելի վիճակում գտնվող անձանց խնդիրները՝

«Քրեական արդարադատության համակարգից դուրս դատախազությանը վերապահված հսկողական գործառույթները սովորաբար ընդգրկում են որոշակի չափորոշիչների կիրառման ապահովումը այնպիսի ոլորտներում ինչպիսիք են՝ մրցակցությունը, զբաղվածությունը, հանրային առողջությունն ու ապահովությունը, հակախտրական օրենսդրությունը և մարդու իրավունքներն ավելի ընդհանուր իմաստով, շրջակա միջավայրի և ազգային ռեսուրսների կառավարումը և անգամ ընտրությունների և հանրաքվեների պատշաճ իրականացումը»¹⁷⁶:

Եթե բերելու լինենք կոնկրետ օրինակներ, ապա տարբեր երկրներում այս ոլորտում դատախազության առարկական լիազորվածության սահմանները շատ բազմազան են՝ երեխաների ու անգործունակ տարեցների շահերի պաշտպանությունից ու ամուսնությունների վավերացումից ու չեղարկումից, միավորումների ու հիմնադրամների գրանցումից ու լուծարումից սկսած մինչև աշխատանքային օրենսդրության հիման վրա աշխատողների իրավունքների պաշտպանության նպատակով դատարանում նրանց ներկայացուցչությունն իրականացնելը և օրենքների սահմանադրականության առթիվ

¹⁷⁵ ՎՀ-ի Զեկույց դատախազության անկախության չափորոշիչների մասին, կետ 77-78:

¹⁷⁶ (2012)11 Հանձնարարականի Բացատրական Հուշագիր, կետ 72:

որոշում կայացնելու միջնորդությամբ սահմանադրական կամ գերագույն դատարան դիմելը»¹⁷⁷:

Բացատրական հուշագիրը նշում է, որ չնայած ԵԽ անդամ երկրներում այս ոլորտում դատախազության լիազորությունների բազմազանությանը, դրանց ընդհանուր բնորոշ հատկանիշներից է, որ «հանրային դատախազները կարող են որոշել, թե արդյոք հարուցել, թե շարունակել դատական վարույթները, պաշտպանել հայցը դատարաններում, դատարանների որոշումների բերել բողոքներ ու պաշտպանել այդ բողոքները»¹⁷⁸: Իսկ ԵԽ անդամ որոշ երկրների «իրավական համակարգերում դատախազությունը լիաորված է, *ի թիվս այլի*, ապահովել իրավունքի գերակայությունը, պաշտպանել մարդկանց իրավունքներն ու ազատությունները, պաշտպանել պետության գույքն ու շահերը, պաշտպանել հանրային կամ ընդհանուր շահը, նպաստել դատարանների նախադեպային իրավունքի ներդաշնակեցմանը և կատարել հսկողական դեր: Առանձին անդամ երկրներում (օր.՝ Բելգիայում, Ֆրանսիայում), դատախազից պահանջվում է, որպես հանրային կամ ընդհանուր շահի պաշտպանության ուղղությամբ նրա դերակատարման մի մաս, ապահովել առանձնապես խոցելի անձանց շահերի պաշտպանությունը»¹⁷⁹:

Այս ոլորտների բազմազանությունը վկայում է երկու հանգամանքի մասին: Նախեառաջ, այն նշանակում է, որ եվրոպական չափորոշիչներ առարկայական լիազորվածության առումով գոյություն չունեն, այսինքն՝ որ այս հարցում դատախազությանը լիազորելը ճիշտ է, իսկ մեկ այլ հարցում սխալ: Մյուսը դա այն է, որ քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազությանը տարբեր լիազորություններ վերապահելը ինքնին չի հակասում եվրոպական չափորոշիչներ, մասնավորապես՝ ՄԻԵԿ-ին և ՄԻԵԴ դիրքորոշումներին:

ԵԽ ՆԿ-ի կողմից (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագիրը (կետ 38 և 39) այս առթիվ բերում է Ֆրանսիայի օրինակը, նշելով, որ այդ երկրում դատախազներն, օրինակ, հսկողություն են իրականացնում հարկադիր կատարողների, նոտարների գործունեության, ստեղծում են աճուրդային կազմակերպություններ ու կատարում համապատասխան անձանց նշանակումներ, նշանակում են հոգեբուժական հիվանդանոցում անձին տեղավորելու որոշում կայացնող հանձնաժողովների առանձին անդամների, հսկողություն են իրականացնում փաստաբանների նկատմամբ նշանակված կարգապահական տույժերի իրականացման նկատմամբ, տեսչական վերահսկողություն են իրականացնում աշխատանքային հարցերով տրիբունալների (*Conseils de prud'hommes*) նկատմամբ, չի նշում, որ այս գործառույթները հակասում են ժողովրդավարական հասարակության դատախազության գործառույթներին, այլ սահմանում է, որ այս դեպքերում, «երբ դատախազն իրավունք ունի որոշում կայացնելու ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների առնչությամբ, նման լիազորությունները պետք է լինեն խիստ սահմանափակ, սահմանվեն օրենքով և չխաթարեն կողմերի՝ փաստի և իրավունքի հարցով անկախ և անկողմնակալ դատարանին բողոք ներկայացնելու իրավունքը: Դատախազը պետք է գործի անկախ որևէ իշխանությունից, և նրա որոշումները պետք է լինեն պատճառաբանված ու հաղորդվեն համապատասխան անձանց»¹⁸⁰:

Պետք ասել, որ Եվրոպական դատախազների Խորհրդատվական խորհուրդը, որը դեռևս 2008թ. հոկտեմբերի 21-ին ընդունված «Քրեական իրավունքի ոլորտից դուրս

¹⁷⁷ Recommendation CM/Rec(2012)11 of the Committee of Ministers to member States on the role of public prosecutors outside the criminal justice system, Explanatory Memorandum, 21 September 2012, <https://rm.coe.int/16807474ee>, par 7.

¹⁷⁸ Նույն տեղում, կետ 16:

¹⁷⁹ Նույն տեղում, կետ 17:

¹⁸⁰ Տես՝ ԵԽ ՆԿ-ի (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագիր, կետ 38 և 39, Հանձնարարականի 11-րդ կետի վերաբերյալ:

դատախազական մարմինների դերի մասին» իր Կարծիք Հ-3-ում ԵԽ ՆԿ-ին խորհուրդ էր տվել «քննարկել ընդհանուր եվրոպական սկզբունքների մշակման հնարավորությունը, մասնավորապես՝ քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազների կարգավիճակի, լիազորությունների և պրակտիկայի վերաբերյալ», նշելով, որ «այս հարցը պետք է կարևոր համարվի մարդու իրավունքները, հիմնարար ազատությունները, իշխանությունների տարանջատման ժողովրդավարական սկզբունքը և կողմերի մրցակցությունը պաշտպանելու կարևորության լույսի ներքո»¹⁸¹: Հենց այս կարծիքն էր, որ ամրագրեց այն կարևոր սահմանափակումները և երաշխիքները, որոնք քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազի՝ քրեական ոլորտում ունեցած միասնական կարգավիճակն ամրագրելու հետ մեկտեղ, պետք է դրվեին դատախազական միջամտության վրա՝ վերջինիս կամայական լինելը բացառելու համար: Մասնավորապես, ի թիվս նման սահմանափակումների և երաշխիքների, որոնք 4 տարի անց ընդունվեցին ԵԽ ՆԿ-ի կողմից (2012)11 Հանձնարարականում (հարգանք իշխանությունների տարանջատման հանդեպ, բացառապես օրենքով նախատեսված և պատճառաբանված ու այլ անձանց ու մարմինների համար հասանելի որոշմամբ իրականացվող միջամտություն, դատավարության մյուս կողմի հետ հավասար իրավունքներ և պարտականությունների¹⁸², այլն), Կարծիքում արվում են մի շարք առաջարկություններ, որոնք քննարկվում են հաջորդ կետում:

2.5.2.2. Քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազական հսկողության արդյունավետության ապահովման ու կամայականությունների կանխարգելման երաշխիքները

ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարականը իր կետ 3-ում (կետ (C). Ընդհանուր սկզբունքները) արտաքրեական արդարադատության ոլորտում դատախազական միջամտության նշված պայմաններին ավելացնում է նաև այն, որ նման միջամտության հիմքերը «պետք է բոլոր դեպքերում ամրագրված լինեն օրենքով և լինեն հստակ ձևակերպված՝ որևէ տարրն թերցումից խուսափելու նպատակով», իսկ կետ 4-ը՝ նշում, որ, «ինչպես և քրեական արդարադատության ոլորտում, արտաքրեական արդարադատության ոլորտից դուրս նույնպես դատախազները իրենց պարտականություններն ու լիազորությունները պետք է

¹⁸¹ CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) Strasbourg, 21 October 2008 Opinion No 3(2008) of the Consultative Council of European Prosecutors on “THE ROLE OF PROSECUTION SERVICES OUTSIDE THE CRIMINAL LAW FIELD” adopted by the CCPE at its 3rd plenary meeting (Strasbourg, 15-17 October 2008), ԵԴԽՆ «Քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազական մարմինների դերի մասին» Հ-3 Կարծիքը, այսուհետ՝ «ԵԴԽՆ Կարծիք Հ-3», կետ 40: ԵԴԽՆ այս կարծիքի հիմքում (տես կետ 5-րդ) ընկած է «ՄԻԵԴ նախադեպային իրավունքը, որպես հիմնական աղբյուր»՝ «առանձնակի ուշադրություն դարձնելով Եվրոպայի Խորհրդի նպատակներին, իրավունքի գերակայության սկզբունքին և Եվրոպայի մշակութային ինքնության և բազմազանության զարգացմանը»:

¹⁸² ԵԽ մարմինների որդեգրած այս իրավական դիրքորոշումը՝ քրեական ոլորտից դուրս դատավարություններին մասնակցելու ընթացքում մյուս կողմի հետ հավասար իրավունքներ ու պարտականությունների ունենալու վերաբերյալ, իրականում ուղղված է այն, Խորհրդային դատախազությանը բռնորդ կարգավիճակի հետ, որից ելնելով դատախազները որպես բոլորի, այդ թվում՝ դատարանների կողմից օրենքի կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնող անձինք, կարծես թե գտնվում էին մյուս կողմի համեմատ արտոնյալ վիճակում: Այս դիրքորոշումը հստակ արձանագրվել է ՄԻԵԴ-ի կողմից *Չլինսատյան ԲԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի որոշման մեջ (Zlinsat, spol. s r.o., v. Bulgaria,)*, № 57785/00, § 78, 15.06.2006 թ.). «Ինքնին այն փաստը, որ դատախազների գործողություններն ուղղված են պետական շահերի պահպանությանը, չի կարելի մեկնաբանել իբրև նրանց դատավարության անկախ և անկողմնակալ մասնակիցների իրավական կարգավիճակ տվող» ; տես նաև՝ Обзор судебной практики Европейского суда по правам человека: роль прокурора при рассмотрении дел, не относящихся к сфере уголовного права © Совет Европы / Европейский суд по правам человека, март 2011 г., էջ 6:

իրացնեն օրինականության, օբյեկտիվության, արդարացիության և անկողմնակալության սկզբունքներին ամբողջովին համահունչ ձևով»¹⁸³:

«Եվրոպայի Խորհրդի դատախազները իրենց առաջին իսկ դիտարկումներում տեղյակ են եղել «որ քրեական ոլորտից դուրս դատախազության միջամտությունը կարող է արդարացված լինել միայն վերջինիս առջև դրված՝ **«հասարակության անունից և հանուն հանրային շահի գործելու»** ընդհանուր խնդրով՝ ինչպես դա ամրագրված է **R (2000) 19 Հանձնարարականում**, և որ այդ գործառնությունները չեն կարող հարցականի տակ դնել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքը, կամ՝ այն փաստը, որ միայն իրավասու դատարաններին և միայն նրանց է վերապահված վեճերին, դրանց երկու կողմերին լսելուց հետո, վերջնական լուծում տալը»¹⁸⁴:

Այսպիսով, ինչպես քրեական արդարադատության ոլորտում, այստեղ էլ՝ **դատազախությունն ունի նույն՝ հանրությանը իրավական իրողություն հաղորդելու առաքելությունը**՝ հատկապես, երբ խոսքը գնում է հանրային այն շահերի մասին, որոնք այլ կերպ չեն պաշտպանվելու կամ այն անձանց շահերի մասին, ովքեր խոցելի վիճակի բերումով, ի գորու չեն արդյունավետորեն իրականացնել իրենց իրավունքների պաշտպանությունը: Եվ իհարկե, այս շահերի պաշտպանությունը պետք է լինի մի կողմից՝ արդյունավետ, իսկ մյուս կողմից՝ գերծ կամայականություններից, որոնց թվում են նաև այս դեպքում՝ իշխանության մյուս ճյուղերի իրավասության ոլորտ ներթափանցելը և որպես դատավարության կողմ հանդես գալու ընթացքում մրցակցության սկզբունքի խախտումը: Կարևոր են, ինչպես նշվեց, արդյունավետության ապահովման ու կամայականության կանխարգելման երաշխիքները, ՀՀ գործող օրենսդրության համադրմամբ, քննարկվում են այս ենթակետում: Այսինքն, եզրակացնում ենք, որ կարևորն այն է, որպեսզի տրամադրվեն դատախազության կողմից գործադիր իշխանության իրականացմանը անհարկի չմիջամտելու, միջամտության բացառապես օրենքով սահմանված լինելու, մարդու իրավունքները չխախտելու, կամայականությունների կանխարգելման և դատախազական ակտերի դատական վերանայման արդյունավետ երաշխիքները և չխախտի մարդու իրավունքները, որոնց մասին:

Երաշխիքներից ամենաառաջինն ու հիմնարարն է, որն ամրագրված է բոլոր եվրոպական չափորոշիչներով, արտաքրեական արդարադատության ոլորտում դատախազության մասնակցության **օրենքով նախատեսված լինելը՝ «օրենք» հասկացությանը ՄԻԵԴ կողմից տրված ինքնավար (ավտոնոմ) իմաստով**: Ինչպես նշված է ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագրի Հանձնարարականի 3-րդ կետին (Ընդհանուր սկզբունքները) վերաբերող 19-րդ կետում՝

«Այս սկզբունքը համահունչ է ՄԻԵԴ նախադեպային իրավունքին: Օրենքն է, որն իր հասանելիության, պարզության, հստակության ու որոշակիության հատկանիշներով պետք է հանդիսանա դատախազության խնդիրների ու իրավասության աղբյուրը: Հետևաբար, սրանից բխում է, որ ազգային իրավական համակարգերում օրենքից բացի որևէ այլ աղբյուր, որը ոչ քրեական իրավունքի հարցերով խնդիրներ ու իրավասություն կնախատեսի համար, պետք է վերացվի»:

Քրեական ոլորտից դուրս դատախազների արդյունավետության և հնարավոր կամայականության դեմ երաշխիքների տեսակետից, կարևորագույնն այն սկզբունքային դիրքորոշումն է, որը որդեգրված է ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագրի 24-րդ կետում, և որի համաձայն ԵԽ ՆԿ (2000)19 Հանձնարարականի, այսինքն՝ քրեական ոլորտում դատախազների գործունեության նույն երաշխիքները գործում ենն պետք է նախատեսվեն այս ոլորտում ևս: Առավել վերաբերելի երաշխիքներից են (2012)11

¹⁸³ ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարական, կետ 3 և 4:

¹⁸⁴ Նույն տեղում, կետ 10:

Հանձնարարականի Բացատրական հուշագրի 25-րդ և 27-րդ կետերում նշված նորմերը և պահանջները՝

- օրենսդիր և գործադիր իշխանությունների գործունեությանը չմիջամտելու սկզբունքը.
- դատախազի գործունեության մեջ անհարկի միջամտության արգելքը.
- աշխատանքի շուրջ հաշվետվողականության պահանջը.
- դատախազի կողմից իր պարտականությունները արդարացի, անկողմնակալ և օբյեկտիվ կերպով կատարելու և որևէ հիմքով խտրական վերաբերմունք դրսևորելուց զերծ մնալու սկզբունքը.
- դատախազի կողմից բոլորի հավասարությունն օրենքի առջև ապահովելու և մրցացության սկզբունքի իրացումը երաշխավորելու սկզբունքը.
- անթույլտրելի ապացույցների օգտագործումից զերծ մնալու սկզբունքը.
- մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին միջամտող դատախազական ակտերի կամ գործողությունների՝ դատական վեհակողության/վերանայման ենթակա լինելու սկզբունքը.
- վարքագծի պարտադիր կանոնադրի առկայությունը.
- դատախազների որոշումների շահագրգիռ անձանց կողմից վիճարկելիության սկզբունքը.
- դատախազի կողմից վկանների կյանքին, անվտանգությանը և մասնավոր կյանքին առնչվող շահերը հաշվի առնելու և տուժողներին վարույթի ընթացքի մասին տեղյակ պահելու, նրանց իրավունքները ներկայացնելու, տեսակետներն ու մտահոգություններն հաշվի առնելու պարտականությունը.
- դատախազների համար ընդհանուր բնույթի ուղեցույցներ մշակելու պահանջը և այնպիսի սկզբունքներ ու չափանիշներ սահմանելու պարտականությունը, որոնցով պետք է գնահատվեն դատախազների որոշումները կոնկրետ գործերով, և նման տեղեկատվության հրապարակայնության պահանջը:

Ավելացնենք, որ ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարականի մշակման ու ընդունման նախաձեռնողն էր Եվրոպական դատախազների Խորհրդատվական խորհուրդը, որը Հանձնարարականի ընդունումից դեռևս 4 տարի առաջ՝ 2008թ. հոկտեմբերի 21-ին ընդունված «Քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազական մարմինների դերի մասին» իր Կարծիք Հ-3-ում ԵԽ ՆԿ-ին խորհուրդ էր տվել «քննարկել ընդհանուր եվրոպական սկզբունքների մշակման հնարավորությունը, մասնավորապես՝ քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազների կարգավիճակի, լիազորությունների և պրակտիկայի վերաբերյալ», նշելով, որ «այս հարցը պետք է կարևոր համարվի՝ մարդու իրավունքները, հիմնարար ազատությունները, իշխանությունների տարանջատման ժողովրդավարական սկզբունքը և կողմերի մրցակցությունը պաշտպանելու կարևորության լույսի ներքո»¹⁸⁵:

Հենց այս կարծիքն էր, որ ամրագրեց այն կարևոր սահմանափակումները և երաշխիքները, որոնք քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազի՝ քրեական ոլորտում ունեցած միասնական կարգավիճակն ամրագրելու հետ մեկտեղ, պետք է դրվեին դատախազական միջամտության վրա՝ վերջինիս կամայական լինելը բացառելու

¹⁸⁵ CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) Strasbourg, 21 October 2008 Opinion No 3(2008) of the Consultative Council of European Prosecutors on “THE ROLE OF PROSECUTION SERVICES OUTSIDE THE CRIMINAL LAW FIELD” adopted by the CCPE at its 3rd plenary meeting (Strasbourg, 15-17 October 2008), ԵԴԽՆ «Քրեական իրավունքի ոլորտից դուրս դատախազական մարմինների դերի մասին» Հ-3 Կարծիքը, այսուհետ՝ «ԵԴԽՆ Կարծիք Հ-3», կետ 40:

համար: Մասնավորապես, ի թիվս նման սահմանափակումների և երաշխիքների, որոնք 4 տարի անց ընդունվեցին ԵԽ ՆԿ-ի կողմից (2012)¹¹ Հանձնարարականում (հարգանք իշխանությունների տարանջատման հանդեպ, բացառապես օրենքով նախատեսված և պատճառաբանված ու այլ անձանց ու մարմինների համար հասանելի որոշամաք իրականացվող միջամտություն, դատավարության մյուս կողմի հետ հավասար իրավունքներ և պարտականությունների¹⁸⁶, և այլն, տես՝ Բացատրական հուշագրի կետ 38-40 և հաջորդիվ), Կարծիքում արվում են մի շարք առաջարկություններ, որոնք **անհրաժեշտ է հնարավորինս ներդնել նաև ՀՀ օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայում: Մասնավորապես, Կարծիքի «Ամփոփ երաշխավորություններ» բաժնում նշվում է, որ՝**

«Այն պետությունները, որոնցում դատախազությունը լիազորություններ ունի քրեական ոլորտից դուրս, պետք է ապահովեն, որպեսզի այդ գործառնություններն իրականացվեն իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետության հիմքում ընկած սկզբունքներին համապատասխան, մասնավորապես, որպեսզի՝

... բ) անկողմնակալությունն ու արդարացիությունը բնութագրական լինեն նաև քրեական իրավունքի ոլորտից դուրս գործող դատախազների համար.

գ) այս գործառնություններն իրացվեն հասարակության և հանրային շահերից ելնելով՝ ապահովելու օրենքի կիրառումը հարգելով հիմնարար իրավունքներն ու ազատությունները՝ օրենքով, ինչպես նաև Կոնվենցիայով ու ՄԻԵԴ-ով ամրագրված իրավասության շրջանակներում.

դ) դատախազների նման լիազորությունները կանոնակարգվեն որքան հնարավոր է հստակ ձևով.

... զ) **քրեական իրավունքի ոլորտից դուրս գործելով, դատախազները ունենան նույն իրավունքներն ու պարտականությունները, որն ունի դատավարության ցանկացած կողմ և չունենան դատավարության ընթացքում արտոնյալ դիրք (զենքերի հավասարություն կամ մրցակցություն)**¹⁸⁷.

... ը) դատախազները պարտավոր լինեն պատճառաբանելու իրենց գործողությունները և այդ պատճառաբանությունը հասանելի լինի գործի ելքով շահագրգռված կամ գործին մասնակից անձանց և ինստիտուտների համար.

թ) երաշխավորված լինի քաղաքացիական գործի ելքով շահագրգռված կամ գործին մասնակից անձանց և ինստիտուտների կողմից դատախազների կատարած գործողությունների կամ դրսևորած անգործության համար.

ժ) քրեական ոլորտից դուրս դատախազության գործունեությանը վերաբերող ՄԻԵԴ նախադեպային իրավունքի զարգացումները լրջորեն ուսումնասիրվեն՝ այն հաշվով, որպեսզի այդ գործունեության իրավական հիմքը և դրան համապատասխանող պրակտիկան լիովին համահունչ լինեն համապատասխան վճիռներին.

ի) իրենց պարտականություններն իրացնելիս, դատախազները պետք է հիմնեն և անհրաժեշտության դեպքում՝ զարգացնեն համագործակցությունն ու շփումները օմբուդսմանի գրասենյակների կամ նմանատիպ ինստիտուտների հետ, ինչպես նաև՝ քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ ՁԼՄ-ների հետ.

¹⁸⁶ ԵԽ մարմինների որդեգրած այս իրավական դիրքորոշումը՝ քրեական ոլորտից դուրս դատավարություններին մասնակցելու ընթացքում մյուս կողմի հետ հավասար իրավունքներ ու պարտականությունների ունենալու վերաբերյալ, իրականում ուղղված է այն, Խորհրդային դատախազությանը բռնորդ կարգավիճակի հետ, որից ելնելով դատախազները որպես բոլորի, այդ թվում՝ դատարանների կողմից օրենքի կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնող անձինք, կարծես թե գտնվում էին մյուս կողմի համեմատ արտոնյալ վիճակում: Այս դիրքորոշումը հստակ արձանագրվել է ՄԻԵԴ-ի կողմից *Չլինսատյան ԲԲԸ-ն ընդդեմ Բուլղարիայի որոշման մեջ (Zlinsat, spol. s r.o., v. Bulgaria, № 57785/00, § 78, 15.06.2006 թ.)*. «Ինքնին այն փաստը, որ դատախազների գործողություններն ուղղված են պետական շահերի պահպանությանը, չի կարելի մեկնաբանել իբրև նրանց դատավարության անկախ և անկողմնակալ մասնակիցների իրավական կարգավիճակ տվող» ; տես նաև՝ *Обзор судебной практики Европейского суда по правам человека: роль прокурора при рассмотрении дел, не относящихся к сфере уголовного права © Совет Европы / Европейский суд по правам человека, март 2011 г., էջ 6*

¹⁸⁷ Օրինակ, Դատախազության մասին 1997թ. օրենքի 35-րդ հոդվածը (Հայցային դիմում), նախատեսում էր, որ «Դատախազն իր իրավասության սահմաններում, առանց պետական տուրք վճարելու, կարող է պետական շահերի պաշտպանության հայց հարուցել դատարան»:

... ծ) հաստատվեն շրջաբերականներ կամ ուղեցույցներ, որոնք կամփոփեն քրեական ոլորտից դուրս դատախազների գործունեության վերաբերյալ լավագույն փորձի մոտեցումներն ու հանձնարարականները...»¹⁸⁸:

2.5.2.3. Քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազական իրավաչափ հսկողության արդյունավետության և կամայական միջամտության կանխման երաշխիքները ՀՀ-ում

Այս ենթակետում քննարկվում են ՀՀ օրենսդրական վերաբերելի կարգավորումները՝ նախորդ ենթակետերում նշված՝ դատախազական հսկողության արդյունավետության և կամայականությունների կանխման միջազգային չափորոշիչների և առանձին դեպքերում՝ դրանց հիմքում ընկած ՄԻԵԴ նախադեպային դիրքորոշումների տեսանկյունից: ՀՀ Դատախազության մասին օրենքը, հետևելով Սահմանադրությանը և վերջինիս համեմատ անգամ անհարկի նեղացնելով դատախազության լիազորվածությունը այս ոլորտում, բացի այն, որ անհրաժեշտ որոշակիությամբ չի ամրագրում արտաքրեական ոլորտում դատախազական անհրաժեշտ լիազորվածության առարկայական ծավալը, այսինքն՝ որոնք են այն պետական շահերը, որոնք «բացառիկ դեպքերում» պետք է պաշտպանի դատախազությունը, այլև չեն ամրագրում վերը քննարկված երաշխիքները: Այս ոլորտում դատախազության լիազորությունները կարգավորված են ՀՀ Դատախազության մասին օրենքի 29-րդ հոդվածում (**Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելը**), որի դրույթները ներկայացվում են ստորև՝ վերը նշված միջազգային չափորոշիչների ու օտարերկրյա փորձի, ինչպես նաև ՀՀ-ում՝ մինչև 1997 և/կամ 2007թ Դատախազության օրենքում կատարված փոփոխությունները, գործող իրավակարգավորումների հետ համակարգային վերլուծությամբ:

Եվ այսպես՝

1. Դատախազության մասին օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Դատախազի կողմից պետական շահերի, այդ թվում՝ պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետության կողմից համայնքին ուղղված ֆինանսական միջոցների պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝

1) քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

2) վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

3) քրեական դատավարության կարգով հանցագործությամբ **ուղղակիորեն** պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումը.

4) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցի հարուցումը:

2. Դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է **հետևյալ բացառիկ** դեպքերում, երբ՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է **պետական շահերի** պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով **պետական շահերի** խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո **ողջամիտ ժամկետում** հայց չի ներկայացրել, կամ

2) **պետական շահերի** խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի.

¹⁸⁸ ԵԴԽԽ Կարծիք 2-3:

3) «Այօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքներով առկա են գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքեր»:

29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հետ կապված, միջազգային չափորոշիչների և սեփական փորձից ելնելով, հիմնական մտահոգությունները և առաջարկները հետևյալն են՝

1. Օրենսդրորեն անհրաժեշտ որոշակիությամբ տրված չէ *«պետական շահեր»* հասկացության սահմանումը, ինչը անհրաժեշտ է բացահայտել *«Դատախազության մասին»* օրենքում՝ հաշվի առնելով դրանց պաշտպանության հայցով դիմելու սահմանադրական գործառույթի առկայությունը:

2. Դատախազության նշված լեզվատիրությունը՝ հանրության անունից պաշտպանելու նաև հենց հանրության շահերը՝ նաև հենց պետական մյուս մարմինների ունեցածություններից, արդեն իսկ, ըստ սահմանման, չի կարող պարփակվել զուտ *«պետական»* շահերի պաշտպանությամբ: Այսինքն՝ Սահմանադրության մեջ, բացի խոցելի անձանց իրավունքները պաշտպանելու գործառույթից, ոչ քրեական իրավահարաբերությունների ոլորտում *պետք է ավելացնել նաև «հանրային» շահերը*: Դատախազության դերակատարումը ներկայումս նվազեցված է պետական շահի, մինչդեռ *դատախազության լեզվատիրությունից է բխում առանձին դեպքերում նաև խոցելի ոչ միայն զուտ հանրության, այլև անձի իրավունքները պաշտպանելը պետական մարմիններից՝ պաշտպանելով այդ անձանց իրավունքները հենց որպես հանրային շահ*: Քանի որ պետականը դա հանրային շահի տեսակներից մեկն է, իսկ ինչպես նշել է Վենետիկի հանձնաժողովը, *«Պետք է ընդունել, որ անգամ մասնավոր դատական վեճերով կարող է առկա լինել այնպիսի հանրային շահ, որը կարիք ունի դատարանում պաշտպանվելու կամ ներկայացվելու և սկզբունքորեն առարկություն չկա առ այն, որպեսզի դա լինի դատախազական գործառույթ՝ պայմանով, որպեսզի վերջնական խոսքը պատկանի դատարանին»*¹⁸⁹: Այսպիսով, **անհրաժեշտ է նախևառաջ Սահմանադրության 176-րդ հոդվածում անհրաժեշտ է դատախազության համապատասխան լիազորությունը ընդլայնել և ձևակերպել, որ դատախազությունը՝ «6) հանրային, այդ թվում՝ պետական, ինչպես նաև խոցելի խմբերին պատկանող անձանց մասնավոր շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան», իսկ Դատախազության մասին օրենքի օրենքում ավելացնել 2.1. մաս դատախազության վերաբերելի պրակտիկայի ամփոփման հիման վրա սահմանելով դրանում «պետական շահեր» և հանրային շահեր հասկացությունը**: Ի դեպ Դատախազության մասին գործող օրենքի դեռևս Նախագծի 29-րդ հոդվածի 1-ին մասում, պետական շահերը ընկալելով որպես հենց հանրային շահ, սահմանում էր, որ՝ դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝ քաղաքացիական և վարչական դատավարության կարգով պետության կամ **համայնքի** գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը, ինչպես նաև քրեական դատավարության կարգով հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը կամ համայնքին պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումը:

Բացի այդ, ինչպես երևում է 29-րդ հոդվածի 1-ին մասից, ի տարբերություն քաղաքացիական և վարչական դատավարությունների, որտեղ դատախազի լիազորությունն է պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը, քրեական դատավարության կարգով հանցագործությամբ դատախազը ներկայացնում է միայն պետությանը պատճառված **գույքային** վնասի հատուցման հայցի հարուցումը: Այս տեսակետից, ի սկզբանե ասենք, որ Դատախազության մասին օրենքի հետ հակասություններ ունենալու դեպքում որպես վարույթը կարգավորող նորմատիվ ակտ

¹⁸⁹ ՎՀ-ի Զեկույց դատախազության անկախության չափորոշիչների մասին, կետ 77-78:

գործելու է ՀՀ ՔՂՕ-ն (տես՝ ՔՂՕ 1-ին հոդվածը): Այնուհետև՝ ՔՂՕ Նախագիծը պարունակում է հետևյալ վերաբերելի դրույթները, մասնավորապես՝

1) Նախագծի 6-րդ հոդվածի 26-րդ կետով ամրագրված տուժողի հասկացությունը («տուժող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն, ում վերաբերյալ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ենթադրյալ հանցանքով նրան պատճառվել է վնաս կամ կարող էր պատճառվել՝ ենթադրյալ հանցանքն ավարտին հասցնելու դեպքում»):

2) Նախագծի 160-րդ հոդվածով սահմանված դրույթը, որ «Մասնավոր շահերի պաշտպանության համար գույքային հայքը հարուցում և պաշտպանում է տուժողը կամ նրա ներկայացուցիչը, իսկ պետական շահերի պաշտպանության համար՝ դատախազը:

Այս դրույթներից հստակ երևում է, որ պետությունը, ըստ ՔՂՕ-ի և ՔՂՕ Նախագծի կարող տուժող լինել իրեն նաև ոչ գույքային վնաս պատճառվելու դեպքում, իսկ դատախազը ներկայացնում է ընդհանրապես պետական, այլ ոչ թե պետական շահերը պաշտպանելու հայքը, այսինքն՝ տուժողի և գույքային, և ոչ գույքային շահերը, օրինակ ներդրումային մթնոլորտի հուսալիությունը և այլն:

3. Հոդվածի 1-ին մասի՝ քրեական վարույթում պետական շահերի պաշտպանության համար քաղաքացիական հայցին վերաբերող 3-րդ կետում օգտագործվող «ուղղակիորեն» հասկացությունը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ օրենքի հասցեատերերին որպես ուղեցույց չի տրամադրվում այն չափանիշը, որով նրանք պետք է առաջնորդվեն՝ որոշելու համար, թե որ դեպքերում է պետությանը պատճառված գույքային վնասը պատճառվել ուղղակի, իսկ որ դեպքերում՝ անուղղակի: Ելնելով դատախազության լիազորությունները բացառապես օրենքով սահմանելու չափորոշիչից, այդ տարանջատման չափանիշը պետք էր ամրագրել օրենքով, քանի որ դրանից ուղղակիորեն կախված է այս դատախազության մասնակցել-չմասնակցելու լիազորվածության հարցի լուծումը: Սակայն, մեր առաջարկն այն է, որ այդ «ուղղակիորեն» բառից ընդհանրապես պետք է հրաժարվել, քանի որ, ինչպես և շատ այլ դեպքերում, դատախազության՝ Սահմանադրության 176-րդ հոդվածով տրված գործառույթը որևէ վկայակոչում չի պարունակում այն մասին, որ դատախազությունը սահմանադրական այս լիազորությունը ունի միայն պետությանը ուղղակիորեն պատճառվող վնասի դեպքում: Բացի այդ, իրականում անհնար է պատշաճ որոշակիությամբ սահմանել այդ ջրբաժանը, իսկ մյուս կողմից՝ պետությանը և հանրությանն ընդհանրապես միջնորդավորված կերպով պատճառվող վնասը երբեմն շատ ավելի մեծ կարող է լինել, քան անմիջապես պետությանը պատճառված վնասը:

Այս հարցի հետ սերտորեն կապված է նաև քրեական գործերով դատարանի լիազորվածության հարցը՝ քրեական վարույթում պետական շահերի պաշտպանության համար քաղաքացիական հայցի բացակայության դեպքում: Մասնավորապես, պատկերացնենք, որ կատարվել է պետական գույքի հափշտակություն որոշակի, ասենք, առանձնապես խոշոր չափերով, այսինքն՝ այդ հանցագործության օբյեկտիվ կողմը՝ դատարանում ապացուցման ենթակա հանցանքի տարրը ընդգրկում է արդեն իսկ որոշակի չափով վնաս պատճառելու փաստը: Խնդիրն այն է, որ պրակտիկայում դատարանները պետությանը պատճառված վնասի հատուցման հայցի բացակայության պայմաններում, դատավճռում չեն անդրադառնում այդ վնասի հատուցմանը, մինչդեռ այդ վնասի փաստն ու չափերը արդեն ապացուցված են ու ազդել են արարքի որակման վրա: Այս հարցի լուծման եղանակը, մեր կարծիքով հետևյալն է՝ քանի որ վնասի առկայությունը ու դրա չափը այս հանցակազմերով հանդիսանում է հանցանքի օբյեկտիվ տարրը, այսինքն՝ հանրային մեղադրողի կողմից մեղադրանքի պաշտպանության սահմանադրական

գործառնություն մաս, ապա մեղադրական դատավճռի արձակման դեպքում այդ վնասը և չափը համարվում են ապացուցված և դատարանի համար առաջացնում են, ի պաշտոնե, այդ վնասի հատուցմանը դատավճռով անդրադարձնելու պարտականություն: Հակառակ դեպքում ունենում ենք մի իրավիճակ, երբ պետությանը պատճառված վնասը և չափը ապացուցված է, սակայն դատախազը դրա հատուցման հայց չի ներկայացնում, անձը դատապարտվում է և կրում պատիժ, իսկ վնասը հատուցելը արդեն դառնում է ոչ թե քրեական դատավարության, այլ քրեակատարողական իրավունքի հարց և փաստացի ԱՆ ՔԿԾ շրջանակներում որոշվում է, որ, օրինակ, վնասը հատուցելու դեպքում, դատապարտյալը պետք է համարվի որպես ուղղման ճանապարհը բռնած և այլն, և այլն: Մեր այս առաջարկից բխում է, որ այս հանցակազմերով դատախազի կողմից մեղադրանքի պաշտպանությունը պետք է իրավունքի ուժով դիտարկել նաև որպես հաստատված չափով վնասը հատուցելու մասին հայց՝ առաջացնելով դատարանի կողմից այս հարցը դատարանում պարտադիր լուծելու պարտականություն:

Այլ խոսքերով, եթե հանքագործությամբ պատճառված վնասը և դրա չափը ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված հանցակազմի օբյեկտիվ կողմի տարր է, ապա վնասի հատուցման հարցը, քանի որ այդ վնասը և դրա չափը մտնում է ապացուցման առարկայի մեջ՝ հանցագործության որակման անհրաժեշտությունից ելնելով, ապա վնասի հատուցման հարցը քրեական գործով դատարանը պետք է լուծի իրավունքի ուժով, այսինքն՝ սեփական նախաձեռնությամբ, այսինքն՝ որոշումը կայացնի հանցավորից դատաքննությամբ ապացուցված վնասը հոգուտ տուժողի՝ պետության բռնագրավելու մասին: Իսկ մնացած դեպքերում, այսինքն, եթե վնասը և դրա չափը հանցակազմի տարր չէ, ապա դրա հատուցման հարցը դատարանը լուծում է տուժողի կամ դատախազի կողմից ներկայացված հայցին լուծում տալու միջոցով: Սրանով նաև կբացատրվի դատախազի՝ նշված հանցագործությունների վերաբերյալ գործերով քաղաքացիական հայց ներկայացնելու հայեցողությունը, հետևաբար նաև՝ լուրջ կոռուպցիոն ռիսկերը:

Հենց այս՝ ի պաշտոնե դատախազի կողմից քաղաքացիական հայց հարուցելու սկզբունքը և փիլիսոփայությունն է դրված ՀՀ ՔԴՕ Նախագծի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքում, որի համաձայն՝

«2. Դատախազը պարտավոր է՝

... 4) ի պաշտպանություն պետության գույքային շահերի՝ մեղադրյալի կամ վերջինիս գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի դեմ հարուցել հայց:»:

4. Հոդվածի 2-րդ մասում օգտագործվում է «բացառիկ» հասկացությունը, որին արդեն իսկ անդրադարձել ենք սույն Հետազոտության 1.1 կետում: Սահմանադրական փոփոխությունների դեպքում՝ այսինքն՝ այս հարցում 2005 Սահմանադրության տեքստին վերադառնալով և ըստ այդմ նախատեսելով պարզապես, որ դատախազը այս հայցերը ներկայացնում է միայն օրենքով սահմանված դեպքերում, «բացառիկ» բառի օգտագործումը կլինի ավելորդ՝ թե օրենսդրական տեխնիկայի, և թե բովանդակային առումով:

5. Հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում սահմանված է, որ դատախազը արտաքրեական ոլորտում պետական շահերի պաշտպանության հայց կարող է ներկայացնել այն դեպքում, երբ լիազորված մարմինը կամ անձը դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո «ողջամիտ ժամկետում» հայց չի ներկայացրել: Կարծում ենք, որ «ողջամիտ ժամկետում» եզրույթի օգտագործումն այս դեպքում արդարացված չէ նախնառաջ մեթոդական առումով, այսինքն՝ պետական մարմինը՝ դատախազությունը, չի կարող անորոշ ժամանակ սպասել մինչև մյուս՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կատարի իր իսկ օրենքով սահմանված պարտականությունը: Դատախազության՝ այլ մարմինների վարքագծով պարտադրված

անորոշ ժամկետով պասիվությունը նաև վտանգավոր է գործնական առումով, քանի որ կարող է ստեղծել պետական միջոցների կորսման անդառնալիության վտանգ: Անհրաժեշտ է, այսպիսով, ողջամիտ ժամկետը, ինչպես դատախազական ներգործության մյուս միջոցների դեպքում է, փոխարինել կոնկրետ, օրինակ՝ մեկ ամիս ժամկետով՝ դատախազի կողմից դատավարական ժամկետները բաց թռնելու և այլ հնարավոր ռիսկերից խուսափելու համար:

Բացի այդ, պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու հիմք տվող փաստերի վերհանման ուղիները 2-րդ մասով անհարկի սահմանափակված են միայն դատախազի կողմից դրանք հայտնաբերելու տարբերակով, այսինքն՝ նախատեսված չէ հայց ներկայացնելու լիազորված մարմինների կողմից՝ այդ միջնորդությամբ դատախազությանը դիմելու հնարավորությունը: Այս առումով, արդյունավետ լուծումներ էին տրված Դատախազության մասին 2007թ. օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որով սահմանվում էր հետևյալը՝

«2. Դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է միայն, եթե՝

... 3) դատախազին հայց հարուցելու միջնորդությամբ է դիմել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը...»:

Նման հնարավորությունից պետք չէր հրաժարվել, քանի որ այդ հնարավորության իրացումը մեծապես նպաստում էր և կնպաստի պետական շահերի պաշտպանության պրակտիկայի միասնականությանը՝ դատախազական հսկողության միջոցով: **Այսպիսով, անհրաժեշտ է Դատախազության մասի օրենքի 2-րդ մասը լրացնել մեջբերված նորմով:**

2. Դատախազության մասին օրենքի 29-րդ հոդվածի 3-7-րդ մասերի համաձայն՝

«3. Եթե դատախազը գտնում է, որ առկա են բավարար հիմքեր պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար, ապա իրավունք ունի մինչև հայց հարուցելը նախազգուշացնելու պետական շահերին վնաս հասցրած անձին վնասը կամովին հատուցելու մասին:

4. Սույն հոդվածի իմաստով՝ հայց հարուցելու իրավասությունն ընդգրկում է այն բոլոր իրավունքների ու պարտականությունների շրջանակը, որոնք դատավարական օրենքով վերապահված են հայցվորին: Որպես պատասխանող՝ դատախազը կարող է հանդես գալ միայն իր հարուցած՝ պետական շահերի պաշտպանության հայցի քննության շրջանակներում ներկայացված հակընդդեմ հայցերով:

5. Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում դատախազը համապատասխան հայց հարուցելու նպատակով իրավունք ունի՝

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, բացառությամբ դատարանների, պետական (պետական բաժնեմասով) կազմակերպություններից պահանջելու և ստանալու հայց հարուցելու համար անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ:

2) անվճար օգտվելու ծառայողական նպատակներով օգտագործվող տեղեկատվական տվյալների բազայից (այդ թվում՝ էլեկտրոնային):

3) պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին անհրաժեշտության դեպքում ներգրավելու համապատասխան մասնագետի կամ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության):

6. Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով սահմանված իրավական ակտերը, փաստաթղթերը և այլ տեղեկությունները համապատասխան մարմինները պարտավոր են դատախազին տրամադրել ողջամիտ ժամկետում:

7. Եթե սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված մարմինները և կազմակերպությունները պետության գույքային շահերի պաշտպանության հայց են ներկայացնում դատարան, կամ նրանց դեմ պետության գույքային շահերին առնչվող հայց է ներկայացվում, որոնցով հայցագնի չափը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափը, ապա այդ մարմինները և կազմակերպությունները հայցի և գործով կայացված դատական ակտի (բացառությամբ միջանկյալ դատական ակտի) մասին տեղեկատվություն են ներկայացնում գլխավոր դատախազություն՝ հայցադիմումը ներկայացնելուց (ստանալուց) կամ դատական ակտն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում...»: (29-րդ հոդվածը լրաց. 16.04.20 ՀՕ-245-Ն):

29-րդ հոդվածի 3-7-րդ մասերի հետ կապված, միջազգային չափորոշիչների և սեփական փորձից ելնելով, հիմնական մտահոգությունները և առաջարկները հետևյալն են՝

1. Հողվածի 3-րդ մասում սահմանված դատախազի լիազորությունը՝ մինչև հայց հարուցելը նախազգուշացնելու պետական շահերին վնաս հասցրած անձին վնասը կամովին հատուցելու մասին, որը դատախազն իրականացնում է այն դեպքում, եթե գտնում է, որ առկա են բավարար հիմքեր պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար, անհրաժեշտ է որոշակիացնել երկուստեք ժամկետների վերաբերյալ նորմեր ամրագրելով: Մասնավորապես, **պետք է սահմանվի, թե պետական շահերին վնաս հասցված լինելու փաստը դատախազի կողմից պարզվելուց հետո որքան ժամկետում է դատախազը պարտավոր դիմել այդ վնասը հասցրած անձին, և այնուհետև՝ որքան ժամկետի ընթացքում է այդ անձը պարտավոր իր դիրքորոշումը հայտնել դատախազի առաջարկության/նախազգուշացման կապակցությամբ, և այդ անձի կողմից դատախազի արված առաջարկությունը մերժելուց կամ արդեն իսկ սահմանվելիք ժամկետը լրանալուց հետո որքան ժամկետում է դատախազը պարտավոր լինելու ներկայացնել հայցը:** Սրանք կարևոր կարգավորումներ են՝ երկուստեք կոռուպցիոն ռիսկերից խուսափելու համար, ինչպես նաև՝ մեթոդական առումով՝ երաշխավորելու, որպեսզի հստակ կարգավորվի դատախազի կողմից հայցի հիմքերի հայտնաբերման ու դրանց հիման վրա ի պաշտոնե օրենքով նախատեսված գործողություններ իրականացնելու, տվյալ դեպքում՝ պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու գործընթացը:

Նախագծի 29-րդ հոդվածի 3-րդ մասով դատախազի լիազորությունը մինչև հայց հարուցելը նախազգուշացնել պետական շահերի պաշտպանությանը վնաս հասցրած անձին՝ վնասը կամովին հատուցելու մասին ներկայացվում է «որպես դատախազի **իրավունք**, և առկա չէ որևէ չափանիշ, թե ինչպես է որոշելու դատախազը, որ դեպքում նախազգուշացնի, որ դեպքում՝ ոչ: Ընդ որում պարզ չէ «նախազգուշացնել» եզրույթը ինչպես պետք է մեկնաբանվի, ինչ ժամկետներ են տրամադրվելու պատասխանող անձին, հաշտություն կնքելու հնարավորություն առկա է, թե՛ ոչ և այլն: Կարծում ենք, որ նման իրավունքի սահմանումը իր մեջ պարունակում է կոռուպցիոն ռիսկ: Հետևաբար անհրաժեշտ է հստակեցնել, թե որ դեպքում է դատախազը լիազորված նախազգուշացնել պատասխանող անձին, ինչ ժամկետներ կարող են տրամադրվել և այլն»¹⁹⁰:

2. 29-րդ հոդվածի 4-րդ մասը անհարկի սահմանափակում է դատախազի մասնակցությունը միայն հայցվորի կարգավիճակով և նախատեսում միայն մեկ բացառություն, այն է՝ որ դատախազը կարող է որպես պատասխանող հանդես գալ միայն իր իսկ ներկայացված հայցի դեմ և շրջանակներում հակընդդեմ հայց ներկայացվելու դեպքում: Դատախազության մասին 2007թ. օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասը, միջազգային չափորոշիչներին, մասնավորապես՝ կողմերի մրցակցության սկզբունքին, ավելի համահունչ կերպով, սահմանում էր հետևյալը՝

«Սույն հոդվածի իմաստով հայց հարուցելու իրավասությունն ընդգրկում է այն բոլոր իրավունքներն ու պարտականությունները իրականացնելը, որոնք դատավարական օրենքով վերապահված են հայցվորին, դիմողին կամ պատասխանողին»:

Սրանով ապահովվում էր դատախազի մասնակցությունը բացի հայցվորից՝ նաև այլ կարգավիճակներով, ինչը կարևոր է պետական շահերը ոչ հայցային վարույթներում պաշտպանելու և հայցային վարույթների բոլոր փուլերում պաշտպանելու համար:

29-րդ հոդվածի 4-րդ մասի հետ համակարգային սերտ կապի մեջ է գտնվում նույն հոդվածի 5-րդ մասը, որը վերաբերում է դատախազի կողմից՝ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելը նախապատրաստելիս անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ ստանալու, ծառայողական նպատակներով

¹⁹⁰ Տես՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, 2016, էջ 3:

օգտագործվող տեղեկատվական տվյալների բազայից (այդ թվում՝ էլեկտրոնային) անվճար օգտվելու և պետական բյուջեի հաշվին անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագետի կամ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության) ներգրավելու դատախազի լիազորությանը: 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի, ինչպես նաև 27-րդ հոդվածի (**Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը**) համակարգային վերլուծության համար, կարևոր ենք համարում մեջբերել քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազության դերի ու լիազորությունների վերաբերյալ նաև ՄԻԵԴ մի քանի առանցքային դիրքորոշումներ ևս, մասնավորապես՝ կապված այս ոլորտում դատախազական լիազորությունների այն սահմանափակման հետ, որը անմիջականորեն արտահայտված չէ ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարականում և վերջինիս Բացատրական հուշագրում, և որի էությունն այն է, որ **դատախազը չպետք է իրացնի պետաիշխանական լիազորություններ՝ որպես քաղաքացիական կամ վարչական դատավարության կողմ հանդես գալու ընթացքում**¹⁹¹, այլ պետք է հանդես գա որպես **հավասար, մրցակցող կողմ և պարտավոր է դատավարության մյուս կողմին հասու դարձնել այն տեղեկատվությունը, որը, որպես պետական իշխանությունը կրող սուբյեկտ ստացած լինելով, օգտագործելու է որպես դատավարության կողմ, այսինքն՝ մյուս կողմի դեմ**¹⁹²:

Հայաստանի Հանրապետությունում, ըստ 29-րդ հոդվածի 4-րդ դա, այդ կողմը գրեթե միայն հայցվորն է, մինչդեռ ԵԽ մի շարք երկրներում, օրինակ՝ Ֆրանսիայում, նույն հարցերով դատախազը կարող է հանդես գալ նաև պատասխանողի դերում: **Կարծում ենք, կողմերի հավասարության սկզբունքը լիովին չի ապահովվում, եթե դատախազությունը իրավունք ունենալով հայց ներկայացնել դատարան մեկ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի դեմ, որպես պատասխանող է հանդես գալիս միայն իր իսկ կողմից ներկայացված հայցին հակընդդեմ հայց ներկայացվելու դեպքում:** Սրանով իսկ անհավասարություն է դրվում կողմերի միջև և բավարար երաշխիքներ չեն տրամադրվում մյուս հավանական կողմին: Դատախազության մասին 2007թ. խմբագրությամբ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասը ավելի լայն երաշխիքներ էր ընձեռում դատախազի և դատավարության մյուս կողմերի համար, ապահովելով դատախազի մասնակցությունը նաև որպես պատասխանող՝ այն բնույթի գործերով, որոնցով նույն դատախազը իրավունք ուներ հանդես գալ որպես հայցվոր՝ նշելով, մասնավորապես, որ՝ «սույն հոդվածի իմաստով հայց հարուցելու իրավասությունն ընդգրկում է այն բոլոր իրավունքներն ու պարտականությունները իրականացնելը, որոնք դատավարական օրենքով վերապահված են հայցվորին, **դիմողին կամ պատասխանողին**»: Սրանով ապահովվում է դատախազի մասնակցությունը բացի հայցվորից՝ նաև այլ կարգավիճակներով, ինչը կարևոր է պետական շահերը ոչ հայցային վարույթներում պաշտպանելու և հայցային վարույթների բոլոր փուլերում պաշտպանելու համար:

Հակառակ դեպքում անհիմն հայց ներկայացրած դատախազը, ում դեմ ներկայացվել է հակընդդեմ հայց, միշտ կարող է հրաժարվել հայցից և խուսափել քաղաքացիաիրավական պատասխանատվությունից՝ հայցից հրաժարվելու հիմքով վարույթը դադարելու արդյունքում: Այսպիսով, անհրաժեշտ է, վերականգնել 2007թ. Օրենքի նշված նորմը՝ **կողմերի հավասարությունն ապահովելու համար:**

¹⁹¹ Обзор судебной практики..., էջ 7

¹⁹² Իր հերթին, ՄԻԵԴ-ը դատախազության, մասնավորապես՝ այս ոլորտում ունեցած լիազորություններին անդրադառնալով, հենվում է ԵԽ մարմինների՝ ՎՀ, ՆԿ, ԵԽԽՎ և այլ աղբյուրների վրա, տես, օրինակ՝ *Մենչինսկայան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության* Menchinskaya v. Russia), № 42454/02, 15.01.2009 թ, կետ 35, Обзор судебной практики..., էջ 11:

Ինչ վերաբերում է Դատախազության մասին օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ հայց հարուցելու համար դատախազի կողմից բյուջեի հաշվին նշված ռեսուրսներից օգտվելու հնարավորությանը, ապա այն նույնպես կրում է դատախազի՝ «սովորական հայցվոր» լինելու գաղափարին և միջազգային չափորոշիչին հակասելու լուրջ ռիսկեր և պետք է լրացվի դատավարության մյուս կողմի համար մրցակցային հավասար մասնակցության համապատասխան երաշխիքներով: Խնդիրը նրանում է, որ փաստացի, կողմերից մեկը՝ դատախազը, պետական բյուջեի հաշվին ձեռք է բերում ապացույցներ՝ ի սկզբանե անհավասար վիճակում թողնելով մյուս կողմին: Այս հարցը ՄԻԵԴ-ի կողմից քննարկվել է մի քանի գործերով՝ (տես՝ հիշատակված *Ջինսայթի գործը*, նաև՝ *Վասիլեսկուն ընդդեմ Ռուսիայի գործով (Vasilescu v. Romania)* 1998թ. մայիսի 22-ի վճիռը)¹⁹³: Այս անհավասարությունը պետք է հստակ հավասարակշռվի Դատախազության մասին օրենքի նույն հոդվածում՝ սահմանելով առնվազն այդ ապացույցները նախապես մյուս կողմին հանձնելու և նրանց կողմից դրանց ծանոթանալու համար, անհրաժեշտության դեպքում դրա համար ժամկետ տրամադրելով, ինչը բավարար երաշխիք կարող է լինել ՄԻԵԴ-ի համար (տես՝ *Կրեսն ընդդեմ Ֆրանսիայի (Kress v. France)* 39594/98, ECtHR, 2001-VI, GC) Մեծ պալատի վճիռը, § 76, և *ԱՊԲՊ-ն ընդդեմ Ֆրանսիայի (APBP v. France)*, № 38436/97, 2002թ. մարտի 21-ի վճիռը, § 25-26)¹⁹⁴:

Այսպիսով, դատախազի՝ որպես կողմ մասնակցելը թույլատրելի է միայն մրցակցության լիարժեք ապահովման դեպքում, այն է՝ եթե՝

- վերականգնվի (29-րդ հոդվածի 4-րդ մասում) դատախազի՝ նաև որպես պատասխանող ներգրավվելու հավանականությունը անկախ իր կողմից հայց ներկայացվելու հանգամանքից, եթե դատախազական ներգործության հետևանքով առաջացել է իր ապագա հայցի հավանական պատասխանողի կողմից դատախազության դեմ հայց ներկայացնելու հիմքեր (օրինակ՝ եթե տնտեսվարող սուբյեկտը վնասներ է կրել 29-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատախազի լիազորության, այն է՝ պետական շահերին վնաս հասցրած անձին մինչև հայց հարուցելը վնասը կամովին հատուցելու մասին նախազգուշացման արդյունքում, ասենք՝ կտրուկ ընկել է այդ պատճառով ընկերության բորսային արժեքը, որակյալ աշխատողները լքել են ընկերությունը և այլն:
- ամրագրվի ((29-րդ հոդվածի 5-րդ մասում), որ դատախազը պարտավոր է ի պաշտոնե և բյուջեի հաշվին ստացված ամբողջ տեղեկատվությունը տրամադրել դատավարության մյուս կողմին:

Միայն այդ մրցակցային երաշխիքներն ապահովելու դեպքում թույլատրելի կլինի էլ ավելի լիազորել դատախազությանը՝ ստեղծելով արդեն դատախազական միջամտության արդյունավետության իրական երաշխիքներ: Մասնավորապես, պետական շահերի պաշտպանության ոլորտում դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, պետք է է ապահովել դատախազի կողմից հայցվող տեղեկատվության դատախազին տրամադրվելու՝ անխուսափելիությունը որոշակի ֆիքսված ժամկետում: Այս առումով, առնվազն 2 փոփոխություն է պետք կատարել 29-րդ հոդվածի 5-րդ մասում և ապա 1 փոփոխություն 6-րդ մասում՝ նախատեսելով, որ՝

- պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հիմքերի առկայության դեպքում նյութեր նախապատրաստելու նպատակով դատախազն իրավունք ունի

¹⁹³ Обзор судебной практики..., էջ 8

¹⁹⁴ Обзор судебной практики..., էջ 8

այդ տեղեկությունները և ապացույցները ստանալ իր որոշմամբ (ինչն ամրագրված էր Դատախազության մասին 2007թ. օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասում), և

- 29-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում՝ «1) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, բացառությամբ դատարանների, պետական (պետական բաժնեմասով) կազմակերպություններից պահանջելու և ստանալու հայց հարուցելու համար անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ» դրույթում «պետական բաժնեմասով» բառերից հետո ավելացնել «անկախ դրա չափից», ապա ավելացնելով իր որոշմամբ նաև «պետական նշանակության ընկերություններից անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ» ստանալու դրույթը, ինչը առավել քան կարևոր է դատախազական հսկողությունը այն ռազմավարական ուղղություններով ապահովելու համար, որտեղ մենաշնորհային օպերատոր ընկերությունների 100 տոկոս բաժնետոմսերը, հանցավոր գործարքների արդյունքում, տրվել են մասնավոր սուբյեկտներին:
- 29-րդ հոդվածի 6-րդ մասում, որտեղ նշվում է, որ «6. Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով սահմանված իրավական ակտերը, փաստաթղթերը և այլ տեղեկությունները համապատասխան մարմինները պարտավոր են դատախազին տրամադրել **ողջամիտ ժամկետում**», նախատեսել կոնկրետ/ֆիքսված ժամկետ, թեկուզ՝ պատճառաբանված երկարացման հնարավորությամբ՝ երաշխավորելու իրավունքի որոշակիությունը և դատախազության իրավաչափ պահանջով այդ ակտերը և փաստաթղթերը և այլ տեղեկությունները դրանք տիրապետողների կողմից տրամադրելու պարտականության կանխատեսելի իրականացումը):

3. Չափազանց խնդրահարույց է 29-րդ հոդվածի 7-րդ մասի այն դրույթը, որի համաձայն՝ եթե 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված մարմինները և կազմակերպությունները պետության գույքային շահերի պաշտպանության հայց են ներկայացնում դատարան, կամ նրանց դեմ պետության գույքային շահերին առնչվող հայց է ներկայացվում, **որոնցով՝** այսինքն՝ այդ մարմինների և կազմակերպությունների թե որպես հայցվոր, և թե որպես պատասխանող հանդես գալու դեպքում, հայցագնի չափը գերազանցում է ՀՀ կառավարության սահմանած չափը, ապա այդ մարմինները և կազմակերպությունները հայցի և գործով կայացված դատական ակտի **(բացառությամբ միջանկյալ դատական ակտի)** մասին տեղեկատվություն են ներկայացնում գլխավոր դատախազություն՝ հայցադիմումը ներկայացնելուց (ստանալուց) կամ դատական ակտն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Այս դրույթները անընդունելի են, քանի որ՝

- Կառավարության հայեցողությամբ սահմանված չափից ելնելով, դատախազությունը զրկվում է իր սահմանադրական գործառույթը իրականացնելու հնարավորությունից, և ըստ էության, տեղյակ չի լինում, թե արդյոք, օրինակ՝ ակնհայտ ցածր հայցային պահանջով հայց է ներկայացվել դատարան՝ դատախազական հսկողությունից խուսափելու համար, և

- Դատախազությանը չեն ներկայացվում միջանկյալ դատական ակտերը, օրինակ՝ հայցային ապահովման միջոցներ կիրառելու, մասնավորապես՝ պատասխանողի գույքի վրա կալանք դնելու մասին որոշումները՝ անկախ հայցագնի չափից, որոնք նույնպես կիրառվում են նշված մարմինների ու կազմակերպությունների միջնորդությամբ, հետևաբար՝ դրանցից դատախազությունը միշտ կարող է և պետք է իմանա, թե ինչու է այս կամ այն լիազորված մարմինը կամ կազմակերպությունը իր հայեցողությամբ՝ միջնորդել դատարանին ընտրելու տվյալ հայցային ապահովման միջոցը, տվյալ չափով և ընդհանրապես, ինչու է հայցագնի չափը այնքան, որքան ներկայացվել է: Լիազորված այս մարմինների ու կազմակերպությունների կողմից ներկայացված հայցերի քննության

ընթացքում դատարանի կայացրած միջանկյալ դատական ակտերը, հաշվի առնելով դատավարությունների ժամկետները, կարող են, գույքային վնասների տեսակետից, նույն հետևանքներն ունենալ, ինչ որ դատական վերջնական ակտերը: **Այսպիսով, անհրաժեշտ է սահմանել, որ պետական շահերի հայցով դատարանի կողմից կայացված բոլոր ակտերը, այդ թվում՝ միջանկյալ, հայց ներկայացրած պետական մարմինների և կազմակերպությունների կողմից դատախազությանն են ներկայացվում ստանալուց հետո հնգօրյա ժամկետում:**

3. Դատախազության մասին օրենքի 29-րդ հոդվածի հետ համակարգային փոխկապակցվածության մեջ է գտնվում օրենքի 27-րդ հոդվածը (Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը), որի վերաբերելի նորմերը՝ 3-րդ և 6-րդ մասերը սահմանում են հետևյալը

«3. Դատարանների՝ քաղաքացիական կամ վարչական գործով պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող է բողոքարկել դատական քննությանը մասնակցած դատախազը կամ վերադաս դատախազը:

... 6. Պետական շահերին վերաբերող քաղաքացիական կամ վարչական այն գործով, որում դատախազությունը մասնակցություն չի ունեցել, օրինական ուժի մեջ մտած, ինչպես նաև օրինական ուժի մեջ չմտած դատական ակտը կարող է բողոքարկվել միայն այն դեպքում, եթե նշված գործով ներգրավված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, ի պատասխան դատախազության հարցմանը, հայտնել է, որ չի բողոքարկելու համապատասխան դատական ակտը: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը դատախազության՝ սույն մասով նախատեսված հարցմանը պարտավոր է պատասխանել հարցումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում»:

Այս դրույթները սխալ են թե մեթոդական, թե զուտ իրավական տեսակետից, այն է՝

1. Անհարկի նվազեցնում է հսկողության ինտենսիվությունը: Եթե դատախազությունը հայտնաբերել է բողոք բերելու, այսինքն՝ իր սահմանադրական պարտականությունը կատարելու անհրաժեշտություն, այդ լիազորության իրացման հեռանկարները չպետք է սահմանափակվեն նշված մարմինների հայեցողությամբ:

2. Նախ, դատախազությունը երբեք չի իմանա այն հայցադիմումներով դատական ակտերի մասին, որոնց հայցագիներ չի գերազանցել Կառավարության սահմանած չափը: Այնուհետև, անգամ եթե այդ չափը գերազանցվել է, և դատախազությունը 29-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված հնգօրյա ժամկետում ստացել է դատական ակտը, ապա վերաքննության սահմանները հաշվի առնելով, ինչպես նաև հաշվի առնելով, որ սովորաբար դատական վերջնական ակտերը արտաքրեական արդարադատության ոլորտում կայացվում են հայց ներկայացնելուց տարիներ հետո, պետք է ասել, որ դատախազության կողմից այս գործերով նույնպես բողոք բերելու, հետևաբար՝ նաև հանրային շահը սպասարկելու, պետությանը պատճառված վնասը վերականգնելու հասարակության իրավունքը դառնում է տեսական ու ոչ պատրանքային:

Ամենահետաքրքիրն այն է, որ օրենսդրությունը որևէ շեմ չի սահմանում դատախազության համար, թե որ դեպքերում է, երբ պետական շահի հայցով կայացված առաջին աստիճանի դատարանի որոշման դեմ դատախազը կարող է բերել վերաքննիչ բողոք, սակայն սահմանում է, որ դատախազին դատական վերջնական ակտերը հայց ներկայացրած մարմինների կողմից դատախազին հայտնվում են միայն որոշակի հայցագնային շեմը անցնելու դեպքում: Իսկ եթե դրան ավելացնենք, որ հայցային այդ գիներ սահմանում է այն նույն Կառավարությունը, այսինքն՝ գործադիրը, որի մի մաս են հանդիսանում նաև այդ հայցերը ներկայացնող պետական մարմինները, ապա ակնհայտ է դառնում զուտ գործադիր մարմինների միջոցով դատախազությանը խաղից դուրս դնելու որդեգրված ռազմավարությունը:

Այսպիսով, անհրաժեշտ է սահմանել, որ դատախազությունը տեղյակ է պահվում նշված մարմինների կողմից դատարան ներկայացված բոլոր պետական շահերով բոլոր հայցերի մասին՝ անկախ հայցագնից, և սեփական նախաձեռնությամբ կարող է որոշել այդ հայցերի՝ դատական քննությանը «համատեղ» մասնակցելու, ապա և՛ բողոք ներկայացնելու հարցը՝ անկախ մասնակցության հանգամանքից՝ դատական ակտի բողոքարկման հիմքերի առկայության դեպքում՝ ընդհանուր կանոններով:

ԵՄ ՆԿ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագիրը (կետ 36-րդ) նշում է, որ՝
«Որոշ պետություններում դատախազը կարող է հանդես գալ որպես վարույթի հիմնական կողմ (հայցվոր, դիմող կամ պատասխանող) կամ միանալ կամ մասնակցել վարույթին կամ երկուսը միասին»:

Բողոքարկման իրավունքի հետ կապված, Հանձնարարականի 16-րդ կետը և դրա առթիվ Հուշագրի 51-րդ կետը, **ի տարբերություն Դատախազության մասին օրենքի նշված կարգավորումների, սահմանում են հետևյալը՝**

«16. Դատախազի կողմից բողոք բերելու կամ որևէ այլ միջոցով դատարանի որոշման վերանայման համար դիմելու իրավունքը որևէ կերպ չպետք է տարբերվի այն միջոցներից, որոնք հասու են վարույթի մյուս կողմերին և ենթակա է նույն պայմաններին, ներառյալ բողոք ներկայացնելու համար նախատեսված սահմանափակումները»:

«... 51.16-րդ կետում ամրագրված սկզբունքի նպատակն է որքան հնարավոր է դատախազին նույն պայմանների մեջ դնելը, որոնք գոյություն ունեն մյուս կողմերի համար՝ դատարանի որոշման բողոքարկման կամ վերանայման իրավունքի առումով»:

Մյուս կողմից, պետական շահերի հայցերը հարուցելուց կամ այլ մարմինների ու կազմակերպությունների հարուցված հայցերի դատական քննությանը մասնակցելուց հրաժարվելը հիմք չէ, որպեսզի նշված մարմիններն ու կազմակերպությունները հրաժարվեն հայցից կամ բողոքարկեն հայցի քննության արդյունքում կայացված դատական ակտերը: Մասնավորապես, ԵՄ ՆԿ (2012)11 Հանձնարարականի 10-րդ կետը նշում է, որ՝

«10. Քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազի լիազորությունները չպետք է լինեն այնպիսին, որ սահմանափակեն որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից հայց հարուցելու կամ որպես պատասխանող հանդես գալու իրավունքը՝ իր շահերը անկախ և անկողմնակալ դատարանում պաշտպանելու նպատակով, անգամ՝ այն գործերով, երբ դատախազը վարույթի կողմ է կամ մտադիր է ներգրավվել վարույթին»:

Այս կետի հետ կապված Բացատրական հուշագիրը (կետ 40-րդ) նոր պահանջներ է առաջադրում, նշելով, որ դատախազի մասնակցությունը այդ դեպքերում չպետք է վնասի կողմերի բողոք ներկայացնելու իրավունքին կամ ստեղծի նման տպավորություն, ինչպես նաև, որ դատախազի կողմից այս առթիվ կայացվող որոշումները պետք է լինեն պատճառաբանված և հաղորդվեն կողմերին»:

Վերջապես ԵՄ ՆԿ (2012)11 Հանձնարարականի 12-րդ կետը նախատեսում է, որ «հայց հարուցելու կամ որպես պատասխանող հանդես գալու դատախազի լիազորությունները չպետք է խաթարեն վեճի կողմերի մրցակցության սկզբունքը», իսկ նույն կետի վերաբերյալ Բացատրական հուշագրի 41-րդ կետը պարունակում է մի պարզաբանում, որին հստակ հակասում է Դատախազության մասին ՀՀ օրենքը, մասնավորապես՝ դատախազի կողմից պետական շահերով բողոք ներկայացնելը անմիջական տուժողի հայեցողությամբ պայմանավորելու մասով, նշելով, մասնավորապես, որ՝

«Ինչպես և մյուս կողմերը, **դատախազն իրավունք ունի բողոքարկելու այն բոլոր որոշումները, որոնք, իր կարծիքով, անհիմն են:** Որոշ իրավական համակարգերում դատախազը կարող է նաև բողոքարկել կամ դատական վերանայման համար դիմում ներկայացնել հանուն հանրային շահերի՝ անգամ այն գործերով, որոնցում հասել է

հաջողությամբ՝ թե որպես հայցվոր, թե որպես պատասխանող և անգամ՝ որպես վարույթին «միացած» կողմ: Այս դեպքերում, դատախազի նկատմամբ կիրառվում են մյուս կողմերի համար սահմանված ընդհանուր կանոնները:

Ինչպես տեսնում ենք, դատախազի կողմից՝ իր սահմանադրական լիազորվածության տիրույթում կայացվող դատական ակտերի բողոքարկման իրավունքը սահմանափակված չէ գործադիրի հայեցողությամբ սահմանված հայցագնով, ինչպես նաև՝ լիազոր մարմինների ու կազմակերպությունների կողմից բողոք ներկայացնելու ցանկությամբ:

Հասարակության՝ իբրև իրավասուր ընդհանրության շահերի ներկայացվածության խնդիրները Հայաստանում. Actio popularis և այլ հարցեր

Վերևում՝ 2.5.2.1 և 2.5.2.1 կետերում արդեն իսկ նշվեց, որ դատախազության միասնական լեգիտիմությունից ելնելով ու միջազգային չափորոշիչների համաձայն, քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազի մասնակցությունը արդարացված է **հանրային շահերով, որի մաս են կազմում թե պետական և այլ կառույցների (օրինակ՝ հիմնադրամների), թե խոցելի խմբերին պատկանող անհատների մասնավոր շահերը:**

ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագիրը (կետ 36-րդ) նշում է, որ՝

«Դատախազը կարող է նաև լիազորված լինել առանձին գործերով ներկայացնելու անհատներին և այդ դեպքերում հանդես գալ որպես վարույթի հիմնական կողմ»:

Այս առումով, **Դատախազության մասին օրենքի 29-րդ հոդվածը պետք է լրացվի՝ նախատեսելով ՔՀԿ-ների կողմից ներկայացված «հանրային շահերի» (actio popularis) հայցերով դատարանում նրանց միանալու հնարավորությունը:** Իրավունքի փիլիսոփայության համաձայն, այն դեպքերում, երբ ներքին աստիճանակարգությունը պատասխանատվության մեխանիզմները չեն ապահովում պատասխանատվություն, քաղաքացիական հասարակությունը ներքևից է կատարում այդ գործառույթը¹⁹⁵: **Նախևառաջ, այդ նպատակով, անհրաժեշտ է Հասարակական կազմակերպությունների մասին օրենքում, ինչպես նաև՝ քրեական, քաղաքացիական և վարչական դատավարությունների օրենսգրքերում նախատեսել այս կարգով հայցերի կամ հնարավորությունը:** Այս կարգի «ներքևից եկող վերահսկողությունը հիմնականում ձայն և մասնակցություն ունենալու մասին է և կարող է, ընդլայնվելու դեպքում, խթանել չափորոշիչներ սահմանելու և կատարողականը մշտադիտարկելու գործընթացը: Դրա հիմնական սկզբունքներից մեկն է այն, որ թափանցիկությունը և տեղեկատվության մատչելիությունը բարձրացնում են հաշվետվողականության մակարդակը»¹⁹⁶: Հակառակ դեպքում, Հայաստանի Հանրապետությունը չի կարողանալու ամբողջությամբ ապահովել ՔՔԻՄԴ 2-րդ մասի 3-րդ կետով ամրագրված պետական պաշտոնյաների՝ ի պաշտոնե գործելիս կատարված խախտումների համար իրավունքի վերականգնման արդյունավետ միջոց տրամադրելու պարտականությունը:

Խոցելի խմբերի շահերի՝ որպես հանրային շահի պաշտպանության հայց հարուցելով կամ միանալով ներկայացված հայցին, դատախազն պաշտպանում է ոչ թե կոնկրետ անձի

¹⁹⁵ Гегель, Философия права, М. 1990, с. 258

¹⁹⁶ Ana Bellver, Daniel Kaufman: *Transparenting Transparency: Initial Empirics and Policy Applications*, Paper presented at IMF conference on transparency and integrity, 6-7 July 2005, Washington, DC: World Bank. Այս կոռելյացիան իր մեջ բազմաթիվ միջանկյալ քայլեր է պարունակում, որոնցից շատերը կարող են թուլացնել այն կապը, որ գոյություն ունի թափանցիկության, հաշվետվողականության և հանրային ապրանքների և ծառայությունների հետագա մատուցումը կատարելագործելու միջև, տես՝ նույն տեղում:

մասնավոր, այլ հանրության՝ տվյալ, մասնավորապես՝ խոցելի խմբին պատկանող անձի իրավունքներն ու շահերը պաշտպանելու հանրային շահը: Այս դեպքերում դատախազը կարող է շարունակել հայցի պաշտպանությունը՝ անգամ հանրային նշանակություն ունեցող մասնավոր շահի իրավատիրոջ կողմից իր շահերին հետամուտ չլինելու դեպքում: Այդ մասին հստակ նշում է ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագրի 48-րդ կետը՝

«Դատախազը որևէ պարտականություն չունի շարունակելու ներկայացնել կողմին, եթե գտնում է, որ դատարանների որոշումներից էլնելով կամ որևէ այլ հիմնավոր պատճառով, ավելի ճիշտ է հրաժարվել վարույթին մասնակցելուց: Անգամ եթե այդ անձը հետապնդում է սեփական շահերը, կարող է շոշափվել սկզբունքային մի այնպիսի խնդիր, որը բացասաբար է անդրադառնում հանրային կամ ընդհանուր շահի վրա, որի դեպքում դատախազը կարող է շարունակել մնալ վարույթում»:

Այսպիսով, ինչպես և պետական շահերի պաշտպանության հարցով լիազորված պետական մարմինների և այլ կազմակերպությունների դեպքում, խոցելի խմբերի շահերը ներկայացնելիս, դատախազը հանրային կամ ընդհանուր շահ հետապնդելով, ինքնուրույն է որոշում՝ հարուցել վարույթ, թե ոչ, միանալ արդեն հարուցված վարույթին կամ դուրս գալ այդ վարույթից: Իր այս որոշումները դատախազը բոլոր դեպքերում կայացնում հանրային շահից էլնելով և հանուն հասարակության և իր այդ լիազորությունների իրացումը չի կարող խոչընդոտվել այդ մարմինների, կազմակերպությունների կամ անհատների հայեցողությամբ:

Վարույթից հեռանալու դեպքում, սակայն, դատախազը պետք է, ԵԽ ՆԿ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագրի 49-րդ կետի համաձայն, պետք է համապատասխան անձին ժամանակին հայտնի իր այդ մտադրության մասին, իսկ Հանձնարարականի 15-րդ կետով ամրագրվում է այդ անձի անունից հանդես գալու դատախազի որոշման մասին այդ անձին տեղյակ պահելու, այլ ոչ թե համաձայնությունը ստանալու պարտականությունը:

Դատախազի նման մասնակցությունը շատ կարևոր է հատկապես այն դեպքերում, երբ խոցելի խմբին պատկանող անձի կամահայտնությունը կամ դրա բացակայությունը կարող է կրել պարտադրված բնույթ կամ լինել առաջին անչափահասների և անգործունակների դեպքում, հատկապես՝ երբ խնդիրը կայանում է վերջիններիս իրավունքները հենց նրանց նկատմամբ խնամքի պարտավորություն կրող անձանց կամ կազմակերպությունների կողմից խախտելու մեջ: **Հայաստանում այս կարևորությունն առկա է, մասնավորապես, որդեգրումների և հոգեբուժարանների պացիենտների համար:**

Արտաքրեական արդարադատության ոլորտում դատախազական համակարգի գործունեության էվոյուցիան փաստում է, որ ԽՍՀՄ-ում եղած մեկ ծայրահեղությունից, այն է՝ բոլորի կողմից օրինականության պահպանման նկատմամբ դատախազական «ընդհանուր հսկողությունից» այսօր հանգել ենք մեկ այլ ծայրահեղության, երբ, ըստ էության, մասնավոր շահերի իրացումը, այդ թվում՝ ակնհայտ հանրային և պետական, այդ թվումք ռազմավարական մեծ ազդեցություն ունենալու պարագայում, դուրս է որևէ անկախ, միասնական մարմնի հսկողությունից:

Չպետք է մոռանալ նաև, որ արտաքրեական արդարադատության ոլորտում դատախազության իրավաչափ լիազորվածությունը և արդյունավետությունը իրենց հերթին երաշխիքներն են քրեական ոլորտում դատախազության հիմնական գործառույթներից մեկի՝ քրեական հետապնդման հարուցման համար, երբ դատախազական հսկողության արտաքրեական ոլորտում ենթակա ընդլայնված ծավալների շրջանակներում ընդլայնվում են նաև քրեական ոլորտի վերաբերելի փաստերի, այն է՝ առերևույթ

հանցագործությունների երաշխիքներ: Այս կապի կարևորության մասին է վկայում ԳԴ ԱԺ 2020թ. Հաղորդումը, որտեղ, մասնավորապես, նշվում է, որ՝

«Քրեական գործերը հարուցվել են, մասնավորապես, պետական միջոցներով իրականացված առանձին, այդ թվում ստրատեգիական նշանակության օբյեկտների շինարարության և վերանորոգման ընթացքում կատարված յուրացումների ու վատնումների, օտարման ոչ ենթակա օբյեկտների ապօրինի օտարման, պետական կամ համայնքային սեփականության գույքի վարձակալության տրման, կառավարման, ներդրումային պրոտավորությունների կատարման, հանրապետական նշանակության հուշարձանների պահպանության, պետական գնումների ոլորտներում թույլ տրված չարաշահումների, էներգետիկ կայանների շահագործման խախտումներով միջոցներ չձեռնարկելու, ճանապարհաշինության ոլորտում փաստացի չկատարված կամ թերի կատարված աշխատանքները որպես ամբողջությամբ կատարված համարելու, անտառային և այլ հողերի կատեգորիաների փոփոխության, ձկան պաշարների պահպանության ոլորտներում թույլ տրված ապօրինությունների, բնական ռեսուրսների ապօրինի շահագործման, գնահատման և մրցութային ընթացակարգերի հանցավոր խախտումներով պետական սեփականության բազմաթիվ գույքերի մասնավորեցման, աղբահանության և սանմաքրման ծառայությունների ոլորտում պայմանագրային պարտավորությունների չկատարման պարագայում հանցավոր անգործություն ցուցաբերելու և բազմաթիվ այլ փաստերով»¹⁹⁷:

Եթե դատախազությունը, վերը նշված կամայականության դեմ առկա երաշխիքներով հանդերձ, հնարավորություն է ստանում հսկողություն իրականացնել ամբողջ հանրության համար վտանգավոր ու մանավանդ խոցելի խմբերի հետ կապված քրեական ոլորտից դուրս իրավահարաբերությունները, այն հնարավորություններ է ստանում նաև կանխելու որոշ հանցավոր կապերի ձևավորումը և գործադրումը քրեական ոլորտում: Կարծում ենք, օրինակ, որ ապօրինի որդեգրումների վերջերս Հայաստանում բացահայտված դեպքերը վկայում են այն մասին, որ հանցավոր փակ շղթաների պայմաններում իրավապահ մարմինները ամբողջությամբ զրկված են հանցագործության կատարման ռիսկերը ժամանակին՝ քրեական ոլորտից դուրս ժամանակին դիտարկելու՝ ու ըստ այդմ՝ այդ ռիսկերի նյութականացումը հանցագործությունների տեսքով կանխելու հնարավորությունից: **Այս ոլորտում դատախազության արտաքրեական միջամտության լիազորումը ամբողջությամբ բխում է ՀՀ կարիքներից և համապատասխանում է խոցելի անձանց, մասնավորապես՝ անչափահաս կամ այլ հատկանիշով խոցելի ծնողականների իրավունքների ու նրանց երեխաների կյանքի իրավուքի պաշտպանության հանրային շահին:**

Ընդունելով, իհարկե, որ ԽՍՀՄ ժամանակաշրջանի նախկին ընդհանուր հսկողության պարադիգմի վերականգնումը սխալ է, պետք չէ, մյուս կողմից՝ դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացումը կախվածության մեջ դրվի այլ մարմինների հայեցողությունից և նրանց ամբողջությամբ պահել «պետական աչքերից ու ականջներից հեռու»: Ստուգող մարմինները, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչ խոսք, պետք է հնարավորություն ունենան հայցով դիմել դատարանի, եթե պետական գույքային շահերը ոտնահարվել են: Սակայն, հաշվի առնելով նշված մարմինների բազմազանությունը, անհրաժեշտ է նաև, որպեսզի դատախազությունը, որպես միասնական կառույց, որն օժտված է պետական գույքային շահերը պաշտպանելու լիազորությամբ, կարողանա նաև ապահովել այդ շահերի պաշտպանության դատավարական, տվյալ դեպքում՝ քաղաքացիադատավարական եղանակների գործադրման միասնականությունը: Այդ միասնականությունը պետք է արտահատի պետության միասնական դիրքորոշումը՝ պետական շահերի պաշտպանության անհրաժեշտության գնահատման չափորոշիչների և չափանիշների, այդ շահերի պաշտպանության ուղղությամբ գործադրվող պետական ներգործության միջոցների ընտրության առթիվ, որոնք չեն կարող կախվածության մեջ դրվել իրավասու

¹⁹⁷ ԳԴ ԱԺ 2020թ. Հաղորդում, էջ 139:

նշված մարմինների հայեցողությունից, զանազանվող պատկերացումներից կամ ընդհանրապես ցանկությունից:

Ամփոփելով այս՝ 2.5 կետը և նախապես արձագանքելով խորհրդային դատախազությանը բնորոշ, իսկ իրականում՝ եվրոպական բազմաթիվ երկրներում դատախազության կողմից իրականացվող գործառնությունների «վերակենդանացման» մեղադրանքին, ասենք, որ չգիտես ինչու, այդ ապագա արձագանքողները շատ լավ մերվել էին այն իրավիճակի հետ, երբ ԽՍՀՄ դատախազության «ընդհանուր հսկողության» լիազորությունները իրեն էր վերապահել ոչ այլ ոք, քան ՀՀ Ոստիկանությունը: Մասնավորապես, ՀՀ ոստիկանության պետի 2015թ. մարտի 25-ի թիվ-6-Ն հրամանը «Ոստիկանության բնագավառում Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների լիարժեքության գնահատման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին», որի համաձայն՝

«2. Ոստիկանության բնագավառում մարզպետի կողմից կատարված, գնահատման ենթակա աշխատանքների չափորոշիչը ներառում է՝

1) Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների և այլ նորմատիվ իրավական ակտերի կատարման ապահովում, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը /գնահատվում է առավելագույնը 0,4 միավոր/...

2) Հանրապետական գործադիր մարմինների հետ համագործակցության ապահովում և դրանց քննարկմանը վերջիններիս իրավասությանը վերաբերող՝ մարզին առնչվող հարցերի ներկայացնելը /գնահատվում է առավելագույնը 0,6 միավոր/, որն իր մեջ ներառում է:

... 14. ՀՀ ոստիկանությունը ստացված հաշվետվությունները, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունը, իսկ առկայության դեպքում նաև մարզպետի հատուկ կարծիքը, հաշվետվությունները ստանալուց 7 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն»:

Ինչպես ասում են, «սուրբ տեղը դատարկ չի մնում»: Չնայած այս հրամանի հիմքում ընկած նպատակների կարևորությանը, կարծում ենք, որ անհրաժեշտ է նույն կարգավորումները տալ ՀՀ Կառավարության որոշման մակարդակով՝ հաշվի առնելով տարբեր գերատեսչությունների միջև իրավահարաբերությունների առկայության փաստը: Վերջապես, ոստիկանությանը այս հրամանով վերապահվող առանձին գործառնություն ոչ այլ ինչ են, քան բոլոր պետական մարմինների կողմից օրենքների կիրառման օրինականության նկատմամբ ժամանակին խորհրդային դատախազությանը տրված այսպես կոչված «ընդհանուր հսկողության» առաքելության արտահայտումը, որը, կարծում ենք, պետք է վերանայվի ընդհանուր իրավապահ ոլորտի հաշվետվողականության համատեքստում՝ նույն գործառնությունները վերապահելով ստուգող մարմիններին և դատական պաշտպանության ոլորտին:

2.6. Առաջարկներ՝ 2-րդ գլխում քննարկված հարցերի վերաբերյալ

4. Հրաժարվել մասնավոր քրեական հետապնդման ինստիտուտից:

Իր հերթին, կարող է դատարանին պահանջել ազատագրկման հետ չկապված պատիժը փոխարինել ազատագրկմամբ

ԴԽ՝

1. ավելացնե հանրային շահը

2. Քրդատ-ում ավելացնել պետշահերի հայցի իրավունքը

2. սահմանել պետական և հանրային շահերի դեպքերը, տես 3/2008 կարծիքը

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Ընդհանուր դիտարկում

ՀՀ դատախազության գործառույթների իրականացման տեսանկյունից խնդրահարույց է դրանց անկախության, հաշվետվողականության և գործառույթների շրջանակների պատշաճ ապահովումը ինչպես սահմանադրական, այնպես էլ օպերատիվ մակարդակում: Այս գլխում քննարկվող խնդիրների հիմնական պատճառներն է դատախազների կարգավիճակի և դրա տարրերի ամրագրումից օրենսդրորեն խուսափելը, որը պայմանավորված է ընդհանրապես դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակն ամրագրելուց խուսափելով, որի մասին նշվեց Հետազոտության 1-ին գլխում: Սրա հետևանքով առաջացած խնդիրները կայանում են նրանում, որ ի տարբերություն դատական իշխանության մյուս կրողների՝ դատավորների, դատախազները, որոնք ըստ Վենետիկի Հանձնաժողովի և Եվրոպական չափորոշիչներ սահմանող այլ մարմինների, նույնպես մտնում են դատական իշխանության մեջ՝

- գրկված են ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ դատախազների անկախության, արդյունավետության և դերակատարման գործուն երաշխիքներից: Խոսքը վերաբերում է թե արտաքին մարմիններից անկախությանը և դրա երաշխիքներին (օրինակ՝ անկախությունը օրենսդիր մարմնից, նյութական ապահովվածության երաշխիքները, որոնք պետք է հնարավորինս մոտ լինեն դատավորների երաշխիքներին և այլն), թե ներքին անկախությանը՝ նկատի ունենալով դատախազների շրջանում վարչարարական հարաբերությունների գերակայությունը դատավարական հարաբերությունների նկատմամբ, այդ հարցերում վերադաս դատախազի վճռորոշ դերակատարումը, դատախազների նշանակման, առաջխաղացման և ազատման հարցերում Գլխավոր դատախազի գրեթե անսահմանափակ հայեցողությունը:
- չունեն կոլեգիալ մարմինների (մասնավորապես՝ Դատախազության կոլեգիայի, որակավորման և էթիկայի հանձնաժողովների) ձևավորման ներքին ժողովրդավարական ներկայացվածության մեխանիզմներ (այսինքն՝ այդ մարմինները ձևավորվում են բացառապես ղեկավարության կողմից և/կամ ղեկավար կազմից), ինչպես նաև բացակայում է դատախազության ինքնակառավարման մարմին, որը, Դատավորների ընդհանուր ժողովի անալոգիայով, կստեղծեր նշված հանձնաժողովները, կընդուներ էթիկայի կանոնագիրք և կլուծեր ընդհանուր դատախազական համայնքին վերաբերող դրա բոլոր շերտերի դիրքորոշումներն հաշվի առնող ձևաչափեր (օրինակ՝ կտար էթիկայի կանոնների մեկնաբանություններ և այլն): Բացի այդ, նշված կոլեգիալ մարմինների որոշումները մեծամասամբ չունեն ինքնուրույն նշանակություն, քանի դեռ չեն համընկնում Գլխավոր դատախազի դիրքորոշման հետ:
- իրենց գործունեության մեջ չունեն՝ վերը նշված երկու խումբ խնդիրների պատճառով, դատական իշխանությանը բնորոշ թափանցիկության, հաշվետվողականության, դատախազական որոշումների կանխատեսելիության և կայունության երաշխիքներ: Խոսքը, ի թիվս այլի, վերաբերում է, դատախազական

համակարգի արդյունավետության գնահատման արտաքին մեխանիզմների, նախևառաջ՝ համակարգի առջև դրված խնդիրների ամրագրման ու դրանց իրագործվածության աստիճանի գնահատման հանրամատչելի մեթոդիկայի բացակայությանը, դատախազների կողմից կայացվող որոշումների հիմքում դրվող չափորոշիչների և չափանիշների կիրառման ուղեցույցների բացակայությանը և, եղած լինելու դեպքում՝ անհասանելիությանը (օրինակ՝ կոնկրետ հանցակազմերով դատարաններում պատիժներ միջնորդելու ելակետային սանդղակները, որոնցից ներքև կամ վերև շեղումները պետք է լինեն պատճառաբանված), և այլ՝ սույն Գլխի քննարկման հիմնական առարկան հանդիսացող հարցերին:

3.2. ՀՀ Գլխավոր դատախազի ընտրությունը/նշանակումը, գործառույթները և լիազորությունների դադարեցումը

3.2.1. ՀՀ Գլխավոր դատախազի ընտրությունը/նշանակումը

«Այն եղանակը, որով կատարվում է Գլխավոր դատախազի նշանակումը և ազատումը կարևոր դեր ունի դատախազության ճիշտ գործառնությունը երաշխավորող համակարգի համար»¹⁹⁸:

ՀՀ Գլխավոր դատախազի ընտրության և պաշտոնից ազատման կարգը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածով, որի համաձայն՝

«1. Գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազ:

2. Գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Գլխավոր դատախազի համար օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

3. Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին»:

ՀՀ ԳԴ թեկնածուին՝ Դատախազության մասին օրենքով ներկայացվող պահանջները որևէ լրացուցիչ պահանջներ չեն ապահովում, մասնավորապես՝ այդ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասը (Գլխավոր դատախազի թեկնածուին ներկայացվող պահանջները և գլխավոր դատախազի ընտրությունը) բառացի կրկնում է սահմանադրական տեքստով ներկայացվող պահանջները, իսկ 5-րդ մասը՝ պարզապես նշում է մյուս բոլոր դատախազներին վերաբերելի պահանջները՝ «5. Գլխավոր դատախազը պետք է համապատասխանի սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին, և չպետք է առկա լինի սույն օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված որևէ սահմանափակում», տես՝ Հոդված 33. Դատախազ նշանակվելու համար ներկայացվող ընդհանուր պահանջները, և Հոդված 34. Դատախազ նշանակվելու սահմանափակումները: Սա պետք է դրական համարել՝ հաշվի առնելով Սահմանադրությամբ ԳԴ թեկնածուին ներկայացվող բոլոր պահանջների ամրագրման անհրաժեշտությունը՝ որպեսզի ԱԺ-ն չընդունի այնպիսի օրենսդրական կարգավորումներ, որոնցով հնարավոր կլինի ապահովել միայն ցանկալի թեկնածուների ներկայացումը իր

¹⁹⁸ ՎՀ-ի Զեկույցը դատախազության անկախության չափորոշիչների մասին, կետ 34:

հաստատմանը: Այսպիսով Սահմանադրության 177-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը՝ «Գլխավոր դատախազի համար օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:» դառնում է ավելորդ: Փոխարենը անհաժեշտ է նախատեսել, որ ԳԴ թեկնածուի նկատմամբ տարածվում են մյուս բոլոր դատախազների, այդ թվում՝ ԳԴ տեղակալների համար սահմանված պահանջները¹⁹⁹:

Սահմանադրության 177-րդ հոդվածի մեջբերված կարգավորումները խնդրահարույց են դատախազության անկախության և ապաքաղաքականացվածության վերաբերյալ ստորև ներկայացվող միջազգային մի շարք կառույցների (ՎՀ, ԳԲԿՈ, ՏՀԶԿ) սահմանած չափորոշիչների տեսանկյունից: Հայաստանում Գլխավոր դատախազի ընտրությունը ավանդականորեն կախված է եղել գործադիրի կամքից: Չնայած, որ 2015թ-ի սահմանադրական փոփոխություններով Գլխավոր դատախազի ընտրությունը այժմ վերապահվել է Ազգային ժողովին՝ իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ, այնուամենայնիվ, թեկնածուի առաջադրման և ընտրության գործընթացում բացակայում են օբյեկտիվ չափանիշներ: Բացի այդ, Ազգային ժողովում որակյալ մեծամասնության պահանջը և գործադիրի ու օրենսդրի միջև դրա հետևանքով իշխանությունների տարանջատման սկզբունքի աղավաղումը հանգեցնում է նրան, որ Գլխավոր դատախազի նշանակումը մեծապես կախման մեջ է դրվում քաղաքական մեծամասնության կամքից:²⁰⁰

Վենետիկի Հանձնաժողովը, Հունգարիայի Սահմանադրության Հայեցակարգի վերաբերյալ իր Կարծիքում նշել է հետևյալը՝

«34. ... Կարևոր է, որպեսզի գլխավոր դատախազի ընտրության եղանակը լինի այնպիսին, որ ապահովի հանրության վստահությունն ու դատական իշխանության և իրավական մասնագիտության հանդեպ հարգանքը: **Հետևաբար, անհրաժեշտ է ոչ քաղաքական փորձագիտության ներգրավումը ընտրության գործընթացին:** Ողջամիտ է, սակայն, որ Կառավարությունը ցանկանա վերահսկողություն ունենա նշանակման վրա՝ պետության օրինապաշտ և արդյունավետ գործունեության համար հանցագործությունների քրեական հետապնդման կարևորությունից ելնելով և պատրաստակամ չլինի որևէ այլ մարմնի՝ որքան էլ հեղինակավոր այն լինի, անվերահսկելի ազատություն տալ ընտրության գործընթացում: **Հետևաբար, առաջարկվում է, որպեսզի դիտարկվի նշանակման այնպիսի հանձնաժողովի ձևավորման հարցը, որը կազմված կլինի հանրության հարգանքը վայելող և Կառավարության համար վստահելի անձանցից:**

35. Ոչ մի եզակի, միանշանակ սկզբունք չի կարող ձևակերպվել առ այն, թե ով՝ Նախագահը, թե Խորհրդարանը պետք է նշանակի Գլխավոր դատախազին... Լավ լուծում է թվում տարբեր պետական մարմինների միջև համագործակցությունը, քանի որ այն հնարավորություն է տալիս խուսափելու քաղաքական միակողմ առաջադրումներից: Այս դեպքերում պետք է գալ համաձայնության: Ամեն դեպքում, թեկնածուների առաջադրման իրավունքը պետք է լինի հստակ սահմանված: **Թեկնածուների մասնագիտական որակների վերաբերյալ խորհրդատվությունը պետք է ստանալ համապատասխան անձանցից, օրինակ՝ իրավաբանական համայնքի (այդ թվում՝ դատախազության) և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից:**

36. Այն երկրներում, որտեղ Գլխավոր դատախազն ընտրվում է Խորհրդարանի կողմից, նշանակման գործընթացի քաղաքականացման ակնհայտ վտանգը կարող է նվազեցվել **նաև խորհրդարանական հանձնաժողովի կողմից ընտրության նախապատրաստական գործընթաց նախատեսելով, որը պետք է հաշվի առնի փորձագետների խորհուրդը:**

37. Կարևոր է, որպեսզի Գլխավոր դատախազը չունենա վերանշանակման հնարավորություն, առնվազն՝ ոչ օրենսդրի և ոչ էլ գործադիր կողմից: Հավանական ռիսկ կա առ այն, որ քաղաքական մարմնի կողմից վերանշանակվելուն ձգտող դատախազը կարող է դրսևորել այնպիսի վարքագիծ, որի իրական կամ ընկալված նպատակը կլինի այդ մարմնի բարեհաճությանն արժանանալը: **Գլխավոր դատախազը պետք է նշանակվի առանց ժամկետի կամ հարաբերականորեն երկար ժամկետով՝ առանց այդ ժամկետը լրանալիս այն նորոգելու:**

¹⁹⁹ Այդ պահանջների մասին առանձին կլուսվի Հետազոտության ԳԴ տեղակալների և մյուս բոլոր դատաազների նշանակմանը վերաբերող հատվածներում, համապատասխանաբար՝ 3.3 և 3.5 կետերում:

²⁰⁰ Տե՛ս՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՔՆԵՐԻ ՈՒՂՂՎԱԾ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ (ճանապարհային քարտեզ), 2018, էջ 24

հնարավորության: Պաշտոնավարման ժամկետը չպետք է համընկնի Խորհրդարանի լիազորությունների ժամկետին: Դրանով ավելի մեծ կայունություն կապահովվի դատախազի պաշտոնի համար ու նա կլինի ընթացիկ քաղաքական փոփոխություններից անկախ»²⁰¹:

Այսպիսով, որպես չափորոշիչների հետ կապված միջանկյալ առաջին հետևություն արձանագրենք Գլխավոր դատախազի ընտրության գործընթացում **քաղաքական իշխանության մարմինների և փորձագիտական, ընդ որում՝ փորձագիտական համայնքի հանրության վստահությունը վայելող ներկայացուցիչների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության կարիքը:** Հաջորդ հետևությունը, որը բխում է նույն ՎՀ-ի, ինչպես նաև՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) ու Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳԲԿԳՈ) կողմից մշակված նմանատիպ չափորոշիչներից, դա այն է, որ **Գլխավոր դատախազի նշանակման հարցում պետք է ապահովվի քաղաքական իշխանության մեկից ավելի մարմինների դերակատարումը ու նրանց միջև համագործակցությունը:**

Մասնավորապես, ինչպես իրավացիորեն նշվել է (ՏՀԶԿ) կողմից Հայաստանի վերաբերյալ 4-րդ շրջանի մշտադիտարկման զեկույցում²⁰²:

«դժբախտաբար, Սահմանադրական բարեփոխումները բավարար չափով զերծ չեն պահում քաղաքական գործիչներին Գլխավոր դատախազին նշանակելու և հեռացնելու գործընթացից, դրանք պարզապես անցում են Խորհրդարանի առավել մեծ և Նախագահի՝ առավել նվազ դերակատարման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, դրանք համարժեք կերպով դատախազության մարմինները չեն ապահովագրում քաղաքական ճնշումներից և ազդեցությունից: Մշտադիտարկման թիմը այն կարծիքին է, որ իրավաբան, այդ թվում՝ քաղաքացիական հասարակությունը ներկայացնող մասնագետների ավելի լայն ներգրավվածությունը ի գործու կլինի նվազեցնել ընտրության քաղաքականացման վտանգը: Ավելին, Գլխավոր դատախազին երկրորդ անընդմեջ ժամկետով վերընտրելու առկա հնարավորությունը ռիսկային կարող է լինել Խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերից նրա անկախության տեսանկյունից: Վենետիկի Հանձնաժողովի եզրակացության համաձայն²⁰³՝ «հավանական ռիսկ կա առ այն, որ քաղաքական մարմնի կողմից վերանշանակվելուն ձգտող դատախազը կարող է դրսևորել այնպիսի վարքագիծ, որի իրական կամ ընկալված նպատակը կլինի այդ մարմնի բարեհաճությանն արժանանալը»²⁰⁴:

ՏՀԶԿ-ն նշել է, որ **այսպիսով, անհրաժեշտ է ապահովել ԳԲ-ի ընտրության նոր մեխանիզմներ, որոնցում կամրազրվի անկախ փորձագետների դերակատարումն ու կսահմանվի ԳԲ-ի պաշտոնավարման մեկ ժամկետ, թեկուզ ավելի երկար տևողությամբ**²⁰⁵:

Գլխավոր դատախազի՝ Խորհրդարանի կողմից ընտրվելու մոդելի պայմաններում Գլխավոր դատախազի նոր ժամկետով վերընտրվելու անթույլատրելիությունը, կարող ենք ասել, ընդհանուր մոտեցումն է ԵԽ-ի համար: Մասնավորապես, ԳԲԿԳՈ-ն քննադատել է Հունգարիայի իշխանություններին՝ նման հնարավորության համար՝ ավելին, նշելով, որ անթույլատրելի է նաև հունգարական օրենսդրության այն կարգավորումը, որ Գլխավոր դատախազը պահպանում է իր պաշտոնը՝ մինչև հաջորդի կողմից լիազորությունները ստանձնելը²⁰⁶: ԳԲԿԳՈ-ի «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների,

²⁰¹ 2 ՎՀ, CDL(1995)073rev., chapter 11, տես՝ ՎՀ-ի Զեկույցը դատախազության անկախության չափորոշիչների մասին, կետ 34-37:

²⁰² ANTI-CORRUPTION NETWORK FOR EASTERN EUROPE AND CENTRAL ASIA, Anti-Corruption Reforms in ARMENIA, Fourth Round of Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, adopted at the ACN meeting on 4 July 2018 at the OECD in Paris, էջ 90 և հաջորդիվ (այսուհետ նաև «ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց»):

²⁰³ The Venice Commission, Report on European Standards as regards the Independence of the Judicial System: Part II – the Prosecution Service, par. 37.

²⁰⁴ ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց, էջ 90:

²⁰⁵ ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց, էջ 91:

²⁰⁶ Information Documents SG/Inf(2016)3rev, 24 March 2016, **Challenges for judicial independence and impartiality in the member states of the Council of Europe**, Report prepared jointly by the Bureau of the CCJE and the Bureau of the

դատավորների, դատախազների շրջանում» գնահատման 4-րդ փուլի՝ ՀՀ կողմից պարտավորությունների կատարման վերաբերյալ 2017 թվականի զեկույցը (այսուհետ՝ «ԳՐՈԿՈ-ի 4-րդ շրջանի Ձեկույց») իր 12-րդ Երաշխավորության մեջ (կետ 60) խորհուրդ է տվել՝

«համարժեք ռեսուրսներ օգտագործել՝ Գլխավոր դատախազի ընտրության, նշանակման և ազատման գործընթացում մասնագիտական, ոչ քաղաքական փորձագիտության ընդգրկման համար՝ այդ գործընթացների թափանցիկությունը մեծացնելու և ոչ պատշաճ քաղաքական ազդեցության ռիսկերը նվազագույնի հասցնելու համար»²⁰⁷:

Ավելին, հաշվի առնելով այն փաստը, որ Գլխավոր դատախազի թեկնածուին ներկայացնող սուբյեկտը՝ գործադիր իշխանության ղեկավարը, և ընտրող/հաստատող սուբյեկտը, սահմանադրորեն պետք է ներկայացնեն նույն քաղաքական ուժը, շատ կարևոր է, որ փորձագիտական նշված հանձնաժողովի եզրակացության կարգավիճակը լինի բավականին բարձր՝ համապատասխան հակակշիռ ապահովելու համար: ԵԴԽԽ մակարդակով անգամ հնչեցվում է այն կարծիքը, որ ԳԴ բարձրաստիճան պաշտոններում թեկնածուին ներկայացնող սուբյեկտի համար այդ հանձնաժողովի եզրակացությունը պետք է լինի պարտադիր²⁰⁸: Կարծում ենք, նման բարձր կարգավիճակ մասնագիտական/փորձագիտական նշված հանձնաժողովին ՀՀ-ում տալը դեռևս վաղաժամ է, սակայն հնարավոր է նախատեսել այդ հանձնաժողովի երաշխավորած անձի թեկնածությանը համաձայն չլինելու դեպքում խորհրդարանական հանձնաժողովի կողմից թեկնածությունը Խորհրդարանի հաստատման/ընտրության պատճառաբանված որոշում կայացնելու պահանջը: Առնվազն, այդ Հանձնաժողովը պետք է նման եզրակացություններ ներկայացնի ԳԴ-ի ու նրա տեղակալների թեկնածությունների վերաբերյալ:

ՏՀԶԿ կողմից ներկայացվել քննարկված եվրոպական չափորոշիչներից և ՀՀ իրավակիրառ փորձից բխող նոր՝ երկու կոնկրետ առաջարկ ընդգրկող 16-րդ երաշխավորությունը՝

«Նախատեսել անկախ փորձագետների պարտադիր ներգրավումը մշտական հանձնաժողովի կողմից Գլխավոր դատախազի թեկնածուի ընտրության գործընթացում, և

Դիտարկել Գլխավոր դատախազի երկրորդ անընդմեջ ժամկետով վերընտրվելու հնարավորությունը վերացնելու և փոխարենը պաշտոնավարման ավելի երկար միանվագ ժամկետ սահմանելու հարցը»²⁰⁹:

Այս ենթակետի վերջում գոհունակությամբ նշենք նաև ՀՀ Արդարադատության նախարարության կողմից ս.թ. հուլիսի 31-ին ներկայացված «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծը²¹⁰, որը պայմանավորված էր ԳՐԵԿՈ-ի Հայաստանի

CCPE for the attention of the Secretary General of the Council of Europe as a follow-up to his 2015 report entitled “State of Democracy, Human Rights and the Rule of Law in Europe – a shared responsibility for democratic security in Europe”, էջ 22

²⁰⁷ GrecoRC4(2017)15 FOURTH EVALUATION ROUND Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors COMPLIANCE REPORT ARMENIA, adopted by GRECO at its 78th Plenary Meeting 8 December 2017 (Strasbourg, 4-8 December 2017)

²⁰⁸ Ավստրիան ներկայացնող ԵԴԽԽ անդամը նշել է, որ դատախազների (հատկապես բարձր պաշտոններում) նշանակման ընթացակարգը միշտ չէ, որ իրականացվում է թափանցիկ ձևով, քանի որ Արդարադատության դաշնային նախարարը (ով պետք է թեկնածուին առաջադրի Դաշնության Նախագահի նշանակմանը) կաշկանդված չէ մասնագիտական հանձնաժողովի երաշխավորություններով, տես՝ Report on the independence and impartiality of the prosecution services in the Council of Europe member States (2019 edition) referred to the issue of independence of prosecutors in the context of “general safeguards such as guarantees ensuring functional independence of prosecutors from their hierarchy and judicial control of the acts of the prosecution service”, կետ 108:

²⁰⁹ ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց, էջ 91:

²¹⁰ https://www.e-draft.am/files/project_file/1/15962138431846.docx

վերաբերյալ 4-րդ շրջանի Ձեկույցի²¹¹ 68-րդ կետով արված արաջարկությամբ և որով նախատեսվում է, որ

«Սահմանադրության և օրենքի պահանջները բավարարելու դեպքում Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Գլխավոր դատախազի թեկնածուի բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ երկշաբաթյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով»:

Այս դրույթի ընդունումը նպաստավոր կլինի Գլխավոր դատախազի բարեվարքության ապահովման տեսակետից, սակայն, կարծում ենք, որ անգամ մինչև նոր Սահմանադրության ընդունումը ու դրանում մեր նշած առաջարկներն ամրագրելը, **կարելի է նույն սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարել ԱԾ իրավասու մշտական հանձնաժողովի կողմից փորձագիտական նշված հանձնաժողովի կարծիքը ստանալու պահանջը թե Գլխավոր դատախազին նշանակելու, և թե՛ նրա լիազորությունները դադարեցնելու ընթացքում:**

3.2.2. ՀՀ Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցումը

Ինչպես տեսանք ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածում Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցմանը նվիրված ընդամենը մեկ դրույթ, այն է՝ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝

3. Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին»:

Այսինքն, Սահմանադրությամբ չեն նշվում ԱԾ որոշմանը նախորդող գործընթացին առաջադրվող պահանջները և ոչ էլ լիազորությունների դադարեցման որևէ հիմք: Բացի այն, որ օրենսդրական տեխնիկայի ու մեթոդաբանության առումով միննույն պաշտոնատար անձի լիազորությունների ստանձնումը և դադարեցումը նպատակահարմար է ընդհանրության առնվազն հավասար աստիճանով, սահմանել նույն իրավական կարգավիճակ ունեցող աղբյուրում, տվյալ դեպքում՝ Սահմանադրությամբ, դա կարևոր է անել նաև Գլխավոր դատախազի անկխության ապահովման տեսակետից, չէ՛ որ ըստ միջազգային չափորոշիչների, «դատախազության ճիշտ գործառնությունը երաշխավորող համակարգի համար» կարևոր դեր ունի ոչ միայն այն Գլխավոր դատախազի նշանակման, այլև նրան պաշտոնից ազատելու եղանակը²¹²:

Այսպիսով, անհրաժեշտ է Գլխավոր դատախազի պաշտոնից ազատման հիմքերը նույնպես նախատեսել Սահմանադրությամբ:

Փոխարենը, Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցումը կարգավորված է ՀՀ Դատախազության մասին օրենքի 63-րդ հոդվածով, որով նախատեսվում են լիազորությունների *դադարման* և *դադարեցման* հիմքերը: *Դադարման* հիմքերը, ինչպես և դատավորների լիազորությունների հետ կապված, փաստի ուժով առաջացող հիմքերն են, որոնց առկայությունը նախնական հետազոտում չի պահանջում՝ դրանց առկայությունը փաստելու համար (հրաժարական ներկայացնելը, պաշտոնավարման տարիքը լրանալը և այլն), իսկ դադարեցման հիմքերը ենթադրում են դրանց արձանագրմանը նախորդող ուսումնասիրության իրականացում (վարքագծի կանոնների և պաշտոնի անհամատեղելիության կանոնների խախտում և այլն):

²¹¹ <https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680775f12>

²¹² ՎՀ-ի Ձեկույցը դատախազության անկախության չափորոշիչների մասին, կետ 34:

Գլխավոր դատախազի լիազորությունների թե *դադարման*, և թե՝ դադարեցման հիմքերը ինդրահարույց են, նախևառաջ, **դատախազների կարգավիճակի միասնականության, ինչպես նաև՝ որոշ դեպքերում՝ օրենսդրական տեխնիկայի տեսակետից:**

3.2.2.1. ՀՀ Գլխավոր դատախազի լիազորությունների դադարման հիմքերը

Դատախազության մասին օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքերն են՝

... 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը.

... 3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրան անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելը.»:

Դատախազության մասին օրենքի 62-րդ հոդվածի (Դատախազին պաշտոնից ազատելը) 1-ին մասի համաձայն՝

«1. Դատախազին պաշտոնից ազատելու հիմք են՝

... 4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցումը,

7) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա մահացած հայտարարվելը կամ անհայտ բացակայող ճանաչվելը.

10) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտը, որով ապացուցված է, որ նա այդ պաշտոնում նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ»:

Քննարկենք լիազորությունների դադարման այս հիմքերը՝ առանձին-առանձին:

1. Ինչպես տեսնում ենք, «Դատախազության մասին» օրենքը որպես լիազորությունների դադարման հիմք Գլխավոր դատախազի դեպքում նշում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը», իսկ մյուս դատախազների դեպքում՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցումը»: Առաջին հայացքից, սա կարող է թվալ զուտ տեխնիկական բնույթի տարբերություն, սակայն բովանդակային տարբերությունն ակնհայտ է դառնում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի (ընդ. 1995թ. նոյեմբերի 6-ին)²¹³ վերաբերելի դրույթների թեկուզ հպանցիկ դիտարկման արդյունքում: Մասնավորապես, այդ օրենքի 23-րդ հոդվածի (Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման հիմքերը) համաձայն՝

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու դեպքում.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից զրկվելու դեպքում.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով.

4) սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով»:

Նույն օրենքի 1-ին հոդվածի (Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը) 1-ին և 6-րդ մասերի համաձայն՝

«1. ... Անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնում է քաղաքացիության դադարեցման հետևանքով:

... 6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը կամ այլ պետության քաղաքացիություն ընդունելն ինքնին չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելուն»:

²¹³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=32240>

Այսինքն, Դատախազության մասին և ՀՀ քաղաքացիության մասին օրենքների մեջբերված դրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ ՀՀ Գլխավոր դատախազը կարող է հրաժարվել ՀՀ քաղաքացիությունից կամ ընդունել այլ պետության քաղաքացիություն, սակայն շարունակել պաշտոնավարել որպես ՀՀ Գլխավոր դատախազ, քանի որ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելը կամ այլ պետության քաղաքացիություն ընդունելը ինքնին չեն հանգեցնում ՀՀ քաղաքացիությունը կորցնելուն, որը որպես փաստ պահանջվում է Գլխավոր դատախազի լիազորությունները դադարելու համար: Սա բացարձակ արտուրդ է և չի կարող չլինել դիտավորության արդյունք, քանի որ լրիվ հակառակ դիրքորոշումն է ամրագրված մյուս դատախազների համար, որոնք ենթակա են պաշտոնից ազատման «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման» դեպքում, որի հիմքերի մեջ է մտնում դատախազի կողմից ՀՀ քաղաքացիությունը փոխելը և ՀՀ քաղաքացիությունից զրկվելը (այդ թվում՝ ՀՀ օրենսդրության խախտմամբ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու հիմքով, տես՝ ՀՀ քաղաքացիության մասին օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ կետ):

Կարող է հակափաստարկ հնչել այն մասին, որ նման վտանգը չեզոքացված է Դատախազության մասին օրենքի նույն 63-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, որը որպես Գլխավոր դատախազի լիազորությունների դադարման հիմք նշում է նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին 4-րդ կետով սահմանված սահմանափակման ի հայտ գալը («Գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող...իրավաբանը»), սակայն դրան ի պատասխան պետք է նշել հետևյալը՝

- նույն դադարման հիմքը նախատեսված է մյուս դատախազների համար ևս, ում համար որպես լիազորությունների դադարման հիմք առանձին նշվում է նաև ՀՀ քաղաքացիության դադարեցումը, իսկ Գլխավոր դատախազի համար՝ միայն այն կորցնելը.
- նշված սահմանափակման ի հայտ գալը որպես լիազորությունների դադարման հիմք իրականում անարդյունավետ է և պարզման համար՝ դժվար, եթե ոչ անհնար: Վերջին բացահայտումները՝ կապված ԱԺ նախկին պատգամավորներից մեկի ու նախկին ՊՆ նախարարի ՌԴ քաղաքացի լինելու հետ, վկայում են այն մասին, որ նշված սահմանափակման ի հայտ գալը դուրս է ՀՀ իրավապահների անմիջական դիտարկումից և պարզվում է միայն այն դեպքում, երբ նշված անձինք ցանկանում են օգտագործել դա:

Հետևաբար, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել նշված փաստերի ոչ թե ի հայտ գալու հետևանքները, այլ կանխել այդ փաստերի առաջացմանն ուղղված գործողությունները: Մասնավորապես, կարևոր քայլեր կարող են լինել՝ մի կողմից ՀՀ Գլխավոր դատախազի, ինչպես նաև բացառապես ՀՀ քաղաքացիություն պահանջող պաշտոններ զբաղեցնող բոլոր մյուս անձանց վրա օրենքով պարտավորություն դնելը՝ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու կամ մշտական բնակություն հաստատելու ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին հայտարարագրելը, իսկ մյուս կողմից՝ միջազգային երկկողմանի պայմանագրերով՝ պետությունների կողմից իրենց պաշտոնյաների ձեռնարկված նշված քայլերի մասին փոխադարձ տեղեկացման դրույթներ նախատեսելը:

2. Նույն, առաջին հայացքից տեխնիկական, սակայն լուրջ բովանդակային տարբերությունն առկա է օրենսդրի այն դիրքորոշման մեջ, թե ինչպես վարվել այն դեպքում, երբ պարզվում է, որ անձը դատախազ կամ Գլխավոր դատախազ է նշանակվել օրենքի պահանջների խախտմամբ: Նման պահանջ սահմանված է դատախազների համար Դատախազության մասին օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, որի համաձայն՝

«1. Դատախազին պաշտոնից ազատելու հիմք են՝

... 10) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտը, որով ապացուցված է, որ նա այդ պաշտոնում նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ»:

Գլխավոր դատախազի համար լիազորությունների դադարման հիմք նախատեսված չէ, ինչը ուղղակիորեն զրկում է Գլխավոր դատախազին նշանակող մարմնին ազատել Գլխավոր դատախազին այս նույն հիմքով, որով նա, իր հերթին, իրավունք ունի ազատելու մյուս դատախազներին:

3. Գլխավոր դատախազի լիազորությունների դադարման հետ կապված, ճիշտ է՝ զուտ օրենսդրական տեխնիկայի առումով, խնդրահարույց է Դատախազության մասին օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը, որի համաձայն՝

«2. Գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքերն են՝

... 8) հրաժարականի դիմում ներկայացնելը Ազգային ժողով: Հրաժարականի դեպքում գլխավոր դատախազի լիազորությունները դադարում են, եթե գլխավոր դատախազի կողմից հրաժարականի դիմումը ներկայացվելուց ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում կրկին հրաժարականի դիմում է ներկայացվում»:

Օրենսդրական տեխնիկայի տեսակետից, երկրորդ ակտիվ գործողություն նախատեսելը թերի է այն առումով, որ, ըստ էության, հանգեցնում է նույն՝ հրաժարականը ներկայացնելու գործողության բաժանմանը երկու փուլերի, որի դեպքում առաջին անգամ դիմում ներկայացնելը զրկվում է իրավաբանական փաստ լինելով իրավաբանական հետևանքներ առաջացնող փաստի կարգավիճակից և ձեռք է բերում այդ վերջին կարգավիճակը միայն կրկնվելու դեպքում: Մինչդեռ՝ եթե երկրորդ դիմումի փոխարեն նախատեսվի անգործություն, մասնավորապես՝ դիմումը հետ չվերցնելը, խոսք կգնա արդեն կատարված գործողության իրավաբանական հետևանքներն առաջ գալու կամ այլ կերպ ասած՝ հրաժարականի դիմումը ուժի մեջ մտնելու և դրա պայմանի մասին: Նույն մոտեցումները պետք է ամրագրվեն նաև ԱԺ պատգամավորի ԱԺ նախագահին ներկայացվող հրաժարականի հետ կապված:

3.2.2.2. ՀՀ Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցման հիմքերը

Դատախազության մասին օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«3. Գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել այն դեպքերում, երբ՝

1) նա հիվանդացել է ծանր հիվանդությամբ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պաշտոնական պարտականությունների կատարմանը.

2) կատարել է օրենքի կամ դատախազի վարքագծի կանոնների խախտում, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը.

3) խախտել է սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները.²¹⁴

4) առկա են իր լիազորությունների կատարման այլ անհաղթահարելի խոչընդոտներ»:

Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցման հիմքերի տեսակետից նույնպես առկա է կարգավիճակային անհամապատասխանություն մյուս դատախազների լիազորությունների դադարեցման հիմքերի հետ: Այդ անհամապատասխանությունը լեզբիտիմ չէ, քանի որ որևէ կերպ օրենսդրի տարբերակվող վերաբերմունքը չի բխում Գլխավոր դատախազի պաշտոնից բխող լիազորությունների կամ պատասխանատվության

²¹⁴ Հոդված 49-ով նախատեսվում են ՀՀ բոլոր դատախազներին վերաբերելի Դատախազի նկատմամբ կիրառվող սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները, այն է՝ այլ պաշտոններ զբաղեցնելու և այլ որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելքները, որոնք քննարկվում են Հետազոտության 3.7.2 կետում:

շրջանակի առանձնահատկությունների հետ, հետևաբար՝ պետք է համահունչ լինի բոլոր դատախազների միասնական կարգավիճակին:

Մասնավորապես, դատախազին պաշտոնից ազատելու վերաբերելի²¹⁵ ու Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցման հիմքերի հետ համադրելի են Դատախազության մասին օրենքի 62-րդ հոդվածով սահմանված հետևյալ հիմքերը²¹⁶

«1. Դատախազին պաշտոնից ազատելու հիմք են՝

9) սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական տույժի նշանակումը.

... 2. Դատախազին պաշտոնից ազատելու հիմք կարող է հանդիսանալ նաև ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս անընդմեջ աշխատանքի չներկայանալը»:

Դատախազության մասին օրենքի 53-րդ հոդվածի (Կարգապահական պատասխանատվության հիմքերը) համաձայն՝

«1. Դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

2) դատախազի վարքագծի կանոնները խախտելը:

3) աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը»:

Ինչպես տեսնում ենք, այս երեք հիմքերի հետ կապված էական տարբերություններ կան դատախազին պաշտոնից ազատելու և Գլխավոր դատախազի լիազորությունները դադարեցնելու միջև: Քննարկենք դրանք առանձին-առանձին՝

1. Դատախազության մասին օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով մյուս դատախազների համար նախատեսված նախատեսված հիմք՝ «իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը» Գլխավոր դատախազի համար նախատեսված չէ: Սրա հետ կապված առարկություններ չկան, քանի որ այն, ինչի հիմքով Գլխավոր դատախազը կարգապահական պատասխանատվության է ենթարկում մյուս դատախազներին, այսինքն՝ աշխատանքային պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, Ազգային ժողովի կողմից նույն Գլխավոր դատախազի նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցի՝ լիազորությունների հիմք դարձնելու դեպքում, լրջորեն կվտանգի Գլխավոր դատախազի անկախությունը և քաղաքական չեզոքությունը՝ ստիպելով աշխատանքը կատարել այնպես, ինչպես հաճո է խորհրդարանին: Սակայն, նույնը չի կարող ասվել էթիկայի պահանջները խախտելու մասին, քանի որ վերջինիս նորմերը պահպանելը չի կրում քաղաքական ազդեցության վտանգ, այլ հակառակը՝ առկա է հանրային շահ՝ ապահովելու Գլխավոր դատախազի ու մյուս դատախազների կողմից էթիկայի նորմերի առնվազն հավասար պահպանումը:

2. Վարքագծի կանոնները խախտելը որպես լիազորությունները դադարեցնելու հիմք դիտարկելու համար, Գլխավոր դատախազի դեպքում, ի տարբերություն մյուս

²¹⁵ Մասնավորապես, վերաբերելի չէ Գլխավոր դատախազի նկատմամբ ոչ կիրառելի՝ Դատախազության մասին օրենքի 50-չդ հոդվածի 141-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով («14. Որակավորման հանձնաժողովն ատեստավորման արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը...6) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին») դատախազին պաշտոնից ազատելը:

²¹⁶ Պետք է նշել, որ ի տարբերություն Գլխավոր դատախազի, մյուս դատախազների դեպքում լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերը չեն տարանջատվում, հետևաբար, այս փոփոխությունը նույնպես անհրաժեշտ է կատարել Դատախազության մասին օրենքի 62-րդ հոդվածի կառուցվածքում: Այս և այլ վերաբերելի հարցերը քննարկվում են մյուս դատախազների կարգապահական պատասխանատվությանը և որպես կարգապահական պատասխանատվության տեսակ՝ պաշտոնից ազատելուն նվիրված սույն Հետազոտության 3.8. կետում:

դատախազների, սահմանված է լրացուցիչ պայման՝ պետք է հաստատվի, որ այդ խախտումը «վարկաբեկել է դատախազության հեղինակությունը», մինչդեռ մյուս դատախազները պատասխանատվություն կրում անկախ վարքագծի կանոնների խախտման ծանրությունից կամ խախտման հետևանքներից: Քրեական իրավունքի տերմինոլոգիայով ասած, Գլխավոր դատախազի համար սահմանվել է նյութական, այսինքն՝ հետևանքների պարտադիր առկայություն պահանջող, իսկ մյուս դատախազների համար՝ ֆորմալ զանցակազմ, երբ խախտման փաստն առկա է անկախ հետևանքներից: Մինչդեռ Գլխավոր դատախազից հանրությունն ու Ազգային Ժողովը իրավունք ունեն ակնկալելու էթիկայի պահանջներին բավարարելու ավելի բարձր, համենայնդեպս՝ ոչ ավելի ցածր մակարդակ:

Քանի որ Գլխավոր դատախազի նկատմամբ չեն կարող կիրառվել կարգապահական տույժեր, առաջանում է այն հարցը, թե ինչպես պետք է վարվել այն դեպքերում, երբ կան Գլխավոր դատախազի կողմից այնպիսի վարքագիծ դրսևորելու դեպքում, որը կարգապահական պատասխանատվության, այդ թվում՝ պաշտոնից ազատման հիմք է հանդիսանում մյուս դատախազների համար, բայց որպես այդպիսին նախատեսված չէ կամ նախատեսված է որոշակի լրացուցիչ պայմաններով հանդերձ Գլխավոր դատախազի դեպքում: **Մեր կարծիքով, ելքը՝ օրենսդրական փոփոխություններն են, որոնք պետք է բխեն դատախազների կարգավիճակի միասնականության սկզբունքից, և այդպիսով՝ կամ նախատեսեն նույն պարտադիր պայմանը, այն է՝ դատախազության հեղինակությունը վարկաբեկելը նաև մյուս դատախազների կողմից կատարվող վարքագծի խախտումների համար, կամ վերացնեն այդ պայմանը՝ անկախ դատախազի կարգավիճակ ունեցող անձի պաշտոնից:**

3. Ինչպես տեսանք, մյուս դատախազների համար, ի տարբերություն Գլխավոր դատախազի, որպես պաշտոնից ազատման հիմք նախատեսված է «աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը»: Հաշվի առնելով այն փաստը, որ այս խախտումը նախատեսված է վարքագծի կանոնների խախտումներից առանձին, ողջամիտ է պնդել, որ դատախազին պաշտոնից ազատելու այս հիմքը առաջանում է դատախազի այն վարքագծի դեպքում, որը չի արտահայտվել վարքագծի կանոնների խախտմամբ: Հետևաբար, նույն ողջամտությամբ ծագող հարցը կայանում է նրանում, թե ինչպես պետք է վարվել այն դեպքերում, երբ Գլխավոր դատախազն է պարբերաբար խախտում աշխատանքային ներքին կարգապահության կանոնները, իսկ ԱԺ-ն նման հիմքով նրա լիազորությունները դադարեցնելու հիմք չունի: Այս հիմքը էականորեն տարբերվում է 1-ին կետում քննարկված՝ «իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը» հիմքից, քանի որ խոսքը գնում է ոչ թե պաշտոնեական պարտականությունների մասին, այլ աշխատանքային ներքին կանոնները խախտելու մասին, և հետևաբար, բացակայում են քաղաքական մարմնին ապագա վարքագծով Գլխավոր դատախազի կողմից հաճոյանալու վտանգները, իսկ հասարակությունը իրավունք ունի, որպեսզի աշխատանքային ներքին կանոնները խախտող Գլխավոր դատախազը ենթարկվի պատասխանատվության նույն կերպ, ինչ նման, կրկնում ենք, ոչ պաշտոնեական հարաբերությունների շրջանակներում վարքագիծ դրսևորած դատախազները պատասխանատվության են ենթարկվում նույն Գլխավոր դատախազի կողմից:

4. Եվ վերջապես, Դատախազության մասին օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, «2. Դատախազին պաշտոնից ազատելու հիմք կարող է հանդիսանալ նաև ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս անընդմեջ աշխատանքի չներկայանալը», իսկ 63-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին

կետի համաձայն «3. Գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել այն դեպքերում, երբ՝... 1) նա հիվանդացել է ծանր հիվանդությամբ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պաշտոնական պարտականությունների կատարմանը»: Կարծում ենք, որևէ ողջամիտ պատճառ չի կարող լեզիտիմացնել այս հարցում դատախազների հանդեպ դրսևորվող տարբերակված վերաբերմունքը՝ նրանց զբաղեցրած պաշտոնից ելնելով: Այս դրույթները պետք է նույնականացնել բոլոր դատախազների համար, այդ թվում՝ Գլխավոր դատախազի՝ սահմանելով հստակ ժամկետ, քանի որ «տևական ժամանակով» ձևակերպումը ամեն դեպքում հակասում է իրավական որոշակիության սկզբունքին և առաջացնում որոշում կայացնողի անսահմանափակ հայեցողություն, իսկ դրա հետ էլ՝ լուրջ կոռուպցիոն, տվյալ դեպքում, այսինքն՝ Գլխավոր դատախազի նկատմամբ կիրառվելիս՝ նաև քաղաքական կոռուպցիայի ռիսկեր:

Այսպիսով, անհրաժեշտ է՝

- Գլխավոր դատախազի լիազորությունների դադարման հիմքերի շարքում նշել բոլոր դատախազների լիազորությունների դադարման վերը քննարկված վերաբերելի հիմքերը²¹⁷, իսկ նշելիս՝ դա անել օրենսդրական այն նույն ձևակերպումներով, որոնք օգտագործվում են մյուս դատախազների նկատմամբ:
- Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցման հիմքերի թվում նախատեսել նաև մյուս դատախազների նկատմամբ կիրառելի կարգապահական պատասխանատվության, այդ թվում՝ «պաշտոնից ազատումը» կարգապահական տույժ նշանակելու վերը քննարկված վերաբերելի հիմքերը, իսկ նախատեսելու դեպքում՝ դա անել օրենսդրական այն նույն ձևակերպումներով, որոնք օգտագործվում են մյուս դատախազների նկատմամբ, մասնավորապես՝ առանց Գլխավոր դատախազի օգտին լրացուցիչ պայմաններ նախատեսելու:

Առաջարկվող փոփոխությունները ոչ միայն կապահովեն դատախազների կարգավիճակի միասնականությունը նրանց լիազորությունները՝ անկախ զբաղեցրած պաշտոնից դադարեցնելու միասնական ռեժիմ սահմանելով, այլև կապահովեն միջազգային հեղինակավոր կառույցների կողմից սահմանված չափորոշիչների իրացումը: Մասնավորապես, ինչպես նշում է Վենետիկի Հանձնաժողովը՝

«39. Դատախազության մասին օրենքը պետք է պարզ կերպով սահմանի դատախազին պաշտոնից վաղաժամկետ ազատելու պայմանները: ... Նման ազատման հիմքերը պետք է նախատեսվեն օրենքով (...) Վենետիկի Հանձնաժողովը անգամ կնախընտրեր էլ ավելի հեռու գնալ և հնարավոր ազատման հիմքերը նախատեսել **հենց Մահմանադրությամբ**: Ավելին, պետք է պարտադիր պահանջ լինի առ այն, որպեսզի նախքան որևէ որոշումը ընդունելը **փորձագիտական որևէ մարմին իր կարծիքը տա պաշտոնից ազատելու բավարար հիմքերի առկայության վերաբերյալ**»:

40. Ամեն դեպքում, Գլխավոր դատախազը պետք է, պաշտոնից ազատման ընթացակարգերի շրջանակներում, պետք է օգտվի արդարացի, այդ թվում՝ Խորհրդարանի առջև լուսմաների հնարավորությունից:

42. Այն երկրներում, որտեղ Գլխավոր դատախազն ընտրվում է Խորհրդարանի կողմից, վերջինս հաճախ նաև իրավունք ունի ազատելու նրան: Այդ դեպքում, պահանջվում է արդարացի լուսմաների անցկացում: Անգամ նման երաշխիքի առկայության դեպքում գոյություն ունի քաղաքականացման ռիսկը՝ «Ոչ միայն հաշվի է առնվում Խորհրդարանում բարձրաձայնվող կոնկրետ գործերի առթիվ պոպուլիստական ճնշման առկա ռիսկը, այլ նաև խորհրդարանական վերահսկողությունը նույնպես կարող է անուղղակի ճնշում գործադրել դատախազի վրա՝ օրենսդրի համար ոչ հաճո որոշումներ կայացնելուց խուսափելու և նրա համար ակնհայտորեն հաճելի որոշումներ կայացնելու համար»... Հետևաբար, պետք է բացառվի կոնկրետ գործերով

²¹⁷ Լիազորությունների դադարման ոչ վերաբերելի հիմք է, օրինակ, դատախազի հաստիքի կրճատումը, որն իհարկե, չի կարող կիրառվել Գլխավոր դատախազի նկատմամբ:

քրեական հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու նկատմամբ Խորհրդարանին որևէ կերպ հաշվետու լինելը»²¹⁸:

Այսպիսով, անհրաժեշտ է՝ Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցման վերը նշված հիմքերը հատակ և վերաբերելիորեն մյուս դատախազների հետ նմանությամբ նախատեսել Սահմանադրությամբ, ինչպես նաև՝ նախատեսել ԱԺ իրավասու մշտական հանձնաժողովի կողմից Գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցման հարցով փորձագիտական հանձնաժողովի կարծիք ստանալու, իսկ ԱԺ-ի կողմից Գլխավոր դատախազի համար արդարացի քննություն կամ լուսմներ կազմակերպելու պարտադիր լինելը:

3.2.3. ՀՀ Գլխավոր դատախազի լիազորությունները

Դատախազության մասին օրենքի 9-րդ հոդվածի (Գլխավոր դատախազը) 2-րդ մասի համաձայն (**առավել վերաբերելի կետերի ընդգծմամբ**)

«...2. Գլխավոր դատախազը՝

1) դատախազության կոլեգիայի առաջարկությամբ սահմանում է դատախազության լիազորությունների իրականացման ուղղությունները.

2) կատարում է աշխատանքի բաժանում իր տեղակալների, գլխավոր դատախազության ավագ դատախազների ու դատախազների միջև.

3) հաստատում է գլխավոր դատախազության և զինվորական դատախազության կառուցվածքը.

4) սահմանում է դատախազությունների, գլխավոր դատախազության ավագ դատախազների ու դատախազների լիազորությունների իրականացման շրջանակը.

5) սահմանում է օրենքով նախատեսված աշխատավարձի ֆոնդի շրջանակներում դատախազության հաստիքների քանակը և հաստիքացուցակը.

6) հաստատում է «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը».

7) իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր.

8) իրականացնում է «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքով սահմանված լիազորություններ.

9) *(կեսն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-26-Ն)²¹⁹*

10) հաստատում և փոփոխում է հայեցողական պաշտոնների, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց անվանացանկը, հաստիքների քանակը և հաստիքացուցակը.

11) ստեղծում է գլխավոր դատախազին առընթեր խորհուրդներ, աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ, սահմանում դրանց գործունեության կարգը.»: *(9-րդ հոդվածը խմբ., փոփ. 21.01.20 ՀՕ-26-Ն):*

²¹⁸ ՎՀ-ի Զեկույց դատախազության անկախության չափորոշիչների մասին», կետ 39-40, 42), բոլոր ընդգծումները՝ ՎՀ-ի:

²¹⁹ Ուժը կորցրած նախկին 9-րդ կետը նախատեսում էր, որ Գլխավոր դատախազը հաստատում և փոփոխում է դատախազության աշխատակազմի կանոնադրությունը և դատախազության աշխատակազմի կառուցվածքը: Սա, ինքնին, դրական փոփոխություն էր՝ պետական, և հատկապես իրավապահ մարմինների ղեկավարների՝ օպերատիվ արձագանքման արագությամբ չպայմանավորված իրավաստեղծ/նորմաստեղծ գործունեությունը սահմանափակելու և այն հնարավորին չափ օրենսդիր մարմնին վերապահելու տեսանկյունից, ինչը մեծացնում է ժողովրդավարական վերահսկողությունը իրավապահ մարմինների նկատմամբ: Այնուամենայնիվ, պահպանվել է Գլխավոր դատախազի ավելի լայն, այն է՝ «իր իրավասության սահմաններում ներքին և անհատական իրավական ակտեր» ընդունելու լիազորությունը, այսինքն՝ այդ թվում՝ ՀՀ Դատախազության Կանոնադրությունն ընդունելու լիազորությունը (տես՝ նույն հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը):

Վերը մեջբերված դրույթները, չնայած որ լեզվտիմորեն բխում են Գլխավոր դատախազի ինստիտուցիոնալ կարգավիճակից²²⁰, այնուամենայնիվ, առաջացնում են խնդիրներ՝ կապված մյուս դատախազների պաշտոնավարման երաշխիքների, որոշ ստորադաս դատախազների (մասնավորապես՝ ԳԴ տեղակալների) լիազորությունների շրջանակների հստակության և ստորադաս դատախազների անկախության և դատախազական ներքին ժողովրդավարական ներկայացուցչությամբ ձևավորված մարմինների բացակայության տեսակետից²²¹: Մասնավորապես՝

1. Գլխավոր դատախազի կողմից իր տեղակալների միջև աշխատանքի բաժանում կատարելը խնդրահարույց է այն տեսակետից, որ տեղակալներից յուրաքանչյուրը «համակարգում է գլխավոր դատախազի կողմից դատախազության համակարգում իրեն հանձնարարված ոլորտի (այսուհետ՝ իր համակարգման ոլորտ) աշխատանքները» (տես՝ Դատախազության մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), այսինքն՝ Գլխավոր դատախազը իր անմիջական ստորադաս դատախազների նկատմամբ արդեն իսկ կատարել է նրանց միջև աշխատանքի նոր բաժանումը արդեն իսկ համակարգման ոլորտից դուրս աշխատանքներ հանձնարարելով, անխուսափելիորեն անհստակություն և անկայունություն է առաջացնելու դատախազների տեղակալների համակարգման ոլորտների տարանջատման և որ ավելի կարևոր է՝ արդեն նրանց համակարգման ներքո գործող ստորադաս դատախազների և կառուցվածքային միավորների դատախազների ֆունկցիոնալ ենթակայության տեսակետից: Նշվածը չի նպաստելու ԳԴ տեղակալների համակարգման ոլորտի միավորների պրակտիկայի միասնականությանը և արդյունավետությանը՝ վերադաս դատախազներին ԳԴ կողմից անվերահսկելի հայեցողությամբ փոփոխելու արդյունքում:

Հետևաբար, մեր առաջարկն է, որպեսզի 9-րդ հոդվածի 2-րդ հոդվածի 2-րդ կետում «2) կատարում է աշխատանքի բաժանում իր տեղակալների, գլխավոր դատախազության ավագ դատախազների ու դատախազների միջև.» դրույթը փոփոխվի հետևյալ խմբագրությամբ՝ «2) կատարում է աշխատանքի բաժանում իր տեղակալների (ՀՀ Դատախազության օրենքով սահմանված և նրանց համակարգմանը Գլխավոր դատախազի կողմից վերապահված համապատասխան ոլորտի շրջանակներում), գլխավոր դատախազության ավագ դատախազների ու դատախազների միջև.»:

2. Դատախազության մասին օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերը, ինչպես նաև նույն մասի 3-րդ կետը, խնդրահարույց են՝ նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի համակարգային գործողության տեսակետից, որոնց համաձայն՝

«1. Դատախազին պաշտոնից ազատելու հիմք են՝

... 5) հաստիքի կրճատումը.

6) դատախազության կառուցվածքային այլ ստորաբաժանում կամ այլ դատախազություն փոխադրվելուց հրաժարվելը, դատախազության կառուցվածքային այն ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, որտեղ նա պաշտոն է զբաղեցրել.»:

Այս դրույթները՝ Գլխավոր դատախազի Դատախազության մասին օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 10-րդ կետերով, և որ առավել կարևորն է՝ 7-րդ կետով նախատեսված ԳԴ

²²⁰ Տես՝ նույն 9-րդ հոդվածի 1-ին մասը՝ «1. Գլխավոր դատախազը ղեկավարում և վերահսկում է դատախազության գործունեությունը և պատասխանատու է դատախազության բնականոն գործունեության ապահովման համար»:

²²¹ Վերջինս նշված հարցը մանրամասն քննարկվում է Հետազոտության 3.4 կետում:

լիազորությունների²²² համակարգային գործողության արդյունքում, լիակատար և ոչնչով չսահմանափակված հնարավորություն ունի, առանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու, պաշտոնից ազատել ոչ վստահելի կամ չափից դուրս անկախ դատախազներին:

Հետևաբար, մեր առաջարկն է, որպեսզի 62-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերը վերացվեն որպես դատախազին պաշտոնից ազատելու հիմք, կամ նշված դեպքերում նախատեսվի համարժեք պաշտոնում ողջամիտ ժամկետում նշանակվելու պահանջը, իսկ մինչ այդ՝ դատախազի աշխատավարձի և կարգավիճակի պահպանվելու նորմը:

3. Բացակայում է որևէ դրույթ, որով հնարավորություն կտրվի վիճարկելու Գլխավոր դատախազի լիազորությունների իրացումը ու երաշխիքներ կստեղծվեն դրանց իրացման ընթացքում կամայականությունները կանխելու համար: Ասվածը, առաջին հերթին, կարևոր է ստորադաս դատախազների հետ հարաբերություններում, որի մասին արդեն իսկ նշվեց: Մինևույն ժամանակ, նույն անկախ և այդ առումով՝ ոչ վստահելի դատախազներից կամայականորեն ազատվելու ռիսկերը կարող են չեզոքացվել նախորդ՝ Գլխավոր դատախազի՝ որպես վերադաս դատախազ ստորադաս դատախազներին տրվող հանձնարարությունների օրինականությունը վիճարկելու հնարավորության առումով: Հետազոտության 2.2.2.7 ենթակետում (Դատախազի հանձնարարությունների և դատախազին տրվող տրվող հանձնարարությունների օրինականության ապահովումը) արդեն իսկ քննարկվել են ստորադաս դատախազների կողմից՝ վերադասներից անօրինական հանձնարարությունները վիճարկելու օրենքով սահմանված և դեռևս անհրաժեշտ երաշխիքները, սակայն օրենքում առկա այդ երաշխիքների կիրառման շրջանակներում **ցավալիորեն չի դիտարկվում, որ Գլխավոր դատախազը, բացի դատախազության որպես միասնական կառույցի ղեկավար, նաև վերադաս է մյուս դատախազների համար: Այս բացի մասին հստակ նշել է ՏՀԶԿ-ն Հայաստանի վերաբերյալ իր 4-րդ շրջանի Մշտադիտարկման զեկույցում՝**

«[Դատախազության մասին] օրենքը ստորադաս դատախազին հնարավորություն է տալիս առարկելու վերադաս դատախազի հանձնարարությունների և ցուցումների դեմ՝ դրանք անօրինական կամ անհիմն համարելու դեպքում: Այնուամենայնիվ, այս կանոնը, ինչ-որ պատճառներով, չի կիրառվում այն հանձնարարությունների և ցուցումների նկատմամբ, որոնք տրվել են Գլխավոր դատախազի կողմից»²²³:

Այս դիտարկման հիման վրա ՏՀԶԿ-ն Հայաստանին ներկայացրել է հետևյալ Երաշխավորությունը՝

«4. Դատախազներին իրավունք վերապահել Դատախազության ներսում գործող մարմնին առարկություններ ներկայացնել Գլխավոր դատախազի կողմից տրված հանձնարարությունների և ցուցումների վերաբերյալ՝ դրանք անօրինական կամ անհիմն համարելու դեպքում»²²⁴:

Բացի այդ, որևէ կերպ սահմանված չեն ԳԴ լիազորությունների իրացման սկզբունքները էթիկայի և որակավորման հանձնաժողովների հետ հարաբերություններում՝ նման

²²² Գլխավոր դատախազը «իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր», այսինքն՝ այդ թվում՝ ՀՀ Դատախազության Կանոնադրությունն ընդունելու լիազորության շրջանակներում (տես՝ նույն հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը), կարող է լուծարել և ստեղծել կառուցվածքային առանձին միավորներ ստորաբաժանումներ, ինչպես նաև դրանց ներսում բաժիններ: Դատախազության մասին օրենքը (տես՝ հոդված 12 և հաջորդիվ) միայն սահմանում է այդ ստորաբաժանումների տիպային կառուցվածքը, ղեկավարման, սկզբունքները և այլն, սակայն՝ ոչ տեսակները, թե ինչպիսի ստորաբաժանումներ կարող են լինել, ոչ էլ՝ հաստիքները: Այս գործառնությունները 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի ուժով՝ «3) հաստատում է գլխավոր դատախազության և զինվորական դատախազության կառուցվածքը», վերապահված են Գլխավոր դատախազին:

²²³ ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց, էջ 82:

²²⁴ ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց, էջ 91:

սկզբունքների բացակայության պատճառով, որի հիմքում ընկած է դատախազությունում բոլոր դատախազների՝ անկախ զբաղեցրած պաշտոնից մասնակցությամբ և/կամ ընտրությամբ մասնակցությամբ Դատախազության ներկայացուցչականության մարմինների բացակայությունը, որի մասին, խոսվում է սույն Հետազոտության 3.4 կետում, որտեղ քննարկվում է նաև այն, թե որ մարմինը պետք է քննի Գլխավոր դատախազի հանձնարարությունների օրինականության և հիմնավորվածության հարցը: Գլխավոր դատախազի մյուս լիազորությունները սույն Հետազոտության հետագա ընթացքում քննարկվում են կիրառաբար այն ոլորտների, որտեղ դրանք իրացվում են (դատախազների նշանակում, պաշտոնից ազատում, կարգապահական պատասխանատվության այլ միջոցների կիրառում և այլն):

3.3. ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալները

3.3.1. ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալների համակարգման ոլորտները և նրանց միջև աշխատանքի բաժանումը

Դատախազության մասին օրենքի 10-րդ հոդվածի վերաբերելի դրույթների համաձայն՝

«1. Գլխավոր դատախազի տեղակալը՝

1) համակարգում է գլխավոր դատախազի կողմից դատախազության համակարգում իրեն հանձնարարված ոլորտի (այսուհետ՝ իր համակարգման ոլորտ) աշխատանքները.

2) իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր.

... 2. Գլխավոր դատախազի տեղակալն իր համակարգման ոլորտի սահմաններում իրականացնում է Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված բոլոր լիազորությունները»:

Մեջբերված դրույթների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ ավանդաբար Գլխավոր դատախազների տեղակալների համակարգման ոլորտը կազմել է Դատախազության սահմանադրական այս կամ այն լիազորությունը կամ գործունեության ուղղությունը, որի հիման վրա էլ ձևավորվել են դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները: Այս տեսակետից, կարևոր է, որպեսզի Դատախազության մասին օրենքում հստակ սահմանվեն Գլխավոր դատախազների համակարգման ոլորտները՝ որոշակի կոնկրետ ուղղության համար պատասխանատու ԳԴ տեղակալների իրավասության ոլորտը օրենքով, այլ ոչ թե ԳԴ հայեցողությամբ որոշելու համար: Նաև դա կարևոր է, ինչպես նշվեց վերևում ԳԴ լիազորություններին նվիրված ենթակետում, ԳԴ տեղակալների՝ որպես համապատասխան ոլորտներում գործող դատախազների համար վերադաս հանդիսացող դատախազների կողմից իրենց համակարգման ոլորտներում միասնական դատախազական պրակտիկա ձևավորելու և ընդհանրապես ստորադաս դատախազների հետ հարաբերություններում կայունության և որոշակիության ապահովման տեսակետից: Այստեղից էլ բխում է մեր վերևում արված առաջարկն այն մասին, որ 9-րդ հոդվածի 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ԳԴ կողմից իր տեղակալների միջև աշխատանքի բաժանում կատարելու լիազորությունը սահմանափակվի ՀՀ Դատախազության գործունեության օրենքով սահմանված և այդ տեղակալներից յուրաքանչյուրի համակարգմանը ԳԴ կողմից վերապահված համապատասխան ոլորտի շրջանակներով: Նույն մոտեցումն էլ, Դատախազության մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ որպես փոխկապակցված դրույթի նկատմամբ՝ սահմանելով, որ՝ «1. Գլխավոր դատախազի տեղակալը՝ 1) համակարգում է ՀՀ Դատախազության օրենքով սահմանված և Գլխավոր դատախազի կողմից իրեն հանձնարարված ոլորտի (այսուհետ՝ իր համակարգման ոլորտ) աշխատանքները»:

Այսպիսով, քանի որ համակարգման ոլորտները պետք է բխեն Դատախազության սահմանադրական հետևյալ լիազորություններից (տես՝ Մահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը)

- 1) քրեական հետապնդման հարուցում.
- 2) հսկողություն մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.
- 3) դատարանում մեղադրանքի պաշտպանություն.
- 4) դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկում.
- 5) պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացում.
- 6) պետական շահերի պաշտպանության հայցի հարուցում դատարաններում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս ոլորտներից որոշները սերտորեն, ինչպես նշվեց Հետազոտության նախորդ գլուխներում փոխկապակցված են միմյանց հետ, նպատակահարմար է, որպեսզի օրենքով սահմանվեն Դատախազության գործունեության հետևյալ ոլորտները²²⁵.

- 1) քրեական հետապնդման հարուցում և հսկողություն մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.
- 2) դատարանում մեղադրանքի պաշտպանություն և դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկում.
- 3) պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացում.
- 4) պետական շահերի պաշտպանության հայցի հարուցում դատարաններում:

Դատախազության գործունեության այս համակարգման ոլորտները պետք է նախատեսել Դատախազության մասին օրենքի 10-րդ հոդվածում (Գլխավոր դատախազի տեղակալները)՝ սահմանելով, որ Գլխավոր դատախազի տեղակալներից յուրաքանչյուրը համակարգում է Գլխավոր դատախազի կողմից իրեն հանձնարարված մեկ ոլորտ: Ինչ վերաբերում է նրան, որ Դատախազության կառուցվածքում կան ստորաբաժանումներ կամ կառուցվածքային միավորներ, որոնք այս դեպքում կարող են դուրս մնալ Դատախազությունում առկա համակարգման ոլորտներից ու ըստ այդմ՝ հայտնվել ԳԴ տեղակալների համակարգումից դուրս, օրինակ՝ միջազգային և իրավական կապերի վարչությունը, իրավական ապահովման և կազմակերպական վարչությունը, Դատախազության պաշտոնական ամսագիրը և այլն, ապա դրանք ինքնին չեն հանդիսանում սահմանադրական լիազորություններ, այլ ուղղված են սահմանադրական լիազորությունների կատարմանը, **օժանդակում են դրանց: Այսինքն՝ նշված լիազորությունները պետք է կատարվեն «Դատախազության աշխատակազմ» հիմնարկի կողմից:**

Առաջարկվող փոփոխությունների ընդունման արդյունքում՝

- 1) հստակ կամրագրվի յուրաքանչյուր ԳԴ տեղակալի համակարգման ոլորտը,
- 2) կվերանա դատախազական և ոչ դատախազական գործառույթների համակարգումը նույն տեղակալի կողմից,

²²⁵ Սույն Հետազոտության 2-րդ գլխի կառուցվածքը ամբողջությամբ հիմնված է այս սկզբունքի վրա:

3) Սահմանադրությամբ չնախատեսված դատախազական լիազորությունները չեն իրականացվի դատախազների կողմից և հակառակը՝ ոչ դատախազների կողմից չեն իրականացվի Սահմանադրությամբ Դատախազությանը վերապահված գործառնությունները,

4) օրենքով կսահմանվի ԳԴ տեղակալների թիվը, որը 4-ն է,

5) ԳԴ տեղակալների համակարգման ոլորտը չի կարող փոխվել ԳԴ կողմից՝ այլ կերպ, քան ԳԴ տեղակալին այլ ոլորտը համակարգող տեղակալ նշանակելու դեպքում, իսկ աշխատանքի բաժանումը ԳԴ տեղակալների միջև ԳԴ կողմից կկատարվի բացառապես նրանց համակարգման ոլորտի շրջանակներում, և

6) իրական անկախություն ու ներկայացուցչականություն կապահովվի էթիկայի և որակավորման հանձնաժողովների համար, որոնք լինելու են ԳԴ տեղակալների համակարգման ոլորտներից դուրս²²⁶:

Կարծում ենք, այս փոփոխություններով առավելագույն հավասարակշռություն կհաստատվի մի կողմից՝ նշված կարևորագույն հարցերը (առաջին հերթին՝ համակարգման ոլորտների ու ԳԴ տեղակալների թվի սահմանումը) օրենքով կարգավորելու անհրաժեշտության, և մյուս կողմից՝ առանձին կարևոր հարցերով (առաջին հերթին՝ ԳԴ տեղակալներին նշանակելը, նրանց միջև՝ նրանց վերապահված համակարգման ոլորտի շրջանակներում աշխատանքի բաժանում կատարելը) ԳԴ պատշաճ հայեցողության իրացումն ապահովելու անհրաժեշտության միջև:

Այս առումով, առանձնակի ուշադրության կարիք ունի ի պաշտոնե Գլխավոր դատախազի տեղակալ համարվող ՀՀ զինվորական դատախազի պաշտոնը և ՀՀ զինվորական դատախազության կենտրոնական մարմնի գոյությունը: Ըստ էության, ՀՀ զինվորական դատախազությունը առանձին Դատախազություն է զինվորական գործերով, որի դատախազները իրականացնում են և քրեական հետապնդման հարուցումն ու մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունը, և դատարաններում մեղադրանքի պաշտպանությունը և պետական շահերի պաշտպանությունը: Ստացվում է, Դատախազության սահմանադրական լիազորությունները բոլոր ուղղություններով²²⁷ իրականացնում է ՀՀ զինվորական դատախազությունը: Մեր առաջարկված մոդելի շրջանակներում, քանի որ Դատախազության գործունեության համակարգման ոլորտները բխում են սահմանադրական լիազորությունների ուղղություններից, անհրաժեշտ է զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերի առանձնահատկությունների ինստիտուցիոնալ արտացոլումը սահմանափակել միայն տարածքային դատախազությունների մակարդակով: Այսինքն՝ հրաժարվելով Զինվորական դատախազության կենտրոնական մարմնի գաղափարից, պահպանել զինվորական կայազորների դատախազությունները, որոնց գոյությունը օբյեկտիվորեն արդարացված է, իսկ կենտրոնական ապարատի լիազորություններն իրականացնելու համար Գլխավոր դատախազության համապատասխան վարչություններում նախատեսել դատախազների լրացուցիչ հաստիքներ: Ընդ որում, այս գործերը որևէ առանձնակի մասնագիտացում չեն

²²⁶ Հետազոտության 3.4.3 կետում քննարկվում է այս հանձնաժողովների իրական անկախությունն ու ներքին ժողովրդավարական ներկայացուցչականությունն ապահովող ձևավերման առաջարկվելիք գործընթացը, որի հիմքում ընկած է այդ հանձնաժողովներն ընտրող Դատախազների ընդհանուր ժողովի կամ խորհրդի գաղափարը՝ Դատավորների ընդհանուր ժողովի հետ անալոգիայով:

²²⁷ Բացառություն է կազմում միայն մեկ ուղղության՝ պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինակաչության նկատմամբ հսկողությունը, այն էլ՝ միայն պատիժների մասով, քանի որ Զինվորական դատախազությունը հսկողություն է իրականացնում է նաև զինվորական գործերով հարկադրանքի միջոցների կիրառման օրինակաչության նկատմամբ:

պահանջում, և ԳԴ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների դատախազները կարող են այդ հանցատեսակներով իրականացնել իրենց համապատասխան գործառույթները՝ ընդհանուր աշխատանքային ծանրաբեռնվածության շրջանակներում՝ ճիշտ այնպես, ինչպես դա անում են ՀՀ քրեական օրենսգրքի այլ գլուխներով նախատեսված հանցատեսակների պատկանող հանցագործությունների վերաբերյալ գործերով:

Իսկ զինվորական դատախազության տարածքային ստորաբաժանումները՝ ի դեմս կայազորների դատախազությունների, կարող են շատ հանգիստ համարվել ընդհանուր դատախազության տարածքային ստորաբաժանումներ, քանի որ, ինչպես և օրինակ, Գեղարքունիքի մարզային դատախազության դեպքում, նրանց գոյությունը պայմանավորված է հանցագործությունների կատարման տեղի պարագայով՝ և դրանով որոշվող տարածքային ենթակայությամբ:

Նույն տրամաբանությամբ, անհրաժեշտ է լուծարել Երևան քաղաքի դատախազությունը՝ որպես տարածքային դատախազության ինստիտուցիոնալ կազմակերպման արտացոլում, որն արդեն իսկ իրագործված է Երևան քաղաքի համայնքային դատախազությունների տեսքով (այսինքն՝ դատախազության տարածքային ներկայացվածության կրկնօրինակումից խուսափելու նպատակով), և մյուս կողմից՝ չի արտացոլում որևէ առանձին սահմանադրական լիազորության իրականացման ինստիտուցիոնալ անհրաժեշտությունը²²⁸:

3.3.2. ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալին ներկայացվող պահանջները և նրա նշանակման կարգը

Դատախազության մասին օրենքի 36-րդ հոդվածի վերաբերելի դրույթների համաձայն՝

«1. Գլխավոր դատախազի տեղակալ կարող է նշանակվել սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձր մասնագիտական որակներ և բարձրագույն իրավաբանական կրթություն ստանալուց հետո իրավաբանի մասնագիտական աշխատանքի առնվազն յոթ տարվա փորձառություն ունեցող անձը: Գլխավոր դատախազի տեղակալ չի կարող նշանակվել այն անձը, որը նախկինում դատախազի, դատավորի կամ քննիչի (քննչական բաժնի պետի, քննչական մարմնի ղեկավարի) պաշտոնից ազատվել է կարգապահական տույժի կիրառման հետևանքով:

... 3. Եթե գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուն զբաղեցնում է դատախազի պաշտոն, ապա նա, գլխավոր դատախազի կողմից, խորհրդակցելով դատախազության կոլեգիայի հետ, կարող է նշանակվել գլխավոր դատախազի տեղակալ՝ առանց սույն հոդվածով սահմանված կարգով անցկացվող մրցույթի: Սույն մասով գլխավոր դատախազի տեղակալ չնշանակվելու դեպքում գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուները (թեկնածուն) ընտրվում են (ե) որակավորման հանձնաժողովի կողմից՝ սահմանած կարգով անցկացվող մրցույթի միջոցով՝ գաղտնի քվեարկությամբ, որակավորման հանձնաժողովի անդամների առնվազն վեց ձայնով ընդունված որոշմամբ: Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը: Գլխավոր դատախազը գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուներից մեկին նշանակում է գլխավոր դատախազի տեղակալ:

... 7. Մրցույթն անցկացնում է որակավորման հանձնաժողովը թեկնածուի հետ անցկացվող հարցազրույցի միջոցով հետևյալ փուլերով՝

1) յուրաքանչյուր թեկնածուի փաստաթղթերի և մասնագիտական փորձառության ուսումնասիրություն: ...

2) դատախազի վարքագծի կանոններին և ղեկավարման ու կառավարչական հմտություններին վերաբերող իրավիճակի ներկայացմամբ թեկնածուի կողմից իրականացվող վերլուծություն և դիրքորոշման ներկայացում՝ դատախազի վարքագծի կանոնների և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ ղեկավարման և

²²⁸ Այս մասին առանձին խոսվում է Հետազոտության 3.4.4 ենթակետում:

կառավարչական հիմնությունների տիրապետման, ինչպես նաև տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական հատկանիշները գնահատելու համար...

3) համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի նորմի, դատական ակտում արտահայտված դիրքորոշումներ և այլն) թեկնածուի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում...:

8. Մրցույթն անցկացվում է նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

9. Գլխավոր դատախազի կողմից սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում գլխավոր դատախազի տեղակալ չնշանակվելու կամ որակավորման հանձնաժողովի՝ սույն հոդվածի 3-րդ մասով ընտրված թեկնածուների թվից գլխավոր դատախազի տեղակալ չնշանակվելու դեպքերում, ինչպես նաև եթե մրցույթի արդյունքներով որակավորման հանձնաժողովը չի ընտրում գլխավոր դատախազի տեղակալի թեկնածու, ապա սույն հոդվածով սահմանված կարգով յոթնօրյա ժամկետում հայտարարվում է նոր մրցույթ:

10. Մրցույթի կազմակերպման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով:

11. Սույն հոդվածով սահմանված կարգավորումները չեն կիրառվում գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների ոլորտը համակարգող տեղակալի նշանակման գործընթացի նկատմամբ, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: **(36-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 16.04.20 ՀՕ-245-Ն):**

Նշված դրույթները խնդրահարույց են մի քանի առումներով.

1. Ինչպես տեսնում ենք ԳԴ տեղակալների համար սահմանվող պահանջները՝ էականորեն տարբերվում են, թե պոզիտիվ պայմանների (ով կարող է լինել ԳԴ տեղակալ), թե նեգատիվ պայմանների (ով չի կարող լինել ԳԴ տեղակալ) տեսակետից:

Ոռգիտիվ պայմանների մասով, անհամապատասխանությունները հետևյալն են՝

- ԳԴ տեղակալ կարող է նշանակվել բոլոր դատախազներին Դատախազության մասին օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով ներկայացվող ընդհանուր պայմաններին բավարարող անձը՝ 22-ից մինչև 65 տարեկան, մինչդեռ ԳԴ-ի թեկնածուի համար նախատեսված է 35 տարին լրացած լինելու պահանջը.
- ԳԴ տեղակալ կարող է նշանակվել միայն «բարձրագույն իրավաբանական կրթություն ստանալուց հետո իրավաբանի մասնագիտական աշխատանքի առնվազն յոթ տարվա փորձառություն ունեցող անձը», մինչդեռ ԳԴ-ի համար պահանջվում է «մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառություն».
- **ԳԴ տեղակալի համար ընտրական իրավունք ունենալը չի պահանջվում:**

Նեգատիվ պայմանների մասով, անհամապատասխանությունները հետևյալն են՝

- ԳԴ տեղակալ չի կարող նշանակվել, ըստ Դատախազության մասին օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի, այն անձը, ով «նախկինում դատախազի, դատավորի կամ քննիչի (քննչական բաժնի պետի, քննչական մարմնի ղեկավարի) պաշտոնից ազատվել է կարգապահական տույժի կիրառման հետևանքով»: Մինչդեռ, ինչպես նշեցինք, Գլխավոր դատախազի նշանակմանը նվիրված ենթակետում, ԳԴ-ին ներկայացվող Մասնանադրությունից բացի այլ, լրացուցիչ, այդ թվում՝ նեգատիվ պայմաններ, Դատախազության մասին օրենքում չեն նախատեսվում, այլ՝ հղում է կատարվում մյուս բոլոր դատախազների համար պաշտոնում նշանակվելու առկա սահմանափակումներին, որոնք նախատեսված են Դատախազության մասին օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում, որտեղ մասնավորապես ասվում է, որ՝ «Դատախազ չի կարող նշանակվել այն անձը՝ 7) որը նախկինում դատախազի կամ դատավորի կամ քննիչի (քննչական բաժնի պետի, քննչական մարմնի ղեկավարի)

պաշտոնից ազատվել է կարգապահական տույժի կիրառման արդյունքում, **եթե կարգապահական տույժի կիրառումից չի անցել մեկ տարի**»։ Փաստորեն, ստացվում է, որ անձը չի կարող Գլխավոր դատախազի տեղակալ դառնալ, եթե երբևէ իր կյանքում ենթարկվել է նշված կարգապահական տույժի, իսկ նույն տույժի ենթարկված անձը կարող է հետագայում դառնալ Գլխավոր դատախազ՝ տույժի կիրառումից մեկ տարի անցնելուց հետո, **այսինքն՝ ԳԴ-ի տեղակալի համար, ԳԴ-ի համեմատ, սահմանված են ավելի խիստ պայմաններ**։

ԳԴ-ի տեղակալների նշանակմանը ներկայացվող պնդումները ու ներգաղթի պայմանների օրենսդրական կարգավորման ընթացքում պետք է հաշվի առնել այն փաստը, որ ԳԴ տեղակալներից յուրաքանչյուրը որոշակի ժամկետով փոխարինում կարող է փոխարինել ԳԴ-ին։ Այսինքն՝ պայմաններ նախատեսելու հիմքում պետք է ընկած լինի անձի գործառնությունների նմանությունը։ Այն, որ իր աշխատանքային գործունեության մեծ մասը ԳԴ տեղակալը իրականացնում է միայն ԳԴ տեղակալի գործառնություններ, չի նշանակում, որ թեկուզ փոքր ժամանակահատվածով, օրինակ՝ ԳԴ-ի արձակուրդ գնացած լինելու կամ պարտականությունները կատարելու այլ անհնարիության դեպքում ԳԴ-ի գործառնությունները պետք է իրականացնի ԳԴ-ի համար Սահմանադրությամբ նախատեսված պայմաններին չբավարարող անձը։ Հետևաբար, պետք է կատարել սկզբունքային փոփոխություն և

- սահմանել, որ ԳԴ տեղակալների թեկնածուներին պետք է բավարարեն ՀՀ ԳԴ-ին ներկայացվող պահանջներին, և
- սահմանել, որ Գլխավոր դատախազն ու ԳԴ տեղակալները բոլոր դեպքերում պետք է բավարարեն դատախազ նշանակվելու համար ներկայացվող պահանջներին։
- նշված փոփոխությունները կատարել Սահմանադրությամբ՝ նույն պահանջների բովանդակային միասնականությունը ապահովելով նաև ամրագրման աղբյուրի միասնականության միջոցով։

Կարող է հակափաստարկ հնչել, որ ԱԺ-ի կողմից ԳԴ-ի ընտրությունը նաև որոշակի վստահության քվե է վերջինիս կողմից իր տեղակալներին ընտրելու հարցում, սակայն այդ քվեն չի կարող տարածվել այնքան, որ Գլխավոր դատախազը իր փոխարեն նշանակի, թեկուզ որոշակի ժամկետով մի անձի, ում ԱԺ-ն ԳԴ չէր կարող նշանակել։ Ինչ վերաբերում է ԳԴ-ի ու նրա տեղակալների կողմից մյուս բոլոր դատախազներին ներկայացվող պայմաններին բավարարելուն, ապա դրանք նվազագույն պահանջներն են և Սահմանադրությամբ պետք է սահմանվեն միայն դրանցից տարբերվող ավելի բարձր պայմաններ, որոնք, ինչպես ասվեց նույնը պետք է լինեն ԳԴ-ի ու նրա տեղակալների համար։

2. ԳԴ տեղակալներին, ինչպես նաև մյուս բոլոր դատախազներին նշանակելու (ինչի մասին կխոսվի Հետազոտության 3.5 կետում) գործընթացներում չափազանց լայն է և իրականում՝ անսահմանափակ, ԳԴ հայեցողությունը։ Դատախազության մասին օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասից բխում է, որ՝

- ԳԴ տեղակալի դատախազ թեկնածուին Գլխավոր դատախազը կարող է նշանակել առանց մրցույթի՝ խորհրդակցելով Դատախազության կոլեգիայի հետ, որն ամբողջությամբ նույն ԳԴ կողմից նշանակվող դատախազներն են²²⁹։ Այսինքն՝ Գլխավոր դատախազն է որոշում՝ անցկացնել այս դեպքում մրցույթ, թե ոչ, ինչը բացի բովանդակային առումով ձևական լինելուց, սխալ է նաև մեթոդաբանորեն,

²²⁹ Դատախազության կոլեգիայի և Որակավորման հանձնաժողովի ինստիտուցիոնալ անկախության երաշխիքների մասին խոսվում է Հետազոտության հաջորդ՝ 3.4 կետում։

քանի որ սեփական ցանկությամբ Գլխավոր դատախազը ոչ կիրառելի է դարձնում օրենքով սահմանված պայմանը՝ Կոլեգիայի հետ խորհրդակցելը.

- Մրցույթ անցկացվելու դեպքում, գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուները (թեկնածուն) ընտրվում են (է) ԳԴ կողմից նշանակված Որակավորման հանձնաժողովի կողմից՝ սահմանած կարգով անցկացվող մրցույթի միջոցով, որի կազմակերպման կարգը սահմանվում է դարձյալ գլխավոր դատախազի հրամանով (տես՝ Դատախազության մասին օրենքի 36-րդ հոդվածի 10-րդ մասը).
- Չնայած Օրենքը 36-րդ հոդվածի 7-րդ մասում պարունակում Գլխավոր դատախազի կողմից՝ Որակավորման հանձնաժողովի ընտրած թեկնածուներից մեկին կամ թեկնածուին նշանակելու մասին իմպերատիվ նորմ, որի ձևակերպումն է «Գլխավոր դատախազը գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուներից մեկին նշանակում է գլխավոր դատախազի տեղակալ:»՝ ի տարբերություն սովորաբար այս դեպքերում օգտագործվող՝ «կարող է նշանակել» ձևակերպման, այնուամենայնիվ, նույն հոդվածի 9-րդ մասը դարձյալ որևէ կասկած չի թողնում, որ գործ ունենք ԳԴ բացարձակ հայեցողության հետ: Մասնավորապես, նշվում է, որ՝ Գլխավոր դատախազի կողմից առանց մրցույթի գլխավոր դատախազի տեղակալ չնշանակվելու կամ որակավորման հանձնաժողովի կողմից մրցույթի արդյունքում ընտրված թեկնածուների թվից գլխավոր դատախազի տեղակալ չնշանակվելու դեպքերում, ինչպես նաև եթե մրցույթի արդյունքներով որակավորման հանձնաժողովը չի ընտրում գլխավոր դատախազի տեղակալի թեկնածու, ապա սույն հոդվածով սահմանված կարգով յոթնօրյա ժամկետում հայտարարվում է նոր մրցույթ:
- Գլխավոր դատախազի կողմից վերը նշված հարցերով իր հայեցողությունն իրացնելու համար, այն է՝ անցկացնել, թե չանցկացնել մրցույթ, նշանակել, թե չնշանակել Որակավորման հանձնաժողովի կողմից ընտրված թեկնածուին, ԳԴ այս որոշումներին **օրենքով ներկայացված չէ պատճառաբանվածության պահանջ, ինչը ամբողջ գործընթացը դարձնում է ծայրահեղ ձևական և ի սկզբանե ԳԴ կողմից կանխորոշված:**
- Վերջապես՝ Օրենքի 10-րդ մասը ԳԴ-ին տալիս է իրավունք իր հրամանով սահմանելու մրցույթի անցկացման կարգը, ինչով չի ապահովում օրինականության սկզբունքը:

3. ԳԴ տեղակալների միջև Դատախազության մասին օրենքով հաստատվել է ինստիտուցիոնալ անհավասարություն: Մասնավորապես, Օրենքի 36-րդ հոդվածի 10-րդ մասով որպես ընդհանուր կանոն ամրագրված է, որ հոդվածի նախորդ տասը մասերում «սահմանված կարգավորումները չեն կիրառվում գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների ոլորտը համակարգող տեղակալի նշանակման գործընթացի նկատմամբ, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի»: Այդ գործընթացը կարգավորված է նույն Դատախազության մասին օրենքի 38.1 հոդվածով (Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող ստորաբաժանման դատախազների և գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի թեկնածուությունների ցուցակի կազմումը) և 42.1 հոդվածով (Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի, ղեկավարի տեղակալի և

դատախազների, ինչպես նաև գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի պաշտոններում նշանակման կարգը):

Ի սկզբանե նշենք, որ այս հոդվածները որպես Օրենքի լրացում ընդունվեցին **2020թ. ապրիլի 16-ին կատարված փոփոխություններով դառնալով ՀՀ հակակոռուպցիոն կարևոր նախաձեռնությունների անբաժան մաս: Օրենքի 42.1 հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ** «Գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների իրականացումը համակարգող տեղակալի պաշտոնում նշանակում է գլխավոր դատախազը՝ սույն օրենքով սահմանված կարգով ձևավորված՝ գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց թվից»: Դատախազության՝ այս ոլորտում գործունեություն իրականացնող ստորաբաժանման համալրման և այս ոլորտը համակարգող ԳԴ տեղակալի նշանակման գործընթացներում ամրագրված են մի շարք կարևոր երաշխիքներ, որոնցից, առանց մանրամասներին անդրադառնալու, նշենք՝

- Օրենքի 38.1 հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ բաց մրցույթի անցկացման պահանջը և Որակավորման հանձնաժողովի կողմից բաց քվեարկություն կատարելու և անդամների առնվազն ութ ձայնով որոշում ընդունելու պահանջը՝ (ի տարբերություն՝ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ մյուս տեղակալների համար ԳԴ կողմից դատախազ հանդիսացող թեկնածուի համար մրցույթ չանցկացնելու հնարավորության և Որակավորման հանձնաժողովի կողմից անդամների առնվազն 6 ձայնով և փակ գաղտնի քվեարկությամբ որոշումներ ընդունելու պահանջի):
- Օրենքի նույն 38.1 հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ Գլխավոր դատախազի կողմից պատճառաբանված որոշում կայացնելու պահանջը՝ ցուցակներում հայտատուին չընդգրկելու դեպքում, ինչպես նաև այդ որոշման դատական բողոքարկման հնարավորությունը:
- Օրենքի նույն 38.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող անձի կողմից սույն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթղթերի հետ միասին Որակավորման հանձնաժողովին նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ (այսուհետ՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ) ներկայացնելու պահանջը, և վերջապես՝
- Օրենքով Դատախազության գործունեության կոնկրետ համակարգման ոլորտ նախատեսելը՝ համակարգող համապատասխան տեղակալի պաշտոնի ամրագրմամբ: Այսիքնքն՝ այս գործերով, գոյություն ունի առանձին պաշտոն՝ ոչ թե պարզապես ԳԴ տեղակալի, ում ԳԴ-ը կկարողանար հանձնարարել այլ հարցեր ևս, այլ օրենքով սահմանված համակարգման ոլորտի տեղակալ:

Այս նորամուծությունները կարևոր են՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունները՝ թե դատախազների և թե այս ոլորտը համակարգող ԳԴ տեղակալի անկախության ու արդյունավետության համար: Միաժամանակ, գտնում ենք, որ Դատախազության բարեփոխումների ավարտին, այսիքն՝ անցումային փուլից հետո, անհրաժեշտ է ապահովել նշված հարցերով

միասնականությունը ՀՀ Դատախազության բոլոր սահմանադրական լիազորությունների կամ գործունեության ուղղությունների և դրանք համակարգող ԳԴ տեղակալների միջև, հաշվի առնելով հետևյալը՝

- Դատախազների և ԳԴ տեղակալի անկախության և արդյունավետության երաշխիքները չեն կարող ինստիտուցիոնալ առումով տարբերակվել ելնելով դատախազական հսկողության առարկայից: Օրինակ, ոչ ոք չի կարող փաստարկված պնդել, որ ավելի նվազ կարևոր է ԳԴ այն տեղակալի ընտրության հարցում անկախության երաշխիքներ ապահովելը, ով համակարգում է բոլոր, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական վարույթի նկատմամբ հսկողության իրականացումը: Այսպիսով, այդ երաշխիքները պետք է ապահովվեն բոլոր ուղղություններով, ԳԴ բոլոր տեղակալների համար: **Այդ կարգը պետք է նախատեսվի ԳԴ յուրաքանչյուր տեղակալի համար և նախատեսվի բոլոր ստորաբաժանումների դատախազների համար: Սրանով հավասարակշռություն կհաստատվի դատախազական ավագ պաշտոններում դատախազների նշանակման համար անհրաժեշտ հայեցողության և կադրային դատախազների ընտրության առավել բարձր չափորոշիչներ սահմանելու համար.**
- Քանի որ, ինչպես նշեցինք Հետազոտության նախորդ ենթակետում, անհրաժեշտ է մի կողմից՝ Դատախազության մասին օրենքով ամրագրել Դատախազության գործունեության համակարգման ոլորտները ու նախատեսել դրանք համակարգող համապատասխան թվով ԳԴ տեղակալների առկայությունը, ապա մյուս կողմից, ստացվում է, որ չունենալով սահմանադրական լիազորվածություն, այս՝ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող ստորաբաժանման դատախազների և գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի համակարգման ոլորտը, կրկնում ենք, **անցումային փուլից հետո, տարալուծել դատախազության գոյություն ունեցող համակարգման ոլորտներում կամ դրանցից մեկում: Առկա կարգավորումների պայմաններում այս ոլորտին առավել մոտ է:**

3.4. Դատախազության կառուցվածքային միավորների ձևավորման ներքին ժողովրդավարությունը, դատախազության կոլեգիան, որակավորման և էթիկայի հանձնաժողովները

3.4.1. Դատախազության ներկայացուցչական մարմինների ձևավորման և ներքին ժողովրդավարության ապահովման անհրաժեշտությունը

ՏՀԶԿ-ն Հայաստանի վերաբերյալ իր 4-րդ շրջանի Մշտադիտարկման զեկույցում նշել է, որ՝ «... համակարգը գրեթե ոչ մի մասնակցություն չի նախատեսում անկախ կամ ցածր մակարդակի պաշտոններ զբաղեցնող դատախազների համար, այլ՝ միայն Գլխավոր դատախազի կողմից ընտրված ղեկավարների կամ բարձրաստիճան դատախազների համար: Օրինակ, մոնիթորինգային թիմը նկատում է, որ Որակավորման հանձնաժողովն ամբողջությամբ կազմված է Գլխավոր դատախազի կողմից նշանակված անձանցից, ինչը կարող է ճնշել անկախ և ողջամիտ առաջարկներն ու վնասել բարոյա-հոգեբանական վիճակին: Կոլեգիան ամբողջությամբ բաղկացած է ղեկավար կազմից: Բացի այդ, օրենքի շատ դրույթներ ենթակա են իրացման ներքին կանոնակարգման միջոցով, ինչպես օրինակ՝ փակի մրցույթների կիրառումն ու նախատեսելը, որ [Գլխավոր] դատախազը արտակարգ

հիմունքներով կարող է անձանց ներառել առաջխաղացման ցուցակում»²³⁰։ Այդ դիտարկումից ելնելով, ՏՀԶԿ-ն Հայաստանին է ներկայացրել 16-րդ Երաշխավորությունը՝

«Գիտարկել դատախազների ներկայացուցչական մարմինների կողմից առաջարկված հարցերով որոշումներ կայացնելիս Գլխավոր դատախազի հայեցողությունը սահմանափակելու հարցը»²³¹։

Նույն ներկայացուցչական մարմնի առկայության անհրաժեշտության մասին է նշում նաև Վենետիկի Հանձնաժողովը, երբ քննադատելով ԵՄ ՆԽ այն մոտեցումն այն մասին, որ ստորադաս դատախազները պետք է իրավունք ունենան չկատարելու վերադասների անօրինական կամ անհիմն հանձնարարությունները (տես՝ վերևում, 2.2.2.7 ենթակետ), առաջարկում է, որպեսզի նման դեպքերում կիրառվեն վերադաս դատախազի հանձնարարության օրինականության ստուգման այլ՝ ներքին և արտաքին մեխանիզմները ու մասնավորապես, որպեսզի «հանձնարարության օրինականության հարցի լուծումը պետք է տրվի դատարանի կամ անկախ մարմնի, օրինակ՝ Դատախազական խորհրդի կողմից»²³²։ Նմանատիպ ներկայացուցչական մարմնի մասին է խոսում նաև ՏՀԶԿ-ն Գլխավոր դատախազի անօրինական ու անհիմն հանձնարարությունները չկատարելու ու բողոքարկելու անհրաժեշտության մասին նշելով, որ պետք է «դատախազներին իրավունք վերապահել Դատախազության ներսում գործող մարմնին առարկություններ ներկայացնել Գլխավոր դատախազի կողմից տրված հանձնարարությունների և ցուցումների վերաբերյալ դրանք անօրինական կամ անհիմն համարելու դեպքում»²³³։ Նույն մարմինը, ըստ ՎՀ-ն, պետք է իր դերակատարումն ունենա նաև դատախազներին մեկ աշխատանքից մեկ այլ աշխատանքի տեղափոխելիս դատախազի անհամաձայնության դեպքում, քանի որ «նման տեղափոխումների սպառնալիքները կարող են որպես գործիք ծառայել դատախազի վրա ճնշում կիրառելու համար, կամ «ըմբոստ դատախազը» կարող է հեռացվել զգայուն գործից։ ... **Կրկին, պետք է առկա լինի անկախ մարմնին, ինչպես, օրինակ՝ Դատախազական խորհրդին բողոք ներկայացնելու հնարավորություն» (բոլոր ընդգծումները՝ ՎՀ-ի. - ԴԽ)։**»²³⁴։

Վերջապես, նույն Ջեկույցի Եզրակացությունների 19-րդ կետերում Վենետիկի հանձնաժողովը արտահատում է հետևյալ դիրքորոշումը՝

«19. Դատախազական խորհրդի առկայության դեպքում, այդ մարմինը պետք է բաղկացած լինի բոլոր մակարդակների դատախազներից, ինչպես նաև այլ դերակատարներից, օրինակ՝ իրավաբաններից կամ իրավաբան գիտնականներից։ Խորհրդարանի կողմից նման խորհրդի ընտրության դեպքում, ցանկալի կլինեք, որ դա տեղի ունենար որակյալ մեծամասնության միջոցով»։

Այսպիսով, անհրաժեշտ է Դատախազության կազմում նախատեսել նման մի Խորհրդի ստեղծումը։ Ինչպես, նշվեց, ըստ միջազգային չափորոշիչների, դա անհրաժեշտ է ստորադաս դատախազների և վերադաս դատախազների, այդ թվում՝ Գլխավոր դատախազի միջև վերջիններիս հանձնարարությունների ու ցուցումների օրինականության ու հիմնավորվածության առկա վեճերը լուծելու համար։ Բացի այդ, հաշվի առնելով Դատախազության և դատախազների՝ ըստ նույն միջազգային չափորոշիչների, դատական իշխանության մաս հանդիսանալու փաստը, ու ըստ այդմ էլ՝ դատախազների անկախության ու արդյունավետության երաշխիքները դատավորների անկախության ու արդյունավետության երաշխիքներին մոտեցնելու անհրաժեշտությունը, անհնար է ժխտել, որ ներկայացուցչական նման մարմինը պետք է որոշումներ կայացնի դատախազական կարգավիճակի ու դրա տարրերի՝ անկախություն, քաղաքական ու այլ

²³⁰ ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց, էջ 90

²³¹ ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց, էջ 90, New Recommendation 16: Integrity in the service of public prosecution, էջ 91

²³² Տես՝ Վենետիկի հանձնաժողովի կողմից «Դատախազության անկախության չափորոշիչների մասին» Ջեկույցի 57-60-րդ կետերը։

²³³ Նույն տեղում, էջ 91։

²³⁴ Նույն տեղում, կետ 60։

չեզոքություն, կարգավիճակի միասնականություն և այլ, ստորև քննարկվող տարրերի երաշխիքները պաշտպանելու համար:

Այդ նույնը Խորհուրդը կամ Դատախազների ընդհանուր ժողովը պետք է, ըստ այդմ, լիազորված լինելու ստեղծել դատախազների կարգավիճակից բխող, այսինքն՝ նրանց պաշտոնական լիազորություններով չպայմանավորված իրավունքների պաշտպանության համար՝ այդ թվում՝ երաշխավորելով նրանց քաղաքացիական ազատությունները՝ խոսքի ազատությունը, միավորումներ, այդ թվում՝ արհմիություններ կազմելու իրավունքը և այլն²³⁵: Վերջապես, այդ մարմնի լիազորությունների մեջ պետք է մտնի նաև Որակավորման և Էթիկայի հանձնաժողովների ձևավորումը, որի անհրաժեշտության վերաբերյալ միջազգային չափորոշիչները և ՀՀ կառավարության դատաիրավական բարեփոխումների ռազմավարական նպատակները ներկայացված են Հետազոտության 3.4.3 կետում:

3.4.2. Դատախազության կոլեգիան

Դատախազության մասին օրենքի 22-րդ հոդվածի (Դատախազության կոլեգիան) համաձայն՝

«1. Դատախազության գործունեության կազմակերպման հիմնարար հարցեր քննարկելու, **դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման ուղղությունները որոշելու համար** դատախազությունում գլխավոր դատախազի նախագահությամբ գործում է կոլեգիա:

2. Դատախազության կոլեգիան կազմված է **գլխավոր դատախազից, գլխավոր դատախազի տեղակալներից, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից և Երևան քաղաքի դատախազից: Կոլեգիայի նիստին առանց ձայնի իրավունքի կարող են մասնակցել գլխավոր դատախազի հրավիրած այլ դատախազներ:**

3. Դատախազության կոլեգիայի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք վարում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ գլխավոր դատախազի տեղակալներից մեկը: Դատախազության կոլեգիայի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է կոլեգիայի անդամների կեսից ավելին:

4. Դատախազության կոլեգիայի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է չընդունված:

5. Դատախազության կոլեգիայի որոշումները կենսագործվում են գլխավոր դատախազի հրամաններով:

6. Դատախազության կոլեգիայի գործունեության կարգը սահմանում է գլխավոր դատախազը»:

Այս հոդվածով նախատեսված կարգավորումների առթիվ հիմնական մտահոգությունները հետևյալն են՝

1. **Հստակեցված չէ Դատախազության կոլեգիայի ինստիտուցիոնալ բնույթը:** Նշվում է պարզապես, որ Կոլեգիան գործում է Գլխավոր դատախազի «նախագահությամբ»՝ ի տարբերություն, օրինակ՝ Որակավորման ու Էթիկայի հանձնաժողովների, որոնք գործում են Գլխավոր դատախազին «առընթեր» (տես՝ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը): Ըստ այդմ, սահմանված չէ, թե արդյոք Կոլեգիայի որոշումները պարտադիր են Գլխավոր դատախազի համար, թե կրում են խորհրդատվական բնույթ:

2. **Հստակեցված չէ Կոլեգիայի քննարկմանը ենթակա հարցերի առարկայական ծավալը:** Շատ ընդհանուր ձևակերպմամբ, սահմանված է, որ Կոլեգիան գործում է «**դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման ուղղությունները որոշելու համար**»: Այս կարգավորումը թերի է թե բովանդակային, թե

²³⁵ Այս իրավունքների միջազգայնորեն ընդունված հավաքական անվանումը «համազգեստով քաղաքացու իրավունքներն են», որի հայեցակարգը քննարկվում է Հետազոտության 3.6.4.1 կետում:

ձևական կամ մեթոդաբանական առումով: **Բովանդակային տեսակետից**, դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման ուղղություններն արդեն իսկ ամրագրված են Սահմանադրությամբ, և իրականում Դատախազության սահմանադրական լիազորությունները դա հենց Դատախազության գործունեության ուղղություններն են: Ավելի, հաշվի առնելով Օրենքում Դատախազության համակարգման ոլորտները հստակ սահմանելու վերը նկարագրված անհրաժեշտությունը, այդ ուղղությունները պետք է տրված լինեն արդեն Օրենքում՝ ըստ ԳԴ տեղակալների համակարգման կոնկրետ ոլորտների: **Ձևական տեսակետից**, սահմանադրական լիազորությունների իրականացման ուղղությունները չեն կարող որոշվել մի մարմնի կողմից, որի ինստիտուցիոնալ բնույթը հստակեցված չէ, ինչպես նաև սահմանված չեն Կոլեգիայի իրավասության առարկայական ծավալները՝ թե պոզիտիվ իմաստով (կոնկրետ ինչ հարցեր է իրավասու քննել Կոլեգիան, որը կարևոր է հաշվի առնելով նրա կողմից «որոշումներ» ընդունելու իրավասությունը), թե նեգատիվ իմաստով (ինչ հարցեր իրավասու չէ քննել Կոլեգիան, օրինակ, որ՝ կոնկրետ գործերով դատավարական որոշումներ ընդունելու արգելքը²³⁶, դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության շրջանակներում դատախազների՝ որպես հսկող դատախազ ու հանրային մեղադրող իրականացվող դատավարական գործառնությունների իրացումը կանխորոշող որոշումներ ընդունելու արգելքը, որոնք հատկապես կարևոր են դատախազների անկախության և դատավարական ինքնուրույնության տեսակետից):

2. Սահմանված չէ Կոլեգիայի անդամների առավելագույն թիվը, ինչը մեթոդաբանական առումով անթույլատրելի է որոշումներ կայացնելու իրավասությամբ օժտված և օրենքի մակարդակով ստեղծվող և գործող պետական մարմնի համար: Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ Կոլեգիայի նիստին մասնակցում են Կոլեգիայի անդամները և Կոլեգիայի անդամ չհանդիսացող, առանց ձայնի իրավունքի, ենթադրվում է՝ Գլխավոր դատախազի կողմից հրավիրված այլ դատախազներ: Կոլեգիայի անդամներ են, ի պաշտոնե, ԳԴ-ն ու նրա տեղակալները, ինչպես նաև Երևան քաղաքի դատախազն ու կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները: Օրենքի 3-րդ հոդվածի (Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, դատախազության կառուցվածքային ստորաբաժանում է գլխավոր դատախազության և զինվորական կենտրոնական դատախազության կազմում գործող վարչությունը և բաժինը: ՀՀ դատախազությունը բաղկացած է Գլխավոր դատախազությունից՝ իր 9 վարչություններով ու բաժիններով, 18 տարածքային դատախազություններից և Զինվորական դատախազությունից՝ (Օրենքի 8-րդ հոդված), որն ունի իր կենտրոնական մարմինն ու 9 կայազորային դատախազություն²³⁷:

Կոլեգիայի անդամ կարող են լինել միայն Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, իսկ Գլխավոր դատախազության վարչությունների ու բաժինների թիվը որոշվում է նույն Գլխավոր դատախազի կողմից հաստատվող ՀՀ Դատախազության կանոնադրությամբ: Քանի որ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը չի նախատեսում, որ Կոլեգիայի անդամ են հանդիսանում դատախազության **բոլոր** կառուցվածքային Կոլեգիայի անդամների թիվը, կոլեգիայի կազմը դարձնում է անորոշ և անկանխատեսելի, քանի որ որևէ ձևով չէր հստակեցվում, թե որ կառուցվածքային ստորաբաժանումները պետք է գլխավոր դատախազի կողմից նշանակվեն որպես որպես Կոլեգիայի անդամ, չկան օրենքով սահմանված չափորոշիչներ, նրանց ընտրության

²³⁶ Օրինակ, «Հոկտեմբերի 27-ի» գործը առանձնացված մասով վարույթը կարճվել է Դատախազության կոլեգիայի որոշմամբ:

²³⁷ Դատախազության կոլեգիայի կազմի մասին, տես նաև՝ ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց, էջ 80:

հիմքերն ու կարգը: Մինչդեռ, կրկնում ենք, խոսքը գնում է օրենքի հիման վրա ստեղծված պետական մարմնի կողմից որոշումների ընդունմանը ձայնի իրավունքով մասնակցող անդամների մասին: Այսպիսով, այս թերությունը հետևանք է բովանդակային առումով մեկ այլ բացի, մասնավորապես՝ նրա, որ Գլխավոր դատախազին հնարավորություն է տրված իր անսահմանափակ հայեցողությամբ որոշել, թե ովքեր պետք է լինեն Կոլեգիայի անդամներ:

Բացի այդ, այս կարգավորումը թերի է մի քանի տեսակետից, քանի որ նախ՝ օգտագործվում է միաժամանակ երկու տեխնիկա՝ Օրենքով սահմանված ի պաշտոնե Կոլեգիայի անդամներ և ապա՝ Գլխավոր դատախազի կողմից նշանակվող անհայտ թվով այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավար դատախազներ, որի պայմաններում Օրենքի նպատակը՝ կոնկրետ պաշտոնյաների Կոլեգիայում լինելու նպատակը՝ անկախ բովանդակությունից, հեշտությամբ կարող է իմաստագրվել Գլխավոր դատախազի հայեցողությամբ: Բացի այդ, անհասկանալի է, թե ինչու Օրենքով սահմանված պաշտոնյաների թվում կա Երևան քաղաքի դատախազը (շեղվելով այն սկզբունքից, որ Դատախազության միայն կառուցվածքային, այլ ոչ տարածքային ստորաբաժանումները պետք է ներկայացված լինեն Կոլեգիայում), սակայն, օրինակ՝ Գյումրի և Վանաձոր քաղաքների դատախազները կարող են հրավիրվել միայն առանձ ձայնի իրավունքի Կոլեգիայի նիստերին մասնակցելու: Ո՞րն է նման տարանջատման լեգիտիմ նպատակը, եթե Կոլեգիան ստեղծվել է, ինչպես Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասն է պնդում, «դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման ուղղությունները որոշելու համար»:

Այս առթիվ պետք է ասել, որ Օրենքի Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում էր, որ դատախազության կոլեգիան կազմված է գլխավոր դատախազից, գլխավոր դատախազի տեղակալներից, գլխավոր դատախազության ստորաբաժանումների ղեկավարներից, Երևան քաղաքի դատախազից, ինչպես նաև գլխավոր դատախազի հրամանով նշանակվող այլ դատախազներից: **Հետագայում նշված դրույթը փոփոխվեց ավելացնելով, որ այլ դատախազները կարող են մասնակցել Կոլեգիայի նիստին առանց ձայնի իրավունքի, որով ինչ-որ չափով Գլխավոր դատախազի հայեցողությունը սահմանափակվեց: Վերջապես անհրաժեշտ է հստակ սահմանել Կոլեգիայի անդամների ընդհանուր թիվը:**

3. Ինչպես տեսանք, Կոլեգիայի բոլոր անդամներին նշանակում է Գլխավոր դատախազը: Կոլեգիայի այդ անդամներից որոշ դատախազները նշանակվում են ի պաշտոնե՝ ԳԴ կողմից նշանակված տեղակալները, և ոչ ի պաշտոնե, երբ ԳԴ-ն ինքն է որոշում, թե դարձյալ իր նշանակված կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից, ով պետք է նշանակվի նաև Կոլեգիայի անդամ: Ինչ վերաբերում է Կոլեգիայի անդամ չհանդիսացող, սակայն նիստին առանց ձայնի իրավունքի մասնակցող այլ դատախազներին, ապա նրանց նույնպես հրավիրում է Գլխավոր դատախազը: **Արդյունքում Կոլեգիայի անդամներն են բացառապես ԳԴ կողմից նշանակված ղեկավար կազմը:**

Նախորդ կետում արդեն ներկայացվեցին Դատախազության ներկայացուցչական մարմնի ստեղծման անհրաժեշտությունը վկայող միջազգային չափորոշիչները: Մյուս կողմից, ինչպես նշվել է նաև վերևում վկայակոչված միջազգային կառույցների գեկույցներում, Դատախազության կոլեգիան բաղկացած է միայն ղեկավար կազմից: Այս երկու դիտողությունները հաշվի առնելով, պետք է եզրակացնել, որ բացի այն որ ՀՀ-ում անհրաժեշտ է ստեղծել Դատախազների ընդհանուր ժողով կամ Դատախազական խորհուրդ, վերջինիս կողմից ձևավորվող մարմինները, առաջին հերթին՝ Որակավորման և

Էթիկայի հանձնաժողովները, իրենց ղեկավարների միջոցով ի պաշտոնե, այսինքն՝ օրենքի ուժով, պարտադիր ներկայացված լինեն ՀՀ դատախազության Կոլեգիայի կազմում:

3.4.3. Դատախազության Էթիկայի և Որակավորման հանձնաժողովները

Դատախազության մասին օրենքի 23-րդ հոդվածի (Գլխավոր դատախազին առընթեր Էթիկայի և որակավորման հանձնաժողովները) համաձայն՝

«1. Գլխավոր դատախազին առընթեր գործում են Էթիկայի և որակավորման հանձնաժողովներ:

2. Էթիկայի հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամից: Էթիկայի հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, երեք իրավաբան-գիտնական և գլխավոր դատախազի, գլխավոր դատախազի՝ Էթիկայի հանձնաժողովի անդամ չհանդիսացող տեղակալների, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, Երևան քաղաքի դատախազի, մարզերի դատախազների, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և կայագրների զինվորական դատախազների կողմից ձայների մեծամասնությամբ ընտրված երեք դատախազ: Էթիկայի հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:

3. Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում արդարադատության ակադեմիայի ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և երեք իրավաբան-գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն:

Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:

4. Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովի անդամներն անկախ են: Նրանց գործունեության առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է:

5. Յուրաքանչյուր դատախազ կարող է լինել սույն հոդվածով սահմանված միայն մեկ հանձնաժողովի կազմում: Հանձնաժողովների անդամները նշանակվում են երեք տարի ժամկետով, բացառությամբ երկու փորձագետների, որոնք նշանակվում են մեկ տարի ժամկետով:

6. Հանձնաժողովներում նոր անդամների նշանակումները սույն հոդվածով սահմանված կարգով կատարվում են գործող անդամների լիազորությունները դադարելու օրվան հաջորդող օրը:

7. Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովների գործունեության, ինչպես նաև դատախազ անդամների ընտրության կարգը սահմանում է գլխավոր դատախազը: (23-րդ հոդվածը խմբ., լրաց. 16.04.20 ՀՕ-245-Ն):

Այս հոդվածով նախատեսված կարգավորումների առթիվ հիմնական մտահոգությունները հետևյալն են՝

1. Որակավորման ու Էթիկայի հանձնաժողովները, վերը նկարագրված միջազգային չափորոշիչներից ելնելով, չպետք է լինեն Գլխավոր դատախազին առընթեր: Ինչպես նշվեց Հետազոտության սույն կետի 3.4.1 ենթակետում, անհրաժեշտ է ստեղծել Դատախազական Խորհուրդ կամ Դատախազների ընդհանուր ժողով՝ որպես դատախազների ժողովրդավարական ներկայացուցչական մարմին, որն էլ կընտրի դատախազի կարգավիճակից բխող, այսինքն՝ նրանց պաշտոնեական լիազորություններով չպայմանավորված հարցերը լուծող առանձին մարմիններ: Այդ մարմիններից են, առաջին հերթին, Որակավորման և Էթիկայի հանձնաժողովները, որոնց կազմում պետք է լինեն դատախազ և ոչ դատախազ անդամներ, ինչպես նաև փորձագետներ: Մեր առաջարկն է, որպեսզի այդ ներկայացուցչական մարմինը ընտրի Որակավորման և Էթիկայի հանձնաժողովների դատախազ անդամներին, իսկ կոնկրետ հանձնաժողովի բոլոր

անդամները միասին՝ իրենց կազմից ընտրեն նախագահին՝ որպես ներքին ժողովրդավարական ներկայացուցչականության ևս մեկ դրսևորում: Վերջապես, նման կարգավիճակի ունեցող հանձնաժողովների կազմի համալրման համար պետք է սահմանել նեգատիվ պահանջ, այն է՝ որ այդ հանձնաժողովների կազմում չեն կարող ընտրվել ԳԴ տեղակալները և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները: Ինչպես նշվեց, այս Հանձնաժողովների նախագահները ի պաշտոն պետք է ընդգրկվեն Կոլեգիայի կազմում:

2. Նշվածի հիման վրա, պետք է ձերբազատվել այս հանձնաժողովում ժողովրդավարական ներկայացվածության սկզբունքի հակասող լուծումներից, մասնավորապես՝ Օրենքի 23-րդ հոդվածի, համապատասխանաբար 2-րդ և 3-րդ և 7-րդ մասերով սահմանված այն դրույթներից, որոնց համաձայն այս հանձնաժողովները ղեկավարում են ԳԴ տեղակալները, և նրանց գործունեության, **ինչպես նաև դատախազ անդամների ընտրության կարգը սահմանում է գլխավոր դատախազը:** Այս վերջին լիազորությունը պետք է նույնպես վերապահել Հանձնաժողովների կազմի դատախազ անդամներին ընտրող մարմնին՝ Դատախազների ընդհանուր ժողովին:

3. Օրենքի 23-րդ հոդվածով տրված կարգավորումները թերի են նաև Դատախազության նկատմամբ արտաքին վերահսկողության մեխանիզմների անարդյունավետության տեսակետից: Խոսքը վերաբերում է նրան, որ նույն Գլխավոր դատախազը նշանակում է երկու Հանձնաժողովների բոլոր անդամներին, և բացի այդ՝ երկու Հանձնաժողովներում էլ դատախազ անդամները կազմում են մեծամասնություն: Սրա մասին նշված է, ճիշտ է, միայն Որակավորման հանձնաժողովի հետ կապված, սակայն դա լիովին կիրառելի է նաև Էթիկայի հանձնաժողովի պարագայում, նաև «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. Ռազմավարությունից բխող 2019-2020թթ. Գործողությունների ծրագրում»

«Գործող կարգի համաձայն Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում արդարադատության ակադեմիայի ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և երեք իրավաբան-գիտնական: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: **Այս կարգը, էլ ավելի է ընդգծում դատախազության համակարգի աստիճանակարգային ու փակ բնույթը, ինչը վտանգում է առանձին դատախազների անկախությունը:**»

Նույն գնահատականը պետք է տալ նաև Էթիկայի հանձնաժողովի կազմի հետ կապված, որը բաղկացած է յոթ անդամից, որի կազմի մեծամասնությունը՝ **գլխավոր դատախազի մեկ տեղակալ և երեք իրավաբան-գիտնական, նշանակվում է** Գլխավոր դատախազի կողմից, իսկ փոքրամասնությունը՝ **երեք դատախազ,** ընտրվում է դարձյալ անձամբ ԳԴ ու նաև այլ ղեկավար կազմի կողմից:

Ծրագրի 10-րդ Նպատակի (Իրավապահ համակարգի բարեփոխում) Ռազմավարական ուղղության (Դատախազության համակարգի բարեփոխում) 1-ին և 2-րդ Գործողությունները սահմանում են, մասնավորապես, հետևյալը՝

«Գործողություն 1. Ներդնել դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգ՝ գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները, **փոփոխել դատախազների բարեվարքության գնահատում իրականացնող Էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը:**

Գործողություն 1-ի արդյունք. Դատախազները շարունակաբար անցնում են բարեվարքության ստուգման միջով, ինչը նվազեցնում է համակարգում կոռուպցիան և ապահովում իրենց գործունեության մեջ դատախազների մասնագիտական վարքագծի կանոնների պահպանումը:

Գործողություն 2. Փոփոխել Որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները, որպեսզի դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվի գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող

գործընթացով և ընդլայնել ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում:

Գործողություն 2-ի արդյունք. Որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները փոփոխված են, դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվում է գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող գործընթացով, ընդլայնված է ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում»²³⁸:

Նախնառաջ, նշված ծրագրային նպատակների իրագործման համար անհրաժեշտ է, որպեսզի Հանձնաժողովներում մեծամասնությունը կազմող անդամները ոչ թե նշանակվեն, ենթադրվում է ԳԴ կողմից վերջինիս մասնակցությունը չներառող գործընթացների արդյունքում, այլ որ նրանք ընտրվեն ներկայացուցչական մարմինների կողմից: Մյուս կողմից, լեգիտիմ է նաև այն հարցը, թե արդյոք այդ Հանձնաժողովների անդամների մեծ մասը պետք է ընտրվեն նույն դատախազների կողմից, քանի որ հնարավոր է, որ դատախազները, գերատեսչական միասնականությունից ելնելով, խուսափեն Դատախազության գործունեության նկատմամբ արտաքին՝ ոչ դատախազական մարմինների և կառույցների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող արդյունավետ վերահսկողությունից: **Մեր առաջարկն է, որպեսզի Դատախազների ընդհանուր ժողովի կամ Խորհրդի կողմից ընտրվող Հանձնաժողովներում սահմանվեն փորձագիտական համայնքի ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների քվոտաներ, որոնք առաջադրվելիք թեկնածուների շահերի բախման, բարեվարքության թեստերի և այլ միջոցների կիրառմամբ, կապահովեն դատախազ անդամների արդյունավետ հակակշռումը:**

Այսինքն, բացի այն, որ Որակավորման և Էթիկայի հանձնաժողովների բոլոր անդամները պետք է ընտրվեն դատախազների ներկայացուցչական մարմնի կողմից, դրանցում պետք է ապահովվի նաև նաև դատախազ և ոչ դատախազ անդամների հավասար մասնակցություն:

Ի դեպ, Դատախազության մասին 1997թ. Օրենքը, ճիշտ է, միայն Էթիկայի հանձնաժողովի մասով, սահմանում էր արտաքին նշանակմամբ հանձնաժողովի անդամների մեծամասնության սկզբունքը: Մասնավորապես, Օրենքի 23-րդ հոդվածի (Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի և որակավորման հանձնաժողովները) 2-րդ մասով նախատեսվում էր հետևյալը՝

«Էթիկայի հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից: Էթիկայի հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի 1 տեղակալ, 2 դատախազ եւ Հանրապետության Նախագահի կողմից 3 տարի ժամկետով նշանակվող 4 իրավաբան անդամ: Էթիկայի հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը»:

Այսինքն, Դատախազության մասին 1997թ. Օրենքի համաձայն, Գլխավոր դատախազը նշանակում էր Էթիկայի հանձնաժողովի 7 անդամներից միայն 3-ին, իսկ իրականում, **եթե հիշենք, որ ըստ 1995թ. Սահմանադրության, ԳԴ տեղակալներին նշանակում էր ՀՀ Նախագահը, միայն 2 անդամներին:**

4. Օրենքի 23-րդ հոդվածով տրված կարգավորումները թերի են նաև միասնական լուծումներ չնախատեսելու տեսակետից: Մասնավորապես՝

²³⁸ Այս գործողությունն ու դրա ակնկալվող արդյունքը բառացի արտացոլում են ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույցում արված 6-րդ Երաշխավորությունը (էջ 91). «Փոփոխել Որակավորման հանձնաժողովի կազմը՝ այն հաշվով, որպեսզի դրա պարզ մեծամասնությունը նշանակվի մի գործընթացով, որը չի ընդգրկում Գլխավոր դատախազին: Մեծացնել ոչ բարձրաստիճան դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում»:

- Որակավորման հանձնաժողովը կազմված է 9, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ 11 անդամից: Ինչպես նշեցինք արդեն, Որակավորման, ինչպես նաև էթիկայի հանձնաժողովը զբաղվում են դատախազի կարգավիճակի հետ կապված, այն է՝ դրա ձեռքբերման, տարբերի՝ անկախության և այլ երաշխիքների պաշտպանության, կարգավիճակից զրկելու և այլ հարցերով, որոնց լուծումը որևէ կերպ պայմանավորված չէ դատախազների պաշտոնական լիազորությունների ծավալով, հետևաբար նաև՝ այդ լիազորությունների առարկայական ծավալով, այսինքն՝ կախված չէ նրանից, թե ինչպիսի գործերով են դատախազները իրականացնելու իրենց գործառույթները: Նույն տրամաբանությամբ անհասկանալի է, թե ինչու ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազներին առնչվող հարցերով Որակավորման հանձնաժողովում պետք է լինեն փորձագետներ, իսկ այլ, օրինակ՝ բարդ կոռուպցիոն, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման գիտելիքներ պահանջող գործառույթներով զբաղվող դատախազների ընտրության համար, Որակավորման հանձնաժողովում նման փորձագետներ պետք է չլինեն:

Այս տեսակետից, պետք է հրաժարվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների առնչությամբ Որակավորման հանձնաժողովի անդամների թվի ու այլ նմանատիպ տարբերակումներից: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի և փորձագետների ներգրավման վերաբերյալ նորմերը պետք է տարածվեն ՈՀ վրա ընդհանրապես, այլ ոչ միայն այդ գործերով: Ընդհանրապես, այնպիսի կարևոր հարցերով, ինչպիսիք են որակավորման ապահովումը, այդ թվում՝ դատախազների նշանակման գործընթացում²³⁹, հանցագործությունների մի տեսակը չի կարող ավելի կարևոր համարվել մյուս հանցատեսակների համեմատ: Անհասկանալի է, թե ինչու փորձագետներ պետք է լինեն միայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում նշանակվելիք դատախազների ընտրության հարցում:

Հենց այս մոտեցումն է պաշտպանում Վենետիկի Հանձնաժողովը՝

«Դատախազների համար պահանջվող հատուկ որակների տեսակետից, խորհուրդ չի տրվում նրանց նշանակման գործընթացը ամբողջությամբ թողնել հենց դատախազական աստիճանակարգության վրա: Տարբեր մեթոդներ կարող են օգտակար լինել՝ վերացնելու այն վտանգը, որ մոնոլիտ դատախազական համակարգում վերևից իջնող հանձնարարությունները ավելի մեծ նշանակություն ունենան, քան օրենքը: **Որակյալ դատախազների նշանակումը նախապատրաստելու համար օգտակար կլինի փորձագետների ներդրումը:** Սա իդեալական կարող է կատարվել անկախ մի մարմնի շրջանակներում, ինչպիսին է ժողովրդավարական լեզիտիմություն ստացած Դատախազական խորհուրդը կամ ավագ դատախազների հանձնաժողովը, որոնց փորձը թույլ կտա պատշաճ թեկնածուների առաջադրել նշանակումների համար: Այդ մարմինը կարող է գործել Գլխավոր

²³⁹ Տես՝ Որակավորման հանձնաժողովի լիազորությունները ՀՀ Դատախազության մասին օրենքի 38-րդ հոդվածի (Դատախազների թեկնածությունների ցուցակի կազմումը) համաձայն, որոնց մասին խոսվում է Հետազոտության 3.5 կետում:

դատախազի երաշխավորությունների հիման վրա՝ իրավունք ունենալով մերժելու անձի նշանակումը, սակայն՝ միայն հիմնավոր կերպով (ընդգծումները՝ ՎՀ-ի)»²⁴⁰:

- Էթիկայի հանձնաժողովում, ի տարբերություն Որակավորման հանձնաժողովի, փորձագետների մասնակցություն չի նախատեսվում, մինչդեռ ակնհայտ է, որ էթիկայի հարցերով մասնագիտական գիտելիքները և հմտությունները առնչվում են ոչ պակաս փորձագիտական ձեռնհասություն պահանջող հարցերին: Մասնավորապես, Էթիկայի հանձնաժողովի կազմում, նույն տրամաբանությամբ, կարող են լինել էթիկայի, այդ թվում՝ շահերի բախման հարցերով, հոգեբանության, այդ թվում՝ զայրույթի կառավարման և այլ հարցերով, սոցիոլոգիայի կամ այլ հարակից ոլորտների մասնագետներ:
- 23-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ **Հանձնաժողովների անդամները նշանակվում են երեք տարի ժամկետով, բացառությամբ երկու փորձագետների, որոնք նշանակվում են մեկ տարի ժամկետով:** Այս կարգավորումը, փաստացի տարբերակվող վերաբերմունք նախատեսելով, չի սահմանում այդ տարբերակման պատճառները, այսինքն՝ ի սկզբանե անհիմն է: Բացի այդ, **փորձագետների առկայությունը, հաշվի առնելով նրանց ընդգրկման պահանջը, կարևոր է փորձագիտական գիտելիքները՝ Հանձնաժողովների մյուս անդամներին հաղորդելու տեսակետից, որը, բնականաբար, պետք է կատարվի այն ամբողջ ընթացքում, որի ժամանակ գործում են Հանձնաժողովի մյուս անդամները:**

3.4.4. ՀՀ Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները Օրենքով նախատեսելու ու այդ գործառույթը ՀՀ Գլխավոր դատախազից վերցնելու անհրաժեշտությունը, Երևան քաղաքի դատախազության լուծարման կարիքը

Դատախազության մասին գործող օրենքը չի նախատեսում, թե որոնք են Դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները, այսինքն՝ Գլխավոր դատախազության և Զինվորական դատախազության կենտրոնական մարմնի վարչություններն ու բաժինները: Այդ հարցի լուծումը թողնված է Գլխավոր դատախազի հայեցողությանը, ով Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն, «իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր», այդ թվում՝ Դատախազության կանոնադրությունը, որտեղ կարող է լուծարել, ստեղծել և վերակազմավորել ՀՀ Դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները:

Գլխավոր դատախազի այդ գործառույթը, բացի այն, որ չի բխում դատախազական աշխատանքի կազմակերպման կայունության սկզբունքից, ու նաև՝ հաշվի առնելով նման մակարդակի ինստիտուցիոնալ լուծումները օրենքի մակարդակով տալու անհրաժեշտությունը (որն ի թիվս բազմաթիվ այլ փաստարկների, հաստատվում է նրանով, որ Դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները, ի դեմս նրանց ղեկավարների, ներկայացված են Օրենքով նախատեսված Դատախազության կոլեգիայի կազմում), **չափազանց վտանգավոր է դատախազների անկախության տեսակետից: Մասնավորապես, Դատախազության մասին օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ «Դատախազին պաշտոնից ազատելու հիմք են՝... 5) հաստիքի կրճատումը և 6) դատախազության կառուցվածքային այլ ստորաբաժանում կամ այլ դատախազություն փոխադրվելուց հրաժարվելը, դատախազության կառուցվածքային այն**

²⁴⁰ Տես՝ ՎՀ-ի Զեկույցը Դատախազության անկախության չափորոշիչների մասին», կետ 48:

ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, որտեղ նա պաշտոն է զբաղեցրել»:

Պետք է նշել, որ Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները, ճիշտ է՝ վարչությունների մակարդակով, սահմանված էին Դատախազության մասին 1997թ. Օրենքում, որի 10-րդ հոդվածում (Գլխավոր դատախազությունը) նշվում էր, որ՝

«Գլխավոր դատախազությունը կազմված է վարչություններից, դրանց կազմի մեջ մտնող բաժիններից, ինչպես նաև այլ բաժիններից:

Գլխավոր դատախազության վարչություններն են՝

- 1) պետական շահերի պաշտպանության վարչությունը.
- 2) նախաքննության եւ հետաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունը.
- 3) դատարաններում քրեական գործերով մեղադրանքի պաշտպանության վարչությունը.
- 4) պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունը.
- 5) քննչական վարչությունը:

Գլխավոր դատախազության վարչությունների կազմի մեջ մտնող բաժինները, ինչպես նաև այլ բաժիններն ստեղծվում են գլխավոր դատախազի հրամանով»:

Օրենքի նման կարգավորումը, բացի այն, որ համապատասխանում է նման բարձր մակարդակի ինստիտուցիոնալ լուծումների օրենքով տալու անհրաժեշտությունը, ընդօրինակելի է նաև այն առումով, որ նախատեսված վարչությունները կետ առ կետ համապատասխանում են Դատախազության սահմանադրական 6 լիազորություններից կազմված գործունեության 4 ոլորտներին: Հետագայում՝ 2007թ. Օրենքով, ինչպես գիտենք, Դատախազությունից վերցվեց քննչական գործառույթը, և մնացած ուղղությունները կամ նույն՝ ԳԴ տեղակալների կողմից համակարգվող ոլորտները, որոնք նույն ձևով բխում են նաև 2015թ. Փոփոխություններով Սահմանադրության 176-րդ հոդվածից, լիովին և **ըստ այդմ՝ համապատասխանում Դատախազության ներսում լիազորությունների համակարգման ոլորտներից, ու հետևաբար՝ համահունչ են կոնկրետ ոլորտները համակարգող ԳԴ տեղակալների թվի վերաբերյալ մեր առաջարկությանը:**

Նշվածից բացի, Դատախազության կառուցվածքային կազմակերպման տեսակետից, պետք է բացառել այնպիսի մարմինների գոյությունը՝ որպես դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների, որոնք անմիջապես չեն իրականացնում Դատախազության սահմանադրական լիազորությունները: Վերևում՝ 3.2.3 կետում արդեն նշվեց, որ նրանք իրականացնում են Դատախազության սահմանադրական լիազորություններին օժանդակող գործառույթներ՝ միջազգային և իրավական կապերի վարչություն, իրավական ապահովման և կազմակերպական վարչությունը, Դատախազության պաշտոնական ամսագիր և այլն, իրականում ուղղված են սահմանադրական լիազորությունների կատարմանը, այսինքն՝ **նշված լիազորությունները պետք է կատարվեն «Դատախազության աշխատակազմ» հիմնարկի կողմից: Գործող Օրենքի կարգավորումների շրջանակներում (Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) նրանք համապատասխանում են հետևյալ հասկացությանը՝**

«5) աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում՝ դատախազներին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված գործառույթների իրականացմանն աջակցող ստորաբաժանում»:

Այսպիսով, Դատախազության մասին 1997թ. օրենքի համեմատ թե 2007թ. և թե 2018թ. օրենքները հետընթաց են կատարել Դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներից վարչությունները նախատեսելով ոչ թե օրենքի, այլ Գլխավոր դատախազի հայեցողությամբ տրված լուծումներն արտահայտող և նրա կողմից հաստատվող Դատախազության Կանոնադրության մեջ: Այժմ ժամանակն է ոչ միայն վերականգնել 1997թ. Օրենքում որդեգրված սկզբունքը՝ այլ ավելի տարածել դրա կիրառումը, այն է՝ Դատախազության մասին օրենքով, բացի ԳԴ տեղեկալների թվից ու նրանց համակարգման ոլորտներից, նախատեսել ՀՀ Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները, մասնավորապես՝ նաև այդ սահմանադրական լիազորություններից ոլորտներից բխող վարչությունները ու վերջիններիցս բխող բաժինները:

Այնուհետև, Դատախազության կառուցվածի տեսակետից, խնդրահարույց է ոչ միայն Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ամրագրմանը տրված լուծումները, այլ նաև Դատախազության տարածքային կազմակերպման կոնկրետ մի լուծում, որի սխալակալության մասին խոսվել է տասնամյակներ շարունակ: Խոսքը վերաբերում է Երևան քաղաքի դատախազության լեգիտիմությանը՝ միաժամանակ նույն ամբողջ աշխարհագրական տարածքը ընդգրկող համայնքային դատախազությունների գոյության պայմաններում: **Երևան քաղաքի գոյությունը սխալ է նախևառաջ բովանդակային տեսակետից՝ անհարկի միջանկյալ վերադասության օղակ ստեղծելով համայնքային դատախազությունների և Գլխավոր դատախազության միջև:**

Այնուհետև, այս միավորի գոյությունը սխալ է նաև մեթոդաբանական առումով: Վերևում՝ 3.3.1 կետում արդեն նշվեց, որ փաստացի Երևան քաղաքի դատախազության գոյությունը հանդիսանում է դատախազության ինստիտուցիոնալ տարածքային կազմակերպման արտացոլում, որն արդեն իսկ իրագործված է Երևան քաղաքի համայնքային դատախազությունների տեսքով (այսինքն՝ դատախազության տարածքային ներկայացվածությունը կրկնօրինակված է): Ի լրումն դրա, տարածքային ներկայացվածության անհրաժեշտությունից բացի, բացակայում է նաև Դատախազության կազմակերպական որևէ միավորի լեգիտիմությունն ապահովող մյուս անհրաժեշտ չափանիշը՝ առարկայական լիազորվածության անհրաժեշտությունը: Այսինքն, Երևան քաղաքի դատախազությունը որևէ տարբերակվող գործառույթներ չի իրականացնում՝ թե Գլխավոր դատախազության, թե՛ համայնքային դատախազությունների համեմատ:

Իրականում Երևան քաղաքի դատախազության գոյությունը, սակայն, պայմանավորված է ոչ թե սկզբունքային, այն է՝ Դատախազության սահմանադրական լիազորություններից բխող տարածքային կամ առարկայական լիազորվածության ինստիտուցիոնալ ներկայացվածության կարիքներով, այլ գուտ՝ տեխնիկական, որի հիմքում ընկած է մեկ այլ մարմնի՝ ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության գոյությունը և Քննչական Կոմիտեի Երևան քաղաքի վարչության գոյությունը:

Անհրաժեշտ է արմատապես բարեփոխել այս իրավիճակը՝ հիմքում դնելով ոչ թե ոստիկանական ու քննչական մարմինների, այլ դատարանների տեղակայումն ու ինստիտուցիոնալ կազմակերպման մեթոդաբանությունը: Եթե ոստիկանության ու քննչական մարմինների մակարդակով Երևան քաղաքի առանձին վարչության գոյությունն արդարացված է համայնքային ստորաբաժանումների գործունեության օպերատիվ համակարգման անհրաժեշտությամբ, ապա դատախազության պարագայում, այդ անհրաժեշտությունը բացակայում է: Ինչ վերաբերում է հնարավոր այն փաստարկին, որ գոյություն ունի Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի, ապա

իրականում դրա գոյությունը կրում է խիստ ձևական բնույթ, այլ կան նստավայրեր, որոնք փաստացի նույն դատարաններն են:

3.5. Դատախազների նշանակումը և առաջխաղացումը

3.5.1. Դատախազի պաշտոնում նշանակվելու համար ներկայացվող պահանջները

3.5.1.1. Դատախազի պաշտոնում նշանակվելու համար ներկայացվող սկզբունքային պահանջները

Դատախազության մասին օրենքի 33-րդ հոդվածի (Դատախազ նշանակվելու համար ներկայացվող ընդհանուր պահանջները) համաձայն՝

«1. Դատախազ կարող է նշանակվել **22-ից** մինչև 65 տարեկան **Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին**, որը՝

1) Հայաստանի Հանրապետությունում ստացել է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

2) տիրապետում է հայերենին.

3) որի նկատմամբ չեն տարածվում սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները.

4) ավարտել է համապատասխան ուսումնառությունը արդարադատության ակադեմիայում, **եթե սույն օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքերում չի ազատվում արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից:**

5) *(կենսն ուժը կորցրել է 16.04.20 ՀՕ-245-Ն):*

2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող ստորաբաժանման դատախազ կարող է նշանակվել առնվազն երկու տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող անձը»: *(33-րդ հոդվածը փոփ., լրաց. 16.04.20 ՀՕ-245-Ն):*

Դատախազության մասին օրենքի 33-րդ հոդվածի մեջբերված դրույթների հետ համակարգային կապի մեջ են գտնվում Օրենքի 38-րդ հոդվածի (Դատախազների թեկնածությունների ցուցակի կազմումը) 10-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերը, ինչպես նաև 10.1-րդ և 11-րդ մասերը, որոնց համաձայն՝

«10. Անձն ազատվում է արդարադատության ակադեմիայում ուսումնառության դասընթացներից և քննություններ հանձնելուց, եթե՝

1) վերջին հինգ տարվա ընթացքում ունի դատավորի, դատախազի, քննիչի (քննչական բաժնի պետի, քննչական մարմնի ղեկավարի) պաշտոններում կամ փաստաբանական գործունեության առնվազն երեք տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող, մասնագիտական աշխատանքի ստաժ կամ

2) վերջին 10 տարվա ընթացքում ունի դատախազի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե պաշտոնից ազատվել է սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-6-րդ, 9-րդ կետերով և 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով կամ

... 3) իրավաբանական գիտությունների դոկտոր է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն երեք տարվա ստաժ.

4) իրավաբանական գիտությունների թեկնածու է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն հինգ տարվա ստաժ:

10.1. Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված՝ արդարադատության ակադեմիայում **ուսումնառության դասընթացներից ազատվելու հիմքերը չեն տարածվում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն**

ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վրա:

11. Որակավորման հանձնաժողովն արդարադատության ակադեմիայում սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով ուսումնառությունից ազատված անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է քննության առնել հայտատուին միաժամանակ դատախազների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու հարցը: *(33-րդ հոդվածը փոփ., լրաց. 16.04.20 ՀՕ-245-Ն):*

Այս հոդվածներով նախատեսված կարգավորումների առթիվ հիմնական մտահոգությունները հետևյալն են՝

1. Ի տարբերություն ՀՀ Գլխավոր դատախազի ու նրա տեղակալների թեկնածուների, մյուս բոլոր դատախազների համար, այդ թվում՝ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների՝ վարչության և բաժինների պետերի համար սահմանված չէ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու պահանջը: Այն ներառելու անհրաժեշտությունը հիմնավորելու առանձին անհրաժեշտություն, կարծում ենք, չկա:

2. Հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքային նվազագույն շեմը շատ ցածր է՝ հաշվի առնելով սահմանադրական նման լիազորություններով օժտված մարմնի՝ Դատախազության գործառույթները: Ըստ էության, հնարավոր է, որ ընդամենը 4 տարի առաջ, այսինքն՝ 18 տարին չլրացած և ըստ այդմ՝ ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» Կոնվենցիայի համաձայն երեխա հանդիսացած անձը նշանակվի դատախազ ու սկսի իրականացնել միջդատական վարույթի օրինականության, պատիժների կիրառման օրինականության նկատմամբ և այլ դատախազական հսկողություն: **Անհրաժեշտ է տարիքային նվազագույն շեմը հավասարեցնել դատավորների համար նախատեսված շեմին՝ 25 տարեկան:**

3. Հոդվածի 2-րդ մասով կրկին դատախազների կարգավիճակից չբխող ու դրա միասնականության սկզբունքին հակասով կարգավորումներ են տրված՝ ելնելով իրականացվելիք գործառույթների առանձնահատկություններից: Այսպես, եթե «սովորական» դատախազ նշանակվելու համար անհրաժեշտ չէ որևէ մասնագիտական փորձ, ապա «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման դատախազ կարող է նշանակվել առնվազն երկու տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող անձը»:

Պետք է ընդգծել, որ խնդրահարույց վերջին երկու կարգավորումները Դատախազության միասն օրենքում ընդունվել են 2020թ. ապրիլի 16-ին: Այդ օրը կատարված փոփոխություններով ու լրացումներով՝

- Տարիքային նվազագույն շեմը 25-ից իջեցվել է 22-ի.
- Ուժը կորցրած է ճանաչվել Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, որով սահմանվում էր, որ՝ «Դատախազ կարող է նշանակվել 25-ից մինչև 65 տարեկան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը ... 5) ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն երկու տարվա փորձառություն:», այսինքն՝ վերացվել է մասնագիտական ստաժի պահանջը, և վերջապես՝
- Ավելացվել է հոդվածի 2-րդ մասը՝ մասնագիտական ստաժի պահանջ նախատեսելով միայն Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման դատախազների թեկնածուների համար:

3. Հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում հղում է արվում Օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասի վրա՝

«10. Անձն ազատվում է արդարադատության ակադեմիայում ուսումնառության դասընթացներից և քննություններ հանձնելուց, եթե՝

... 3) իրավաբանական գիտությունների դոկտոր է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն երեք տարվա ստաժ:

4) իրավաբանական գիտությունների թեկնածու է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն հինգ տարվա ստաժ»:

Գիտական աստիճանով պայմանավորված պետաիշխանական լիազորություններ ենթադրող պաշտոնների թեկնածուների համար արտոնություններ նախատեսելը ամբողջությամբ խորհրդային երևույթ է, երբ գիտական համայնքը հանդիսանում էր գիտական նոմենկլատուրա ու ավելի մեծ պետական, հիմնականում՝ կուսակցական նոմենկլատուրայի մասը: Ակադեմիական ազատությանը խորթ են այս երևույթները, ու բացի այդ մարդկության պատմության մեջ ամենամեծ հայտնագործությունները երբեք էլ հեշտ չեն ընդունվել ժամանակակիցների, այդ թվում՝ գիտնականների կողմից:

4. Դարձյալ կարգավիճակի միասնականության սկզբունքի խախտմամբ Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով վկայակոչված՝ նույն Օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված՝ արդարադատության ակադեմիայում ուսումնառության դասընթացներից ազատվելու հիմքերը, ըստ նույն 38-րդ հոդվածի 10.1-րդ մասի, չեն տարածվում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վրա:

5. Օրենքի 38-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն, «Որակավորման հանձնաժողովն արդարադատության ակադեմիայում սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով ուսումնառությունից ազատված անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է քննության առնել հայտատուին միաժամանակ դատախազների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու հարցը»:

Այս կարգավորմամբ փաստացի ստացվում է, որ անձը միանգամից կարող է հայտնվել առաջխաղացման ցուցակում ու նշանակվել ավելի բարձր պաշտոնում՝ առանց Արդարադատության ակադեմիայում սովորելու ու առանց դատախազների թեկնածությունների ցանկում հայտնվելու, ապա՝ նշանակվելու ու փորձ ձեռք բերելու: Հարց է առաջանում. արդյո՞ք հնարավոր է թեկուզ լեզվատրամաբանական առումով խոսել մի անձի առաջխաղացման մասին, ով դեռևս որևէ պաշտոնում չի նշանակվել: Պետք է բացառել անձի առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու հնարավորությունը՝ առանց դատախազական աշխատանքի փորձի, ինչը կավելացնի գործող դատախազների վստահությունը առաջխաղացման հեռանկարի հանդեպ և կամրապնդի արժեքահեն առաջխաղացման սկզբունքի գործողությունը դատախազական համայնքում:

Այսպիսով, անհրաժեշտ է՝

- չեղարկել 2020թ. ապրիլի 16-ին Օրենքի 33-րդ հոդվածում կատարված բոլոր փոփոխությունները՝ նախատեսելով 25 տարվա նվազագույն շեմ, ապա՝ մասնագիտական փորձի առկայություն բոլոր դատախազների թեկնածուների համար, և բացի այդ՝ ավելացնել փորձի պահանջվող ժամկետը մինչև առնվազն 3 տարի.
- վերացնել գիտական աստիճանով պայմանավորված թեկնածուներին առաջադրվող պահանջների կամ վերջիններիցս արվող վերապահումների՝ գիտական աստիճան ունենալու փաստը նման հարցերում վերաբերելիություն չունենալու պատճառով:

- վերացնել Արդարադատության ակադեմիայում սովորել-չսովորելու պահանջի տարբերակումը դատախազների ու ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց միջև:
- Բացառել անձի առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու հնարավորությունը՝ առանց դատախազական աշխատանքի փորձի:

Դատախազի պաշտոնում նշանակվելու համար սկզբունքային պահանջների տեսակետից հավասարապես կարևոր է Օրենքով նաև նեգատիվ պայմանների նախատեսումը, թե ինչից էլնելով չի կարելի նշանակել դատախազների պաշտոնում: Բնարկե, Օրենքի 39-րդ հոդվածը նախատեսում է այն սահմանափակումները՝ դատվածություն և այլն, որոնց առկայությամբ անձը չի կարող նշանակվել դատախազի պաշտոնում: Մակայն, պակաս կարևոր չէ նեգատիվ պայմանների ամրագրումը, մասնավորապես՝ առ այն, թե ինչ չափանիշներով չի կարելի նույն պայմաններին բավարարող երկու անձանց նկատմամբ **դրսևորել տարբերակված վերաբերմունք կամ ստեղծել նման տպավորություն, ընդ որում՝ թե նշանակման, և թե առաջխաղացման հարցերում:**

ԵԽ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագրում Հանձնարարականի 5-րդ կետի առթիվ նշվում է հետևյալը՝

«Պետությունները պետք է միջոցները ձեռնարկեն՝ ապահովելու համար, որպեսզի՝

ա. Դատախազների ընտրությունը, առաջխաղացումը և փոխադրումը անցկացվեն արդարացի և անկողմանակալ այնպիսի ընթացակարգերին համահունչ, որոնք երաշխիքներ են տրամադրում ցանկացած մոտեցումների դեմ, որոնցով բարենպաստ վերաբերմունք է դրսևորվում առանձին խմբերի նկատմամբ, և բացառում են խտրականությունը՝ ցանկացած հիմքով, ինչպես օրինակ՝ սեռը, ռասայական պատկանելությունը, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ազումը, ազգային փոքրամասնությանը պատկանելը, գույքային վիճակը, ծնունդը կամ այլ կարգավիճակ»:

Այսպիսով, Դատախազության մասին օրենքում, բացի կոնկրետ պահանջներից, պետք է ամրագրել նաև այն սկզբունքները, որոնց հիման վրա կատարվելու են նշանակումները և այն սկզբունքները, որոնք թույլ չեն տալու կամայական վերաբերմունք դրսևորել միևնույն գիտելիքներն ու որակներն ունեցող անձանց նկատմամբ ոչ վերաբերելի հիմքերով: Առաջին սկզբունքը պետք է լինի նշանակումների և առաջխաղացման արժեքահեկությունը (merit-based principle), իսկ երկրորդը՝ նույն իրավիճակում գտնվող անձի նկատմամբ խտրականության, այսինքն՝ անհիմն տարբերակված վերաբերմունքի արգելքը:

Բացի այդ, որպես սկզբունք Օրենքով նախատեսված չէ պաշտոնի զբաղեցման երաշխավորված ժամկետը և նշանակված դատախազի՝ այդ կարգավիճակը պահպանելու իրավունքը: Զուտ այն կարգավորումը, որ դատախազ կարող է նշանակվել 65 տարին չլրացած անձը, այդ սկզբունքի ամրագրում իրենից չի ներկայացնում: Անհրաժեշտ է սահմանել, որ անձը դատախազ նշանակվելիս, այդ կարգավիճակը պահպանում է մինչև 65 տարեկան լրանալը՝ դատավորների հետ անալոգիայով, և դատավորների համար սահմանված այն սկզբունքով, որ նրանք իրենց կարգավիճակից կարող են զրկվել այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով, որպիսի կարգավորման հիմքում ընկած է դատավորների համար ավանդաբար և անզլիական իրավունքից եկած «during good behaviour» (պատշաճ վարքագիծ դրսևորելու ընթացքում)՝ ի հակառակ «at the pleasure of the king» (Քանի դեռ այդպես է հաճո թագավորին) սկզբունքի:

Այս սկզբունքը նաև ընդունվում է Վենետիկի Հանձնաժողովի կողմից, որը նշում է՝

«50. Դատախազները պետք է նշանակվեն մինչև թոշակի անցնելը ժամկետով: Սահմանափակ ժամկետներով նշանակումները՝ վերանշանակման հնարավորությամբ, պարունակում են այն վտանգը, որ դատախազը իր որոշումները կայացնելու ոչ թե օրենքի հիման վրա, այլ՝ այն գաղափարի, թե ինչպես հաճոյանալ նրանց, ովքեր իրեն վերանշանակելու են»²⁴¹»:

Առավել ևս նշվածը ճշմարիտ է՝ հաշվի առնելով, Դատախազության մասին օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված՝ դատախազին պաշտոնից ազատելու հիմքերի պայմաններում՝ հաստիքի կրճատումը և դատախազության կառուցվածքային այլ ստորաբաժանում կամ այլ դատախազություն փոխադրվելուց հրաժարվելը, դատախազության կառուցվածքային այն ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, որտեղ նա պաշտոն է զբաղեցրել, երբ բոլոր նշված կառուցվածքային որոշումները կայացվում են նույն այն անձի կողմից՝ Գլխավոր դատախազի, ով կատարում է բոլոր դատախազների նշանակումները: Այս հարցերը, թե՛ վկայակոչված սկզբունքների, թե՛ լուծումների առումով, մանրամասն քննարկվում են Հետազոտության 3.8 կետում՝ կապված բացառապես «վատ վարքագծի» դրսևորումների դեպքում դատախազին աշխատանքից ազատելու սկզբունքի հետ, որը և սերտորեն կապված էր նշանակման և պաշտոնավարման ընթացքում գործող «լավ վարքագծի» սկզբունքի հետ»:

«Այնուամենայնիվ, ի տարբերություն դատավորների, դատախազները չպետք է ունենան կոնկրետ պաշտոնում ցմահ աշխատելու երաշխիք՝ չնայած այն հանգամանքին, որ նրանց մի պաշտոնից մյուսին փոխադրելու մասին որոշումները պետք է բխեն դատախազության վերստուգված կարիքներից (դատախազների հմտությունների ու փորձի լույսի ներքո), այլ ոչ թե պարզապես իշխանությունների կամայական որոշումներից: Շարժունակության կարիքները չպետք է, սակայն, հանգեցնեն ժամանակավոր ընտրությունը կամ նշանակումը գերադասելուն, ինչը կարող է վնասակար հետևանքներ ունենալ»²⁴²:

Կրկենք, խոսքը վերաբերում է անձի՝ ոչ թե կոնկրետ պաշտոնում ցմահ նշանակվելու իրավունքին, այլ դատախազի կարգավիճակը, վատ վարքագիծ չդրսևորելու դեպքում, պահպանելու իրավունքին: Սրա երաշխիքներից է առաջին հերթին, Հետազոտության 3.8 կետում քննարկվող դատախազի պաշտոնից ազատման հիմքերի շարքից հաստիքի կրճատումը ու այլ պաշտոնի փոխադրելու հետ անհամաձայնությունը հանելը:

3.5.1.2. Դատախազի պաշտոնում նշանակվելու համար ներկայացվող ընդհանուր կրթական պահանջները

Քննարկվող հարցերի տեսակետից կարևոր նշանակություն ունեն դատախազի թեկնածուներին ներկայացվող կրթական պահանջները, մասնավորապես՝ ընդհանուր կամ համալսարանական կրթության և հատուկ՝ մասնագիտացված, ապագայում դատախազի պաշտոն զբաղեցնելու համար գիտելիքներ ու հմտություններ տալուն միտված՝ Արդարադատության ակադեմիայում կրթվելու պահանջը: Արդարադատության ակադեմիայում սովորելը, ճիշտ է, մտնում է նշանակման գործընթացի մեջ, քանի որ ունկնդիրներն են արդեն իսկ Դատախազությունում մրցույթը հաղթահարած թեկնածուները, սակայն, փաստացի խոսքը գնում է Արդարադատության ակադեմիան ավարտելով կանխավարկածվող որոշակի կրթական մակարդակ ապահովելու մասին: **Քննարկենք այժմ, թե արդյոք ընդհանուր համալսարանական կրթությունը և նշված հատուկ մասնագիտական ուսուցումը ճիշտ են հավասարակշռված Հայաստանի Հանրապետությունում:**

Ի սկզբանե նշենք, որ սկզբունքորեն բոլոր հարցադրումները հավասարապես վերաբերելի են նաև դատավորների թեկնածուներին՝ Արդարադատության ակադեմիան

²⁴¹ ՎՀ-ի Զեկույցը դատախազության անկախության չափորոշիչների մասին, կետ 50:

²⁴² ԵԽ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագրում Հանձնարարականի 5-րդ կետի վերաբերյալ:

ավարտած լինելու պահանջին, ինչպես նաև՝ բոլոր փաստաբաններին ներկայացվող՝ ՀՀ Փաստաբանական դպրոցն ավարտելու պահանջին: Դարձյալ առաջ ընկնելով ու որպես ելակետային սկբունք նշենք նաև, որ Հայաստանում վաղուց հասունացել է ընդհանուր իրավաբանական գործունեություն, այն է՝ դատավորի, դատախազի, կամ փաստաբանի կարգավիճակում, իրականացնելու արտոնագրի համար միասնական քննության գաղափարը:

Այս հարցերը պետք է քննարկել ձևական և բովանդակային տեսակետներից: Ձևական կամ ընթացակարգային տեսակետից, առաջին հերթին, պետք է նշել, որ իրավաբանական ԲՈՒՀ-ն հաջողությամբ ավարտելով, անձը ձեռք է բերում իրավաբանի որակավորում: Արդյո՞ք, եթե մենք Արդարադատության ակադեմիայում ուսումը համարում են կրթական փուլ, այլ ոչ թե պաշտոնի նշանակման գործընթացի մաս, գոյություն ունի փաստաբանի որակավորում, դատախազի որակավորում և դատավոր որակավորում: Այսինքն՝ պարզ է, որ հետհամալսարանական «կրթության» լեգիտիմությունը բխում է կոնկրետ պաշտոնների կամ գործունեության տեսակների (փաստաբանական գործունեության դեպքում) համար անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ հաղորդելու անհրաժեշտությունից: Հետևաբար, այս կրթությունը պետք է անցնեն համապատասխան կարգավիճակ ունեցող, սակայն պաշտոն չունեցող անձինք: Ըստ էության, դատախազների ու դատավորների մասով, դա հենց այդպես էլ կա՝ հաշվի առնելով կարգավիճակից բխող առանձին պահանջները՝ նաև դատախազների ու դատավորների թեկնածուների վրա տարածելը: Սակայն, կարևորն այստեղ այն է, որ նման կարգավիճակ ունեցող անձը արդեն իսկ ունի պաշտոնում նշանակվելու ռոջամիտ ակնկալիք՝ վարքագծի կանոններ թույլ չտալու և «լավ վարքագիծ» դրսևորելու դեպքում:

Մեր առաջարկն է, հետևաբար, Արդարադատության ակադեմիան դարձնել զուտ դատախազների ու դատավորների վերապատրաստման հարցերով զբաղվող հիմնարկություն: Այսինքն՝

- Անձը, ավարտելով ԲՈՒՀ-ը և ստանալով իրավաբանի որակավորում, հանձնում է իրավաբանի մասնագիտական աշխատանքի իրավունք տվող արտոնագրի ընդհանուր քննություն (Bar Exam),
- Իրավաբանի մասնագիտական աշխատանքի արտոնագիր (law practicing licence) ունեցող անձը մասնակցում է դատախազների և դատավորների թեկնածուների համար կազմակերպվող մրցույթին.
- Մրցույցում հաղթած անձը նշանակվում է դատախազ կամ դատավոր.
- Դատախազ կամ դատավոր նշանակված անձը անմիջապես սկզբնական վերապատրաստում է անցնում Արդարադատության ակադեմիայում, ասենք՝ 4 շաբաթով, որից հետո վերապատրաստումներն անցկացվում են կամ պարտադիր շարունակական վերապատրաստման շրջանակներում (տարվա մեջ 40 ժամ) կամ ուսումնական կարիքների գնահատման հիման վրա (դատախազի կամ դատավորի գործունեությունը, համապատասխանաբար՝ Դատախազության Որակավորման հանձնաժողովի և ԲԴՄ-ի կողմից գնահատելու արդյունքում):

Այս փոփոխությունները թույլ կտան իրական կարիքահեն հավասարակշռություն հաստատել դատավորների ու դատախազների պաշտոններում աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների հաղորդման ինստիտուցիոնալ եղանակների միջև՝ ապահովելով, առաջին հերթին, համալսարանական կրթության շրջանակներում անհրաժեշտ գիտելիքների պաշարը և բացառելով նույն գիտելիքների հաղորդումը նաև Արդարադատության ակադեմիայում: Այսպիսով, ձևական և բովանդակային լուծումները խիստ փոխկապակցված են: Եվ ինչպես նշվեց, ներկայացված

բոլոր սկզբունքային մոտեցումները հավասարապես տարածելի են նաև Փաստաբանական դպրոցի վրա, որոնցից ամենակարևորն այն է, որ Փաստաբանական դպրոցի, Արդարադատության ակադեմիայի՝ ընդ որում՝ նաև դատավորների մասով, ունկնդիրներ են լինելու բացառապես համապատասխան կարգավիճակ ունեցող, այն է՝ փաստաբան, դատախազ և դատավոր հանդիսացող անձինք, որոնք անցնելու են *միայն վերապատրաստում*:

Արդարադատության ակադեմիայի և Փաստաբանության դպրոցի ամբողջ իմաստը՝ նոր դատավորների, դատախազների և փաստաբանների ուսուցման տեսակետից, դա նրանց հմտություններ տալն էր, այլ ոչ թե գիտելիքներ, որոնք, ենթադրվում է, որ նրանք, ստացել են ԲՈՒՀ-ում: Առկա կարգավորումների փոխարեն, անհրաժեշտ է լինելու բարձրացնել իրավաբանական կրթության որակը՝ հմտություններ հաղորդելու ուղղությամբ, ԲՈՒՀ-ական կրթությունը, ինչպես բժիշկ մասնագետների պատրաստման դեպքում է, պրակտիկային առավել մոտեցնելու համար, ինչպես նաև՝ աշխատանքային գործունեության սկզբի համար նախատեսելով պրակտիկ փորձի առաջնային կուտակման վերաբերյալ հստակ դրույթներ և մեթոդներ, օրինակ՝ փաստաբանի, դատավորի օգնականի որոշակի տևողությամբ պարտադիր ստաժ ունենալը:

Նաև սա ենթադրում է կապը դատավորի թեկնածուների ցուցակի հետ: Այսինքն, եթե անձը, արդեն ձեռք է բերել դատավորի թեկնածուի կարգավիճակ, ապա նա կարող է մասնակցել դատախազի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթին՝ բանավոր քննության՝ հարցազրույցի փուլից: Այս միջոցը պետք է կիրառելի լինի՝ անկախ նրանից, թե ինչ չափանիշներով է կազմվում դատավորների ցուցակը:

Այս մոդելը նաև ենթադրում է Էթիկայի միասնական կանոնագիրք գործող իրավաբանների, այսինքն՝ դատախազների և փաստաբանների համար, որի ընդունման, փոփոխման և մեկնաբանման գործառույթը պետք է տրվի ՀՀ բարձագույն, հիմա արդեն՝ **Գերագույն դատարանին**: Ինչ վերաբերում է Էթիկայի այն հարցերին, որոնք տարբեր կարգավորում կպահանջեն փաստաբանների ու դատախազների համար, ապա այդ առանձնահատկությունները, փաստորեն, դուրս գալով *մասնագիտական էթիկայի սահմաններից*, հանդես են գալու որպես *պաշտոնեական կամ դատավարական, մի խոսքով՝ իրավաբանական պարտականություններ և պետք է կարգավորվեն իրավական նորմերով, այն է՝ դատավարական համապատասխան օրենսգրքերով*:

Էթիկայի ընդհանուր կանոնագրքի անհրաժեշտությունը բխում է նաև նրանից, որ՝

- թե փաստաբանի, և թե դատախազի մասնագիտական էթիկայի խախտումների դեպքում նրանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցները, այդ թվում՝ դատախազի դեպքում՝ լիազորությունների դադարեցումը, բողոքարկվում են դատական կարգով, այսինքն՝ նշված նորմերի վերջնական մեկնաբանումը, միևնույն է, տրվում է դատական իշխանության կողմից.
- նշվածից ելնելով, միասնական կանոնագրքի դեպքում, ապահովվում է՝ դրա կիրառման միասնականությունը, քանի որ երկու կանոնագրքի դեպքում էլ վերջին խոսքը ասվում է միևնույն դատական իշխանության կողմից.
- էթիկայի ընդհանուր կանոնները հանդիսանալով նույնը և դատախազների, և դատավորների համար, հանդիսանում են *մասնագիտական գործունեություն իրականացնող իրավաբանի էթիկայի կանոններ, վերը նշված արտոնագրից բխող պայմաններ, մինչդեռ մնացած տարբերվող պահանջները արդեն ներկայացված են*

դատավարության կողմերին կամ ամեն դեպքում՝ պաշտոնեական լիազորություններ են և ապահովվում են դատավարական ձևի շրջանակներում²⁴³:

Ինչ վերաբերում է էթիկայի ընդհանուր կանոններում դատախազական ու փաստաբանական վարքագծի առանձնահատկությունները հաշվի առնելուն, ապա դա պետք է կատարվի նույն էթիկայի կանոնները Դատախազության Որակավորման հանձնաժողովի և Փաստաբանների պալատի խորհրդի կողմից, համապատասխանաբար՝ դատախազական ու փաստաբանական գործունեության առնչությամբ մեկնաբանելու միջոցով:

3.5.2. Դատախազի պաշտոնում նշանակվելու ընթացակարգը

3.5.2.1. Դատախազների նշանակման ընթացակարգի հիմնական դրույթները և դրա միասնական լինելու անհրաժեշտությունը

Դատախազների նշանակման, ինչպես նաև հաջորդ կետում քննարկվող առաջխաղացման գործընթացը՝ թեկնածությունների ընտրությունից սկսած մինչև Գլխավոր դատախազի համապատասխան հրամանը, պետք է երաշխավորի Դատախազության գործառույթների անկախ ու արդյունավետ իրականացման համար առավել համարժեք անձանցով Դատախազությունն համալրելու կարիքին: Այս առումով, միջազգային չափորոշիչների տեսակետից, անհրաժեշտ է փորձագիտական ներուժի մասնակցությունը, Որակավորման հանձնաժողովի լիազորվածության աստիճանի բարձրացումը և, ելնելով դատախազների ու դատավորների կարգավիճակի նմանություններից՝ դատախազի կարգավիճակ ձեռք բերելու գործընթացում դատավորի կարգավիճակին բնորոշ երաշխիքների ամրագրումը:

Վենետիկի Հանձնաժողովը, Դատախազության անկախության չափորոշիչների մասին Ձեկույցում հստակ նշել է՝

«Դատախազների համար պահանջվող հատուկ որակների տեսակետից, խորհուրդ չի տրվում նրանց նշանակման գործընթացը ամբողջությամբ թողնել հենց դատախազական աստիճանակարգության վրա: Տարբեր մեթոդներ կարող են օգտակար լինել՝ վերացնելու այն վտանգը, որ մոնոլիտ դատախազական համակարգում վերևից իջնող հանձնարարությունները ավելի մեծ նշանակություն ունենան, քան օրենքը: **Որակյալ դատախազների նշանակումը նախապատրաստելու համար օգտակար կլինի փորձագետների ներդրումը:** Սա իդեալական կարող է կատարվել անկախ մի մարմնի շրջանակներում, ինչպիսին է ժողովրդավարական լեգիտիմություն ստացած Դատախազական խորհուրդը կամ ավագ դատախազների հանձնաժողովը, որոնց փորձը թույլ կտա պատշաճ թեկնածուների առաջադրել նշանակումների համար: Այդ մարմինը կարող է գործել Գլխավոր դատախազի երաշխավորությունների հիման վրա՝ իրավունք ունենալով մերժելու անձի նշանակումը, սակայն՝ միայն հիմնավոր կերպով (**ընդգծումները՝ ՎՀ-ի**)»²⁴⁴:

Նույն Ձեկույցում ՎՀ-ն նշում է, որ դատախազների կողմից իրականացվող պարտականությունները՝

«...բոլորն էլ վկայում են որպես դատախազ բարձր որակների և կերպարի տեր համարժեք մարդկանց ներգրավելու անհրաժեշտությունը: Դատախազից պահանջվող որակները նմանատիպ են դատավորից պահանջվող որակներին, և պահանջում են նշանակման և առաջխաղացման համապատասխան ընթացակարգերի առկայություն: Անհրաժեշտության դեպքում, դատախազը, ինչպես և դատավորը, երբեմն պետք է կայացնի ժողովրդահաճո որոշումները, որոնք կարող են դառնալ մամուլում քննադատության, ինչպես նաև քաղաքական վեճերի առարկա»²⁴⁵:

²⁴³ Վարքագծի կանոնների մասին առավել մանրամասն տես՝ Հետազոտության 3.9 կետում:

²⁴⁴ Տես՝ ՎՀ-ի Ձեկույցը Դատախազության անկախության չափորոշիչների մասին, («Մյուս դատախազների նշանակումը») կետ 48:

²⁴⁵ Տես՝ ՎՀ-ի Ձեկույցը դատախազության անկախության չափորոշիչների մասին, կետ 18:

ՀՀ Դատախազության մասին օրենքի 38-րդ հոդվածի (Դատախազների թեկնածությունների ցուցակի կազմումը) վերաբերելի դրույթների համաձայն՝

«1. Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է **բաց և փակ մրցույթի միջոցով**: Բաց մրցույթն անցկացնում է դատախազության որակավորման հանձնաժողովը տարին մեկ անգամ՝ որպես կանոն, յուրաքանչյուր տարվա հունվար ամսին: Դատախազների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ: **Բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով**:

... 5. ... Որակավորման հանձնաժողովի՝ **հայտի ընդունումը մերժելու մասին որոշումը հայտատուն կարող է դատական կարգով բողոքարկել** մերժումը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: ...:

6. Որակավորման հանձնաժողովի կողմից **հայտի ընդունման մերժումը դատական կարգով բողոքարկելը չի կասեցնում հայտերի ընդունման և դատախազների թեկնածությունների ցուցակի կազմման՝ սույն օրենքով նախատեսված ընթացակարգը**: Որակավորման հանձնաժողովի՝ հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից անօրինական ճանաչվելու դեպքում հայտատուի հայտը ենթակա է քննարկման որակավորման հանձնաժողովի կողմից, իսկ եթե մրցույթի անցկացումն սկսվել է, ապա հայտատուն իրավունք ունի առանց նոր հայտ ներկայացնելու մասնակցելու այդ մրցույթին, իսկ եթե մրցույթը ավարտվել է, ապա արտահերթ մրցույթին:

7. Որակավորման հանձնաժողովն ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական հմտությունները, իր կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական որակները և արժանիքները (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ և այլն), ինչպես նաև նրա ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունն օրենքով նախատեսված պահանջներին: ...:

8. Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ներկայացվում են գլխավոր դատախազին: **Գլխավոր դատախազն իրավունք ունի ներկայացված հայտատուներին ընդգրկելու դատախազների թեկնածությունների ցուցակում**: Ցուցակում հայտատուին չընդգրկելու վերաբերյալ գլխավոր դատախազը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հայտատուն կարող է բողոքարկել դատական կարգով: ...»: (38-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 16.04.20 ՀՕ-245-Ն):

ՀՀ Դատախազության մասին օրենքի 38.1-րդ հոդվածի (Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող ստորաբաժանման դատախազների և գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակի կազմումը) վերաբերելի դրույթների համաձայն՝

«1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող դատախազների և գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվում է բաց մրցույթ՝ սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-9-րդ մասերով նախատեսված բաց մրցույթի անցկացման կանոններով: **Մրցույթի կազմակերպման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով**:

2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող դատախազների ... թեկնածությունների ցուցակում ընդգրկվել **հավակնող անձը սույն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ (այսուհետ՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ)**: Որակավորման հանձնաժողովի նախագահը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը մեկօրյա ժամկետում ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ երկշաբաթյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Որակավորման հանձնաժողովի նախագահը եզրակացությունն ստանալուց հետո այն տրամադրում է որակավորման հանձնաժողովի անդամներին որակավորման հանձնաժողովի նիստից առնվազն երեք օր առաջ: **Թեկնածուի վերաբերյալ որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված խորհրդատվական եզրակացությունը տրամադրվում է նաև գլխավոր դատախազին**:

... 4. **Ըստ անհրաժեշտության**, գլխավոր դատախազի հրամանով կարող է անցկացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող ստորաբաժանման թափուր հաստիքների կամ սույն հոդվածով նախատեսված թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով մրցույթ:

5. Այն հայտատուների **թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ներկայացվում են գլխավոր դատախազին** սույն հոդվածով նախատեսված թեկնածությունների ցուցակներում ընդգրկելու նպատակով: ... **Ցուցակներում հայտատուին չընդգրկելու վերաբերյալ գլխավոր դատախազը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հայտատուն կարող է բողոքարկել դատական կարգով:** Եթե ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող բաց մրցույթների արդյունքներով առնվազն վեց թեկնածու չի ստանում դրական եզրակացություն, կամ գլխավոր դատախազը ցուցակի մեջ ընդգրկում է վեցից պակաս թեկնածուների... ապա անցկացվում է **լրացուցիչ բաց մրցույթ՝** սույն հոդվածի առաջին մասով նախատեսված թեկնածությունների համապատասխան ցուցակը համալրելու նպատակով:...»: *(38.1-ին հոդվածը լրաց. 16.04.20 ՀՕ-245-Ն):*

Նշված դրույթները խնդրահարույց են դատախազների կարգավիճակի միասնականության (հատկապես՝ այն ձեռք բերելու գործընթացի միասնականության առումով), Որակավորման հանձնաժողովի որոշումներ կայացնելու լիազորվածության, Գլխավոր դատախազի փաստացի անսահմանափակ հայեցողության ու այդ և այլ հարցերի առթիվ միջազգային մի շարք չափորոշիչների տեսանկյունից: Մասնավորապես՝

1. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է **բաց և փակ մրցույթի** միջոցով, ընդ որում՝ բաց մրցույթն անցկացնում է դատախազության որակավորման հանձնաժողովը տարին մեկ անգամ, իսկ դատախազների թեկնածությունների ցուցակում **լրացումներ կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ:** Այս կարգավորումներում բացակայում է են այն հիմքերը, որոնց առկայությամբ պետք է անցկացվի փակ մրցույթը: Խնդրահարույց է նաև այն, որ նման հիմքերի օրենքով նախատեսված չլինելու դեպքում, թե բաց և թե փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանվում է **գլխավոր դատախազի հրամանով:** Այս առթիվ **ՏՀԶԿ-ն Հայաստանին առաջարկել է՝ «Ապահովել, որպեսզի դատախազներին աշխատանքի ընդունելու համար փակ մրցույթը կիրառվի բացառիկ դեպքերում և հստակ սահմանված չափանիշների հիման վրա»²⁴⁶:**

2. Դատախազների կարգավիճակի և այն ձեռք բերելու ընթացակարգերի միասնականության տեսակետից խնդրահարույց է այն կարգավորումը, որ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց և փակ մրցույթի միջոցով (38.1), իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով՝ անցկացվում է միայն բաց մրցույթ: Ինչպես նշվեց վերևում, «սովորական» դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման կամ ինչպես Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում է նշվում՝ «թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու» համար անցկացվում է փակ մրցույթ, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով, այսինքն՝ այն դեպքում, երբ բաց մրցույթների արդյունքներով առնվազն վեց թեկնածու չի ստանում դրական եզրակացություն, կամ գլխավոր դատախազը ցուցակի մեջ ընդգրկում է վեցից պակաս թեկնածուների..., ապա անցկացվում է **լրացուցիչ բաց մրցույթ:** Անհասկանալի է, թե ինչու նույն փաստակազմի, այն է՝ ցուցակը լրացնելու կամ համալրելու անհրաժեշտության փաստի պայմաններում, մի կատեգորիայի դատախազների համար անցկացվում է «փակ», իսկ մյուս կատեգորիայի համար՝ «լրացուցիչ բաց» մրցույթ: Կրկնում ենք, նման տարբերակները լեզվաբան չեն, քանի որ չեն բխում իրականացվելի դատախազական գործառույթների տարբերությունից: Այսինքն՝ դատախազները պետք է այդ կարգավիճակը ձեռք բերեն միասնական ռեժիմով, և կախված

²⁴⁶ ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց, նոր 16-րդ Երաշխավորություն՝ Բարեկարգությունը դատախազությունում, էջ 91:

նրանից, թե ինչ գործառույթներ են նրանք իրականացնելու, օրենքը չպետք է նախատեսի նրանց որպես դատախազ նշանակելու ընթացակարգի փակ կամ բաց ռեժիմներ:

3. Նույն կարգավիճակի միասնականության սկզբունքի տեսակետից անթույլատրելի է նաև Օրենքի 38.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն կարգավորումը, որի համաձայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների ... թեկնածությունների ցուցակում ընդգրկվել **հավակնող անձը սույն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ, մինդեռ մյուս դատախազների թեկնածությունների ցանկում ընդգրկվելու համար նման պահանջ նախատեսված չէ:** Կրկնենք, դատախազի կարգավիճակի ձեռք բերելուն ուղղված ընթացակարգում նման սկզբունքային տարբերությունները չեն բխում դատախազական գործառույթների առանձնահատկություններից, և **որևէ փաստարկ չի կարող լինել առ այն, որ, օրինակ՝ կոռուպցիոն հանցագործության վերաբերյալ քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող կամ մեղադրանք պաշտպանող դատախազի համար կարող է թույլատրելի լինել պակաս բարեվարքության տեր լինելը, քան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների համար**²⁴⁷:

4. Տարօրինակ է, որ Որակավորման հանձնաժողովի՝ հայտի ընդունումը մերժելու մասին որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել հայտատուի կողմից, սակայն նույն հանձնաժողովի բացասական վերջնական եզրակացությունը՝ ոչ: Ըստ էության, առկա է այն վտանգը, որ ՈՀ-ն, որի նախագահը, ըստ գործող կարգավորումների, ԳԴ տեղակալներից մեկն է, ԳԴ-ին է ներկայացնի միայն այն թեկնածուներին, որոնք հաստատվելու են դատախազի կողմից, իսկ այն թեկնածուներին չներկայացնելը, որոնք չեն հաստատվելու ԳԴ-ի կողմից, չի ներկայացնի: Եվ այդ չներկայացնելը բողոքարկման ենթակա չէ, ինչը և անմիաստ է դարձնում ԳԴ-ի որոշումը դատական բողոքարկման ենթարկելու հնարավորությունը այն թեկնածուների համար, ովքեր ներկայացվել են ՈՀ-ի կողմից: Այսինքն, այն դատախազները, որոնց ԳԴ-ն չէր նշանակելու, արդեն իսկ չեն ներկայացվում ՈՀ-ի կողմից, ուստի և ՈՀ-ի մակարդակում կանխված են այն դեպքերը, երբ ԳԴ-ն չի նշանակի իր համար անցանկալի անձի: Հենց այդ է պատճառը, որ ԳԴ չնշանակելու վերաբերյալ որոշումները չեն բողոքարկվում, քանի որ չկան, իսկ նրա կողմից՝ անձին թեկնածությունների ցանկում չընդգրկելու մասին որաշման դատական բողոքարկման հնարավորություն տվող, ինչպես նաև՝ հայտատուի բողոքը դատարանը կողմից բավարարվելու կամ մերվելու հետևանքներ սահմանող նորմերը՝ մեռելածին²⁴⁸:

²⁴⁷ Պետք է նշել, որ այս բացը լրացնելուն ուղղված, ՀՀ Կառավարության կողմից կոնկրետ քայլեր արդեն ձեռնարկված են, մասնավորապես՝ ՀՀ Դատախազության մասին օրենքի վերաբերելի հոդվածներում նախատեսելով բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկների օգտագործումը նաև Գլխավոր դատախազի, ԳԴ տեղակալի ու մյուս բոլոր դատախազների նշանակման գործընթացներում, տես՝ https://www.e-draft.am/files/project_file/1/15962138431846.docx:

²⁴⁸ Ըստ ԳԴ ԱԺ 2020թ. Հաղորդման (էջ 178-179), 2019թ. ընթացքում Որակավորման հանձնաժողովը Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն անցկացրել է բաց և փակ մրցույթներ: **Բաց մրցույթին մասնակցելու համար** դիմել է 44 հավակնորդ, որոնցից 5-ը չեն ներկայացել բաց մրցույթին, 13 հավակնորդի վերաբերյալ ՈՀ-ն ՀՀ ԳԴ-ին ներկայացրել է դրական եզրակացություն՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, որոնց ԳԴ-ն ընդգրկել է դատախազների թեկնածությունների ցուցակում, և այդ 13 անձինք ուղարկվել են Արդարադատության ակադեմիա ուսումնառություն անցնելու: 2019թ. ընթացքում **փակ մրցույթի մասնակցելու խնդրանքով** դիմել է 21 անձ, որոնցից 1-ը չի ներկայացել փակ մրցույթին՝ խնդրելով փակ մրցույթին մասնակցելու դիմումը թողնել անհետևանք: 2 հավակնորդի ԳԴ-ն չի թույլատրել մասնակցել փակ մրցույթի՝ քանզի հավակնորդներից 1-ը քննիչի պաշտոնում աշխատանքի ստաժը չէր բավականացնում փակ

ԳՐԵԿՈ-ի 4-րդ շրջանի Ձեկույցում (կետ 68) Հայաստանին ուղղված 14-րդ Երաշխավորության կատարման հետ կապված ուղղակիորեն առաջարկվել է՝

«բարեփոխել դատախազների նշանակման և առաջնադասման ընթացակարգերը՝ այդ թվում հետևյալ միջոցներով՝

i) բարձրացնելով Որակավորման հանձնաժողովի ներսում որոշումների կայացման թափանցիկությունը, սահմանափակելով Գլխավոր դատախազի հայեցողական լիազորությունները և պահանջելով, որպեսզի նա գրավոր կերպով պատճառաբանի իր որոշումները, և

ii) թույլ տալով, որպեսզի հաջողության չհասած թեկնածուները բողոք ներկայացնեն դատարան՝ հիմնվելով կոնկրետ և հստակ իրավական դրույթների վրա»²⁴⁹:

Այնուհետև, նույն երաշխավորության մեջ, ԳՐԵԿՈ-ն դրական գնահատելով 2017 Օրենքի դրույթները Որակավորման Հանձնաժողովի կողմից հայտատուի հայտի ընդունումը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև Գլխավոր դատախազի կողմից դրական եզրակացություն ստացած անձին դատախազների թեկնածուների ցուցակում չընդգրկելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկվելու հնարավորության մասին (կետ 69-70), նշում է (կետ 70), առանց կոնկրետացնելու, սակայն, որ՝

«հետագա միջոցներ են անհրաժեշտ Որակավորման հանձնաժողովի կողմից իրականացվող ընթացակարգերի հետ կապված գործընթացն ավելի թափանցիկ դարձնելու համար»²⁵⁰:

Նշված դիտարկման հիման վրա, ԳՐԵԿՈ-ն գտել է (կետ 71), որ 14-րդ Երաշխավորությունն իրականացվել է մասնակի:

Այսպիսով, անհրաժեշտ է դատական բողոքարկման առարկա դարձնել նախնառաջ ՈՀ-ի՝ հայտատուի թեկնածությունը ԳԴ հաստատմանը չներկայացնելու մասին որոշումը:

Նույն կարգավորումը պետք է տրվի նաև Օրենքի 38.1 հոդվածի 5-րդ մասում, քանի որ դրանում նույնպես նախատեսված չէ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու հայտ ներայացրած ու մրցույթի մասնակցած անձի կողմից ՈՀ-ի բացասական եզրակացությունը դատական կարգով բողոքարկելու իրավունքը:

3.5.2.2. Դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման մրցույթի ընթացակարգը և դրա միասնական լինելու անհրաժեշտությունը

ՀՀ Դատախազության մասին օրենքի 42.1 հոդվածի (Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի, ղեկավարի տեղակալի և դատախազների, ինչպես նաև գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը

մրցույթի մասնակցելու համար, իսկ մյուսը դիմել էր բաց մրցույթից ընդամենը 2 ամիս առաջ: ԳԴ-ն 19 դիմորդի թույլատրել է մասնակցելու փակ մրցույթի, սակայն 6-ի վերաբերյալ Հանձնաժողովը բացասական եզրակացություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ նրանց դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, իսկ 13-ի վերաբերյալ՝ դրական: Հաղորդումը, սակայն, չի նշում, թե արդյոք այս վերջին փակ մրցույթով ՈՀ դրական եզրակացություն ստացածները ընդգրկվել են դատախազների թեկնածությունների ցանկում ԳԴ կողմից՝ տվյալների ակնհայտ անփոփոխելիության կանխավարկածի ուժով:

²⁴⁹ GrecoRC4(2017)15 FOURTH EVALUATION ROUND Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors COMPLIANCE REPORT ARMENIA, adopted by GRECO at its 78th Plenary Meeting 8 December 2017 (Strasbourg, 4-8 December 2017), կետ 68:

²⁵⁰ GrecoRC4(2017)15 FOURTH EVALUATION ROUND Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors COMPLIANCE REPORT ARMENIA, adopted by GRECO at its 78th Plenary Meeting 8 December 2017 (Strasbourg, 4-8 December 2017), կետ 68:

համակարգող տեղակալի պաշտոններում նշանակման կարգը) համաձայն, սահմանվեց համապատասխան պաշտոններում նշանակման նոր կարգ²⁵¹:

Ի սկզբանե նշենք, որ այդ կարգը առաջընթաց է ընդհանուր կարգի համեմատ, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ նման տարբերակումը, անգամ եթե լավն է բովանդակային առումով, **հակասում է դատախազների կարգավիճակի միասնականության սկզբունքին (որի մասին խոսք է գնում սույն Հետազոտության 3-րդ գլխում) և պետք է տարածվի բոլոր դատախազների նշանակման վրա, անկախ թե դատախազության կառուցվածքային որ ստորաբաժանման հաստիքներն են այդ նշանակումներով համալրվում:** Նշվածը հաշվի առնելով, կարծում ենք, ճիշտ կլինի ներկայացնել հենց այս՝ պաշտոնների համալրման ավելի առաջադիմական կարգի կատարելագործման եղանակները՝ այն հաշվով, որ **ապագայում դրանք կիրառվեն բոլոր դատախազների նշանակումների համար:**

Եվ այսպես, **ՀՀ Գլխավոր դատախազի 2020թ. մայիսի 23-ի թիվ 47 հրամանի Հավելված N 1-ով** սահմանված է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների կազմակերպման կարգը: Այս փաստաթղթում ամրագրված են դատախազական նշված պաշտոնների թեկնածուների ցանկում ընդգրկվելու համար անհրաժեշտ գիտելիքների ստուգման գործընթացի օբյեկտիվությունն ու թափանցիկությունն ապահովող երաշխիքներ:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է մրցույթի **բաց** լինելու հանգամանքին, մրցույթի վերաբերյալ հայտարարության հանրայնացմանը վերաբերող պահանջներին (կետ 5), հարցաշարի մատչելիությանը և բովանդակությանը (կետ 19, 20, տես նաև՝ նշված Հրամանի Հավելված N 2), գնահատվող չափանիշներին (կետ 19 և հաջորդիվ), գիտելիքների ստուգման գործընթացի արձանագրմանը և ձայնագրառմանը (կետ 26-28), Հանձնաժողովի հարցադրումների հստակ ձևակերպված և հավակնորդի համար հասկանալի լինելու պահանջը (կետ 29), պատասխանների ճիշտ և սխալ լինելու մասին տեղում հայտարարվելու պահանջը (կետ 33), որոշումների կայացման, այսինքն՝ մրցույթի արդյունքների ամփոփման ընթացակարգը (Բաժին 6), մասնավորապես քվերակության կարգը և ձայների հավասար բաշխման դեպքում եզրակացությունը հայտատուի օգտին մեկնաբանելը (կետ 40), Հանձնաժողովի անդամի կողմից գրավոր հատուկ կարծիք ներկայացնելու իրավունքը, որը կցվում է արձանագրությանը (կետ 42), և վերջապես՝ հայտատուին թեկնածուների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ Հանձնաժողովի դրական եզրակացություն ստացած, սակայն գլխավոր դատախազի կողմից թեկնածությունների ցուցակում չընդգրկված հայտատուի կողմից գլխավոր դատախազի այդ որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը, և այդ որոշմանն առաջադրվող **պատճառաբանվածության պահանջը** (կետ 48):

Այս Կարգի հիմնական՝ վերը նշված, ինչպես նաև հենց Դատախազության մասին օրենքով նորաստեղծ ստորաբաժանման համար առանձնացված դրույթներն անհրաժեշտ է տարածել նաև մյուս բոլոր դատախազական պաշտոնների համալրման գործընթացների

²⁵¹ Հետազոտության ծավալներն անհարկի չընդարձակելու անհրաժեշտությունից ելնելով, մենք քննարկման առարկա ենք դարձնում հենց այս՝ նոր կարգը՝ հաշվի առնելով նաև մի շարք առումներով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածուների համար անցկացվող մրցույթի առավելությունները մյուս դատախազների թեկնածուների համար անցկացվող մրցույթի համեմատ՝ առաջարկելով առաջինի կարգավորումները այդ իսկ պատճառով տարածել բոլոր դատախազների թեկնածուների ընտրության գործընթացի վրա:

վրա: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով դատական բողոքարկման հնարավորությունը, պետք է փոփոխություններ մտցվեն Կարգի որոշ դրույթներում ևս: Մասնավորապես, Կարգի 36-րդ կետի համաձայն, «Հանձնաժողովը տվյալ օրվա բոլոր թեկնածուների հետ հարցազրույց անցկացնելուց հետո քննարկում է յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ եզրակացություն տալու հարցը, որի ժամանակ Հանձնաժողովի անդամները կարող են արտահայտել իրենց կարծիքները», իսկ 37-րդ կետի համաձայն, այդ «քննարկումը դռնփակ է և չի ձայնագրվում»:

Հիմնական թերությունը, սակայն, նրանում է, որ Հանձնաժողովի եզրակացությանը՝ թե դրական, և թե բացասական, պատճառաբանվածության պահանջ չի առաջադրվում, իսկ նման պահանջ առաջադրվում է գուտ ՀՀ գլխավոր դատախազի կողմից դրական եզրակացություն ստացած հայտատուներին թեկնածությունների ցուցակում չընդգրկելու մասին որոշմանը: Մրանով, մի կողմից արդյունավետությունից է զրկվում դրական եզրակացություն ստացած հայտատուների կողմից գլխավոր դատախազի բացասական որոշման դատական բողոքարկման իրավունքը, իսկ Հանձնաժողովի բացասական եզրակացություն ստացած թեկնածուներն ընդհանրապես զրկված են իրենց իրավունքների դատական պաշտպանությունից:

Անհրաժեշտ է, հաշվի առնելով, դատական բողոքարկման իրավունքի ունիվերսալությունը, օրենքով՝

- ապահովել Հանձնաժողովի բացասական եզրակացությունների բողոքարկման իրավունքը, քանի որ այդ եզրակացությամբ տվյալ հայտատուի համար նշված մրցույթն ավարտվում է, այսինքն՝ Հանձնաժողովի բացասական եզրակացությունը հանդիսանում է, ըստ էության տվյալ վարույթով վերջնական որոշում.
- նախատեսել Հանձնաժողովի կողմից հայտատուին լսելուց հետո նույն օրը անցկացվող քննարկման սղագրելիության պահանջը, որպեսզի թեկնածուն հնարավորություն ունենա պարզալու, թե ինչպես են Հանձնաժողովի անդամները եկել իր համար բացասական եզրակացության, ինչը Հանձնաժողովի որոշումների պատճառաբանվածության կարևոր երաշխիք է ու նաև, ըստ այդմ՝ դատական բողոքարկման իրավունքի արդյունավետության երաշխիք.
- հատուկ նախատեսել Հանձնաժողովի թե դրական և թե բացասական եզրակացությունների պատճառաբանվածության պահանջը: Այս կարգավորումը թույլ կտա խուսափել բացասական եզրակացությունների չափազանց տարածական և շարժունային ձևակերպումներից.
- նախատեսել Հանձնաժողովի բացասական եզրակացությունների պատճառաբանվածության պահանջի բավարարման օբյեկտիվ պայմաններ (օր.՝ այլ թեկնածուների կողմից նույն հարցին ճիշտ պատասխանելը և այլն): Նույն պահանջները պետք է նախատեսվեն նաև Գլխավոր դատախազի կողմից Հանձնաժողովի դրական եզրակացությունը ստացած հայտատուներին թեկնածությունների ցուցակում չընդգրկելու որոշման համար, որն, ինչպես նկատեցինք, բողոքարկման ենթակա է: Սա նաև կարևոր կլինի թե Գլխավոր դատախազի որոշման դեմ և թե Հանձնաժողովի բացասական եզրակացության դեմ հայտատուի կողմից ներկայացված բողոքը քննող դատարանի համար, որին իր հերթին պատճառաբանված որոշում կայացնելու համար, անհրաժեշտ կլինի ծանոթանալ նաև մյուս՝ դրական եզրակացություն ստացած հայտատուների պատասխաններին՝ **պարզելու համար, թե արդյոք խտրական մտտեցում չի**

դրսևորվել տվյալ հայտատուի նկատմամբ Հանձնաժողովի կողմից: Նույն դատարանը պետք է կարողանա ծանոթանալ նաև համեմատելու, թե արդյոք խտրական մոտեցում չի դրսևորվել նաև գլխավոր դատախազի կողմից՝ դրական եզրակացություն ստացած հայտատուների մի մասին թեկնածությունների ցուցակում ընդգրկելու, մյուսներին չընդգրկելու ժամանակ:

- հաշվի առնելով, որ չափազանց լայն է ձևակերպված (կետ 45) Գլխավոր դատախազի՝ Հանձնաժողովի եզրակացության հիման վրա որոշում կայացնելու լիազորությունը՝ առ այն, որ դրական եզրակացություն ստացած թեկնածությունները «մեկ օրվա ժամկետում ներկայացվում են գլխավոր դատախազին, որն իրավունք ունի ներկայացված հայտատուներին ընդգրկելու «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում», պետք է Կարգի 48-րդ կետում նաև նախատեսել, որ պատճառաբանված պետք է լինեն նաև Գլխավոր դատախազի կողմից՝ Հանձնաժողովի դրական եզրակացություն ստացած հայտատուներին թեկնածությունների ցուցակում ընդգրկելու որոշումները:

Կարգի մյուս թերությունը կայանում է նրանում, որ 55-րդ կետի համաձայն, մրցույթի «դիտորդների կողմից մրույթային գործընթացի տեսանկարահանումը, լուսանկարահանումը կամ ձայնագրությունն արգելվում է»: Նման կարգավորումը հակասում է ՄԻԵԿ 10-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ Սահամանդրության 42-րդ հոդվածով սահմանվող կարծիքի արտահայտման ազատությանը, որը, ՀՀ Սահամանդրության 42-րդ հոդվածի 1-ին մասի, «ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»: Նշված սահմանափակումը թերի է նաև իրավունքի մեթոդաբանության տեսակետից ընդհանրապես և կոնկրետ այս սուբյեկտիվ իրավունքի սահմանափակումների համաչափության պահանջի առումով, մասնավորապես՝ ոչ գաղտնի տեղեկության (իսկ տեղեկությունը պետության կողմից պաշտպանվող գաղտնիք չի պարունակում, քանի որ հասանելի է դիտորդին) որոշակի կրիչներով ամրագրելու արգելքը (իսկ 55-րդ կետում, կրկնվենք՝ ոչ գաղտնի տեղեկատվության ամրագրման գրեթե բոլոր տեխնիկական միջոցների օգտագործումն արգելված է), ապա հստակորեն առաջանում է արտահայտվելու սահմանադրական ազատության, տվյալ դեպքում՝ տեղեկություններ փնտրելու և տարածելու սահմանադրական իրավունքի անարդյունավետության խնդիր: Նման բացարձակ արգելքը համաչափ չէ, քանի որ, բացի նշված մեթոդաբանական սխալից, չի պարունակում նաև իրավունքի սահմանափակման լեզվի մի նպատակի և հիմքերի ամրագրումը:

Նշվածից ելնելով, անհրաժեշտ է վերացնել դիտորդների համար Կարգի 55-րդ հոդվածով սահմանված հակասահմանադրական արգելքը և նախատեսել հետևյալը՝

- դիտորդները, մրցույթային գործընթացի ոչ հրապարակային կամ դրնփակ մասի (մասերի) դիտորդությունն իրականացնելիս, իրավունք ունեն ամրագրելու (ֆիքսելու) և տարածելու իրենց դիտորդության համար մատչելի տեղեկությունները (այդ թվում՝ տեքստերը, պատկերները և այլն), որպիսի իրավունքների իրացումը չպետք է խաթարի մրցույթային գործընթացի բնականոն ընթացքը:
- մրցույթային գործընթացի առանձին մասի (մասերի) ոչ հրապարակային կամ դրնփակ անցկացման նպատակները և հիմքերը:

Վերջապես, ընթացակարգն ամբողջությամբ մյուս բոլոր դատախազների վրա տարածելու դեպքում, այն, մեր կողմից նշված առաջարկությունները հաշվի առնելով, պետք է ամրագրել Դատախազության մասին օրենքով, այլ ոչ թե՝ ԳԴ կողմից հաստատված կարգով:

Հաշվի առնելով նաև անցումային ժամանակաշրջանն ու միաժամանակ կոռուպցիայի դեմ պայքարն արդյունավետ դարձնելու ուղղությամբ նորամուծությունների անհրաժեշտությունը, կարծում ենք, որ ապագայում այլ դատախազների հետ այս վարչության դատախազների նշանակման և այլ հարցերի առթիվ տրվող կարգավորումները պետք է վերացվեն ընդհանրապես և այդ կարգերը լինեն միասնական անկախ այն գործերի բնույթից, որոնցով իրականացվում են դատախազական գործառույթները:

ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի 9-րդ Միջոցառումն անվանվում է «Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում», որի 2020թ. ակնկալվող արդյունքն է՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ ուսումնասիրությունների իրականացման և, ըստ այդմ, տվյալ անձին նշանակելու իրավասություն ունեցող անձին նշանակման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու գործառույթ» իսկ 2021-2022թթ. համար՝ մշակել և հաստատել է բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց արդյունքներով խորհրդատվական բնույթի եզրակացությունների տրամադրման կարգը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահել նաև ... «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց հիման վրա համապատասխան անձանց խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու վերաբերյալ իրավասություն»:

Այս միջոցառումները ողջունելի են դատախազների թեկնածուների վրա դատախազի կարգավիճակից բխող որոշ պահանջներ տարածելու և նշանակման գործընթացը ավելի թափանցիկ դարձնելու տեսանկյունից, սակայն բավարար չեն ԳԴԿԳՈ-ի նշված Երաշխավորությունը ամբողջությամբ կատարելու համար, որի նպատակով անհրաժեշտ է, ինչպես նշեցինք, Որակավորման հանձնաժողովի բացասական որոշումների բողոքարկման հնարավորությունը, ինչպես նաև այդ հանձնաժողովի կազմավորման կարգի փոփոխությունը, որի մասին արդեն նշվել է Հետազոտության 3.4.3 կետում:

3.5.2.3. Դատախազների թեկնածությունների ցուցակից թեկնածուին հանելը

ՀՀ Դատախազության մասին օրենքի 40-րդ հոդվածի (Դատախազների թեկնածությունների ցուցակից թեկնածուին հանելու հիմքերը) համաձայն՝

«1. Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը գլխավոր դատախազի հրամանով հանվում է ցուցակից, եթե՝

...11) նա դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու օրվանից յոթ տարի անընդմեջ չի նշանակվել դատախազի պաշտոնում.»:

Այս դրույթը իրենից ներկայացնում է ոչ այլ ինչ, քան Գլխավոր դատախազի կողմից դատախազների ցուցակում ընգրկված անձանց դատախազ նշանակելու հարցով իրականում անսահմանափակ հայեցողության մարմնավորում: Փաստացի, ամբողջ մրցութային գործընթացը առոչինչ է դառնում այն պատճառով, որ Գլխավոր դատախազն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության թեկնածուին չնշանակել դատախազի պաշտոնում, իսկ 7 տարի շարունակ չնշանակելու դեպքում այլևս անձը չի կարող նշանակվել դատախազ և պետք է նորից անցնի ամբողջ գործընթացի միջոցով:

Դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձն ունի դատախազ նշանակվելու ողջամիտ կամ լեզիտիմ ակնկալիք, հետևաբար, նախևառաջ, այդ ցուցակից նրան հանելու հիմքերը պետք է պայմանավորված լինեն **բացառապես իր վարքագծով: Բացի այդ, դարձյալ ողջամիտ ակնկալիքները հաշվի առնելով, Օրենքում պետք է հստակ կանոններ սահմանվեն այն դատախազների թեկնածուների համար, ովքեր լավագույն արդյունքներ են ցուցաբերել**

«ամենաբարձր ցուցանիշն ունեցող թեկնածուն պետք է ընտրության իրավունք ունենա թափուր հաստիքների ցանկում նշված պաշտոնում նշանակվելու համար, երկրորդը՝ երկրորդ ընտրության և այդպես շարունակ՝ նույն եղանակով, որը նախատեսված է դատավորների համար»²⁵²:

Եթե միջանկյալ կարգով ամփոփելու լինենք Գլխավոր դատախազի լիազորվածությունը դատախազներ նշանակելու գործընթացում, ապա պետք է նշենք, որ նրա հայեցողությունը իրականում անսահմանափակ է, քանի որ Որակավորման՝ մեծամասամբ իր կողմից նշանակվող հանձնաժողովի բացասական եզրակացությունները պատճառաբանման ու դատական կարգով բողոքարկման ենթակա չեն և անգամ անձին՝ դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկելու դեպքում, Գլխավոր դատախազն իրավունք ունի նրան չնշանակել դատախազի պաշտոնում, որից հետո անձը օրենքի ուժով հանվում է թեկնածուների ցանկից: Գտնում ենք, որ **Գլխավոր դատախազի այս հայեցողությունը չսահմանափակվելու դեպքում, դատախազների նշանակման մրցութները կրում են ձևական բնույթ:**

3.5.3. Դատախազի փոխադրումը այլ պաշտոնի և դատախազների միջև պարտականությունների վերաբաշխումը որպես դատախազների նշանակմանն առնչվող հարցեր

3.5.3.1. Դատախազի փոխադրումը այլ պաշտոնի

Դատախազների նշանակման գործընթացների հետ սերտորեն կապված է արդեն իսկ նշանակված դատախազների փոխադրման և նրանց միջև գործերի վերաբաշխման կարգը, քանի որ առաջին դեպքում դատախազը փոխադրվում է այլ պաշտոնի, որին նա չէր նշանակվել, այսինքն՝ փաստացի նշանակվում է մեկ այլ պաշտոնի, իսկ երկրորդ դեպքում կատարում է պարտականությունների, որոնք չեն բխում այն պաշտոնից, որին նա նշանակվել էր: Այս հարցերը անհրաժեշտ է կարգավորել օրենքով՝ համապատասխան երաշխիքներ ապահովելով դատախազների անկախությունը ապահովելու և Գլխավոր դատախազի այս հարցերում հայեցողության կամայական իրացումները կանխելու համար: Ինչպես նշվեց Հետազոտության 3.4 կետում այս երաշխիքներից առաջնայինն է դատախազության կառուցվածքը, առնվազն՝ ԳԴ տեղակալների թվի ու նրանց

²⁵² Recommendations from TAIEX Peer Review on Reforms in Judiciary, Penitentiary and Prevention of Torture and Ill-Treatment in Armenia (6-10 March 2017.), RECOMMENDATIONS by Mr Michael Haußner, Former Senior Public Prosecutor and Senior Judge, Germany, էջ 9, կետ f:

համակարգման ոլորտների, ինչպես նաև ԳԴ կառուցվածքային ստորաբաժանումների՝ վարչությունների և բաժինների՝ ՀՀ Դատախազության մասին օրենքով, այլ ոչ թե ԳԴ կողմից հաստատվող Դատախազության կանոնադրությամբ սահմանելը:

Ինչպես նշվում է ԵՂԽՄ Կարծիք Հ-11-ի 24-րդ կետում՝

«Որակը խթանելու համար, միանշանակ է, որ դատախազների ընտրությունը, նշանակումը, առաջխաղացումը և տեղափոխումը կատարվեն օրենքով կամ գրավոր ներքին ուղեցույցներով նախատեսված պարզ և կանխատեսելի չափանիշներին համապատասխան»:

Այս չափորոշիչի կարևորագույն տարրն այն է, որ ընտրությունը, նշանակումը, առաջխաղացումը՝ որպես ավելի բարձր պաշտոնի համար թեկնածու ընտրելու և այդ պաշտոնին նշանակում կատարելու ձև, ինչպես նաև տեղափոխումը դիտարկվում են որպես մեկ միասնական գործընթաց: Մեր կարծիքով, այդ ամբողջական, եթե կարելի է ասել «դատախազակազմական» գործընթացի անքակտելի մաս է նաև նշանակված դատախազների միջև լիազորությունների վերաբաշխումը՝ որպես այլ պաշտոնում նշանակված անձի լիազորությունները փաստացի կատարելու, այսինքն՝ ժամանակավոր կամ *ad hoc* այդ պաշտոնից բխող պարտականությունները կատարելու դրսևորում, որի ընթացքում նույնպես պետք է պահպանվեն ԵՂԽՄ կողմից նշված իրավական որոշակիության պայմանները, այն է՝ հստակ և կանխատեսելի չափանիշներ սահմանող, գրավոր փաստաթղթերում ամրագրված դրույթների առկայությունը:

ՀՀ Դատախազության մասին օրենքի 42-րդ հոդվածի (Դատախազին պաշտոնի նշանակելու կարգը) վերաբերելի դրույթների համաձայն՝

«... 5. ...Եթե անձը դատախազության համակարգում առաջին անգամ պաշտոնի է նշանակվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման կազմում, ապա չի կարող տեղափոխվել այլ ստորաբաժանում՝ առանց սույն օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգերի պահպանման»:(42-րդ հոդվածը լրաց. 16.04.20 ՀՕ-245-Ն):

Այս կարգավորումը հիմնված է հենց այն փաստի ընդունման վրա, որ դատախազի, տվյալ դեպքում՝ համապատասխան ստորաբաժանման դատախազների փոխադրումը այլ ստորաբաժանումներ իրենից փաստացի ներկայացնում է դատախազի նշանակում այլ ստորաբաժանման կազմում, որից էլնելով էլ սահմանվում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման կազմում նշանակված դատախազը այլ ստորաբաժանում է փոխադրվում դատախազ նշանակվելու նոր գործընթացի արդյունքում: Ինչպես նշվեց, սակայն, այս կարգավորումը հակասում է դատախազների կարգավիճակի միասնականության սկզբունքին: Մյուս կողմից, այն, դարձյալ այդ սկզբունքի խախտմամբ, անհարկի բացարձակ արգելք է նախատեսում ԳԴ հայեցողության համար: Այսինքն, Գլխավոր դատախազը պետք է հայեցողություն ունենա դատախազներին փոխադրել մի պաշտոնից մյուսի, և դա պետք է տարածվի բոլոր դատախազների վրա: Միաժամանակ, նման հայեցողությունը պետք է սահմանափակվի որոշակի երաշխիքներով, որոնցից են

- Դատախազության կառուցվածքի ամբողջական սահմանումը Դատախազության մասին օրենքով, այլ ոչ թե ԳԴ կողմից հաստատվող Դատախազության կանոնադրությամբ.
- Դատախազի կողմից այլ պաշտոնի փոխադրվելուց հրաժարվելը, ինչպես նաև հաստիքի կրճատումը դատախազին պաշտոնից ազտելու հիմքերի ցանկից հանելը (ինչի մասին կլիտսվի Հետազոտության 3.8 կետում).
- ԳԴ կողմից կայացվող փոխադրման մասին որոշումների պատճառաբանվածության պահանջ նախատեսելը:

Այս կարգավորումները հենց կարտահայտեն դատախազին փոխադրելու որոշումը դրա փաստացի այլ պաշտոնում նշանակվելու որոշում դիտարկելը՝ համապատասխան երաշխիքներ ապահովելով: Բացի այդ նշված երաշխիքները, ինչպես ասվեց, թույլ կտան խուսափել փոխադրումներ իրականացնելու կամ որ նույնն է՝ գործող դատախազներին այլ պաշտոններում նշանակելու բացարձակ օրենսդրական արգելքից, որը նախատեսված է Օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ կետում:

3.5.3.2. Դատախազների միջև պարտականությունների վերաբաշխումը

ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարականի 9-րդ կետում նշվում է՝

«Դատախազության կազմակերպման և ներքին գործառնության առումով, մասնավորապես՝ գործերի բաշխման ու վերաբաշխման տեսակետից, դրանք պետք է համապատասխանեն անկողմնակալության և անկախության պահանջներին և առավելագույնս բարձրացնեն քրեական արդարադատության համակարգի պաշտոնաճ գործառնության մակարդակը, մասնավորապես՝ յուրաքանչյուր հարցով իրավաբանական որակավորման և մասնագիտացման աստիճանը»:

Վերադաս ու առաջին հերթին՝ Գլխավոր դատախազի հայեցողության սահմանափակման այս չափանիշները օրենքում կարող են արտացոլվել տարբեր կեր: Օրինակ, ԳԴ տեղակալների համար, մենք առաջարկում ենք նրանց համակարգման ոլորտները Դատախազության մասին օրենքով նախատեսելը՝ ելնելով Դատախազության՝ Սահմանադրության 176-րդ հոդվածով նախատեսված լիազորություններից կամ ուղղություններից: Մեկ այլ սահմանափակման դրսևորում է Դատախազության ոչ միայն տարածքային, այլ նաև առարկայական լիազորվածությանը համապատասխան Դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները՝ վարչությունների ու բաժինների տեսքով, Օրենքում նախատեսելը՝ վերցնելով այդ լիազորությունը նույն Գլխավոր դատախազից: Իսկ եթե արդեն իսկ կոնկրետ պաշտոնում նշանակված դատախազների միջև անհրաժեշտ է լինում կատարել աշխատանքների վերաբաշխում, ապա դա պետք է կատարվի դարձյալ Օրենքով նախատեսված չափորոշիչներին ու չափանիշներին համապատասխան: Այսինքն՝ ԳԴ կողմից իր տեղակալների միջև ու դատախազների միջև գործերի վերա/բաշխման առթիվ որոշումների համար պետք է ապահովվեն բացառության կանոնից ենթադրվող օրյեկտիվ հիմքեր և հիմնավորում՝ ընդհանուր կանոնից շեղվելն արդարացնելու առումով: Հակառակ դեպքում, շատ հեշտ է ինքնուրույն դատախազից գործը վերցնել ու հանձնել վերադասի կարծիքը տվյալ գործով կամ ընդհանրապես միշտ կիսող դատախազին:

Կարծում ենք, որ կարևոր է գործերի բաշխման և հատկապես վերաբաշխման գործընթացում ամրագրել կամայականություններից պաշտպանվելու գործուն երաշխիքներ: Փաստացի, գործի վերաբաշխումը նշանակում է չկատարել այն աշխատանքը, որը կատարելու համար դատախազը նշանակվել է: Ինչ վերաբերում է տեղակալներին, որոնց դեպքում վերաբաշխումը ընդհանրապես անթույլատրելի է, քանի որ հնարավորություն է տալիս համապատասխան ոլորտը չհամակարգող տեղակալին զբաղվելու այլ ոլորտ համակարգող տեղակալի գործառնություններով, ապա դրա մասին նշվել է արդեն: Ինչ վերաբերում է մյուս դատախազների միջև գործերը վերաբաշխելուն, ի տարբերություն ԳԴ տեղակալների, ովքեր իրենց լիազորությունների կամայական վերաբաշխումից պետք է պաշտպանված լինեն անմիջապես օրենքով, դատախազների դեպքում կամայականությունից պաշտպանությունը պետք է ապահովվի հստակ չափորոշիչների ու չափանիշների, ըստ այդմ էլ՝ վերադաս դատախազի պատճառաբանված որոշման պահանջով ու ըստ այդմ էլ վերադասի վերադասին այդ վերաբաշխումը բողոքարկելու շնորհիվ:

ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագրում այս հարցերի հետ կապված նշվում է՝

«Աստիճանակարգված կառուցվածքը անհրաժեշտ է Դատախազության բոլոր մարմինների դեպքում՝ հաշվի առնելով նրանց կողմից իրականացվող գործառնությունների բնույթը: Սակայն, աստիճանակարգության տարբեր մակարդակների միջև հարաբերությունները պետք է կարգավորվեն հստակ և ոչ երկիմաստ կանոններով՝ այն հաշվով, որպեսզի անձնական մոտեցումները չունենան անհարկի դերակատարում: Հենց այս գաղափարին է ընկած Հանձնարարականի 9-րդ և 10-րդ կետերի, ինչպես նաև դրանք զարգացնող 36.ա կետի հիմքում»:

Ըստ ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագրի, Հանձնարարականի՝ «9-րդ կետը սկզբունքորեն պահանջում է, որպեսզի դատախազի կարգավիճակը որոշելիս կիրառված նույն անկողմնակալության մակարդակը պետք է արտացոլվի նաև Դատախազության յուրաքանչյուր մարմնի ներքին կազմակերպման և գործառնության մեջ»: Իսկ Հանձնարարականի 10-րդ կետը վերաբերում է Հետազոտության նախորդ կետերում քննարկված վերադաս դատախազի ցուցումների ու հանձնարարությունների օրինականությանը, ինչը վերաբերելի է, քանի որ գործերի բաշխումն ու վերաբաշխումն իրականացվում է վերադաս դատախազի հանձնարարությունների տեսքով, ու դրանց վրա լիովին տարածվում են դատախազների անկախության ու վերադասի ցուցումների ու հանձնարարությունների հետ համաձայն չլինելու դեպքում դրանք վիճարկելու վերաբերյալ արդեն իսկ նշված կարգավորումները: Բացատրական հուշագիրը 36.ա կետի առթիվ առավել վերաբերելի մասով, սահմանում է հետևյալը՝

«Դատախազների արդարացի, ոչ հակասական և արդյունավետ գործունեությունն ապահովելու համար, պետությունները պետք է ձգտեն՝

- Առաջնային դիտարկել կազմակերպման աստիճանակարգային մեթոդները՝ առանց թույլ տալու, սակայն, որպեսզի այդ կազմակերպական մեթոդները հանգեցնեն անարդյունավետ ու խոչընդոտներ ստեղծող բյուրոկրատական ընթացակարգերի.
- Սահմանեն քրեական քաղաքականության իրականացման ընդհանուր ուղեցույցներ.
- Սահմանեն այն ընդհանուր սկզբունքներն ու չափանիշները, որոնք պետք է հղումների տեսքով կիրառվեն՝ կոնկրետ գործերով որոշումներ կայացնելիս՝ որոշումների կամայական ընդունման դեմ երաշխիքներ տրամադրելու համար»:

Այս հարցերը շատ կարևոր են, քանի որ այստեղ է, որ դատախազության գործունեության կազմակերպական մեթոդները առավել ծանր կարող են անդրադառնալ դատախազների դատավարական ինքնուրույնության վրա: Եվ որպեսզի բացառվեն այդ ազդեցության կամայական դրսևորումները, պետք է հստակ սահմանվեն այն չափանիշները, որոնց համաձայն այս կամ այն գործը պետք է ենթակա լինի Դատախազության այս կամ այն կառուցվածքային միավորին: Եթե վերադասը կամ Գլխավոր դատախազը կամայականորեն կարողանան որոշել, թե որոնք են այդ չափանիշները կոնկրետ դեպքում, օրինակ՝ մի դեպքում բազմադրվագ հանցագործության վերաբերյալ քրեական գործով քննության նկատմամբ հսկողությունը մի դեպքում հանձնարարվի մեկ վարչությանը, իսկ մյուս դեպքում՝ տարբեր դրվագների նույն քրեաիրավական որակման պայմաններում՝ մեկ այլ վարչության, ապա այդ վիճակը թե լրջորեն կվտանգի պրակտիկայի միասնականությունը, և թե անհարկի բյուրոկրատական միջամտություն կլինի տվյալ ստորաբաժանման դատախազի պաշտոնում նշանակված դատախազի գործունեության նկատմամբ:

Որպես այդ իրավիճակներից խուսափելու եղանակ, ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագիրը, նույն 36.ա կետի վերաբերյալ նշում է, որ՝

«Երեք տարրի պետք է նախապատվություն տրվի պրակտիկայի միասնականությունը ապահովելիս՝

- Հստակ սահմանված աստիճանակարգություն, որում տեղ չունի նենգ բյուրոկրատական միջամտությունը, և որում Դատախազության բոլոր աշխատողները իրենց պետք է պատասխանատու զգան սեփական որոշումների համար և ընդունակ լինեն իրենց վրա վերցնելու այն նախաձեռնությունը, որն անհրաժեշտ է իրենց կոնկրետ աշխատանքը կատարելու համար (այս հարցի հետ կապված, տես նաև՝ 9-րդ և 10-րդ կետերը):
- Ընդհանուր ուղեցույցներ քրեական քաղաքականության իրականացման վերաբերյալ, որոնցով կսահմանվեն գերակայություններն ու դրանք ապահովելու միջոցները՝ հաշվի առնելով դատախազներին վերապահված հայեցողական լիազորությունները.
- Կոնկրետ գործերով որոշումների կայացման ժամանակ ուղենիշային չափանիշների առկայություն՝ նպատակ ունենալով, օրինակ՝ կանխել այնպիսի հակասությունները, երբ կոնկրետ հանցագործությունները մշտապես գրավում են որոշ Դատախազության որոշ ստորաբաժանումների ուշադրությունը, իսկ մյուսներինը՝ ոչ, կամ դրանց հետ կապված կիրառվում են տարբեր ընթացակարգեր կամ հանցագործությունները որակվում են տարբեր կերպով»:

3.5.4. Դատախազների առաջխաղացումը. արժեքահեն չափորոշիչների գնահատման պրակտիկան (merit-based evaluation practices), գնահատման օբյեկտիվությունն ու քաղաքական բնույթի և այլ ոչ իրավաչափ արգելքների անթույլատրելիությունը

Դատախազների առաջխաղացումը փաստացի իրենից ներկայացնում է դատախազի նշանակումը ավելի բարձր պաշտոնի: Հետևաբար, այս գործընթացում նույնպես պետք է ապահովվեն վերը քննարկված վերաբերելի բոլոր երաշխիքները՝ նշանակման արժեքահեն չափանիշներից սկսած մինչև օրենքով կարգավորվող թափանցիկ ընթացակարգի և վերջինիս շրջանակներում պատճառաբանված որոշումների կայացման պահանջը: ՀՀ Դատախազության մասին օրենքի 39-րդ հոդվածի (**Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակները**) վերաբերելի դրույթները սահմանում են հետևյալը՝

«... 2. Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակները ձևավորում է որակավորման հանձնաժողովը գլխավոր դատախազի հրամանով՝

1) դատախազների հերթական ատեստավորման ժամանակ.

2) արտահերթ կարգով, երբ գլխավոր դատախազն առաջարկություն է ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ դատախազին առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիր: Դատախազն ընդգրկվում է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում.»:

Դատախազների առաջխաղացման հիմքերի ու ընթացակարգի հետ կապված մտահոգությունները հիմնականում նույնն են, ինչ որ կան նշանակման հետ կապված՝ նկատի ունենալով նախևառաջ, արժեքահեն մոտեցումների բացակայությունը և Գլխավոր դատախազի անսահմանափակ հայեցողությունը:

Ինչպես նշվում է ԵՂՄՄ Կարծիք Հ-11-ի 24-րդ կետում՝

«Որակը խթանելու համար, միանշանակ է, որ դատախազների ընտրությունը, նշանակումը, առաջխաղացումը և տեղափոխումը կատարվեն օրենքով կամ գրավոր ներքին ուղեցույցներով նախատեսված պարզ և կանխատեսելի չափանիշներին համապատասխան»:

ՏՀԶԿ-ն Հայաստանի վերաբերյալ իր 4-րդ շրջանի Մշտադիտարկման զեկույցում նշելով, որ՝ «... համակարգը գրեթե ոչ մի մասնակցություն չի նախատեսում անկախ կամ ցածր մակարդակի պաշտոններ զբաղեցնող դատախազների համար, այլ՝ միայն Գլխավոր դատախազի կողմից ընտրված ղեկավարների կամ բարձրաստիճան դատախազների համար», նկատել էր, որ ՀՀ Դատախազության մասին օրենքի «շատ դրույթներ ենթակա են իրացման ներքին կանոնակարգման միջոցով, ինչպես օրինակ՝ փակ մրցույթների

կիրառումն ու նախատեսելը, որ [Գլխավոր] դատախազը արտակարգ հիմունքներով կարող է անձանց ներառել առաջխաղացման ցուցակում»²⁵³: Այդ դիտարկումից ելնելով, ՏՀԶԿ-ն Հայաստանին է ներկայացրել 16-րդ Երաշխավորությունը

«Դիտարկել դատախազների ներկայացուցչական մարմինների կողմից առաջարկված հարցերով որոշումներ կայացնելիս Գլխավոր դատախազի հայեցողությունը սահմանափակելու հարցը»²⁵⁴:

Այս առաջարկն, ինչպես մենք են առաջարկում, իր առավել օպտիմալ իրացումը կարող է ստանալ Որակավորման հանձնաժողովի մանդատի, այսինքն՝ Դատախազների ընդհանուր ժողովի կամ խորհրդի կողմից ձևավորվելու և ՈՀ-ի կազմի նոր կարգավորման պարագայում:

Բացի այդ, ինչպես նշվեց, Օրենքի 38-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն, Որակավորման հանձնաժողովը արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է քննության առնել հայտատուին միաժամանակ դատախազների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու հարցը, ինչը նշանակում է, որ անձը կարող է առաջխաղացում ունենալ՝ առանց նախկինում դատախազ աշխատելու: **Գործող դատախազների վստահությունը առաջխաղացման հեռանկարի հանդեպ բարձրացնելու համար պետք է բացառել անձի առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու հնարավորությունը՝ առանց դատախազական աշխատանքի փորձի:**

Առաջխաղացման համար սկզբունքային պահանջների տեսակետից հավասարապես կարևոր է Օրենքով նաև նեգատիվ պայմանների նախատեսումը, թե ինչից ելնելով չի կարելի անձին ներառել դատախազների առաջխաղացման ցուցակներում և/կամ հետագայում նշանակել ավելի բարձր պաշտոնում, մասնավորապես՝ թե ինչ չափանիշներով չի կարելի նույն պայմաններին բավարարող երկու անձանց նկատմամբ դրսևորել տարբերակված վերաբերմունք կամ ստեղծել նման տպավորություն, ընդ որում՝ թե նշանակման, և թե առաջխաղացման հարցերում, ինչի մասին ուղիղ նշված է վերը մեջբերված ԵԽ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագրում Հանձնարարականի 5-րդ կետում:

Դատախազների կարգավիճակից բխող միասնականության սկզբունքների՝ դատախազների նշանակման հետ կապված արդեն հիշատակված խախտումներն առկա են նաև առաջխաղացման հետ կապված: Մասնավորապես Օրենքի 39-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը սահմանում են հետևյալը՝

«6. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում նշանակվելու համար կազմվում է ծառայողական առաջխաղացման առանձին ցուցակ, որը կազմվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի նպատակով կազմված որակավորման հանձնաժողովի կողմից՝ սույն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգով:

7. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվելու համար կազմվում է ծառայողական առաջխաղացման առանձին ցուցակ, որը կազմվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի նպատակով կազմված որակավորման հանձնաժողովի կողմից՝ սույն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգով»:

²⁵³ ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց, էջ 90

²⁵⁴ ՏՀԶԿ 4-րդ շրջանի զեկույց, էջ 90, New Recommendation 16: Integrity in the service of public prosecution, էջ 91

Խնդրահարույց է ընդհանրապես այն սկզբունքը, որ Դատախազության ներսում կարող է լինել կոնկրետ ստորաբաժանման համար առանձին առաջխաղացման ցուցակ: Այս ստորաբաժանման դատախազների համար առաջխաղացման առանձին ցուցակ նախատեսելու մտահոգությունը չի փարատվում նրանց կատարած աշխատանքի առանձնակի կարևորության փաստով, քանի որ, ինչպես նշեցինք, նույն կոռուպցիոն գործերով զբաղվող դատախազների նշանակման ու առաջխաղացման հարցերի կարգավորումը պակաս կարևոր չէ: Հիմնական տարբերությունն, այսպիսով, այն է, որ այս ստորաբաժանի հետ կապված առաջխաղացման համար անցկացվում է միայն բաց մրցույթ: Այնուհետև, նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով առաջարկվում են մյուս ստորաբաժանումներում աշխատող դատախազների առաջխաղացման պայմաններից տարբերվող պայմաններ, մասնավորապես՝

- տվյալ ստորաբաժանման կազմում աշխատած լինելու պահանջը. ղեկավարի համար՝ առնվազն մեկ տարի որպես ստորաբաժանման ղեկավարի տեղակալ կամ առնվազն երկու տարի որպես նույն ստորաբաժանման դատախազ աշխատելը (մաս 8-րդ), իսկ տեղակալի համար՝ ստորաբաժանման կազմում առնվազն մեկ տարի որպես դատախազ աշխատելը (մաս 9-րդ):
- մասնագիտական ստաժի **խիստ** տարբեր ժամկետներ. Օրենքի նույն 39-րդ հոդվածի 3-5-րդ մասերով պահանջվում է առնվազն 10 կամ 5 տարվա մասնագիտական փորձ, որից 2, 3 կամ 4 տարին՝ դատախազի պաշտոնում՝ ըստ այն պաշտոնների, որոնց հավակնելու է անձը:

Այսպիսով, անհրաժեշտ է հրաժարվել ըստ Դատախազության ստորաբաժանումների առաջխաղացման ցուցակներ կազմելու և ընդգրկվող անձանց համար տարբերակվող պայմանների նախատեսելու գաղափարից:

Վերևում արդեն նշեցինք, որ դատախազների նշանակման հետ կապված խնդրահարույց է այն, որ Գլխավոր դատախազը կարող է 7 տարի շարունակ չնշանակել դատախազների ցուցակում ընդգրկված անձին, որից հետո նա հանվում է այդ ցուցակից (Օրենքի հոդված 40, մաս 1-ին, կետ 11-րդ): Օրենքի 41-րդ հոդվածը (Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակից դատախազներին հանելու հիմքերը) ուղիղ և **առանձին հիմք չի նախատեսում, որի համաձայն դատախազը առաջխաղացման ցուցակից կհանվեր ավելի բարձր պաշտոնի չնշանակվելու դեպքում, ինչը դրական պետք է համարել:** Սակայն այդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն, դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձը **գլխավոր դատախազի հրամանով** հանվում է ցուցակից, այդ թվում էթե՝ նա հանվել է դատախազների թեկնածությունների ցուցակից, բացառությամբ սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքի²⁵⁵: Եվ քանի որ առաջխաղացման ցուցակից հանելու հիմք են հանդիսանում, այսպիսով, նաև դատախազների թեկնածուների ցուցակից հանելու հիմքերը, որոնց մեջ է մտնում նաև 7 տարի շարունակ դատախազ չնշանակվելու հիմքը, ապա վերջինիս ոչ իրավաչափ հիմք լինելու մասին վերը նշված դիտողությունները վերաբերում են նաև առաջխաղացման ցուցակից անձին հանելուն:

Դատախազների առաջխաղացման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման հիմնական թերությունը, սակայն, այն չափանիշների ու չափորոշիչների բացակայությունն է, որոնք պետք է դրվեն դատախազների աշխատանքի գնահատման հիմքում: Օրենքը շատ մեխանիկական կարգավորում է տալիս՝ նախատեսելով

²⁵⁵ Հոդված 40.1. Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը գլխավոր դատախազի հրամանով հանվում է ցուցակից, եթե՝ 1) նա նշանակվել է դատախազի պաշտոնում:

մասնագիտական և պաշտոնական ստաժի կոնկրետ ժամկետներ և կարգապահական տույժի բացակայությունը՝ առանց սահմանելու, թե ինչու է նույն պայմաններին բավարարող անձը մի դեպքում ընդգրկվելու առաջխաղացման ցուցակում, իսկ մյուս դեպքում ոչ:

Դատախազների՝ որպես առանձին պաշտոնյաների աշխատանքը գնահատելու սկզբունքներն ու չափանիշները ուղղակիորեն բխում են Դատախազության ընդհանուր համակարգի արտաքին գնահատման չափանիշներից, որի մասին մանրամասն խոսվում է Հետազոտության 3.10 կետում: Եվ քանի որ գնահատման չափանիշները թե համակարգի, և թե կոնկրետ դատախազի պարագայում նույնն են, ճիշտ է նաև հակառակը՝ ամբողջ համակարգի գործունեությունը կարող է գնահատվել կոնկրետ դատախազների աշխատանքը գնահատելով: ԵԴԽԽ Կարծիք Հ-11-ում (կետ 36-րդ) նշվում է, որ «մի շարք անդամ պետություններում դատախազների գնահատումն օգտագործվում է դատախազության որակն ու արդյունավետությունը խթանելու համար»:

Այդ չափանիշները պայմանավորված են ժողովրդավարական հասարակությունում դատախազության առջև դրված խնդիրներով, դրանց իրացման ուղղությամբ ձեռնարկված քայլերով՝ պատշաճ ջանասիրությամբ և աշխատանքային պարտականությունների կատարման համար անհրաժեշտ անկախության, հաշվետվողականության և արդյունավետության երաշխիքներով:

Հանրության համար պետք է հասկանալի լինի, թե կոնկրետ ինչ չափանիշներով է այս կամ այն դատախազը առաջխաղացում ապրել, որի համար Դատախազությունը պետք է ընդունի հանրության համար հասանելի ու հասկանալի՝ դատախազների մասնագիտական գործունեության գնահատման Ուղեցույցներ: Այս չափանիշները, սակայն, պետք է լինեն նախ օրյեկտիվ, ապա՝ կախվածության մեջ չլինեն այլ արտաքին մարմինների հայեցողությունից: Օրինակ, եթե դատարանը կայացնում է արդարացման դատավճիռ դա ինքնին չի նշանակում, որ առկա են դատախազի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու հիմքեր՝ անկախ արդարացումների քանակից: Սակայն, եթե պարզվում է, որ այդ արդարացումները պայմանավորված են եղել, օրինակ, դատախազի կողմից ապացուցման պարտականությունը կատարելիս պատշաճ ջանասիրություն չցուցաբերելով, մինչդասական վարույթի օրինականության նկատմամբ հետևողական հսկողություն չիրականացնելով, ինչի հետևանքով, օրինակ՝ ակնհայտ անթույլատրելի ապացույցը օգտագործվել է դատարանում, ապա որոշ դեպքերում՝ անգամ անկախ դատարանի վերջնական որոշումից, դատախազի վարքագիծը պետք է լինի քննարկման առարկա: Մի խոսքով, անհրաժեշտ է ուշադրությունը բևեռել, ինչպես ԵԴԽԽ-ն է ասում, գնահատման ոչ թե քանակական, այլ որակական չափանիշների վրա (այս մասին՝ տես հաջորդ ենթակետում):

Առաջխաղացման՝ որպես ավելի բարձր պաշտոնում նշանակվելու ընթացակարգի հետ, սերտորեն կապված է ավելի բարձր պաշտոնով պայմանավորված **դատախազության դասային աստիճանների** շնորհումը: Դրանք սահմանված են ՀՀ Դատախազության մասին օրենքի 44-րդ հոդվածով և թվով տասն են՝ երրորդ դասի խորհրդականից սկսած մինչև արդարադատության պետական խորհրդական՝ զինվորական կոչումներին համարժեք աստիճանակարգությամբ: Այդ հոդվածի 1-ին մասի 1-4 կետերով սահմանված դասային աստիճանները բարձրագույն դասային աստիճաններ են, որոնց կրողներն ունեն արդարադատության գեներալի կարգավիճակ, որոնք շնորհում է Հանրապետության նախագահը (հոդված 44, մաս 2-րդ): Իսկ հոդվածի 1-ին մասի 5-10-րդ կետերով սահմանված դասային աստիճանները շնորհվում են գլխավոր դատախազի կողմից (հոդված 44, մաս 3-րդ):

Հաշվի առնելով այն փաստը, որ դատախազները՝ անկախության, դատավարական ինքնուրույնության և սույն Հետազոտության 1-ին գլխում քննարկված միասնական լեզվի տիրույթում, նրանք չպետք է ունենան զինվորական աստիճանակարգությանը բնորոշ տարբերակումներ: Ընդհանրապես, պետք է հրաժարվել արդարադատության գնդապետ, գեներալ և նման այլ եզրույթներից՝ դատական իշխանության կրողների պարագայում: Հիշեցնենք, որ նախկինում նույն աստիճաններն ունեին նաև դատավորները, որից Հայաստանը հրաժարվեց դատաիրավական բարեփոխումների դեռևս առաջին փուլի ընթացքում: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև դատախազական կարգավիճակից բխող ավելի շատ դատավորներին բնորոշ տարրերը, քան գործադիր իշխանության ներկայացուցիչներին բնորոշ տարրերին, անհրաժեշտ է նույն հետևողականությամբ ապահովել կարգավիճակի միասնականության սկզբունքը նաև դատախազների պարագայում: **Դատախազները, ինչպես և դատավորները ունեն մեկ միասնական կարգավիճակի և պետք է տարբերվեն միայն իրենց գործառնություններով:**

Վերջապես, Դատախազության մասին օրենքի 37-րդ և 39-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանում գոյություն չունի Գլխավոր դատախազի տեղակալի կամ զինվորական դատախազի տեղակալի պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ: Այս բացը անհրաժեշտ է լրացնել՝ մյուս դատախազներին մոտիվացնելու ու Դատախազության համակարգում բարձրագույն պաշտոններին նշանակելու թափանցիկությունն ու արժեքահենությունը ապահովելու համար:

3.5.5. Դատախազների մասնագիտական պիտանելիության պարբերական ստուգումը

Դատախազության մասին օրենքի 50-րդ հոդվածի (Դատախազի ատեստավորումը) վերաբերելի դրույթների համաձայն՝

«1. Դատախազների ատեստավորումն անցկացվում է զբաղեցրած պաշտոնին դատախազների մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման նպատակով:

... 3. Դատախազի արտահերթ ատեստավորումը կարող է անցկացվել հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:

4. Դատախազի արտահերթ ատեստավորումն անցկացվում է գլխավոր դատախազի հրամանով՝ իր պատճառաբանված որոշմամբ կամ դատախազի ցանկությամբ:

... 6. Ատեստավորման ենթակա չեն՝

...2) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, Երևան քաղաքի դատախազը, զինվորական դատախազի տեղակալը, Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը, մարզի դատախազը, կայագործի զինվորական դատախազը, գլխավոր դատախազության ավագ դատախազը:

... 10. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական վերադաս դատախազը ներկայացնում է դատախազի գնահատագիրը:

11. Գնահատագիրը պետք է բովանդակի տվյալներ դատախազի մասին, նրա գործնական, անձնական հատկանիշների և պաշտոնական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում դատախազի կողմից իր կատարած աշխատանքների մասին տարիներ մեկ անգամ անմիջական վերադաս դատախազին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների վրա:

12. Դատախազն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր գնահատագրին: Իր գնահատագրի վերաբերյալ դատախազը կարող է գրավոր անհամաձայնություն հայտնել անմիջական վերադաս դատախազին կամ վերադաս դատախազին, ինչպես նաև որակավորման հանձնաժողովին:

13. Սույն հոդվածով սահմանված կարգով գնահատագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել դատախազի ատեստավորման արդյունքում կայացրած որոշման վրա:

14. Որակավորման հանձնաժողովն ատեստավորման արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ սույն օրենքով սահմանված կարգով ներառելով դատախազների ծառայողական առաջխաղացման համապատասխան ցուցակում.

3) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով.

4) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով արտահերթ դասային աստիճան շնորհելու մասին.

5) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով ավելի ցածր պաշտոնի փոխադրելու մասին.

6) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին:

15. Սույն հոդվածի 14-րդ մասով կայացված որոշման մասին որակավորման հանձնաժողովն ատեստավորման օրը հայտնում է դատախազին: Դատախազն իրավունք ունի ծանոթանալու ատեստավորման որոշմանը, ինչպես նաև եռօրյա ժամկետում բողոքարկելու այն գլխավոր դատախազին:

16. Որակավորման հանձնաժողովի որոշումը և ատեստավորման արդյունքները որակավորման հանձնաժողովի նախագահն ատեստավորման ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է գլխավոր դատախազին:

... 19. Գլխավոր դատախազը որակավորման հանձնաժողովի՝ սույն հոդվածի 14-րդ մասի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ կետով կայացված որոշման և ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան միջնորդությունները բավարարելու կամ մերժելու մասին որոշում է ընդունում ոչ ուշ, քան որակավորման հանձնաժողովի որոշումն ու ատեստավորման արդյունքներն ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում:

21. Դատախազի կողմից ատեստավորման որոշման բողոքարկման դեպքում գլխավոր դատախազը որոշում է կայացնում բողոքը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ բողոքն ստանալու պահից հնգօրյա ժամկետում: Գլխավոր դատախազի կողմից բողոքը բավարարելու որոշում կայացվելու դեպքում դատախազն ատեստավորում է անցնում որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում: Գլխավոր դատախազի կողմից բողոքը մերժվելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

22. Դատախազների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանում է գլխավոր դատախազը»:

Մեջբերված դրույթների հետ կապված անհրաժեշտ է նշել հետևյալը՝

1. Օրենքը մեջբերված հոդվածում **սահմանվում է, թե ինչն է գնահատվում, այլ ոչ թե՝ ինչպես**՝ նշելով մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելը, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման նպատակը: ԵԴԽԽ 2016թ. «Դատախազների աշխատանքի, այդ թվում՝ ահաբեկչության և ծանր հանցագործությունների ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարում որակի և արդյունավետության մասին» Հ-11 Կարծիքի արդեն իսկ մասամբ մեջբերված 36-րդ կետում և հաջորդիվ՝ **մեզ համար խիստ վերաբերելի** կետերում նշվում է հետևյալը՝

«36. Մեծ թվով պետություններում գոյություն ունի վիճակագրություն՝ քանակական ծանրաբեռնվածությունը, դատախազության մարմնի կատարողականը, ինչպես նաև դրա ենթակայության տակ գտնվող տարածքում քրեական վիճակը չափելու համար: Մի շարք անդամ պետություններում դատախազների գնահատումն օգտագործվում է դատախազության որակն ու արդյունավետությունը խթանելու համար:

37. Դատախազական մարմինների կողմից ցուցիչներն ու հետագա ստուգման մեխանիզմները պետք է սահմանվեն թափանցիկ ձևով մոտիվացնելու համար դատախազներին, որպեսզի նրանք ձգտեն հասնել մասնագիտական աշխատանքի ավելի բարձր աստիճանների: Հետագա ստուգման դատախազության ներսում գործող ներքին մեխանիզմները պետք է լինեն կանոնավոր բնույթի, համաչափ և հիմնված լինեն իրավունքի գերակայության վրա:

38. ԵԴԽԽ-ն գտնում է, որ քանակական ցուցիչները որպես այդպիսիք (գործերի քանակ, դատավարությունների տևողություն և այլն) չպետք է լինեն միակ վերաբերելի չափանիշները՝ թե դատախազության և թե առանձին վերցրած դատախազի արդյունավետությունը գնահատելու համար: Նմանապես, ԵԴԽԽ-ն նշել է, «որ արդարադատության «որակը» չպետք է հասկանալ գուտ որպես դատական համակարգի «արտադրողականության» հոմանիշ»:

Այս սկզբունքային տարանջատումն անելով, ԵԴԽԽ-ն այնուհետև նույն Կարծիքում անդրադարձնում է դատախազների ու դատախազության գործունեության գնահատման կոնկրետ որակական չափանիշներին, որոնց ձևավորման ու կիրառման համար մեծ նշանակություն ունի նաև դատավարության մյուս մասնակիցների, առաջին հերթին՝ մեղադրյալի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը

«39. Այդ իսկ պատճառով, որակական այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են պատշաճ ու լրիվ քննությունը (երբ դա գտնվում է դատախազության իրավասության ներքո), ապացույցների պատշաճ օգտագործումը, մեղադրանքի ճշգրիտ կառուցումը, դատարանում պրոֆեսիոնալ վարքագիծը և այլն, **պետք է նույնպես հաշվի առնվեն** որպես քանակական բնույթի ցուցիչները փոխլրացնելու միջոց: Արագ քրեական հետապնդումների ցանկալիությունը պետք է հաշվի առնի նաև ՄԻԵԿ 6-րդ հոդվածով տրամադրվող երաշխիքները:

40. Հետևաբար, իրավական համակարգերը, որպես իրական և վերջնական նպատակ, պետք է կարողանան տրամադրել գնահատման մի համակարգ, որը ունակ կլինի գնահատել դատախազների այնպիսի աշխատանքի թե քանակական, թե որակական ցուցիչները, որն հետևում է արդարադատության էական սկզբունքներին՝ համահունչ լինելով ՄԻԵԿ-ի և այլ միջազգային փաստաթղթերի հետ»:

ԵԴԽԽ-ն Հ-11 Կարծիքի 46-րդ կետում նշում է դատախազների ատեստավորման որակական մի շարք չափանիշներ ևս, օրինակ՝ հարուցված և դադարեցված հետապնդումների թիվը, որոշումների տեսակները (գործով ելքերը), դատախազական վարույթների տևողությունը, գործերի կառավարման հմտությունները, բանավոր և գրավոր խոսքի՝ հստակ փաստարկման կարողությունը, նոր տեխնոլոգիաներին բաց լինելը, կազմակերպչական ունակությունները, դատախազության ներսում և դրանից դուրս մարդկանց հետ համագործակցելու կարողությունը:

Այսպիսով, Օրենքում որպես սկզբունք պետք է դատախազի ատեստավորման կամ գնահատման քանակական ու որակական չափանիշների և ցուցիչների համադրման պահանջը՝ նշելով կոնկրետ քանակական և որակական ցուցիչները և դրանց գնահատման սկզբունքները:

2. Օրենքի մեջբերված հոդվածը խոսում է վերադաս դատախազի կողմից գնահատագիր ներկայացնելու մասին, սակայն կարգավորումները թերի են՝ և ձևական, և բովանդակային տեսակետից: Չուտ ձևի տեսակետից հակասություն կա հոդվածների 10-րդ և 13-րդ մասերի միջև, քանի որ 10-րդ մասով սահմանվում է, որ «ատեստավորումից առնվազն երկու շաբաթ՝ առաջ անմիջական վերադաս դատախազը ներկայացնում է դատախազի գնահատագիրը»՝ սահմանելով, այդպիսով, գնահատագիր սահմանելու իմպերատիվ պահանջ, իսկ 13-րդ մասը նշում է, որ «սույն հոդվածով սահմանված կարգով գնահատագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել դատախազի ատեստավորման արդյունքում կայացրած որոշման վրա»՝ կանխավարկածելով, որ հնարավոր է, որ վերադաս դատախազի կողմից նշված իմպերատիվ պահանջը չկատարվի:

Բովանդակային տեսակետից առկա է այն բացը, որ չեն նշվում, թե որն է դատախազի աշխատանքի գնահատման նյութը և ինչ չափանիշներով է այն գնահատվում վերադասի կողմից: Օրինակ, ԵԴԽԽ Կարծիք Հ-11-ը (կետ 43) նշում է ԵԽ անդամ պետություններում դատախազների աշխատանքի գնահատման այդպիսի կոնկրետ չափանիշներ, որոնք մեր կարծիքով, առավել կիրառելի են հենց դատախազի անմիջական վերադասի կողմից օրինակ ընկալելի դատավարական ակտ, ասենք՝ մեղադրանք կազմելը, թիմում աշխատելու ունակությունը, սահմանված չափորոշիչների շեղումներից խուսափելը և այլն:

Նույն տեղում ԵԴԽԽ-ն կարևոր մի սկզբունքային դիտարկում է անում, որը կարևոր կլինի վերադաս դատախազների ու Գլխավոր դատախազի կողմից դատախազի աշխատանքը գնահատելու ընդհանուր մեթոդաբանության մեջ, այն է, որ **դատախազների «գնահատման նպատակը հմտությունների ու աշխատունակության զարգացման ուսումնասիրումն է, ինչպես նաև առաջխաղացումը և որոշ պետություններում խրախուսումը և պարգևավճարները կամ ընդհանուր առմամբ վարքագծի կանոնների և այլ խախտումները կանխելը՝ կարգապահական տույժերից խուսափելու համար»:**

Մեր կարծիքով, այս դիրքորոշումները պետք է արտացոլվեն նաև Օրենքի 50-րդ հոդվածի 14-րդ մասով նախատեսված՝ ատեստավորման արդյունքում կայացվող որոշումների ցանկում: Վերջինս, ինչպես տեսանք, հիմնականում նախատեսում է դատախազների համար բացասական հետևանքներ, իսկ դրական հետևանքներից՝ միայն առաջխաղացման ցուցակում ընդգրկելն ու դասային ավելի բարձր աստիճան շնորհելը: Այս առումով, **դատախազներին մոտիվացնելու համար, այդ ցանկը պետք է լրացվի խրախուսման ցանկացած միջոցի կիրառման հնարավորությամբ՝ ապահովելով նաև նման խրախուսման միջոցների առավել կանխատեսելիությունը, օբյեկտիվությունը և թափանցիկությունը»:**

3. Այդ վերջին հատկանիշները, որոնց պետք է համապատասխանի ատեստավորման արդյունքում կայացվող ցանկացած որոշում, բխում է նույն հատկանիշներին հենց ատեստավորման բուն ընթացակարգի համապատասխանության փաստից: Մինչդեռ, Օրենքի մեջբերված 50-րդ հոդվածը **նման երաշխիքներ չի ապահովում:** Մասնավորապես՝

- հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ «Դատախազի արտահերթ ատեստավորումը կարող է անցկացվել հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո», իսկ 4-րդ մասը՝ որ «Դատախազի արտահերթ ատեստավորումն անցկացվում է գլխավոր դատախազի հրամանով՝ իր պատճառաբանված որոշմամբ կամ դատախազի ցանկությամբ»՝ **առանց նշելու նման պատճառաբանված որոշման հիմքերը.**
- հոդվածի 6-րդ մասը նշում է, որ՝ «ատեստավորման ենթակա չեն՝ ...2) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, Երևան քաղաքի դատախազը, զինվորական դատախազի տեղակալը, Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը, մարզի դատախազը, կայազորի զինվորական դատախազը, գլխավոր դատախազության ավագ դատախազը» **ինչով, փաստորեն, նշված անձանց նկատմամբ կիրառվող թե կարգապահական պատասխանատվության, թե խրախուսանքի միջոցների՝ կիրառումը, դարձնում է ոչ թափանցիկ, ոչ հաշվետու, ոչ կանխատեսելի և ոչ արժենահեն:** Հատկապես սա կարևոր է հաշվի առնելով մեր կողմից նախորդ՝ 3.5.4 կետում նշված նաև ԳԴ տեղակալների պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակ Օրենքով նախատեսելու անհրաժեշտությունը: Այդպիսով, ներկայումս ատեստավորումից ազատված անձինք, դրական արդյունքների դեպքում, նաև կընդգրկվեն այդ ցուցակում.
- հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ կայացված որոշման մասին որակավորման հանձնաժողովը հայտնում է դատախազին, ով իրավունք ունի ծանոթանալու ատեստավորման որոշմանը, ինչպես նաև բողոքարկելու այն գլխավոր դատախազին, իսկ 16-րդ մասով՝ ՈՀ որոշումը և ատեստավորման արդյունքները որակավորման հանձնաժողովի նախագահին ատեստավորման ավարտից հետո ներկայացնում է գլխավոր դատախազին, որն էլ հոդվածի 19-րդ մասի համաձայն ՈՀ՝ նույն հոդվածի 14-րդ մասի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ կետով կայացված որոշման և

ատեստավորման արդյունքների հիման վրա (այն է՝ 4) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով արտահերթ դասային աստիճան շնորհելու մասին, 5) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով ավելի ցածր պաշտոնի փոխադրելու մասին, և 6) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին) «համապատասխան միջնորդությունները բավարարելու կամ մերժելու մասին որոշում է ընդունում»՝ առանց նշելու ՈՀ որևէ տեսակի միջնորդությունը ԳԴ կողմից բավարարելու կամ մերժելու մասին որոշումը կայացնելու հիմքերի և այդ որոշման պատճառաբանված լինելու անհրաժեշտության մասին: Նույնը վերաբերում է նաև Օրենքի 50-րդ հոդվածի 21-րդ մասով նախատեսված՝ ատեստավորման որոշման բողոքարկման դեպքում ԳԴ-ի որոշմանը՝ բողոքը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ:

ԵԴՄՄ-ն նույն Հ-11 Կարծիքում (կետ 44 և 45) անդրադառնում է դատախազների ու դատախազության գործունեության գնահատման ընթացակարգի և դրա շրջանակներում կայացվող որոշումներին, այդ թվում՝ հրապարակայնությանը՝

«44. ԵԴՄՄ-ն առաջարկում է, որպեսզի դատախազների գնահատումը լինի թափանցիկ ու կանխատեսելի՝ պարզ և նախապես հրապարակված չափանիշների հիման վրա՝ թե նյութական, և փե դատավարական կանոնների տեսակետից:

45. Թափանցիկ ու կանխատեսելի գնահատումը նշանակում է, որ գնահատման ենթարկվող դատախազը պետք է ի վիճակի լինի քննարկելու իր գնահատման արդյունքները կամ՝ ըստ անհրաժեշտության, համեմատելու իր ինքնագնահատումը վերադաս դատախազի կամ այլ իրավասու անձի կողմից կատարված գնահատման հետ: Գնահատման արդյունքները չպետք է հրապարակվեն այնպես, որպեսզի որևէ կերպ վնասեն գնահատման ենթարկված դատախազի անձնական բարեկարգությանը կամ արատավորեն նրա պատիվը»:

Կարծում ենք, նշված դրույթները պետք է ուղղակիորեն նախատեսել Դատախազության մասին օրենքում: Վերջապես, ԵԴՄՄ-ն Հ-11 Կարծիքի 46-րդ կետում հստակ արգելք է դնում անուղղակի խտրականության դեմ, նշելով, որ «Դատախազության միևնույն մակարդակում գնահատումը պետք է կատարվի հավասար չափանիշների հիման վրա»:

3.6. Դատախազի կարգավիճակը և դրա տարրերը

3.6.1. Դատախազի կարգավիճակի և դրա տարրերի օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը

Կարևորագույն բացը, որ գոյություն ունի դատախազների անկախության, արդյունավետության և ժողովրդավարական հասարակության մեջ նրանց ունեցած դերակատարման երաշխիքների տեսակետից, դա դատախազի կարգավիճակի հասկացության ի սպառ բացակայությունն է ՀՀ օրենսդրության մեջ²⁵⁶: Վկայակոչված

²⁵⁶ Չնայած նույն Դատախազության մասին օրենքը 3 անգամ օգտագործում է կարգավիճակ բառը, տես՝ հոդված 38, մաս 7-րդ՝ «Որակավորման հանձնաժողովն ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական հմտությունները, իր կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական որակները և արժանիքները

1. Դատախազը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չչայանաձևավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

բազմաթիվ միջազգային փաստաթղթերում ընդգծվում է դատախազների և դատավորների կարգավիճակների նմանությունը, և գաղտնիք չէ, թե որքան կարևոր են դատավորներին առնչվող միջազգային չափորոշիչների իրացման համար դատավորի կարգավիճակն ամրագրող և դրա տարրերի երաշխավորումն ապահովող օրենսդրական դրույթներն ու սկզբունքները: Հենց այդ նմանությունն է, որ 2009թ. դեկտեմբերի 8-ին հանգեցրեց «Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների փոխհարաբերությունների մասին Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի ուշադրությանը ներկայացվող» **միաժամանակ Եվրոպական դատավորների Խորհրդատվական խորհրդի Կարծիք Հ-4-ով և Եվրոպական դատախազների Խորհրդատվական խորհրդի Կարծիք Հ-12-ով ընդունված «Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների մասին» Բորդոյի Հռչակագրի և դրա Բացատրական հուշագրի ընդունմանը: Հռչակագրի 6-րդ կետում նշվում է հետևյալը՝**

«Դատախազության կողմից իրավունքի կիրառումը և համապատասխան դեպքերում՝ հայեցողական լիազորությունների իրացումը մինչդասական փուլում **պահանջում են, որպեսզի դատախազների կարգավիճակը երաշխավորված լինի օրենքով՝ որքան հնարավոր է բարձր մակարդակով, դատավորների կարգավիճակի ամրագրմանը նման եղանակով: Նրանք պետք է լինեն անկախ և ինքնուրույն որոշումները կայացնելիս, և իրենց գործառնություններն իրականացնեն արդարացի, օբեկտիվ և անկողմնակալ կերպով»²⁵⁷:**

Այսպիսով, **դատավորների և դատախազների կարգավիճակի նմանությունից բխող առաջին սկզբունքային հետևությունը դատախազի կարգավիճակի և դրա տարրերի օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունն է:** Կարծում ենք, **Դատախազության մասին օրենքում պետք է առանձին գլուխ հասկացվի դատախազի կարգավիճակին և դրա տարրերին:**

Այդ կարգավիճակի հետ կապված, բնականաբար, հարցեր կարող են առաջանալ, թե արդյոք դատախազը, որի որոշումները վերանայելի են դատավորի կողմից, կարող է ունենալ նույն կարգավիճակն, ինչ որ դատավորը: Եվ երկրորդ արդյոք դատախազը, որպես դատավարության կողմ, կարող է վերջինիցս տարբերվել իր ոչ դատավարական կարգավիճակով: Եվ այս հարցերը նույնպես լեգիտիմ կարևոր ելակետ ունեն, որը, կարծում ենք, լավագույնս ձևակերպված է հետևյալ դիտարկումը՝

«Դատախազական որոշումների կայացման նկատմամբ վերահսկող գործնական մեխանիզմ է հանդիսանում հենց դատարանը, կամ՝ ֆունկցիոնալ տերմիններով ասած՝ գույություն ունի հանցավորության հանդեպ սոցիալական արձագանքման դերաբաժանում՝ դատախազության՝ որը հարուցում ու հետապնդում է, և դատարանի միջև՝ որը որոշում է կայացնում: Եվ հարուցող ու լուծող ֆունկցիաների միավորումն է մեկ ինստիտուցիոնալ կամ անհատապես գործող դերակատարի մեջ, որ գրեթե միշտ խախտում է անկախության նորմերը»²⁵⁸:

Սակայն, այս հարցերի պատասխանը համոզիչ կերպով դարձյալ տրվում է միջազգային փաստաթղթերով: Մասնավորապես, Վենետիկի հանձնաժողովը նշում է՝

«15. Դատախազը պետք է գործի արդարացի և անկողմնակալ կերպով: Անգամ այն համակարգերում, որտեղ դատախազը չի համարվում դատական իշխանության մաս, դատախազից ակնկալվում է, որ նա պետք է գործի դատական կերպով: ...

2. «Ուաշտոնից ազատում», «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կամ «դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժեր նշանակվելու օրվանից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետն անցնելուց հետո անձի նախկին կարգավիճակը չի վերականգնվում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի»:

²⁵⁷ Տե՛ս՝ «Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների մասին» Բորդոյի Հռչակագիրը և դրա Բացատրական հուշագիրը, <https://rm.coe.int/1680747391>, կետ 6:

²⁵⁸ PROMOTING PROSECUTORIAL ACCOUNTABILITY, INDEPENDENCE AND EFFECTIVENESS Comparative Research, 2008, Open Society Institute Sofia, p. 27.

17. Դատախազը, ինչպես և դատավորը, չպետք է մասնակցի այն գործով, որով անձնապես շահագրգռված է, և նրա վրա կարող են տարածվել որոշ այնպիսի սահմանափակումներ, որոնց նպատակն է ապահովել նրա անկողմնակալությունն ու բարեվարքությունը:...

19. Իհարկե, երբ դատախազը չի բավարարում պահանջվող չափորոշիչներին, ապա անկողմնակալ դատարանը կարող է ի վիճակի լինել շտկել արդեն իսկ կատարված սխալը: Այնուամենայնիվ, գոյություն չունի նման շտկման որևէ երաշխիք, և ամեն դեպքում մեծ վնաս կարող է պատճառվել: Ակնհայտ է, որ այն համակարգը, որտեղ և դատախազը, և դատավորը գործում են բարեվարքության և անկողմնակալության ամենաբարձր չափորոշիչներին համապատասխան, ավելի մեծ պաշտպանություն է ընձեռում մարդու իրավունքների համար, քան այն համակարգը, որը հենվում է միայն դատավորի վրա»²⁵⁹:

Այսինքն, նախևառաջ, ոչ միշտ է, որ դատախազների գործունեության արդյունքների դատական վերանայելիությունը ապահովում իրավունքների վերականգնում, և ամեն դեպքում անհրաժեշտ է, որ դատախազը ունենա այն կարգավիճակը, որը բավարարում է դատավորի անկախության և նրա կարգավիճակից բխող այլ երաշխիքներին: Չմոռանանք նաև Հետազոտության 1-ին Գլխում մանրամասն քննարկված դատախազության միասնական, այսինքն՝ անկախ դատավարության բնույթից գոյություն ունեցող լեգիտիմության մասին, որը բխում է ամբողջ հանրության անունից և ի շահ հասարակության հանդեպ գալու փաստից, որի մասին նույնպես նշում է Վենետիկի Հանձնաժողովը՝

«14. Դատախազը, քանի որ նա գործում է ամբողջության մեջ վերցրած հասարակության անունից, և հաշվի առնելով նաև քրեական գործով դատապարտման հետևանքները, պետք է գործի ավելի բարձր չափորոշիչներին համապատասխան, քան թե կողմը քաղաքացիական գործով»²⁶⁰:

Այնուհետև, բնական է նաև այն հարցը, թե արդյո՞ք դատախազները, որպես միասնական և ուղղահայաց և կենտրոնաձիգ կառույցի ներկայացուցիչներ, կարող են ունենալ միասնական, այն էլ՝ դատավորի նման կարգավիճակ, հաշվի առնելով, որ ըստ էության, դատախազի կողմից կայացվող ցանկացած որոշում կարող է վերացվել վերադաս դատախազի կամ վերջինիս վերադասի կողմից: Խնդիրը այստեղ դատավարական ու ոչ դատավարական կամ դատարանակազմության տերմինաբանությամբ՝ դատախազակազմական իրավահարաբերությունների տարանջատումն է: Դատախազները, ինչպես և դատավորները ունեն միևնույն կարգավիճակը և տարբերվում են բացառապես դատավարական գործառույթներով, ճիշտ այնպես՝ ինչպես վերաքննիչ դատարանի դատավորի կարգավիճակը չի տարբերվում ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կարգավիճակից, և նրա վրա տարածվում են ապաքաղաքականացվածության, վարքագծի նորմերին ենթարկվելու և այլ՝ ոչ դատավարական, ոչ գործառույթային պահանջները: Դատավորների կարգավիճակի՝ անկախ զբաղեցրած պաշտոնից նույնական լինելը կոչվում է կարգավիճակի միասնականություն²⁶¹, և բոլոր պայմանները կան՝ ՀՀ պրակտիկայի կարիքների և վկայակոչված չափանիշների տեսանկյունից, այն նաև դատախազների վրա տարածելու և դատախազների միասնական կարգավիճակի սահմանելու համար²⁶²: Եվ հակառակը՝ վերադասության հարաբերությունները չեն կարող խաթարել դատախազների կարգավիճակի և դրա տարրերի իրացումը, այսինքն՝ ազդել, օրինակ, դատախազների անկախության, ապաքաղաքականացվածության և գործառնական անձեռնմխելիության վրա:

²⁵⁹ ՎՀ-ի Ձեկույց դատախազության անկախության չափորոշիչների մասին», կետ 15, 17, 19:

²⁶⁰ ՎՀ-ի Ձեկույց դատախազության անկախության չափորոշիչների մասին», կետ 14:

²⁶¹ Դատավորի կարգավիճակի միջազգային չափորոշիչների մասին տես՝ Դ.Մ.Խաչատրյան, Մ.Գ.Խաչատրյան, «Դատավորի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում», Երևան, 2002, էջ 90-94

²⁶² Դատախազների կարգավիճակի միասնականության՝ որպես կարգավիճակի առանձին տարրի մասին, տես՝ հաջորդ ենթակետը:

Դատախազների՝ որպես միջազգային վերը նշված չափորոշիչների համաձայն դատական իշխանություն կրող անձանց կարգավիճակը դատավորների կարգավիճակին մոտեցնելու տեսանկյունից, և նաև հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ դատախազներին՝ անկախ նրանց դատավարական գործառույթներից, այսինքն՝ փաստացի գործող կարգավիճակից բխող պահանջները, դատախազների կարգավիճակը բաղկացած է հետևյալ տարրերից՝

- անկախություն և ինքնուրույնություն.
- կարգավիճակի միասնականություն.
- քաղաքական և այլ չեզոքություն (ապաքաղաքականացվածություն և կարգավիճակի՝ գործունեության այլ տեսակների հետ անհամատեղելիությունից բխող այլ սահմանափակումներ).
- գործառնական անձեռնմխելիություն:

3.6.2. Դատախազների անկախությունը

Դատախազների անկախության սկզբունքը օրենսդրական որևէ մակարդակով ամրագրված չէ: Անհրաժեշտ է, հաշվի առնելով դատավորի կարգավիճակի հետ ունեցած նմանությունն ու դատախազության ընդհանուր միասնական լեգիտիմությունը, Սահմանադրությամբ նախատեսել դատախազների ու Դատախազության անկախության սկզբունքը: Ընդհանուր առմամբ, դատախազների և դատավորների անկախությունը և միայն օրենքին կամ իրավունքին ենթարկվելը մեկ սկզբունք է, ինչը նշանակում է, որ նրանց անկախությունը հանդիսանում է ազատության ֆունկցիոնալ դրսևորում, այսինքն՝ լինել անկախ օրենքը կիրառելիս: Անկախության ապահովման մյուս բոլոր կարգավորումները պետք է բխեն հենց այս մեթոդաբանական ելակետից՝ ամրագրելով դատախազության անկախության ինստիտուցիոնալ և անձնական՝ դատախազների անկախության երաշխիքները, դատախազների արտաքին և ներքին անկախությունը, այսինքն՝ անկախությունը իշխանության մյուս ճյուղերից և դատախազության ներսում, հիմնականում՝ վերադաս դատախազից:

Անկախության կարևորագույն երաշխիքներից են դատախազի կարգավիճակի մյուս տարրերը՝ ապաքաղաքականացվածությունն ու այլ չեզոքությունը, կարգավիճակի միասնականությունը և գործառնական անձեռնմխելիությունը, այսինքն՝ ի պաշտոնե և բարեխղճորեն (*bona fide*) կատարված գործունեության արդյունքների համար դատախազին պատժելու արգելքը: Եվ վերջապես, դատախազների անկախության որպես ֆունկցիոնալ ազատության կարևորագույն երաշխիքներից են դատախազի կարգավիճակը ձեռք բերելու և այն կորցնելու օրենքով սահմանված հիմքերը և կարգը: Նշանակման և առաջխաղացման որպես ավելի բարձր պաշտոնում նշանակման որպես նաև դատախազների անկախությունը երաշխավորող գործընթացների մասին, արդեն իսկ խոսվեց Հետազոտության 3.2-3.5 կետերում՝ նկատի ունենալով նաև այն փաստը, որ, օրինակ՝ դատախազների ներքին անկախության կարևոր երաշխիք է Գլխավոր դատախազի նշանակման այնպիսի գործընթացը, որն ապահովում է վերջինիս անկախությունը: Հետևաբար, հակառակը, եթե, օրինակ՝ Գլխավոր դատախազի նշանակման գործընթացում ապահովված չլինի նրա քաղաքական ուժից անկախության արտաքին երաշխիքը, ապա դատախազներ-Գլխավոր դատախազ հարաբերություններում առաջիններիս համար գրեթե չեզոքացված կլինեն ներքին անկախության երաշխիքները: Ինչ վերաբերում է դատախազակազմական մյուս մասի՝ պաշտոնականության ընթացակարգերում անկախության երաշխիքների ապահովմանը, ապա դրանք քննարկվում են

Հետազոտության հաջորդ՝ 3.7 կետում՝ դատախազների կարգապահական պատասխանատվության հիմքերի և ընթացակարգի հետ կապված:

Բորդոյի Հոչակագիրը նախատեսում է, որ՝

«8. Դատախազների անկախ կարգավիճակի համար, անհրաժեշտ են որոշ նվազագույն պահանջներ, մասնավորապես՝

- որ նրանց պաշտոնը և գործունեությունը ենթակա չեն Դատախազությունից դուրս որևէ ճնշման կամ ազդեցության.
- որ նրանց ընտրությունը, կարիերային առաջընթացը, պաշտոնավարման անվտանգությունը՝ այդ թվում նաև փոխադրման ընթացքում, որը պետք է տեղի ունենա բացառապես օրենքի հիման վրա և նրանց համաձայնությամբ, ինչպես նաև վարձատրությունը, պետք է ապահովված լինեն օրենքով սահմանված երաշխիքների միջոցով:

9. Իրավունքի գերակայությամբ առաջնորդող պետության մեջ, որտեղ Դատախազության կառուցվածքը կրում է աստիճանակարգված բնույթ, Դատախազության արդյունավետությունը՝ դատախազների մասով, սերտորեն կապված է լիազորությունների, հաշվետվողականության և պատասխանատվության թափանցիկ տարանջատման հետ: Կոնկրետ դատախազներին տրվող ցուցումները պետք է լինեն գրավոր, լինեն օրենքին համապատասխան և, ըստ կիրառելիության՝ նաև հանրության համար հասանելի ուղեցույցներին ու չափանիշներին համահունչ»²⁶³:

Այնուհետև, Բորդոյի Հոչակագիրը, դարձյալ ընդգծելով դատախազների անկախության ֆունկցիոնալ բնույթն ու դրա հիմքը հանդիսացող ընդհանուր լեգիտիմությունը, ինչպես նաև՝ դատախազների անկախության՝ իր հերթին դատավորների անկախության իրացման երաշխիք լինելու փաստը, իր Բացատրական հուշագրում դատախազների կարգավիճակի անկախության առթիվ նշում է հետևյալը՝

«27. Դատախազների անկախությունն անքակտելի է՝ իրենց առաքելությունն իրականացնելու համար հնարավորություն տալու տեսակետից: Այն ամրապնդում է իրավական պետության և հասարակության մեջ նրանց ունեցած դերակատարումը և նաև երաշխիք է, որպեսզի դատական համակարգը գործի արդարացի և արդյունավետ կերպով, և առավելագույն իրացվեն դատական անկախության օգուտները...: Այսպիսով, դատավորների համար երաշխավորված անկախության նման, դատախազների անկախությունը ոչ թե՛ դատախազների շահերով պայմանավորված նրանց վերապահված առավելություն է կամ արտոնություն, այլ՝ արդարացի, անկողմնակալ և արդյունավետ այնպիսի արդարադատության շահերով պայմանավորված երաշխիք, որը պաշտպանում է շահագրգիռ անձանց թե՛ հանրային, և թե՛ մասնավոր շահերը:

... 29. **Անկախ իրենց կարգավիճակից, դատախազները, պետք է օգտվեն ֆունկցիոնալ լիակատար անկախությունից՝ իրենց իրավական դերակատարումն իրացնելու ընթացքում՝ անկախ նրանից, թե արդյոք այդ դերակատարումը քրեական բնույթի է, թե ոչ:** Անկախ նրանից, թե արդյոք նրանք գտնվում են աստիճանակարգային մարմնի ներսում, թե ոչ, դատախազները պետք է պարզ և թափանցիկ ուղեցույցներ տրամադրեն իրենց դատախազական լիազորությունների իրացման առնչությամբ՝ նրանց հաշվետվողականությունն ապահովելու և վարույթների կամայական կամ հակասական կերպով հարուցումը կանխելու համար:

... 42. Դատավորներն ու դատախազները պետք է ձգտեն ծանոթանալ միմյանց գործառնությունները կարգավորող էթիկայի չափորոշիչների հետ: Սա կխթանի մեկը մյուսի առաքելությունների ըմբռնումը և դրանց նկատմամբ հարգանքը՝ այդպիսով մեծացնելով ներդաշնակ համագործակցության հեռանկարները»:

Վկայակոչված վերաբերելի դրույթները, Դատախազության և դատախազների անկախության սկզբունքի սահմանադրական ամրագրման հետ մեկտեղ, պետք է որպես դրա իրացման երաշխիքներ, սահմանվեն նաև ՀՀ Դատախազության մասին օրենքով, մասնավորապես՝ դատախազների անկախության սկզբունքին նվիրված առանձին հոդվածում:

²⁶³ Բորդոյի Հոչակագիր, <https://rm.coe.int/1680747391>

3.6.3. Դատախազների կարգավիճակի միասնականությունը

Ինչպես արդեն նշվեց 3.6.1 ենթակետում, դատախազների կարգավիճակի միասնականությունը, դատավորների կարգավիճակի հետ անալոգիայով, նշանակում է, որ դատախազներն ունեն նույն կարգավիճակը և տարբերվում են միայն իրենց կողմից իրականացվող գործառույթներով, որոնց առանձնահատկությունները չեն կարող հանգեցնել կարգավիճակի տարրերի, կամ որ նույն է՝ պահանջների կամ երաշխիքների, այն է՝ անկախության, քաղաքական և այլ չեզոքության և գործառնական անձեռնմխելիության իրացման որևէ տարբերության: Առաջին հայացքից, կարգավիճակի այս կարևոր տարրը կարող է ավելորդ և անգամ ձևական թվալ՝ օրենսդրական ամրագրման անհրաժեշտության տեսակետից, սակայն իրականում այն օրենսդրական բարեփոխումների համար կարևոր և ամուր մեթոդական հիմք է: Կարգավիճակի միասնականությունը որպես սկզբունք ամրագրելու դեպքում, կբացառվի, ի թիվս այլի, վերը նկարագրված հետևյալ սկզբունքային բացերի առկայությունը՝

- դատախազի կարգավիճակ ձեռք բերելու գործընթացների՝ հիմքերի և ընթացակարգի մասով առկա տարբերակումները (մասնավորապես՝ կախված, թե որ ստորաբաժանման դատախազ է նշանակվելու անձը՝ նկատի ունենալով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման դատախազներին առաջադրվող պահանջների, մրցույթային հարաբերությունների կարգավորման և այլ տարբերությունները):
- Մի կողմից՝ Գլխավոր դատախազի և նրա տեղակալների, իսկ մյուս կողմից՝ մնացած դատախազների թեկնածուներին ներկայացվող պահանջների տարբերակումը, օրինակ՝ որ առաջինները պետք է լինեն **միայն ՀՀ քաղաքացի, իսկ մնացածները՝ ունենան ՀՀ քաղաքացիություն**։
- Մի կողմից՝ Գլխավոր դատախազին, իսկ մյուս կողմից՝ մնացած դատախազներին պաշտոնից ազատելու հիմքերի տարբերակումը՝ նկատի ունենալով, որ վերջիններիս համար նախատեսված է հիմք՝ «իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը», իսկ Գլխավոր դատախազի համար նախատեսված չէ, ինչպես նաև, որ վարքագծի կանոնները խախտելը որպես լիազորությունները դադարեցնելու հիմք դիտարկելու համար, Գլխավոր դատախազի դեպքում, ի տարբերություն մյուս դատախազների, սահմանված է լրացուցիչ պայման՝ պետք է հաստատվի, որ այդ խախտումը «վարկաբեկել է դատախազության հեղինակությունը»:

Կարգավիճակի միասնականությունը կարևոր է, այսպիսով, բոլոր դատախազների համար պաշտոնական հարաբերություններից դուրս վարքագծի և դատավարական հարաբերություններից դուրս աշխատանքային կարգուկանոնի պահպանման ընդհանուր չափորոշիչները Էթիկայի հանձնաժողովի կողմից կիրառելու համար: Օրինակ, եթե վերցնենք նույն Գլխավոր դատախազին պաշտոնից ազատելու հիմքերի տարբերակումը, ապա ակնհայտ է, որ Էթիկայի հանձնաժողովը կանգնելու է երկակի ստանդարտների առջև՝ տեսնելով, որ մնացած դատախազները պաշտոնից ազատվում են վարքագծի այս կամ այն կանոնը խախտելու համար, մինչդեռ Գլխավոր դատախազը նույն խախտման դեպքում չի կարող ազատվել պաշտոնից, քանի դեռ այդ խախտումը չի առաջացրել որոշակի հետևանք՝ չի «վարկաբեկել դատախազության հեղինակությունը»:

Այսպիսով, անհրաժեշտ է Դատախազության մասին օրենքում, դատախազների կարգավիճակի հասկացությունն ամրագրելու հետ մեկտեղ, ամրագրել նաև այդ

կարգավիճակի միասնականության սկզբունքը, այն է՝ կարգավիճակի և դրա տարրերի (երաշխիքների) նույնականությունը բոլոր դատախազների համար՝ անկախ նրանց պաշտոնից ու գործառույթներից:

3.6.4. Դատախազի քաղաքական և այլ չեզոքությունը

3.6.4.1. Դատախազի քաղաքական չեզոքությունը (ապաքաղաքականացվածությունը) և դրա սահմանները դատախազի քաղաքական իրավունքների ներքո

ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի (Կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը) 2-րդ մասի համաձայն՝

«Դատավորները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ»:

ՀՀ Դատախազության մասին օրենքի 7-րդ հոդվածը (Դատախազի ապաքաղաքականացվածությունը) նախատեսում է հետևյալը՝

«1. Դատախազը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատախազը ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն»:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, հանրաքվեներին դատախազը կարող է մասնակցել միայն որպես ընտրող (քվեարկող): Դատախազը չի կարող մասնակցել նախընտրական, ինչպես նաև հանրաքվեի նախապատրաստելիս իրականացվող քարոզչությանը:

3. Դատախազն իրավունք չունի կազմակերպելու այնպիսի հավաքներ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա քաղաքական չեզոքությունը: Հավաքներին մասնակցելիս դատախազը չպետք է կրի ծառայողական համազգեստ»:

Մեջբերված դրույթները չեն արտացոլում դատախազների կարգավիճակից բխող ապաքաղաքականացվածության պահանջի ամբողջ էությունը՝ հետևյալ նկատառումներով՝

1. **Դատախազի համար սահմանված չէ ապաքաղաքականացվածության արտաքին տեսքը կամ ընկալումը (appearance) պահպանելու որևէ պարտականություն:** Մասնավորապես, դատախազը պետք է ոչ միայն լինի, այլև ընկալվի որպես չքաղաքականացված: Սրա հետ կապված է նաև այն, որ քաղաքականացվածության արգելված արտահայտությունների մեջ ընդամենը նշվում է հավաքների ծառայողական համազգեստ կրելը: Նախ, նշված չէ, թե կոնկրետ որ հավաքներին է արգելված մասնակցել համազգեստով: Այնուհետև, եթե դա այնպիսի հավաք է, որ կարող է ողջամտորեն ընկալվել որպես դատախազի կողմից ապաքաղաքականացվածության պահանջների խախտում (ինչը ենթադրվում է տվյալ դրույթը հենց այս հոդվածում զետեղված լինելու փաստից), ապա անհասկանալի է, թե ինչու առանց ծառայողական համազգեստի նման հավաքին մասնակցող դատախազը պետք է համարվի ապաքաղաքականացվածության պահանջները չխախտող:

2. Այնուհետև, ինչպես նշվեց, օրենքով արգելված չեն դատախազների քաղաքականացվածության այլ, շատ ավելի ցայտուն և ավելի խիստ կասկածներ առաջացնող դրսևորումները, օրինակ՝ քաղաքական կուսակցության, թեկուզ երկրի դեկավարի կարգավիճակով, լուսանկարների առկայությունը աշխատասենյակներում և շենքային ընդհանուր հատվածներում՝ անգամ նույն անձի կողմից ընտրություններին մասնակցելու ընթացքում, նույն հավաքներին առանց համազգեստի, բայց ծառայողական

մեքենայով գնալը, անձնական մեքենայի վրա քարոզչական նյութեր փակցնելու արգելքը, թեկուզ՝ դատախազի կողմից իր ծննդավայր քարոզչական այցով ժամանած կուսակցության ղեկավարին ուղեկցելը և այլն: Ինչ վերաբերում է հողվածով ամրագրված՝ այլ կերպ քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքին կամ ցանկացած հանգամանքներում պարտավոր է քաղաքական զսպվածություն և չեզոքություն պարտականությանը, ապա դրանք շատ ընդհանուր ձևակերպումներ են և հակասում են իրավական որոշակիության սկզբունքից բխող իրավական նորմի պահանջը՝ դատախազի համար կանխատեսելի լինելու պայմանին:

Ընդհանրապես, քանի որ ապաքաղաքականացվածության՝ ներառյալ այդպիսին ընկալվելու պահանջները հավասարապես կիրառելի են ոչ միայն դատախազների, այլև իրավապահների, այլ կատեգորիաների անձանց, ու ընդհանրապես՝ պետք է կիրառելի լինեն նաև պետաիշխանական գործունեություն իրականացնող այլ կատեգորիաների անձանց համար, **անհրաժեշտ է ընդունել այդպիսի մի առանձին** Օրենք՝ ԱՄՆ «Վնասակար քաղաքական գործունեությունը կանխելու մասին» 1939թ. ընդունված օրենքի հետ անալոգիայով, որը կսահմանի ընդհանուր սկզբունքները և մեր նշած ապաքաղաքականացվածության տեսանելիության պահանջները և կկարգավորի ընդհանուր այլ հարցեր²⁶⁴: **Այդ օրենքի դրույթները տարածվում են, ի թիվս այլի՝ Դատախազության, Դաշնային ընտրական հանձնաժողովի, Ազգային անվտանգության խորհրդի, Հետաքննությունների դաշնային բյուրոյի, Կենտրոնական հետախուզական ծառայության մարմինների աշխատակիցների վրա:**

3. Հողվածում նշվում է, որ դատախազն իրավունք չունի կազմակերպելու այնպիսի հավաքներ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա քաղաքական չեզոքությունը, սակայն բացակայում է դրանց **մասնակցելու** նույն որոշակիությամբ ձևակերպված արգելքը:

Դատախազների ապաքաղաքականացվածության ամենամեծ երաշխիքը, Դատախազության առանձնահատկություններն հաշվի առնելով, դա Գլխավոր դատախազի ապաքաղաքականացված լինելն է, որի երաշխիքները, ինչպես նշվեց Հետազոտության 3.2 կետում, պետք է ապահովվեն ամենասկզբից՝ ԱԾ կողմից ԳԴ-ին ընտրելու գործընթացներում: Մյուս կողմից, ակնհայտ է, որ քաղաքական մարմին խորհրդարանը պետք է նաև որոշակի արտաքին վերահսկողություն իրականացնի Դատախազության նկատմամբ: Դատախազությունը, մի կողմից, պետք է գործի ժողովրդավարական հասարակությունում, և իր դերը ու կարգավիճակն ու լիազորությունները՝ բխեն հենց նման հասարակությունում գործելու անհրաժեշտությունից, իսկ մյուս կողմից՝ խորհրդարանի, որպես քաղաքական մարմնի ազդեցությունը չպետք է մտնի կոնկրետ գործերով դատախազական լիազորությունների իրացման շրջանակների մեջ²⁶⁵:

4. Դատախազների ապաքաղաքականացվածության պահանջը շատ ավելի լայն է, քան պարզապես որևէ կուսակցությանը չանդամակցելը և ընդգրկում է ընդհանրապես գործող իշխանությունների շահերը չսպասարկելու պահանջը, քանի որ վերջիններս ոչ այլ ինչ են, քան ժամանակավոր քաղաքական իշխանություն: Վենետիկի Հանձնաժողովն այս առթիվ նշում է, որ «... հանրային շահից բխող գործառույթների (այդ թվում՝ քրեական հետապնդման) իրականացումը չպետք է միացնել կամ շփոթել ընթացիկ կառավարության

²⁶⁴ Hatch Act of 1939, An Act to Prevent Pernicious Political Activities, https://en.wikipedia.org/wiki/Hatch_Act_of_1939

²⁶⁵ ԱԾ կողմից Դատախազության նկատմամբ արտաքին վերահսկողության սահմանների մասին խոսվում է Հետազոտության 3.10 կետում:

շահերը, այլ ինստիտուտների շահերը և անգամ որևէ քաղաքական կուսակցության շահերը պաշտպանելու գործառույթի հետ»²⁶⁶:

Այսպիսով, դատախազի ապաքաղաքականացվածությունը, լինելով նրա կարգավիճակի առանձին տարր, ինքնին հանդիսանում է նաև դրա մեկ այլ տարրի՝ անկախության երաշխիքը, և վերջինիս թե դատախազակազմական գործընթացների (նշանակում, առաջխաղացում, փոխադրում, գործերի բաշխում և վերաբաշխում, կարգապահական պատասխանատվության և խրախուսման միջոցների կիրառում և պաշտոնից ազատում), և թե դատավարական երաշխիքները սահմանվում են այդ թվում քաղաքականապես և այլ առումներով զգայում որոշումների կայացման անկախությունն ու ինքնուրույնությունը ապահովելու նպատակով²⁶⁷:

3.6.4.2. Դատախազի ոչ քաղաքական բնույթի չեզոքությունը (կարգավիճակի անհամատեղելիությունը գործունեության որոշ տեսակների հետ) և դրա սահմանները դատախազի քաղաքացիական, տնտեսական և սոցիալական, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների ներքո

Դատախազության մասին օրենքի 49-րդ հոդվածի (Դատախազի նկատմամբ կիրառվող սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները) վերաբերելի դրույթների համաձայն՝

«1. Դատախազը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

... 3. Դատախազն իրավունք չունի լինելու տնտեսական ընկերությունների մասնակից կամ վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատու, եթե, բացի ընկերության ընդհանուր ժողովին մասնակցելուց, դատախազը ներգրավվում է նաև այդ կազմակերպության կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը:

4. Դատախազն իրավունք չունի՝

... 2) իր պաշտոնական դիրքն օգտագործելու կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու, ինչպես նաև իր պաշտոնական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու:

3) կազմակերպելու գործադրվել կամ մասնակցելու դրանց.

4) հոնորար ստանալու պաշտոնական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար, բացառությամբ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից բխող հրապարակումների կամ ելույթների:

5) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական գույքը և ծառայողական տեղեկատվությունը:

6) պաշտոնական պարտականությունների կատարման համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

5. Դատախազի կողմից իրականացվող գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքը չպետք է խոչընդոտի իր պարտականությունների իրականացմանը»:

²⁶⁶ ՎՀ-ի Զեկույց դատախազության անկախության չափորոշիչների մասին, կետ 71:

²⁶⁷ Տես ԵԴԽԽ Կարծիք Հ-14 «Դատախազների դերը կոռուպցիայի և դրան առնչվող տնտեսական և ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում», կետ 22, ընդ. 2019թ. նոյեմբերի 22-ին, CCPE(2019)2 Paris, 22 November 2019 CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) Opinion No. 14 (2019) of the CCPE: «The role of prosecutors in fighting corruption and related economic and financial crime».

Մեջբերված դրույթների հետ կապված անհրաժեշտ է նշել հետևյալը՝

1. **Դատախազի նկատմամբ սահմանված անհամատեղելիության պահանջները բավարար չափով** հավասարակշռված չեն նրա՝ նույն Դատախազության մասին օրենքով սահմանված իրավունքներով: Մասնավորապես, օրենքի 47-րդ հոդվածը (Դատախազի իրավունքները) չի նախատեսում դատախազի **ոչ մի հիմնարար քաղաքացիական կամ քաղաքական իրավունք**, այլ պարզապես սահմանում է հետևյալը՝

«1. Դատախազն իրավունք ունի՝

1) ծանոթանալու իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատագրերին և այլ փաստաթղթերի, ինչպես նաև ներկայացնելու պարզաբանումներ:

2) պաշտոնական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով ստանալու անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր:

3) իր իրավասության սահմաններում քննարկելու հարցեր և ընդունելու որոշումներ:

4) ստանալու օրենքով նախատեսված վարձատրություն, հավելվածարներ և այլ վճարներ:

5) իրավական պաշտպանության, սոցիալական պաշտպանության և ապահովության:

6) օրենքով սահմանված կարգով ծառայողական առաջխաղացման և դասային աստիճանի բարձրացման:

7) վերապատրաստվելու սահմանված կարգերով և դեպքերում պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

8) առաջարկություններ ներկայացնելու դատախազության գործունեության կատարելագործման վերաբերյալ:

2. Դատախազն ունի օրենքով նախատեսված այլ իրավունքներ»:

Մինչդեռ, դատախազների, ինչպես և իրավապահ մարմինների աշխատակիցների դեպքում, միջազգային չափորոշիչների համաձայն, պահպանվում են նրանց՝ մարդու և քաղաքացու ունեցած բոլոր նվազագույն կամ հիմնարար իրավունքները և ազատությունները՝ լեզիտիմ սահմանափակումներով: Մեր կողմից արված՝ դատախազների դասային աստիճանների և դրանց զինվորական համարժեքների վերացման առաջարկն ընդունելուց անկախ, թե դատախազների և թե իրավապահ մարմինների աշխատակիցների համար միջազգայնորեն կիրառվում է այսպես կոչված ում ենք վերացնել գործում է, այսպես կոչված «համազգեստով քաղաքացու» կոնցեպցիան²⁶⁸, որի էությունն այն է, որ **աստիճանակարգությամբ բնորոշվող համակարգում համապատասխան պաշտոն զբաղեցնելով կամ կարգավիճակ ստանալով, անձը չի զրկվում իր քաղաքացու կարգավիճակից և դրանից բխող քաղաքացիական իրավունքներից, իսկ սահմանափակումներն էլ պետք է իրականացվեն ՄԻԵԴ իմաստով իրավաչափ ձևով, այսինքն՝ նախատեսված լինեն օրենքով, հետապնդեն իրավաչափ նպատակ և լինեն համաչափ, այսինքն՝ անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակության մեջ հռչակված իրավաչափ նպատակի և դրան հասնելու ուղղությամբ ընտրված եղանակի միջև կապի ռացիոնալության տեսակետից:**

Ներկայիս բարեփոխումների փուլում, օրենսդրական առաջնահերթ ճանաչման իրավունքներից կարևորագույններն են խոսքի և միավորումների ազատությունները՝ առաջինը մասնագիտական հարցերի շուրջ հրապարակային բողոքի (անկախություն, արդյունավետություն, կոռուպցիայի դեմ անհանդուրժողականություն և այլն), իսկ երկրորդը՝ դատախազների աշխատանքային իրավունքների պաշտպանության համար: Այս երկու ազատությունների իրացմանը հավասարապես առնչվում է գործադուլի իրավունքը՝ որպես թե հրապարակային բողոքի ձև՝ աշխատանքային իրավունքների ու

²⁶⁸ http://www.osce.org/documents/fsc/1994/12/4270_en.pdf

մասնագիտական հարցերի շուրջ, թե աշխատանքային իրավունքների իրացումն ապահովող արհեստակցական միության ամենագործուն միջոցի կիրառում: Ընդ որում մասնագիտական ու աշխատանքային երաշխիքների պաշտպանության ուղղությամբ արհմիության գործառույթը որոշ դեպքերում, ինչպես ցույց է տալիս եվրոպական երկրների պրակտիկան, փաստացի կարող է իրացվել դատավորների կամ դատախազների ներկայացուցչական մարմինների կողմից:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածը (Միավորումների ազատությունը), ի տարբերություն կուսակցության անդամության բացարձակ արգելքի (Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մաս)՝ որպես ապաքաղաքականացվածության պահանջի արտացոլում, ավելի լայն իրավունքի՝ միավորումների ազատության սահմանափակումները ձևակերպում է բավականին ընդհանուր կերպով և դրանց հետագա ամրագրումը վերապահում ընթացիկ օրենսդրությանը՝ նախատեսելով հետևյալը՝

«Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման:

Միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ միայն դատարանի որոշմամբ»:

Արհեստակցական միությունների մասին օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն²⁶⁹՝

«Արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողները, ինչպես նաև դատավորները և Սահմանադրական դատարանի դատավորները»:

Նմանատիպ սահմանափակումներ են նախատեսում նաև այլ վերաբերելի օրենքներում, մասնավորապես՝ Ոստիկանությունում ծառայության մասին օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում («Ոստիկանության ծառայողն իրավունք չունի... 7) լինել որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական, **հասարակական (բացառությամբ զիտական, մշակութային, մարզական, որսորդական, վետերանների և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների)**, այդ թվում՝ կրոնական, **արհեստակցական կազմակերպության անդամ**»)²⁷⁰, Մաքսային ծառայությունում մասին օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասում («Մաքսային մարմիններում արգելվում է կուսակցությունների, **հասարակական**, այդ թվում՝ կրոնական կազմակերպությունների ձևավորումը»)²⁷¹: Միաժամանակ, տարօրինակ կերպով, նման սահմանափակում չկա Հարկային ծառայության մասին օրենքի 13-րդ հոդվածում (Հարկային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները)²⁷², և ոչ էլ Դիվանագիտական ծառայության մասին օրենքի 44-րդ հոդվածում (Դիվանագիտական ծառայության հետ կապված սահմանափակումները)²⁷³:

²⁶⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121368>

²⁷⁰ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121004>

²⁷¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121688>

²⁷² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121886>

²⁷³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121490>

Քննչական կոմիտեի մասին օրենքի²⁷⁴ 10-րդ հոդվածը (Քննչական կոմիտեում ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները), ինչպես նաև Հատուկ քննչական ծառայության մասին օրենքի²⁷⁵ 11-րդ հոդվածը (Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները) նույն տեքստով նախատեսում են, որ այս մարմինների ծառայողները չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ, և որ նրանց նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները: Հանրային ծառայության մասին օրենքի²⁷⁶ 32-րդ հոդվածի (Այլ սահմանափակումներ) համաձայն՝ «1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է՝ ... 3) իր պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար»:

ԵԽ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագիրը 6-րդ կետում նշվում է՝

«6. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որպեսզի դատախազներն ունենան արտահայտվելու, խղճի, միավորումների և հավաքների ազատության արդյունավետ իրավունք: Մասնավորապես, նրանք պետք է իրավունք ունենան մասնակցելու այնպիսի հարցերի հանրային քննարկմանը, որոնք առնչվում են իրավունքին, արդարադատության իրականացմանը, մարդու իրավունքների խթանմանն ու պաշտպանությանը, ինչպես նաև՝ միանալու տեղական, համապետական կամ միջազգային կազմակերպությունների կամ ստեղծելու դրանք և մասնակցելու դրանց հանդիպումներին՝ մասնավոր անձի կարգավիճակով՝ առանց մասնագիտական բացասական հետևանքներ կրելու՝ օրինական կազմակերպությանը անդամակցելու կամ դրա շրջանակներում իրավաչափ գործողություններ կատարելու պատճառով: Վերը նշված իրավունքների սահմանափակումը կարող են տեղի ունենալ միայն օրենքով նախատեսված շրջանակներում և պետք է լինի անհրաժեշտ դատախազների սահմանադրաիրավական կարգավիճակի պայմաններին հետևելու համար: Նշված իրավունքների խախտման դեպքում, պետք է առկա լինի իրավունքի վերականգնման արդյունավետ միջոց:

Այս հանձնարարականը հիմնված է, մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի վրա (*ՄԻԵԿ հոդված 10. Արտահայտվելու ազատություն. - ԴԻ*): Այն պետք է մեկնաբանվի դատախազի ունեցած պարտականությունների, մասնավորապես՝ զսպվածության պարտականության լույսի ներքո: Այս առումով, դատախազության ծառայողները, ոչ կարող են լինել լինել քաղաքական կուսակցության անդամ, ոչ էլ ակտիվորեն ներգրավված լինեն քաղաքականության մեջ»:

Այսպիսով, որպես բացարձակ արգելք սահմանված է ապաքաղաքականացվածությունը, այն էլ՝ քաղաքական գործունեության և կուսակցություններին անդամակցելու իմաստով:

Նույն՝ «համազգեստով քաղաքացու» հայեցակարգից բխող մոտեցումն ունի ԵԴԽԽ-ն, որը «Եվրոպական նորմերն ու սկզբունքները դատախազների վերաբերյալ» Կարծիք Հ-9-ի Բացատրական հուշագրի 100-101-րդ կետերում՝ 4.2 կետի խորագրի տակ (Դատախազների հիմնարար ազատությունները) նշում է հետևյալը՝

«100. Դատախազները պետք է օգտվեն կարծիքի և խոսքի ազատության և միավորումների ազատության իրավունքից՝ նույն ձևով, ինչպես հասարակության մյուս անդամները: Այս իրավունքներն իրացնելիս, նրանք պետք է հաշվի առնեն շրջահայացություն դրսևորելու պարտականությունը և զգույշ լինեն՝ այն անկախության, անկողմնակալության և արդարացիության հանրային ընկալումը վտանգ տակ չդնելու համար, որոնք միշտ պետք է ապահովվեն դատախազի կողմից:

101. Բոլոր միջոցները պետք է ձեռնարկվեն դատախազների մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը ապահովելու համար²⁷⁷: Մակայն նրանք պետք է վարվեն շրջահայաց և զգույշ կերպով՝ իրենց մասնագիտության

²⁷⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121823>

²⁷⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143940>

²⁷⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141524>

²⁷⁷ Committee of Ministers of the Council of Europe, Recommendation Rec(2000)10 on *codes of conduct for public officials*, 11 May 2000, § 17.

արժանապատվությունը կամ իրենց գործառույթներն իրացնելու կարողությունը հարցականի տակ դնելուց խուսափելու համար»:

Դատախազների՝ միավորումների ազատության իրավունքի մասին խոսելիս, անհնար է շրջանցել ՄԱԿ-ի Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Հ-87 Կոնվենցիան²⁷⁸, որը դեռևս 1992թ. ՄԱԿ-ին միացած Հայաստանի կողմից վավերացվել էր 2006թ.: ԱՄԿ Փորձագիտների կոմիտեն ՀՀ 1-ին Զեկույցի առթիվ իր 2010թ. մեկնաբանություններում անդրադարձել էր այն ժամանակ գործող Սահմանադրության 28-րդ հոդվածին, որը նախատեսում էր հետևյալը՝

«Կուսակցություններ եւ արհեստակցական միություններ ստեղծելու եւ դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաեւ դատավորների եւ սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ»:

Կոմիտեն այդ, մինչ այժմ՝ այդ թվում նաև վկայակոչված օրենքների մակարդակով գործող կարգավորումների կապակցությամբ նշել էր հետևյալը՝

«Վերհիշելով, որ [Հ-87] Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, այս կատեգորիաների աշխատողները պետք է օգտվեն կազմակերպություններ ստեղծելու ու դրանց միանալու իրավունքից՝ իրենց աշխատանքային և տնտեսական շահերը խթանելու և պաշտպանելու նպատակով, Կոմիտեն խնդրում է Կառավարությանը ցույց տալ, թե արդյոք Դատախազության աշխատողները, ինչպես նաև դատավորներն ու Սահմանադրական դատարանի անդամները կարող են հիմնել իրենց նախընտրած կազմակերպությունները կամ միանալ դրանց, և տրամադրել համապատասխան օրենսդրական տեքստերի պատճենները»²⁷⁹:

Կարծում ենք, որ ժամանակն է, թեկուզ՝ 10 տարի անց, ընդունել համապատասխան օրենսդրական փոփոխությունները և դրանց պատճենները ներկայացնել ԱՄԿ կոմիտեին՝ որպես ՀՀ ՄԱԿ-ի ներքո ստանձնած միջազգային պարտավորությունների իրականացման ապացույց:

Դատախազների՝ միավորվելու ազատության իրացումը շատ կարևոր է ոչ միայն աշխատանքային, այլև զուտ մասնագիտական շահերը պաշտպանելու համար: Այս առումով, դասական օրինակ կարող է համարվել Ռուսիայի վերաբերելի փորձը, որին մանրամասն անդրադարձել է ԵԴԽԽ Բյուրոն՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում դատախազների անկախության և անկողմնակալության վերաբերյալ իր 2019թ. Զեկույցում²⁸⁰, նշելով հետևյալը՝

«90. Ինչպես Ռուսիայի հետ կապված նշվել է ԵԴԽԽ Բյուրոյի 2017թ. Զեկույցում, ԵԴԽԽ-ն տեղեկացվել էր «Արդարադատության մասին» օրենքների Փոփոխությունները մերժելու մասին Հուլիսի վերաբերյալ, որը ստորագրվել էր 3,600 ռումինացի մագիստրատների՝ դատավորների և դատախազների կողմից, և հասցեագրվել Ռուսիայի Կառավարությանը, Վարչապետին և Արդարադատության նախարարին:

91. Այդ փոփոխություններն հետագայում ընդունվեցին: «Ռուսիայի դատավորների հարթակ միավորումը» և «Հանուն դատախազների կարգավիճակի պաշտպանության» շարժումը 2018թ. նոյեմբերի 15-ին խնդրեցին,

²⁷⁸ Լրիվ անվանումը՝ Միավորման ազատության և կազմակերպելու իրավունքի պաշտպանության մասին կոնվենցիա, ընդ. 1948թ. հուլիսի 9-ին, Freedom of Association and Protection of the Right to Organize Convention, 1948 (No. 87), Տես՝ հայերեն պաշտոնական թարգմանությունը՝ <http://mlsa.am/wp-content/uploads/2017/05/87.doc>; ՀՀ կողմից վավերացվել է 2006թ. հունվարի 2-ին՝ https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:11200:0::NO::P11200_COUNTRY_ID:102540

²⁷⁹ Տես՝ Direct Request (CEACR) - adopted 2010, published 100th ILC session (2011), ընդ. ԱՀԿ կողմից 2010թ. https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:13100:0::NO:13100:P13100_COMMENT_ID:2333034

²⁸⁰ Report on the independence and impartiality of the prosecution services in the Council of Europe member States (2019 edition) referred to the issue of independence of prosecutors in the context of “general safeguards such as guarantees ensuring functional independence of prosecutors from their hierarchy and judicial control of the acts of the prosecution service”

որպեսզի Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը և Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհուրդը իրենց դիրքորոշումներն հայտնեն Ռումինիայում դատավորների և դատախազների անկախության վերաբերյալ: Այդ միջնորդությունն առնչվում էր դեռևս դատավորների ու դատախազների անկախությունը պահպանելու հետ կապված դեռևս 2017թ. ծագած վեճին, ինչպես նաև՝ այլ հարցերի: Միջնորդության մեջ նշվում էին համապետական և միջազգային ուշադրության արժանացած հիմնախնդիրներ, որոնք վերաբերում էին կոռուպցիայի դեմ պայքարին ու մասնավորապես՝ Արդարադատության նախարարի կողմից 2018թ. հուլիսին Ազգային հակակոռուպցիոն վարչության Գլխավոր դատախազին աշխատանքից ազատելուն: ՄԵԴԵԼ-ը (MEDEL²⁸¹) նույնպես մատնանշեց, որ մեծ մտահոգությամբ է հետևել Ռումինիայի դատական իշխանության վերաբերյալ երեք հիմնարար օրենքների փոփոխություններին»²⁸²:

Դատական իշխանություն իրականացնողների՝ մագիստրատների, այն է՝ դատավորների ու դատախազների խոսքի, խղճի, հավաքների ու միավորումների ազատությունները՝ պաշտոնից բխող սահմանափակումներով հանդերձ՝ ի հակադրություն բացարձակ արգելքի, ճանաչված են նաև մի շարք այլ միջազգային փաստաթղթերի դրույթներում, այդ թվում՝ ՄԻԵԴ որոշումները: Մասնավորապես՝

1. ԵԴԽԽ՝ «Դատախազների անկախության, հաշվետվողականության և էթիկայի մասին» Հ-13 Կարծիքի 18-րդ կետում նշվում է՝

«Դատախազները պետք է ազատ լինեն ստեղծելու միավորումներ և միանալու դրանց՝ իրենց շահերը ներկայացնելու, իրենց կարգավիճակը պաշտպանելու և իրենց մասնագիտական վերապատրաստումը խթանելու համար»:

2. ՄԻԵԴ լիազումար նիստում 2008թ. հունիսի 23-ին ընդունված Դատական էթիկայի մասին Բանաձևում նշվում է՝

«Դատավորները և դատախազները պետք է իրենց արտահայտվելու ազատությունն իրացնեն իրենց պաշտոնի արժանապատվությանը հարիր ձևով: Նրանք պետք է ձեռնպահ մնան այնպիսի հրապարակային հայտարարություններից կամ մեկնաբանություններից, որոնք կարող են խաթարել Դատարանի հեղինակությունը կամ ողջամիտ կասկած հարուցել իրենց անկողմնակալության վերաբերյալ»²⁸³:

3. Նույն ՄԻԵԴ-ը, մի կողմից մագիստրատների ու դատախազների քաղաքացիական իրավունքների, մասնավորապես՝ արտահայտվելու ազատության, և մյուս կողմից տեսանելի անկողմնակալության հանրության հանդեպ ունեցած պարտականություն հավասարակշռելով, *Կուղեշկինան ընդդեմ Ռուսաստանի գործով՝*

«գտել է, որ անխուսափելի է դատական իշխանության մեջ ծառայող պաշտոնյաներին պարտավորեցնելը, որպեսզի նրանք ձեռնպահ մնան իրենց արտահայտվելու ազատությունն իրացնելուց այն բոլոր դեպքերում, երբ դատական իշխանության հեղինակությունն ու անկողմնակալությունը կարող են դրվել հարցականի տակ: Դատարանը կրկնում է, որ անձնական բողոքով կամ թշնամանքով կամ անձնական օգուտի, այդ թվում՝ գույքային օգուտի ակնկալիքով պայմանավորված գործողությունը, չի արդարացնի պաշտպանության հատկապես բարձր աստիճանի պաշտպանության ընձեռումը: Այդուհանդերձ, Դատարանը բարձր աստիճանի պաշտպանություն է ընձեռում այն դեպքերում, երբ դատավորի/դատախազի կողմից հրապարակայնորեն

²⁸¹ Magistrats européens pour la démocratie et les libertés – Եվրոպական մագիստրատներն հանուն ժողովրդավարության և ազատությունների, տես՝ <https://www.medelnet.eu/>, իրավաբանների, գիտնականների և դատավորների հեղինակավոր միջազգային կազմակերպություն, որն աշխատում է 100-ից ավելի երկրներում:

²⁸² Ռումինիայում, 2017թ. տեղի են ունեցել հուժկու՝ այդ թվում միգիստրատների մասնակցությամբ, ցույցեր, որոնք ամենամեծն էին 1989թ. Խորհրդային Միության փլուզմանը նախորդող ցույցերից ի վեր: Դրանց պատճառը քրեական օրենսգրքի՝ կոռուպցիոն առանձին հանցագործությունների ապաքրեականացումն էր, ինչպես նաև առանձին դատապարտյալներին ներում շնորհելը, որոնք նախատեսվում էին Կառավարության Արտակարգ հրամաններով, տես՝ The Resolution on Judicial Ethics adopted by the Plenary of our European Court of Human Rights on 23 June 2008, point VI, տես նաև՝ Mihai-Adrian Dinu, Ioana Gherasim, Elena Băeșu (Grama), The right to protest. Should judges and prosecutors react or exercise reserve?, THEMIS Ethics Semi-final 3-6 July 2017, Budapest, page 7. <http://www.ejtn.eu/Documents/Team%20Romania%20semi%20final%20D.pdf>

²⁸³ The Resolution on Judicial Ethics adopted by the Plenary of our European Court of Human Rights on 23 June 2008, point VI, տես նաև՝ The right to protest. Should judges and prosecutors react or exercise reserve?, էջ 2:

բարձրացված հարցերն առնչվում են իրավունքի գերակայության արդյունավետ գործողությանը: Դատարանը վերհիշում է այն սառեցնող ազդեցությունը («chilling effect»), որն ունենում է տույժի նկատմամբ վախը արտահայտվելու ազատությունն իրացնելու վրա, ինչը բացասաբար է անդրադառնում ամբողջության վեր վերցրած հասարակության վրա, նմանապես նաև մի գործոն է, որը վերաբերում է այն տույժերի համաչափությանն ու ըստ այդմ՝ արդարացված լինելուն, որոնք կիրառվել են դատական ծառայողների նկատմամբ, ովքեր, **անհերքելիորեն, իրավունք ունեն հանրային շահին վերաբերող հարցերը ներկայացնել հանրության ուշադրությանը:** ... Դատարանը նաև ընդգծում է հասարակության համար դատական համակարգի գործողության հանրային շահի առկայությունը, և որպես հետևանք՝ որ այս թեմայով դեբատները գտնվում են 10-րդ հոդվածի պաշտպանության ներքո ...»²⁸⁴:

4. Դատական վարքագծի Բանգալորյան սկզբունքների վերաբերյալ ՄԱԿ-ի մեկնաբանություններում (2017թ.) ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակը նշել է՝

«Բանգալորյան սկզբունքներ իրենցից վարքագծի կանոն սկզբունք են ներկայացնում այն պահերի համար, երբ Դատավորը կամ դատախազը կարող է արտահայտվելու բարոյական պահանջմունք զգալ. «Դեպքեր կարող են լինել, երբ դատավորը՝ որպես բարոյական սկզբունքներ, զգացմունքներ ու արժեքներ ունեցող մարդկային էակ, իր բարոյական պարտքը համարի արտահայտվելու: Օրինակ, արտահայտվելու իր ազատությունն իրացնելիս, Դատավորը կարող է ... բռնել ցուցապաստառ, ստորագրել հանրագիր պատերազմի դեմ կամ հանուն էներգիայի խնայողության կամ անկախության կամ աղքատության դեմ պայքարող գերատեսչության ֆինանսավորման համար: Մրանք մտահոգություններ են հանուն տեղական կամ համաշխարհային համայնքի: **Եթե այս հարցերն առաջանալու լինեն դատարանում, և եթե դատավորի անկողմնակալությունը ռոջամտորեն դրվի հարցականի տակ, ապա նա պետք է ինքնաբացարկ հայտնի և հեռանա այն վարույթից, որին իր մասնակցությունը իր իսկ նախկինում կատարած գործողությունների պատճառով, կարող է կասկած առաջացնել դատավորի անկողմնակալության և դատական բարեվարքության հանդեպ**»²⁸⁵:

Ինչպես նշվեց, դատավորի ու դատախազի՝ որպես դատական իշխանություն իրականացնող սուբյեկտներ լինելու ուժով, անկողմնակալության տեսանկյունից սահմանված այս պահանջները կիրառելի են նաև դատախազների նկատմամբ:

Արտահայտվելու, խղճի, ինչպես նաև հավաքների ու միավորումների ազատության իրավունքների համակարգում ուրույն տեղն է զբաղեցնում **գործադուլի իրավունքը**, որն ուղիղ արգելված է Դատախազության մասին օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով: Միաժամանակ, ԱՄԿ 2-87 Կոնվենցիայի 2-րդ հոդվածից էլ բխում է Հայաստանի միջազգային պարտավորությունը դատախազների և ԱՄԿ Փորձագետների կոմիտեի կողմից վերը հիշատակված որոշ այլ կատեգորիայի համար արհմիություններ ստեղծելու ու դրանց մասնակցելու իրավունքը, իսկ գործադուլ հայտարարելու իրավունքը արհմիության ամենահզոր գործիքն է: Դատախազներն ու դատավորները գործադուլներ են կազմակերպել մի շարք եվրոպական երկրներում, օրինակ՝ Ավստրիայում, Լեհաստանում, Ռումինիայում՝ աշխատավարձերի և դատավորների անկախությունը վտանգող օրենսդրական փոփոխությունների դեմ, ընդ որում՝ անկախ գործադուլի արգելված լինելու փաստից: Ֆրանսիայում, օրինակ, մագիստրատների՝ դատավորների ու դատախազների գործադուլներն արգելված չեն: Սակայն, չնայած արգելքին, Ռումինիայում եղել դատավորների գործադուլներ²⁸⁶:

Պետք է ասել, որ **եթե դատախազները կամ դատավորները որոշեն գործադուլ անել, ապա անգամ գործադուլի օրենքով արգելված լինելու դեպքում, նրանք դա կարող են անել նաև շատ օրինական ձևով, ասենք՝ Ընդհանուր ժողովի նիստը աշխատանքային մի քանի օր անելով և հնարավորինս շատ դատավորների/դատախազների հնարավորինս երկար**

²⁸⁴ The right to protest. Should judges and prosecutors react or exercise reserve?, page 18-19; case of Kudeshkina v. Russia (Application no. 29492/05) of 29 February 2009, par. 86

²⁸⁵ United Nations Office on Drugs and Crime, Commentary on the Bangalore Principles on Judicial Conduct, September 2007

²⁸⁶ The right to protest. Should judges and prosecutors react or exercise reserve?, p. 15-16.

ելույթի հնարավորություն տալով²⁸⁷: Նույնը կարող է անել անգամ Գլխավոր դատախազը՝ անգամ Դատախազների ընդհանուր ժողովի կամ խորհրդի բացակայության պայմաններում՝ գումարելով, օրինակ՝ մեկ օրով Դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստ և դրան հրավիրելով բոլոր դատախազներին:

Այնպես որ ավելի ճիշտ է հրաժարվել գործադուլի բացարձակ արգելքից ու ու խոսքի ազատության այլ բացարձակ սահմանափակումներից և, ղեկավարվելով ՄԻԵԴ դիրքորոշումներով ու «համազգեստով քաղաքացու» հայեցակարգով ու այն արտահայտող նախնառաջ Բանգալորյան սկզբունքներով, նախատեսել՝

1. որպես հրապարակային անհամաձայնության կամ աջակցության իրավաչափ պայման՝ այն առարկան, որի շուրջ, որ դատախազներն իրավունք ունեն արտահայտելու, այն է՝ հանրային կարևորություն ներկայացնող և իրենց մասնագիտությանը անմիջապես վերաբերող հարցերի շուրջ:

2. որպես խոսքի ազատության վերը նշված հիմքով իրավաչափ իրացման դեպքում՝ ամրագրել այդ ազատության պետության կողմից սահմանափակման ընդհանուր պայմանները՝ նախատեսված է օրենքով, հետապնդում է իրավաչափ նպատակ և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ՝ հատուկ նախատեսելով, որ այդ սահմանափակումները պետք է լինեն բխեն դատախազական գործունեությամբ հետապնդվող նպատակներին և չպետք է անհարկի չսահմանափակեն դատախազների՝ օրենքով սահմանված որպես քաղաքացի նրանց ունեցած իրավունքներն ու ազատությունները:

3. որպես բացարկյի հիմք՝ դատախազի մասնակցությունը այն գործերով, որոնք առնչվում են այն հարցերին, որոնց հետ կապված դատախազն նախկինում իր որոշակի վերաբերմունքն է արտահայտել իր քաղաքացիական դիրքորոշումը իրավաչափորեն ներկայացնելու շրջանակներում, և՝

4. սահմանել՝ Դատախազության մասին օրենքի 49-րդ հոդվածի հետ կապված, որ դատախազը, նաև իր կարգավիճակի հետ համատեղելի գործունեություն իրականացնելիս չպետք է խախտի իր կարգավիճակից բխող այլ պահանջները կամ ստեղծի նման տպավորություն: Դրա օրինակներ կարող են լինել, օրինակ՝ մանկավարժական գործունեության ընթացքում կոնկրետ քաղաքական ուժի օգտին կամ դեմ արտահայտվելը և այլն:

Այսպիսով, միջազգային վերը վկայակոչված չափորոշիչների պահանջներից ելնելով անհրաժեշտ է, ՀՀ Դատախազության մասին օրենքում «Դատախազի կարգավիճակը և դրա տարրերը, դատախազի իրավունքներն ու պարտականությունները» առանձին գլխում հատուկ հոդվածներով սահմանել դատախազների առնվազն հիմնարար քաղաքական և քաղաքացիական իրավունքները:

²⁸⁷ Նման մի կեսժամանակոց գործադուլ արել են Լեհաստանի դատավորները՝ 2017թ. ապրիլի 20-ին, երբ բողոքելով Կառավարության օրենսդրական նախաձեռնության դեմ, որի նպատակն էր Արդարադատության ազգային Խորհրդի (ՀՀ՝ ԲԴԽ-ի հանմարժեքը) անդամների ընտրության լիազորությունը դատավորների ընդհանուր ժողովից վերցնել և վերապահել խորհրդարանին, բոլոր դատարաններում ժամը 12:00-ին ձևական «խորհրդակցություններ» հրավիրեցին: Տե՛ս՝ The right to protest. Should judges and prosecutors react or exercise reserve, էջ 16:

3.6.5. Դատախազների գործառնական անձեռնմխելիությունը

Ինչպես նշվեց Հետազոտության 3.5.1 կետում, դատախազները, ի պաշտոնե գործելու այդ ընթացքում բարեխիղճ վարքագիծ դրսևորելու դեպքում, չպետք է ենթարկվեն անձնական պատասխանատվության: Եվ հակառակը՝ նրանք կարող են պատասխանատվություն կրել միայն իրենց «վատ վարքագծի» հիմքով՝ մի սկզբունք, որը բխում է դատավորների անփոփոխելիության, իսկ դատախազների դեպքում էլ՝ պաշտոնավարման (քանի որ դատախազները ունեն ոչ թե պաշտոնում աշխատելու, այլ դատախազի կարգավիճակ պահպանելու իրավունք) երաշխավորվածության սկզբունքից՝ *During Good behavior* (պատշաճ վարքագիծ դրսևորելու ընթացքում)՝ ի հակառակ «Քանի դեռ այդպես է հաճախ թագավորին» սկզբունքի:

Ի պաշտոնե գործողությունների համար անձնական պատասխանատվության արգելքը ունի իր շրջանակները: Մասնավորապես, ԵԴԽԽ Կարծիք Հ-13-ի 48-րդ և 50-րդ կետերի համաձայն

«48. Բացի այն դեպքերից, երբ հաստատվել է, որ դատախազը կատարել է կարգապահական իրավախախտում կամ ակնհայտորեն պատշաճ կերպով չի կատարել իր պարտականությունները, նա, դատավորների նման, չի կարող անձնական պատասխանատվության ենթարկվել պաշտոնեական այս կամ այն գործողությունների միջև իր ընտրության համար՝ պայմանով, եթե այդ ընտրությունն արվել էր իր անձնական մտավոր և իրավական վերլուծության արդյունքում»:

«50. Դատախազները պետք է օգտվեն ոչ թե ընդհանուր, այլ միայն՝ իրենց պարտականությունների կատարման ուղղությամբ բարեխիղճորեն կատարված գործողությունների համար գործառնական անձեռնմխելիությունից: Դատախազը, սակայն, պետք է ենթակա լինի քրեական պատասխանատվության ցանկացած, այդ թվում՝ արդարադատության իրականացման ընթացքում կատարված հանցագործության համար՝ ազգային օրենսդրությանը համապատասխան»:

Նույն մոտեցումն է դրսևորված ԳԲԵԿՈ-ի 4-րդ շրջանի ՀՀ վերաբերյալ 2017թ. Ձեկույցում, որի 10-րդ երաշխավորության մեջ (կետ 52)

«50. ԳԲԵԿՈ-ն առաջարկել է, որպեսզի դատավորների անձեռնմխելիությունը սահմանափակվի միմիայն արդարադատության իրականացմանը մասնակցելու կապակցությամբ նրանց կատարած գործողությունների համար («գործառնական անձեռնմխելիություն»)»:

Ճիշտ է, ԳԲԵԿՈ-ն այդ դիրքորոշումը արտահայտել է ՀՀ դատավորների մասով, սակայն, հաշվի առնելով միջազգային նկարագրված չափորոշիչները, նույն տարածվում է նաև դատախազների վրա:

Գործառնապայման անձեռնմխելիությունը ենթադրում է, որ դատախազները պետք է անձեռնմխելի լինեն ի պաշտոնե կատարված գործողությունների շրջանակներում, այլ ոչ թե՝ կարգավիճակի ուժով: Այդ իսկ պատճառով, առանձին կարևորություն ունի կարգապահական պատասխանատվության հիմքերի վերլուծությունը, որը կատարվում է հաջորդ կետում, մինչդեռ այստեղ փորձեցինք ներկայացնել դատախազների գործառնական անձեռնմխելիությունը՝ որպես սկզբունք ու կարգավիճակի հատկանիշ:

3.7. Դատախազների կարգապահական պատասխանատվությունը և լիազորությունների դադարեցումը

3.7.1. Դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, այդ թվում՝ պաշտոնից ազատելու հիմքերը, կարգապահական տույժերի տեսակները

«Դատախազները պետք է ի վիճակի լինեն իրականացնելու իրենց մասնագիտական պարտականություններն ու լիազորությունները՝ առանց անհարկի միջամտության կամ քաղաքացիական, քրեական կամ այլ պատասխանատվության վտանգի տակ հայտնվելու: Նրանք չպետք է միջամտել օրենսդիր կամ գործադիր իշխանությունների իրավասության ոլորտին: Դատախազությունը պետք է պարբերաբար և հրապարակային հաշվետվություններ ներկայացնի իր ամբողջ աշխատանքի վերաբերյալ»²⁸⁸:

Դատախազության մասին օրենքի համապատասխան հոդվածների վերաբերելի դրույթները հետևյալն են՝

«Հոդված 53. Կարգապահական պատասխանատվության հիմքերը

1. Դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝
 - 1) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.
 - 2) դատախազի վարքագծի կանոնները խախտելը.
 - 3) աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը.
 - 4) սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելը:

Հոդված 54. Կարգապահական տույժերը

1. Դատախազի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ կարգապահական տույժերը՝
 - 1) նկատողություն.
 - 2) խիստ նկատողություն.
 - 3) դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով.
 - 4) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

5) պաշտոնից ազատում:

1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված տույժը չի կարող կիրառվել առաջին անգամ դատախազի պաշտոնն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման կազմում զբաղեցնող անձանց նկատմամբ: ...

2. Կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված կարգապահական խախտման ծանրությանը և մեղավորության աստիճանին:

... 5. «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժը կարող է նշանակվել դատախազի այնպիսի արարք կատարելու դեպքում, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը կամ անհամատեղելի է դատախազի պաշտոնի հետ:

6. «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի և դատախազների նկատմամբ կարող է կիրառվել նաև գլխավոր դատախազի նախաձեռնությամբ կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա, որով հիմնավորվում է նշված անձի կողմից տևական ժամանակ իր գործառույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի հետևանքով ստորաբաժանման առջև դրված նպատակները և խնդիրներն արդյունավետորեն չեն իրականացվել: (54-րդ հոդվածը լրաց. 16.04.20 ՀՕ-245-Ն)

Հոդված 62. Դատախազին պաշտոնից ազատելը

²⁸⁸ ԵՄ ՆԿ (2012)11 Հանձնարարականի Բացատրական հուշագիր, կետ 25, և ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարական, կետ 11-12:

1. Դատախազին պաշտոնից ազատելու հիմք են՝

1) անձնական դիմումը.

2) դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին լրանալը.

3) դատախազի մահը.

4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցումը,

5) հաստիքի կրճատումը.

6) դատախազության կառուցվածքային այլ ստորաբաժանում կամ այլ դատախազություն փոխադրվելուց հրաժարվելը, դատախազության կառուցվածքային այն ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, որտեղ նա պաշտոն է զբաղեցրել.

7) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա մահացած հայտարարվելը կամ անհայտ բացակայող ճանաչվելը.

8) սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ կամ 7-րդ կետերով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի ի հայտ գալը.

9) սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական տույժի նշանակումը.

10) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտը, որով ապացուցված է, որ նա այդ պաշտոնում նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ.

11) սույն օրենքի 50-րդ հոդվածի 14-րդ մասի 6-րդ կետով սահմանված միջնորդության հիման վրա սույն օրենքի 50-րդ հոդվածի 19-րդ մասով սահմանված կարգով կայացված որոշումը²⁸⁹.

12) նրա նկատմամբ կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը.

13) դատախազի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելը կամ քրեական հետապնդում չիրականացնելը ոչ արդարացնող հիմքով:

2. Դատախազին պաշտոնից ազատելու հիմք կարող է հանդիսանալ նաև ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս անընդմեջ աշխատանքի չներկայանալը:...»:

Մեջբերված նորմերի հետ կապված հիմնական մտահոգությունները հետևյալն են՝

1. Կարծում ենք, պետք է նախատեսել լիազորությունների դադարման և պաշտոնից ազատման առանձին հիմքեր, որովհետև, օրինակ՝ անհնար է պաշտոնից ազատել մահացած մարդուն: Ուստի և, ինչպես և Գլխավոր դատախազի լիազորությունների դադարման ու դադարեցման դեպքում, ինչի մասին արդեն իսկ խոսվեց Հետազոտության 3.2.2 կետում, պետք է տարանջատել այն հիմքերը, որոնք լրացուցիչ քննարկում և փաստի հաստատում չեն պահանջում՝ դադարման հիմքեր, և նրանք, որոնք դա պահանջում են: Առաջին խմբի հիմքերը որպես պաշտոնից ազատելու հիմք առկա են իրենց փաստի ուժով, ընդ որում այդ փաստը հաստատվում է ոչ պաշտոնից ազատելու որոշումն կայացնող անձի՝ Գլխավոր դատախազի կողմից: Հենց երկրորդ խմբի հիմքերի (62-րդ հոդվածի 1-ին մասի 8, 9 և 11-րդ կետեր և նույն հոդվածի 2-րդ մաս) կիրառումն է, որը ունի փաստման կարիք և որոնց կիրառմամբ կայացված որոշումները պետք է բողոքարկման լինեն դատական կարգով:

2. Ինչպես նշվեց Հետազոտության մի շարք նախորդող կետերում, Գլխավոր դատախազի կողմից դատախազին ազատելը հաստիքի կրճատման կամ այլ ստորաբաժանում

²⁸⁹ Հոդված 5, մաս 14. «Որակավորման հանձնաժողովն ատեստավորման արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ ...6) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին»: Հոդված 5, մաս 14. «Որակավորման հանձնաժողովն ատեստավորման արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ ...6) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին»:

փոխադրվելու դատախազի անհամաձայնության դեպքում խիստ վտանգավոր է դատախազների ներքին անկախության համար՝ հաշվի առնելով նաև այն, որ հենց Գլխավոր դատախազն է, որ նորմատիվ ակտեր ընդունելու իր չափազանց լայն իրավասության շրջանակներում, որոշում Դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքը, հաստիքները և այլն, այդ թվում՝ իր տեղակալների թիվը: Որևէ երաշխիք չկա, որ ԳԴ-ն կարող է ցանկանալ այդպիսով ազատվել ինքնուրույն դատախազներից՝ արհեստականորեն կրճատելով իր հրամանով հաստիքները կամ վերակազմակերպելով ստորաբաժանումը, ասենք այն դարձնելով ոչ թե 5 այլ 4 դատախազից բաղկացած, որի արդյունքում այդ դատախազը զրկվի իր պաշտոնից:

Նշված դրույթներն ուղղակի հակասության մեջ են միջազգային չափորոշիչների, մասնավորապես Բորդոյի հռչակագրի պահանջների հետ, որտեղ նշվում է հետևյալը՝

«8. Դատախազների անկախ կարգավիճակի համար, անհրաժեշտ են որոշ նվազագույն պահանջներ, մասնավորապես՝

- որ նրանց պաշտոնը և գործունեությունը ենթակա չեն Դատախազությունից դուրս որևէ ճնշման կամ ազդեցության.
- որ նրանց ընտրությունը, կարիերային առաջընթացը, պաշտոնավարման անվտանգությունը՝ այդ թվում նաև փոխադրման ընթացքում, պետք է տեղի ունենա բացառապես օրենքի հիման վրա և նրանց համաձայնությամբ...»:

Նույնաբովանդակ դիրքորոշում ունի նաև Վենետիկի Հանձնաժողովը, որը «Դատախազության անկախության չափորոշիչների մասին» Զեկույցում նշում է (կետ 60), որ «նման տեղափոխումների սպառնալիքները կարող են որպես գործիք ծառայել դատախազի վրա ճնշում կիրառելու համար, կամ «ըմբոստ դատախազը» կարող է հեռացվել զգայուն գործից»: **Կրկին, պետք է առկա լինի անկախ մարմին, ինչպես, օրինակ՝ Դատախազական խորհրդին բողոք ներկայացնելու հնարավորություն»:**

Օրենքի նշված կարգավորումները թերի են նաև մեթոդաբանական առումով, այն է՝ միահյուսվել են դատախազի պաշտոնից ու կարգավիճակից զրկելու հիմքերը: Մինչդեռ, դատախազը կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել, իսկ պաշտոնից ազատումը կարգապահական տույժերից մեկն է իր որոշակի «վատ վարքագծի» հետևանքով, որի մասին ընդհանրապես խոսք չի կարող գնալ հաստիքի կրճատման դեպքում, և որպիսին չի կարելի համարել այլ ստորաբաժանում տեղափոխվելու ցանկության բացակայությունը և այն արտահայտելը:

Մեր առաջարկն է՝ նախևառաջ, Գլխավոր դատախազին զրկել ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու և վերակազմավորելու գործառնությունից, առնվազն կառուցվածքային ու տարածքային միավորների կառուցվածքը վերապահելով օրենքին, վերացնել նշված հիմքերը որպես լիազորությունների դադարեցման հիմք: Այնուհետև պետք է նախատեսել, որ այլ պաշտոնի փոխադրվելը կարող է տեղի ունենալ բացառապես դատախազի ցանկությամբ՝ բացառությամբ որպես կարգապահական տույժ պաշտոնը մեկ աստիճանով իջոցնելու, որը նախատեսված է Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով: Իսկ եթե օրենքում փոփոխություններ կընդունվեն, որոնք կվերակազմավորեն այն ստորաբաժանումը, որտեղ աշխատում է դատախազը, ապա տվյալ դատախազը պետք է պահպանի իր կարգավիճակը և ունենա հավասարազոր պաշտոնում վերանշանակվելու իրավունք մինչև այդ ստանալով իր վերջին աշխատավարձը՝ ամբողջ ծավալով: Նույնը պետք է տեղի ունենա նաև այն դեպքում, երբ կառուցվածքային մակարդակում փոփոխությունների բացակայության պայմաններում կրճատվի տվյալ դատախազի զբաղեցրած հաստիքը. այս դեպքում նույնպես «կրճատված» դատախազը պետք է պահպանի իր դատախազի կարգավիճակը, ունենա մեկ այլ ստորաբաժանման մեջ

նշանակվելու իրավունք՝ միջ այդ պահպանելով և աշխատավարձը և, կրկնում ենք, ոչ թե դատախազի պաշտոնից, այլ դատախազի կարգավիճակից բխող բոլոր վերաբերելի երաշխիքները (մասնագիտական ստաժի պահպանում և այլն): Հենց սրանում է կայանում դատախազի կարգավիճակի հասկացությունն օրենքով ամրագրելու և այդ կարգավիճակը դատախազի կողմից զբաղեցրած *պաշտոնի* հասկացությունից տարանջատելու գործնական նշանակությունը:

3. Ինչպես նշվեց Հետազոտության մի շարք նախորդող կետերին նվիրված այլ իրավահարաբերությունների հետ կապված ևս (պաշտոնի նշանակում, առաջխաղացում և այլն), մեջբերված հոդվածների կարգավորումներում նույնպես առկա են դատախազի կարգավիճակի միասնականության ատրիբուտին հակասող դրույթներ: Մասնավորապես, դարձյալ կախված գործունեության տեսակից, այն է՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի և դատախազների նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժին առնչվող տարբեր կարգավորումներ: Սա, ինչպես նկատեցինք, անթույլատրելի է, քանի որ առարկայական գործառույթների տարբերությունները, պայմանական կոչենք՝ «դատախազական ենթակայության» շրջանակները, չեն կարող ազդել դատախազի *կարգավիճակից* գրկվելու հիմքերի կամ ընթացակարգի տարբերակման վրա:

Անհրաժեշտ է հրաժարվել այդ տարբերություններից և բոլոր դատախազների համար որդեգրել այն միասնական կարգավորումները, որոնք առավել նպաստավոր են նրանց անկախության երաշխիքների առավել արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից:

4. Մեջբերված հոդվածները նշում են միայն, թե ինչի համար կարող է պատասխանատվության ենթարկվել դատախազը՝ **առանց գոնե սկզբունքի մակարդակով, ամրագրելու, թե ինչի համար դատախազը չի կարող ենթարկվել պատասխանատվության: Օրինակ, ԵՂԽՄ Կարծիք 2-9-ում ուղղակի սահմանվում է, որ**

«86. Իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական համակարգում անձի արդարացումը չպետք է հանգեցնի տվյալ գործի համար պատասխանատու դատախազի դեմ կարգապահական վարույթի»:

Միանշանակ, նման մոտեցումը միջազգային չափորոշիչները որդեգրել են հիմքում ունենալով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթները՝ դատավորների կողմից կամ նրանց մասնակցությամբ կայացված դատական ակտերը բեկանելու հիմքով հարուցելու արգելքը, որը գործուն երաշխիք է դատավորների համար: **Այսպիսով օրենքում պետք է հստակ և որպես սկզբունք ամրագրել դատախազների անձեռնմխելիությունը այն դեպքերում, երբ բարեխղճորեն նա կայացնում է մի որոշում, սակայն դատավարական/դատական ճանաչողության հաջորդող կամ իրավասու սուբյեկտը հանգում է գործով այլ եզրահանգման ու վերացնում այդ որոշումը:**

3.7.2. Դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունները դադարեցնելու կարգը

«Պետությունները պետք է ապահովեն, որպեսզի դատախազների դեմ կարգապահական վարույթները կարգավորվեն օրենքով, և պետք է երաշխավորեն արդարացի և օբյեկտիվ գնահատում ու որոշման կայացում, որը պետք է ենթակա լինի անկախ և անկողմնակալ վերանայման»²⁹⁰:

²⁹⁰ ԵՂԽՄ Կարծիք 2-9, կետ 87; տես նաև՝ ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարական, կետ 5 (ե), ինչպես նաև՝ *Guidelines on the Role of Prosecutors* adopted by the Eighth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Havana, Cuba, 27 August to 7 September 1990, § 22.

ՀՀ Դատախազության մասին օրենքի համապատասխան հոդվածների վերաբերելի դրույթները հետևյալն են՝

«Հոդված 55. Կարգապահական տույժ նշանակելու իրավասությունը

1. Սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգապահական տույժերը նշանակում է գլխավոր դատախազը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի: **Գլխավոր դատախազը սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու հիմքով տույժ նշանակում է միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած եզրակացության հիման վրա՝ եզրակացությունն ստանալու պահից եռօրյա ժամկետում:**

2. Սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական տույժը²⁹¹ գլխավոր դատախազի տեղակալների և դատախազների նկատմամբ գլխավոր դատախազը նշանակում է էթիկայի հանձնաժողովի համապատասխան դրական եզրակացության հիման վրա: ...:

Հոդված 56. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը և ժամկետները

1. Սույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի, դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցել գլխավոր դատախազը՝

- 1) իր նախաձեռնությամբ կամ
- 2) սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատախազների միջնորդությունների հիման վրա կամ
- 3) ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա.
- 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով գլխավոր դատախազին դիմելու մասին դատարանի սանկցիայի հիման վրա:

2. Սույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով²⁹² սահմանված հիմքով դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդում կամ միջնորդություն ստանալու դեպքում գլխավոր դատախազը, իսկ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում էթիկայի հանձնաժողովը եռօրյա ժամկետում հաղորդումը կամ միջնորդությունն ուղարկում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Եթե դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նախաձեռնողը գլխավոր դատախազն է, ապա նա եռօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում տեղեկատվություն դատախազի կողմից սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու փաստի մասին:

... 4. Էթիկայի հանձնաժողովը հասցեագրված՝ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հաղորդումների հիման վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի, դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունի նաև էթիկայի հանձնաժողովը նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Նիստի անցկացման կարգի վրա տարածվում են սույն օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով նախատեսված նորմերը:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված միջնորդությունները, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հաղորդումներն ու հրապարակումներն ինքնին կարգապահական վարույթ հարուցելու հիմք չեն:

6. Կարգապահական վարույթը հարուցելու և իրականացնելու, այդ թվում՝ սույն հոդվածի 11-րդ և 12-րդ մասերով սահմանված իրավունքների և պարտականությունների իրականացման կարգը սահմանում է գլխավոր դատախազը:

7. Իր կամ էթիկայի հանձնաժողովի՝ կարգապահական վարույթ հարուցելու որոշման հիման վրա գլխավոր դատախազը եռօրյա ժամկետում ստեղծում է դատախազներից կազմված կարգապահական վարույթ իրականացնող հանձնախումբ կամ դրա իրականացումը հանձնարարում է մեկ դատախազի:

²⁹¹ Այսինքն՝ պաշտոնից ազատումը:

²⁹² Օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելը:

... 11. Առերևույթ կարգապահական խախտման մեջ կասկածվող դատախազն ունի՝

1) իրավունք՝ ծանոթանալու իր իրավունքներին և պարտականություններին.

2) իրավունք՝ իմանալու, թե ինչ կարգապահական խախտում է իրեն վերագրվում, պարզաբանում տալու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ.

3) իրավունք՝ միջնորդություններ ներկայացնելու կարգապահական վարույթի ընթացքում առանձին գործողություններ կատարելու համար, ինչպես նաև ներկայացնելու նյութեր, իր պարզաբանումները հիմնավորող փաստական տվյալներ՝ կարգապահական վարույթի նյութերին կցելու համար.

4) իրավունք՝ բացարկ հայտնելու կարգապահական վարույթ իրականացնող անձին, եթե կան հիմքեր ենթադրելու, որ կարգապահական վարույթ իրականացնող անձն ուղղակի կամ անուղղակի շահագրգռված է կարգապահական վարույթի ելքով: Բացարկը լուծում է գլխավոր դատախազը.

5) իրավունք՝ ծանոթանալու կարգապահական վարույթի նյութերին, բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների, եթե չունի դրանց առնչվելու թույլտվություն, ինչպես նաև կարգապահական վարույթի ընթացքի, նյութերի վերաբերյալ ներկայացնելու առաջարկություններ, դիտողություններ և միջնորդություններ.

6) օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

... 14. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքում կարգապահական վարույթ իրականացնողը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պահանջել հաղորդումը ներկայացրած անձից կամ մարմնից:

15. Սույն հոդվածի 13-րդ մասով սահմանված պահանջներին չհամապատասխանող հաղորդումը այն ստանալու պահից յոթ օրվա ընթացքում վերադարձվում է հաղորդումը ներկայացրած անձին կամ մարմին:

16. Դատախազն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումը օրենքով սահմանված կարգով բողոքարկելու դատարան: *(56-րդ հոդվածը փոփ. 21.01.20 ՀՕ-26-Ն):*

Հոդված 57. Էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգը

1. Կարգապահական վարույթի ավարտից հետո՝ յոթնօրյա ժամկետում, գլխավոր դատախազը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը (սույն հոդվածում այսուհետ՝ հարց), որը կարող է ներառել նաև սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն, ներկայացնում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը:

2. Էթիկայի հանձնաժողովի այն դատախազ անդամը, որի վերաբերյալ հարցը ներկայացվել է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը, չի մասնակցում այդ քննարկմանը: Եթե այդ անդամը էթիկայի հանձնաժողովի նախագահն է, ապա էթիկայի հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ հանձնաժողովի անդամներից ընտրում է էթիկայի հանձնաժողովի ժամանակավոր նախագահ:

3. Էթիկայի հանձնաժողովը հարցը քննում է դրա համար հրավիրված նիստում և գաղտնի քվեարկությամբ որոշում կարգապահական խախտման փաստի առկայությունը, կատարված կարգապահական խախտման մեջ դատախազի մեղավորության հարցը, իսկ սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն ներկայացրած լինելու դեպքում՝ նաև «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու հնարավորության հարցը:

... 5. Էթիկայի հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ կարգապահական վարույթի արդյունքներով ձեռք բերված տվյալները գնահատում է իր ներքին համոզմամբ՝ հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմամբ:

6. Սույն հոդվածով սահմանված կարգով հարցի քննարկման արդյունքում էթիկայի հանձնաժողովը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) կարգապահական խախտման փաստի բացակայության մասին.
- 2) կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության մասին.
- 3) կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության բացակայության մասին:

7. Կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության մասին որոշում կայացնելու դեպքում էթիկայի հանձնաժողովը սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն ներկայացրած լինելու դեպքում որոշում է կայացնում

նան բացասական կամ դրական եզրակացություն տալ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ:

8. Սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով սահմանված որոշում կայացնելու դեպքում, ինչպես նաև «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ դրական եզրակացություն ներկայացնելու դեպքում գլխավոր դատախազը եռօրյա ժամկետում նշանակում է սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան կարգապահական տույժի տեսակներից մեկը:

9. Կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության մասին որոշում կայացնելու և «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ բացասական եզրակացություն ներկայացնելու դեպքում գլխավոր դատախազը կարող է նշանակել «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժի տեսակը, բացառությամբ այն դեպքերի, երբ կարգապահական խախտումը վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման դատախազներին, որոնց նկատմամբ կարող է նշանակվել սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված տույժերից որևէ մեկը:

10. Դատախազը կարող է դիմել էթիկայի հանձնաժողով դատախազի վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի մեկնաբանություններ ստանալու խնդրանքով: (57-րդ հոդվածը լրաց. 16.04.20 ՀՕ-245-Ն):

Հոդված 58. Կարգապահական տույժը հանելը և մարելը

1. Սույն օրենքով սահմանված կարգով նշանակված կարգապահական տույժը համարվում է մարված, եթե դատախազը կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել:

2. «Պաշտոնից ազատում», «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կամ «դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժեր նշանակվելու օրվանից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետն անցնելուց հետո անձի նախկին կարգավիճակը չի վերականգնվում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:

3. Կարգապահական տույժն այն նշանակող անձի որոշմամբ կարող է հանվել, բացառությամբ «պաշտոնից ազատում», «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով», «դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժերի, մինչև կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ վեց ամիսը լրանալը, սույն օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում:

4. «Պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կամ «դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժերի նշանակման դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի ավարտից հետո համապատասխանաբար նախկին պաշտոնում կամ դրան համարժեք այլ պաշտոնում կամ նախկին դասային աստիճանի վերականգնումը կարող է իրականացվել դատախազների հերթական ատեստավորման, իսկ գլխավոր դատախազի որոշմամբ՝ նաև արտահերթ ատեստավորման արդյունքների հիման վրա:

Հոդված 52. Խրախուսանքի տեսակները և հիմքերը

... 2. Կարգապահական տույժ ունեցող դատախազի նկատմամբ որպես խրախուսանք կարող է կիրառվել միայն նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը»:

Մեջբերված նորմերի հետ կապված հիմնական մտահոգությունները հետևյալն են՝

1. Հոդված 55-ի 1-ին մասից բխում է, որ Գլխավոր դատախազը սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու հիմքով տույժ նշանակում է միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած եզրակացության հիման վրա՝ եզրակացությունն ստանալու պահից եռօրյա ժամկետում: Պարզ չէ, սակայն, թե որքանով են ԳԴ կողմից հաշվի առնվելու ԿԿՀ-ի ներկայացրած փաստական հանգամանքները: Սա կապված է ԳԴ կողմից կայացվող որոշումների պատճառաբանված լինելու ընդհանուր պահանջի բացակայության հետ՝ ընդ որում, թե կարգապահական տույժ կիրառելիս, թե հակառակ դեպքում: Օրենքի 55-րդ հոդվածի կարգավորումներից բխում է, որ բոլոր դեպքերում, եթե ԳԴ-ն չի ցանկանում, ապա դատախազի նկատմամբ կարգապահական տույժ չի նշանակվում: Այսինքն՝ տույժ չնշանակելու առթիվ ԳԴ բոլոր որոշումները վերջնական են բոլոր դատախազների

վերաբերյալ: Բացի այդ, Օրենքով կարգավորված չէ, դատախազին կարգապահական տույժի ենթարկելուց հրաժարվելու, ինչպես նաև՝ տույժ կիրառելու մասին որոշումների հրապարակայնության ռեժիմը: Կարծում ենք, բոլոր դեպքերում այդ որոշումները պետք է լինեն ոչ միայն պատճառաբանված, այլ նաև՝ հրապարակային՝ ճիշտ այնպես, ինչպես դատավորի վերաբերյալ ԲԴԽ կողմից կայացվող համապատասխան որոշումները: Ի թիվս այլի, սա նշանակում է, որ Օրենքում պետք է ամրագրված լինեն այս որոշումների կառուցվածքի վերաբերյալ նորմեր՝ ներածական մաս, վերաբերելի փաստերի ներկայացում և վերլուծություն, իրավական գնահատական/որակում և եզրափակիչ կամ որոշիչ մաս:

2. Օրենքի 56-րդ հոդվածի 16-րդ մասը ամրագրում է կարգապահական տույժ կիրառելու մասին որոշման դեմ դատախազի կողմից բողոք բերելու իրավունքը, սակայն չկա իրավունք բողոքարկելու կարգապահական տույժ չկիրառելու մասին որոշման հիմքերի կամ պատճառաբանության մասով: Դատախազը պետք բողոքարկման իրավունք ունենա բոլոր այն դեպքերում, երբ նա համաձայն չէ այսպես կոչված ոչ արդարացման հիմքով, ասենք՝ վաղեմության ժամկետը (որը 6 ամիս է՝ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն) լրանալուց հետո վարույթը կարճելու դեպքում, ինչպես նաև եթե ԳԴ որոշումը, չնայած եզրափակիչ մասով բարենպաստ է դատախազի համար, սակայն պարունակում է նրա կողմից կարգապահական զանցանքի մեջ անմեղությունը կասկածի տակ դնող դատողություններ կամ եզրահանգումներ:

3. Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Էթիկայի հանձնաժողովի այն դատախազ անդամը, որի վերաբերյալ հարցը ներկայացվել է Էթիկայի հանձնաժողովի քննարկմանը, չի մասնակցում այդ քննարկմանը: Մա ուղիղ հակասում է դատախազի արդարացի լսումների կամ իր հարցի արդարացի քննության միջազգային մեջբերված չափանիշներով սահմանված իրավունքին ու դրանից բխող երաշխիքներին, առաջին հերթին՝ պաշտպանության իրավունքին, որի գրավականը հենց այն նիստին մասնակցելու իրավունքն է, որի արդյունքում նա կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

Բացի այդ, սա տարօրինակ կարգավորում է, հաշվի առնելով այն իրավունքները, որոնք Օրենքի 56-րդ հոդվածի 11-րդ հոդվածով ունի կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող դատախազը, այն է՝ ծանոթանալու իր իրավունքներին և պարտականություններին, իմանալու, թե ինչ կարգապահական խախտում է իրեն վերագրվում, պարզաբանում տալու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ, միջնորդություններ ներկայացնելու կարգապահական վարույթի ընթացքում առանձին գործողություններ կատարելու համար, ինչպես նաև ներկայացնելու նյութեր, իր պարզաբանումները հիմնավորող փաստական տվյալներ՝ կարգապահական վարույթի նյութերին կցելու համար, իրավունք՝ բացարկ հայտնելու կարգապահական վարույթ իրականացնող անձին, եթե կան հիմքեր ենթադրելու, որ կարգապահական վարույթ իրականացնող անձն ուղղակի կամ անուղղակի շահագրգռված է կարգապահական վարույթի ելքով:

Կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող դատախազի արդարացի դատաքննության իրավունքի մաս կազմող պաշտպանության իրավունքի տեսակետից խնդրահարույց է նաև Օրենքի 56-րդ հոդվածի 11-րդ կետը, որի համաձայն կարգապահական վարույթում կարող են լինել և հետևաբար՝ դատախազի դեմ կարող են օգտագործվել նյութեր, որոնց նա ծանոթանալու, հետևաբար՝ դրանցում տեղ գտած փաստերին կամ դատողություններին արձագանքելու իրավունք չունի, եթե դրանք պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններ են և մեղադրվող

դատախազը չունի դրանց առնչվելու թույլտվություն, ինչպես նաև կարգապահական վարույթի ընթացքի, նյութերի վերաբերյալ ներկայացնելու առաջարկություններ, դիտողություններ և միջնորդություններ: **Սա հակասում է արդարացի դատաքննության բոլոր չափորոշիչներին, և առանձին փաստարկված քննադատության կարիք չունի:** Նշված տեղեկությունների դատախազի համար ոչ մատչելի լինելը, ինչպես և էՀ եզրակացությամբ ավարտվող նիստին մեղադրվող դատախազի մասնակցության արգելքը պատրանքային և տեսական է դարձնում վերը նշված պաշտպանական իրավունքներից յուրաքանչյուրը: ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագիրը Հանձնարարականի 5(գ)- կետի վերաբերյալ, որը սահմանում է, որ «դատախազները պետք է ունենան բողոքարկման համարժեք ընթացակարգերից օգտվելու, այդ թվում՝ դատարան դիմելու հնարավորություն, եթե բացասական հետևանքներ են առաջացել նրանց իրավական կարգավիճակի համար», նշում է, որ այդ «կետում օգտագործված «դատարան» (tribunal) բառը օգտագործված է **Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում դրան տրված իմաստով**»: Սրանից ուղիղ բխում է, որ դատախազի համար պետք է առաջ գան մեղադրյալի բոլոր իրավունքները, այդ թվում՝ ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված անմեղության կանխավարկածը, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված մեղադրյալի պաշտպանական իրավունքը կազմող բոլոր վերաբերելի իրավունքները, ներառյալ՝ կարգապահական զանցանք կատարելու իրեն ներկայացրած մեղադրանքի հիմքում ընկած փաստերին ծանոթանալու և դրանք արդյունավետորեն վիճարկելու իրավունքը:

Վենետիկի Հանձնաժողովը այդ իրավունքներից մեկի՝ Դատախազության մասին օրենքով ուղիղ արգելված «լսված լինելու» իրավունքի մասին նշում է՝

«Կարգապահական, այդ թվում, իհարկե՝ դատախազներին պաշտոնից ազատելու հետ կապված գործերով, համապատասխան դատախազը պետք է ունենա մրցակցային վարույթի ընթացքում լսվելու իրավունք»²⁹³:

Կարգապահական տույժ նշանակելու մասին ԳԴ որոշման դատական բողոքարկման իրավունքը՝ արդյունավետ և գործնական լինելու համար, ներառում է այն փաստերի վիճարկումը, որոնք դրվել են դատախազի դեմ կայացված որոշման հիմքում: Այսինքն՝ եթե դատախազը չիմանա ամբողջությամբ, թե որ փաստերն են օգտագործվել իր դեմ կամ որ տեղեկություններն են օգտագործվել այդ փաստերը գնահատելու համար, նա ի վիճակի չի լինելու արդյունավետ կերպով իրացնել իր դատական պաշտպանության իրավունքը:

3. Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 8-րդ մասերի կարգավորումներից բխում է, որ **էՀ-ն** որոշում է կայացնում նաև նաև կոնկրետ տույժը կիրառելու բացասական կամ դրական եզրակացություն տալու մասին **միայն այն դեպքում, երբ ԳԴ-ն էՀ-ին դիմել է «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու միջնորդությամբ (հոդված 57, մաս 7) ներկայացրած լինելու դեպքում**: Մտացվում է, որ որ ԳԴ-ն վերջում նշանակում է հենց այն տույժը, որը նշվել է էՀ որոշման մեջ, և անհասկանալի է, թե ինչու է անհրաժեշտ, որ ԳԴ-ն 57-րդ հոդվածի 1-ին մասով էթիկայի հանձնաժողովի քննարկմանը ներկայացնի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական տույժ նշանակելու, այն է՝ պաշտոնից ազատելու միջնորդություն, հետո էՀ-ն տա դրական եզրակացություն, ու հետո էլ դեռ՝ ԳԴ-ն հաստատի այդ որոշումը: Անհրաժեշտ է, որպեսզի էՀ-ն եզրակացություն տա նաև մյուս տույժի տեսակները կիրառելու անհրաժեշտության մասին, ինչը ենթադրում է, որ

²⁹³ ՎՀ-ի Զեկույցը դատախազության անկախության չափորոշիչների մասին», կետ 52, (բոլոր ընդգծումները՝ ՎՀ-ի):

1) քանի որ ԷՀ-ն, ըստ էության, քննում է կարգապահական խախտում թույլ տված լինելու հարցը, ԳԴ-ն չպետք է միջնորդի միանգամից կոնկրետ պատժամիջոցի՝ ազշխատանքից ազատելու համար.

2) ԳԴ-ն պետք է ԷՀ-ին դիմի միայն դատախազի կողմից կարգապահական խախտման փաստը կատարած լինելը քննելու միջնորդությամբ.

3) այդ փաստը հաստատելով, ԷՀ-ն պետք է առաջարկի նաև դրան համարժեք պատիժը, և վերջապես՝

4) ԳԴ-ն պետք է պարտավոր լինի կայացնել պատճառաբանված որոշում՝ ԷՀ-ի եզրակացությանը համապատասխանող որոշում չկայացնելու, այսինքն՝ ԷՀ առաջարկված տույժը չկիրառելու համար:

4. Օրենքի 57-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության մասին որոշում կայացնելու և «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ բացասական եզրակացություն ներկայացնելու դեպքում ԳԴ-ն կարող է նշանակել «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժը՝ բացառությամբ, երբ կարգապահական խախտումը վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող ստորաբաժանման դատախազներին: Սա, հակասում է դատախազի կարգավիճակի միասնականության սկզբունքին, և կարգապահական պատասխանատվության հիմքերը և ընթացակարգը չեն կարող կախված լինել նրանից, թե ինչ հանցատեսակներով է իրականացվում դատախազական հսկողությունը կամ ընդհանրապես ինչպիսի գործառնության լիազորվածություն կամ պաշտոն ունի այս կամ դատախազը:

5. Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նշանակված կարգապահական տույժը համարվում է մարված, եթե դատախազը կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել: Սա չափազանց կարճ ժամկետ է: Հաշվի առնելով, որ Օրենքի 56-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, «կարգապահական վարույթը հարուցվում է կարգապահական խախտում հայտնաբերվելու օրվանից 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այն կատարելու օրվանից 12 ամսվա ընթացքում», իսկ 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «մեկ կարգապահական վարույթի շրջանակներում, անգամ եթե նույն դատախազը կատարել է մի քանի կարգապահական խախտում, դատախազի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ», ապա կարող է ստացվել, որ 22-ից մինչև 65 տարեկան դառնալը նույն դատախազը կհասցնի առնվազն 30-35 անգամ ենթարկվել կարգապահական տույժի ու համարվել երբևէ խախտում չկատարած դատախազ:

6. Օրենքի 56-րդ հոդվածի համաձայն, կարգապահական վարույթը հարուցելու և իրականացնելու, այդ թվում՝ սույն հոդվածի 11-րդ և 12-րդ մասերով սահմանված իրավունքների և պարտականությունների իրականացման կարգը սահմանում է գլխավոր դատախազը: Ակնհայտ է, որ դատախազի համար արդարացի դատաքննության իրավունքների իրացման մեխանիզմները պետք է նախատեսված լինեն օրենքով, այլ ոչ թե այն նույն պաշտոնատար անձի կողմից, ով այդ վարույթի արդյունքում կայացնում է վերջնական որոշումները:

7. 58-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կամ «դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժերի նշանակման դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի ավարտից հետո համապատասխանաբար նախկին պաշտոնում կամ դրան համարժեք այլ պաշտոնում կամ

նախկին դասային աստիճանի վերականգնումը կարող է իրականացվել դատախազների հերթական ատեստավորման, իսկ գլխավոր դատախազի որոշմամբ՝ նաև արտահերթ ատեստավորման արդյունքների հիման վրա: Վերջին ԳԴ լիազորությունը լրիվ ավելորդ է և ձևական է դարձնում թե ատեստավորման իմաստը: Վերջապես, Օրենքի 52-րդ հոդվածի (Խրախուսանքի տեսակները և հիմքերը) 2-րդ մասի համաձայն, «Կարգապահական տույժ ունեցող դատախազի նկատմամբ որպես խրախուսանք կարող է կիրառվել միայն նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը»: **Փաստացի, Գլխավոր դատախազը կարող է նշանակել որևէ տույժ ու հետո արագ, առանց պատճառաբանության, որպես խրախուսանք՝ վերացնել, ինչով էլ և ԷՀ-ի եզրակացություններն ու վարույթը զրկվում են իրենց նշանակությունից: Առաջարկ՝ ԳԴ-ն պետք է համաձայնի կամ չհամաձայնի ԷՀ-ի եզրակացության հետ, այլ ոչ թե սեփական եզրակացությամբ փաստացի հանդես գա, թեկուզ՝ պատժի մասով: Եվ սա պետք է վերաբերի, ինչպես նշեցինք, բոլոր տույժերի առթիվ ԷՀ-ի եզրակացություններին:**

Ներկայումս գործող, այդ թվում նաև՝ ԷՀ-ի կազմավորման կարգավորումներով ստեղծվում է մի պատկեր, որտեղ Գլխավոր դատախազը

- ձևավորում է, անմիջապես կամ միջնորդավորված կերպով, ԷՀ 7 անդամից բաղկացած կազմն ամբողջությամբ՝ ԷՀ անդամներ նշանակելով իր տեղակալներից (որոնց բոլորին էլ ինքն է նշանակում) մեկին, ԷՀ անդամ 3 գիտնականներին (այստեղ արդեն իսկ անմիջապես իր կողմից նշանակված ԷՀ անդամները կազմում են մեծամասնությունն)։
- նշանակում է այն բոլոր բարձրաստիճան դատախազներին, որոնք կատարում են ԷՀ մնացած 3 անդամների ընտրությունը (դատախազի պաշտոնում նշանակվելու և հատկապես՝ առաջխաղացման դեպքում ԳԴ-ի իրականում բացարձակ հայեցողության մասին խոսվել է վերևում)։
- անգամ երբ այս, ըստ էության՝ ԳԴ-ի կողմից ամբողջությամբ ձևավորված ԷՀ-ն եզրակացություն ներկայացնում անձին դատախազի պաշտոնից ազատելու մասին, ԳԴ-ն իրավունք ունի այդ եզրակացությանը չհետևելու, սակայն՝
 - o պարտավոր է նշանակել այլ, ավելի մեղմ տույժ, սակայն՝
 - o իրավունք ունի հանել այդ տույժը՝ Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով՝ *Կարգապահական տույժ ունեցող դատախազի նկատմամբ որպես խրախուսանք կարող է կիրառվել միայն նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը, որի համար նվազագույն ժամկետներ նախատեսված չեն*։
- Բոլոր տույժերը, Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նշանակում է ԳԴ-ն, բացառությամբ բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների նկատմամբ «դասային աստիճանի իջեցում» տույժի, և հետևաբար՝ ըստ 52-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերի՝ նույն Նախագահն էլ պետք է կիրառի իր նշանակված տույժը ժամկետից շուտ հանելը որպես խրախուսանքի միջոց: Մյուս բոլոր դեպքերում ԳԴ-ն նշանակում է տույժ, խրախուսանքի միջոցներ, դրանց թվում՝ տույժը ժամկետից շուտ հանելը՝ առանց դատախազի տույժի տակ գտնվելու նվազագույն ժամկետի սահմանման՝ այս ամենով ի չիք դարձնելով ԷՀ եզրակացությունների իմաստը:

Կարծում ենք, որ մեր կողմից առաջարկվող ու միջազգային չափորոշիչներից բխող կարգավորումները կարող են ապահովել դատախազների կարգապահական պատասխանատվության վարույթների արդարացիությունը և օբյեկտիվությունը, ինչպես

նան, իսկ արդյունքում՝ դատախազների բարեվարքությունը, անկախությունը ու դատախազության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Դատախազների կարգապահական պատասխանատվության հարցերի հետ սերտորեն կապված է դատախազի լիազորությունների կասեցման ինստիտուտը: Դատախազության մասին օրենքի 61-րդ հոդվածի (Դատախազի լիազորությունները կասեցնելը) համաձայն՝

«1. Դատախազի լիազորությունները կասեցվում են դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում մինչև համապատասխան վերջնական որոշման ընդունումը:

2. Դատախազի լիազորությունները կարող են կասեցվել դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվելու դեպքում մինչև տվյալ վարույթով վերջնական որոշման ընդունումը:

3. Դատախազների լիազորությունները կասեցվում են գլխավոր դատախազի հրամանով:

4. Դատախազի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա աշխատավարձը պահպանվում է»:

Նման, հատկապես՝ մեջբերված հոդվածի 2-րդ մասով տրվող կարգավորումը հակասում է դատախազի անմեղության կանխավարկածին, քանի որ ընդհանրապես չեն սահմանվում կասեցման որոշման հիմքերը, ինչպես նաև այդ որոշման բողոքարկման հնարավորությունը: Եթե նույն հոդվածի 1-ին մասով սահմանված, այն է՝ քրեական հետապնդման հիմքով դատախազի լիազորությունների կասեցման, ընդ որում իմպերատիվ պահանջը («Դատախազի լիազորությունները կասեցվում են») հասկանալի է ու նաև՝ թույլատրելի Դատախազության նկատմամբ արտաքին վերահսկողությունն ապահովելու համար, ապա կարգապահական վարույթի դեպքում կասեցման հարցը թողնված է հայեցողական որոշման («Դատախազի լիազորությունները կարող են կասեցվել»), ինչը ստեղծում է կամայականությունների վտանգ:

Բացի այդ պարզ չէ, թե ինչ է նշանակում 62-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործված «վերջնական որոշում» եզրույթը՝ արդյոք նկատի է ունեցվում ԳԴ որոշումը, թե՛ այն բողոքարկելու դեպքում՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը:

3.8. Դատախազների վարքագծի պահանջները

3.8.1. Դատախազների արտադատարանական և դատարանական վարքագիծը տարանջատելու և վերջինս դատավարական նորմերով կարգավորելու անհրաժեշտությունը

Դատախազների վարքագծի կամ էթիկայի կանոնները այն բարոյական պահանջներն են, որոնք ներկայացվում են դատախազներին արտադատավարական հարաբերություններում: Այդ իսկ պատճառով, դատական նիստում մեղադրողի կողմից դրսևորվող ֆունկցիոնալ վարքագիծը բույթագրող պահանջները հանդիսանում են դատավարական պարտականություններ, որոնց կատարման նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է դատական նիստը նախագահողի և ընդհանրապես՝ դատարանի կողմից՝ վերջինիս գործառույթների շրջանակներում: Օրինակ՝ օբյեկտիվության պահանջը, հետապնդմանը ենթարկվող անձի օգտին վկայող ապացույցներ ձեռք բերելը, դրանք դատարանին ներկայացնելը, կողմնակալ ընկալվելու օրենքով սահմանված հիմքերի դեպքում ինքնաբացարկ ներկայացնելը, արդեն իսկ դարձել են դատավարական նորմեր, և չեն դիտարկվում որպես էթիկայի պահանջներ: Միաժամանակ, դրանց պահպանման նկատմամբ պարբերական ստուգումը ենթադրում է

նան որոշակի արտքային միջոցների կիրառում, մասնավորապես՝ մոնիթորինգի և գործունեության պարբերական գնահատում, որոնք քննարկվում են հաջորդ ենթակետում:

Դատախազների դատարանական և արտադատարանական վարքագծի կամ այլ բառերով ասած՝ վարքագծի հատուկ և ընդհանուր պահանջները տարանջատելը կարևոր է նախևառաջ դրա հետևանքով առաջացող սանկցիաների և, համապատասխանաբար՝ ներգրավված մարմինների գործառույթների հստակ տարբերակման պատճառով: Ընդհանուր և հատուկ պահանջները պետք է որպես այդպիսիք հստակ սահմանվեն Դատախազության մասին օրենքում, դրանց մեկնաբանության և կիրառման չափանիշներն ու չափորոշիչները՝ սահմանվեն առանձին իրավական ակտով, մասնավորապես՝ դատախազների ժողովրդավարական ներկայացուցչականության հիման վրա ձևավորված մարմնի (այն է՝ Դատախազների ընդհանուր ժողովի) կողմից ընդունված Ուղեցույցներով, և վերջապես՝ կիրառվեն այդ մարմնի կողմից ձևավորված ու դատախազության կառուցվածքային միավոր համարվող և դատախազության կոլեգիայում իր նախագահով ներկայացված էթիկայի հանձնաժողովի կողմից:

Այսպիսով, որ էթիկայի վարքագծի կանոնների տակ չպետք է հասկանալ դատախազների դատավարական, այսինքն՝ դատավարական օրենսգրքերով կարգավորվող վարքագիծը: Ընդ որում, այստեղ պետք է դիտարկել նաև մասնագիտական էթիկայի վարքագծի այն պահանջները, որոնք դատարանական են, սակայն հստակ կամ ընդհանրապես ամրագրված չեն օրենսգրքերում և միաժամանակ պարզ է, որ այդ վարքագիծը դատախազը կարող է դրսևորել միայն դատարանում: Օրինակ, դատախազը միջնորդում է դատարանին որպես վկա հրավիրելու որևէ անձի, սակայն այդ անձը պաշտպանական կողմի հակընդդեմ հարցաքննության ընթացքում տալիս է պատասխաններ, որոնք ձեռնտու չեն դատախազին, և վերջինս միջնորդում է դատարանին դադարեցնել այդ վկայի հարցաքննությունը: Կամ՝ դատախազը, իշխանության ներկայացուցչի դեմ բռնություն գործադրելու վերաբերյալ քրեական գործով (ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով), տուժող 3 ոստիկանների՝ իրենց նկատմամբ ամբաստանյալի կողմից բռնություն գործադրելու մասին նույնաբովանդակ ցուցմունքներին ի պատասխան մեղադրյալի արված այն պնդմանը, որ նա առաջին անգամ է տեսնում այս 3 ոստիկաններին, դիմելով ամբաստանյալին, հայտարարում է՝ փաստացի ճնշում գործադրելով դատարանի վրա, որ փաստորեն նա սուտ մատնության մեջ է մեղադրում այդ ոստիկաններին, հետևաբար կամ նա կամ այդ ոստիկանները են տվյալ գործով ցանկացած ելքի դեպքում, ենթարկվելու են քրեական քրեական պատասխանատվության՝ ամբաստանյալը՝ մեղադրական դատավճիռ, իսկ ոստիկանները՝ արդարացման դատավճիռ կայացվելու դեպքում:

Մեր կարծիքով, այս դեպքերում, քանի որ դատախազի գործողությունները այստեղ ուղղակիորեն կապված ապացուցման գործընթացի հետ, պետք է կիրառվեն զուտ դատավարական վարքագծի նորմերը և արձագանքման իրավունքը՝ պատկանի դատական նիստը նախագահողին, այլ ոչ թե Դատախազության հանձնաժողովին, այսինքն՝ դատախազը ենթարկվի դատական սանկցիայի՝ ավելի ընդհանուր կերպով ձևակերպված դատավարական նորմերի կամ սկզբունքների, այսինքն՝ նկարագրված դեպքերում՝ անմեղության կանխավարկածի, ապացուցման ընթացքում կողմերի հավասարության սկզբունքի խախտման համար՝ այդ ավելի ընդհանուր դատավարական նորմերի ու սկզբունքներին դատարանի կողմից տրված մեկնաբանության հիման վրա:

3.8.2. Դատախազների վարքագծի կանոնները և «դրանցից բխող պահանջները»

Դատախազության մասին օրենքի վերաբերելի կարգավորումները հետևյալն են՝

«Հոդված 71. Դատախազի վարքագծի կանոնները

1. Դատախազի վարքագծի կանոնները սահմանվում են սույն օրենքով, իսկ սույն օրենքով սահմանված վարքագծի կանոններից բխող պահանջները՝ գլխավոր դատախազի հրամանով:

... 3. Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց համար պարտադիր են սույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-9-րդ կետերով սահմանված կանոնները:

4. Դատախազն իր վարքագծով, գործունեությամբ, մասնագիտական և բարոյական հատկանիշներով պետք է ձգտի ապահովել դատախազության հեղինակությունը, անկողմնակալությունն ու անաչառությունը, նպաստել դատախազության նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը, դատախազական գործունեության անկախության ապահովմանը, մասնակցել վարքագծի բարձր չափորոշիչների արմատավորմանը:

Հոդված 72. Դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները

1. Դատախազը պարտավոր է՝

1) ցանկացած պայմաններում ու իրավիճակում իր գործունեությամբ, գործնական, մասնագիտական և բարոյական հատկանիշներով զերծ մնալ դատախազության բարձր հեղինակությունը ոչ հարիր կամ այն վարկաբեկող, դատախազության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող կամ դատախազության անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուց, այդ թվում՝ հոգուտ որևէ անձի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված անձնական երաշխավորություն տալուց.

2) ցանկացած պայմաններում ու իրավիճակում խուսափել դատախազի կոչմանը անհարիր այնպիսի գործնական, մասնագիտական կամ բարոյական կապերից կամ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որոնք կարող են արատավորել դատախազի հեղինակությունը, բարի համբավը, պատիվը և արժանապատվությունը.

3) բարձր պահել դատախազության հեղինակությունը, անձնական վարվեցողությամբ և գործունեությամբ հարգանք ու վստահություն ներշնչել դատախազության և իր անձի նկատմամբ.

4) դրսևորել քաղաքական գսպվածություն և չեզոքություն, ձեռնպահ մնալ որևէ վարքագիծ դրսևորելուց, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել, ինչպես նաև չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության նկատմամբ.

5) չանդանակցել այնպիսի մասնագիտական կամ հասարակական կազմակերպությունների, որոնց գործունեությունը կապված է էթնիկական, ազգային, դավանանքի կամ ֆիզիկական արատների խտրականության հետ.

... 7) զերծ մնալ դատախազական ակտերը և իր գործընկերների գործողությունները, մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց,

8) իր համար ընդունել այնպիսի սահմանափակումներ, որոնք կապահովեն իր հավասարակշռվածության ու անաչառության հասարակական ընկալումը,

9) լինել օրինապահ, արդարամիտ, համբերատար, կարգապահ, զուսպ, կշռադատված, բարեկիրթ, սկզբունքային, անկողմնակալ ու հաստատակամ, ուրիշի կարծիքը լսող, հարգող և այլակարծությունը հանդուրժող, այլ անձանց իրավունքների սահմանափակմանն ուղղված գործողություններ իրականացնելիս դրսևորել ծայրահեղ ողջամտություն և բարեկրթություն.

10) լինել անհանդուրժողական գործընկերների վարքագծի կանոնների թույլ տված խախտումների և ոչ բարոյական վարքագծի նկատմամբ. ...:

Հոդված 73. Դատախազի վարքագծի կանոնները պաշտոնեական հարաբերություններում

1. Պաշտոնեական հարաբերություններում դատախազը պարտավոր է՝

1) գործել Սահմանադրությանը, սահմանադրական օրենքներին, օրենքներին համապատասխան,

2) պահպանել աստիճանակարգված ենթակայության սկզբունքը, որը չի խոչընդոտում վերադաս կամ անմիջական վերադաս դատախազին զերծ մնալու ստորադաս դատախազի նկատմամբ այնպիսի վարքագիծ դրսևորելուց կամ խոսքեր արտահայտելուց, որը կարող է արատավորել դատախազի պատիվն ու արժանապատվությունը, վարկաբեկել նրա հեղինակությունը.

3) լինել անկախ և անաչառ.

4) դրսևորել անհրաժեշտ հետևողականություն՝ օրենքով նախատեսված սահմանափակումները պահպանելիս.

5) ունենալ ինքնուրույն համոզմունք և դատախազական ակտերը կայացնել ինքնուրույն, որը չի խոչընդոտում իրավական հարցերի շուրջ դատախազ գործընկերներից խորհուրդ ստանալը.

6) բարեխղճորեն կատարել իր պաշտոնական պարտականությունները, առաջնահերթության կարգով կատարել իր լիազորությունները՝ օրենքով դատախազին թույլատրված գործունեության այլ տեսակների նկատմամբ.

7) ապահովել իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունը ու արհեստավարժությունը, միջոցներ ձեռնարկել ներպետական ու միջազգային իրավունքի վերաբերյալ իր մասնագիտական գիտելիքների հարստացման, հմտությունների և անձնական հատկանիշների շարունակական կատարելագործման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում մասնագիտական աջակցություն ցույց տալ գործընկերներին.

... 9) դատական նիստերին մասնակցել պատշաճ համազգեստով, ցանկացած պայմաններում ու իրավիճակում լինել զուսպ, զգացմունքներում՝ կայուն, խուսափել դատախազի կոչմանն անհարիր այնպիսի վարքագիծ դրսևորելուց կամ խոսքեր արտահայտելուց, որոնք կարող են արատավորել դատախազի ու դատախազության հեղինակությունն ու բարի համբավը.

10) իր պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, խտրականություն դրսևորելուց կամ նման տպավորություն ստեղծելուց, գործել այնպես, որ նրա անաչառության և անկողմնակալության նկատմամբ անհարկի կասկած չհարուցվի, չառաջնորդվել ենթադրություններով, հույզերով, անձնական վերաբերմունքով և այլ կողմնակի ազդեցությամբ, որը չի խոչընդոտում դատախազին ազատորեն արտահայտելու իր կարծիքը ծառայողական հարցերին առնչվող լուծումների վերաբերյալ.

11) ողջամտության սահմաններում իրեն դրսևորել այնպես, որ նվազագույնի հասցվեն վարույթից կամ գործի քննությունից հեռացման (ինքնաբացարկի) անհրաժեշտություն առաջացնող դեպքերը.

12) այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել պաշտոնական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկատվությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ... :

Հոդված 74. Դատախազի վարքագծի կանոնները արտապաշտոնական հարաբերություններում

1. Արտապաշտոնական հարաբերություններում դատախազը պարտավոր է՝

1) չօգտագործել դատախազի պաշտոնի հեղինակությունը ի շահ իրեն կամ այլ անձի.

2) թույլ չտալ շահերի բախում, որ իր ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունները որևէ կերպ ազդեն ի պաշտոնն իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա.

3) խուսափել իր կամ դատախազության հեղինակությունը վարկաբեկող, պատիվն ու արժանապատվությունն արատավորող, անաչառության վրա ազդող, որոշակի անձանցից նյութական և այլ կախվածության մեջ դնող կապերից... »:

Մեջբերված նորմերի հետ կապված հիմնական մտահոգությունները հետևյալն են՝

1. Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով անհասկանալի տարբերակում է մտցվում դատախազի վարքագծի կանոնների և դրանցից բխող պահանջների միջև, ընդ որում այդ տարբերակումը բերում է շատ կարևոր մի հետևանքի՝ առաջինները սահմանվում են օրենքով, իսկ վերջիններս՝ Գլխավոր դատախազի կողմից: Անհասկանալի է այն, թե ինչով են տարբերվում վարքագծի կանոններից բխող պահանջները նույն վարքագծի կանոններից: Մեր կարծիքով, հենց նման անհարկի՝ իրավական որոշակիության համար խնդիրներ առաջացնող ու տարբեր մակարդակի իրավական ակտերում պարտականությունների սահմանում ենթադրող տարանջատումներից խուսափելու համար, անհրաժեշտ է Դատական օրենսգրքով սահմանված դատավորի էթիկայի կանոնների հետ անալոգիայով, Դատախազության մասին օրենքում ամրագրել նաև դատախազի վարքագծի կանոնների

սահմանումը²⁹⁴: Դրա շնորհիվ հնարավոր կլինի խուսափել վարքագծի կանոնների և դրանցից բխող պահանջների եզրույթների արհեստական տարանջատումից ու նույնքան արհեստականորեն ՀՀ Գլխավոր դատախազին վարքագծի նորմեր սահմանելու լիազորություն տալուց:

Այլ խոսքերով՝ վարքագծի կամ էթիկայի կանոնները **դրանք ինքնին արդեն իսկ պահանջներ են**՝ ուղղված դատախազին՝ դրսևորելու որոշակի վարքագիծ կամ գերծ մնալու որոշակի վարքագիծ դրսևորելուց: Այսպիսով, ԳԴ-ն չպետք է իրավունք ունենա սահմանելու դատախազի վարքագծի կանոններից բխող պահանջները, քանի որ դա նույնն է, ինչ որ նույն կանոնների բովանդակային սահմանումը, **ինչը արդյունավետորեն դուրս է բերում դատախազների վարքագիծը օրենսդրական կարգավորման, այսինքն՝ օրենսդիր և ներկայացուցչական մարմնի վերահսկողությունից**: Մա չափազանց կարևոր է՝ նաև հաշվի առնելով այն հետևանքները, որոնք առաջ են գալիս դատախազների համար նշված կանոնները խախտելու դեպքում: Ճիշտ է, Դատախազության մասին գործող օրենքում դատախազների վարքագծի կանոններին առանձին գլուխ նվիրելը առաջընթաց է նախորդ Օրենքի համեմատ, որը նախատեսում էր, որ Դատախազների վարքագծի կանոնագիրքը հաստատվում է Գլխավոր դատախազի կողմից, ինչին դրականորեն արձագանքել էր ՏՀԶԿ-ն Հայաստանի վերաբերյալ իր 4-րդ շրջանի Զեկույցում²⁹⁵, այնուամենայնիվ, Օրենքում նշված տարբերակումը մտցնելը փաստացի նշանակում են, որ Գլխավոր դատախազի հրամանով են սահմանվում այն վարքագծի պահանջները, որոնց խախտման համար դատախազը կարող է ենթարկվել պատասխանատվության:

2. Օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց համար պարտադիր են միայն Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-9-րդ կետերով սահմանված կանոնները, ինչից բխում է, որ դատախազների թեկնածուների վրա չեն տարածվում 72-րդ հոդվածով սահմանված կարևորագույն այնպիսի կանոններ, ինչպիսիք են՝ քաղաքական զսպվածություն և չեզոքություն դրսևորելը, որևէ այնպիսի վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալը, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել, որևէ կուսակցության նկատմամբ հովանավորչություն չդրսևորելը, այնպիսի մասնագիտական կամ հասարակական կազմակերպություններին չանդամակցելը, որոնց գործունեությունը կապված է էթնիկական, ազգային, դավանանքի կամ ֆիզիկական արատների խտրականության հետ: Նաև դրանից բխում է, որ դատախազների թեկնածուների վրա չեն տարածվում Օրենքի 74-րդ հոդվածով դատախազի համար արտապաշտոնեական հարաբերությունների առթիվ ամրագրված վարքագծի կանոնները, որոնց թվում չափազանց վերաբերյալի ու կարևոր կանոն է այդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պահանջը՝ «3) խուսափել իր կամ դատախազության հեղինակությունը վարկաբեկող, պատիվն ու արժանապատվությունն արատավորող, անաչառության վրա ազդող, որոշակի անձանցից նյութական և այլ կախվածության մեջ դնող կապերից...»: **Ստացվում է, որ դատախազի թեկնածուն կարող է ունենալ նման կապեր, սակայն դատախազ դառնալով, այսինքն՝ ԳԴ կողմից իրեն դատախազ նշանակելու մասին հրամանի օրը այդ կապերը ինչ-որ մի անհասկանալի կանխավարկածի ուժով, ինքնաբերաբար կտրվելու են կամ կորցնելու են**

²⁹⁴ Դատական օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատավորի էթիկայի կանոնները դատավորի անձնական և վարքագծային սահմանափակումներ են, որոնք դատավորն ընդունում է գիտակցաբար և ինքնակամ՝ նպատակ ունենալով բարձր պահել դատավորի և դատական իշխանության հեղինակությունը, ապահովել իր արդարամտության, բարեկրթության և հավասարակշռվածության հասարակական ընկալումը»:

²⁹⁵ Տե՛ս՝ ANTI-CORRUPTION NETWORK FOR EASTERN EUROPE AND CENTRAL ASIA, *Anti-Corruption Reforms in ARMENIA, Fourth Round of Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, adopted at the ACN meeting on 4 July 2018 at the OECD in Paris*, կետ 85:

իրենց ազդեցությունը: Պարզ է, որ դատախազ դատնալու մտադրություն ունեցող անձը նման կապերից պետք է սկսի հրաժարվել կամ նման կապեր ձևավորելուց պետք է սկսի ձեռնպահ մնալ շատ ավելի վաղ՝ առնվազն դատախազների թեկնածուների ցուցակում հայտնվելուց հետո:

Այս հարցում կիրառելի է դատավորների և նրանց թեկնածուների համար որդեգրված մոտեցումը: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանվում է դատավորների համար նախատեսված վարքագծի կանոնների դատավորների թեկնածուների նկատմամբ ունիվերսալ կիրառելիության սկզբունքը և նման կիրառելիության նպատակը՝ նշելով, որ

«2. Դատավորի վարքագծի կանոնները պարտադիր են նաև Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների, **դատավորի թեկնածուի հավակնորդների, դատավորների թեկնածուների**, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակներում ընդգրկված անձանց, ինչպես նաև դատարանի աշխատակազմի համար այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են նրանց նկատմամբ:

3. Դատավորի վարքագծի կանոնների նպատակն է դատավորի և սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց կողմից վարքագծի կանոնները պահպանելու միջոցով նպաստել դատարանի անկախության ու անաչառության ապահովմանը, ինչպես նաև դատարանի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը»:

Փաստորեն, ինչպես տեսնում ենք, դատավորներին առաջադրվող վարքագծի պահանջները կիրառելի են ոչ միայն դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող, այլ անգամ նման ցանկություն հայտնած անձանց, այսինքն՝ այդ ցուցակում ընդգրկվելու համար մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած անձանց՝ դատավորի թեկնածուի հավակնորդների համար: Կարծում ենք, վարքագծի կանոնների կիրառելիությունը այս փուլից պետք է սահմանվի նաև դատախազական համակարգի համար, հաշվի առնելով նաև այն՝ Դատական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասում իրավացիորեն նշված հանգամանքը, որ նաև թեկնածուների ու թեկնածուների հավակնորդների կողմից վարքագծի կանոնների պահպանումը ծառայում է մեկ ընդհանուր նպատակի՝ դատարանի, այսինքն՝ մեր դեպքում՝ դատախազության «անկախության ու անաչառության ապահովմանը, ինչպես նաև դատարանի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը»:

Եվ վերջապես, մեր առաջարկը կարևոր է նաև այն տեսակետից, որ Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությունից բխող 2019-2020թթ. Գործողությունների ծրագրի **Նպատակ 10-ի (Իրավապահ համակարգի բարեփոխում)** «Դատախազության համակարգի բարեփոխում» ռազմավարական ուղղության **Գործողություն 1-ը նախատեսում է**

«Ներդնել դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգ՝ գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները...»:

3. Ինչպես նկատեցինք, **Օրենքի 73-րդ հոդվածում (Դատախազի վարքագծի կանոնները պաշտոնական հարաբերություններում)** սահմանված են վարքագծի մի շարք (տես՝ վերը ընդգծված) կանոններ, որոնք իրականում դատախազի դատավարական պարտականություններն են: Որպես այդպիսիք, դրանք պետք է տեղ գտնեն դատավարական օրենսգրքերում, առաջին հերթին՝ ՔԴՕ-ում: Սա ունի կարևոր գործնական նշանակություն 2 տեսակետից. 1) վարքագծի այս կանոնների խախտումները փաստացի նշանակում են այլ՝ դատավարության մասնակից անձանց դատավարական իրավունքների խախտում և դրանից բխող՝ 2) դրանց հետևանքը պետք է լինի ոչ միայն դատախազի պատասխանատվությունը, այլ խախտված իրավունքի վերականգնումը դատավարության

շրջանակներում, օրինակ՝ բացարկման ենթակա դատախազի կողմից կայացված որոշումների բողոքարկումը և այլն:

4. Օրենքի 74-րդ հոդվածի (Դատախազի վարքագծի կանոնները արտապաշտոնեական հարաբերություններում) 1-ին մասի 2-րդ կետում սահմանված է, որ դատախազը պարտավոր է թույլ չտալ շահերի բախում, որ իր ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունները որևէ կերպ ազդեն ի պաշտոնե իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա: Միաժամանակ, որևէ կերպ սահմանված չեն ոչ միայն շահերի բախումների դեպքերը, այլև դրանց առկայությունը հավաստելու համար գնահատման կիրառելի չափանիշներն ու չափորոշիչները: Օրինակ, չկա սահմանված որևէ դրույթ, որ Գլխավոր դատախազը չպետք է քավոր-սանիկական հարաբերություններ ունենա կառուցվածքային կամ տարածքային ստորաբաժանումների ղեկավար դատախազների հետ: Հաշվի առնելով Դատախազության կենտրոնացված և աստիճանակարգված բնույթը և դրանից բխող՝ Գլխավոր դատախազի՝ որպես բոլոր մյուս դատախազների համար վերադաս դատախազ լինելու հանգամանքը, այս նորմը նույնքան կարևոր է, որքան մյուս համակարգերում շահերի բախում ողջամտորեն ստեղծող ազդեցության համար մերձավորների անմիջական ենթակայության բացառման կանոնը:

Նշված բացթողումը էլ ավելի է կարևորվում ՏՀԶԿ կողմից Հայաստանի վերաբերյալ դեռևս 3-րդ շրջանի Զեկույցում տեղ գտած այն դիտարկման տեսանկյունից, որի «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները շահերի բախման և պաշտոնատար անձանց բարեվարքության ապահովման առնչվող շատ այլ դրույթների մասով չեն տարածվում դատավորների, դատախազների և ԱԾ պատգամավորների վրա²⁹⁶: Ավելին, այս օրենքում, որի 33-րդ հոդվածի 1-ին մասում տրված է շահերի բախման հասկացությունը որպես մի իրավիճակ «երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել», այնուհետև նույն հոդվածի 7-րդ մասում հատուկ վերապահում է արվում առ այն, որ «սույն հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա»:

Նույն մտահոգություններն, ի դեպ, պահպանվել են նաև ՏՀԶԿ 4-րդ շրջանի Զեկույցում (կետ 27), ինչի մասին նշված է նաև ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. Միջոցառումների ծրագրում²⁹⁷, մասնավորապես, որ՝

«27. Զեկույցով ՏՀԶԿ-ն Հայաստանին հորդորում է ձեռնարկել հստակ միջոցներ՝ ՀՀ Կառավարությունում և ՀՀ Ազգային ժողովում գոյություն ունեցող շահերի բախման դեմ, ապահովել դատական և դատախազության համակարգերի անկախությունն ու բարեվարքությունը, և ավելի շատ ջանքեր գործադրել՝ հասարակական լայն արձագանք ստացած կոռուպցիոն դեպքերը բացահայտելու, դրանք քննելու և այդ գործերով հետապնդում իրականացնելու ուղղությամբ՝ կիրառելով տեղեկատվական և վերլուծական գործիքների տարբեր աղբյուրներ»:

²⁹⁶ Տես՝ ՏՀԶԿ 2014թ. Զեկույցը, ORGANISATION FOR ECONOMIC CO-OPERATION AND DEVELOPMENT ANTI-CORRUPTION NETWORK FOR EASTERN EUROPE AND CENTRAL ASIA Anti-corruption Reforms in ARMENIA Round 3 Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, adopted at the ACN meeting on 8-10 October 2014 at the OECD in Paris, էջ 53:

²⁹⁷ <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf>, տես նաև՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն https://www.arlis.am/Annexes/5/PT70.1_2019N1332hav.1.docx

Փաստորեն, Դատախազության մասին օրենքը, որը նշված վերապահման պատճառով պետք է ինքը կարգավորեր շահերի բախման հասկացությունը և իրավիճակները դատախազների համար, չի կատարել դա՝ այս հարցերի լուծումը թողնելով չկարգավորված վիճակում:

3.9. Դատախազության և դատախազների անկախության, արդյունավետության, բարեվարքության և հաշվետվողականության ապահովման արտաքին մեխանիզմները

3.9.1. Դատախազության համակարգային կամ ինստիտուցիոնալ գնահատման սկզբունքները և հիմնական չափորոշիչների բովանդակությունը

Ցանկացած ինստիտուտի համակարգային գնահատման հիմքում դրվում են դրա առջև դրված խնդիրները, այդ ինստիտուտի առաքելությունը կամ ինչին է նա կոչված (Mission Statement): Ըստ այդ, գնահատվում է թե՛ այդ համակարգի գործունեության ընդհանուր արդյունավետությունը (effectiveness), դրա առջև դրված նպատակներին հասնելու համար գործադրված միջոցների անհրաժեշտ և բավարար կամ ռացիոնալ լինելը (efficiency), և թե՛ այն երաշխիքները, որոնք պետք է ապահովեն ռացիոնալ միջոցների կիրառմամբ հռչակված խնդիրների իրագործումը: Այդպիսի երաշխիքներից են դատախազության անկախությունը, հաշվետվողականությունը և թափանցիկությունը, որոնք այս կետի քննարկման հիմնական նյութն են:

Այսպիսով, նշված գործունեության երաշխիքների և միջոցների արդյունավետության ու ռացիոնալության գնահատման համար բավարար չէ գուտ Դատախազության լիազորությունները կամ գործառույթները թվարկելը՝ անհրաժեշտ է նաև ամրագրել, թե ինչ խնդիրների հասնելու համար են այդ լիազորությունները վերապահված տվյալ մարմնին: Դատախազության մասին դեռ 1997թ. օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում էին Դատախազության առջև դրված հետևյալ խնդիրները

«Դատախազությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝

1) հանցավոր ոտնձգություններից պաշտպանում է քաղաքացիների, իրավաբանական անձանց եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը.

2) հանցավոր ոտնձգություններից պաշտպանում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը, հասարակական կարգը եւ անվտանգությունը.

3) միջոցներ է ձեռնարկում օրինականությունն ամրապնդելու, օրենքների կատարումն ապահովելու, օրինախախտումների պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները բացահայտելու եւ վերացնելու համար»:

Հետագայում՝ ինչպես 2007թ. այնպես էլ գործող օրենքից դուրս բերվեց Դատախազության խնդիրների հոդվածը, ինչը արտաքին հսկողության ինստիտուտներին՝ օրենսդիր մարմնից սկսած մինչև ՋԼՄ-ներն ու հասարակությունը, զրկեց Դատախազության գործունեության արդյունավետությունն ու ռացիոնալությունը հիրավի համակարգային գնահատման ենթարկելու հնարավորությունից:

Այժմ անդրադառնանք նրան, թե ինչ բովանդակություն է տրվում Դատախազության արդյունավետության, հաշվետվողականության, ռացիոնալության և այլ հասկացություններին միջազգային ընդունված չափորոշիչների համաձայն, ինչպես որ դրանք արտահայտված են դոկտրինալ և միջազգային իրավական ակտերի տեքստերում:

«Շատ լայն իմաստով, արդյունավետությունը նշանակում է դատախազության՝ հանրության լեգիտիմ խնդիրներն իրագործելու կարողություն»²⁹⁸: «Արդյունավետությունը նախևառաջ նպատակի ֆունկցիա է: Առանց հստակ ըմբռնման, թե ինչ նպատակների է կոչված ծառայելու դատաձագությունը սկզբունքորեն անհնար է ասել, թե որքան արդյունավետ է այն»²⁹⁹:

Մերոդարբանական առումով, Դատախազության խնդիրներն ամրագրող 3-րդ հոդվածի վերականգնումը կարևոր է դատախազական գործառնական արդյունավետությունը գնահատելու համար: Հակառակ դեպքում, եթե չլինի գործունեության ուղղվածության այնպիսի վերացական արժեքների կամ թիրախների ամրագրում, ինչպիսիք խնդիրներն են, դժվար է ասել, թե արդյոք գործառույթները՝ անգամ ռացիոնալ կերպով իրականացվելու դեպքում, հասել են իրենց նպատակին, թե ոչ:

Հենց այստեղ է անհրաժեշտ տարբերակումը ռացիոնալության (efficiency) և արդյունավետության (effectiveness) միջև: Վերջինս «պարզապես չափում է, թե արդյոք դատախազությունը հասնում է այն նպատակներին, որոնք իր առջև դրել է հասարակությունը: Արդյոք դատախազության գործունեությամբ բավարար չափով հանցագործներ են պատժվում: Արդյոք այդ գործունեությամբ նվազում է հանցավորությունը: Արդյոք այն արտահայտում է առանձին կողմերի շահերը: Արդյոք այն նպաստում է իրավունքի որոշակիության մեծացմանը»³⁰⁰: Բնականաբար, սրանք փոխարացնող պահանջներ են և նույն արդյունքներին հասնելը չի կարող կատարվել ցանկացած ծավալի, թեկուզ օրինական միջոցներով, այլ պետք է լինի ռացիոնալ համաչափություն ապահովելով հռչակված խնդիրների և դրանք իրագործելու ուղղությամբ գործադրված միջոցների միջև³⁰¹: Բացի արդյունավետությունից ու ռացիոնալությունից, կան օրինականության սկզբունքը, որը այն գործընթացին առաջադրվող պայմաններն են՝ ընդհանուր տրամաչափվածությունը (calibration), որը երաշխավորում է նաև արդյունքների գիտական, օրինական և ճշգրիտ լինելը:

Նշված հարցերի առանձնացումը չափազանց կարևոր է դատախազական համակարգի արտաքին գնահատման համար, քանի որ գնահատման առարկան կազմող հարցերի առանձնահատկությունները իրենք են որոշում գնահատման եղանակը: Օրինակ, հանցավորության դեմ պայքարի քանակական նշված չափանիշներով գնահատումը կատարվում է ներկայացուցչական վիճակագրության և դրա հրապարակայնացման, ՀՀ դեպքում՝ ԱՄ-ին ներկայացնելու շնորհիվ: Երկրում իրավական որոշակիության մեծացմանը նպաստելը կարող է ապահովվել դատախազական լիազորությունների ու հատկապես՝ հայեցողության իրացման կանխատեսելիությամբ՝ հրապարակային և հստակ ու դարձնելով այն իրավակիրառ ուղեցույցները, որոնք թույլ կտան հանրությանը հասկանալ այդ լիազորությունների իրացման չափանիշները կոնկրետ դեպքերում: Վերջապես, պետք է միշտ հիշել, որ արդյունավետության և քանակական և որակական տվյալները արդյունքն են համակարգի կողմից իր տրամաչափվածության, մեր դեպքում՝ օրինականության կանոնները պահպանելու, ինչը արդեն իսկ կանխավարկածում է դատախազության համակարգի կողմից իր առջև դրված խնդիրների պատշաճ իրականացումը: Միայն այդպես է հնարավոր պատշաճ գնահատել դատախազության գործունեությունը, հակառակ դեպքում, օրինակ՝ եթե գնահատումը արվի զուտ

²⁹⁸ PROMOTING PROSECUTORIAL ACCOUNTABILITY, INDEPENDENCE AND EFFECTIVENESS Comparative Research, 2008, Open Society Institute Sofia, էջ 21

²⁹⁹ Նույն տեղում, էջ 29:

³⁰⁰ Նույն տեղում, էջ 30:

³⁰¹ Նույն տեղում:

քանակական տվյալներով, ապա կատարվի, որ նպատակն արդարացնում է միջոցները, և իրականում հասարակությունը ակնկալում, օրինակ, հանցավորության նվազեցում անօրինական եղանակներով: Հետևաբար, անհրաժեշտ է Դատախազության գնահատման քանակական և որակական արդյունքամետ, ինչպես նաև գործիքամետ գնահատումը, քանզի հնարավոր է նաև, որ Դատախազության կողմից իր լիազորությունների պատշաճ իրականացման դեպքում, այլ մարմինների, օրինակ՝ կոռուպացված դատավորների շնորհիվ, դատախազության առջև դրված արդյունքային նպատակները չիրականացվեն:

Այսպիսով, գնահատման՝ դարձյալ առաջադրված խնդիրներով պայմանավորված չափորոշիչներից է օրինականությունը, այն է՝ ապահովել արտաքին հսկողության կամ հաշվետվողականության մեխանիզմներ՝ դատախազության կողմից օրինականության ռեժիմը ապահովելու համար: Մակայն, երբեմն անհարկի այդ հաշվետվողականության ռեժիմը ընկալվում է զուտ օրինականության ապահովումը դիտարկելու շրջանակներում՝ դուրս թողնելով դատախազական գործունեության այն դրսևորումները, որոնք ոչ թե օրենքի հստակ պահանջը կատարելու, այլ հայեցողության արտահայտություն են:

Դատախազության պարագայում, որտեղ հայեցողությունը հանդիսանում է օրենքին պահանջներն իրացնելիս կիրառվող ամենօրյա գործիք, անհնար է արտաքին հսկողություն իրականացնել այնպիսի պայմաններում, երբ դատախազության հաշվետվողականության ծավալները չեն ընդգրկում նաև դատախազների հայեցողական որոշումների նկատմամբ հանրային վերահսկողության մեխանիզմները: Դրանցից մի քանիսի մասին արդեն իսկ նշվեց Հետազոտության նախորդող կետերում, օրինակ՝ ոչ ծանր հանցագործությունների դեպքերով գործը կարճելիս և քրեական հետապնդումը դադարեցնելիս կամ մեղադրյալի հետ համագործակցելու մասին նրա պաշտպանի միջնորդությունը բավարարելիս և մի շարք այլ դատախազի կողմից կիրառվող չափանիշների առկայությունը ու դրանց հասանելիությունը (հրապարակային ուղեցույցների տեսքով) ու հասկանալի լինելը, հետևաբար՝ հանրության, այդ թվում՝ մասնագետների ու փաստաբանների համար դատախազական հայեցողության համադրելի լինելը՝ կոռուպցիոն ու այլ ռիսկերն ու դրսևորումները բացահայտելու համար, և այլն:

Մինչդեռ, Հայաստանում ընդունված է կարծել, որ եթե դատախազին տրված է այս կամ այն հարցը իր հայեցողությամբ լուծելու հնարավորություն, ապա դրա նկատմամբ արտաքին վերահսկողության միասնական մեխանիզմների կիրառելիությունն անհնար է: Իրականում սակայն, օրենքի իմպերատիվ և հայեցողական կիրառման նկատմամբ գործում են նույն երաշխիքները, ինչը և ամրագրված է համապատասխան միջազգային աղբյուրներում: Մասնավորապես, ԵՂԽԽ «Դատախազների անկախության, հաշվետվողականության և էթիկայի մասին» Հ-13 Կարծիքի 19-րդ կետի համաձայն՝

«Հաշվետու» լինելը, մասնավորապես, նշանակում է՝

- Չգործել կամայականորեն.
- Որոշումների հիմքում դնել օրենքը.
- Որոշումները պատճառաբանել օրինականության կամ հնարավորության (հայեցողության) սկզբունքի հիման վրա.
- Անհրաժեշտության դեպքում՝ հաշվետվություններ տրամադրել համապատասխան շահագրգիռ կողմերին»³⁰².

³⁰² CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) Opinion No. 13(2018) of the CCPE: «Independence, accountability and ethics of prosecutors»

3.9.2. Դատախազության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության սահմանները

Սույն Հետազոտության 3.6.4 կետում արդեն իսկ նշվեց Դատախազության ապաքաղաքականացվածության և արտաքին, նախևառաջ՝ խորհրդարանական վերահսկողության ապահովման անհրաժեշտության մասին, որի ներկայումս փաստացի գործող միակ ձևը դա ԳԴ Տարեկան հաղորդումներն են Դատախազության գործունեության մասին, որտեղ, ինչպես նշվեց 1-ին Գլխում, ոչ բավարար աստիճան ներկայացուցականությամբ արտացոլված է նաև Դատախազության գործունեության վիճակագրությունը: Քանի որ այս ձևը լիագումար Խորհրդարանի ու Գլխավոր դատախազի հանդիպման միակ ձևն է, ապա բնականորեն երբեմն այն վեր է ածվում ԳԴ-ին նաև Հաղորդումից դուրս արվող հարցադրումների, քննարկումների, քննադատության և այլն:

Արդեն նշվեց նաև, որ ԳԴ Հաղորդումը քննարկելիս, ինչպես նաև շփման մյուս ձևաչափերում խորհրդարանի, որպես քաղաքական մարմնի, վերահսկողությունը չպետք է տարածվի կոնկրետ գործերով դատախազական լիազորությունների իրացման վրա: Բացառություն կարող են կազմել այն դեպքերը, երբ **ԱԺ-ն, խորհրդարանական լսումների, Գլխավոր դատախազի տարեկան Հաղորդումը քննարկելու և իր աշխատանքի կազմակերպման այլ ձևերի շրջանակներում**, ի ցույց է դնում Դատախազության ոչ միասնական պրակտիկայի կամ խտրականության դրսևորումները: Մակայն, այստեղ էլ պետք է լինել զգույշ և օրենքով սահմանել, որ ԱԺ նման հարցադրումները իրավաչափ են, եթե դատախազության խտրական գործելակերպի կանխման կամ կասեցման կամ հետևանքների վերացման երաշխիքները ապահովված չեն դատական իշխանության կողմից: ԱԺ-ն այդ դեպքերում, պետք է ձգտի ապահովել արտաքին ոչ քաղաքական մարմինների, այսինքն՝ **դատական վերահսկողության արդյունավետ իրականացումը**, այդ թվում՝ օրենսդրության փոփոխման միջոցով, այլ ոչ թե՛ սեփական ոչ միասնական և ոչ ինստիտուցիոնալ վերահսկողությունն իրականացնի՝ տրվելով պոպուլիստական և քաղաքական նպատակահարմարության զգացումներին:

Այս առումով, կարևոր է ԱԺ քննիչ հանձնաժողովների դերը, որը, սակայն, բավականին նսեմացված է ՀՀ-ում, չնայած, որ այս հանձնաժողովներն ունեն սահմանադրական մարմնի կարգավիճակ: Մասնավորապես, Մասնանադրության 108-րդ հոդվածի (Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովները) 1-ին մասի համաձայն, **քննիչ հանձնաժողովը ստեղծվում է Ազգային Ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային Ժողով ներկայացնելու նպատակով, իսկ 2-րդ մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդի պահանջով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են հանձնաժողովին տրամադրել հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ, եթե դրանց տրամադրումն օրենքով արգելված չէ:**

Քանի որ հիմնական կարգավորումները տրված են Ազգային Ժողովի կանոնակարգով, որն էլ չի նախատեսում այսպես կոչված պարտադիր կատարման հրահանգների ընդունման լիազորություն (subpoena power) և չկատարման դեպքում՝ նույն հետևանքները, օրինակ չներկայանալու դեպքում՝ բերման ենթարկելու հնարավորություն, սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց խուսափելու համար պատասխանատվության նախատեսում, ապա այս մարմնի լիազորությունները արդյունավետ համարվել չեն կարող:

«Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի³⁰³ նախատեսում է՝

³⁰³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143684>

«Հոդված 23. Քննիչ հանձնաժողովի գործունեության սահմանափակումները

1. Քննիչ հանձնաժողովի գործունեությունը չի կարող դուրս գալ Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող հարցերի շրջանակից:

2. Քննիչ հանձնաժողովի քննության առարկա չեն կարող հանդիսանալ նախնական քննության կամ դատավարության որևէ այլ փուլում գտնվող հարցերը, ինչպես նաև այն հարցերը, որոնք հաստատվել կամ հերքվել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված պայմաններից որևէ մեկը խախտելը հիմք է, Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան³⁰⁴, Սահմանադրական դատարան դիմելու համար»:

Ի սկզբանե պետք է ասել, որ հաշվի առնելով քննիչ-հանձնաժողովների և դատախազության սահմանադրական մարմիններ լինելու, հետևաբար՝ սահմանադրական լիազորությունների առնչությամբ նրանց միջև վեճեր առաջանալու հնարավորությունը, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի մեջբերված կարգավորումները գուրկ են ոչ միայն իրավական որոշակիությունից, այլ նաև՝ լրջությունից: Մասնավորապես՝

1. Անհասկանալի է, թե ինչ բովանդակություն է դրված «նախնական քննության կամ դատավարության որևէ այլ փուլում գտնվող հարցեր», կամ «օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված կամ հերքված հարցեր» հասկացությունների տակ: Արդյո՞ք այդ հարցը, օրինակ, ենթադրյալ հանցագործության փաստն է, որն արդեն իսկ քննվում է նախաքննության կամ դատավարության որևէ փուլում, թե այդ ենթադրյալ փաստին, մասնավորապես՝ նախաքննության մարմնի կամ դատախազության կողմից տրված իրավական գնահատականը, այն է արարքի որակումը: Այլ խոսքով, եթե օրինակ, ենթադրյալ որևէ փաստի համար, քրեական գործ է հարուցված դատարանի նկատմամբ ճնշում գործադրելը արգելով ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածով, ապա արդյո՞ք կարող է ԱԺ-ն քննիչ-հանձնաժողով ստեղծել նույն ենթադրյալ արարքում պաշտոնեական դիրքի չարաշահում առկա լինելու կասկածների հիման վրա: Կամ, արդյոք, հարուցված քրեական գործի պայմաններում ԱԺ-ն կարող է ստեղծել նմանատիպ հանձնաժողով՝ այլ, նախաքննությանը անհայտ փաստեր ձեռք բերելու համար, որոնք ակնհայտորեն փոխկապակցված են քրեական գործի շրջանակներում քննվող փաստի հետ և պետք է դառնան հենց իրավապահ մարմնի, այլ ոչ թե ԱԺ քննիչ-հանձնաժողովի քննության առարկա:

2. Իրավակիրառ, այդ թվում՝ դատական պրակտիկայի տեսակետից, անհնար է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատել կամ հերքել **հարցերը**, քանի որ այդ ակտերում հերքվում կամ հաստատվում են **հանգամանքներ, իսկ բուն հարցերը լուծվում են, այլ ոչ թե՝ հերքվում կամ հաստատվում:** Օրինակ, ՀՀ ՔՂՕ 360 հոդվածը (Դատավճիռ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարցերը) նախատեսում է այն հանգամանքների շրջանակները, որոնք ենթակա են լուծման դատավճիռ կայացնելիս:

3. Վերջապես, անհասկանալի է, թե ինչու է ԱԺ կանոնակարգ-օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում միայն ուժի մեջ մտած դատական ակտերը: Նախ, ակնհայտ է, որ ի նկատի են ունեցվում դատարանի կողմից ապացույցների բովանդակային հետազոտմամբ կայացված վերջնական դատական ակտերը՝ դատավճիռները, և ոչ թե՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում, օրինակ՝ քրեական

³⁰⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 168՝ «Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝ 4) լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը.»:

գործի վարույթը կարճելու մասին քննիչի որոշման դեմ դատարան բերված բողոքի դեպքում այդ բողոքը մերժելու մասին դատարանի ուժի մեջ մտած որոշումները: Անհասկանալի է նաև, թե ինչու օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի հետ միաժամանակ չեն նշվում ՀՀ ՔԴՕ 21-րդ հոդվածի կարգով ուժի մեջ մտած մինչդատական վարույթի մարմինների որոշումները, որոնք նույնպես վերջնական են և ինչպես և դատավճիռները կարող են վերանայվել միայն նոր կամ նոր երևան եկած հանգամանքների առկայության դեպքում:

Այնուամենայնիվ, Դատախազության, ինչպես և ցանկացած այլ սահմանադրական և ոչ սահմանադրական մարմնի նկատմամբ խորհրդարանական արտաքին հսկողության ամենագործուն միջոցը դա օրենսդիր գործառույթն է: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովը պետք է ձգտի, հասկապես քաղաքացիների իրավունքների և ազատությունների նկատմամբ միջամտություն գործող մարմինների կազմավորումը և գործունեությունը կարգավորող իրավադրույթները նախատեսել օրենսդրական մակարդակով, որպեսզի այդ նույն կարգավորումները չտրվեն հենց այն մարմնի ղեկավարի կողմից, որն իրականացնում է այդ միջամտությունը: Նման անհրաժեշտության բազմաթիվ օրինակներ արդեն իսկ բերվեցին սույն Հետազոտության նախորդ կետերում՝ Գլխավոր դատախազի տեղակալների թիվը և կառուցվածքային ստորաբաժանումները, դատախազին ներկայացվող վարքագծի պահանջները բացառապես օրենքով սահմանելու հետ կապված: Օրենսդրական կամ գերատեսչական կարգավորման անհրաժեշտության հարցը լուծելիս պետք է ելնել այն սկզբունքից, թե արդյոք համապատասխան կարգավորումը ազդում է իրավունքի այլ սուբյեկտների վրա, թե ոչ: Եթե ազդում է, օրինակ՝ Դատախազության կողմից լրագրողներին տրվող տեղեկատվության սահմանները, ապա կարգավորումը չի կարող տրվել նույն դատախազության կողմից, քանի որ իրավունքը իրավունքի բոլոր սուբյեկտների ազատության ձևն է, և այն պետք է սահմանվի մեկ այլ՝ 3-րդ կամ ընդհանուր սուբյեկտի կողմից:

3.9.3. Դատախազության հանրային թափանցիկության մեխանիզմները

3.9.3.1. Իրավակիրառ հրապարակային և հստակ ուղեցույցների և մշտադիտարկման ազդեցիկ մեխանիզմների անհրաժեշտությունը

Ըստ էության, ՀՀ-ում դատախազության իբրև միասնական կառույցի աշխատանքի արտաքին գնահատման միակ միջոցը դա ԱԺ-ին ներկայացվող ԳԴ գործունեության մասին տարեկան հաղորդումն է: Մինչդեռ հասարակությունը պետք է իմանա, թե որոնք են այն չափորոշիչները, որոնք գործում են ինչպես դատախազության կազմակերպարավական բնույթի որոշումների (դատախազների նշանակում, առաջխաղացում, կարգապահական տույժերի, այդ թվում՝ հեռացման, մասնագիտական պատրաստվածության առկայության մասին և այլն), այնպես էլ դատավարական բնույթի որոշումների (քրեական հետապնդում իրականացնելուց հայեցողաբար հրաժարվելու, համագործակցության վարույթ իրականացնելուն համաձայնելու կամ նախաձեռնելու, քննիչներին հանձնարարություններ տալու մասին և այլն) կայացման ժամանակ:

Բացի այդ, դատախազությունը իր՝ դատախազների համար մշակված նույն հրապարակային ուղեցույցների միջոցով պետք է հանրության համար պարզ դարձնի, թե որոնք են այն չափանիշները, որոնցով գնահատվում է, թե արդյոք նշված չափորոշիչները պահպանված են թե ոչ: Հենց նման բարեփոխումներն են, որ հասարակության մոտ համոզումնք կառաջացնեն համապատասխան բոլոր գործընթացներում դատախազների

կողմից կայացվող որոշումների օրինականության, պատճառաբանվածության ու ոչ կամայական և ոչ խտրական լինելու մասին, ինչի արդյունքում էլ կապահովվի հանրային վստահությունը դատախազության հանդեպ: Այդ չափորոշիչների ու չափանիշների հանրային հասանելիությունն էլ ավելի է կարևորվում այն համակարգերում, որտեղ դրանց ոչ կամայական, հասկանալի ու պատճառաբանված կիրառման նկատմամբ դատական ստուգման մեխանիզմները նույնպես ոչ հրապարակային են ու ոչ կանխատեսելի:

ԵՂԽՄ Կարծիք Հ-9-ի Բացատրական հուշագրի XVII-րդ կետում նշվում է՝

«Քրեական հետապնդում իրականացնելու շրջանակներում և դատարանում և դատարանում կայացվող հայեցողական որոշումների կայունությանն ու արդարացիությանը հասնելու համար պետք է ընդունվեն հստակ և հրապարակային ուղեցույցներ, հատկապես՝ քրեական հետապնդում իրականացնելու կամ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշումներ կայացնելիս»:

ԵՂԽՄ Կարծիք Հ-11-ի 10-րդ կետում նշվում է՝

«10. Անհրաժեշտության դեպքում և ազգային օրենսդրությանը համապատասխան, դատախազությունները պետք է ուղեցույցներ հրապարակեն դատախազների համար՝ ընդհանուր ձևով նշելով այն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվեն դատախազները քրեական հետապնդում հարուցելիս և իրականացնելիս: Այդ ուղեցույցները պետք է սահմանեն այն գործոնները, որոնք հաշվի են առնվելու քրեական հետապնդման տարբեր փուլերի ընթացքում՝ այն հաշվով, որպեսզի դատախազական միջամտության հիմքում ընկած լինի արդարացիված, պատճառաբանված և կայուն քաղաքականություն: Դատախազությունների կողմից ցուցիչներն ու հետագա վերահսկման մեխանիզմները պետք է սահմանվեն թափանցիկ ձևով, հիմնականում՝ դատախազներին մասնագիտական գործունեության ավելի բարձր մակարդակի հասնելուն մոտիվացնելու համար: Հետագա վերահսկման դատախազության ներքին մեխանիզմները պետք է կրեն կանոնավոր բնույթ և հիմնված լինեն իրավունքի գերակայության վրա»:

Սկզբունքորեն նույնպիսի մոտեցումներ են արտահայտված ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարականում, որ 36-րդ կետում սահմանվում է հետևյալը՝

«ա. Դատախազների արդարացի, կայուն և ռացիոնալ գործունեությունը խթանելու նպատակով, պետությունները պետք է ձգտեն՝

- սահմանել այն ընդհանուր սկզբունքներն ու չափանիշները, որոնք պետք է վկայակոչվեն ու կիրառվեն կոնկրետ գործերով որոշումներ կայացնելիս՝ որոշումների կամայական ընդունման դեմ երաշխիքներ ապահովելու նպատակով. ...

բ. Վերը հիշատակված ... ուղեցույցները, սկզբունքներն ու չափանիշները պետք է սահմանվեն խորհրդարանի կամ կառավարության կողմից, կամ, եթե ազգային օրենսդրությունն ամրագրում է դատախազի անկախության սկզբունքը՝ դատախազության ներկայացուցիչների կողմից:

գ. Հանրությունը պետք է տեղեկացված լինի վերը նշված կառուցակարգերի, ուղեցույցների, սկզբունքների և չափանիշների մասին, և դրանք, միջնորդության դեպքում, պետք է տրամադրվեն ցանկացած անձի»:

Այնուհետև, ԵՄ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագիրը Հանձնարարականի նույն կետերի կապակցությամբ սահմանում է, որ՝

«Քանի որ նման գործիքները նպատակաուղղված են հանրության անդամներին, այլ ոչ թե դատախազներին ապահովագրելուն, դրանք պետք է ներկայացվեն հանրության ուշադրությանը կամ առնվազն բոլոր շահագրգիռ անձանց: **Մա հատկապես կարևոր է այն համակարգերում, որտեղ դատախազն անկախ է և օգտվում է զգալի հայեցողական լիազորություններից»:**

ԵՂԽՄ Կարծիք Հ-11-ի 11-րդ կետում նշվում է՝

«11. Սպացուցվել է, որ դատախազների աշխատանքի որակը բարձրացնելու տեսանկյունից, բողոքարկումների արդյունավետ ու անկողմնակալ համակարգի առկայությունն ու համապատասխան շահագրգիռ կողմերի հետ միասին լրացվող հարցաշարերը, օգտակար են համակարգի հնարավոր թերությունները վերհանելու համար: Դատախազների կողմից կայացվող որոշումների մշտադիտարկման վերահսկիչ մեխանիզմը ... կարող է հնարավոր դարձնել քննության և հետապնդման փուլերում թույլ տրված սխալների շտկումը»:

Դատախազների գործունեության մշտադիտարկում իրականացնելիս, պետք է մշակվեն նախաքննության ընթացքում կայացված որոշումների, դատական քննության նիստի ընթացքում դրսևտրած վարքագծի, դատական ակտերի դեմ, այդ թվում՝ ոչ միայն մեղադրող կողմի ներկայացրած բողոքների դիտարկման քարտեր՝ հաշվի առնելով նշված գործառնությունների՝ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն, դատարանում մեղադրանքի պաշտպանություն և այլն, իրականացման ընթացքում մեղադրողի կողմից էթիկայի կանոնների, նրանից ակնկալվող օբյեկտիվության, անաչառության և պրոֆեսիոնալիզմի ապահովման անհրաժեշտությունը: Հատկապես դատարանում մեղադրողի աշխատանքը վերը նշված պահանջների լույսի ներքո համարժեքորեն դիտարկելու համար անհրաժեշտ է վերհանել նրա մասնակցության վերաբերյալ վարույթի մյուս մասնակիցների գնահատականները, այդ թվում՝ նրա նկատմամբ կիրառված դատական սանկցիաները, նրա դեմ հայտնված բացարկները, այլ կարծիքներ, որոնք հնչել են դատական քննության ընթացքում: Առանձին հարցեր պետք է վերաբերեն մեղադրողի դատավարական կարգապահությանը և նրա կողմից պատշաճ վարքագիծ դրսևտրելուն:

Մասնավորապես, դատարանում մեղադրողի վարքագիծը համակողմանիորեն գնահատելու համար, անհրաժեշտ է վերհանել ոչ միայն մեղադրողի կողմից պարկեշտության արտաքին կողմը պահպանելու հանգամանքը, այլև այնպիսի հարցերում նրա կողմից օբյեկտիվություն, անաչառություն և պրոֆեսիոնալիզմ դրսևտրելու հանգամանքը, որոնք առնչվում են մեղադրողի մասնագիտական բարոյականության ոլորտին, որը հնարավոր է դիտարկել միայն ապացույցների հետազոտման և դատական վիճաբանությունների ընթացքում մեղադրողի գործունեությունը ուսումնասիրելով: Այդ իսկ պատճառով Դիտարկման քարտում պետք է ընդգրկել են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են վկաների հարցաքննության ընթացքում մեղադրողի վարքագծին, մասնավորապես՝ մեղադրանքի օգտին վկայող անձանց ուղղորդող հարցեր տալուն, անթույլատրելի միջոցներով պաշտպանության կողմի վկաների ցուցմունքների արժանահավատությունը նսեմացնելուն, և այլն: Իսկ այս կարգի դատավարական վարքագիծը ճշգրիտ և համարժեքորեն գնահատելու համար, իր հերթին, անհրաժեշտ է պարզել, թե արդյոք նույն մեղադրողը մասնակցել է գործին նաև մինչդատական վարույթում՝ դատախազական հսկողություն իրականացնելով, որ պահից, որքանով է նա ծանոթ գործին, որքանով է նա ցանկանում դատարանում պարզապես պաշտպանել իր նախկինում կայացրած որոշումների ճշմարտացիությունը՝ մոռանալով արդարադատության շահը, և այլն: Ընդհանուր առմամբ, դիտարկման քարտում մուտքագրված տվյալների վերլուծությունը և ամփոփումը թույլ է տալու եզրակացնել, թե որքանով է այս կամ այն դատախազը հետևում դատարանում մասնագիտական և ընդհանուր էթիկայի կանոններին, հարգում դատավարության մրցակցության սկզբունքը, այդ թվում՝ դատարանի անկախությունը և գործով վերջնական լուծում տվող, ինչպես նաև ընթացակարգային բոլոր հարցերով որոշումներ կայացնող միակ մարմին լինելու հանգամանքը, որքանով է նա հանդուրժող ամբաստանյալի անմեղության կանխավարկածի և դրանից բխող նրա պաշտպանության իրավունքի և վերջինիս իրացման դատավարական երաշխիքների հանդեպ:

Այսպիսով, անհրաժեշտ է Դատախազության մասին օրենքով սահմանել նշված իրավակիրառ ուղեցույցների ընդունման անհրաժեշտությունը՝ նշելով, որ դրանցով հստակ և որոշակի ձևով կարգավորվելու են դատախազական հայեցողության դրսևտրման սկզբունքները քրեական դատավարության բոլոր փուլերում՝ քրեական հետապնդում հարուցելուց սկսած մինչև դատարանի դատավճռի բողոքարկումը: Այս ուղեցույցներն հատկապես կարևորվում են նոր ՔԴՕ ընդունման հեռանկարից ելնելով՝ հաշվի առնելով

այն մեծ հայեցողությունը, որ ընձեռնվելու դատախազներին համագործակցության վարույթի, մեղադրանքի առաջադրման և այլ որոշումների ընդունման ընթացքում: Նաև անհրաժեշտ է Օրենքում ամրագրել Դատախազության գործունեության մշտադիտարկման մեխանիզմները՝ ամրագրելով դրանց նպատակը, տեսակները (արտաքին և ներքին, ներքինի դեպքում՝ բացահայտ և գաղտնի), արդյունքների ազդեցությունը Դատախազության քաղաքականության վրա, և իրականացման սկզբունքները:

Նշված գործողությունները նաև համահունչ կլինեն ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների 2018-2023թթ. Ռազմավարությամբ, որի «**Դատական իշխանության գործունեության մոնիթորինգի համակարգի ներդրում**» Ռազմավարական ուղենիշը որպես առանձին միջոցառում նախատեսում է «Ներդնել դատական իշխանության գործունեության մշտադիտարկման և խնդիրների ախտորոշման համակարգ», որի ներքո նախատեսված գործողությունների թվում են

«1. Պարբերաբար իրականացնել հարցումներ դատավորների, **դատախազների** և գործող փաստաբանների շրջանում.

2. Յուրաքանչյուր տարի պլանավորել մշտադիտարկման ենթակա ոլորտները, մշտադիտարկման արդյունքների հիման վրա վերհանված խնդիրների լուծման ուղղությամբ մշակվել համապատասխան ծրագրեր և իրականացվեն միջոցառումներ:

3. Հարցմանը մասնակիցների հետ քննարկել հարցման արդյունքները և եզրահանգումները և արդյունքների հիման վրա ներկայացնել բարեփոխումների առաջարկություններ.

4. Մշտադիտարկումը իրականացնել «Արդարադատության մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում մշակված մեթոդաբանության հիման վրա: Ներքին և արտաքին շահակիցների շրջանում մշտադիտարկում իրականացնելուց հետո պատրաստել արդյունքների ամփոփման զեկույցներ և ներկայացնել իրավասու մարմինների քննարկմանը»:

3.9.3.2. Դատախազության փոխհարաբերությունները ՁԼՄ-ների հետ

Դատախազության աշխատանքի մասին համարժեք կարծիք կազմելու համար չափազանց կարևոր է ՁԼՄ-ների հետ աշխատանքը, քանի որ հենց նրանք են ներկայացնում հանրությանը «արտաքին» կարծիքը համակարգի մասին, և իրենք էլ պետք է քաջատեղյակ լինեն դատախազության կազմակերպումն ու աշխատանքը կարգավորող հիմնական սկզբունքներին, վերը նշված հայեցողական լիազորությունների իրացման չափանիշներին ու չափորոշիչներին: Անհրաժեշտ է պարբերական վերապատրաստումներ իրականացնել լրագրողների համար՝ նշված հարցերով, հակառակ դեպքում դատախազության մասին իր կարծիքը ձևավորելիս հասարակությունը միշտ կմնա նույն դատախազության ներկայացրած տեղեկատվության «հույսին», առանց հասկանալու, օրինակ, թե ինչու արտաքինապես նույնատիպ իրավիճակներում մեկ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվում է, իսկ մյուսի նկատմամբ՝ ոչ, մի դեպքում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու կամ ժամկետը երկարացնելու միջնորդություն ներկայացվում է, մյուսում՝ ոչ, մի դեպքում մեղադրանք է առաջադրվում դիտավորությամբ մարմնական վնասվածքներ հասցնելու համար, մյուս դեպքում՝ սպանության փորձի, մի դեպքում՝ ներկայացվում է վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք, իսկ մյուսում՝ ոչ: Անհրաժեշտ է նաև ընդունել ուղեցույց դատախազության ու ՁԼՄ-ների միջև փոխհարաբերությունների մասին, որը կանխատեսելի կդարձնի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, հետևաբար՝ նաև փոխադարձ ու առաջին հերթին՝ հանրության ակնկալիքները:

Հաճախ պետական մարմինները, որոնք տիրապետում են պաշտոնեական, բայց միաժամանակ հանրության համար մեծ կարևորություն ներկայացնող տեղեկությունների, որպես գործունեության սկզբունք որդեգրում են այդ տեղեկությունների նկատմամբ

մենաշնորհային իրավաստիությունը՝ գտնելով, որ իրենց գործունեության շրջանակներով է միայն սահմանափակվում որևէ այլ արտաքին դիտորդի մասնակցության լեգիտիմությունը: Մինչդեռ պետության և պետական մարմինների և հատկապես՝ հանրության համար առաջնային կարևորություն ունեցող քրեական արդարադատության «անիվները պտտող» դատախազության՝ մարդու և հասարակության իրավունքների պաշտպանության հասցեատիրությունը նաև որոշակիորեն սահմանափակվում, հակակշռվում է մեկ այլ հասցեատիրությամբ՝ նույն հասարակության տեղեկացված լինելու իրավունքի հասցեատեր ՁԼՄ-ների լեգիտիմությամբ: «Իրավունքը մարդկանց ազատության համընդհանուր ու անհրաժեշտ ձևն է»³⁰⁵, որտեղ իրավունքի բոլոր սուբյեկտներն են մասնակցում հավասար լեգիտիմությամբ: Այս փաստի գիտակցումը կարևոր է, որ օրինակ՝ պետական մարմնի շենքում մամուլի ասուլիսի ընթացքում պետական պաշտոնյան հասկանա, որ ինչպես ինքն է եկել գործի ու աշխատում այդ սրահում, նույնպես նույն տեղն աշխատանքի եկել նաև լրագրողը: Այդ վայրը կարող է լինել անգամ պաշտոնյայի աշխատասենյակը: Այսինքն՝ կարևորը այն սկզբունքի գիտակցումն է, որ իրավահարաբերության կողմերը միշտ իրենց իրավասուբյեկտությունը իրացնում են հավասարապես և միաժամանակ՝ անկախ հանդիպման վայրից, ժամանակից, տեխնիկական այլ պարագաներից՝ իհարկե, տեղեկատվության բնույթից ելնելով փոխադարձ լեգիտիմի շահերը հարգելով:

Հասարակությունը չի կարող սահմանափակվել միայն այն համակարգից տված տեղեկություններով, որոնք վերաբերում են նույն համակարգին՝ ամեն դեպքի լուսաբանման ընթացքում ունկնդրելով «գործով նշանակված դատա-բժշկական, դատա-ապրանքագիտական, դատա-հաշվապահական և այլ փորձաքննությունների մասին, գործով համալիր քննչական, օպերատիվ-հետախուզական և այլ դատավարական գործողություններ կատարելու» մասին կլիշեատիպ, ձանձրալի ու անբովանդակ հաղորդումները: Եվ այդ տեղեկությունները ոչինչ կլինեն, եթե դրանք հավաքող ու տարածող ՁԼՄ-ները չկարողանան մեկնել այդ տեղեկությունները՝ առնվազն ընդհանուր սկզբունքների լույսի ներքո: Օրինակ, ուսանելի է CNN լրագրողների, հատկապես իրավական թեմաներով լուսաբանումների փորձը, երբ առավել շատ տրվող հարցերից մեկը կոնկրետ տեղեկության հետ կապված հետևյալն է՝ «Ի՞նչ է դա նշանակում» կամ «Ի՞նչ է դրանից բխում» (What do you make of it?)՝ հարցեր, որոնք տրվում են թե պաշտոնյաներին և թե իրավաբան-փորձագետներին, որոնց թվում են հաճախ նախկին դատախազներ, քննիչներ և ոստիկաններ: Հենց սրա համար է լրագրողների իրավական գիտելիքների խորացումը անհրաժեշտ հանրային իրավագիտակցության բարձրացման ու պետական, այդ թվում՝ իրավապահ մարմինների նկատմամբ արդյունավետ արտաքին վերահսկողություն իրականացնելու համար:

Այսպիսով, ՁԼՄ-ը գործում են որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ, իրացնելով իրավունքի փիլիսոփայության հիմնական պոստուլատներից մեկը՝ «երբ ներքին աստիճանակարգությունը պատասխանատվության մեխանիզմները չեն ապահովում պատասխանատվություն, քաղաքացիական հասարակությունը ներքևից է կատարում այդ գործառույթը»³⁰⁶:

ՁԼՄ-ների հետ դատախազության փոխհարաբերությունների հենց այս իրավափիլիսոփայական հիմքն է ընկած ԵՊԽԽ 2013թ. Երևանում ընդունված «Դատախազների և ՁԼՄ-ների միջև հարաբերությունների վերաբերյալ» Հ-8 Կարծիքի Երաշխավորությունների հիմքում, որոնց ներկայացնում են ամբողջությամբ, քանի որ

³⁰⁵ В.С.Нерсисянц, Философия права, М. 1997, с. 34

³⁰⁶ Гегель, Философия права, М. 1990, с. 258

միջազգային վերը նշված, հատկապես՝ արտաքին իրավաստեղծ մարմինների կողմից ուղեցույցներ սահմանելու և դրանք բոլոր դեպքերում հրապարակային դարձնելու մասին չափորոշիչների հիման վրա, գտնում ենք, որ այդ երաշխավորությունները գրեթե բառացի պետք է ամրագրված լինեն Դատախազության մասին օրենքի «Դատախազության փոխհարաբերությունները զանգվածային լրատվության միջոցների հետ» վերնագիրը կրող առանձին հոդվածում՝

«i. Անդամ պետությունները կամ դատախազությունները պետք է հաղորդակցվելու քաղաքականություն ընդունեն՝ նպատակ ունենալով երաշխավորելու լրատվամիջոցների համար համապատասխան տեղեկատվության մատչելիությունը, որը անհրաժեշտ է դատախազության աշխատանքի մասին հանրությանը իրազեկելու համար: Լրատվամիջոցների հետ նրանց փոխհարաբերությունների վերաբերյալ ուղեցույցները պետք է ներառվեն նաև դատախազների էթիկայի կանոնագրքերում: Դատախազության խնդիրն է յուրաքանչյուր անդամ պետությունում քննարկել, թե ինչ ծավալով և ինչպես լավագույնս հաղորդակցվել լրատվամիջոցների հետ՝ իրավիճակից, օրենսդրությունից և ավանդույթներից ելնելով:

ii. Դատախազների և լրատվամիջոցների միջև հաղորդակցության ընթացքում պետք է պահպանվեն հետևյալ սկզբունքները՝ արտահայտվելու և մամուլի ազատությունը, խորհրդապահության պարտականությունը, տեղեկատվության ազատությունը, թափանցիկության սկզբունքը, մասնավոր կյանքի և արժանապատվության իրավունքը, ինչպես նաև՝ նախաքննության գաղտնիքը, անմեղության կանխավարկածը, մրցակցությունը, պաշտպանության և արդարացի դատաքննության իրավունքը:

iii. Բոլոր լրատվամիջոցների հետ դատախազների փոխհարաբերությունները պետք է կառուցված լինեն փոխադարձ հարգանքի, վստահության, պատասխանատվության, հավասար վերաբերմունքի և դատական որոշումների նկատմամբ հարգանքի վրա:

iv. Լրատվամիջոցների հետ իրենց փոխհարաբերություններում դատախազները պետք է դիտարկեն ինչպես հետադարձ մոտեցումը՝ արձագանքելով լրատվամիջոցների դիմումներին, այնպես էլ նախահարձակ մոտեցումը՝ դատական որևէ իրադարձության մասին լրատվամիջոցների սեփական նախաձեռնությամբ իրազեկելով:

v. Կարելի է դիտարկել լրատվամիջոցների հետ դատախազների փոխհարաբերությունների ոլորտը վստահիլի խոսնակներն կամ հանրային հարաբերությունների ոլորտում մասնագիտացված դատախազներին:

vi. Գերադասելի է, որպեսզի դատախազները ձգտեն, հնարավորության և/կամ իրագործելիության սահմաններում, ապահովել, որպեսզի քրեական գործերով իրենց որոշումների ազդեցությունը կրող մարդիկ տեղեկացվեն այդ որոշումների մասին՝ նախքան որոշումը լրատվամիջոցներին տրամադրելը:

vii. Երբ դատախազները ուղիղ կապի մեջ են լրատվամիջոցների հետ, պատշաճ տեղեկատվությունն ապահովելու համար, ըստ անհրաժեշտության, պետք է անցկացվի վերապատրաստում հաղորդակցման հարցերով: Այս վերապատրաստումը կարող է լինել ընդհանուր՝ փորձագետների և լրագրողների մասնակցությամբ կամ վարմամբ:

viii. Դատախազությունից դուրս եկող հաղորդակցությունները պետք է ընդհանրապես զերծ լինեն աշխատանքները անձնավորված ձևով ներկայացնելու վտանգից և կարող են նվազեցնելով անձնական քննադատությունների վտանգները:

ix. Դատախազների տրամադրության ներքո գտնվող իրավական միջոցներից բացի, դատախազների մասին սխալ տեղեկատվությանը կամ նրանց դեմ լրատվամիջոցների անարդարացի արշավին ցանկացած արձագանք նախընտրելի է, որ կատարվի դատախազության ղեկավարի կամ խոսնակի կողմից, իսկ կարևոր գործերով՝ Գլխավոր դատախազի կողմից կամ դատախազական ոլորտում բարձրագույն լիազոր մարմնի ծառայության կամ պետական իշխանության բարձրագույն մարմնի կողմից:

x. Նախընտրելի է, որպեսզի կիրառվեն նոր տեխնոլոգիաներ, այդ թվում՝ դատախազության մարմինների ու ծառայությունների ինտերնետային կայքեր՝ դատախազական գործունեության մասին հանրությանը ժամանակին տեղեկատվություն տրամադրելու համար:

xi. Անհրաժեշտության դեպքում, դատախազները կարող են համագործակցել ոստիկանության և համապատասխան այլ մարմինների հետ՝ քննարկելու լրատվամիջոցներին հաղորդման ենթակա տեղեկատվությունը և տարածելու այն»³⁰⁷:

³⁰⁷ Yerevan, 9 October 2013 CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) OPINION (2013) No. 8 OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS ON RELATIONS BETWEEN PROSECUTORS

3.9.4. Դատախազների բարեվարքության ապահովման արտաքին միջոցները

Դատախազության նկատմամբ արտաքին վերահսկողության կարևորագույն մեխանիզմներից է նրանց բարեվարքության ստուգումը արտաքին անկախ մարմինների կողմից: ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության 2019-2020թթ. գործողությունների ծրագրի 10-րդ նպատակի (Իրավապահ համակարգի բարեփոխում) «Դատախազության համակարգի բարեփոխում» ռազմավարական ուղղության 1-ին գործողությունը նախատեսում է՝

«Ներդնել դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգ՝ գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները, փոփոխել դատախազների բարեվարքության գնահատում իրականացնող Էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը»:

ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. Միջոցառումների ծրագրի 9-րդ միջոցառումն էլ նախատեսում է՝

«Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում»:

Որպես այս միջոցառման արդյունք, ակնկալվում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, 2021-2022թ. կունենա «սահմանված դեպքերում ու կարգով դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց հիման վրա համապատասխան անձանց խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու վերաբերյալ իրավասություն», կիրականացնի «դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ ուսումնասիրություններ, դրանց հիման վրա համապատասխան անձանց ներկայացնում խորհրդատվական բնույթի եզրակացություններ», որոնց թիվը 2021թ. համար նախատեսվում է առնվազն 20, իսկ 2022թ. համար՝ 40 եզրակացություն:

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության 2019-2020թթ. գործողությունների ծրագրի նույն ռազմավարական նպատակի շրջանակներում, վերաբերելի դրույթներով նախատեսվում է՝

ա) գնահատել դատախազների բարեվարքությունը՝ գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները. մասնավորապես դատախազների բարեվարքության գնահատումն իրականացվելու է Էթիկայի հանձնաժողովի կողմից, որի կազմավորման կարգը նախատեսվում է փոփոխել.

... գ) սահմանել, որ ԱԺ մշտական հանձնաժողովի կողմից գլխավոր դատախազի թեկնածուի ընտրության գործընթացին անկախ փորձագետների ներգրավումը լինի պարտադիր (ուն կարծիքն ունենալու է խորհրդատվական նշանակություն).

ե) փոփոխել Որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները, որպեսզի դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվի մասնակցությունը չներառող գործընթացով, ինչպես նաև նվազեցնել գլխավոր դատախազի դերը Էթիկայի հանձնաժողովի կազմավորման հարցում.

զ) ընդլայնել ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում, այդ թվում՝ Էթիկայի հանձնաժողովում ...³⁰⁸:

AND THE MEDIA, adopted by the CCPE at its 8th plenary meeting (Yerevan, 8-9 October 2013), <https://rm.coe.int/1680747848>

³⁰⁸ 2019-2023 թվականների ռազմավարության 2019-2020թթ. գործողությունների ծրագիր, էջ 52-53:

Քանի որ Էթիկայի ու Որակավորման հանձնաժողովների կազմավորման փոփոխությունների ու բարեվարքության թերթիկները բոլոր դատախազների թեկնածուների համար նախատեսելու անհրաժեշտությունը արդեն իսկ քննարկվել է նախորդ կետերում, պարզապես նշենք, որ այդ հանձնաժողովների կազմում ոչ դատախազ անդամների արդյունավետ ներգրավումը կարող է դատախազության բարեվարքության ապահովման և հետագա ստուգման գործուն արտաքին մեխանիզմ հանդիսանալ:

Միաժամանակ, չլուծված է մնացել թե բարեվարքության թերթիկներ/եզրակացությունների ապացուցողական արժեքի ու հրապարակայնության հարցը: Ինչպես հայտնի է, առաջին անգամ ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների ԱԺ-ում ընտրության գործընթացի շրջանակներում էր, երբ հայտնի դարձավ, որ ԿԿՀ-ն թեկնածուներից մեկի վերաբերյալ տվել էր բացասական եզրակացություն, իսկ մյուսների մասով նշել նրանց կողմից ԱԺ-ին իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ տրամադրելու մասին: Փորձը ցույց տվեց, որ այս ու ընդհանրապես ԿԿՀ որպես պետական մարմինների ու վերջիններիս պաշտոնատար անձանց բարեվարքությունն ապահովող ու ստուգող արտաքին անկախ մարմնի կարգավիճակի հարցում, կա երկու կարևորագույն, իրար հետ փոխկապակցված խնդիր՝ այդ եզրակացությունների հանրության համար ոչ հասանելի լինելը և դրանք անտեսելու պատճառներն ու հետևանքները որոշում կայացնողների համար: Մեր խորին համոզմամբ, սրանք համակարգային առումով սերտորեն կապված խնդիրներ են, քանի որ եզրակացության բովանդակությունը հանրության համար մատչելի դառնալու դեպքում, չափազանց դժվար է որոշում կայացնող մարմնի (այդ դեպքում՝ ԱԺ-ի, սակայն՝ նույն վերաբերելիությամբ նաև Գլխավոր դատախազի) այդ եզրակացության մեջ ներկայացված փաստերն անտեսելը: Ապագայում, այս հարցը նորից է լուծման կարոտ լինելու ԱԺ-ի կողմից Գլխավոր դատախազ ընտրելիս, և հետաքար, անհրաժեշտ է օրենսդրորեն անդրադառնալ մեր նշած այդ երկու հրապարակայնության ու պարտադիրության հարցերի կարգավորմանը: Մինչդեռ, նման անհրաժեշտության մասին Կառավարության վերը մեջբերված ռազմավարական երկու փաստաթղթերում էլ նշված չէ:

Դեռ ԿԿՀ ստեղծմանը նախորդող ժամանակահատվածում, Հայաստանի Հանրապետությունը ԳՐԵԿՈ-ին, ՏՀԶԿ-ին և այլ մարմիններին, ի պատասխան բարեվարքության ապահովման արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու երաշխավորություններին, զեկուցում էր, որ ապագայում ստեղծվելու է անկախ և արդյունավետորեն լիազորված մարմին, որի գործունեությամբ ապահովվելու էր այդ մեխանիզմների գործողությունը: Այս նախապատմությունն արտացոլված է, մասնավորապես, ԳՐԵԿՈ-ի 2017թ. 4-րդ շրջանի զեկուցում, որտեղ 18-րդ Երաշխավորության ներքո նշվում էր հետևյալը՝

«85. ԳՐԵԿՈ-ն երաշխավորել էր համապատասխան միջոցառումներ ձեռնարկել՝ պատգամավորների, դատավորների և դատախազների գույքի հայտարարագրերի վերաբերյալ նորմերի արդյունավետ հսկողությունն ու կիրարկումը ապահովելու նպատակով, հատկապես՝ ամրապնդելով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործառնական անկախությունը, նրան տրամադրելով հստակ իրավագրություն, լիազորություններ և համարժեք ռեսուրսներ՝ ներկայացված հայտարարագրերը խորությամբ ստուգելու, անճշտությունները կարգավորելու և վարույթներ հարուցելու, իսկ այդ կանոնների խախտման դեպքերում՝ արդյունավետ, համաչափ և զսպող պատժամիջոցներ կիրառելու համար:

88. Իշխանությունները կրկնում են, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի փոխարեն ստեղծվելու է հակակոռուպցիոն նոր կանխարգելիչ մարմին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Համապատասխան օրենքը դեռ չի մտել ուժի մեջ, քանի որ դեռևս նշանակված չեն Հանձնաժողովի անդամները: Ակնկալվում է, որ Հանձնաժողովը լինելու է անկախ մարմին, ունենալու է համարժեք անձնակազմ ու սեփական բյուջեն: **Նախատեսում է, որ Հակակոռուպցիոն ապագա կանխարգելիչ մարմինը պատասխանատու է լինելու նաև բոլոր հանրային պաշտոնատար անձանց ֆինանսական**

տեղեկությունների բացահայտման նկատմամբ հսկողության համար և լիազորված է լինելու վարչական վարույթ հարուցելու հայտարարագրման իրենց պարտավորությունները խախտած պաշտոնյաների նկատմամբ»³⁰⁹:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքը³¹⁰ այդ հույսերը չարդարացրեց և պատգամավորներին, դատավորներին, դատախազներին, ինչպես նաև ԲԴԽ անդամներին ու քննիչներին դուրս բերեց այս նոր մարմնի իրավասության տիրույթից: Մասնավորապես, այդ օրենքի 23-րդ հոդվածի (Հանձնաժողովի գործառույթները) և 24-րդ հոդվածի (Հանձնաժողովի լիազորությունները) 1-ին մասերի վերաբերելի դրույթներով նախատեսվում է հետևյալը՝

Հոդված 23. «1. Հանձնաժողովի գործառույթներն են՝

... 1.1) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների և իրավիճակային շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը.

... 7) օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում բարեկարգության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման.

8) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում նույն օրենքով սահմանված հայտարարագիրը վերլուծելը»:

Հոդված 24. «1. Հանձնաժողովը՝

... 8) ներկայացնում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն»:

Փաստորեն, ԳԲԵԿՈ-ի 18-րդ Երաշխավորության տեսանկյունից, ԿԿՀ օրենքը շատ թույլ է՝ պահանջվող արդյունավետ կիրարկումն ապահովելու համար. նախևառաջ, 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում՝ խորհրդատվական եզրակացությունների առնչությամբ, դատախազներն ու նրանց ղեկնածուներն ընդհանրապես նշված չեն, իսկ 24-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն, ԿԿՀ-ն մասին ընդհանրապես լիազորված չէ անգամ խորհրդատվական պարզաբանումներ տալ նրանց վարքագծի կանոնների վերաբերյալ:

Այսպիսով, անհրաժեշտ է փոփոխություններ մտցնել համապատասխան բոլոր օրենքներում և սահմանել հետևյալ երկու դրույթները՝

- ԿԿՀ եզրակացությունների տրամադրում նաև դատախազների ու նրանց թեկնածուների համար
- ԿԿՀ եզրակացությունները հրապարակային են, և
- ԿԿՀ եզրակացությունները կրում են խորհրդատվական բնույթ, սակայն որոշում կայացնող մարմինները/պաշտոնատար անձինք պարտավոր են պատճառաբանված կերպով և պաշտոնապես ու նաև՝ հրապարակային պատասխանել ԿԿՀ-ին՝ վերջինիս եզրակացության մեջ նշված փաստերի իրենց

³⁰⁹ GrecoRC4(2017)15 FOURTH EVALUATION ROUND Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors COMPLIANCE REPORT ARMENIA, adopted by GRECO at its 78th Plenary Meeting 8 December 2017 (Strasbourg, 4-8 December 2017)

³¹⁰ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142451>

որոշման վրա ունեցած ազդեցության աստիճանի ու այդ աստիճանի հիմքերի մասին:

3.10. Դատախազության և դատախազների նյութական, ֆինանսական և սոցիալական ապահովվածության երաշխիքները

3.10.1. Դատախազության նյութական և ֆինանսական ապահովվածությունը

Դատախազության, ինչպես և ցանկացած այլ մարմնի գործունեության նյութական, ֆինանսական, սոցիալական և այլ երաշխիքների ամրագրման հիմքում ընկած են՝ 1) տվյալ մարմնի առջև դրված խնդիրները և 2) այդ մարմնի ինստիտուցիոնալ և դրա պաշտոնատար անձանց սուբյեկտիվ իրավական կարգավիճակը: Խնդիրների իրականացման համար տրամադրվելիք երաշխիքների անհրաժեշտության մասին օբյեկտիվ ցուցանիշներն արտացոլված են՝ տվյալ մարմնի քանակական և որակական տվյալների վիճակագրությամբ՝ ծանրաբեռնվածություն, գործերի բացահայտում, հանցավորության նվազում և այլն, իսկ ինստիտուցիոնալ և սուբյեկտիվ իրավական կարգավիճակի տեսակետից ելակետային է դառնում այդ երաշխիքների համարժեքությունը Հետազոտության 1-ին գլխում քննարկված դատախազության՝ որպես դատական իշխանության կրողի կարգավիճակին:

«Խորհրդարանի (կամ այլ լիազոր պետական մարմնի) կողմից բավարար հատկացումներն ապահովելու համար ենթադրվող ծախսերը պետք է հաշվարկվեն նախապես: Սա **անհրաժեշտ է դարձնում բյուջետային պլանավորման վստահելի սխեմաների առկայությունը...**: Նախորդող տարվա քրեական ոլորտի և այլ վերաբերելի վիճակագրությունը, ինչպես նաև դատախազության կայուն միտումներն ու գործունեությունը... կարող են հիմք ծառայել ընդհանուր նվազագույն բյուջեի մշակման համար՝ գալիք մեկ տարվա կամ այլ ժամկետի կտրվածքով»³¹¹:

Հենց սրա համար է կարևոր ներկայացուցչական ու ոչ վերանայելի վիճակագրություն ունենալը, ինչպես նաև, լիազորություններն ամրագրելուց բացի, նաև դատախազության առջև դրված խնդիրների օրենսդրական սահմանումը, ինչի մասին խոսվեց վերևում:

Դատախազությանը, ինչպես նաև ցանկացած այլ մարմնին տրվող բյուջետային հատկացումները, պետք է համապատասխանեն բյուջետավարման ընդհանուր սկզբունքներին՝ **սկսած կարիքների գնահատումից: Վերջինս իրականացնելու համար շատ կարևոր է հաշվի առնել օրենսդրական սպասվող կամ կատարված փոփոխությունները, որոնցով փոփոխություններ են մտցվում դատախազ-քննիչ և հետաքննության մարմին, դատախազ-դատարան հարաբերությունների լիազորությունների, հետևաբար և ծանրաբեռնվածության բաշխման համամասնությունների համակարգում:** Օրինակ, եթե ՀՀ նոր Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն հետաքննություն իրականացնող անձինք մշտապես, իսկ քննիչները՝ ապացույցի թույլատրելիության ու դատավարական գործողության իրավաչափության հարցերով, այսինքն՝ առավելապես, դատարանում ենթարկվելու են հակընդդեմ հարցաքննության, ապա անհրաժեշտ է գիտակցել, որ մեծանալու է նրանց, ինչպես նաև՝ դատախազների ու դատավորների աշխատանքային ծանրաբեռնվածության ծավալը, որը պետք է արտացոլվի համապատասխան բոլոր մարմինների բյուջեներում: Կամ՝ նախքան քրեական գործը դատարան ուղարկվելը, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ երկարացնելու մասին

³¹¹ Strasbourg, 11 December 2012 CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) OPINION (2012) No. 7 OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS ON THE MANAGEMENT OF THE MEANS OF PROSECUTION SERVICES, adopted by the CCPE at its 7th plenary meeting, (Strasbourg, 26-27 November 2012), այսուհետ՝ ԵՊՄԿ Կարծիք 2-7, կետ 15, <https://rm.coe.int/16807475b5>

միջնորդությունները քննելիս, եթե նախկինում տարընթերցում կար «վարույթ» հասկացության և հետևաբար, այն իրականացնող մարմնի հարցի առթիվ (այսինքն՝ արդյոք դա դատարանն է՝ կոնկրետ միջնորդությունը քննելու մասով, թե քննիչը՝ որպես դեռևս դատարան չուղարկված մինչդատական վարույթն իրականացնող մարմին), ապա այժմ այդ հարցը իրավամբ լուծված է հոգուտ առաջին տարբերակի, ինչը նշանակում է, որ օրինակ՝ թարգմանչական ծառայությունների ապահովումը նույնպես ընկնելու է դատարանի՝ որպես տվյալ միջնորդություններով վարույթ իրականացնող մարմնի վրա:

Բյուջետավարման կարևոր սկզբունքներից է նաև, գնումների իրականացման հետ անալոգիայով, հաշվարկներն անելիս գնվող ապրանքների/ծառայությունների արժեքի կենսական ամբողջ ցիկլի գնահատումը (life cost analysis): Օրինակ՝ էլեկտրոնային արդարադատության ապրանքների/ծառայությունների արժեքները սահմանելիս և բյուջեում արտացոլելիս, պետք է հաշվի առնել դրանցից միասնաբար օգտվող մարմինների առկայությունը, ծրագրային ապահովման թարմացումները և այլն: Բացի այդ, դարձյալ դատավարական տեսակետից, անհրաժեշտ է լինելու ելնել նաև դատավարական փաստաթղթերի աուտենտիկության օրենքով սահմանված սկզբունքներից, օրինակ՝ արդյո՞ք թղթային կրիչները պահպանվելու են որպես «վերահսկիչ» հիմք/օրինակ, թե՛ ոչ, արդյո՞ք ինչն է համարվելու բնօրինակ փաստաթուղթ ՔԴՕ իմաստով և այլն:

«Անդամ պետությունները, իրենց իրավական համակարգով թույլատրելի շրջանակներում, կարող են նաև քննարկել մի մոդելի ստեղծում կամ ամրապնդում, որտեղ դատախազության աշխատանքները կառավարվում են ըստ արդյունքների կառավարման սկզբունքի: Այս հայեցակարգը ինտերակտիվ, համաձայնությամբ իրացվող կառավարման մոդել է, որի շրջանակներում ռեսուրսները հատկացվում են համաձայնեցված և ակնկալվող գործունեության հիման վրա»³¹²:

Այսինքն, ԱԺ-ն, մասնավորապես, ԳԴ հաղորդումը լսելիս, կամ հաջորդ տարվա բյուջետային հայտը քննարկելիս, պետք է իրավունք ունենա ստուգելու, թե արդյոք Դատախազության կողմից բյուջետային միջոցները ծախսվել են օրենսդրի հետ համաձայնեցված ու նախորդ տարվա բյուջեի մասին օրենքում ամրագրված և ակնկալելի գործունեության վրա՝ և բացի այդ՝ անհրաժեշտ են եղել այդ համաձայնեցված և ակնկալված գործունեության համար, այսինքն՝ արդյոք կատարված ծախսերը եղել են վերաբերելի և անհրաժեշտ, թե ոչ:

Դատախազությունը պետք է մասնակցի նման ստուգման գործիքի մշակման աշխատանքներում: ԵԴԽԽ նույն Կարծիք Հ-7-ի 53-րդ կետի համաձայն

«Այս մոդելը (հայեցակարգը) կառավարման մի գործիք է, որի ամրագրման հիմքում կատարողականի առթիվ համապատասխան պետական մարմնի (այն է՝ Ֆինանսների նախարարության, Արդարադատության նախարարության կամ խորհրդարանի) և Դատախազության միջև անցկացվող բանակցություններն են: Վերջինս պետք է ինքը մասնակցի այդ բանակցություններին, քանի որ լավագույնս կարող է սահմանել այն նպատակները, որոնցով պետք է առաջնորդվեն դատախազներն իրենց ամենօրյա աշխատանքում»:

Այս տեսակետից ևս մեկ անգամ կարևորվում է Դատախազության առջև դրվող խնդիրների օրենսդրական ամրագրումը, քանի որ հենց դրանք են դրվելու ծախսերի հաշվարկի ու դրանց իրականացման արդյունավետության ու անհրաժեշտության գնահատման հիմքում:

³¹² Strasbourg, 11 December 2012 CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS (CCPE) OPINION (2012) No. 7 OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN PROSECUTORS ON THE MANAGEMENT OF THE MEANS OF PROSECUTION SERVICES, adopted by the CCPE at its 7th plenary meeting, (Strasbourg, 26-27 November 2012), այսուհետ՝ ԵԴԽԽ Կարծիք Հ-7, կետ 52, <https://rm.coe.int/16807475b5>

3.10.2. Դատախազների վարձատրությունը, սոցիալական և այլ երաշխիքները

«Ինչպես և դատավորների դեպքում, իրականացվող խնդիրների կարևորությանն համահունչ վարձատրությունը էական է արդյունավետ և արդարացի քրեական արդարադատության համակարգ ունենալու համար: Բավարար վարձատրությունը նաև անհրաժեշտ է դատախազների կառույցիայի վտանգը նվազեցնելու համար»³¹³:

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության 2019-2020թթ. գործողությունների ծրագրի «Դատախազության համակարգի բարեփոխում» ռազմավարական ուղղության ներքո³¹⁴ նախատեսվում է՝

«ը) բարձրացնել դատախազների աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները, ինչպես նաև ավելացնել դատախազների թվակազմը»:

Հիմնական խնդիրը, որն առկա է Հայաստանում դատախազների աշխատանքի վարձատրության տեսանկյունից, դա դատախազների՝ որպես դատական իշխանության ներկայացուցիչների կարգավիճակը այդ վարձատրության հիմքում որպես սկզբունք դնելուց հրաժարվելն է: Մինչդեռ այդ սկզբունքը սահմանված էր Դատախազության մասին 2007թ. օրենքով և լիովին համահունչ էր վերը ուսումնասիրված միջազգային չափորոշիչներին: Մասնավորապես, ԵԽ ՆԿ (2000)19 Հանձնարարականի Բացատրական հուշագրի 5-րդ կետը նշում է հետևյալը՝

«Դատախազների կարգավիճակը և նրանց վարձատրության ու թոշակի դրույքաչափերը պետք է հաշվի առնեն դատական համակարգի և դատախազության միջև որոշակի հավասարակշռություն պահպանելու անհրաժեշտությունը, քանի որ երկուսն էլ՝ չնայած իրենց պարտականությունների տարբերվող բնույթի, դերակատարում ունեն քրեական արդարադատության համակարգում»:

Նույն կետում, էլ ավելի ընդգծելով վարձատրության չափերն ամրագրելիս դատախազների կարգավիճակը հաշվի առնելու կարիքը, Հուշագիրը նշում է, որ՝

«դ) Դատախազները պետք է ունենան ծառայության ողջամիտ պայմաններ, մասնավորապես՝ վարձատրության, պաշտոնավարման պաշտպանվածության և թոշակի տեսակետից, որոնք համարժեք են նրանց հսկայական դերի հետ...»

է) Դատախազները, իրենց ընտանիքների հետ միասին, պետք է ֆիզիկապես պաշտպանված լինեն պետական մարմինների կողմից՝ երբ նրանք անձնական անվտանգությունը վտանգվում է իրենց գործառնությունների պատշաճ իրականացման հետևանքով»:

Այնուհետև Հուշագիրը նշում է, որ այս վերջին (է) կետի պահանջը հղում է պարունակում ԵԽ ՆԿ «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» Հանձնարարականի վրա³¹⁵:

ՀՀ Դատախազության մասին գործող օրենքը, ինչպես նշվեց, չի համապատասխանում այն սկզբունքներին, որոնք ամրագրված են միջազգային մեջբերված փաստաթղթերում՝ դատախազների կարգավիճակը նրանց վարձատրության հարցերը կարգավորելիս հաշվի առնելու և դատավորների կարգավիճակի հետ հավասարակշռելու տեսակետից: Մասնավորապես, Դատախազության մասին օրենքի 64-րդ հոդվածի (Դատախազների վարձատրությունը) 1-ին մասը սահմանում է հետևյալը՝

«Դատախազների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական

³¹³ ՎՀ-ի Զեկույց դատախազության անկախության չափորոշիչների մասին, կետ 69:

³¹⁴ 2019-2023 թվականների ռազմավարության 2019-2020թթ. գործողությունների ծրագիր, Էջ 52-53:

³¹⁵ Recommendation (94) 12 of the Committee of Ministers of the Council of Europe on the Independence, Efficiency and Role of Judges, (Adopted by the Committee of Ministers on 13 October 1994 at the 518th meeting of the Ministers' Deputies).

ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: **(64-րդ հոդվածը փոփ. 21.01.20 ՀՕ-26-Ն):**

Մինչդեռ 2007թ. Օրենքի 55-րդ հոդվածը, լիովին համահունչ լինելով ներչկայացված միջազգային չափորոշիչներին, սահմանում էր

«Հոդված 55. Դատախազների վարձատրությունը

1. Դատախազի աշխատավարձը բաղկացած է պաշտոնային դրույքաչափից, հավելավճարներից եւ օրենքով նախատեսված այլ վճարներից:

2. Գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափը կազմում է Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափի եւ դրա նկատմամբ հաշվարկվող քառորդ չափով հավելավճարի գումարի 95%-ը:

3. Գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնային դրույքաչափը կազմում է գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 85%-ը:

4. Գլխավոր դատախազության վարչության պետի, Երեւան քաղաքի դատախազի, զինվորական դատախազի տեղակալի պաշտոնային դրույքաչափը կազմում է գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 80%-ը»:

Ակնհայտորեն, 2007թ. Օրենքի հեղինակները ձգտել են ապահովել դատավորի ու դատախազի կարգավիճակներից բխող նրանց վարձատրության դրույքաչափերի միջև որոշակի «հավասարակշռություն հաստատելու» մասին միջազգային չափորոշիչներով ներկայացված պահանջը: Պետք է ասել, որ նույն դրական մոտեցումը 2007թ. Օրենքը նախատեսում էր նաև Դատախազությունում պետական ծառայությունը կարգավորող սկզբունքների կապակցությամբ: Մասնավորապես, Օրենքի 65-րդ հոդվածը (Դատախազությունում պետական ծառայությունը կարգավորող իրավական ակտերը) ամրագրում էր

«1. Դատախազության աշխատակազմում պետական ծառայության հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներն այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են դատախազության աշխատակազմում պետական ծառայության նկատմամբ եւ չեն հակասում սույն օրենքին:

2. Ընդ որում, «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները դատախազության աշխատակազմում պետական ծառայության հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածելիս՝

1) «դատական ծառայություն»՝ ենթադրում է «դատախազության աշխատակազմում պետական ծառայություն»:

2) դատական դեպարտամենտի ղեկավարին վերապահված լիազորություններն իրականացնում է դատախազության աշխատակազմի ղեկավարը:

3) դատական դեպարտամենտի առաձնացված ստորաբաժանման ղեկավարին վերապահված լիազորություններն իրականացնում է դատախազության աշխատակազմի առաձնացված ստորաբաժանման ղեկավարը:

4) դատարանների նախագահների խորհրդին եւ վճարելի դատարանի նախագահին վերապահված լիազորություններն իրականացնում է գլխավոր դատախազը:

5) այն լիազորությունները, որոնք իրականացվում են վճարելի դատարանի նախագահի կողմից՝ դատարանների նախագահների խորհրդի եզրակացության հիման վրա, իրականացնում է գլխավոր դատախազը միանձնյա:

6) դատարաններ՝ ենթադրում է գլխավոր դատախազություն, Երեւան քաղաքի, Երեւան քաղաքի համայնքների, մարզերի դատախազություններ, զինվորական կենտրոնական դատախազություն, կայազորների զինվորական դատախազություններ:

7) դատավոր՝ ենթադրում է դատախազ»:

Այսպիսով, անհրաժեշտ է ՀՀ Դատախազության մասին օրենքում վերականգնել նույն Օրենքի 2007թ. տարբերակի կարգավորումները՝ ի դեմս 55-րդ և 65-րդ հոդվածների տեքստերի:

3.11. Առաջարկներ՝ 3-րդ գլխում քննարկված հարցերի վերաբերյալ

Հոդված (գործող Սահմանադրության 177 հոդված) ... ՀՀ Գլխավոր դատախազը 4-րդ մասը՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի և անկախ իրավաբան փորձագետների հանձնաժողովի համատեղ առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, 10 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան մեկ անգամ ընտրվել գլխավոր դատախազ: Գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում կարող է նշանակվել միայն Գլխավոր դատախազի պաշտոնում նշանակվելու համար սահմանված պայմաններին բավարարող անձը:»

ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.1. Ընդհանուր դիտարկում

Քննչական մարմինների և քննիչների կարգավիճակը լիովին պայմանավորված են այն գործառնություններով, որոնք նրանց կողմից իրականացվում են քրեական արդարադատության ոլորտի մյուս դերակատարների, մասնավորապես՝ դատախազության ու դատարանի հետ ունեցած իրավահարաբերություններում: Այդ հարաբերությունների հիմքում ընկած է քննչական մարմինների գործունեության նկատմամբ դատախազական հսկողությունն ու դատական վերահսկողությունը, ինչպես նաև՝ դատախազական հսկողության նկատմամբ դատական վերահսկողությունը: Քանի որ սույն Հետազոտության հիմնական առարկան Դատախազությանը վերաբերող հարցերն են, այս գլխում քննարկվում են քննչական մարմինների, ինչպես նաև հետաքննության մարմինների ինստիտուցիոնալ կազմակերպման խնդիրները՝ այն դատավարական գործառնություններին համապատասխան, որոնք արդեն իսկ քննարկվել են Հետազոտության 2.1 և 2.2 կետերում:

Ինչ վերաբերում է քննիչների արդյունավետության, անկախության ու հաշվետվողականության երաշխիքներին, ապա կարգավիճակի ու դրանից բխող տարրերը՝ անկախություն, լիազորվածություն, քաղաքական և այլ չեզոքություն, ինչպես նաև՝ լիազորությունների դադարեցում բացառապես օրենքով սահմանված հիմքերով ու կարգով, ապա դրանք լիովին վերաբերում են նաև քննիչներին՝ բացառությամբ, ըստ առաջարկվող և ՔԴՕ-ի փաստացի որդեգրված քննիչ-խուզարկու մոդելի, դատավորի կարգավիճակին բնորոշ դատախազի կարգավիճակի տարրերի: Այս տեսակետից, քննության և հետաքննության մարմինների հաշվետվողականության և թափանցիկության դատավարական սահմանները ամբողջությամբ որոշվում է կոնկրետ գործով դատախազի կողմից՝ հաշվի առնելով նաև միասնական վիճակագրության՝ Հետազոտության 2.1 գլխում քննարկված անհրաժեշտությունը, իսկ ինստիտուցիոնալ կազմակերպման տեսակետից այդ հարցերը պետք է կարգավորվեն Սահմանադրության և Տեղեկատվության ազատության մասին օրենքի ընդհանուր դրույթներին համապատասխան՝ միաժամանակ ապահովելով նաև թափանցիկության այն երաշխիքները, որոնք առավելագույնս կարող են իրացվել համայնքային ոստիկանությունները ընտրովի տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության տակ դնելու դեպքում:

Պետք է նշել նաև, որ ՀՀ գործող Սահմանադրությամբ որդեգրված սահմանադրական, բայց ոչ գործադիր, ոչ դատական, ոչ էլ օրենսդիր իշխանության մեջ չմտնող մարմիններ ստեղծելու արդյունքում, քննչական մարմինները, Դատախազության հետ միասին տեղ են գտել Սահմանադրության 8-րդ՝ «Դատախազությունը և քննչական մարմինները» գլխում, և Սահմանադրության իրականում **բովանդակագուրկ** 178-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը:

2. Քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով»:

Քննիչների կարգավիճակի մասով, ՀՀ Սահմանադրությունը մեկ անգամ է անդրադառնում դրա տարրերից մեկին՝ ապաքաղաքականացվածությանը՝ 46-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ՝

«Դատավորները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ: Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ»:

4.2. Քննչական և հետաքննության մարմինների միավորումը և հավասարաչափ արդյունավետ հակակշիռների ստեղծման անհրաժեշտությունը

Քրեական դատավարական օրենսդրությամբ յուրաքանչյուր քրեական գործով նախաքննության պարտադիր լինելը, ինչպես նաև վերը քննարկված այլ փոփոխություններ՝ քննիչ-դատավոր մոդելից քննիչ-դատախազի խուզարկու և վկա մոդելին անցնելու առումով, ու առավել կարևոր հետաքննությունը միայն նախաքննության շրջանակներում անցկացնելու պահանջը, հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործողությունների ու մարմինների ՔԴՕ Նախագծով տրվող նոր սահմանումներն ու բովանդակությունը հիմք են տալիս պնդելու, որ այդ մոդելի տրամաբանական զարգացումը կլինի հետաքննության և նախաքննության ծայրաստիճան արհեստական տարանջատումից հրաժարվելը: Մասնավորապես, ՔԴՕ 6-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հետաքննությունը նշանակում է հետաքննության մարմնի կողմից նախաքննության ընթացքում իրականացվող և դրան օժանդակող գործունեություն, որը ներառում է գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը», իսկ նույն հոդվածի 21-րդ կետի համաձայն՝ հետաքննության մարմինը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պետական մարմնի համակարգում գործող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարն է (հետաքննության մարմնի պետ) և աշխատակիցները (հետաքննիչներ), ովքեր նախաքննության շրջանակներում իրավասու են կատարելու գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Այդ բոլոր գործողությունները հետաքննության մարմինները իրականացնելու են ոչ իրենց որոշմամբ, այսինքն՝ լինելու են զուտ կատարողի դերում, ինչից բխում է, որ շատ տրամաբանական կլինի, եթե հետաքննության մարմինը լինի քննչական մարմնի կազմում՝ կատարելով դատարանի կողմից թույլատրվող ՕՀՄ-ները, որոնք Նախագծով այժմ կոչվում են գաղտնի քննչական գործողություններ և քննիչի կողմից հանձնարարվող մյուս ՕՀՄ-րը: Այսինքն, ոչ մի դատավարական անհրաժեշտություն այլևս չկա՝ առանձին հետաքննության մարմին ունենալու համար: Մյուս կողմից, հաշվի առնելով դատախազի բացառիկ մենաշնորհը կարևորագույն դատավարական որոշումներ կայացնելիս՝ մեղադրանքի առաջադրում, քրեական հետապնդման դադարեցում և այլն, հետաքննության մարմինները հայտնվում են ուղիղ դատախազական հսկողության ներքո: Պատկերն ավելի ամբողջական է դառնում այն փոփոխությամբ, որի համաձայն հետաքննության մարմինները այլևս դատարանի միջնորդություն չեն ներկայացնելու ՕՀՄ-ներ իրականացնելու մասին, այսինքն՝ դատական վերահսկողությունը նույնպես մեծամասամբ իրականացվելու է նախաքննության նկատմամբ հսկողության միջոցով: Այս ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ ապագա բարեփոխումները պետք է ընթանան մեկ միասնական մարմին ստեղծելու ճանապարհով, որը դատական վերահսկողության ու դատախազական հսկողության, իսկ իրականում՝ պարզապես դատախազական ղեկավարման ներքո իրականացնելու է գաղտնի և քողարկված գործողություններ:

Թե ինչպես կկոչվի այդ մարմինը՝ իրապես Միասնական Քննչական կոմիտե, Քրեական ոստիկանություն և այլն, էական չէ: Էական է նշված գործառնություններն իրականացնող ստորաբաժանումների միավորումը մեկ մարմնում՝ թե ներկայիս տարբեր քննչական մարմինների, թե բոլոր հետաքննության մարմինների մակարդակով: **Այսինքն՝ լինելու են մաքսային, հարկային, զինվորական, ազգային անվտանգությանն առնչվող և մյուս բոլոր հանցագործությունների վերաբերյալ գործերով քննչական ու օպերատիվ ստորաբաժանումներ:** Պետք է ասել, որ իրավացիորեն Հայաստանն արդեն իսկ գնացել է կոնկրետ, այն է՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով նման միասնական կառույց ունենալու ճանապարհով՝ նկատի ունենալով Հակակոռուպցիոն կոմիտեն, որը պետք է հանդես գա որպես քննչական մարմին՝ ունենալով նաև օպերատիվ ծառայություն: Ի թիվս այլի, նման մարմնի ստեղծումը անհրաժեշտ է նաև միասնական նշված մարմնի հետ անհրաժեշտ հավասարակշռությունն ապահովելու առումով, ընդ որում՝ երկկողմանի, քանի որ ինչպես նշվում է ՀՀ Դատաիրավական բարեփոխումների 2018-2023թթ. Ռազմավարության վերաբերյալ փորձագիտական զեկույցում՝

«111. Ինչ վերաբերում է 5.2 ենթանպատակին, որն ուղղված է օրենսդրական այնպիսի փոփոխությունների իրականացմանը, որոնցով հատուկ քննչական մարմին է ստեղծվում կոռուպցիոն հանցագործությունների համար՝ ... կոռուպցիոն գործերով բոլոր քննչական լիազորությունները մեկ մարմնի մեջ կենտրոնացնելով, ապա այն նաև ստեղծում է հսկայական ռիսկեր, քանի որ ընդամենը մեկ գերատեսչություն վերահսկողության տակ պահելը ավելի հեշտ կարող է լինել, քա բոլոր իրավապահ ստորաբաժանումները, ինչպով հնարավոր է, որ խթանվի առանձին բաժրձաստիճան սուբյեկտների հանցանքների անպատժելիությունը... Օրենսդրական գործընթացի ժամանակ այդ բոլոր տարրերը պետք է փոխադարձաբար հավասարակշռվեն:

... 120. Բավականին զարմանալի է, որ գույություն չունի Դատախազության ու քննչական մարմինների գործունեության արդյունավետությունն ապահովելու ռազմավարական նպատակին նվիրված ռազմավարական որևէ ուղեցույց»³¹⁶:

Այսինքն, չափազանց կարևոր է, որպեսզի Հայաստանում լինեն մեկից ավելի քննչական մարմիններ, ինչը ակնհայտ անհրաժեշտություն է՝ թեկուզ նույն մարմնի վրա դրա աշխատակիցների ենթադրյալ հանցագործությունների բացահայտումն ու քննությունը չթողնելու իմաստով, անհրաժեշտ է մեկ այլ քննչական մարմին: Մյուս կողմից, փորձը ցույց է տալիս, որ այդ, այսպես կոչված, «քննչական հակակշիռը» բավարար չէ, եթե այդ մարմինը չունի օպերատիվ ծառայություն: Կարծում ենք, սա է նաև հիմնական պատճառներից մեկը, որ Հայաստանում, մինչ օրս չունենք, օրինակ, խոշտանգման գործերով դատավճիռներ, քանի որ օրինակ, ՀՔԾ-ն պետք է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար դիմի կամ ոստիկանությանը, երբեմն էլ՝ ԱԱԾ-ին ու ՊԵԿ-ին, որոնց աշխատակիցները նույն ՀՔԾ-ի քննչական ենթակայության հանցագործություններով հատուկ սուբյեկտներից են: **Այսինքն անհրաժեշտ է երկու քննչական մարմինների առկայություն, որոնք կունենան իրենց սեփական օպերատիվ ծառայությունները:**

Քննչական և հետաքննության մարմինների բարեփոխումներն իրականացնելիս, անհնար է հաշվի չառնել Հայաստանի Հանրապետության այն փորձը, որն առաջացրել է այդ բարեփոխումների բուն անհրաժեշտությունը, որի մասին բազմիցս բարձրաձայնել են ՀՀ քաղաքացիական հասարակությունն ու անկախ փորձագետները: Մասնավորապես «Հայաստանի Հանրապետության վերականգնմանն ուղղված անհրաժեշտ բարեփոխումների Հայեցակարգ-Ճանապարհային քարտեզում» «Իրավապահ և անվտանգության մարմիններ» խորագրի ներքո նշվել է՝

³¹⁶ SUPPORT TO THE IMPLEMENTATION OF THE JUDICIAL REFORM IN ARMENIA ASSESSMENT OF THE 2018-2023 STRATEGY FOR JUDICIAL AND LEGAL REFORMS IN THE REPUBLIC OF ARMENIA AND THE ACTION PLAN DERIVING THEREOF, 20 October 2018, 35

«2015թ-ի սահմանադրական փոփոխությունները և դրանով պայմանավորված՝ հետագայում ընդունված օրենքներով, բացի այն, որ իրավապահ մարմինները դրվեցին գործադիրի կամ անձամբ վարչապետի ենթակայության ներքո և չապահովվեց նրանց հաշվետվողականությունը հանրության առջև, չապահովվեց նաև դատախազության, հետաքննության, քննչական և անվտանգության մարմինների միջև գործառնության այնպիսի բաշխումն ու միմյանց հավասարակշռումը, յուրաքանչյուրի ֆունկցիոնալ անկախությունը, որը հիրավի կհանգեցնեք հանցագործությունների կանխարգելմանը, դրանց բացահայտմանը, մեղավորներին պատժելուն, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովմանը և մարդու իրավունքների երաշխավորմանը:

Փոխարենը՝ իրավապահ և անվտանգության մարմինները վերածվեցին անձանց իշխանությունը պահպանելու և երկարաձգելու, անհատներին և հասարակությանը ճնշելու, մարդու իրավունքների լայնածավալ և կոպիտ խախտումները կոծկելու գործիքների՝ չարաշահելով իրենց վերագրված լիազորությունները: Արդյունքում՝ այս կառույցների նկատմամբ չստեղծվեց հասարակական վստահություն: Հաշվի նստելով այս ամենի հետ՝ անհրաժեշտ է համակարգային իմաստով վերաիմաստավորել և վերաբժնորել իրավապահ և անվտանգության մարմինների նշանակությունը, նպատակները, գործառնությունը եւ սահմանել դրանք, մշակել հստակ մեխանիզմներ դրանք իրացնելու համար, ապահովել այդ մարմինների կառուցվածքային և գործառնության անկախությունը և հաշվետվողականությունը, ստեղծել օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործնական երաշխիքներ մարդու իրավունքներն ապահովելու առումով՝ կառուցելով և զարգացնելով հասարակական վստահություն ամբողջ համակարգի նկատմամբ»³¹⁷:

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության³¹⁸ «Քննչական մարմինների համակարգի բարեփոխում» Ռազմավարական ուղղության ներքո ամրագրված է, որ՝

«Արդարադատության համակարգի առողջացման նպատակով կարևոր է ապահովել, որպեսզի քննչական մարմինները, իրենց կառուցվածքով, գործունեության սկզբունքներով և մասնագիտական ներուժով համապատասխանեն արդարադատության նոր հայեցակարգի տեսլականին: Քննչական մարմինների համակարգի բարեփոխման նպատակով անհրաժեշտ է՝

ա) կառուցվածքային փոփոխություններ կատարել քննչական մարմինների համակարգում՝ ստեղծելով Հակակոռուպցիոն կոմիտե, որը զբաղվելու է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությամբ»³¹⁹,

բ) գնահատել քննիչների բարեվարքությունը՝ գործի դնելով դատավորների և դատախազների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները.

գ) վերանայել քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ընթացակարգը՝ դրանց ամբողջականությունը և թափանցիկությունն ապահովելու նպատակով.

դ) զարգացնել քննիչների կարողությունները՝ կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում.

ե) բարձրացնել քննիչների աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները, ինչպես նաև ավելացնել քննիչների թվակազմը»³²⁰:

Կարծում ենք, սակայն, որ հաշվի առնելով հոչակված նպատակը՝ «քննչական մարմինների համապատասխանելը արդարադատության նոր հայեցակարգի տեսլականին», ինչպես նաև քաղաքացիական հասարակության կողմից իրավացիորեն մատնանշված համակարգային խնդիրները, Դատախազական բարեփոխումներով նախատեսվող քննչական մարմինների բարեփոխման միջոցառումները չունեն համարժեք համակարգային ընդգրկունությունը:

Մասնավորապես՝

³¹⁷ Հայեցակարգ, էջ 22:

³¹⁸ Ռազմավարություն, էջ 53-54:

³¹⁹ Ավելի մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը:

³²⁰ Դատական և իրավական բարեփոխումների առաջիկա փուլում նախատեսվում է նաև հետաքննիչների աշխատավարձի բարձրացում:

1. Եթե նպատակը քննչական մարմինների համապատասխանեցումն է ամբողջ արդարադատության նոր հայեցակարգի տեսլականին, ապա ռազմավարական փաստաթղթով առաջարկվող ինստիտուցիոնալ լուծումները չեն կարող սահմանափակվել ընդամենը հակակոռուպցիոն միասնական մարմին ստեղծելու գործողությամբ: Ընդհանրապես չի խոսվում քննչական մարմինների համակարգի մասին, իսկ առանձին մարմինների կառուցվածքին, գործունեության սկզբունքներին ու ներուժին կատարվող հղումը կրում է գուտ ձևական, նկարագրական բնույթ:

2. Կոնկրետ գործեր քննելու քննիչների կարողությունների զարգացումը, էլեկտրոնային ապացույցների կիրառումը, ինչպես նաև՝ աշխատավարձերի և հավելավճարների բարձրացումը և թվակազմի ավելացումը, եթե կարելի է այդպես ասել, «չեզոք բաղադրիչների» փոփոխություններ են: Այսինքն, եթե քննչական մարմինը կամ քննչական մարմինների համակարգը անկախ չէ, ապա այնտեղ աշխատող անձանց ոչ թվի ավելացումը, ոչ մասնագիտական պատրաստվածության բարձրացումը չեն կարող ապահովել «արդարադատության նոր հայեցակարգի տեսլականին» համապատասխանող քննիչների գոյացումը: **Հայեցակարգը չի խոսում ոչ այս մարմինների անկախության և ոչ էլ միմյանց փոխադարձաբար և արդյունավետորեն հակակշռելու մեխանիզմներ ստեղծելու մասին:** Որևէ խոսք չկա այն մասին, թե ինչ անել, որպեսզի բացառվի քննչական մարմինները քաղաքական հակառակորդների դեմ օգտագործելու պրակտիկան, չի խոսվում այս մարմինները խորհրդարանական արդյունավետ վերահսկողության տակ դնելու մեխանիզմների մասին:

3. Ինչ վերաբերում է քննչական մարմինների հաշվետվողականությանը, ապա Հայեցակարգը այն հիշատակում է միայն քննիչների կարգապահական վարույթների անհասկանալի ամբողջականությունը, որը, կարծում ենք անզլերեն “integrity” թարգմանության ոչ տեղին օգտագործումն է այդ բառի «բարեվարքություն» թարգմանության փոխարեն, և այդ վարույթների թափանցիկությունը: Այսինքն, որևէ խոսք չկա հաշվետվողականության մասին, այն մեխանիզմներին մասին, որոնք պետք է ապահովեն քննչական մարմինների ու դրանց համակարգի ինստիտուցիոնալ համակարգի թափանցիկությունը, որի երաշխիքները բազմաթիվ են և վերաբերում են քննչական մարմինների գործունեությանը բոլոր փուլերում՝ վերը քննարկված ներկայացուցչական վիճակագրությունից սկսած մինչև խորհրդարանական վերահսկողության մեխանիզմները, օրինակ՝ ի դեմս քննիչ-հանձնաժողովների գործունեության:

4. Ինչ վերաբերում է քննիչների բարեվարքությունը գնահատելու միջոցառմանը՝ գործի դնելով դատավորների և դատախազների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները, ապա վերը նշված համակարգային խնդիրների պահպանման պարագայում, դրանց ազդեցությունը լինելու է նվազագույն: Ավելին, առանց համակարգի հաշվետվողականության ու թափանցիկության արտաքին մեխանիզմների անհնար է լինելու ստուգել բարեվարքության գնահատման արդյունքներով կայացվող որոշումների առկայությունը և դրանց հետևանքները: Վերջապես, ինչպես տեսանք վերևում՝ կապված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ կապված դիտարկումներից, ակնհայտ է, որ քննիչներին՝ դատավորների պես ԿԿՀ՝ որպես միակ արդյունավետ արտաքին վերահսկողության շրջանակներից դուրս բերելը ու ավելին՝ նրանց հետ կապված ԿԿՀ եզրակացությունների խորհրդատվական բնույթը ու քննչական մարմինների դեկավարներին ու քննիչներին նշանակելիս դրանցից շեղվելու պատճառաբանության պահանջի բացակայությունը, չեն կարող ապահովել քննչական համակարգի՝ ոչ թափանցիկություն, ոչ հաշվետվողականություն, և ոչ էլ թափանցիկություն:

Ասվածի լույսի ներքո առաջանում է նաև անվտանգության մարմինների համակարգում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն, մասնավորապես՝ վերջիններիս գործունեությունը քրեադատավարական հարաբերությունների, հետևաբար նաև՝ երաշխիքների, մի խոսքով՝ դատախազական վերահսկողության և դատական հսկողության ոլորտ բերելու իմաստով: Մասնավորապես՝

«Ազգային անվտանգության մարմինների վրա դրված են ինչպես քրեադատավարական, այնպես էլ քրեական վարույթից դուրս գործողություններ ձեռնարկելու՝ այդ թվում՝ տեղեկություններ հավաքելու, դրանց պահպանության և օգտագործման լիազորություններ: Նրանք իրականացնում են հետախուզություն, հակահետախուզություն, ռազմական հետախուզություն, քննչական գործողություններ, փորձաքննություններ, ինչպես նաև մի շարք այլ լիազորություններ՝ պետական սահմանի պահպանության, անվտանգության ապահովման և հանցագործությունների դեմ պայքարի համատեքստում: Բացի այդ, նրանք հանդիսանում են ռազմականացված մարմիններ, իսկ իրենց մոտ ծառայությունը՝ զինվորական ծառայություն: Այս բոլոր լիազորությունները տարածվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգության ապահովման վրա: Այս մարմինների ղեկավարության նշանակումը ևս տրվել է վարչապետի հայեցողությանը, ինչպես նաև վերջինիս է վերապահվել այս մարմնի նկատմամբ վերահսկողությունը, իսկ Ազգային ժողովի պատգամավորներին միայն իրավունք է տրվել իրենց պատգամավորական գործունեության իրականացման հետ կապված՝ տեղեկություններ ստանալ ազգային անվտանգության ծառայության գործունեության մասին:

Դեռևս Խորհրդային Միությունից ժառանգած այս լայն լիազորությունները, որոնց իրականացումը նախատեսում է միջամտություն անձանց իրավունքներին, դրանց կենտրոնացումը մեկ կառույցի և մեկ անձի՝ վարչապետի ձեռքում, ժողովրդավարական, քաղաքացիական և դատական վերահսկողության բացակայությունը կամ դրանց ոչ բավարար լինելը վերածում են անվտանգության մարմինները հասարակության ճնշման և մարդու իրավունքներին անպատիժ միջամտության մեխանիզմի, որը չի կարող տեղ ունենալ ժողովրդավարության և իրավունքի գերակայության սկզբունքների վրա կառուցված հասարակությունում»³²¹:

Պատմական հիմք ունեցող այս մտահոգությունները փարատելու ուղղությամբ մեծագույն նշանակություն կունենա ԱԱԾ քննիչներին միասնական Քննչական մարմին տեղափոխելը, որը նաև այս քննիչներին կազատի նույն մարմնի ներսում գործող այլ ստորաբաժանումների հետ գերատեսչական շահերի ընդհանրությունից՝ երաշխավորելով նրանց կողմից, դատախազական հսկողության և դատական վերահսկողության ներքո, բացառապես Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված խնդիրների իրագործումը: Ինչ վերաբերում է ԱԱԾ կողմից իրականացվող հետաքննության և ՕՀՄ-ի իրականացման գործառույթներին, ապա դրանք նույնպես, ըստ ՔԴՕ Նախագծի ամբողջությամբ տեղավորվելու են քրեական վարույթի նախաքննության շրջանակներում: Ինստիտուցիոնալ առումով, քանի որ մենք առաջարկում ենք ունենալ երկու քննչական մարմին՝ Միասնական քննչական կոմիտեն և Հակակոռուպցիոն կոմիտեն՝ երկուսն էլ՝ հազեցած օպերատիվ-հետախուզական ծառայություններով, ապա ներկայումս ազգային անվտանգության մարմինների քննիչների կողմից քննվող գործերի օպերատիվ աջակցումը նույնպես պետք է տեղի ունենան նույն քննչական մարմնի՝ տվյալ դեպքում՝ Քննչական կոմիտեի Օպերատիվ ծառայության համապատասխան ստորաբաժանման միջոցով: Արդյունքում, ԱԱԾ-ի գործունեությունը կենտրոնանալու է բացառապես արտաքին ուղղվածության գործառույթների վրա՝ հետախուզության և հակահետախուզության, ճիշտ այնպես, ինչպես ՊՆ համապատասխան մարմինների գործառույթները ռազմական բնագավառում:

Առաջարկվող այս գլոբալ լուծման պարագայում ինքնըստինքյան կլուծվեն մի շարք այլ, իրականում առկա խնդիրներ, որոնցից են քննիչների ռազմականացված կառույցում աշխատելը, այսինքն՝ ծառայելը, խորհրդարանական վերահսկողությունից դուրս լինելը (քանի որ քննչական երկու մարմինների ղեկավարներին էլ ընտրելու է Խորհրդարանը, որը նաև իրականացնելու է ընթացիկ խորհրդարանական վերահսկողություն), վերացվելու են

³²¹ Տես՝ Հայաստանի Հանրապետության վերականգնման հայեցակարգ, էջ 25-26:

ԱԱԾ քննչական մեկուսարանի և ԱԱԾ ՁՊՎ-ի ինստիտուտները՝ նաև ազգային անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների մեջ մեղադրվող և կասկածվող անազատության մեջ պահվող անձանց պահման վայրերը նույնպես դարձնելով հասարակական դիտորդական խմբերի ուսումնասիրությունների առարկա, ապահովվելու է դատական վերահսկողություն և դատախազական հսկողություն անվտանգությունը մարմինների գործունեության նկատմամբ, և այլն:

4.3. Քննչական ենթակայությունը, դրա որոշման օրենքով նախատեսված չափանիշները և Գլխավոր դատախազի ու քրեական գործով հսկող դատախազի հայեցողությունը

Քննչական ենթակայությունը սահմանվում է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով, որի համաձայն՝ նախաքննությունը գործերի մեծ մասով կատարվում է Քննչական կոմիտեի քննիչների կողմից (1-ին և 2-րդ մասեր), իսկ մյուս՝ հարկային, ազգային անվտանգության և մաքսային մարմինների քննիչների առարկայական իրավասության տիրույթի մեջ մտնում է ՀՀ Քրեական օրենսգրքի համապատասխան կոնկրետ հոդվածներով արգելված արարքների քննությունը (2-4-րդ մասեր): Առանձին սահմանվում է, որ «5. նախաքննությունը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ ժամկետային զինվորական ծառայության զինծառայողներին կամ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում (որոնց բաժնետոմսերի կառավարման լիազորությունը հանձնված է պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնին) ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները» (5-րդ մաս): Ինչ վերաբերում է Հատուկ քննչական ծառայությանը, ապա այն նախաքննություն է իրականացնում «օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների», ինչպես նաև առանձին (թվով՝ 5) ընտրական հանցագործությունների, ապօրինի հարստացման (ՀՀ ՔՕ 310.1 հոդված), հայտարարագրերը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու (ՀՀ ՔՕ 314.2 հոդված) և հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու (ՀՀ ՔՕ 314.3 հոդված) վերաբերյալ գործերով (6-րդ մաս):

Որպես միջանկյալ դիտարկում, փաստենք, որ Հայաստանում գոյություն ունեն թվով 5 մարմիններ, որոնց ունեն քննիչներ՝ Քննչական կոմիտե, ՀՔՕ, ԱԱԾ, Հարկային մարմիններ և Մաքսային մարմիններ, որոնցից վերջին երեքը հանդիսանում են ոչ թե քննչական մարմիններ, այլ հանդիսանալով հետաքննության մարմիններ՝ իրենց կազմում ունեն նաև քննչական ստորաբաժանումներ: Ըստ բարեփոխումների հայեցակարգի, սրանց ավելանալու է նաև Հակակոռուպցիոն կոմիտեն:

Տարբեր տարիների կտրվածքով, ՀՀ-ում բոլոր գործերի 90 տոկոսից ավելին քննում է Քննչական կոմիտեն: Պետք է ասել, որ Քննչական կոմիտեի ստեղծումը պայմանավորված էր միասնական քննչական մարմին ունենալու հայեցակարգով, որի անհրաժեշտության մասին խորհրդային դատավարագիտության մեջ խոսվում էր դեռևս 2-րդ աշխարհամարտի ավարտից ի վեր՝ հիմնականում շեշտը դնելով նրա վրա, որ՝ 1) գերատեսչական խնդիրների միասնականությունից խուսափելու համար պետք էր քննիչներին դուրս բերել հետաքննության մարմինների ենթակայությունից, և 2) նկատի ունենալով, որ ՀՀ ՔՂՕ համաձայն, քննիչի՝ որպես դատավարության սուբյեկտի կարգավիճակը և

լիազորությունները որևէ կերպ պայմանավորված չեն նրանով, թե որ մարմնում են նրանք աշխատում՝ միավորել քննիչներին մեկ մարմնում՝ ստեղծելով առանձին քննչական մարմին: Հիմնականում այս խնդիրները լուծելու համար ստեղծվեց աշխատանքային «Միասնական քննչական մարմնի կազմավորման իրավական ապահովման հանձնաժողով», որի վերաբերյալ ՀՀ Նախագահի ՆԿ-159-Ա կարգադրության մեջ նշվում էր հետևյալը՝

«Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 49-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 6-րդ կետով և քննչական մարմինների անկախությունն ամրապնդելու, քրեական գործերով նախաքննության արդյունավետությունը բարձրացնելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքում գործող քննչական մարմինների հենքի վրա միասնական քննչական մարմին կազմավորելու նպատակով որոշում եմ...»³²²:

Մշակված «Քննչական կոմիտեի մասին» օրենքում (ընդ. 2004թ. մայիսի 19-ին³²³) այլևս բացակայում էր, սակայն, սակայն, «միասնական» բառը, քանի որ նոր քննչական մարմինը միավորում էր միայն նախկին ոստիկանության և ՊՆ քննիչներին՝ դուրս բերելով նրանց համապատասխան գերատեսչական ենթակայությունից: Այսպիսով, ի սկզբանե ԱԱԾ քննիչների կենտրոնացումը մեկ միասնական քննչական մարմնում նախատեսված չէր, իսկ ՊԵԿ-ի, կամ ներկայիս կառուցվածքով՝ հարկային և մաքսային մարմինների քննիչների դուրս բերումը տեղի չունեցավ՝ չնայած նախատեսված էր ՀՀ Նախագահի հրամանագրով:

Պետոք է շեշտել, որ որևէ հիմնավորում ոչ այն ժամանակ, երբ ԱԱԾ քննիչներն ի սկզբանե թողնվում էին ԱԱԾ կազմում, ոչ էլ այն ժամանակ, երբ վերջնական տեսքով ընդունված օրենքով «միասնական» մարմնից դուրս մնացին հարկային և մաքսային մարմինների քննիչները, որևէ հիմնավորում չբերվեց առ այն, թե որոնք են դատավարական կամ քննչակազմական այն առանձնահատկությունները, որոնք ի տարբերություն, ասենք նույն Ոստիկանության կամ ՊՆ քննչական ստորաբաժանումների, ԱԱԾ և ՊԵԿ-ի դեպքում, անհրաժեշտ էին դարձնում քննիչներին վերջիններիս կազմում թողնելը: Դրա պատճառը միայն մեկն էր՝ այդ հիմնավորումների օբյեկտիվ բացակայությունը: «Հիմնավորումները» պարզ դարձան, օրինակ՝ ՊԵԿ քննիչների կողմից քննվող գործերի վիճակագրությունից, երբ հարուցված գործերի ընդհանուր թվի շատ մեծ տոկոսը կարճվում էր նույն ՊԵԿ-ի կողմից: Այսինքն՝ քննչական մարմինները ոչ թե կոչված էին նախաքննություն իրականացնելու, այլ ստեղծելու դրա սպառնալիքը՝ հարկային և մաքսային պարտավորությունները ենթադրաբար չկատարող սուբյեկտների համար: Օրինակ, ըստ նույն Մաքսային ծառայության քննչական վարչության վիճակագրության³²⁴, ՀՀ ԿԱ ՊԵԿ Քննչական վարչության կողմից հարուցված և վարույթ ընդունված գործերի քանակը և Նախաքննությունն ավարտված և մեղադրական եզրակացությամբ դատարանի ուղարկված քրեական գործերի քանակը նույն 2014թ. ընթացքում կազմել է, համապատասխանաբար՝ 61-0 (հունվար), 50-0 (փետրվար), 25-0 (մարտ), 8-1 (ապրիլ), 12-0 (մայիս), 4-1 (հունիս), 11-3 (հուլիս), 10-0 (օգոստոս), 9-0 (սեպտեմբեր), 12-10 (հոկտեմբեր), 7-3 (նոյեմբեր) և 16-5 (դեկտեմբեր): Միանշանակ կարելի է ասել, որ հարուցված ու դատարան ուղարկված գործերի անհամաչափ համամասնության առումով ռեկորդային

³²² Միասնական քննչական մարմնի կազմավորման իրավական ապահովման հանձնաժողով ստեղծելու մասին ՀՀ Նախագահի կարգադրություն, <https://www.president.am/files/legislation/975.pdf>, տես նաև՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի (ՀՔԱՎ) գրասենյակի, «Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում 2014-2015 թթ.» Զեկույցը, Վանաձոր, 2016թ., էջ 44 և հաջորդիվ, <http://archive.hcav.am/wp-content/uploads/2016/06/HRD-report-Arm-2014-20151.pdf>

³²³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=90848>

³²⁴ <https://petekamutner.am/Content.aspx?itn=csVLLInquiryDivision>

հունվար-մարտ ամիսներին հաջորդած նվազ թվերը ցույց տվեցին, որ սառեցնող էֆեկտը (chillig effect) տալիս էր իր արդյունքները³²⁵:

Նշենք միայն, որ նույն համամասնությունների միտումը, ճիշտ է, ոչ այնքան ռեկորդային ձևով, պահպանվում է նաև այժմ³²⁶, ինչը ևս մեկ ապացույց է նրա, որ հարկային ու մաքսային մարմինների քննիչները ավելի շատ ստիպված են լուծել հարկային ու մաքսային մարմինների առջև դրված բյուջեի մուտքերն ապահովելու խնդիրը, քան թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նրանց վրա դրված խնդիրները՝ հանցագործությունների բացահայտում, մեղավորների հայտնաբերում և այլն: Այս ամենը ևս հիմք է նրա համար, որպեսզի քննչական մարմինների համակարգի ապագա բարեփոխումները ընթանան հենց այս ուղղությամբ, այսինքն՝ ապահովեն հարկային, մաքսային և անվտանգության մարմինների քննիչների միացումը միասնական քննչական մարմնում: Իսկ այն, թե արդյոք պետք է քրեական հետապնդումը դադարեցվի, թե ոչ՝ ելնելով մեղադրյալի՝ քրեական հետապնդումից հետո դրսևորած վարքագծից (վնասի վերականգնում և այլ), ապա այդ որոշումները պետք է կայացվեն դատախազի կողմից՝ քրեական դատավարության շրջանակներում իրեն վերապահված հայեցողության սահմաններում, որի իրացումը, ինչպես նշվեց Հետազոտության 2.1.1 ենթակետում, պետք է լինի կանխատեսելի, թափանցիկ, գերծ կամայականությունների և կոռուպցիոն ռիսկերից և բխի նախապես մշակված և հանրության համար հասանելի իրավակիրառ ուղեցույցներից:

Այսպիսով, անհրաժեշտ է՝

- Միավորել տարբեր ոչ քննչական մարմինների քննչական ստորաբաժանումները և գործող քննչական մարմինները մեկ միասնական մարմնում՝ Քննչական կոմիտեում
- Ստեղծել Հակակոռուպցիոն կոմիտե
- Ապահովել նշված երկու քննչական մարմինների արդյունավետության, ինչպես նաև՝ փոխադարձ հակակշռման գործուն մեխանիզմներ, առաջին հերթին՝ դրանք ապահովելով օպերատիվ ծառայություններով:
- Նախատեսել նշված երկու մարմինների անկախության գործուն երաշխիքներ, մասնավորապես՝ նախատեսելով դրանց ղեկավարների նշանակումը խորհրդարանի կողմից՝ որակյալ մեծամասնությամբ՝ Գլխավոր դատախազի ընտրության մեխանիզմներով, այդ թվում՝ ապահովելով թեկնածուին առաջադրող մարմնի՝ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ կամ ՀՀ Նախագահի կողմից (իսկ նոր Սահմանադրությամբ՝ Նախագահի՝ ժողովրդի ուղիղ կամահայտնությամբ ընտրվելու դեպքում՝ Նախագահի կողմից) թեկնածուին

³²⁵ Ավերորդ չենք համարում նշել, որ Քննչական կոմիտեի մասին օրենքի ընդունման նույն ամսում՝ 2014թ. մայիսի 8-ին «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը և «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը միաձուլման ձևով վերակազմակերպվեցին՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար նշանակվեց Գագիկ Խաչատրյանը, տես՝ <https://www.petekamutner.am/as.aspx?itn=asHistory>: Փաստորեն, հարկային և մաքսային մարմինների քննիչները՝ Քննչական միասնական կոմիտեում հայտնվելու փոխարեն, դարձան էլ ավելի հզորացած ոչ-քննչական մարմինների մի մասը:

³²⁶ Բհարկե, բացառություն է կազմում պետությանը պատճառված վնասների վերականգնման վիճակագրությունը, որն, օրինակ, նույն 2014թ. հունվար-մարտ ամիսներին, երբ ընդհանուր եռամսյակում՝ հարուցված էր 136 քրեական գործ, դրանցից ոչ մեկը չէր ուղարկվել դատարան, իսկ պետությանը վերականգնված գումարի ընդհանուր չափը չի գերազանցել 700 հազար դրամը, տես՝ <https://petekamutner.am/Content.aspx?itn=csVLIInquiryDivision>

առաջադրելու գործընթացում անկախ Փորձագիտական հանձնաժողովի գործուն մասնակցությունը

- Ապահովել նշված մարմինների հաշվետվողականության գործուն մեխանիզմներ՝ ինքնազեներացվող վիճակագրություն և Տեղեկատվության ազատության մասին օրենքով նախատեսված տեղեկատվության հասանելիությունն ապահովող էլեկտրոնային գործիքների, խորհրդարանական վերահսկողության, այդ թվում՝ խնդիրահեն բյուջետավարաման և ծախսերի առթիվ հաշվետվողականության մեխանիզմներ ստեղծելու, տարեկան հաղորդումներ ներկայացնելու ու քննարկելու, հայեցողական որոշումների հիմքում դրվող չափորոշիչներն ու չափանիշներն ամրագրող իրավակիրառ պարզ և հասանելի ուղեցույցների միջոցով:

Քննարկման առանձին առարկա է քննչական ենթակայությունը որոշելու հարցում ՀՀ Գլխավոր դատախազի, ինչպես նաև հարուցված քրեական գործով հսկող դատախազի ունեցած դերակատարումը, որոնք սահմանված են ՀՀ ՔԴՕ 190-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 6-րդ, 7-րդ և 10-րդ մասերով, ինչպես նաև՝ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

«Հոդված 190. Քննչական ենթակայությունը

6. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149, 150, 1541 , 1542, 154.9, 314.2, 314.3, 310.1 հոդվածներով կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները:

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են սույն մասում թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն:

6.1. Նախաքննությունը հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները:

7. Սույն հոդվածի երկրորդ և չորրորդ մասերով նախատեսված գործերով նախաքննություն կատարում է այն մարմինը, որը հարուցել է տվյալ քրեական գործը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի:

10. Տարբեր պետական մարմինների քննիչներին ենթակա հանցագործությունների վերաբերյալ գործերը մեկ վարույթում միացնելու կամ գործի քննության ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն հոդվածի ութերորդ մասով չնախատեսված հանցագործության բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է դատախազը: Այս կարգը չի տարածվում սույն հոդվածի 6-րդ և 6.1-ին մասերով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի վրա, որոնցից 6-րդ մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են բացառապես հատուկ քննչական ծառայության քննիչները, իսկ 6.1-ին մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննիչները»:

«Հոդված 53. Դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում

2. Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝

... 3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից և հանձնել նախաքննության մարմնին, քրեական գործը սույն օրենսգրքի 190 հոդվածով սահմանված նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության մեկ այլ մարմնին՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով»:

Փաստորեն ստացվում է, որ օրենքը, տվյալ դեպքում՝ ՀՀ ՔՂՕ-ն սահմանում է տարբեր քննչական մարմինների առարկայական ենթակայությունը կամ լիազորվածությունը, սակայն իրավակիրառ պաշտոնատար անձինք՝ հսկող դատախազը և Գլխավոր դատախազը իրավունք ունեն փոխել այդ ենթակայությունը: Ընդ որում, նույն ՔՂՕ-ն այդ պաշտոնատար անձանց նշված հայեցողությունը սահմանելով, ընդամենը նշում է «բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու» նպատակ՝ առանց ամրագրելու պատճառաբանված որոշում կայացնելու պահանջը: Արդյունքում՝ թե հսկող դատախազի, և թե ՀՀ Գլխավոր դատախազի կողմից գործի քննչական ենթակայությունը փոխելու մասին որոշումներում, որպես հիմնավորում պարզապես մեջբերվում է օրենքում՝ նշված հիմքը՝ «բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու» նպատակը՝ առանց պատճառաբանելու, թե ինչու է այդ հիմքը կիրառելի տվյալ դեպքում: Սա առաջացնում է լուրջ կոռուպցիոն և այլ ռիսկեր, բայց ամենակարևոր թերությունը մեթոդաբանական խորության մեջ է, այն է՝ օրենքով սահմանված պահանջները չեղարկվում են իրավակիրառների կողմից՝ առանց պատճառաբանված որոշում կայացնելու:

ՏՀԶԿ 3-րդ շրջանի Ձեկույցում՝ 2.9 Երաշխավորության ներքո³²⁷, կոռուպցիոն հանցագործությունների հետ կապված, նշվել էր հետևյալը՝

«Օրենքի համաձայն, քննչական մրցակցող ենթակայության դեպքերում, դատախազն է որոշումը այդ հանցագործությունները քննող համապատասխան քննչական մարմինը և դրանք փոխանցում ՔՂՕ 190-րդ հոդվածի ուղենիշներին համապատասխան: Պրակտիկայում, դա կարող է տեղի ունենալ սուբյեկտիվ եղանակով: Օրինակ, Օմբուդսմանի 2013թ. Ձեկույցում³²⁸ ուշադրություն է դարձվում է հենց այս խնդրի վրա»:

ՏՀԶԿ կողմից վկայակոչված ՄԻՊ 2013թ. Ձեկույցում, մասնավորապես, նշվում էր հետևյալը՝

«[Հատուկ քննչական] Շառայությունն իր կողմից քննության առած գործերը ստիպված փոխանցել է այլ քննչական մարմիններին, որոնք օժտված չեն Շառայության բացառիկ անկախությամբ: ... Արդյունքում՝ գործերի նման փոխանցումը էապես վնասել է դրանց արդար քննությանը: ... ՀՀ օրենսդրությամբ երաշխավորվել է Շառայության անկախությունը և որևէ գերատեսչության ենթակայության տակ չգտնվելը, որը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված հատուկ սուբյեկտների մասնակցությամբ քրեական գործերը: Նման անկախությամբ օժտված չեն այլ գերատեսչությունների համապատասխան նախաքննություն իրականացնող մարմինները, ուստի Շառայության կողմից ուսումնասիրված դեպքերի հետագա փոխանցումը այլ մարմիններ ոչ միշտ է ապահովվում այդ գործերի բազմակողմանի, օբյեկտիվ, լրիվ ուսումնասիրությունը»³²⁹:

³²⁷ Երաշխավորություն 2.9.՝ «Հստակ տարանջատել տարբեր հետաքննչական, քննչական և քրեական հետապնդման մարմինների իրավասությունը կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման, քննության և քրեական հետապնդման ուղղությամբ...: Ապահովել, որպեսզի Հատուկ քննչական ծառայությունից (ՀԲԾ) բացի այլ մարմինները հստակ լիազորված լինեն հայտնաբերելու, քննելու կոռուպցիոն հանցագործությունները և դրանցով քրեական հետապնդում իրականացնելու համար, քանի որ դա սահմանված չէ որպես ՀԲԾ բացառիկ իրավասություն: Խթանել հայտնաբերելու, քննելու կոռուպցիոն հանցագործությունները և դրանցով քրեական հետապնդում իրականացնելու գործում իրավապահ մարմինների ու ստուգող մարմինների միջև համագործակցությունը», տես՝ **ORGANISATION FOR ECONOMIC CO-OPERATION AND DEVELOPMENT ANTI-CORRUPTION NETWORK FOR EASTERN EUROPE AND CENTRAL ASIA Anti-corruption Reforms in ARMENIA Round 3 Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan**, adopted at the ACN meeting on 8-10 October 2014 at the OECD in Paris, էջ 40:

³²⁸ “Annual report on the activities of the RA Human Rights Defender and on the violations of human rights and fundamental freedoms in the country in 2013”, published in 2014, Տարեկան Ձեկույց 2013թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին, <https://www.ombuds.am/images/files/afe1e423a8f465a4fba32ccc27ef913a.pdf>, էջ 41 և հաջորդիվ:

³²⁹ ՄԻՊ 2013թ. Տարեկան Ձեկույց, էջ 73-74, նաև՝ էջ 82-83:

Կարևորն այն է, որ ոչ Գլխավոր դատախազը, և ոչ էլ այժմ դրա բացառիկ իրավասությունն ունեցող հսկող դատախազը չկարողանան կամայական վերաբերմունք դրսևորել օրենքով կարգավորվող հարցերը սեփական հայեցողությամբ լուծելու միջոցով: Ընդհանրապես, սա վկայում է, որ անհրաժեշտ է բոլոր այն քննչական մարմինների հավասար անկախության հավասար աստիճանը:

Նույն մոտեցումն ունի նաև նոր ՔԴՕ նախագծի վերաբերյալ ԵԽ Կարծիքը, որտեղ նշվում է՝

«184. Գլխավոր դատախազին վերապահված լիազորությունը՝ վերահանձնարարելու հանցագործությունների քննությունը, որոնցում կարող են ներգրավված լինել պետական պաշտոնյաներ, շատ լայն է, քանի որ դրա չափանիշը «անհրաժեշտության դեպքում» հասկացությունն է: Այլ իրավակարգերում նման լիազորության շնորհումը մտահոգող խնդիր է եղել, քանի որ այն հանգեցրել է վստահության կորստի՝ պայմանավորված այն հանգամանքով, որ պետական պաշտոնյաների կողմից կատարված՝ կոռուպցիայի հետ առնչվող հանցագործություններն արդյունավետ չեն քննվել:

185. Հետևաբար, ավելի կոնկրետ չափանիշներ են անհրաժեշտ՝ կարգավորելու քննության իրականացման պատասխանատվության վերահանձնարարման ցանկացած դեպք»³³⁰:

Այսպիսով, անհրաժեշտ է հստակ օրենքով, այսինքն՝ ՔԴՕ-ով, սահմանել քննչական ենթակայության որոշման բոլոր չափորոշիչները՝ իրավակիրառ բոլոր պաշտոնատար անձանց՝ Գլխավոր դատախազին և հսկող դատախազին զրկելով հայեցողություն դրսևորելու հնարավորությունից: Մեր կողմից առաջարկվող ընդամենը 2 քննչական մարմիններ ունենալու դեպքում, այս հարցերը նույնպես կարգավորվելու են ավելի արդյունավետ ձևով, քանի որ երկու մարմիններն ունենալու են հավասար անկախություն և արդյունավետություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական հետևությունները

2. Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկներ

Ամփոփ և սպառիչ ձևով ներկայացվելու են այն առաջարկները, որոնք արվել են հետազոտության շարադրանքի ընթացքում՝ համապատասխան խնդիրների քննարկման ընթացքում, ըստ արվելու հաջորդականության

2.1. Օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկներ

2.2. Իրավակիրառ պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկներ

³³⁰ <http://rm.coe.int/doc/09000016806ef474>, կետ 184-185: